Հ Ա Շ Վ Ե Տ Վ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

2016 ԹՎԱԿԱՆԻ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎ ՀԱՐԿԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 3

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ 2016 ԹՎԱԿԱՆԻՆ 123

ՀՀ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԸ 139

Հարկային եկամուտներ և պետական տուրքեր 141
Պաշտոնական դրամաշնորհներ 167
Այլ եկամուտներ 169

ՀՀ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԾԱԽՍԵՐԸ 173

ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄ 173
Ընթացիկ ծախսեր 173
Ոչ ֆինանսական ակտիվների հետ գործառնություններ 176

ԳՈՐԾԱՌԱԿԱՆ ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄ 177
Ընդհանուր բնույթի պետական ծառայություններ 177
Պաշտպանություն 203
Հասարակական կարգ, անվտանգություն և դատական գործունեություն 204
Տնտեսական հարաբերություններ 210
Շրջակա միջավայրի պաշտպանություն 258
Բնակարանային շինարարություն և կոմունալ ծառայություններ 266
Առողջապահություն 276
Հանգիստ, մշակույթ և կրոն 300
Կրթություն 322
Սոցիալական պաշտպանություն 347
Հիմնական բաժիններին չդասվող պահուստային ֆոնդեր 373
Հույժ գաղտնի 374

ՀՀ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՊԱԿԱՍՈՒՐԴԸ 375

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ ՀՀ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ 383

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ ՀՀ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ 384

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ ՀՀ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԾԱԽՍԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ (գործառական դասակարգմամբ) 385

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ ՀՀ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԾԱԽՍԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ (տնտեսագիտական դասակարգմամբ) 391

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ ՀՀ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԴԵՖԻՑԻՏԻ (ՊԱԿԱՍՈՒՐԴԻ) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ 395

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ 401

ՏԵՂԵԿԱՆՔՆԵՐ 1483

ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԸ ԲՆՈՒԹԱԳՐՈՂ ԱՐԴՅՈՒՆՔԱՅԻՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ 1579

ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԾԱԽՍԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ (ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳՐԱՅԻՆ ԴԱՍԱԿԱՐԳՄԱՄԲ) 3237

2016 ԹՎԱԿԱՆԻ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎ ՀԱՐԿԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Տնտեսական զարգացում

Գործարար և ներդրումային միջավայր, արտահանման զարգացում

Գործարար միջավայր: 2016 թվականին իրականացվել է ՀՀ կառավարության կողմից հաստատված գործարար միջավայրի բարելավման 2016 թվականի միջոցառումների ծրագիրը: Ծրագրում ներառված 39 միջոցառումներից 22-ն ամբողջությամբ կատարվել են, 8-ը կրում են շարունակական բնույթ: 5 միջացառում նախատեսվում է ներառել 2017 թվականի գործարար միջավայրի բարելավման միջոցառումների ծրագրում: Գործարար միջավայրի բարեփոխումների արդյունքներն արտացոլվել են Համաշխարհային բանկի և Միջազգային ֆինանսական կորպորացիայի կողմից 2016 թվականի հոկտեմբերի 25-ին հրապարակած՝ «Գործարարությամբ զբաղվելը 2017: Հավասար հնարավորություն բոլորի համար» վարկանիշային զեկույցում Հայաստանի դինամիկայի վրա: Հայաստանը 190 երկրների շարքում նախորդ տարվա վերագնահատված արդյունքների (43-րդ տեղ) համեմատ բարելավել է դիրքը 5 կետով (38-րդ տեղ): Զեկույցի արդյունքներով Հայաստանն ընթացիկ տարում բարելավում է արձանագրել «Վարկերի ստացում» (դիրքը բարելավվել է 22 կետով՝ 42-րդ տեղից բարձրանալով 20-րդ տեղը), «Պայմանագրերի կիրարկում» (դիրքը բարելավվել է 7 կետով՝ 35-րդ տեղից բարձրանալով 28-րդ տեղը) և էլեկտրականության միացում» (դիրքը բարելավվել է 9 կետով՝ 85-րդ տեղից բարձրանալով 76-րդ տեղը) ոլորտներում: Շրջանառության է դրվել գործարար միջավայրի բարելավման 2017 թվականի միջոցառումների ծրագիրը, որը ենթադրում է բարեփոխումներ հարկերի վճարման, մաքսային ընթացակարգերի, շինարարական թույլտվությունների, վարկերի հասանելիության, պայմանագրերի կիրարկման, սեփականության գրանցման, բիզնես նպատակներով էլեկտրականության ստացման, ընկերություն հիմնելու, սնանկության գործընթացի և այլ ոլորտներում:

Գործարար և ներդրումային միջավայրը կանոնակարգող մի շարք իրավական ակտերի ուսումնասիրության հիման վրա մշակվել և շրջանառության մեջ են դրվել գործարար համայնքի ներկայացուցիչների գործունեությանը խոչընդոտող դրույթների վերացմանն ուղղված նախագծեր (բաժնետիրական ընկերությունների, հաստատագրված վճարների, արտաքին գովազդի թույլտվությունների, վարկերի տրամադրման ոլորտում վարչարարության և ժամանակատարության կրճատման, բիզնեսի՝ հանրային ծառայություններին միացման վերաբերյալ և այլն):

Առանձին բնագավառներին առնչվող որոշումները համապարփակ տեղեկատվության հիման վրա կայացնելու նկատառումով հարցերը մշտապես քննարկվում են գործարար համայնքը ներկայացնող տարբեր միությունների ներկայացուցիչների հետ: Մասնավորապես՝ Արդյունաբերողների և գործարարների միության, թեթև արդյունաբերության, լեռնահանքային ոլորտը ներկայացնող ձեռնարկությունների, արտահանողների, լոգիստիկ կազմակերպությունների, տուրօպերատորների մասնագիտացված միությունների հետ քննարկվել են նրանցից յուրաքանչյուրի կողմից ներկա փուլում առավել կարևորվող հարցադրումները, մշակվել դրանցից պահանջվող հետագա քայլեր: Մետաղական խտանյութերի արտադրության ոլորտում վերլուծվել են ռոյալթիների հաշվարկման՝ հարկային մարմինների կողմից ներկայում կիրառվող մոտեցումները: Ներգնա տուրիզմի կազմակերպման ոլորտում առանձնացվել է 2017 թվականին հարկային օրենսդրության փոփոխության և ներգնա տուրիզմի ծառայություններն ԱԱՀ-ով հարկելու հարցը: Շահագրգիռ կողմերի հետ քննարկվել են հարցին վերաբերող վերլուծությունները և օրենսդրական փոփոխության հավանական հետևանքները: ՓՄՁ ոլորտի ներկայացուցիչների հետ քննարկվել են ընդունված նոր Հարկային օրենսգրքում տրված կարգավորումների՝ ՓՄՁ ոլորտը ներկայացնող հասարակական կազմակերպությունների համար մտահոգիչ դրույթները, որոնք երկարաժամկետ հատվածում կարող են խնդրահարույց լինել ՓՄՁ ոլորտի զարգացման համար և ձևավորվել է առաջարկություն, որը պատկան մարմինների կողմից դիտարկվում է եկամուտների քաղաքականությունը չձախողելու ճանապարհով տնտեսական զարգացման քաղաքականության համատեքստում:

ՀՀ կառավարության 2016թ. ապրիլի 28-ի թիվ 415 որոշմամբ կատարված փոփոխությամբ (ուժի մեջ է ս.թ. օգոստոսի 1-ից) սահմանվել է, որ ՀԴՄ-ի կտրոնի վրա պետք է նշվի փաստացի վաճառված ապրանքի անվանումը՝ տվյալ տնտեսավարող սուբյեկտի հաշվապահական հաշվառման փաստաթղթերում կամ գույքագրման ցանկում առկա անվանմանը համապատասխան: Փոփոխությունը նպատակ ունի տնտեսավարող սուբյեկտներին թույլ տալ խուսափել ապրանքների վերադարձի ժամանակ հնարավոր թյուրիմացություններից, ՀԴՄ կտրոնների վրայի ապրանքների անվանումներն օգտագործել հաշվետվությունների կազմման ժամանակ, սպառողներին՝ մատչելի և հասկանալի ձևով տեղեկություն ունենալ գնված ապրանքի անվանման մասին:

ՀՀ ԱԺ կողմից 2016 թվականի սեպտեմբերի 28-ին ընդունվել է «Մաքսային կարգավորման մասին» ՀՀ օրենքում փոփոխություն և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքը (ՀՕ-146-Ն), որով մինչև 200 եվրոյին համարժեք գումարի չափով ապրանքների ներմուծումն ու արտահանումն ազատվել են մաքսավճարի գանձումից՝ առանց որևէ լրացուցիչ սահմանափակում նախատեսելու (ներմուծվող կամ արտահանվող ապրանքների գործարքների պարբերականություն, քաշ և քանակ), ինչպես նաև տնտեսավարող սուբյեկտներին հնարավորություն է տրվում ինքուրույն կատարել

մաքսային ձևակերպումներն առանց մաքսային ձևակերպումների որակավորում ունեցող մասնագետի (մաքսային բրոկեր) ներգրավման:

Ներդրումային միջավայր: Մշակվել է «Օտարերկրյա ներդրումների մասին» ՀՀ նոր օրենքի նախագիծը, որում հիմնական նորույթները վերաբերում են ազգային և առավել բարենպաստության ռեժիմների ամրագրմանը, օտարերկրյա ներդրողների համար երաշխիքների հստակեցմանը, վեճերի լուծման դրույթներին:

2016 թվականին մշակվել է «Ազատ տնտեսական գոտիների մասին» ՀՀ օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը:

«Պետություն-մասնավոր գործընկերության մասին» օրենքի հայեցակարգը և օրենքի նախագիծը քննարկվել են շահագրգիռ կողմերի հետ: Պայմանավորվածություն է ձեռք բերվել միջազգային կազմակերպությունների հետ (ՎԶԵԲ, ԵՄ, ԱԶԲ, ՄՖԿ) հայեցակարգի մշակմանն աջակցելու վերաբերյալ, որը կարող է հիմք հանդիսանալ ներդրումային գաղափարներին պետության առավել արդյունավետ օժանդակության մեխանիզմներով աջակցելու հարցում: Մշակվել է համատեղ աշխատանքների ժամանակացույց: Օրենսդրական փաթեթը պատրաստ կլինի մինչև 2017 թվականի նոյեմբեր ամիսը:

Ներդրումային ծրագրերի ամփոփման նպատակով ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության պաշտոնական կայք-էջում ստեղծվել է ներդրումային ծրագրերի հարթակ, որի միջոցով 2016 թվականի վերջի դրությամբ նախարարությունը պետական և մասնավոր հատվածներից հավաքագրել էր շուրջ 160 ներդրումային և գործարար ծրագիր, առաջարկ և գաղափար: Դրանք ամփոփվել, և առավել հետաքրքրական, իրատեսական ծրագրերը տեղադրվել էին նախարարության պաշտոնական կայքում ստեղծված հարթակում (հարթակը գործարկվել էր 2016 թվականի նոյեմբերի առաջին տասնօրյակում, հասանելի է հետևյալ հղումով http://mineconomy.am/hy/175): Այնուհետև, 2017 թվականի փետրվար ամսին գործարկվել է ծրագրերի առանձին էլեկտրոնային հարթակ (www.investmentprojects.am), որտեղ տեղադրվում են առավել հիմնավոր ծրագրերը: Վերջիններս հղկելու և օտարերկրյա ներդրողներին ներկայացնելու համար դրանք դիտարկվում են Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ի և Հայաստանի զարգացման հիմնադրամի (ՀԶՀ) կողմից: Մշակվել են տնտեսական արդյունավետության գնահատման այն չափորոշիչները, որոնցով պետք է դասակարգվեն ստացված բիզնես գաղափարները՝ դրանք ծրագրավորման եղանակով ձևակերպելու առաջնահերթություններ սահմանելու նպատակով:

Հոկտեմբերի 10-11-ը ԱՄՆ Նյու Յորք քաղաքում կայացել է «Հայաստան. ներդրումային համաժողով 2016»-ը, որում բացման ելույթով հանդես է եկել ՀՀ Նախագահը: Ներկայացվել են գործարարությամբ զբաղվելու, տնտեսության 8 ոլորտների վերաբերյալ շնորհանդեսներ, 7

ներդրումային ծրագրեր, Հայաստանում գործող միջազգային ֆինանսական կառույցների կողմից առաջարկվող ներդրումային գործիքներ: Գրանցվել է 200-ից ավելի մասնակից:

ՀՀ պատվիրակության՝ 2016 թվականի դեկտեմբերի 21-ին ԱՄԷ կատարած այցի շրջանակներում քննարկվել են հավանական ներդրումային ծրագրերը և ապագա ներդրումային համաժողովի կազմակերպման հետ կապված հարցերը: 2017 թվականի փետրվար ամսին կազմակերպվել են Հայ-էմիրաթական ներդրումային համաժողով Աբու-Դաբիում:

Մշակվել և տպագրվել են «Հայաստանի ներդրումային ուղեցույց 2016/17»-ը և «Հայաստանի ներդրումային ծրագրեր. 2016»-ը, ներդրումային ծրագրերի բրոշյուր:

Բանակցություններ են վարվել չինական մի շարք ընկերությունների հետ ՀՀ-ում պղնձաձուլական գործարանի ստեղծման, ցեմենտի և ապակու, ինչպես նաև պեռլիտի արտադրության հիմնման ուղղությամբ, չինական կողմին են ներկայացվել վերոնշյալ ոլորտների մի շարք ներդրումային ծրագրեր: Ծրագրային առաջարկները քննարկման փուլում են:

Բանակցություններ են սկսվել երկու խոշոր ընկերությունների հետ (Իսրայել, Հնդկաստան)՝ երկրում ադամանդի արտադրության ոլորտում ներդրումների իրականացման շուրջ:

ՀՀ կառավարության կողմից կրճատվել են ներդրումային ծրագրերի շրջանակում մաքսատուրքի ազատման արտոնությունից օգտվելու համար ներկայացված հայտերի դիտարկման և ազատ տնտեսական գոտու շահագործողների հայտերի գնահատման ժամկետները:

«Այյանս» ազատ տնտեսական գոտու շահագործողի թույլտվություն է ստացել 5 ընկերություն, իսկ «Մերիդիան» ազատ տնտեսական գոտու շահագործողի՝ 4 ընկերություն: Ընկերությունների կողմից նախատեսվում է իրականացնել մոտ 50 մլն ԱՄՆ դոլարի ներդրում և ստեղծել մոտ 200 նոր աշխատատեղ:

Իրականացվող ներդրումային ծրագրերի շրջանակներում ներմուծման մաքսատուրքից ազատման արտոնություն է ստացել 10 ընկերություն: Ներդրումային ծրագրերով նախատեսված է մոտ 42 մլն ԱՄՆ դոլարի ներդրում և մոտ 1500 նոր աշխատատեղի ստեղծում:

Ներդրումային ծրագրերի շրջանակներում ներմուծված սարքավորումների ԱԱՀ-ի վճարման ժամկետի հետաձգման նպատակով 2016 թվականի դեկտեմբերի դրությամբ ՀՀ կառավարության կողմից հավանության է արժանացել 11 ներդրումային ծրագիր, որոնց շրջանակներում ներմուծվող ապրանքների արժեքը կազմելու է 43.4 մլրդ ՀՀ դրամ:

Նախաձեռնվել են ներդրումային ֆոնդի ստեղծման աշխատանքները: Մշակվել է ֆոնդի ստեղծման հայեցակարգը, և ձևավորվել է ՀՀ պետական սեփականություն հանդիսացող ու ներդրողների համար գրավիչ անշարժ գույքի ցանկ:

Ներդրվել է ընկերությունների ռեդոմիցիլացիայի (վերաբնակեցման) ինստիտուտը. ընդունվել է համապատասխան փաթեթը, ստեղծվել է խորհուրդ, մշակվել է ծրագիր և հիմնադրվել է «Հայաստանի իրավազորություն» հիմնադրամը:

Բանակցային փուլում են ներդրումների խրախուսման և փոխադարձ պաշտպանության երկկողմ համաձայնագրերի նախագծերը Չեռնոգորիայի, Կորեայի, Հնդկաստանի, Հորդանանի և Ավստրալիայի հետ: 2016 թվականի հունիսի 17-ին վավերացվել և հուլիսի 28-ից ուժի մեջ է մտել «Հայաստանի Հանրապետության կառավարության և Իրաքի Հանրապետության կառավարության միջև ներդրումների խրախուսման և փոխադարձ պաշտպանության մասին» համաձայնագիրը: 2016 թվականի հուլիսի 22-ին ստորագրվել է «Հայաստանի Հանրապետության կառավարության և Արաբական Միացյալ Էմիրությունների կառավարության միջև ներդրումների խրախուսման և փոխադարձ պաշտպանության մասին» համաձայնագիրը:

Տեսչական բարեփոխումներ

2016 թվականի ընթացքում տեսչական բարեփոխումների շրջանակներում հիմնական աշխատանքներն ուղղված են եղել տեսչական համակարգի օպտիմալացմանը, տեսչություններում ռիսկի վրա հիմնված ստուգումների համակարգի կատարելագործմանը, տեսուչների վերապատրաստմանը և տեսչություններում տվյալների փոխանակման էլեկտրոնային համակարգի մշակմանն ու ներդրմանը:

Նշված ուղղություններով կատարվել են հետևյալ հիմնական աշխատանքները.

Տեսչական համակարգի օպտիմալացում: Տեսչական բարեփոխումների խմբի կողմից իրականացվել են քարտեզագրման աշխատանքներ, որի արդյունքում հստակեցվել են վերահսկողական վեց հիմնական ուղղություններ:

Մշակվել է ՀՀ առողջապահության նախարարության առողջապահական տեսչական մարմին ստեղծելու մասին ՀՀ կառավարության որոշման նախագիծ, որի ձևավորման աշխատանքները նախատեսվում է ավարտել 2017 թվականին՝ նախագիծը ՀՀ կառավարության կողմից հաստատվելուց հետո:

Մշակվել է ՀՀ բնապահպանության նախարարության բնապահպանական պետական տեսչական մարմին ստեղծելու մասին ՀՀ կառավարության որոշման նախագիծ, որի արդյունքում լուծարվելու են գործող բնապահպանական և ընդերքի պետական տեսչությունները: Բնապահպանական տեսչական մարմնի ստեեղծումը նախատեսվում է ավարտին հասցնել 2017 թվականին:

ՀՀ գյուղատնտեսության նախարարության գյուղատնտեսական տեխնիկայի պետական տեսչությունը լուծարելու նպատակով մշակվել է ոլորտը կարգավորող օրենսդրական փոփոխությունների նախագիծ, որը ՀՀ կառավարության որոշմամբ ճանաչվել է անհետաձգելի և ներկայացվել է ՀՀ ԱԺ: Օրենսդրական փոփոխությունների նախագիծը ՀՀ ԱԺ-ի կողմից ընդունվելուց հետո ՀՀ կառավարության համապատասխան որոշմամբ 2017 թվականին լուծարվելու է գործող տեսչությունը, որի որոշակի գործառույթներ կփոխանցվեն ՀՀ ճանապարհային ոստիկանությանը:

Օպտիմալացման արդյունքում լուծարվել է ՀՀ արդարադատության նախարարության աշխատակազմի օրինականության վերահսկողության տեսչությունը, և ստեղծվել է ՀՀ արդարադատության նախարարության աշխատակազմի վերահսկողական ծառայություն:

Մշակվել են տեսչական բարեփոխումներին ուղղված օրենսդրական փաթեթներ, մասնավորապես՝ փոփոխություններ են կատարվել «Տեսչական մարմինների մասին», «Քաղաքացիական ծառայության մասին», «Պետական կառավարչական հիմնարկների մասին», «Պետական պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» ՀՀ օրենքներում: Օրենսդրական փոփոխություններով ամրագրվել են մի շարք դրույթներ, որոնք ուղղված են տեսչական մարմնի՝ որպես ինքնուրույն կառույցի անկախությանը, մասնավորապես՝ ընդլայնվել են տեսչական մարմնի ղեկավարի լիազորությունները, հստակեցվել են տեսչական մարմնի կառավարման խորհրդի լիազորությունները, սահմանազատվել են տեսչական մարմնի համար լիազոր մարմնի՝ նախարարության կողմից իրականացվող կազմակերպչական/աջակցող ֆունկցիաները, որի արդյունքում հնարավորինս բացառվել է լիազոր մարմնի՝ նախարարության միջամտությունը տեսչական մարմնի աշխատանքներին: Նախատեսվում է, որ տեսչությունների օպտիմալացման աշխատանքները կավարտվեն «Տեսչական մարմինների մասին» ՀՀ օրենքով նախանշված ժամկետում՝ մինչև 2018 թվականը:

Տեսչություններում ռիսկի վրա հիմնված ստուգումների համակարգի կատարելագործում: Մշակվել են Շուկայի վերահսկողության տեսչական մարմնի ռիսկի վրա հիմնված ստուգումների մեթոդաբանությունը և ստուգաթերթերը: Լրամշակվել են «Շուկայի վերահսկողության մասին» և «Ոչ պարենային արտադրանքի ընդհանուր անվտանգության մասին» ՀՀ օրենքների նախագծերը, օրենսդրական առաջարկներ են ներկայացվել շուկայի վերահսկողության ոլորտային օրենքներում փոփոխություններ կատարելու վերաբերյալ (Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգիրք, «Չափումների միասնականության ապահովման մասին» ՀՀ օրենք, «Տեխնիկական կանոնակարգման մասին» ՀՀ օրենք):

Համաշխարհային բանկի խմբի (ՀԲԽ) միջազգային փորձագետների կողմից առաջարկներ են ներկայացվել Առողջապահական պետական տեսչության ռիսկի վրա հիմնված մեթոդաբանության և ոլորտային ստուգաթերթերի վերաբերյալ, կազմակերպվել են համատեղ քննարկումներ, որոնց ընթացքում ներկայացվել է նաև առողջապահական ոլորտի միջազգային լավագույն փորձը, միջազգային փորձագետի մասնակցությամբ անցկացվել են ստուգաթերթերի փորձարկումներ, կազմակերպվել է պայմանական ստուգայց տնտեսավարող սուբյեկտների մոտ:

Մշակվել և տնտեսավարողների մոտ փորձարկվել են Սննդամթերքի անվտանգության պետական ծառայության ստուգաթերթերը: Սննդամթերքի անվտանգության պետական ծառայության հետ համատեղ քննարկվել և լրամշակվել են ոլորտի վերահսկողությանը վերաբերող մի շարք որոշումներ:

Տեսուչների վերապատրաստում և հանրային իրազեկում: 2016 թվականին ՀԲԽ-ի միջազգային փորձագետների ներգրավմամբ անցկացվել են վերապատրաստողների և տեսուչների հիմնական գիտելիքների վերապատրաստման դասընթացներ, ներկայացվել է միջազգային լավագույն փորձը և միջազգային պրակտիկ գործելակերպը: Կազմակերպվել են դասընթացներ Շուկայի վերահսկողության տեսչական մարմնի և Առողջապահական պետական տեսչության տեսուչների համար: Տարվա ընթացում ՀԲԽ-ի աջակցությամբ անցկացվել են տեսչական բարեփոխումների հանրային իրազեկման աշխատանքներ ՀՀ 10 մարզերում, որի շրջանակներում գործարար համայնքի ներկայացուցիչներին ներկայացվել են տեսչական բարեփոխումների ընթացքը (ստուգումների պլանավորում, ստուգման տարեկան ծրագրեր, ստուգման նախնական ծանուցում, ստուգումներ՝ ստուգաթերթերի հիման վրա, բողոքարկման ընթացակարգերը և այլն), կատարված օրենսդրական փոփոխությունները, տնտեսավարողների իրավունքները, նոր բողոքարկման մեխանիզմները:

Տեսչություններում տվյալների փոխանակման էլեկտրոնային համակարգի մշակում և ներդրում: Տեսչություններում էլեկտրոնային տեղեկատվական համակարգի ներդրման ուղղությամբ ՀԲԽ-ի փորձագետների հետ համատեղ կազմակերպվել են աշխատանքային հանդիպումներ, քննարկվել են հնարավոր լուծումները: Արդյունքում մշակվել և ներկայացվել է էլեկտրոնային տեղեկատվական համակարգի ներդրման հնարավոր 4 տարբերակ, որը գտնվում է քննարկման փուլում:

Փոքր և միջին ձեռնարկատիրության ոլորտի զարգացում

ՀՀ ԱԺ կողմից 2016 թվականի հոկտեմբերի 4-ին ընդունվել է «Տեղական տուրքերի և վճարների մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքը (ՀՕ-150-Ն)՝ ՓՄՁ սուբյեկտների և խոշոր տնտեսավարողների համար տեղական տուրքերի և

վճարների գանձման հարցում առևտրի օբյեկտների մակերեսներից կախված՝ տարբերակված մոտեցում կիրառելու ճանապարհով, ՓՄՁ սուբյեկտների հարկային բեռը թեթևացնելու նպատակով:

Աշխատանքներ են իրականացվել բազմաբնակարան շենքերում և դրանց անմիջական հարևանությամբ գործող գիշերային ակումբների ու զվարճանքի այլ օբյեկտների գործունեությունը կանոնակարգելու ուղղությամբ: Ոլորտի կարգավորմանն ուղղված ներկա օրենսդրության վերլուծության, ոլորտի գործարարների հետ քննարկումների և միջազգային փորձի ուսումնասիրության հիման վրա մշակվել է «Առևտրի և ծառայությունների մասին» ՀՀ օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը, որը կապահովի ակումբային ծառայության ոլորտում միջազգային չափորոշիչներին համապատասխան էթիկայի, վարվելակերպի և կառավարման համապատասխան նորմերի ներդրումը:

Մշակվել է «Ներքին ապրանքային շուկաներում ներմուծում-մեծածախ-մանրածախ առևտրի կարգավորումների վերաբերյալ» հայեցակարգի նախագիծը, որը ներկայացվել է Հայաստանի արդյունաբերողների և գործարարների միությունում: Նախագծում կանոնակարգող մի շարք միջոցառումներ ընդգրկվել են գործարարների առաջարկով: Հայեցակարգը քննարկվել է նաև Փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման խորհրդի նիստում:

«Աջակցություն ՓՄՁ սուբյեկտներին» 2016 թվականի ծրագրի շրջանակներում Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ի կողմից տրամադրվել է 8917 աջակցություն շուրջ 4300 սկսնակ և գործող ՓՄՁ սուբյեկտների (4 %-ը՝ Երևան քաղաքում, իսկ 96%-ը՝ ՀՀ մարզերում), մասնավորապես՝

- 152 սկսնակ գործարարների տրամադրվել է ձեռներեցությանն աջակցություն,
- 126 ՓՄՁ սուբյեկտի տրամադրվել է ուսուցողական աջակցություն,
- 8417 ՓՄՁ սուբյեկտի տրամադրվել է տեղեկատվական և խորհրդատվական աջակցություն,
- 1 ՓՄՁ սուբյեկտի տրամադրվել է 14.9 մլն ՀՀ դրամի վարկային երաշխավորություն՝ ապահովելով 14.9 մլն ՀՀ դրամի վարկային փաթեթ,
- 17 սկսնակ ՓՄՁ սուբյեկտների տրամադրվել է ֆինանսական աջակցություն՝ արտոնյալ պայմաններով վարկերի տեսքով: Ստացված վարկի ընդհանուր գումարը կազմել է 69.4 մլն ՀՀ դրամ, Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ի երաշխավորությունը՝ 71.3 մլն ՀՀ դրամ: Ծրագրի շրջանակներում սկսնակ գործարարներին տրամադրված երաշխավորության միջին գումարը կազմել է 4.2 մլն ՀՀ դրամ, վարկային միջոցների միջին գումարը՝ 4.1 մլն ՀՀ դրամ,
- 5 համայնքային խմբերում (ընդգրկված են 19 համայնքներ) համայնքների տնտեսական ներուժը բացահայտելու ուղղությամբ իրականացվել է մրցակցային առավելությունների մասնակցային գնահատում,

- 67 հոգու ընդհանուր մասնակցությամբ կազմակերպվել են ոլորտային ուղղվածություն ունեցող դասընթացներ, տպագրվել են 1 տեխնոլոգիական և 2 գործարար ուղեցույցներ,
- 193 ՓՄՁ սուբյեկտների տրամադրվել է աջակցություն Հայաստանում ձեռնարկությունների եվրոպական ցանցի գործունեության շրջանակներում:

«ՓՄՁ ներդրումներ» ՈՒՎԿ կողմից 2016 թվականի ընթացքում տրամադրվել է թվով 42 վարկ: Վարկավորման ծավալը կազմել է շուրջ 2.5 մլրդ ՀՀ դրամ, որը նպաստել է նոր արտադրության կազմակերպմանը և զարգացմանը, արտահանման խթանմանը, նոր աշխատատեղերի ստեղծմանը կամ գործող աշխատատեղերի պահպանմանը ոչ միայն մոտակա, այլև հեռավոր և սահմանամերձ բնակավայրերում:

Տեխնոլոգիական զարգացում

Մշակվել են «Միասնական ինովացիոն գործարար հարթակի» աշխատանքային մոդելը, ինչը ներառում է ինովացիոն ոլորտի զարգացման համար առաջարկվող գործիքների մանրամասն նկարագրությունը, և աշխատանքների ալգորիթմները: Հարթակի գործարկումը նախատեսված է 2017 թվականին:

Համապատասխան իրավական ակտերով կանոնակարգվել է Հայաստանում ինովացիոն գործունեության խթանման, ինովացիոն նախաձեռնությունների առաջմղման և ինովացիոն գործունեության սուբյեկտների կողմից ներկայացված ինովացիոն նախագծերի մրցույթների անցակցման և ընտրության գործընթացը:

Հունիսի 2-ին Եվրոպական ներդրումային բանկի (ԵՆԲ/EIB) հետ համատեղ կազմակերպվել և անց է կացվել «Աջակցություն նորարարություններին Հայաստանում» խորագրով համաժողովը, որի ընթացքում ԵՆԲ և Եվրոպական ներդրումային հիմնադրամի կողմից ներկայացվել են Հայաստանում նորարարությունների ֆինանսավորման նոր գործիքները:

Որակի ենթակառուցվածքի բարեփոխումներ

2016 թվականին մշակվել են «Չափումների միասնականության ապահովման մասին» և «Տեխնիկական կանոնակարգման մասին» ՀՀ օրենքների նախագծերը, որոնք ՀՀ ԱԺ կողմից ընդունվել են 2017 թվականին:

Չափագիտության ազգային ինստիտուտի (ՉԱԻ) կողմից իրականացվել է 246,270 չափման միավորի ստուգաչափում, տրամաչափարկում, 193,847 չափման միավորի փորձաքննություն, 112 միավոր չափման միջոցի տեսակի հաստատում, որից 10-ը՝ փոխճանաչման կարգով, 283 միավոր չափման միջոցի վկայագրում և մեթոդիկայի չափագիտական փորձաքննություն:

Ներկայացվել են որակի կառավարման համակարգին ներկայացվող հիմնական խնդիրները արդյունաբերական ՉԱԻ չափագիտության կենտրոնում որակի կառավարման համակարգ ներդնելու նպատակով:

Համապատասխանության գնահատման մարմինների հավատարմագրման կարգի համաձայն իրականացված՝ հավատարմագրման գործընթացի կազմակերպման աշխատանքների շրջանակներում՝

- «Հավատարմագրման ազգային մարմին» ՊՈԱԿ-ին ներկայացվել են 11 փորձարկման լաբորատորիայի (որից 2-ը՝ հավատարմագրման ընդլայնման), 7 արտադրանքի սերտիֆիկացման մարմնի (որից 2-ը՝ հավատարմագրման ընդլայնման), 2 ֆիզիկական անձանց սերտիֆիկացման մարմնի, 1 տեխնիկական հսկողություն իրականացնող մարմնի հայտեր,
- հավատարմագրվել են 6 փորձարկման լաբորատորիա, 3 արտադրանքի սերտիֆիկացման և 1 տեխնիկական հսկողություն իրականացնող մարմին,
- իրականացվել է 2 փորձարկման լաբորատորիայի պարբերական գնահատում:
- ԵՏՄ պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման նպատակով՝
- Մաքսային միության տեխնիկական կանոնակարգերի համաձայն տրված համապատասխանության սերտիֆիկատների և հայտարարագրերի միասնական ռեեստրներում ներառվել են 3316 համապատասխանության հայտարարագիր և 180 համապատասխանության սերտիֆիկատ.
- Փորձարկման լաբորատորիաների (կենտրոնների) և սերտիֆիկացման մարմինների Մաքսային միության միասնական ռեեստրում ներառվել են 4 փորձարկման լաբորատորիա, 3 սերտիֆիկացման մարմին:

ՀՀ տեխնիկական կանոնակարգերի համաձայն համապատասխանության սերտիֆիկատների և համապատասխանության հայտարարագրերի ռեեստրում ներառվել են 458 համապատասխանության հայտարարագիր և 116 համապատասխանության սերտիֆիկատ:

Արտաքին տնտեսական քաղաքականություն

2016 թվականի փետրվարի 15-ից մեկնարկած ՀՀ-ԵՄ նոր շրջանակային համաձայնագրի առևտրի և ներդրումների ուղղությամբ բանակցություններն ընթանում են 13 ոլորտային ուղղություններով՝ յուրաքանչյուրի ներքո եվրոպական կողմի հետ բանակցելով ապագա համաձայնագրի համապատասխան բաժիններ: Տարվա ընթացքում անցկացվել են բանակցային 5 փուլեր, կազմակերպվել է թվով 30 տեսակոնֆերանս՝ բանակցային գործընթացին առնչվող հարցեր քննարկելու նպատակով: Բանակցությունների հինգերորդ փուլը կայացել է դեկտեմբերի 13-14-ին Բրյուսելում: Մի շարք բանակցային գլուխների տեքստեր ամբողջությամբ համաձայնեցվել են:

Հուլիսի 7-8-ը Երևանում կայացել է Ձեռներեցության հարցերով Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիային կից խորհրդատվական կոմիտեի 9-րդ նիստը: Քննարկվել են Հայաստանի գործարար համայնքի կողմից ներկայացված հարցերը մաքսային կարգավորումների, ԵԱՏՄ շրջանակներում հարկումների, սակագնային կարգավորումների, ծառայությունների առևտրի, տրանսպորտի ոլորտի վերաբերյալ և այլն:

Հոկտեմբերի 24-28-ը Երևանում անցկացվեց ԵՄ հետ համագործակցությանը նվիրված բիզնես միջոցառումների շաբաթ, որի ընթացքում անցկացվեցին «Արևելյան ներդրումներ-2» տարեկան գործընկերության համաժողովը, Արևելյան գործընկերության երկրներում կայուն զարգացմանը նվիրված բարձր մակարդակի համաժողովը, նորարարության, կլաստերների և ՓՄՁ զարգացման կարողությունների վերաբերյալ աշխատաժողովը, ՓՄՁ-ների ֆինանսավորմանը վերաբերող աշխատաժողովը: Կազմակերպված միջոցառումներից առանձնահատուկ կարևորություն ուներ ԵՄ Արևելյան գործընկերության Բիզնեսի զարգացման պանելի 8-րդ հանդիպումը:

Դեկտեմբերի 15-ին Բրյուսելում կայացել է ՀՀ-ԵՄ համագործակցության կոմիտեի հերթական՝ 17-րդ նիստը: Նիստի ընթացքում ամփոփվել են ՀՀ-ԵՄ համագործակցության տարեկան արդյունքները, նախանշվել են ապագա քայլերն ու աշխատանքները, և ամրագրվել են իրականացվելիք աշխատանքների վերաբերյալ համապատասխան պայմանավորվածություններ:

ԵՄ «GSP+» առևտրային ռեժիմի մոնիտորինգի գործընթացի 3-րդ փուլի շրջանակներում ռեժիմի հասանելիության շարունակականության ապահովման նպատակով պատրաստվել է 27 միջազգային կոնվենցիաների՝ ՀՀ կողմից իրականացման վերաբերյալ համապարփակ զեկույց, որը ներկայացվել է Եվրոպական հանձնաժողովին:

Եվրոպական Հանձնաժողովի և ՀՀ-ում ԵՄ պատվիրակության գրասենյակի հետ աշխատանքներ են իրականացվել «Միասնական աջակցության շրջանակ (SSF) Հայաստանի համար - 2017-2020թթ.» ԵՄ աջակցության փաստաթղթի ձևավորման ուղղությամբ: Քննարկման փուլում են աջակցության թվով 23 նախնական ուղղություններ: Իրականացվող վերլուծությունների և ընթացող քննարկումների արդյունքում կնախանշվեն աջակցության հիմնական ուղղությունները՝ սահմանված ժամանակահատվածի համար:

Եվրոպական կողմի հետ ընթացքի մեջ է համագործակցությունը 2015 թվականի ԵՄ բյուջետային աջակցության փաթեթի վերջնականացման շուրջ: Ստորագրվել են «Մասնագիտական որակավորումների բարելավում աշխատատեղերի բարելավման նպատակով»՝ 15.2 մլն եվրո արժեքով, «Պետական ֆինանսների քաղաքականության բարեփոխումների ծրագիր»՝ 10 մլն եվրո արժեքով, և «Լրացում 1՝ Աջակցություն Հայաստանում մարդու իրավունքների պաշտպանությանը»՝ 5 մլն եվրո արժեքով ԵՄ Բյուջետային աջակցության համաձայնագրերը: Ստորագրվել է նաև

միջուկային անվտանգության ոլորտի վերաբերյալ ԵՄ տեխնիկական աջակցության 2015 թվականի համաձայնագիրը: Քննարկումներ են մեկնարկել նաև 2016 թվականի ԵՄ աջակցության փաթեթի շուրջ: Համապատասխան փոփոխություններ են իրականացվել միջուկային անվտանգության ոլորտի վերաբերյալ 2009 թվականի ԵՄ տեխնիկական աջակցության և գյուղատնտեսության ոլորտի՝ 2013 թվականի ԵՄ բյուջետային աջակցության համաձայնագրերում:

ԵՄ Արևելյան գործընկերության շրջանակներում ապահովվել է ՀՀ մասնակցությունը 2016 թվականի մայիսին և նոյեմբերին կայացած Տնտեսական պլատֆորմի 15-րդ և 16-րդ նիստերին, ինչպես նաև պլատֆորմի ներքո գործող առևտրի, տրանսպորտի, բնապահպանության, գյուղատնտեսության, թվային շուկաների, բիզնեսի զարգացման թեմատիկ պանելների աշխատանքներին: Ապահովվել է նաև ՀՀ մասնակցությունը 2016 թվականի ընթացքում Արևելյան գործընկերության շրջանակներում կազմակերպված ՓՄՁ հարցերով, տեղեկատվական տեխնոլոգիաների հարցերով, տրանսպորտի հարցերով, բնապահպանության հարցերով թեմատիկ նախարարական հանդիպումներին:

ԵԱՏՄ անդամակցությամբ պայմանավորված ԱՀԿ շրջանակներում մաքսատուրքի սահմանային դրույքաչափերի ՀՀ ստանձնած պարտավորությունների փոփոխման շրջանակներում ընթացող բանակցային գործընթացի շրջանակներում հունիսին Ժնևում կայացել է բանակցությունների երկրորդ փուլը, իրականացվել են ԱՀԿ անդամ երկրների հետ երկկողմ բանակցություններ, պատրաստվել են բանակցային փաթեթներ և առաջարկներ, ներկայացվել է ՀՀ դիրքորոշումը: Բանակցային գործընթացի շրջանակներում ՀՀ կողմից փոխհատուցումային նախնական անհատական առաջարկներ են նախապատրաստվել 11 ԱՀԿ անդամ երկրների (ԱՄՆ, ԵՄ, Ճապոնիա, Շվեյցարիա, Կանադա, Չինաստան, Արգենտինա, Բրազիլիա, Թայվան, Ուկրաինա, Վրաստան) համար: Բանակցային երկկողմ հանդիպումներ են կայացել 8 ԱՀԿ անդամ երկրների հետ (ԵՄ, Կանադա, Թայվան, Շվեյցարիա, Բրազիլիա, Արգենտինա, Ճապոնիա, Ուկրաինա): Բանակցային խմբի կողմից մշակվել են փոխհատուցման առաջարկները, որոնք պետք է ներկայացվեն բանակցային գործընթացում ընդգրկված պետություններին: Բանակցային գործընթացի շրջանակներում նաև կազմակերպվել և անցկացվել են 4 տեսակոնֆերանսներ, նախապատրաստվել են դիրեկտիվների և ԵԱՏՄ Խորհրդի համապատասխան որոշման նախագծեր, տեղեկանքներ:

ԱՀԿ համաձայնագրերի պահանջների և ՀՀ ստանձնած պարտավորությունների ներքո ԱՀԿ քարտուղարություն է ներկայացվել թվով 56 ծանուցում, նախապատրաստվել և ԱՀԿ քարտուղարությանն է տրամադրվել թվով 18 ծանուցում, ինչպես նաև ուսումնասիրվել են մի շարք փաստաթղթերի փաթեթներ ԱՀԿ հետևյալ կառույցներում՝ Ապրանքների առևտրի խորհուրդ,

Սուբսիդիաների և փոխհատուցման միջոցառումների կոմիտե, Ծառայությունների կոմիտե, Մտավոր սեփականության հարցերով կոմիտե, Պետական գնումների կոմիտե, Գյուղատնտեսական հարցերով կոմիտե, Վեճերի կարգավորման մարմին և այլն:

Հայաստան-ԱՄՆ առևտրի և ներդրումների խորհրդի շրջանակներում պարբերաբար գումարվում են աշխատանքային խմբերի հանդիպումներ, քննարկվում է համագործակցության ընթացիկ վիճակը:

Երևանում կայացել են Եվրասիական Գործընկերության Միջազգային Համաժողովը և դրա շրջանակներում հայ-ռուսական միջտարածաշրջանային համաժողովը:Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն ՀՀ վարչապետի այցի շրջանակներում ապահովվել է ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության և ԼՂՀ էկոնոմիկայի նախարարության միջև համագործակցության հուշագրի ստորագրումը: Ստեղծվել է աշխատանքային խումբ:

Կայացել են Չեխիայի Հանրապետության առևտրի և արդյունաբերության նախարար Յան Մլադեկի գլխավորած պատվիրակության, Սինգապուրի առևտրի և արդյունաբերության հարցերով պետական նախարար Կոհ Փոհ Կունի այցերը ՀՀ: Նախապատրաստվել և կազմակերպվել է Տաջիկստանի արդյունաբերության և նոր տեխնոլոգիաների նախարարի այցը ՀՀ:

Կազմակերպվել և Երևանում անց է կացվել ԵԱՏՄ-Իրան ազատ առևտրի համաձայնագրի շուրջ բանակցությունների երկրորդ փուլը:

Անց են կացվել հայ-բելառուսական, հայ-չեխական, հայ-լեհական, հայ-ղազախական համատեղ նիստերը: Հայ-չեխական և հայ-լեհական միջկառավարական հանձնաժողովների նիստերի շրջանակներում անցկացվել են գործարար համաժողովներ:

Արդյունաբերական քաղաքականություն

ԵԱՏՄ անդամ պետությունների միջև արդյունաբերական կոոպերացիայի զարգացման և խորացման աշխատանքների շրջանակներում փոխադարձ այցելություններ են կազմակերպվել և բանակցություններ ընթացել ռուսական խոշոր «Միացյալ նավաշինական ընկերություն» ձեռնարկության և հայկական ընկերությունների միջև համագործակցության շուրջ:

Շարունակվել են բանակցություններն Անգոլայից ալմաստի հումքի մատակարարումներ կազմակերպելու ուղղությամբ:

Ոսկերչության և ադամանդագործության ոլորտում առկա խնդիրները պարզելու նպատակով հանդիպում-խորհրդակցություն է անցկացվել ավելի քան 30 ընկերությունների մասնակցությամբ:

ՌԴ-ից ալմաստի մատակարարվող հումքի որակը բարձրացնելու նպատակով հանդիպում է կազմակերպվել ՌԴ պետական գանձարանի (ԳոՀՐան) ղեկավար պրն Ա. Յուրինի և ԱԼՌՈՍԱ

ընկերության նախագահ պրն Ա. Ժարկովի հետ: Արդյունքում բարելավվել է ԱԼՌՈՍԱ-ից մատակարարվող հումքի որակը, և 2018 թվականից կսկսվեն ալմաստի հումքի կանոնավոր մատակարարումները ՌԴ ԳոՀՐան-ից:

ՀՀ-ում ԻԻՀ արտակարգ և լիազոր դեսպանի հետ պայմանավորվածության համաձայն ստեղծվել է առևտրատնտեսական համագործակցության հարցերով հայ-իրանական համատեղ աշխատանքային խումբ:

Մարտի 23-ին ՀՀ և ԱՄՆ միջև ստորագրված Առևտրի և ներդրումների շրջանակային համաձայնագրի շրջանակներում անց է կացվել «Արտոնությունների ընդհանրացված համակարգի (GSP)» վերաբերյալ սեմինար, որի ընթացքում ներկայացվել են «Հայաստանի արտահանման ծավալների ընդլայնումը արտոնությունների ընդհանրացված համակարգի միջոցով» խորագրով շնորհանդեսը, Հայաստանից ԱՄՆ արտահանման ծավալները, համակարգից օգտվելու ընթացակարգերը:

Մշակվել է «Արդյունաբերության զարգացման 2017-2021թթ. պետական ծրագիրը և ծրագրի իրականացման միջոցառումների ժամանակացույցը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը, որտեղ ներառված են վերոնշյալ արդյունքների ապահովման համար համապատասխան միջոցառումներ:

24 ոլորտների շուրջ 300 արդյունաբերական ընկերությունների արտադրական ցուցանիշների վերաբերյալ ամսական մոնիտորինգի, ինչպես նաև մի շարք ոլորտային միությունների ու տարբեր ընկերությունների ներկայացուցիչների հետ կայացած հանդիպումների արդյունքում քննարկվել են առկա խնդիրները, քայլեր են ձեռնարկվել բարձրացված խնդիրների լուծման ուղղությամբ:

Արդյունաբերական կազմակերպությունների հետ համագործակցության շրջանակն ընդլայնելու ու վերջիններիս հետ անմիջական աշխատանքի միջոցով վեր են հանվել արտադրության և արտահանման գործընթացներում առկա խնդիրները, ու դրանց լուծումներ տալու նպատակով մշակվել են մի շարք իրավական ակտերի նախագծեր:

Գործարարների քննարկմանն է ներկայացվել «Ադամանդագործության և ոսկերչության 2017-2020թթ. զարգացման» ծրագիրը: Ուսումնասիրվել են ադամանդագործության և ոսկերչության ոլորտը կարգավորող օրենսդրությունը պարզեցնելու և գործարարների ու հնարավոր ներդրողների համար վարչարարությունը մեկ պատուհանի սկզբունքով իրականացնելու հնարավորությունները:

Եվրասիական տնտեսական հանձնաժողովի տեխնիկական կանոնակարգերում և համաձայնագրերում ապահովվել են ազգային արտադրողի շահերը պաշտպանող և սահմանափակումները վերացնող դրույթների ներառումը, մասնավորապես՝ «ԵԱՏՄ անդամ չհանդիսացող երրորդ երկրների հետ փոխադարձ առևտրում տեխնիկական խոչընդոտների

վերացման կարգի և պայմանների մասին» համաձայնագրում, «Ցորենի անվտանգության մասին», «Սննդամթերքի անվտանգության մասին», «Կաթի և կաթնամթերքի անվտանգության մասին», «Տարայավորված խմելու ջրի անվտանգության մասին՝ ներառյալ բնական հանքային ջրերը», «Թռչնամսի և դրա վերամշակումից ստացված արտադրանքի անվտանգության մասին», «Հանքային պարարտանյութերին ներկայացվող պահանջների մասին», «Անիվավոր տրանսպորտային միջոցների անվտանգության մասին», «Մանկական խաղահրապարակների սարքավորումների անվտանգության մասին», «Շենքերի և շինությունների անվտանգության վերաբերյալ» «Ածուխի և նրա վերամշակման նյութերի պահանջների վերաբերյալ», «Սինթետիկ լվացող միջոցների և կենցաղային քիմիայի ապրանքների անվտանգության մասին», «Լաքաներկային նյութերի անվտանգության մասին», «Սննդամթերքի անվտանգության մասին», «Սննդամթերքի հետ շփվող նյութերի անվտանգության մասին», «Ճարպայուղային արտադրանքի տեխնիկական կանոնակարգ» տեխնիկական կանոնակարգերում:

ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության և Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերության (GIZ) համանախագահությամբ մեկնարկել է «Սիրիացի փախստականների տնտեսական ինտեգրում» ծրագիրը, որի շրջանակներում մայիսի 19-22-ը կազմակերպվել էր «Տնտեսական հնարավորությունների շաբաթ» ֆորումը՝ նպատակ ունենալով խթանել սիրիահայերի շրջանում ձեռնարկատիրությունը և մասնագիտական կողմնորոշումը: Ֆորումի 4 օրերի ընթացքում կազմակերպվել էր ցուցահանդես, որտեղ սիրիահայերի կողմից Հայաստանում հիմնված ավելի քան 50 մասնավոր ընկերություններ ներկայացրեցին իրենց արտադրանքն ու ծառայությունները:

Կազմակերպվել է «Պատրաստված է Հայաստանում» ցուցահանդեսը, որտեղ շուրջ 300 արդյունաբերական ընկերություններ ներկայացրել են իրենց արտադրանքը:

Կազմակերպվել է ոսկերչության ոլորտում աշխարհում խոշորագույնը համարվող Համաշխարհային ոսկերչական կոնֆեդերացիայի (CIBJO) տարեկան համաժողովը և «JUNWEX Yerevan Show 2016» ցուցահանդեսը: Միջոցառումներին ներկա են եղել ոսկերչության ոլորտի ներկայացուցիչներ աշխարհի տարբեր երկրներից, որից մոտ 100-ը՝ բարձրաստիճան հյուրեր:

Նախապատրաստվել և ԵԱՏՄ շրջանակներում կազմակերպվել է «Антиконтрафакт-2016» միջազգային համաժողովը, որի ընթացքում ստորագրվել է «Համատեղ հայտարարություն արդյունաբերական ապրանքների ապօրինի շրջանառության դեմ պայքարի մասին»:

Աստանայում կայանալիք «Էքսպո-2017» միջազգային ցուցահանդեսին ՀՀ մասնակցության նպատակով վարվել են բանակցություններ կազմակերպիչների հետ, որոնց արդյունքում ՀՀ-ին կցուցաբերվի ֆինանսական օժանդակություն:

Քննարկումներ են տարվում այն ընկերությունների հետ, որոնք համապատասխան լոգիստիկ ենթակառուցվածքներ (պահեստային և օֆիսային տարածքներ) ունեն ԵԱՏՄ պետություններում՝ այդ շուկաներում բավարար չափով չներկայացված, սակայն արտահանման ներուժ ունեցող փոքր արտադրողների հայկական ապրանքատեսակները կազմակերպված ձևով ներկայացնելու և դրանց արտահանման կանոնավոր մեխանիզմներ մշակելու ուղղությամբ: Միջազգային կազմակերպությունների օժանդակությամբ առաջիկայում աշխատանքներ կծավալվեն նաև համանման մեխանիզմների աշխարհագրությունն ընդլայնելու ուղղությամբ:

Աշխատանքներ են տարվել Ռուսաստանի Դաշնության Վերին Լարս մաքսային կետով ԵԱՏՄ շուկաներ հայաստանյան ապրանքատեսակների արտահանման խնդիրներին օպերատիվ լուծումներ տալու նպատակով:

Հայաստանյան գործարարների մուտքը դեպի Իրանի Իսլամական Հանրապետություն հաճախ դժվարանում էր հայաստանյան մարդատար տրանսպորտային միջոցների ազատ տեղաշարժման խոչընդոտների առկայությամբ, ինչը դրսևորվում էր դրանք Իրան մուտք գործելու համար չափազանց մեծ երաշխիքային վճարների առկայությամբ: Համապատասխան բանակցությունների արդյունքում հայաստանյան մարդատար տրանսպորտային միջոցների համար սահմանված մուտքի երաշխիքային վճարը փոխարինված է ապահովագրությամբ և նախկինում պահանջվող արժեքային շեմը նվազեցված է երեք անգամ:

2016 թվականի հուլիսի 22-ին «Հավատարմագրման ազգային մարմին» ՊՈԱԿ-ը հայտ է ներկայացրել հավատարմագրման եվրոպական համագործակցության (EA) քարտուղարություն՝ ասոցացված անդամ դառնալու նպատակով: Նոյեմբերի 22-24-ը Շվեդիայում կայացած գագաթնաժողովում ընդունվեց ՀՀ «Հավատարմագրման ազգային մարմին» ՊՈԱԿ-ը (ARMNAB) (EA)-ի ասոցացված անդամ դառնալու վերաբերյալ որոշում և ստորագրվեց անդամակցության համաձայնագիր: Աշխատանքներ են տարվում (EA)-ի լիիրավ անդամ դառնալու ուղղությամբ, որի արդյունքում կկրճատվի կամ կվերացվի եվրոպական երկրներում վերագնահատման անհրաժեշտությունը, կապահովվի ապրանքների ազատ տեղաշարժը:

Բանակցություններ են տարվում նաև Իրանի իսլամական հանրապետության Ստանդարտների և արդյունաբերական հետազոտությունների ինստիտուտի հետ՝ ՀՀ-ում Իրանի փորձարկման լաբորատորիաների և սերտիֆիկացնող մարմինների մասնաճյուղեր հիմնելու ուղղությամբ: Դա թույլ կտա նախապես համաձայնեցված եղանակով Հայաստանում կատարված սերտիֆիկացման արդյունքները ճանաչելի դարձնել Իրանի Իսլամական Հանրապետությունում: Իրանի Իսլամական Հանրապետություն հայաստանյան արտադրության ապրանքների մուտքը հեշտացնելու նպատակով աշխատանքներ են տարվում Իրանի հետ սահմանագծին ազատ տնտեսական գոտու ձևավորման

ուղղությամբ: Ազատ տնտեսական գոտու վերաբերյալ հայեցակարգը քննարկվել է հայ-իրանական գործարար համաժողովի ընթացքում: Սկսվել են ազատ տնտեսական գոտու ստեղծման աշխատանքները, որոնց ավարտը նախատեսվում է 2018 թվականի մայիսին:

Վերլուծվում են արտահանող արդյունաբերության մեջ զգալի կշիռ ունեցող ձեռնարկությունների ցուցանիշներն՝ ըստ տնտեսության ճյուղերի: Առավել մեծ կշիռ ունեցող ոլորտները ներկայացնող ձեռնարկությունների համար մշակվում է արտադրական ծրագրերի հիմնական ցուցանիշների և դրանց առանձնահատուկ արտադրական խնդիրների խմբավորված ռեեստր: Ըստ ուսումնասիրության արդյունքների՝ յուրաքանչյուրի խմբի խնդիրներին կտրվեն համապատասխան լուծումներ:

Կազմակերպվել են մի շարք գործարար և ներդրումային համաժողովներ, այդ թվում՝

- Սեպտեմբերի 20-ին՝ «Հայաստանը՝ որպես դարպաս դեպի մեծ շուկաներ» խորագրով համաժողովը, որին հրավիրվել և մասնակցել է շուրջ 250 անձ, այդ թվում՝ պետական և մասնավոր հատվածի ներկայացուցիչներ Հայաստանից, ԵԱՏՄ երկրներից, Իրանից և միջազգային կառույցներից.
- Հայաստանի ոսկերիչների ասոցիացիայի (AJA) հետ համատեղ հոկտեմբերի 24-28-ը Համաշխարհային ոսկերչական կոնֆեդերացիայի (CIBJO) տարեկան համաժողովը Երևանում, որին մասնակցել են ավելի քան 80 պատվիրակներ 25 երկրներից. 100-ի մեջ ներառված են նաև ցուցահանդեսի մասնակիցները
- Դեկտեմբերի 21-ին՝ «Հայաստան-Իրան» գործարար համաժողովը Երևանում: Համաժողովի ընթացքում երկու երկրների ձեռներեցների միջև նոր գործարար կապեր հաստատելու նպատակով անցկացվել են B2B հանդիպումներ, որոնց մասնակցել է ավելի քան 170 գործարար, ստորագրվել է համագործակցության 5 հուշագիր:

Կազմակերպվել և/կամ ապահովվել է «Мосшуз», «World food Moscow 2016», «CPhI Worldwide», «Текстильлегпром 2016», «Արտադրված է Հայաստանում 2016», «Հայաստան էքսպո-Թեհրան», «ArmHiTec-2016», «Եվրասիական շաբաթ», «JUNWEX YEREVAN SHOW» և այլ ցուցահանդեսներին մասնակցությունը: Ընդհանուր առմամբ 17 միջազգային ցուցահանդեսներին ապահովվել է հայկական շուրջ 570 ընկերությունների մասնակցությունը, որոնց արդյունքում ձեռք են բերվել ավելի քան 80 պայմանագրեր և պայմանավորվածություններ՝ ավելի քան 1.57 մլրդ ՀՀ դրամի չափով:

Հայաստանի արտահանման ապահովագրական գործակալության գործունեության արդյունքները հետևյալն են՝

- Փաստացի ապահովագրական գումարը՝ 2 միլիարդ 186 միլիոն ՀՀ դրամ (շուրջ 5.6 անգամ աճ 2015 թվականի նկատմամբ).

- Հաստատված սահմանաչափեր՝ 4.04 միլիարդ ՀՀ դրամ (շուրջ 4 անգամ աճ 2015 թվականի նկատմամբ).
- Հայտ ներկայացրած կազմակերպությունների քանակ՝ 60 (2.8 անգամ աճ 2015 թվականի նկատմամբ).
- Ընկերության ապահովագրական պոլիսի ներքո անգրավ ֆինանսավորում իրականացնող բանկերի քանակի և վարկավորման ծավալի էական աճ է գրանցվել: Վարկավորման միջին տոկոսադրույքը դոլարով և եվրոյով կազմում է 8%.
- Ներդրվել է նախաարտահանման ֆինանսավորման ապահովագրության ծառայություն, որի շրջանակներում ամբողջովին լուծվել է արտահանողի՝ շրջանառու կապիտալի նկատմամբ պահանջարկը ինչպես արտադրության, այնպես էլ տարաժամկետ վճարման սպասման փուլերում.
- Համագործակցության պայմանագրեր (հուշագրեր) են կնքվել Գերմանիայի, Իտալիայի, Չեխիայի, Ռուսաստանի Դաշնության, Բելառուսի, Իրանի Իսլամական Հանրապետության, Չինաստանի ապահովագրական գործակալությունների հետ: Գերմանական և իտալական կառույցների հետ կնքված հուշագրերը նախատեսում են նաև ընկերության կողմից աջակցություն ՀՀ տնտեսավարող սուբյեկտներին տեխնոլոգիաների ներմուծման համար եվրոպական բանկերի կողմից ֆինանսավորման գործընթացում: Ընկերությունը հանդիսանում է ավելի քան 90 անդամ-կազմակերպություն ունեցող աշխարհի խոշորագույն արտահանման ապահովագրական կառույցները միավորող՝ Բեռնի միության անդամ:

Տեղեկատվական տեխնոլոգիաներ

«Տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի պետական աջակցության մասին» ՀՀ օրենքի շրջանակում հարկային արտոնություններից օգտվելու նպատակով՝

- հավաստագրեր ստանալու համար ընթացիկ տարում դիմել են 105 ընկերություններ 421 նոր աշխատատեղեր ստեղծելու հնարավորությամբ,
- վերոնշյալ ընկերություններից հավաստագրվել են 102 ընկերություններ և ստեղծվել են 412 նոր աշխատատեղեր:

Հունվարի 1-ից ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարությունը վարում է ՏՏ ոլորտի վարչական ռեգիստրը, որի նպատակն է ապահովել ոլորտի վարչական վիճակագրական տեղեկությունների հավաքագրումը և դրանց հիման վրա վերլուծությունների ու կանխատեսումների իրականացումը:

Բարձր որակավորմամբ տեխնոլոգիական մասնագետների պատրաստման և վերապատրաստման, աքսելերացիոն ծրագրերի իրագործման նպատակով իրականացվել են

Գյումրու և Վանաձորի տեխնոլոգիական կենտրոնների ծրագրերը: 2016 թվականի հոկտեմբերին տեղի է ունեցել Վանաձորի տեխնոլոգիական կենտրոնի պաշտոնական բացումը:

Գյումրու տեխնոլոգիական կենտրոնում՝

- մասնագիտական դասընթացների արդյունքում վերապատրաստվել են 3821 աշակերտներ, ուսանողներ և մասնագետներ.
- բիզնես խորհրդատվություն և աջակցություն է տրամադրվել ավելի քան 60 սկսնակ թիմերի, ընկերությունների և անհատ ձեռնարկատերերի.
- կենտրոնում գործում են 21 ընկերություններ՝ 150 աշխատատեղով.
- կենտրոնի առկա կիրառելի տարածքի զբաղվածությունը կազմում է 99%.
- առկա պայմանավորվածությունների շրջանակում կենտրոնում նախատեսվում է ևս 2 նոր ընկերությունների ներգրավում:

Վանաձորի տեխնոլոգիական կենտրոնում՝

- մասնագիտական դասընթացների արդյունքում վերապատրաստվել են 4380 աշակերտներ, ուսանողներ և մասնագետներ.
- բիզնես խորհրդատվություն և աջակցություն է տրամադրվել 68 սկսնակ թիմերի, ընկերությունների և անհատ ձեռնարկատերերի:

«Մայքրոսոֆթ» ինովացիոն կենտրոնում կազմակերպվել է 53 երկարաժամկետ դասընթաց՝ թվով 739 մասնակիցներով:

Հայ-հնդկական ՏՀՏ ուսումնական կենտրոնում կազմակերպվել են 84 կարճաժամկետ և երկարաժամկետ դասընթացներ ու սեմինարներ՝ թվով 1180 մասնակիցներով:

«Նեյշնլ Ինսթրումենթս»-ի հետ համատեղ իրականացվող Հայկական ազգային ճարտարագիտական լաբորատորիայի ծրագրի շահառուների քանակը հասնում է 4000-ի:

2016 թվականի ապրիլի 18-ին ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության և «SAP» ընկերության միջև ստորագրվել է փոխըմբռնման հուշագիր, որի շրջանակում նախատեսվում է համագործակցություն ընկերության հետ համատեղ ներդրումային ծրագրերի իրականացման, ընկերության կողմից հայաստանյան բուհերում վերապատրաստումների կազմակերպման, Հայաստանում «SAP» ընկերության Հետազոտությունների և մշակումների (R&D) կենտրոնի ստեղծման ուղղությամբ՝ «ամպային» տեխնոլոգիաների ոլորտում ընկերության փորձի և գիտելիքների փոխանցումը, սկսնակներին աջակցությունը, հետազոտությունների և մշակումների իրականացումը, գլոբալ մրցակցային արտադրանքի և ծառայությունների խթանումն ապահովելու նպատակով: 2016 թվականի հոկտեմբերին նշանակվել է ընկերության ներկայացուցիչ, որը զբաղվում է շահագրգիռ գործընկեր կողմերի հետ քննարկումների անցկացմամբ:

Կայացել է ՀՀ պատվիրակության այցը ԱՄՆ՝ Սան Ֆրանցիսկոյում ԱՄՆ Սիլիկոնյան հովտում կայացած ԱրմԹեք 2016 Հայաստան SS ֆորումին և Գլենդելում կայացած գործարար համաժողովին մասնակցելու նպատակով:

Հունիսի 10-ին ԱՄՆ Սիլիկոնյան հովտում, Սինոփսիս Մաունթին Վյու կամպուսում «ԱրմԹեք 2016» Հայաստանի բարձր տեխնոլոգիաների ոլորտի գլոբալ համաժողովի շրջանակում տեղի է ունեցել «Հայաստան SS ֆորումը»: Ֆորումի մասնակիցների ընդհանուր թիվը կազմել է ավելի քան 100: Տեղի են ունեցել հայկական պատվիրակության այցեր «Սինոփսիս», «Ինթել», «Նվիդիա», «Ռեդդիթ» ընկերություններ, «ԱյԲիԷմ» հետազոտությունների ու մշակումների (R&D) կենտրոն:

Նոյեմբերի 10-ին տեղի է ունեցել «IBM»-ի նորարարական լուծումների և տեխնոլոգիաների կենտրոնի պաշտոնական բացումը: Կենտրոնի ծրագրի շրջանակում իրականացվել են 100 դասընթացներ և սեմինարներ, որոնց մասնակիցների թիվը գերազանցել է 1500-ը, ինչպես նաև բիզնես խորհրդատվություն է տրամադրվել ավելի քան 30 սկսնակ թիմերի:

Իրականացվել են «Գրանատուս» վենչուրային ֆոնդի ծրագրի դիտարկման աշխատանքները: Ֆոնդի կառավարչի կողմից պայմանագրեր են ստորագրվել 8 ընկերությունների հետ:

Մասնակցություն է ապահովվել ԵԱՏՄ և ԵՄ շրջանակներում թվային տնտեսությունների ինտեգրմանն ուղղված աշխատանքներին:

Սեպտեմբերի 30-ից հոկտեմբերի 2-ը ՀՀ վարչապետի բարձր հովանու ներքո տեղի է ունեցել 12-րդ ամենամյա «Դիջիթեք» տեխնոլոգիական ցուցահանդեսը, որի բացման արարողությանը ներկա էր նաև ՀՀ Նախագահը: Ցուցահանդեսին մասնակցել են տեղական ու արտասահմանյան (հնդկական, ամերիկյան, ռուսական, շվեդական, չինական) 124 ընկերություններ, 60000 այցելու:

Նոյեմբերի 18-19-ին Դիլիջանում «Հայաստան 20.18 - 2018թ.՝ Հայաստանը ամենանորարար երկրների շարքում» խորագրի ներքո տեղի է ունեցել 4-րդ Բիզնես ինովացիոն ֆորումը, որին մասնակցել են շուրջ 200 մասնակիցներ: Ֆորումին մասնակցում էին նաև Գերմանիայից, Իսրայելից, Թայվանից, Ռուսաստանից և Բուլղարիայից ժամանած խոսնակներ, որոնք ֆորումի մասնակիցներին ներկայացրեցին ինովացիոն ոլորտում իրենց երկրների հաջողված փորձը:

Դեկտեմբերի 11-ին տեղի է ունեցել վենչուրային համաժողով, որի ընթացքում ներկայացվել են «Գիտության և տեխնոլոգիաների ձեռներեցության ծրագրի (STEP) շրջանակում հայտարարված «Գաղափարից դեպի շուկա» դրամաշնորհային մրցույթին ստացված տեղեկատվական, բարձր և մաքուր տեխնոլոգիաների, ճարտարագիտության, ինչպես նաև գյուղատնտեսության ոլորտների ավելի քան 70 ծրագրերից ընտրված 20 ծրագրերը: Հաղթող ճանաչված 5 ծրագրեր արժանացել են դրամական մրցանակների:

Զբոսաշրջություն

2016 թվականի հոկտեմբերի 1-4-ը Երևանում տեղի ունեցավ ՄԱԿ-ի Զբոսաշրջության համաշխարհային կազմակերպության (ՁՀԿ) աֆիլացված անդամների 38-րդ նստաշրջանը: Նստաշրջանին մասնակցեցին ՄԱԿ ՁՀԿ գլխավոր քարտուղար Թալեբ Ռիֆաին, գործադիր տնօրեն Կառլոս Վոգելերը, ՄԱԿ ՁՀԿ աֆիլացված անդամների խորհրդի նախագահ, Ճամայկայի զբոսաշրջության նախարար Էդմունդ Բարտլետը, ՄԱԿ ՁՀԿ աֆիլացված անդամների ծրագրի տնօրեն Յոլանդա Պերդոմոն, աֆիլացված անդամներ ավելի քան 20 երկրներից, այդ թվում՝ գործարարներ, ներկայացուցիչներ գործարար միություններից, միջազգային առաջատար կրթական հաստատություններից, լրատվամիջոցներից, բարձրաստիճան պաշտոնյաներ, մասնավոր հատվածի ներկայացուցիչներ, կրթական հաստատություններ, լրատվամիջոցներ Հայաստանից և Արցախից, ուսանողներ տարբեր ԲՈՒՀ-երից՝ ընդհանոր թվով շուրջ 150 մասնակից: Թալեբ Ռիֆաին հանդիպում ունեցավ ՀՀ Նախագահի և ՀՀ վարչապետի հետ: Նստաշրջանն ուղիղ հեռարձակմամբ ներկայացվեց ՄԱԿ ՁՀԿ կայք-էջով (www.unwto.org) և լայն արձագանք ստացավ հայաստանյան լրատվամիջոցների կողմից ու սոցիալական ցանցերում:

Հայաստանի զբոսաշրջային ընկերությունները մասնակցել են մարտի 23-26-ը ՌԴ մայրաքաղաք Մոսկվայի «MITT'2016» և մարտի 9-13-ը Գերմանիայի մայրաքաղաք Բեռլինում «ITB'2016» միջազգային զբոսաշրջային ցուցահանդեսներին՝ ներկայացնելով Հայաստանի և Արցախի զբոսաշրջային գրավչությունները:

Իրականացվել են ՀՀ Սյունիքի մարզի Գորիս քաղաքում «Թութ» խորագրով «Սյունյաց ավանդույթներ», ՀՀ Տավուշի մարզի Դիլիջան քաղաքում պատմամշակութային վերածննդին նպաստող և ՀՀ Վայոց ձորի մարզի Խաչիկի համայնքում «Գյուղական ավանդույթներ» փառատոնները:

2016 թվականի օգոստոսին ուժի մեջ է մտել հունիսի 5-ին ստորագրված «Հայաստանի Հանրապետության Կառավարության և Իրանի Իսլամական Հանրապետության Կառավարության միջև քաղաքացիների առանց մուտքի արտոնագրի այցելությունների մասին» փոխըմբռնման հուշագիրը, որի համաձայն Հայաստանի և Իրանի քաղաքացիները միմյանց տարածք մուտք գործելու, տարանցիկ անցնելու և գտնվելու համար ազատվում են մուտքի արտոնագիր ձեռք բերելու պահանջից:

Համաշխարհային շուկային Հայաստանի հասանելիության բարձրացման նպատակով դյուրացվել է Չինաստանի քաղաքացիների համար դեպի Հայաստան սահմանային անցման գործընթացը: Նոյեմբերի 10-ից Չինաստանի քաղաքացիները կարող են մուտքի արտոնագիր

ստանալ, բացի Հայաստանի դիվանագիտական ներկայացուցչություններից, նաև սահմանային անցման կետերում կամ առցանց:

Մշակման փուլում է դեպի Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն ներգնա և ներքին զբոսաշրջային հոսքերի ուղղորդման ծրագիրը, ինչպես նաև՝ առավելագույն ջանքեր են գործադրվելու ճանաչողական այցերի ծրագրերում Արցախն առավել ակտիվորեն ընդգրկելու ուղղությամբ: Մշակվել է Գյումրի քաղաքի զբոսաշրջության զարգացման համառոտ ծրագիր-տեսլականը: Մեկնարկել է Ուխտագնացության զբոսաշրջության փաթեթի մշակման գործընթացը:

Ներգնա զբոսաշրջային այցելություններ: 2016 թվականի հունվար-սեպտեմբերին Հայաստան ներգնա զբոսաշրջային այցելությունները կազմել են 969010, և 2015 թվականի նույն ժամանակաշրջանի նկատմամբ ցուցանիշն աճել է 3.6%-ով: Արտագնա զբոսաշրջային այցելությունները կազմել են 903541, և 2015 թվականի նույն ժամանակաշրջանի նկատմամբ ցուցանիշն աճել է 3.0%-ով: Հայաստանի ներգնա զբոսաշրջային այցելությունների աճը հիմնականում պայմանավորված է Հայաստանի համար նպատակային շուկա հանդիսացող երկրներից այցելությունների աճով:

Հունվար-սեպտեմբերին ներքին զբոսաշրջային այցելությունները կազմել են 867495, 2015 թվականի նույն ժամանակաշրջանի նկատմամբ գրանցվել է 11% աճ: 2016 թվականի հունվար-սեպտեմբեր ամիսների ընթացքում սոցիալական փաթեթի հանգստի ապահովման ծառայության շրջանակներում իրացվել է շուրջ 54000 պայմանագիր՝ 2015 թվականի նույն ժամանակահատվածի (49800) համեմատ աճելով 8.4%-ով: Չնայած սոցիալական փաթեթի շրջանակներում մատուցված ծառայությունները ներքին զբոսաշրջային այցելությունների շուրջ 10%-ն են կազմում, սոցիալական փաթեթի հանգստի ապահովման ծառայությունը, բացի իր հիմնական նպատակի իրականացումից, էապես նպաստել է ներքին զբոսաշրջության զարգացմանը՝ նաև ներքին զբոսաշրջիկների շրջանում տեղական զբոսաշրջավայրերի վերաբերյալ տեղեկատվության տարածման տեսանկյունից:

Հյուրանոցաշինություն: Ներկայումս ՀՀ տարածքում գործում են շուրջ 340 հյուրանոցային տնտեսության օբյեկտներ (հյուրանոց, մոթել, հյուրանոցատիպ հանգրվան, առողջարան, պանսիոն, հանգստյան կամ մասնագիտացված տուն, զբոսաշրջային բնակատեղի (hostel), ճամբար), որոնց հյուրանոցային համարների և ննջատեղերի ընդհանուր քանակը կազմում է համապատասխանաբար 10337 և 20597: Նշված օբյեկտների 36%-ը գտնվում է Երևանում, 64%-ը՝ ՀՀ մարզերում (124-ը Երևանում՝ ապահովելով 3583 համար և 6153 ննջատեղ, 217-ը մարզերում՝ ապահովելով 6754 համար և 14363 ննջատեղ): Գործում են 188 հյուրանոցներ (7015 համար և 13577 ննջատեղ), որոնցից 71-ը՝ Երևանում՝ ապահովելով 3203 համար և 5516 ննջատեղ, 117-ը՝ մարզերում՝ ապահովելով 3816 համար և 8061 ննջատեղ:

Բացի հյուրանոցային տնտեսության օբյեկտներից Հայաստանում (հիմնականում գյուղական համայնքներում) գործում են ավելի քան 210 զբոսաշրջային տներ (B&B):Առաջիկայում նախատեսվում է շահագործման հանձնել ևս մի քանի հյուրանոց՝ ապահովելով լրացուցիչ ավելի քան 500 հյուրանոցային համար: Դրանց մի մասը հավակնում է դասվել միջազգային հեղինակավոր հյուրանոցային խմբերի:

Տարածքային կառավարում և տեղական ինքնակառավարում

Տեղական ինքնակառավարման բնագավառ

2016 թվականին տեղական ինքնակառավարման բնագավառի բարեփոխումների շրջանակներում մշակվել են մի շարք օրենսդրական փոփոխություններ: Ընդունվել է «Տեղական տուրքերի և վճարների մասին» ՀՀ օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքը, որի նպատակն է հստակորեն սահմանել և տարանջատել «տեղական տուրքեր» և «տեղական վճարներ» հասկացությունները, վեր հանել տեղական տուրքերի և վճարների հետ կապված ՀՀ օրենսդրությունում առկա թերությունները և բացերը, միատեսակ մոտեցում ցուցաբերել տեղական տուրքերի և վճարների տեսակները և դրանց դրույքաչափերը սահմանելիս և հստակեցնել տեղական ինքնակառավարման մարմինների լիազորություններն այդ հարցում: ՀՀ Ազգային ժողովի կողմից օրենքն ընդունվել է 2016 թվականի դեկտեմբերի 16-ին:

Մշակվել է «Միջհամայնքային միավորումների մասին» ՀՀ օրենքի նախագիծը, որը սահմանում է միջհամայնքային միավորման հասկացությունը, մարմինները, գործունեության կարգը, լիազորությունները և դրանց իրավական, տնտեսական, ֆինանսական հիմքերն ու երաշխիքները:

Մշակվել և ՀՀ Ազգային ժողովի քննարկմանն է ներկայացվել «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը, որով նախատեսվող փոփոխությունների և լրացումների ընդունման արդյունքում կապահովվեն ՀՀ Սահմանադրությամբ ամրագրված մի շարք իրավակարգավորող փոփոխությունների կատարումն ու «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի՝ Սահմանադրությանը համապատասխանեցումը:

Մշակվել և ընդունվել են «Հայաստանի Հանրապետության վարչատարածքային բաժանման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը, որով շարունակվում է ՀՀ համայնքների խոշորացման գործընթացը, և «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը՝ ՏԻՄ օրենքը համապատասխանեցնելով ՀՀ Սահմանադրության 210-րդ հոդվածի 4-րդ մասի պահանջներին:

Տարածքային կառավարման բնագավառ

Հաշվետու ժամանակաշրջանում ստեղծվել է համայնքների տեղեկատվական բազա, որում ներառված են շուրջ 700 անվանական ցուցանիշ՝ յուրաքանչյուր համայնքի վերաբերյալ: Բազայում ներառված ցուցանիշները նախատեսվում է օգտագործել համայնքների սոցիալ-տնտեսական վիճակի դինամիկ վերլուծության և համայնքների աջակցությանը միտված ծրագրերը հասցեական կերպով իրականացնելու համար:

Հաշվետու ժամանակահատվածում «Սահմանամերձ համայնքներին սոցիալական աջակցության մասին» ՀՀ օրենքով նախատեսված դրույթների կատարումն ապահովելու համար ՀՀ 2016 թվականի պետական բյուջեով հատկացվել է 928 մլն դրամ, որի շրջանակներում սոցիալական աջակցություն է տրամադրվել սահմանամերձ համայնքների ընտանիքներին՝ բնական գազի, էլեկտրաէներգիայի, ոռոգման ջրի սակագնի մասնակի փոխհատուցման ու գույքահարկի և հողի հարկի փոխհատուցման նպատակով: 2016 թվականի հունվարի 1-ից սոցիալական աջակցություն է տրամադրվել ՀՀ Արարատի (թվով 2), Գեղարքունիքի (թվով 2), Վայոց Ձորի (թվով 5) և Տավուշի (թվով 25) մարզերի 34 սահմանամերձ համայնքների բնակիչներին: Համայնքների խոշորոցման արդյունքներով պայմանավորված՝ 15.12.2016թ. ՀՀ կառավարության հավանությանն է արժանացել «Հայաստանի Հանրապետության սահմանամերձ համայնքներին տրվող սոցիալական աջակցության փոխհատուցման ենթակա ծավալները և փոխհատուցման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի դեկտեմբերի 18-ի N 1444-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» N 1266-Ն որոշումը, որով սոցիալական աջակցություն տրամադրվող սահմանամերձ համայնքների ցանկը շարադրվել է նոր խմբագրությամբ:

ԵՄ-ի հետ համագործակցության արդյունքում մեկնարկել են 7 պիլոտային տարածաշրջանային զարգացման դրամաշնորհային ծրագրեր՝ շուրջ 10 մլն եվրո ընդհանուր արժեքով:

Տարածքային ներդրումային քաղաքականության բնագավառ

Հաշվետու ժամանակահատվածում տարածքային ներդրումային ծրագրերի իրականացման մասով կատարվել են հետևյալ աշխատանքները:

Հայաստանի Հանրապետության ու Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի միջև 2016 թվականի ապրիլի 5-ին ստորագրված համաձայնագրի համաձայն՝ իրականացման փուլում գտնվող «Կոտայքի և Գեղարքունիքի մարզերի կոշտ կենցաղային թափոնների կառավարման ծրագրի» շրջանակներում իրականացվել են ծրագրի երկու միջազգային

խորհրդատվական կազմակերպությունների կողմից իրականացվող աղբավայրի տեղանքի երկրաբանական հետազոտությունների, կառուցվող աղբավայրերի 3 բջիջների նախագծերի մշակման աշխատանքները, ինչպես նաև ՀՀ Կոտայքի և Գեղարքունիքի մարզերի 12 քաղաքային համայնքների ավագանիների որոշումներով ստեղծված կոշտ կենցաղային թափոնների կառավարման (ԿԿԹԿ) և նոր կառուցվող աղբավայրի շահագործման «Կոտայքի և Գեղարքունիքի ԿԿԹԿ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության ստեղծման և կայացման աշխատանքները:

Աջակցություն է ցուցաբերվել ՀՀ կառավարության և Ասիական զարգացման բանկի հետ համագործակցության շրջանակներում իրականացվող «Հայաստանում կոշտ կենցաղային թափոնների կառավարման բարելավման» և «Հայաստանի հեռավոր և փոքր համայնքներում կոշտ կենցաղային թափոնների կառավարման լուծումներ» դրամաշնորհային ծրագրերի իրականացման աշխատանքներին:

2016 թվականի նոյեմբերից մեկնարկել է ՀՀ մարզերում ներդրումային ծրագրերի կազմման և ՀՀ վարչապետին կից հարթակում քննարկման գործընթացը:

Միջտարածաշրջանային համագործակցություն

2016 թվականի ապրիլի 19-ին Ռուսաստանի Դաշնության Դոնի Ռոստով քաղաքում տեղի է ունեցել հայ-ռուսական միջտարածաշրջանային համագործակցության հարցերով աշխատանքային խմբի չորրորդ նիստը:

2016 թվականի հոկտեմբերի 13-15-ը Երևանում տեղի ունեցավ Հայ-ռուսական միջտարածաշրջանային հինգերորդ համաժողովը, որի նպատակն էր քննարկել տարբեր ոլորտներում համագործակցության խորացմանն ու զարգացմանը վերաբերող հարցեր, նպաստել ՀՀ մարզերի և ՌԴ տարածաշրջանների միջև համագործակցության ներուժի բացահայտմանը և նոր կապերի հաստատմանը:

Համաժողովի շրջանակներում ստորագրվեցին հայ-ռուսական փոխգործակցությանն առնչվող փաստաթղթեր:

Հինգերորդ համաժողովի շրջանակներում 2016 հոկտեմբերի 12-14-ը կայացավ նաև հայ-ռուսական 2-րդ երիտասարդական «Ընդհանուր հայացք ապագային» խորագիրը կրող համաժողովը:

Արխիվային գործ

Հաշվետու տարում, ՀՀ արխիվային գործի զարգացման 2016 թվականի ծրագրին համապատասխան, գործունեություն է ծավալվել ներքոնշյալ հիմնական ուղղություններով:

Արխիվում պահպանվող արխիվային փաստաթղթերի ֆիզիկական վիճակի բարելավման և պահպանվածության ապահովման նպատակով վերականգնվել և վերանորոգվել է 329305 թերթ արխիվային փաստաթուղթ (ծրագիր՝ 310000), կարվել և կազմապատվել՝ 27123 արխիվային գործ (ծրագիր՝ 26500):

Համալրման աղբյուր և այլ կազմակերպություններից արխիվային պահպանության է ընդունվել 11864 գործ, որից մշտական պահպանության՝ 8597, անձնակազմին վերաբերող՝ 3267 գործ: Համալրվել է նաև անձնական ծագման՝ ցրոն վիճակում գտնվող 69846 թերթ փաստաթուղթ և 8015 պահպանման միավոր կինոֆոտոֆոնո փաստաթուղթ, այդ թվում՝ 79 կինո, 1513՝ ֆոտո և 6423՝ ֆոնո փաստաթուղթ:

Շարունակվել է արխիվային փաստաթղթերի թվայնացման գործընթացը: Թվայնացվել է 265.490 պատկեր (էջ) թղթե կրիչով փաստաթուղթ (ծրագիր՝ 266.140): Թվայնացվել է նաև 2214 պ.մ. կինոֆոտոֆոնո փաստաթուղթ, որից 411՝ կինո փաստաթուղթ (խաղարկային, ոչ խաղարկային ֆիլմեր և մուլտֆիլմեր), 1793՝ ֆոտո փաստաթուղթ և 10՝ ֆոնո փաստաթուղթ:

2016 թվականի ընթացքում պատասխանվել է քաղաքացիներից և կազմակերպություններից, այդ թվում՝ արտասահմանից, ստացված 33804 հարցման, որը նախորդ տարվանից ավել է 2819-ով:

2016 թվականի ընթացքում Հայաստանի ազգային արխիվն ունեցել է 462 ուսումնասիրող:

Հաշվետու տարում նախապատրաստվել և հրապարակվել են փաստաթղթերի 6 հավաքածու, ավարտվել են 3 ժողովածուների պատրաստման աշխատանքները, տպագրվել է «Բանբեր Հայաստանի արխիվների» տարեգրքի 2016 թվականի համարը, եթեր են հեռարձակվել 55 ռադիոհեռուստահաղորդում:

Կազմակերպվել են փաստաթղթերի և նյութերի 3 ցուցադրություն:

Հիմնանորոգման է ենթարկվել արխիվի վարչական շենքը, փոխվել է գլխավոր մասնաշենքի և 1-ին արխիվապահոցի տանիքը, 2-րդ արխիվապահոցի պատուհանները: Ընթացիկ վերանորոգման են ենթարկվել արխիվի Արթիկի, Բերդի և Թալինի տարածքային ստորաբաժանումների տարածքները:

Բնակչության միգրացիայի կարգավորման ոլորտ

Բնակչության միգրացիայի կարգավորման ոլորտում իրականացվող աշխատանքները նպատակաուղղված են եղել միգրացիայի պետական կարգավորման քաղաքականության հայեցակարգի իրականացման 2012-2016թթ. գործողությունների ծրագրի ապահովմանը, ինչպես

նաև միգրանտների, ապաստան հայցողների ու փախստականների հարցերին վերաբերող միջազգային կոնվենցիաներով ու համաձայնագրերով ստանձնած հանձնառությունների կատարմանը:

Իրականացվել են «Հայաստանի Հանրապետության՝ «Եվրասիական տնտեսական միության մասին 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրին միանալու մասին» պայմանագրի՝ միգրացիայի ոլորտի մասով, կիրարկմանն ուղղված աշխատանքներ:

Նոր թափ է ստացել համագործակցությունը Եվրոպական Միության հետ՝ 2014 թվականի դեկտեմբերի 23-ին ուժի մեջ մտած «Աջակցություն միգրացիային և սահմանների կառավարմանը» ԵՄ տեխնիկական աջակցության ֆինանսավորման համաձայնագրի իրականացման շրջանակներում:

Մասնավորապես՝ 2016 թվականին մշակվել է ՀՀ միգրացիայի քաղաքականության նոր՝ 2017-2021թթ. ռազմավարությունը:

Իրականացվել են ՀՀ կառավարության 2011 թվականի նոյեմբերի 10-ի թիվ 1593-Ն որոշմամբ հաստատված «ՀՀ միգրացիայի պետական կարգավորման քաղաքականության հայեցակարգի իրականացման 2012-2016թթ. գործողությունների ծրագրով» 2016 թվականի համար նախատեսված 20 միջոցառումներ: Մասնավորապես՝ ընդունվել են 7 իրավական ակտեր:

Իրականացվել են ՀՀ կառավարության 2014 թվականի հուլիսի 17-ի N 769-Ն որոշմամբ հաստատված «ՀՀ միգրացիայի ոլորտը կանոնակարգող ՀՀ օրենսդրությունը միջազգային չափանիշներին, այդ թվում՝ Եվրամիությունում և Միասնական տնտեսական տարածքում ընդունված մոտեցումներին և սկզբունքներին համապատասխանեցնելուն ուղղված գործողությունների 2014-2016 թվականների ծրագրով» 2016 թվականի համար նախատեսված 8 միջոցառումները:

Մշակվել է ՀՀ-ում բնակվող երկարաժամկետ միգրանտների, ինչպես նաև ՀՀ վերադարձող քաղաքացիների ինտեգրման (վերաինտեգրման) քաղաքականության հայեցակարգը: Փաստաթուղթը հավանության է արժանացել ՀՀ կառավարության 2016թ հուլիսի 21-ի թիվ 28-12 արձանագրային որոշմամբ:

Շարունակվել են աշխատանքները ՌԴ դաշնային միգրացիոն ծառայության հետ՝ ՌԴ մուտքի արգելք ունեցող ՀՀ քաղաքացիների մուտքի արգելքի բացման նպատակով: 2016 թվականին ռուսական կողմին է ուղարկվել 1360 դիմում: Դրական պատասխանների թիվը կազմել է 361:

Շարունակվել են օտարերկրյա պետություններից վերադառնալու ցանկություն ունեցող ՀՀ քաղաքացիներին վերադարձի հարցերի վերաբերյալ համապատասխան տեղեկատվություն ստանալու հնարավորություն ընձեռող Tundarc.am կայքի միջոցով խորհրդատվության տրամադրման ուղղությամբ աշխատանքները:

Շարունակվել են աշխատանքները Միգրացիոն պետական ծառայությանը դիմող ինչպես ՀՀ, այնպես էլ օտարերկրյա քաղաքացիներին միգրացիոն տարբեր հիմնախնդիրների շուրջ խորհրդատվության տրամադրման ուղղությամբ:

Շարունակվել են աշխատանքները միջազգային պաշտպանության կարիք ունեցող օտարերկրյա քաղաքացիներին և քաղաքացիություն չունեցող անձանց ՀՀ-ում ապաստանի տրամադրման ուղղությամբ:

Գյուղատնտեսություն

ՀՀ ագրարային հատվածում կառավարության կողմից վարվող քաղաքականությունը 2016 թվականին նպատակաուղղվել է գյուղատնտեսության և նրան սպասարկող կառույցների, գյուղմթերքների իրացման ու վերամշակման ոլորտների գործունեության արդյունավետության բարձրացմանը, և դրա հիման վրա պայմաններ են ստեղծվել ագրոպարենային ոլորտի կայունացման, ընդլայնված վերարտադրության ապահովման, աշխատանքի արտադրողականության բարձրացման, գյուղացիական տնտեսությունների իրական եկամուտների ավելացման նախադրյալների ստեղծման, գյուղատնտեսությունում տնտեսավարողների համար բարենպաստ պայմանների ապահովման, պարենային անվտանգության մակարդակի բարձրացման համար: Իրականացվող քաղաքականությունն ուղղված է եղել նաև գյուղական տարածքների համաչափ զարգացմանը և ռեսուրսային ներուժի օգտագործման մակարդակի բարձրացմանը, սերմնաբուծության համակարգի ամրապնդմանը, բույսերի առավել վտանգավոր հիվանդությունների դեմ պայքարին, անասնաբուժական հակահամաճարակային միջոցառումների իրականացմանը, գյուղատնտեսությունում օգտագործվող հիմնական ռեսուրսների (հանքային պարարտանյութերի, դիզելային վառելանյութի) և վարկավորման մատչելիությանը: Ոլորտի կարևոր ուղղություններից է եղել հանրապետության անտառային տնտեսության պահպանության, պաշտպանության և օգտագործման բնագավառներում աշխատանքների իրականացումը: ՀՀ կառավարության գործունեության ծրագիրը հիմք ունենալով՝ նպատակ է դրվել գյուղատնտեսությունում արդյունավետության բարձրացման միջոցով զուգահեռաբար գյուղում ստեղծել կյանքի հարմարավետ պայմաններ՝ այն գիտակցումով, որ չի կարող լինել զարգացող գյուղատնտեսություն՝ առանց հարմարավետ գյուղի: Առանձնակի ուշադրություն է դարձվել բարձր լեռնային ու սահմանամերձ շրջաններին: Շարունակվել են ագրարային հատվածի բարեփոխումները, որոնք ուղղված են եղել հետևյալ խնդիրների լուծմանը.

- պետության և մասնավոր հատվածի միջև իրավահարաբերությունների կատարելագործմանը և այդ նպատակով համապատասխան իրավական դաշտի բարելավմանը,

- գյուղատնտեսության հիմնական ռեսուրսների, մասնավորապես՝ հողային ռեսուրսների օգտագործման արդյունավետության բարձրացմանը,
- գյուղատնտեսությունում գործող տնտեսավարող սուբյեկտների համար նպաստավոր տնտեսական պայմանների ստեղծմանը և մրցունակության բարձրացմանը,
- գյուղատնտեսության տնտեսավարման ձևերի զարգացմանը, մասնավորապես՝ կոոպերացիայի խթանմանը,
- գյուղատնտեսության տեխնիկական հագեցվածության մակարդակի բարձրացմանը և մատչելի մեխանիզմներով տնտեսվարողներին գյուղատնտեսական տեխնիկայի մատակարարմանը,
- տեղեկատվական ու խորհրդատվական համակարգի կարողությունների ընդլայնմանը, համակարգի բարելավման մեխանիզմների բարելավմանը,
- գյուղատնտեսական մթերքների իրացման պայմանների բարելավմանը, գյուղատնտեսական մթերքներ արտադրողների և վերամշակողների փոխհարաբերությունների կատարելագործմանը,
- ագրարային արտադրական գործընթացներում արդիական մեթոդների և տեխնոլոգիաների ներդրմանն աջակցությանը:

Նշված քաղաքականության կենսագործման նպատակով ՀՀ 2016 թվականի պետական բյուջեով նախատեսվող ծախսերն առաջնահերթ կարգով նպատակաուղղվել են հետևյալ ծրագրերի իրականացմանը.

- բույսերի պաշտպանության և գյուղատնտեսական կենդանիների վարակիչ հիվանդությունների դեմ պայքարին,
- հողերի ագրոքիմիական հետազոտություններին և բերրիության բարձրացմանը,
- բնական կերհանդակների նպատակային և համակարգված օգտագործմանը, գյուղատնտեսությունում օգտագործվող հիմնական ռեսուրսների՝ հանքային պարարտանյութերի, դիզելային վառելանյութի, տարբեր մշակաբույսերի բարձր վերարտադրության սերմերի մատչելիության մակարդակի բարձրացմանը,
- վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման ծրագրի իրականացմանը,
- տեղեկատվական և խորհրդատվական ոլորտի ամրապնդմանը և զարգացմանը,
- ագրարային ոլորտի տնտեսավարողներին շուկայահանման գործընթացի աջակցությանը,
- գյուղատնտեսական մթերքներ վերամշակող ճյուղի զարգացմանն աջակցությանը, արտահանման խթանմանը,
- անտառային տնտեսության պահպանմանը, պաշտպանությանը:

Որպես ագրոպարենային համակարգի զարգացման 2016 թվականի քաղաքականության գլխավոր նպատակ՝ պահպանվել է երկրի պարենային ապահովության մակարդակի բարձրացումը: Դրա հետ մեկտեղ հետևողական աշխատանքներ են իրականացվել գյուղատնտեսության հիմնական նյութական ռեսուրսների մատչելիության, վարկավորման բարելավման, ոլորտը սպասարկող ենթակառուցվածքների զարգացման, օրենսդրական հիմքերի բարելավման և ագրարային ոլորտում տարբեր տնտեսավարման ձևերի զարգացման ուղղությամբ, որը նպաստավոր պայմաններ է ապահովել ագրարային ոլորտի մասնավոր հատվածի կարողությունների օգտագործման և տնտեսավարողների գործունեության արդյունավետության բարձրացման համար:

Էներգետիկայի և բնական պաշարների կառավարման բնագավառ

Էներգետիկայի բնագավառում իրականացվող պետական քաղաքականությունը նպատակաուղղվել է ՀՀ էներգետիկ անվտանգության մակարդակի բարձրացմանը՝ էներգամատակարարման հուսալիության ապահովմամբ, տեղական վերականգնվող էներգապաշարների արդյունավետ օգտագործմամբ, էներգախնայողության միջոցառումների լայնամասշտաբ ներդրմամբ և շրջակա միջավայրի պաշտպանության պահանջների կատարմամբ:

Էներգետիկայի բնագավառի զարգացման հիմնարար ուղղություններն են՝ սեփական վերականգնվող էներգապաշարների իրացումը, արտահանման կողմնորոշում ունեցող կայուն ու հուսալի էներգահամակարգի կառուցումը, ժամանակակից տեխնոլոգիաներով հագեցած նոր արտադրող հզորությունների կառուցումը, ատոմային էներգետիկայի հետագա զարգացումը, այդ թվում՝ գործող ատոմային էներգաբլոկի շահագործման ժամկետի երկարաձգման հետ կապված աշխատանքների իրականացումը, էներգաբլոկի անվտանգության և հուսալիության աստիճանի բարձրացմանն ուղղված աշխատանքների իրականացումը, նոր ատոմային էներգաբլոկի կառուցման նախապատրաստական աշխատանքների իրականացումը և տարածաշրջանային էներգահամա-կարգերի հետ ինտեգրումը:

ՀՀ 2016 թվականի պետական բյուջեի հատկացումների, միջազգային կազմակերպությունների և օտարերկրյա պետությունների կողմից տրամադրվող վարկային և դրամաշնորհային միջոցների հաշվին 2016 թվականին իրականացվել են՝ Վերակառուցման և զարգացման միջազգային բանկի վարկային միջոցների հաշվին՝ Հրազդան ՋԷԿ-ից Շինուհայր 220 կՎ ենթակայան ընկած շուրջ 230 կմ երկարությամբ Նորադուզ-Լիճք-Վարդենիս-Վայք-Որոտան-1 էլեկտրահաղորդման 220 կՎ լարման օդային գծերի կառուցման, 110 կՎ «Լալվար» և «Նոյեմբերյան» էլեկտրահաղորդման օդային գծերի վերակառուցման, 220 կՎ «Աշնակ», Երևանի ՋԷԿ-ի, «Հաղթանակ» և 110 կՎ «Չարենցավան-3», «Վանաձոր-1» ենթակայանների վերազինմանն ուղղված աշխատանքները,

Ասիական զարգացման բանկի կողմից հատկացված վարկային միջոցների հաշվին՝ 220 կՎ «Ագարակ-2» և «Շինուհայր» ենթակայանների վերազինմանն ուղղված աշխատանքները, Գերմանիայի զարգացման վարկերի բանկի և Եվրոպական միության կողմից՝ Հարևանության ներդրումային գործիքի շրջանակներում տրամադրված դրամաշնորհային միջոցներով՝ «Կովկասյան էլեկտրահաղորդման ցանց I (Հայաստան-Վրաստան հաղորդիչ գիծ/ենթակայաններ)» ծրագրով նախատեսված աշխատանքները, ինչպես նաև Իրանի Արտահանման զարգացման բանկի կողմից տրամադրված վարկային միջոցների հաշվին՝ Հայաստան-Իրան 400 կՎ լարման նոր էլեկտրահաղորդման օդային գծի և համապատասխան ենթակայանի կառուցման աշխատանքները:

Միջուկային անվտանգության բնագավառում 2016 թվականին առաջնահերթ ուղղություններ են եղել միջուկային օրենսդրության, միջուկային ու ռադիացիոն անվտանգության կարգավորման համակարգի զարգացումը և կատարելագործումը:

Ոլորտում իրականացվել են հետևյալ առաջնահերթ միջոցառումները.

- ՀՀ միջուկային օրենսդրության համապատասխանեցումը Ատոմային էներգիայի միջազգային գործակալության (ԱԷՄԳ) անվտանգության ստանդարտների, Եվրոպական միության և Արևմտաեվրոպական երկրների կարգավորող մարմինների ասոցիացիայի (WERNA), անվտանգության պահանջներին՝ հաշվի առնելով նաև Ֆուկուշիմայի վթարի և «Սթրես-թեսթերի» ուսումնասիրության արդյունքները, զարգացած երկրների փորձը և նկատի ունենալով Հայկական ԱԷԿ-ի 2-րդ էներգաբլոկի շահագործման նախագծային ժամկետի երկարացման լիցենզավորումն ու Հայաստանում նոր միջուկային էներգաբլոկի կառուցումը, «Խաղաղ նպատակներով ատոմային էներգիայի անվտանգ օգտագործման մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի մշակումը, միջուկային և ճառագայթային անվտանգության նոր նորմերի, կանոնների, ստանդարտների մշակումը, գործող նորմերի ու կանոնների վերանայումը, լրամշակումը, անվտանգությանը վերաբերող փաստաթղթերի քննարկումը, վերլուծությունը և գնահատումը.
- ատոմային էներգիայի օգտագործման բնագավառի՝ ՀՀ կողմից վավերացված թվով 10 միջազգային պայմանագրերից բխող պարտավորությունների կատարումը (օրենսդրության համապատասխանեցում պայմանագրերի պահանջներին, տեղեկատվական բազայի ստեղծում և փոխանակում պայմանագրերի անդամ-պետությունների միջև, ազգային հաշվետվությունների մշակում և ներկայացում).
- «Միջուկային և ռադիացիոն անվտանգության գիտատեխնիկական կենտրոն» ՓԲԸ-ի զարգացումը.
- իրավաբանական և ֆիզիկական անձանց լիցենզավորումը՝ ժամանակակից մոտեցումներին համապատասխան.

- ատոմային էներգիայի օգտագործման օբյեկտների կարգավորող վերահսկողության և տեսչական ստուգումների անցկացումը.
- շրջակա միջավայրի ռադիոակտիվ աղտոտմամբ պայմանավորված՝ բնակչության ճառագայթահարման վերահսկողության նպատակով շրջակա միջավայրի ռադիացիոն մոնիտորինգի ժամանակակից համակարգի ներդրումը.
- մասնագիտական և տեսչական անձնակազմի որակավորման բարձրացումը (փորձի փոխանակում, վերապատրաստում, դասընթացներ).
- միջուկային և ճառագայթային անվտանգության վերաբերյալ տեղեկատվական համակարգի (ներքին և արտաքին) կատարելագործումը.
- միջուկային զենքի չտարածման ռեժիմի ուժեղացումը, միջուկային նյութի հաշվառման և վերահսկման պետական համակարգի կատարելագործումը.
- Կարգավորող մարմնի տեսչական գործունեության կատարելագործումը, մասնավորապես՝ նախատեսվել է.
  - համապատասխանեցնել տեսչական գործունեության վերաբերյալ գործող կարգավորող և ղեկավարող փաստաթղթերը ժամանակակից պահանջներին,
  - կատարելագործել միջուկային տեղակայանքների և ռադիոակտիվ թափոնների տեղակայանքների, ատոմային էներգիայի օգտագործման այլ օբյեկտների տեսչական ստուգումների անցկացման աշխատակարգերը (համապատասխանեցնել ժամանակակից մոտեցումներին),
  - բարձրացնել տեսուչների աշխատանքի որակը,
  - տեսչական գործունեության պլանավորումն իրականացնել կարգավորման ենթակա գործունեության ռիսկի գնահատման հիման վրա:
- Վթարային հակազդման ազգային համակարգի համապատասխանեցումը ՀՀ միջազգային պայմանագրերի և ԱԷՄԳ պահանջներին: Այդ նպատակով նախատեսվում է.
  - զարգացնել և կատարելագործել գործող ճառագայթային մոնիտորինգի և տեղեկատվության համակարգը,
  - համապատասխանեցնել վթարային հակազդման կենտրոնը, ներառյալ կենտրոնի գործունեության հրահանգները, ժամանակակից պահանջներին՝ հաշվի առնելով Ֆուկուշիմայի վթարի ուսումնասիրության արդյունքները,
  - անցկացնել վթարային վարժանքներ ԱԷՄԳ պահանջներին համապատասխան,

- վերանայել վթարային հակազդման ազգային համակարգի մեջ մտնող նախարարությունների և գերատեսչությունների հետ փոխգործունեության մասին համաձայնագրերը,
- կատարելագործել ներքին և արտաքին տեղեկատվական համակարգը:

• Միջուկային նյութերի չտարածման երաշխիքների, հաշվառման և հսկման պետական համակարգի զարգացումը, մասնավորապես՝ նախատեսվում է.

- վերամշակել նորմերը և կանոնները՝ համաձայն ԱԷՄԳ առաջարկությունների և ստանդարտների,
- կատարելագործել միջուկային և ռադիոակտիվ նյութերի հաշվառման և վերահսկման պետական համակարգը,
- մշակել և ներդնել միջուկային և ռադիոակտիվ նյութերի պետական հաշվառման արդիական համակարգեր, ներառյալ ծրագրային միջոցներ:

• Միջուկային և ռադիոակտիվ նյութերի ու տեղակայանքների ֆիզիկական պաշտպանության կարգավորումը, որի հիմնական խնդիրներն են՝

- լրամշակել նորմատիվատեխնիկական փաստաթղթերը, մշակել ու ՀՀ կառավարության հաստատմանը ներկայացնել ռադիոակտիվ նյութերի ֆիզիկական պաշտպանության պահանջները,
- անցկացնել միջուկային տեղակայանքների և միջուկային նյութերի տեսչական ստուգումներ ՀՀ մյուս պատասխանատու գերատեսչությունների և միջազգային կազմակերպությունների հետ, միջուկային տեղակայանքների ֆիզիկական պաշտպանության վիճակը գնահատելու համար, անհրաժեշտության դեպքում, հաշվի առնելով նոր մարտահրավերները՝ վերանայել նախագծային սպառնալիքը.
- ստեղծել կապի պաշտպանված կանալներ:

• «Միջուկային և ռադիացիոն անվտանգության գիտատեխնիկական կենտրոն» ՓԲԸ-ի զարգացումը՝ հաշվի առնելով, որ այն պայմանավորված է ատոմային էներգիայի օգտագործմանը ուղեկցող գիտատեխնիկական բնույթի բազմապիսի խնդիրների առկայությամբ (գործող և նոր ատոմակայանի, ուրանի արդյունահանման, միջուկային աշխատած վառելիքի և ռադիոակտիվ թափոնների անվտանգության), որոնց լուծումը պահանջում է վերլուծական, տեխնիկական, հաշվողական, մեթոդական և փորձագիտական աշխատանքների կատարում:

«Միջուկային և ռադիացիոն անվտանգության գիտատեխնիկական կենտրոն» ՓԲԸ-ի զարգացման առաջնահերթ ուղղություններն են.

- միջուկային անվտանգության գնահատման ժամանակակից մեթոդների, ներառյալ ռիսկի գնահատման մեթոդների յուրացումը և կիրառումը,
- մասնագիտական որակավորման բարձրացումը և նոր կադրերի պատրաստումը, ռադիոլոգիական ազդեցության գնահատման և չափումների նորագույն միջոցների և մեթոդների ներդրումը:
- միջազգային համագործակցության զարգացման շարունակումը՝ Ատոմային էներգիայի միջազգային գործակալության, Եվրոպական հանձնաժողովի, ԱՄՆ-ի, Չեխիայի, ՌԴ և այլ երկրների միջուկային կարգավորող մարմինների հետ տեխնիկական աջակցության ծրագրերի շրջանակներում:

Ռուսաստանի Դաշնության կողմից տրամադրված վարկային և դրամաշնորհային միջոցների հաշվին շարունակվել է Հայկական ատոմային էլեկտրակայանի 2-րդ էներգաբլոկի շահագործման ժամկետի երկարաձգման աշխատանքների իրականացումը, իսկ սեփական միջոցների և դոնոր երկրների կողմից հատկացվող միջոցների հաշվին՝ Հայկական ատոմային էլեկտրակայանի 2-րդ էներգաբլոկի անվտանգության մակարդակի բարձրացման աշխատանքները:

Նոր միջուկային էներգաբլոկի շինարարության ծրագրի իրականացման համար ֆինանսական միջոցների ներգրավման նպատակով տարվել են բանակցություններ հնարավոր ներդրողների հետ:

Նոր միջուկային էներգաբլոկի կառուցման ծրագիրն ընդգրկված է «Հայաստանի Հանրապետության էներգետիկ անվտանգության ապահովման հայեցակարգ»-ում և ՀՀ կառավարության որոշմամբ հաստատված «ՀՀ էներգետիկ անվտանգության ապահովման հայեցակարգի դրույթների իրականացումն ապահովող 2014-2020 թվականների միջոցառումների ծրագիր-ժամանակացույց»-ում: Ծրագիրն արդեն իսկ մշակվել է և սահմանված կարգով ներկայացվել շահագրգիռ մարմինների քննարկմանը: Վերջինում նախատեսված է մինչև 2018 թվականն ավարտել նոր ատոմային էներգաբլոկի կառուցման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցներ ներգրավելու նպատակով հնարավոր ներդրողների հետ տարվող բանակցությունները:

Նոր միջուկային էներգաբլոկի կառուցման ծրագիրն ընդգրկված է նաև ներկայումս քննարկման փուլում գտնվող՝ «ՀՀ էներգետիկ համակարգի երկարաժամկետ (մինչև 2036թ.) զարգացման ուղիները» ծրագրում, որում նախատեսվում է մինչև 600 ՄՎտ հզորությամբ նոր ատոմային բլոկի կառուցում: Նոր միջուկային էներգաբլոկի շինարարության ծրագրի իրականացման համար ֆինանսական միջոցների ներգրավման նպատակով բանակցություններն ընթացքի մեջ են հնարավոր ներդրողների հետ:

Հայաստանի էներգախնայողության և վերականգնվող էներգետիկայի հիմնադրամը՝ Համաշխարհային բանկի կողմից տրված դրամաշնորհային և վարկային միջոցների հաշվին

իրականացրել է հանրային շենքերում էներգախնայողության միջոցառումներ: Իրականացվել են նաև Կլիմայի Ներդրումների Հիմնադրամի Վերականգնվող էներգիայի ընդլայնման ծրագրի շրջանակներում (SREP) արդյունաբերական մասշտաբի արևային էներգիայի ծրագրի նախապատրաստման և Հայաստանում հայտնի հավանական երկրաջերմային տեղանքներից մեկում՝ Կարկառում, երկրաջերմային հետախուզական հորատման աշխատանքները:

2014 թվականի հունիսի 27-ին Կլիմայի ներդրումային հիմնադրամների CIF SREP ենթահանձնաժողովը հավանություն տվեց «Հայաստանի Հանրապետության վերականգնվող էներգետիկայի ներդրումային պլանին»՝ որպես հիմնարար փաստաթուղթ, այնտեղ ընդգրկված ծրագրերի հետագա իրականացման նպատակով 40 մլն ԱՄՆ դոլար ընդհանուր ֆինանսավորման հնարավորությամբ: Նշված գումարի շրջանակներում ներդրումներն իրականացվել են հետևյալ ուղղություններով՝ երկրաջերմային էներգետիկայի, արևային ֆոտովոլտային էներգետիկայի, արևային ջրատաքացուցիչների և ջերմային պոմպերի համար ենթակառուցվածքների ստեղծման և/կամ բարելավման ծրագրերի իրականացման նպատակով:

2015 թվականի հուլիսի 23-ին ՀՀ նախագահի թիվ ՆՀ-471-Ն հրամանագրով վավերացվել է Հայաստանի Հանրապեության և վերակառուցման և Զարգացման միջազգային բանկի միջև ստորագրված «Արդյունաբերական մասշտաբի արևային էներգիայի ծրագրի նախապատրաստման համար» թիվ TFOAO418 դրամաշնորհի համաձայնագիրը: Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի գործունեության միջոցառումների ծրագրում ներառվել է «Արևային ֆոտովոլտային (ՖՎ) կայանի (կայանների) կառուցման ներդրումային ծրագրին հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության արձանագրային որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը, որը ՀՀ կառավարության կողմից հավանության է արժանացել 2017 թվականի հունվարի 9-ին: Արևային ցանցային ՖՎ կայանի (կայանների) կառուցման ներդրումային ծրագրում կամրագրվեն տեխնիկատնտեսական ցուցանիշներ, որոնք հիմք կհանդիսանան ՀՀ էլեկտրաէներգետիկ համակարգում մրցույթային կարգով ընդունելի արևային էլեկտրակայանների սակագների սակարկումը կազմակերպելու համար: Այդ կայանների կառուցման արդյունքում կնվազի Հայաստանի Հանրապետության կախվածությունը ներկրվող էներգակիրներից:

2015 թվականի հուլիսի 21-ին ՀՀ Նախագահի թիվ ՆՀ-467-Ն հրամանագրով վավերացվել է Հայաստանի Հանրապետության ու Վերակառուցման և զարգացման միջազգային բանկի միջև ստորագրված «Երկրաջերմային հետախուզական հորատման ծրագիր» դրամաշնորհի համաձայնագիրը:

Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի գերակա խնդիրներում ներառվել են Վերականգնվող էներգետիկայի ընդլայնման ծրագրի շրջանակներում երկրաջերմային

ծրագրի նախապատրաստական աշխատանքները: Աշխատանքների նպատակն է Կարկառի երկրաջերմային տեղանքում առաջնային էներգակրի պարամետրերի որոշման համար հորատանցքերի հորատումը, որն ավարտվել է 2016 թվականի դեկտեմբերի 7-ին:

Իրականացվել է Գերմանիայի կառավարության զարգացման վարկերի բանկի կողմից ֆինանսավորվող Գերմանահայկական հիմնադրամի «Վերականգնվող էներգետիկայի III» ծրագիրը:

Իրականացվել են էներգետիկայի բնագավառի տեխնիկական կանոնակարգերի վերամշակման և ազգային ստանդարտների մշակման աշխատանքները՝ միջազգային համապատասխան ստանդարտներին ու նորմերին դրանց աստիճանական մոտարկման մեթոդների կիրառմամբ:

Հանրապետության գազամատակարարման համակարգի վերականգնման ու զարգացման ուղղությամբ իրականացվել են Իրանի Իսլամական Հանրապետության տրամադրված դրամաշնորհային միջոցներով Հայաստանի Հանրապետությունում Իրանի հետ սահմանամերձ Մեղի և Ագարակ համայքների գազի բաշխման ցանցի կառուցման աշխատանքները, շարունակվել են հանրապետության գազափոխադրման ու գազաբաշխման համակարգերի, ստորգետնյա գազապահեստարանի օպտիմալ ծավալի որոշման և դրա արդիականացման աշխատանքները: Իրականացվել են և կշարունակվեն իրականացվել գազամատակարարման համակարգի անվտանգության ապահովմանն ու շարունակական բարձրացմանն ուղղված աշխատանքները:

Ընդերքի բնական պաշարների բնագավառում 2016 թվականին իրականացված պետական քաղաքականության հիմնախնդիրներն են.

- միջազգային չափորոշիչներին համահունչ, հետախուզված և գնահատված ընդերքի պաշարների սահմանված կարգով փորձաքննության ապահովումը,
- «Ընդերքի մասին» ՀՀ օրենսգրքի պահանջներին համապատասխան, օգտակար հանածոների պաշարների պետական հաշվեկշռի վարումը, օգտակար հանածոների արդյունահանման նպատակով տրամադրված ընդերքի տեղամասերի պետական հաշվառման իրականացումը, հանքավայրերի և օգտակար հանածոների երևակումների պետական կադաստրի վարումը,
- Հայաստանի Հանրապետության օրենքներով և իրավական այլ ակտերով սահմանված կարգով երկրաբանական տեղեկության թափանցիկության և պոտենցիալ ներդրողների համար վերջինիս հասանելիության ապահովումը,
- ընդերքօգտագործող կազմակերպությունների գործունեության հետ կապված հիմնախնդիրների լուծման համար նոր, ժամանակակից, ինչպես նաև միջազգայնորեն ընդունված մոտեցումների կիրառման խթանումը:

Ջրային տնտեսություն

2016 թվականի ընթացքում ջրային տնտեսության ոլորտում ՀՀ կառավարության գործունեության հիմքում ընկած էին ՀՀ ջրային օրենսգրքի, ջրի ազգային ծրագրի և ջրի ազգային քաղաքականության հիմնադրույթները, «ՀՀ 2016 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքը, ինչպես նաև ՀՀ կառավարության ջրային ոլորտի բարեփոխումների մասով ընդունված որոշումները, գերակա խնդիրներն ու միջոցառումները, որոնցով հաստատված են համակարգի հիմնական ծրագրային դրույթները և ուղղությունները:

Հաշվետու ժամանակահատվածում շարունակվել են համակարգում կառուցվածքային փոփոխությունների, ջրամատակարարման տևողության ավելացման ու ջրի որակի բարելավման, մասնավոր կառավարման պայմանագրերի վերահսկման, ինստիտուցիոնալ բարեփոխումների խորացման, մատակարարված ջրի դիմաց վճարների հավաքագրման մակարդակի բարձրացման, համակարգում կորուստների նվազեցման և ընկերությունների գործունեության արդյունավետության բարձրացման, ջրաչափական սարքերի տեղադրման և փոխարինման, բյուջետային, վարկային և դրամաշնորհային միջոցների արդյունավետ օգտագործման և նոր վարկային ու դրամաշնորհային միջոցների ներգրավման աշխատանքները:

Ջրային տնտեսության ոլորտում 2016 թվականի ընթացքում կատարվել են հետևյալ հիմնական աշխատանքները:

1. Համաձայն ՀՀ կառավարության 14.08.2014թ. N 883-Ն և N 888-Ն որոշումների 5 ջրամատակարար ընկերությունների կողմից օգտագործվող ու պահպանվող ջրային համակարգերի և այլ գույքի (որպես միասնական գույքային համալիր) օգտագործման իրավունքը 2017թ. հունվարի 1-ից փոխանցվել է վարձակալության «Վեոլիա Օ Կոմպանի Ժեներալ Դեզ Օ» կոմանդիտային բաժնետիրական ընկերությանը՝ 15 տարի ժամկետով: 2016 թվականի նոյեմբերի 21-ին ՀՀ կառավարության, «Վեոլիա Օ Ժեներալ դեզ Օ» կոմանդիտային բաժնետիրական ընկերության և «Վեոլիա Ջուր» փակ բաժնետիրական ընկերության միջև ստորագրվել է վարձակալության պայմանագիր:

2. Ոռոգում-ջրառ իրականացնող «Սևան-Հրազդանյան-ջրառ» և «Ախուրյան-Արաքս-ջրառ» փակ բաժնետիրական ընկերությունների, ինչպես նաև ոռոգման ջուր մատակարարող 37 ջրօգտագործողների ընկերությունների գործունեությունների արդյունքներով ապահովվել է 101.214 հազ. հա հողատարածքների կայուն ջրամատակարարումը:

Ոռոգման ջրի համակարգի ընկերությունների ֆինանսական կենսունակության և կայունության բարելավման նպատակով, ինչպես նաև ամրապնդելով ընթացիկ ծախսածածկման անցնելու

նախադրյալները՝ ՀՀ կառավարության 2016 թվականի նոյեմբերի 3-ի N 1207-Ա որոշմամբ «Ախուրյան-Արաքս-ջրառ» և «Սևան-Հրազդանյան-ջրառ» ՓԲԸ-ները վերակազմավորվել են: Վերջինիս նպատակն է բարձրացնել ոռոգում-ջրառ իրականացնող կազմակերպությունների ծախսերի կրճատման, ոռոգման համակարգին տրամադրվող պետական ֆինանսական աջակցության արդյունավետությունը, ինչպես նաև կրկնվող գործառույթներով և մասամբ ծանրաբեռնված հաստիքների կրճատումը:

Ոռոգման համակարգի կազմակերպությունների գործունեության արդյունավետությունը բարձրացնելու, ինչպես նաև վերահսկողությունն ուժեղացնելու նկատառումներով ընդունվել է ՀՀ կառավարության 20.01.2016թ. «ՀՀ կառավարության 2002 թվականի հոկտեմբերի 17-ի N 1678-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» N 22-Ն որոշումը: Ոռոգման ծառայությունների արդյունավետության բարձրացման, ծառայությունների մատուցման շարունակականության ապահովման ու մատչելիության պահպանման, պետական սեփականություն համարվող ոռոգման համակարգերի արդյունավետ շահագործման, պահպանման, բնականոն ջրամատակարարումն ապահովելու նպատակով 37 ՋՕԸ-երը վերամիավորվել են, և գործելու են 14 ՋՕԸ-եր: ՋՕԸ-երի սպասարկման տարածքներում կադաստրային ոռոգելի հողատարածքները կազմել են շուրջ 200 հազ. հա, որից 2016 թվականին փաստացի ոռոգվել է 101.214 հազ. հա:

2016 թվականի ոռոգման շրջանում ջրի պաշարների և ջրապահանջարկի, ինչպես նաև ջրօգտագործողների արձագանքների վերլուծությունը փաստում է, որ ջրօգտագործողների կողմից հայտերով ներկայացված ջրապահանջը հիմնականում բավարարվել է: Ընթացիկ տարվա ոռոգման շրջանի արդյունավետության մասին է վկայում նաև ոռոգման շրջանում թեժ գծով ստացված բողոքների քանակի և բովանդակության վերլուծությունը:

3. Աբու Դաբիի զարգացման հիմնադրամի և ՀՀ կառավարության համաֆինանսավորման շրջանակներում Արփա-Սևան թունելի անհապաղ վերականգնողական աշխատանքների իրականացման համար 2016 թվականի ընթացքում կատարվել են վտանգավոր հատվածներում նոր ժամանակավոր ամրակապերի տեղադրում՝ 109.16 տ, երեսարկի կառուցում՝ 193 գծմ, ցեմենտային և ստուգիչ լցամղում՝ 2132 քմ, ինչպես նաև հատակի կառուցման աշխատանքներ՝ 37 քմ: Արդյունքում հնարավորություն է ստեղծվել լուծել թունելի առավել վտանգավոր հատվածների անվտանգ շահագործման հարցերը:

Ծրագրի ավարտով պայմանավորված՝ ՀՀ կառավարության 2016 թվականի նոյեմբերի 3-ի N 1171-Ն որոշմամբ դադարեցվել է «Արփա-Սևան» թունելների ծրագրերի իրականացման գրասենյակ» ՊՀ-ի գործունեությունը:

4. Համակարգի կազմակերպությունների հիմնական գործունեության վերլուծությունը ցույց է տալիս, որ 2016 թվականին իրագործվել են հաստատված ծրագրերը:

Ոռոգման և խմելու ջրամատակարարման ծառայությունների դիմաց հավաքումների գծով 2016 թվականի համակարգի գանձումը կազմել է շուրջ 21,83 մլրդ դրամ:

Խմելու ջրի ոլորտում գանձման տոկոսը 2016 թվականին կազմել է 94.69%, իսկ ոռոգման ոլորտում՝ 77.61%:

Խմելու ջրի մասով գանձվել է շուրջ 17.96 մլրդ դրամ, իսկ ոռոգման ոլորտում՝ 3.87 մլրդ դրամ:

Խմելու և ոռոգման ոլորտներում ապահովվել է էլեկտրաէներգիայի խնայողություն շուրջ 51.96 մլն կՎտ ժամով կամ պակաս է ծախսվել շուրջ 1.4 մլրդ դրամ:

Խմելու ջրամատակարար կազմակերպությունների մասով ապահովվել է ջրի որակի համապատասխանությունը գործող ստանդարտներին:

5. 2016 թվականին ջրային տնտեսության համակարգի կազմակերպություններից ՀՀ պետական բյուջե են փոխանցվել շուրջ 6.02 մլրդ դրամի հարկեր, տուրքեր և պարտադիր վճարներ:

6. 2016 թվականի ընթացքում «Երևան Ջուր», «Հայջրմուղկոյուղի», «Լոռի-ջրմուղկոյուղի», «Շիրակ-ջրմուղկոյուղի» և «Նոր Ակունք» ՓԲԸ-ների սպասարկման տարածքներում տեղի են ունեցել ջրամատակարարման տևողության ավելացումներ՝ ապահովելով ՀՀ կառավարության գերակա խնդիրներով դրված պահանջը:

7. 2016 թվականին Սևանա լճից ՀՀ կառավարության 02.06.2016թ. N 558-Ա որոշման համաձայն բաց է թողնվել 167.743 մլն խմ ջուր: Սևանա լիճ է տեղափոխվել 120.7 մլն խմ ջրաքանակ: Սևանա լճի մակարդակը 2016 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմել է 1900.48 մ: Սևանա լճից ջրի բացթողումը սկսվել է 2016թ. հունիսի 7-ից և դադարեցվել է 2016թ. սեպտեմբերի 9-ին:

8. Կատարվել են ջրամատակարար կազմակերպությունների միջև գույքային հարաբերությունների և պարտավորությունների ճշգրտումներ, ինչպես նաև իրականացվել են կանոնադրությամբ վերապահված այլ լիազորություններ: Շարունակվել է բարելավվել հաշվառման համակարգը: Համակարգի խմելու ջուր մատակարարող կազմակերպությունների սպասարկման տարածքում բաժանորդների մոտ տեղադրված են 849888 հատ ջրաչափական սարք: Ջրաչափությունը կազմում է 94.3%:

9. 2016 թվականի ընթացքում կառուցվել, վերականգնվել և վերանորոգվել են շուրջ 291.25 կմ խմելու, կոյուղու և ոռոգման խողովակաշարեր, ջրանցքներ և ջրատարներ:

10. Ջրամբարաշինության և ենթակառուցվածքների արդիականացման ծրագրերի նախապատրաստման ուղղությամբ իրականացվել են Կապսի կիսակառույց, Եղվարդի անավարտ, Մաստարայի և Վեդու ջրամբարների կառուցման վարկային ծրագրերը:

11. Կոլեկտորադրենաժային ցանցի մաքրման և ընթացիկ նորոգման, կոլեկտորադրենաժային ցանցի պահպանման և շահագործման, գրունտային ջրերի մակարդակների և որակի որոշման ծրագրերի շրջանակներում իրականացվել են 136.6 կմ ընդհանուր երկարությամբ կոլեկտորադրենաժային ցանցի մաքրման, դրենաժային ցանցի վերականգնման, նորոգման և մաքրման աշխատանքներ և Արարատյան դաշտում տեղադրված 450 դիտողական հորատանցքներում գրունտային ջրերի մշտական դիտարկումներ:

Ջրային տնտեսության ոլորտում վերը նշված աշխատանքների իրականացման արդյունքում խմելու և ոռոգման ջրի մատակարարման, ինչպես նաև ջրահեռացման ոլորտներում 2016 թվականի ընթացքում ապահովվել է համակարգերի հուսալի և անվտանգ շահագործումը, բարելավվել է խմելու և ոռոգման ջրամատակարարումը, իրականացվել է համակարգի անվտանգ շահագործումը, կրճատվել են կորուստները, ապահովվել է էներգախնայողությունը, բարելավվել է ջրի և ծառայությունների մատուցման որակը, ապահովվել է ջրամատակարարման շարունակականության ավելացումը:

Տրանսպորտ և կապ

Տրանսպորտի և կապի բնագավառում ոլորտների պետական կարգավորման, համակարգի պետական մասնակցությամբ բաժնետիրական ընկերությունների գործունեության կառավարման և կոորդինացման միջոցով 2016 թվականին շարունակվել են տնտեսության մյուս ճյուղերի (ոլորտների) կազմակերպությունների և ազգաբնակչության պահանջարկի ապահովումը՝ փոխադրումների (բեռնափոխադրումների և ուղևորափոխադրումների), փոստային ծառայությունների մատուցման, ռադիոհեռարձակման և հեռուստահեռարձակման, ինչպես նաև ճանապարհների պահպանման բնագավառներում:

Ճանապարհային տնտեսության բնագավառ: Երթևեկության ինտենսիվության աճի, ուղևորա-փոխադրումների հուսալիության և արդյունավետության ապահովման նպատակով իրականացվել է պետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների, ինչպես նաև տրանսպորտային օբյեկտների հիմնանորոգում, պետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների պահպանում, շահագործում:

Շարունակվել են աշխատանքները Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող Կենսական նշանակության ճանապարհացանցի բարելավման ծրագրի շրջանակներում:

2016 թվականին վարկային միջոցների հաշվին մեկնարկել է Մ6 Վանաձոր-Ալավերդի-Վրաստանի սահման միջպետական նշանակության ճանապարհի վերականգնման և բարելավման վարկային նոր ծրագիրը:

Հյուսիս-հարավ տրանսպորտային միջանցքի շինարարության շրջանակներում 2016 թվականին Տրանշ 1-ով, Տրանշ 2-ով (ներառյալ ՀՀ կառավարության համաֆինանսավորումները), Տրանշ 3-ով (Ասիական զարգացման բանկի և Եվրոպական ներդրումային բանկի աջակցությամբ՝ ներառյալ ՀՀ կառավարության համաֆինանսավորումը և Հողերի օտարման ու տարաբնակեցման ծրագիրը) շարունակվել են իրականացվել մեկնարկված ճանապարհային հատվածների վերակառուցման, լայնացման, հողերի օտարման ծրագրի աշխատանքները: Բացի այդ, Եվրասիական տնտեսական ընկերակցության հակաճգնաժամային հիմնադրամի կողմից հատկացվող միջոցներով 2016 թվականին իրականացվել են նաև Տրանշ 4-ով նախատեսվող աշխատանքները:

Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի աջակցությամբ 2016 թվականին իրակա-նացվել են Բագրատաշենի կամրջի վերակառուցման ծրագրի աշխատանքները:

Տրանսպորտի բնագավառում 2016 թվականին իրականացվել են «Միջազգային ավտոճանապարհային փոխադրումներ կատարող տրանսպորտային միջոցների անձնակազմի աշխատանքի մասին» համաձայնագրի պահանջների ապահովման նպատակով Հայաստանի Հանրապետությունում հսկիչ սարքերի (թվային տախոգրաֆների) պահպանման (սպասարկման) աշխատանքները:

Աշխատանքներ են իրականացվել Հայաստանի Հանրապետության միասնական երթուղային ցանցի մշակման ու զարգացման, միջպետական և միջմարզային երթուղիների չվացուցակների և սխեմաների նախագծերի մշակման և կատարելագործման, տրանսպորտային միջոցների տեխնիկական զննության կտրոնի և տեխնիկական զննության անցկացման ամիսը նշագրող թերթիկների տպագրման պատվիրատուի և դրանց պահպանման, հաշվառման ու տեխնիկական զննության կայաններին տրամադրման գործառույթների իրականացման, տեղեկատվական բանկի վարման և այլ խնդիրների իրագործման նպատակով:

Երկաթուղային տրանսպորտով իրականացվող ուղևորափոխադրումների կազմակերպումը բարելավելու նպատակով մշակվել են նոր երթուղային սխեմաներ՝ երկաթուղային և ավտոբուսային փոխադրումների կապակցմամբ՝ փոխադրումների սկզբնակետերի ու վերջնակետերի համատեղման ճանապարհով:

2016 թվականի արդյունքներով համաձայնեցված ծավալներով և ուղղություններով երկաթուղով ուղևորափոխադրումներից առաջացած վնասի փոխհատուցման նպատակով սուբսիդիա է տրամադրվել դրանք կազմակերպող համապատասխան ընկերությանը:

Շարունակվել են «Հարավային երկաթուղու» կառուցման տեխնիկատնտեսական հիմնավորման և նախագծման աշխատանքները:

Կապի բնագավառում աշխատանքներ են իրականացվել «Հայփոստ» փակ բաժնետիրական ընկերությունում կառավարման նոր մոդելի ներդրման և բաժնետոմսերը հավատարմագրային կառավարման հանձնելու պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման հսկողության ուղղությամբ:

Աշխատանքներ են իրականացվել ՀՀ տարածքում գրանցված ռադիոկապի տարբեր ցանցերի միաժամանակյա աշխատանքի ապահովման, շահագործվող ռադիոէլեկտրոնային միջոցների և բարձր հաճախականության սարքավորումների տեխնիկական պարամետրերի փորձաքննության, կապի և ռադիոէլեկտրոնիկայի բնագավառում խորհրդատվական ծառայությունների մատուցման, ռադիոէլեկտրոնային միջոցներին հատկացվող անհրաժեշտ հաճախությունների (կապուղիների) համապատասխան մարմինների հետ համաձայնեցման և միջազգային իրավական պաշտպանության ապահովման, ռադիոխանգարումների և տեսչավորման արդյունքում ներկայացված տվյալների, չափումների արձանագրությունների, ռադիոէլեկտրոնային միջոցների էլեկտրամագնիսական համատեղելիության փորձաքննության և հաճախությունների օգտագործման հնարավորության անհրաժեշտ հաշվարկների կատարման նպատակով:

2017 թվականին կապի բնագավառում կշարունակվեն Հանրապետական սփռման մուլտիպլեքսի արբանյակային տարածման համար արբանյակային ունակության վարձակալման ծրագրով նախատեսված աշխատանքները:

Ավիացիա

Քաղաքացիական ավիացիայի ոլորտի կառավարման արդյունավետության բարձրացման նպատակով բնագավառում 2016 թվականին իրականացվել է թռիչքային և ավիացիոն անվտանգության մակարդակների համապատասխանեցում եվրոպական և միջազգային ստանդարտներին: Շարունակվել են արդիականացվել Երևանի «Զվարթնոց» միջազգային օդանավակայանը և նրա ենթակառուցվածքները՝ ուղևորների օդանավակայանային սպասարկման ներկայիս մակարդակը պահպանելու և բարձրացնելու նպատակով: Հավասար մրցակցային պայմաններ են ապահովվել Հայաստանի Հանրապետությունից և դեպի Հայաստանի Հանրապետություն օդային փոխադրումներ իրականացնող ավիափոխադրողների համար:

2016 թվականին շարունակվել են բաց երկնքի քաղաքականության ստորև նշված ուղղություններով աշխատանքները՝

- Օդային հաղորդակցությունների մասին համաձայնագրերի վերանայման և գործող սահմանափակումների վերացման աշխատանքներ գործընկեր պետությունների հետ.

- Եվրոպական Միության ընդհանուր ավիացիոն գոտուն միանալու նպատակով բանակցությունների վարում Եվրոպական Հանձնաժողովի հետ և համապատասխան աշխատանքներ ավիացիայի ոլորտի օրենսդրական դաշտի՝ ԵՄ չափանիշներին համապատասխանեցման ուղղությամբ.
- Աշխատանքներ են տարվել նաև Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների հետ համակարգված տրանսպորտային քաղաքականության իրականացման փուլերի և հիմնական ուղղությունների գործողությունների ծրագրի մշակման և մասնակից պետությունների կողմից օդային տրանսպորտի հարցերով միջոցառումների պլանի մշակման աշխատանքների իրականացման ուղղությամբ.
- Հայկական ավիափոխադրումների շուկան նոր ավիաընկերություններով համալրելու ուղղությամբ ավիաընկերությունների հետ բանակցությունների վարում, վերջիններիս կողմից շուկայի ուսումնասիրության նպատակով համապատասխան տեղեկատվության և այլ աջակցության տրամադրում.
- Հայկական ավիափոխադրումների շուկայի շարունակական ուսումնասիրություն, համապատասխան վերլուծություն, խնդիրների, դրանց պատճառների և լուծումների բացահայտում.
- Գյումրու «Շիրակ» օդանավակայանի զարգացման ծրագրի հետևողական իրականացում, որտեղից 2016 թվականից վերսկսվել է թռիչքների իրականացումը:
- 2016 թվականի գործունեության հիմնական ուղղություններով շարունակաբար աշխատանքներ են տարվել.
- Ավիացիայի համակարգում գործունեություն իրականացնելու համար համապատասխան սերտիֆիկատների, լիցենզիաների, վկայականների և թույլտվությունների տրամադրման, օդանավերի թռիչքային պիտանելիության, աերոնավիգացիոն միջոցների և այլ ավիացիոն սարքավորումների, թռիչքային անձնակազմերի, օդային երթևեկության կարգավարների և օդանավերի տեխնիկական սպասարկման անձնակազմերի վկայականների տրամադրման և վավերացման ուղղությամբ.
- Օտարերկրյա պետության ավիացիոն իշխանությունների կողմից տրված օդանավի անձնակազմի անդամների վկայականների ճանաչման ուղղությամբ.
- Քաղաքացիական ավիացիայի համակարգում գործունեություն իրականացնող բոլոր շահագործողների, կազմակերպությունների ու ընկերությունների շարունակական վերահսկողության և նրանց կողմից կատարվող աշխատանքների ու մատուցվող ծառայությունների որակի վերահսկողության տեսչական ստուգումների անցկացման ուղղությամբ.

- Օդանավ շահագործողի վկայականի տրամադրման, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օդանավերի պետական ռեգիստրի վարման շարունակականության ապահովման և քաղաքացիական ավիացիայի ավիացիոն անվտանգության ազգային ծրագրի վարման ուղղությամբ:

Քաղաքաշինություն

2016 թվականին քաղաքաշինության հիմնական խնդիրներն են համարվել սոցիալական ոլորտի պետական սեփականություն հանդիսացող կրթական, մշակութային, մարզական և առողջապահական օբյեկտների կապիտալ վերանորոգումը, վերականգնումն ու կառուցումը, որն արտացոլվել է ՀՀ 2016 թվականի պետական բյուջեի ծախսային ծրագրերում:

Կրթության, մշակույթի, սպորտի և առողջապահության բնագավառներում ՀՀ մարզերի համաչափ զարգացման ծրագրերի իրականացման ապահովման նպատակով 2016 թվականին թվով 57 օբյեկտում իրականացվել են նախագծային փաստաթղթերի մշակման, փորձաքննության, տեխնիկական վիճակի ուսումնասիրության, շինարարական աշխատանքներ, ինչպես նաև մատուցվել են տեխնիկական և հեղինակային հսկողության ծառայություններ, ընդ որում ավարտվել են 26 օբյեկտի շինարարական աշխատանքները, մշակվել են թվով 8 օբյեկտի նախագծանախահաշվային փաստաթղթերը, իսկ թվով 23 օբյեկտի շինարարական աշխատանքները շարունակվում են:

2016 թվականին քաղաքաշինության հիմնական խնդիրներից է համարվել նաև աղետի գոտու բնակավայրերում երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած ընտանիքների բնակարանային ապահովմանն ուղղված պետական աջակցության ծրագրի շարունակական իրականացումը, որի շրջանակներում 2016 թվականին լուծվել է երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած 287 ընտանիքի բնակարանային խնդիր, որոնցից 187 ընտանիքներինը՝ ՀՀ կառավարության 2016 թվականի ապրիլի 6-ի N356-Ն որոշման համաձայն ֆինանսական աջակցության (ԲԳՎ-ի միջոցով կամ ուղղակի) տրամադրմամբ, իսկ 100 ընտանիքինը՝ Ախուրյան համայնքում կառուցված 3 բազմաբնակարան շենքերից բնակարանների հատկացմամբ (ընդ որում, այդ շենքերից մեկի շինարարությունը փորձնական ծրագրի շրջանակներում իրականացվել է էներգաարդյունավետ միջոցառումների կիրառմամբ):

Շենքերի շինարարական աշխատանքներն ավարտվել ու շենքերը շահագործման են հանձնվել 2016 թվականի դեկտեմբերին: Շենքերից բնակարանների հատկացմամբ լուծվել է ծրագրի շահառու ճանաչված ևս 100 ընտանիքի բնակարանային խնդիր:

Արտակարգ իրավիճակների ոլորտ

2016 թվականին արտակարգ իրավիճակների ոլորտի հիմնական խնդիրներն են հանդիսացել՝

- քաղաքացիական պաշտպանության և արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության բնագավառներում միասնական պետական քաղաքականության մշակումն ու իրականացումը.
- փրկարարական, վթարային-փրկարարական, հրդեհաշիջման և առաջնային, անհետաձգելի, վթարավերականգնողական աշխատանքների իրականացումը.
- քաղաքացիական պաշտպանության և արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության խնդիրները լուծելու նպատակով տեղեկատվության ստացման, ամփոփման ու որոշումների մշակման և ընդունման աշխատանքների, նշված ոլորտներում կառավարման իրականացումը.
- արտակարգ իրավիճակներ առաջացնող երևույթների ուսումնասիրությունը.
- արտակարգ իրավիճակների առաջացման հնարավոր պատճառ համարվող օբյեկտների, առարկաների, գործընթացների, նախագծերի և լուծումների պետական փորձաքննության կազմակերպումը և իրականացումը.
- հատուկ թույլատրողական և վերահսկողական գործառույթների իրականացումը.
- քաղաքացիական պաշտպանության և արտակարգ իրավիճակներում բնակչության տարհանման գործընթացների պետական կարգավորման քաղաքականության մշակումն ու դրա իրականացումը.
- արտակարգ իրավիճակների կանխման ու հետևանքների վերացման միջոցառումների կազմակերպումը և իրականացումը.
- պետական մոբիլիզացիոն ռեզերվների ձևավորումը և կառավարումը.
- պետական պահուստի պաշարների պահպանումն ու սպասարկումը.
- սեյսմիկ ռիսկի նվազեցման միջոցառումների իրականացումը.
- հիդրոօդերևութաբանական երևույթների ռեժիմային ու հատուկ դիտարկումների, ուսումնասիրությունների և կանխատեսումների իրականացումը.
- մթնոլորտային երևույթների վրա ակտիվ ներգործության աշխատանքների իրականացումը.
- գիտատեխնիկական առաջադիմության նվաճումների և միջազգային փորձի հիման վրա տեխնիկական անվտանգության կանոնների պահպանման ապահովումը.
- արտակարգ հումանիտար արձագանքման գործողությունների իրականացումը.
- արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության ոլորտներում բնակչության ուսուցման կազմակերպումը.

- արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության հարցերով բնակչության և կառավարման մարմինների իրազեկումը.
- ոլորտի միջազգային պայմանագրերի նախագծերի մշակումը, միջազգային պայմանագրերի ներպետական համաձայնեցման գործընթացի իրականացումը, միջազգային ծրագրերի իրականացումը և վերահսկողությունը: Մասնավորապես՝ 2016 թվականի մայիսի 25-ին ստորագրվեց «ՀՀ կառավարության և Ճապոնիայի կառավարության միջև հայտագրերի փոխանակման ձևով կնքվող դրամաշնորհի» համաձայնագիրը, որի շրջանակներում Ճապոնիայի կառավարությունը 200 մլն իենի չափով դրամաշնորհ է տրամադրել ՀՀ կառավարությանը՝ փրկարարական գույքի տեսքով:
- աղետների ռիսկի կառավարման ազգային ռազամավարության և դրա իրականացման գործողությունների ծրագրի նախագծերի մշակումը.
- ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության, «Աղետների ռիսկի նվազեցման ազգային պլատֆորմ» (ԱՌՆԱՊ) հիմնադրամի, Համաշխարհային բանկի և ՄԱԿ-ի զարգացման ծրագրի կողմից համատեղ կազմակերպված աղետների ռիսկի կառավարման ռազմավարության և դրա իրականացման գործողությունների ծրագրի նախագծերի մշակմանը հանրային ոլորտի մասնակցությունը.
- Հայաստանի չորս մարզերում (Լոռի, Տավուշ, Շիրակ, Սյունիք) աղետների ռիսկի կառավարման ուղղությամբ տարվող աշխատանքների շրջանակում տեղական մակարդակում ռիսկերի կառավարման ուղղությամբ մոնիտորինգի աշխատանքների իրականացումը, որի հիմնական նպատակն է եղել առաջ քաշել համայնքներին բնորոշ աղետների և կլիմայի փոփոխության հետ կապված ռիսկերը, համայնքին սպառնացող վտանգները, համայնքի խոցելիությունը, առկա կարողությունները և վերջիններիս համադրությունից բխող աղետների ռիսկը (ընտրվել են հիմնականում 1000 և ավելի բնակիչ ունեցող 10-12 համայնք):

ՀՀ ազգային անվտանգության ապահովման կարևորագույն ոլորտներից մեկը՝ արտակարգ իրավիճակների համակարգը, իրականացնում է հանրապետությունում տեխնածին և բնական աղետների կանխարգելման, բնակչության վաղաժամ իրազեկման և ուսուցման գործառույթները, ինչպես նաև մթնոլորտի և ջրոլորտի լայնածավալ և մանրակրկիտ մոնիտորինգի իրականացումը, տեխնածին վթարների կանխարգելման, դրանց հետևանքների վերացման, այդ վթարների հետևանքով հասարակությանը և տնտեսությանը հասցվող վնասների ռիսկի նվազեցմանը, ինչպես նաև բնակչությանը և շրջակա միջավայրի պաշտպանությանն ուղղված գործառույթները:

«Տեխնիկական անվտանգություն ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից 2016 թվականին ռեեստրում գրանցված թվով 15865 արտադրական վտանգավոր օբյեկտներից փորձաքննության է

ենթարկել թվով 10105 արտադրական վտանգավոր օբյեկտ: Իրականացվել են 2120 նախագծային փաստաթղթերի և վկայագրերի տեխնիկական անվտանգության փորձաքննություններ:

Սեյսմիկ պաշտպանության բնագավառում իրականացվում են ընթացիկ սեյսմիկ ռիսկի գնահատման և սեյսմիկ ռիսկի նվազեցման ծրագրեր: Սեյսմիկ ռիսկի նվազեցման ուղղությամբ իրականացվել է բնակչության պատրաստվածության բարձրացում հատուկ հեռուստահաղորդումների կազմակերպման, նոր տեսաֆիլմերի ստեղծման, համապատասխան գրականության և ձեռնարկների լույսընծայման և տարածման, երկրաշարժից առաջ, ընթացքում և հետո բնակչության գործողությունների վերաբերյալ ուսումնական ծրագրերի մշակման և օգտագործման, օգնություն ցուցաբերելու անհատական և կոլեկտիվ միջոցների ուսուցման, բնակչությանը երկրաշարժից և դրա հետ կապված երկրորդային աղետից պաշտպանությունն ուսուցանող պատրաստված հրահանգիչների ցանցի ստեղծման, ուսումնական տագնապների և տարհանումների անցկացման միջոցով: Այս միջոցառումներն իրականացնում են բնակչության տարբեր տարիքային խմբերի, հատուկ կարիքավոր մարդկանց համար առանձնահատուկ մոտեցում կիրառելով:

2016 թվականին «Քուչակ», «Սևան» և «Ձորաղբյուր» հիդրոերկրադինամիկական կայաններում տեղադրվել են թվային սարքավորումներ, որոնք ստացվել են Միավորված ազգերի կազմակերպության զարգացման ծրագրի (UNDP) ֆինանսական օժանդակությամբ: Ընդհանուր առմամբ արդիականացվել է 7 հիդրոերկրադինամիկական կայան:

Շվեյցարիայի դաշնային տեխնոլոգիական ինստիտուտի հետ երկարամյա արդյունավետ համագործակցության արդյունքում շվեյցարական կողմն անհատույց տրամադրել է ուժեղ շարժումների թվային սարքեր (աքսելերոգրաֆներ): Սարքերից երկուսն արդեն տեղադրվել են Գառնիի երկրաֆիզիկական դիտարանում (ԳԵԴ), ինչը զգալիորեն կբարձրացնի սեյսմիկ վտանգի մոնիթորինգի մակարդակը Հայաստանում և կնպաստի սեյսմիկ վտանգի գնահատման հուսալիության բարձրացմանը:

2016 թվականին սկիզբ է դրվել Դուբնայի Միջուկային հետազոտությունների միավորված ինստիտուտի (Ռուսաստանի ԳԱԱ) հետ համագործակցությանը: Որոշվել է ԳԵԴ-ի թունելում տեղադրել լազերային ինկլինոմետր՝ ՀՀ և հարակից տարածքների երկրակեղևի լարվածադեֆորմացիոն դաշտի ուսումնասիրման նպատակով:

Իրականացվել են ՀՀ-ի և ԼՂՀ-ի թվով 408 շենքերի և շինությունների տեխնիկական վիճակի, ինչպես նաև սեյսմիկ խոցելիության մակարդակի (աստիճանի) գնահատման աշխատանքներ և տրվել են եզրակացություններ, որից՝ 59 դպրոցի, 5 արվեստի դպրոցի, 7 մանկապարտեզի, 18 բուժկետի և 1 հիվանդանոցի վերաբերյալ:

«Հայաստանի հիդրոօդերևութաբանության և մոնիտորինգի պետական ծառայություն» ՊՈԱԿ-ում 2016 թվականին շարունակվել է հիդրոօդերևութաբանական դիտարկումների և հակակարկտային ներգործության գործընթացը մթնոլորտի, մակերևութային ջրերի, հողի, գյուղատնտեսական մշակաբույսերի, ռադիացիոն ֆոնի մոնիտորինգի, հելիոերկրաֆիզիկական երևույթների՝ օզոնային շերտի, ուլտրամանուշակագույն ճառագայթման, ակտինոմետրիական, աերոլոգիական ուսումնասիրությունների և կարկուտի դեմ պայքարի վերաբերյալ 47 օդերևութաբանական կայաններում, 7 գետավազանային հիդրոլոգիական կայանների դիտակետերում, 2 ռադիոլոկացիոն և 2 հակակարկտային կայաններում:

ՀՀ ԱԻՆ «Ճգնաժամային կառավարման պետական ակադեմիա» ՊՈԱԿ-ի արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության բնագավառում միջնակարգ ընդհանուր և միջին մասնագիտական կրթության հիմքի վրա բարձր որակավորման կադրերի պատրաստումը, վերաորակավորումը, արտակարգ իրավիճակներին դիմակայելու, այդ իրավիճակներում գործելու, ճգնաժամային կառավարման և քաղաքացիական պաշտպանության հարցերով կառավարման մարմինների ղեկավարների, մասնագետների վերապատրաստումը, որակավորման բարձրացումը և բնակչության ուսուցումը: 2016 թվականին ակադեմիայում վերապատրաստման և որակավորման բարձրացման դասընթացներ են անցել 1884 ունկնդիր (ծրագրով՝ 1830) 87 ուսումնական խմբերում (ծրագրով՝ 86 խումբ):

Հաշվետու ժամանակաշրջանում ՀՀ ԱԻՆ Հիդրոմետ ծառայության մթնոլորտային երևույթների վրա ակտիվ ներգործության կենտրոնի և մարզային ստորաբաժանումների կողմից համակարգվել և վարվել է ՀՀ տարածքի կարկտային ռեեստրը Google earth ծրագրում: Կատարվել են շրջայցեր բոլոր հակակարկտային կայանքներ, վերացվել հայտնաբերված թերությունները: Տեղակայված նոր կայանքների համար համայնքների ղեկավարների հետ կնքվել են համատեղ շահագործման պայմանագրեր: Նշված հակակարկտային կայանքներն ընդգրկվել են կենտրոնացված կառավարման համակարգում, ճգնաժամային կառավարման կենտրոնում՝ նպատակ ունենալով բարձրացնել կառավարման արդյունավետությունը:

«Մթնոլորտային երևույթների վրա ակտիվ ներգործության ծառայություններ» ՊՈԱԿ-ի գործունեությունն ուղղված է եղել ՀՀ տարածքում մթնոլորտային երևույթների վրա ակտիվ ներգործության աշխատանքների ու ռադիոլոկացիոն և արբանյակային դիտարկումների կազմակերպմանն ու իրականացմանը, կարկտահարությունից գյուղատնտեսական մշակաբույսերի պաշտպանությանը, լրացուցիչ մթնոլորտային տեղումների՝ անձրևի, ձյան ստացմանը, օդանավակայաններում ցածր ամպամածությունների և մառախուղների ցրմանը, կենսական օբյեկտներն ու տրանսպորտային մայրուղիները պաշտպանելու և բնակչության անվտանգությունն

ապահովելու համար ձնահյուսերի նախազգուշական էջքի կատարմանը, ցրտահարության դեմ պայքարին, ամպերի ամպրոպային ակտիվության թուլացմանը, տեղատարափ և երկարատև տեղումների դեմ պայքարին, օդային ավազանի մաքրմանը, մթնոլորտային երևույթների վրա ակտիվ ներգործության նոր մեթոդների մշակման, կատարելագործման և դրանց ներդրման նպատակով գիտափորձարարական աշխատանքների շարունակական կատարմանը:

Արտաքին քաղաքականություն

2016 թվականի ընթացքում Հայաստանի Նախագահի ուրվագծած արտաքին քաղաքականության ուղենիշների և նրա կողմից տրված հանձնարարականների ու ՀՀ կառավարության ծրագրի հիման վրա շարունակվել են աշխատանքներն՝ ուղղված Հանրապետության արտաքին անվտանգության բաղադրիչի ամրապնդմանը, երկրի զարգացման համար արտաքին բարենպաստ պայմանների և երաշխիքների ապահովմանը, բարեկամ և գործընկեր պետությունների հետ փոխշահավետ համագործակցության զարգացմանը, միջազգային կազմակերպություններում և գործընթացներում ներգրավվածության խորացմանը, տարբեր մայրցամաքներում Հայաստանի բարեկամների թվի ավելացմանը, միջազգային ասպարեզում Հայաստանի հեղինակության և դիրքերի ամրապնդմանը, միջազգային և տարածաշրջանային տնտեսական ու ֆինանսական կառույցների հետ ակտիվ համագործակցության զարգացմանը, արտերկրում Հայաստանի Հանրապետության և նրա քաղաքացիների շահերի պաշտպանությանը, հայկական մշակութային ժառանգության պահպանմանը, միջազգային հարաբերություններում դրական օրակարգ ձևավորող և մեր շահերից բխող նախաձեռնությունների իրականացմանը:

2016 թվականին Հայաստանը շարունակեց ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահ պետությունների հետ համատեղ ջանքերն՝ ուղղված ղարաբաղյան հիմնահարցի խաղաղ կարգավորմանը: Ապրիլին Արցախի դեմ Ադրբեջանի սանձազերծած լայնածավալ ռազմական ագրեսիայի ընթացքում և դրա հետևանքների հաղթահարմանն ուղղված միջոցառումների շրջանակներում ՀՀ արտաքին գործերի նախարարությունը և ՀՀ դիվանագիտական ներկայացուցչությունները ծավալուն աշխատանք իրականացրին՝ միջազգային հանրությանը ներկայացնելու ադրբեջանական ագրեսիան ու դրա ընթացքում Բաքվի կողմից միջազգային պարտավորությունների և մարդասիրական իրավունքի կոպտագույն ոտնահարումները: Ապրիլի 5-ին Ռուսաստանի միջնորդությամբ Մոսկվայում ձեռք բերվեց բանավոր պայմանավորվածություն՝ վերականգնելու հրադադարը՝ համաձայն 1994թ. զինադադարի հաստատման մասին եռակողմ համաձայնագրի: Հայաստանի ջանքերով կանխվեցին Ադրբեջանի կողմից 1994-1995թթ. անժամկետ զինադադարի համաձայնագրերը միակողմանիորեն ուժը կորցրած ճանաչելու փորձերը: Մայիսի

16-ին՝ Վիեննայում և հունիսի 20-ին՝ Սանկտ-Պետերբուրգում միջնորդների նախաձեռնությամբ կայացան գագաթաժողովներ, որտեղ ձեռք բերվեցին բանակցային գործընթացի վերսկսման նպատակով բարենպաստ պայմանների ստեղծմանն ուղղված համաձայնություններ:

Դեկտեմբերի 8-ին Համբուրգում կայացավ Հայաստանի և Ադրբեջանի արտգործնախարարների հանդիպումը: Նույն օրը ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահ պետությունների արտաքին գործերի նախարարները ղարաբաղյան հիմնախնդրի կարգավորման վերաբերյալ հանդես եկան հատուկ հայտարարությամբ, որը ևս մեկ անգամ վերահաստատեց, որ Հայաստանի և միջազգային միջնորդների մոտեցումները համահունչ են:

Դեկտեմբերի 29-ին, խախտելով Վիեննայի և Սանկտ-Պետերբուրգի գագաթաժողովներին իր կողմից ստանձնած պարտավորությունները, Ադրբեջանը դիվերսիոն ներխուժման նոր փորձ ձեռնարկեց Հայաստանի պետական սահմանին: ՀԱՊԿ գլխավոր քարտուղարն իր հայտարարության մեջ այս միջադեպը որակեց որպես սադրանք:

2016 թվականին հայկական դիվանագիտությունը շարունակեց ջանքերը Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման և դատապարտման, ինչպես նաև ցեղասպանությունների ու մարդկության դեմ հանցագործությունների կանխարգելման ուղղություններով: Հայոց ցեղասպանությունը ճանաչող և դատապարտող բանաձևեր ընդունեցին Գերմանիայի Դաշնային Հանրապետության Բունդեսթագը, Ազգերի Անդյան միության խորհրդարանը (Բոլիվիա, Կոլումբիա, Էկվադոր, Պերու, Չիլի): Ապրիլի 23-ին Երևանում կայացավ «Ցեղասպանության կենդանի վկաները» խորագիրը կրող «Ընդդեմ ցեղասպանության հանցագործության» երկրորդ գլոբալ ֆորումը:

Որպես Հավաքական անվտանգության պայմանագրի կազմակերպությունում նախագահող պետություն՝ Հայաստանը շարունակեց կազմակերպության կատարելագործմանը, անդամ պետությունների միջև համագործակցության ամրապնդմանն, արտաքին քաղաքականության համադրմանն ուղղված ջանքերը: Հոկտեմբերի 14-ին Հայաստանում կայացավ ՀԱՊԿ գագաթաժողովը, որի արդյունքում ընդունվեց մինչև 2025 թվականը ՀԱՊԿ հավաքական անվտանգության ռազմավարությունը: Հուլիսին Երևանում անցկացվեցին ՀԱՊԿ ԱԳ նախարարների խորհրդի, իսկ հոկտեմբերին՝ կանոնադրական մարմինների համատեղ նիստերը:

Տարվա ընթացքում համատեղ ջանքեր գործադրվեցին՝ ուղղված Ռուսաստանի Դաշնության հետ դաշնակցային ռազմավարական հարաբերությունների առավել խորացմանը, բազմաոլորտ համագործակցության ամրապնդմանը: Նոյեմբերի 30-ին ստորագրվեց Կովկասյան տարածաշրջանում կոլեկտիվ անվտանգության շրջանակներում Հայաստանի և Ռուսաստանի զինված ուժերի միացյալ զորախմբի մասին համաձայնագիրը: Վավերացվեց Հայաստանի և Ռուսաստանի միացյալ տարածաշրջանային հակաօդային պաշտպանության համակարգի

ստեղծման մասին համաձայնագիրը: Ստորագրվեց շուրջ երկու տասնյակ միջկառավարական և միջգերատեսչական իրավական փաստաթուղթ:

Հայ-ամերիկյան բարեկամական գործընկերության զարգացումը կարևոր տեղ զբաղեցրեց Հայաստանի արտաքին քաղաքական օրակարգում: Հոկտեմբերի 7-ին Վաշինգտոնում կայացավ հայ-ամերիկյան միջկառավարական հանձնաժողովի հերթական նիստը:

ՀՀ արտաքին քաղաքական օրակարգում կարևոր տեղ զբաղեցրեց Եվրոպական միության հետ բազմաոլորտ հարաբերությունների ընդլայնումը: Կայացավ ՀՀ և ԵՄ միջև նոր շրջանակային համաձայնագրի շուրջ բանակցությունների յոթ փուլ: Հայաստանը միացավ ԵՄ հետազոտությունների և նորարարության «Հորիզոն 2020» շրջանակային ծրագրին: Նոյեմբերի 17-ին Երևանում կայացավ Արևելյան գործընկերության արտգործնախարարների ոչ պաշտոնական հանդիպումը: Դեկտեմբերի 1-ին ԵՄ խորհուրդը հաստատեց Եվրոպական հանձնաժողովի մանդատը՝ մեկնարկելու Հայաստանի հետ Ընդհանուր ավիացիոն գոտու մասին համապարփակ համաձայնագրի շուրջ բանակցությունները:

Ուշադրության կենտրոնում էր անմիջական հարևանների հետ հարաբերությունների առավել զարգացումը: Բագրատաշենում բացվեց նորակառույց սահմանային անցակետ: Ստորագրվեց Հայաստանի և Իրանի միջև մուտքի արտոնագրային ռեժիմի ազատականացման մասին հուշագիրը: Դեկտեմբերի 4-ից 5-ը Թեհրանում անցկացվեց հայ-իրանական միջկառավարական հանձնաժողովի 14-րդ համատեղ նիստը:

Շարունակվեցին զարգանալ և ընդլայնվել եվրոպական պետությունների հետ Հայաստանի հարաբերությունները: «Այց առաջին քրիստոնյա երկիր» կարգախոսի ներքո հունիսի 24-ից 26-ը Հայաստան այցելեց Հռոմի Պապ Ֆրանցիսկոս I-ը:

Մեծ ուշադրություն հատկացվեց Անկախ պետությունների համագործակցության մասնակից պետությունների հետ ավանդական կապերի խորացմանը: Մոլդովայում հիմնադրվեց Հայաստանի դեսպանությունը:

Հայաստանը գործնական քայլեր ձեռնարկեց ասիա-խաղաղօվկիանոսյան տարածաշրջանի երկրների հետ համագործակցության ամրապնդման ուղղությամբ: Օգոստոսի 22-ին Երևանում տեղի ունեցավ առևտրատնտեսական հարցերով հայ-չինական միջկառավարական համատեղ հանձնաժողովի 9-րդ նիստը: Ուշադրության կենտրոնում էր Ճապոնիայի հետ համագործակցության զարգացումը: Ապրիլի 1-ին Երևանում կայացավ հայ-հնդկական միջկառավարական հանձնաժողովի հերթական՝ 7-րդ նիստը: Սեպտեմբերի 28-ին Հայաստանում տեղի ունեցավ հայ-հնդկական գործարար ֆորում:

Աշխատանքներ տարվեցին արաբական պետությունների հետ փոխգործակցության զարգացման ուղղությամբ: Առանցքային տեղ էին զբաղեցնում սիրիահայության անվտանգության, Սիրիայում հայկական պատմամշակութային ժառանգության պահպանման, սիրիահայությանը օժանդակության ցուցաբերման հարցերը: Հալեպում շարունակում էր գործել միակ դիվանագիտական ներկայացուցչությունը՝ Հայաստանի գլխավոր հյուպատոսությունը: Հունվարի 25-ից 27–ը Բաղդադում տեղի ունեցավ հայ–իրաքյան միջկառավարական հանձնաժողովի հերթական նիստը:

Հայաստանը շարունակեց քայլեր ձեռնարկել ամերիկյան աշխարհամասի պետությունների հետ հարաբերությունների զարգացման ուղղությամբ: Բրազիլիա ՀՀ Նախագահի աշխատանքային այցի շրջանակներում դրվեց Բրազիլիայում ՀՀ դեսպանության նոր շենքի հիմնաքարը:

2016 թվականին գործնական քայլեր ձեռնարկվեցին աֆրիկյան պետությունների հետ Հայաստանի հարաբերությունները զարգացնելու ուղղությամբ: Մի շարք աֆրիկյան երկրների հետ ստորագրվեցին հարաբերությունների զարգացմանն ուղղված փաստաթղթեր:

Հայաստանը շարունակեց ակտիվ ներգրավվածությունը միջազգային կառույցներում և բազմակողմ ձևաչափերում:

2016 թվականի ընթացքում Հայաստանի Հանրապետությունն ակտիվ գործունեություն ծավալեց Եվրասիական տնտեսական միության շրջանակներում: ԵԱՏՄ անդամ պետությունների Նախագահները ստորագրեցին ԵԱՏՄ Մաքսային օրենսգրքի մասին համաձայնագիրը, ԵԱՏՄ շրջանակներում ինտեգրացիայի հիմնական ուղղությունների, միության ընդհանուր ծառայությունների շուկայի վերաբերյալ որոշումները:

Հայաստանի Հանրապետությունը շարունակեց խորացնել իր ներգրավվածությունը Միավորված ազգերի կազմակերպությունում: Հայաստանի ԱԳ նախարարը մասնակցեց և ելույթով հանդես եկավ ՄԱԿ Գլխավոր ասամբլեայի 71-րդ նստաշրջանին: Սեպտեմբերի 19-ին ԱԳ նախարար Էդվարդ Նալբանդյանը նախագահեց ՄԱԿ-ի՝ փախստականների և միգրանտների հիմնախնդիրներին նվիրված գագաթաժողովի անդրանիկ նիստը: ՀՀ արտաքին քաղաքական գերատեսչության ղեկավարը սեպտեմբերի 21-ին նախագահեց ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի նիստը: Սեպտեմբերի 20-ին ՄԱԿ-ի կենտրոնակայանում ԱԳ նախարար Էդվարդ Նալբանդյանը Հայաստանի անունից ստորագրեց կլիմայական փոփոխությունների Փարիզի համաձայնագիրը: Ակտիվ աշխատանքներ իրականացվեցին ՅՈՒՆԵՍԿՕ-ի շրջանակներում:

Հայաստանի Հանրապետությունն իր ակտիվ, հետևողական ներգրավվածությունը բերեց միջազգային խաղաղության և անվտանգության ուղղությամբ իրականացվող միջազգային

ջանքերին: Հայաստանը շարունակեց մասնակցությունն Աֆղանստանի, Կոսովոյի, Լիբանանի և Մալիի միջազգային խաղաղապահ առաքելություններում:

Կարևոր տեղ զբաղեցրեց Ատոմային էներգիայի միջազգային գործակալության հետ համագործակցությունը, Բաց կառավարման գործընկերության շրջանակներում փոխգործակցությունը:

Անտանանարիվոյում անցկացվող Ֆրանկոֆոնիայի 16-րդ գագաթաժողովին որոշում կայացվեց 84 անդամ, ասոցացված և դիտորդ պետություն միավորող Ֆրանկոֆոնիայի միջազգային կազմակերպության 2018 թվականի գագաթաժողովը Հայաստանում անցկացնելու մասին:

Մեծ ուշադրություն հատկացվեց Անկախ պետությունների համագործակցության, Եվրոպայում անվտանգության և համագործակցության կազմակերպության, Եվրոպայի խորհրդի, Սևծովյան տնտեսական համագործակցության կազմակերպության շրջանակներում կառուցողական և ակտիվ ներգրավվածությանը:

Բնականոն զարգացում ապրեց Հյուսիսատլանտյան դաշինքի կազմակերպության հետ փոխգործակցությունը:

ԱԳ Նախարար Էդվարդ Նալբանդյանը Շանհայի համագործակցության կազմակերպության (ՇՀԿ) գլխավոր քարտուղար Ռաշիդ Ալիմովի հետ Պեկինում ստորագրեց Հայաստանին ՇՀԿ երկխոսության գործընկերոջ կարգավիճակի շնորհման մասին հուշագիրը:

ՀՀ կառավարության գործունեության կարևորագույն ուղղություններից էր Հայաստանի արտաքին տնտեսական հարաբերությունների զարգացումը: Աշխատանքներ իրականացվեցին երկկողմ և բազմակողմ ձևաչափերով տնտեսական կապերի խորացման, հայկական արտադրանքի արտահանման համար նոր շուկաների բացահայտման, Հայաստանի ներդրումային հնարավորությունների ներկայացման, տարբեր պետությունների գործարար շրջանակների հետ կապերի հաստատման և տնտեսական դիվանագիտության այլ ուղղություններով:

2016 թվականին կայացավ տարբեր երկրների հետ միջկառավարական հանձնաժողովների 12 նիստ և ստորագրվեց առևտրատնտեսական ոլորտի 83 փաստաթուղթ:

Կառավարության կողմից համակողմանի ակտիվ աշխատանքներ իրականացվեցինմիջխորհրդարանական կապերի զարգացման, միջազգային կազմակերպությունների խորհրդարանական ձևաչափերում փոխգործակցության սերտացման ուղղությամբ:

Նշանակալի աշխատանքներ տարվեցին՝ ուղղված մի շարք երկրների հետ ապակենտրոնացված համագործակցության ընդլայնմանը:

Կարևոր տեղ զբաղեցրին հայկական մշակույթի ներկայացման, արտերկրում գտնվող հայկական մշակութային ժառանգության պահպանման և տարբեր պետությունների հետ մշակութային համագործակցության հաստատման և զարգացման ուղղությամբ աշխատանքները:

Կառավարության ուշադրության կենտրոնում էր արտերկրում ՀՀ քաղաքացիների և իրավաբանական անձանց իրավունքների և շահերի պաշտպանությունը: ԱԳՆ հյուպատոսական վարչության և հյուպատոսական հիմնարկների կողմից սպասարկվեց շուրջ 148 000 քաղաքացի:

2016 թվականի ընթացքում ընդլայնվեց Հայաստանի միջազգային իրավապայմանագրային դաշտը. ստորագրվեց 108 միջազգային պայմանագիր և 33 միջազգային պայմանագիր չհանդիսացող փաստաթուղթ, վավերացվեց 95 և ուժի մեջ մտավ 60 միջկառավարական, միջպետական և միջգերատեսչական փաստաթուղթ:

2016 թվականին ՀՀ Նախագահը կատարեց 18 օտարերկրյա այց: Հայաստան այցելեց 8 պետության ղեկավար: ՀՀ ԱԺ նախագահը կատարեց 1 արտասահմանյան այց: Հայաստան այցելեց 4 պետության խորհրդարանի ղեկավար: ՀՀ վարչապետը կատարեց 5 աշխատանքային այցելություն: Հայաստան ժամանեց 10 երկրի կառավարության ղեկավար: ԱԳ նախարարը կատարեց 38 օտարերկրյա այց: Հայաստան այցելեց 24 արտգործնախարար և միջազգային կազմակերպության ղեկավար: Հայաստանի արտգործնախարարը 104 հանդիպում ունեցավ տարբեր երկրների իր գործընկերների և միջազգային կազմակերպությունների ղեկավարների հետ:

Նոր թափ ստացան ՀՀ արտաքին քաղաքականության դիրքորոշումների վերաբերյալ միջազգային իրազեկվածության բարձրացմանը, մեր երկրի հեղինակության ամրապնդմանն ուղղված քայլերը: Հանրապետության Նախագահը, վարչապետն ու ԱԳ նախարարը մի քանի տասնյակ հարցազրույցներ տվեցին միջազգային հեղինակավոր լրատվամիջոցներին, մի շարք երկրներում հանդես եկան մամուլի ասուլիսներով և դասախոսություններով:

Դիվանագիտական ներկայացուցչությունները հավատարմագրման երկրներում բազմաթիվ միջոցառումներ կազմակերպեցին՝ նվիրված Հայաստանի Անկախության 25-րդ տարեդարձին:

Արդարադատություն

Արդարադատության ոլորտի 2016 թվականի գերակա խնդիրներից էր դատաիրավական համակարգի հետագա զարգացման, դատական համակարգի անկախության և հասարակության հանդեպ հաշվետվողականության ապահովումը, որի շրջանակներում 2016 թվականի դեկտեմբերին ձևավորվել է Հայաստանի Հանրապետության դատական նոր օրենսգրքի նախագծի մշակման խումբ, որը Հայաստանի Հանրապետության դատական նոր օրենսգրքի հայեցակարգի, գործող Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքի հետ կապված իրավական խնդիրների և

միջազգային փորձի վերլուծության հիման վրա մշակել է Հայաստանի Հանրապետության դատական նոր օրենսգրքի նախագիծը: Ներկայումս այն գտնվում է լրամշակման փուլում:

Քաղաքացիական օրենսգրքում փոփոխությունների և լրացումների կատարումը ժամանակակից մոտեցումներին համապատասխանեցնելու նպատակով 2016 թվականի ընթացքում մշակվել են ՀՀ քաղաքացիական օրենսգքրում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին մի շարք օրենքների նախագծեր, որոնք վերաբերում են սերվիտուտին, հարևանային իրավունքին, կառուցապատմանը, դելիկտային հարաբերություններին, մտավոր սեփականության իրավունքին և միջազգային մասնավոր իրավունքին: Նշված նախագծերից սերվիտուտին վերաբերող փոփոխություններն ընդունվել են Հայաստանի Հանրապետության Ազգային Ժողովի կողմից առաջին ընթերցմամբ 2017 թվականի փետրվարի 17-ին:

Հաշվետու տարում շարունակվել է Էլեկտրոնային քաղաքացիական ռեգիստրի քաղաքացիական կացության ակտերի գրանցման (ՔԿԱԳ) համակարգի թղթային արխիվների, մասնավորապես՝ մինչև 2014 թվականը ՔԿԱԳ բաժիններից ստացված հաշվետվությունների, ՀՀ արդարադատության նախարարության ՔԿԱԳ գործակալության միջազգային պայմանագրերի և ապոստիլի բաժնի արխիվացման ենթակա 2008-2015թթ. փաստաթղթերի թվայնացումը:

2016 թվականին մշակվել է Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ նոր օրենսգրքի նախագիծը: 2016 թվականի հուլիսի 20-ին ՀՀ քաղաքացիական նոր դատավարության օրենսգիրքը ներկայացվել է ՀՀ ԱԺ, իսկ «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծն ընդունվել է ՀՀ ԱԺ կողմից 2015 թվականի դեկտեմբերի 21-ին:

Հաշվետու տարում շարունավկել են բարեփոխումները քրեական արդարադատության և քրեական պատիժների համակարգի արդյունավետության բարձրացման նպատակով: Քրեական արդարադատությանն ուղղված բարեփոխումներ են իրականացվել պատժից պայմանական վաղաժամկետ ազատման, պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու ընթացակարգերում, սահմանվել են պատժից պայմանական վաղաժամկետ ազատման, պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու վերաբերյալ դատական գործերի քննության արդյունավետ կարգեր:

Դատապարտյալների զբաղվածությունն ապահովելու, սոցիալական վերականգնման արդիական և արդյունավետ միջոցառումներ ձեռնարկելու նպատակով, դատապարտյալները ներգրավվել են տարաբնույթ աշխատանքներում, այդ թվում՝ այլ գործատուների մոտ: Իրացվել է 187 դատապարտյալի կրթական իրավունքը, ինչպես հանրակրթական (65), մասնագիտական (114),

այնպես էլ բարձրագույն և հետբուհական (8): Քրեակատարողական հիմնարկներում իրականացվել են մշակութային, լուսավորչական, մարզական և կրոնական միջոցառումներ:

Առաջնային խնդիրներից է հանդիսացել քրեակատարողական համակարգից անկախ պրոբացիոն ծառայության արդյունավետ գործարկումը: Մասնավորապես՝ 2015 թվականի հունիսի 17-ին մեկնարկել էր պրոբացիայի ծառայության պիլոտային ծրագիրը: 2016 թվականի ընթացքում շարունակվել է պիլոտային երկու ստորաբաժանումների գործունեությունը: Այս ծրագրի շրջանակներում 2016 թվականի ընթացքում դատապարտյալների համար պարբերաբար կազմակերպել են հանդիպումներ, որոնց ընթացքում ներկայացվել են կենտրոնի կողմից իրականացվող պետական ծրագրերը: ՀՀ-ում Պրոբացիայի ծառայության ներդրման պիլոտային ծրագրի շրջանակներում ԱՊԿ բաժինը համագործակցել է Եվրոպայի Խորհրդի հետ: «Աջակցություն Հայաստանում պրոբացիայի ծառայության ստեղծմանը» ծրագրի շրջանակներում կազմակերպվել են բազմաթիվ կլոր սեղաններ, կոնֆերանսներ, հանդիպումներ միջազգային փորձագետների հետ, վերապատրաստման դասընթացներ՝ նախատեսված այլընտրանքային պատիժների կատարման բաժնի աշխատակիցների համար:

Իրավական և համակարգային բարեփոխումներ են իրականացվել նաև նոտարական համակարգում, որոնք ուղղված են մատուցված ծառայությունների որակի բարձրացմանը և ծառայությունների մատուցման ժամկետների նվազեցմանը: «Նոտարիատի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի և հարակից այլ օրենքների նախագծերն ընդունվել են ՀՀ ԱԺ-ի կողմից 2016 թվականի հոկտեմբերի 19-ին:

Շարունակվել են դատական ակտերի հարկադիր կատարման ծառայությունում իրականացվող տեղեկատվական տեխնոլոգիաների ներդրման և հարկադիր կատարողի մի շարք գործառույթների ավտոմատացման գործընթացները՝ որպես առաջնային խնդիր դիտարկելով կատարողական վարույթների ժամկետների նվազեցումը և կատարողական թերթի վերացումը: Մշակվել են «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» և «Հրապարակային սակարկությունների մասին» ՀՀ օրենքում լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծերը, որոնք ներկայացվել են ՀՀ ԱԺ: Բացի այդ, ԴԱՀԿ համակարգում ներդրվել և գործարկվում է ԴԱՀԿ ծանուցումները SMS-ի միջոցով ստանալու հնարավորությունը:

2016 թվականի ընթացքում արդարադատության համակարգում իրականացված բարեփոխումների ուղղություններից է եղել անվճար իրավաբանական օգնության ինստիտուտի կատարելագործումը, ինչի ուղղությամբ մշակվել է «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքում

փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին ՀՀ օրենքի նախագիծը, որը ներկայացվել է ՀՀ ԱԺ:

Սփյուռք

Ոլորտի 2016 թվականի առաջնահերթություններն են համարվել հետևյալ միջոցառումներն ու ծրագրերը:

1. Հայաստան-Սփյուռք գործակցության առանձին խնդիրների օրենսդրական կարգավորումը, համահայկական կազմակերպությունների և սփյուռքի տեղական կառույցների հետ գործակցության նոր կառուցակարգերի ներդրումը:

2. Սփյուռքում գործող տարածաշրջանային հանձնախմբերի և համայնքային կառույցների հետ համատեղ ծրագրերի և միջոցառումների մշակումն ու իրականացումը: Համահայկական կառույցների հետ կնքված համաձայնագրերի շրջանակներում իրականացվել են բազմաթիվ համատեղ միջոցառումներ, այդ թվում՝ կազմակերպվել են համաժողովներ, ցուցահանդեսներ, համերգներ, մշակութային այլ միջոցառումներ, սփյուռքահայ երեխաների հանգիստ, ֆինանսական աջակցություն է տրամադրվել Հայաստանում հաստատված սիրիահայերին, բացվել են մեկօրյա դպրոցներ, կազմակերպվել են ազգային և պետական տոներին նվիրված համատեղ ձեռնարկներ: Կազմակերպվել են Հայաստան-սփյուռք թեմատիկ տեսակոնֆերանսներ, համացանցային հեռարձակումներ և ասուլիսներ:

3. Տարբերակված մոտեցումների որդեգրումը՝ հաշվի առնելով տարածաշրջանների առանձնահատկություններն ու առաջնահերթությունները, նպատակային ծրագրերի ներդրումը՝ որոնք ուղղված կլինեն հայության տարբեր հատվածների, համայնքների կարիքների բավարարմանը, ինչպես նաև արտակարգ իրավիճակներում հայտնված սփյուռքահայերին աջակցության հայեցակարգի մշակումը:

Հաշվի առնելով Սփյուռքի առանձնահատկությունները՝ որոշ ծրագրեր իրականացվել են ըստ տարածաշրջանների, այդ թվում՝

- «Կրթամշակութային աջակցություն հայ համայնքներին (Ամերիկայի և Ավստրալիայի հայ համայնքներ)» ծրագիր,
- ԵՏՄ երկրների հայ համայնքների կրթամշակութային զարգացմանն աջակցության ծրագիր,
- «Աջակցություն մերձավոր սփյուռքին» ծրագիր:

Այդ ծրագրերի շրջանակներում համայնքներում կազմակերպվել են 50-ից ավելի համերգներ, ցուցահանդեսներ, ֆիլմերի ցուցադրություններ, մոտ 60 տարազներ են տրամադրվել 3 համույթների,

աջակցություն է ցուցաբերվել մոտ 20 կրթօջախների և այլն, ինչպես նաև Հայաստանում կազմակերպվել են տասնյակ ուսուցիչների վերապատրաստման դասընթացներ:

4. Երկքաղաքացիության ինստիտուտի արդյունավետ կիրարկման ապահովումը, հայրենադարձության գործընթացի իրավական հիմքերի ընդլայնման շարունակումը, գործուն ու արդյունավետ կառուցակարգերի ներդրումը՝ հայրենիք վերադարձող սփյուռքահայերի, այդ թվում՝ սիրիահայերի՝ հասարակությանն ինտեգրումն արագացնելու համար, Հայաստանի տնտեսության մեջ սփյուռքահայերի առավելագույնս ներգրավման, ներդրումների խրախուսման և ծավալների մեծացման նպաստավոր միջավայր ստեղծելու համար միջոցների ձեռնարկումը: «Հայրենիք վերադարձող սփյուռքահայերի, այդ թվում՝ սիրիահայերի, հասարակությանն ինտեգրման գործընթացի և կառուցակարգերի կատարելագործման ծրագրերի» իրականացումը ՀՀ կառավարության 2016թ. հունվարի 14-ի N131-Ն որոշման N2 հավելվածի 36-րդ կետով սահմանվել է որպես գերակա խնդիր, ուստի Հայրենիք վերադարձող սփյուռքահայերի, այդ թվում՝ սիրիահայերի՝ Հայաստանի հասարակությանն ինտեգրումն արագացնելու ուղղությամբ տարվող աշխատանքները կրում են շարունակական բնույթ: Հայաստանի Հանրապետությունում ներդրումային ծրագրերում սփյուռքահայ գործարարներին ներգրավելու համար ՀՀ սփյուռքի նախարարության կայքում դեռևս 2014 թվականին բացվել է «Ներդրումներ Հայաստանում» բաժինը: Աշխատանքներ են տարվել Հայաստանի Հանրապետությունում ներդրումային ծրագրերի փաթեթների հավաքագրման ուղղությամբ, որոնց վերաբերյալ տեղեկատվությունն առաքվել է սփյուռքյան լրատվամիջոցներին՝ հրապարակման խնդրանքով: Համաձայն ՀՀ կառավարության ծրագրի՝ ՀՀ սփյուռքի նախարարի հրամանով ձևավորվել է «Մեկ պատուհանի սկզբունքով» գործող կառույցի աշխատանքային խումբ, որի նպատակն է Հայաստանում ներդրումային ծրագրերի իրականացման խթանումը, սփյուռքահայ գործարարներին տեղեկատվության տրամադրումը:

5. Սփյուռքահայ երիտասարդների՝ Հայաստանի Հանրապետություն և ԼՂՀ այցելությունների կազմակերպմանն աջակցումը: «Սփյուռք» ամառային դպրոց» 2016 թվականի ծրագրով իրականացվել են 5 ուղղություններով դասընթացներ, որոնց մասնակցել են 172 սփյուռքահայեր աշխարհի 30 երկրից: Ստեղծվել է «Սփյուռք» ամառային դպրոցի www.dss.am կայքը:

6. Բռնի կրոնափոխ եղած, ծպտյալ հայերին ազգային արմատներին վերադարձնելու, ինչպես նաև մշակութային և ճանաչողական ծրագրերի մշակումը և իրականացումը: Դեկտեմբերի 2-ին կայացել է իսլամացված հայերի հիմնախնդիրներին նվիրված համաժողով, որին մասնակցել են հիմնախնդրով զբաղվող շուրջ երկու տասնյակ գիտնականներ, փորձագետներ: Համաժողովի հարցադրումների հիման վրա կազմվել է «Կրոնափոխ հայերի շրջանում կատարվելիք աշխատանքների» ժամանակացույց:

2016 թվականին «Մեր մեծերը» ծրագրում ընդգրկվել են Գրիգոր Զոհրապի, Սրբուհի Տյուսաբի, Ավետիս Ահարոնյանի, Գրիգոր Խանջյանի, Վահե Հայկի անունները: Պատրաստվել են անհրաժեշտ նյութեր, որոնք տրամադրվել են Սփյուռքի կրթամշակութային հաստատություններին, և կազմակերպվել են տասնյակ միջոցառումներ:

7. Կրթամշակութային, գիտահետազոտական ծրագրերի իրականացումը՝ սփյուռքի երիտասարդության շրջանում մայրենի լեզվի ուսուցման, կիրառման, արևմտահայերենի պահպանման ու զարգացման համար, ինչպես նաև ազգային արժեհամակարգի պահպանման և վերարտադրության նպատակով աջակցումը սփյուռքի հայկական դպրոցների համար ուսումնական ծրագրերի, դասագրքերի, ձեռնարկների ստեղծմանը, սփյուռքահայ ուսուցիչների վերապատրաստմանը:

Վերջին շրջանում կարևորվել է համայնքների դպրոցների ուսուցիչների կողմից տեղի լեզվական հիմքով ձեռնարկների ստեղծման խնդիրը: Նման ձեռնարկներ են ստեղծվել և հաջողությամբ փորձարկվել Ուկրաինայի, ՌԴ Կրասնոդարի, Ստավրոպոլի երկրամասերի, ռուսաստանյան այլ տարածաշրջանների հայկական դպրոցներում՝ փորձառու ուսուցիչների կողմից: 2016 թվականին լույս է տեսել 4 այդպիսի գիրք: Սփյուռքի կրթոջախներին տրամադրվել են ավելի քան 50000 գիրք և ուսումնական նյութեր:

Մի շարք երկրների համայնքային կառույցների, հայկական կազմակերպությունների հետ աշխատանքների արդյունքում ստեղծվել են մոտ 30 նոր՝ մեկօրյա դպրոցներ: Սփյուռքի դպրոցների գործունեությանն աջակցության նպատակով իրականացվող «Քույր դպրոցներ» ծրագրի շրջանակներում 2009 թվականից սկսած համագործակցություն է հաստատվել 40 հայաստանյան և սփյուռքյան կրթօջախների միջև: 2016 թվականին «Հայոց լեզվի հեռուստադպրոց» ծրագրով շարունակվել են Հայաստանի հանրային հեռուստաընկերության կողմից հայոց լեզվի դասընթացների արբանյակային հեռարձակումները (թվով 40 հաղորդում): Դասերն անցկացվել են արևելահայերենով՝ անգլերենի և ռուսերենի հենքով: Մայրենի լեզվի հեռավար ուսուցման ՀԲԸՄ AVC վիրտուալ համալսարանի ուսուցման մասին տեղեկատվությունն ըստ շրջանների տարածվել է Սփյուռքի համայնքներում, տեղադրվել է նախարարության կայքերում, կապ է հաստատվել գրանցվել ցանկացող անհատ երիտասարդների և խմբերի հետ: Հայկական սփյուռքի գիտական, կրթական, տնտեսական, մշակութային և այլ ոլորտներում առկա ներուժի հաշվառման և համախմբման նպատակով ստեղծված էլեկտրոնային շտեմարանը համալրվել է հայտնի սփյուռքահայ անհատների և սփյուռքյան ու համահայկական կառույցների վերաբերյալ մոտ 7000 նոր տվյալներով:

8. Հայաստանում և սփյուռքում մասնագիտական, այդ թվում՝ գիտական, կրթական, տնտեսական համաժողովների կազմակերպումը: Անց են կացվել 8 համահայկական համաժողովներ, որոնք նպաստել են ներուժի հայտնաբերմանը: Մասնագիտական հավաքների

ընթացքում ստեղծվում են աշխատանքային խմբեր, ընկերակցություններ, յուրօրինակ հայկական ցանցեր, որոնք անընդմեջ գործում են:

9. Հայկական կազմակերպությունների հետ մշակութային փառատոնների, ձեռնարկների, մարզական խաղերի միջոցով երիտասարդության ազգային ոգին բարձրացնելու և հայրենիքը ճանաչելի դարձնելու գործընթացի շարունակումը:

«Իմ Հայաստան - 2016» համահայկական 3-րդ փառատոնը նվիրվել է ՀՀ անկախության 25-ամյակին: Փառատոնը տեղի է ունեցել հետևյալ ուղղություններով՝ «Պարարվեստի օրեր», «Ասմունքի համահայկական փառատոն Շուշիում», «Երգչախմբային արվեստի օրեր», «Դուդուկի և այլ նվագարանների փառատոն» և «Հայ երգի օր»: Փառատոնի միջոցառումներին մասնակցել է շուրջ 2000 հոգի 23 երկրից:

2016 թվականին Հայաստանում և Սփյուռքում կազմակերպվել են բազմաթիվ միջոցառումներ՝ նվիրված նշանավոր հայերի հոբելյաններին:

Տարվա ընթացքում սփյուռքյան համայնքներում կազմակերպվել են Հայոց ցեղասպանությանը նվիրված զանազան մշակութային միջոցառումներ:

ՀՀ անկախության 25-ամյակին է նվիրվել Համաշխարհային հայկական կոնգրեսի և Ռուսաստանի հայերի միության հետ համատեղ իրականացվող՝ «Հայապահպանության գործում նշանակալի ավանդի համար» համահայկական մրցանակաբաշխությունը:

10. Հանրային հեռուստատեսության արբանյակային հեռարձակումներում հայապահպանական և ուսուցողական ծրագրերի ընդլայնմանը, այդ ծրագրերի որակի ու բովանդակության բարելավման աջակցումը՝ ավելացնելով համագործակցությունն այլ հեռուստաալիքների հետ:

«Հայաստան-Սփյուռք գործակցության թեմայով հեռուստահաղորդումների և տեսահոլովակների պատրաստում և հեռարձակում, ձեռքբերում և բազմացում» ծրագրի շրջանակներում 2016 թվականի ընթացքում հեռարձակվել են «Մերոնք» (72 հաղորդում), «Սփյուռքի ժամ» (40 հաղորդում, Հ1), «Հայկական հետք» (20 հաղորդում, «Երկիր մեդիա»), «Տոհմածառ՝ «Նոր արմատներ» (20 հաղորդում, «Արարատ»), «Աշխարհասփյուռ» (20 հաղորդում, «Արմենիա») հեռուստահաղորդումները և «Հայ սփյուռք» (20 ֆիլմ, Հ1) ֆիլմաշարը:

11. Վիրահայության շրջանում, այդ թվում՝ Ջավախքի հայկական համայնքներում հայապահպանությանը, մայրենի լեզվի ու մշակույթի պահպանմանը նպաստող ծրագրերի իրականացման շարունակումը: Ֆինանսական աջակցություն է ցուցաբերվում Թբիլիսիի Սբ. Էջմիածին եկեղեցուն կից գործող «Հայարտուն» կրթամշակութային կենտրոնին՝ Թբիլիսիում գտնվող հայ գրողների պանթեոնի պահպանման և բարեկարգման աշխատանքներ իրականացնելու նպատակով: «Աջակցություն մերձավոր սփյուռքի հայ համայնքներին» ծրագրի շրջանակներում

նյութատեխնիկական աջակցություն է ցուցաբերվում տարածաշրջանում գործող հայալեզու թերթերին և լրատվական այլ միջոցներին:

Կրթություն

Մարդկային զարգացման ապահովման քաղաքականության հիմնական գերակայությունը կրթության կայուն զարգացման ապահովումն է՝ կրթության որակի, արդյունավետության և մատչելիության բարձրացման միջոցով: Պետական քաղաքականության մեջ կրթությունը գերակայությունների շարքում շարունակում է մնալ որպես ազգային արժեք և երկրի սոցիալ-տնտեսական առաջընթացն ապահովող կարևոր գործոն:

Շարունակվում են կրթության ոլոտի հիմնական բարեփոխումները, որոնց նպատակներն են կրթության որակի բարձրացումը, բնակչության բոլոր խավերի համար որակյալ կրթության հավասար մատչելիության ապահովումը, ինչպես նաև համակարգի արդյունավետության շարունակական բարձրացումը:

Հանրակրթության ոլորտում դպրոցին երեխաների պատրաստվածության մակարդակի բարձրացման և կրթության հավասար մեկնարկային հնարավորությունների ապահովման նպատակով Համաշխարհային բանկի (ՀԲ) աջակցությամբ իրականացվող «Կրթության բարելավում» վարկային ծրագրի շրջանակներում ՀՀ Արմավիրի, Տավուշի և Լոռու մարզերում նոր նախակրթարանների հիմնման համար դրամաշնորհային պայմանագրեր կնքած 24 համայնքներում ավարտվել են ծրագրի առաջին և երկրորդ փուլով նախատեսված աշխատանքները: Նորաստեղծ նախակրթարաններում իրականացվել են համապատասխան տարածքների բարեկարգման, գույքով համալրման աշխատանքներ, ձեռք են բերվել անհրաժեշտ ուսումնամեթոդական նյութեր, խաղալիքներ, գրենական պիտույքներ և այլն: Բոլոր 24 հաստատությունները բնականոն գործում են, և դրանցում ընդգրկված է շուրջ 750 երեխա: Միաժամանակ, վերապատրաստվել է 24 նախակրթարաններում ընդգրկված թվով 55 դաստիարակ: Նորաստեղծ նախակրթարաններում հատուկ ուշադրություն է դարձվում նախադպրոցական տարիքի երեխաների արդյունավետ նախապատրաստմանը տարրական կրթությանը, որը ոչ միայն ապահովում է հավասար մեկնարկային պայմաններ՝ շարունակելու ուսումը տարրական դպրոցում, այլև ստեղծում է ամուր հիմքեր նրանց անհատական և սոցիալական հմտությունների ձևավորման ու զարգացման համար:

2016 թվականին աշխատանքներ են իրականացվել հանրակրթության որակի և արդյունավետության բարձրացման ուղղությամբ: «Կրթության բարելավում» վարկային ծրագրի շրջանակներում իրականացվել են 12 ավագ դպրոցների շենքերի նախագծանախահաշվային

փաստաթղթերի մշակման աշխատանքները: Բոլոր նախագծանախահաշվային փաստաթղթերը ՀԲ-ի հետ համաձայնեցման փուլում են:

ՀՀ կառավարության 2016 թվականի դեկտեմբերի 15-ի N1295-Ն որոշմամբ հաստատվել է կրթության գերազանցության ազգային ծրագրի շրջանակներում մշակված «Արարատյան բակալավրիատ» կրթական ծրագրի ներդրման գործընթացը ՀՀ մարզերի հանրակրթական պետական ուսումնական հաստատություններում: Միաժամանակ սահմանվել է, որ «Արարատյան բակալավրիատ» ծրագիր իրականացնող ուսումնական հաստատությունների շրջանավարտների՝ Հայաստանի Հանրապետության բարձրագույն ուսումնական հաստատություններ ընդունելության քննություններն իրականացվում են Արարատյան բակալավրիատին հատկացված նպատակային տեղերի շրջանակում: Վեցամսյա ժամկետում նախատեսվում է մշակել «Արարատյան բակալավրիատ» կրթական ծրագրի՝ ՀՀ մարզերի հանրակրթական պետական ուսումնական հաստատություններում ներդրման ծրագիրը:

Հաշվի առնելով «Ազգային երգ ու պար» առարկայի 5-7-րդ դասարանների ծրագրի ամբողջականացման անհրաժեշտությունը, դպրոցների ուսուցիչների վերապատրաստումների ամբողջական՝ 5-7-րդ դասարանների ծրագրով իրականացնելու նպատակահարմարությունը, ինչպես նաև Ազգային երգ ու պարի ակադեմիայի հոգաբարձումների խորհրդի առաջարկը՝ 2016-17 ուսումնական տարում ծրագիրը չի ընդլայնվել և իրականացվում է միայն արդեն իսկ ընդգրկված թվով 113 դպրոցներում:

2016 թվականին կարևորվել են ազգային փոքրամասնությունների համար դպրոցներում ուսումնական բազայի բարելավման և կադրերի մասնագիտական զարգացման գործընթացները: Հանրակրթական դպրոցներում ազգային փոքրամասնությունների կարողությունների զարգացման նպատակով իրականացվել է 4 անուն դասագրքի վերահրատարակում: Իրականացվել է նաև հանրակրթական դպրոցների «Եզդիերեն լեզու և գրականություն» առարկայի 31 ուսուցիչների վերապատրաստում:

ՀՀ-ում ներառական կրթություն իրականացնող դպրոցների թիվը 2016 թվականին ավելացել է 78-ով: Ներկայումս ՀՀ-ում գործում է ներառական կրթություն իրականացնող 260 դպրոց՝ շուրջ 6700 երեխայի ընդգրկմամբ:

Աշխատանքներ են իրականացվել ՀՀ նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության համակարգի զարգացման ապահովման և եվրոպական մասնագիտական կրթական տարածքին ինտեգրման ուղղությամբ: Մասնագիտական կրթության և ուսուցման (ՄԿՈՒ) պլանավորման ու կատարողականի կառավարման կարողությունների հզորացման նպատակով իրականացվել են վերապատրաստման դասընթացներ, որոնց մասնակցել

են 75 ՄԿՈՒ ուսումնական հաստատությունների շուրջ 145 տնօրեններ, փոխտնօրեններ, վարչական աշխատողներ: Վերապատրաստման դասընթացներին մասնակցել են նաև ՄԿՈՒ հաստատությունների թվով 934 դասախոսներ և արտադրական ուսուցման վարպետներ ու կառավարման խորհրդի թվով 41 անդամներ:

Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության շարունակական զարգացումն ապահովելու նպատակով աշխատանքներ են իրականացվել Բոլոնիայի գործընթացի սկզբունքների շարունակական ներդրման ուղղությամբ:

ՀՀ 5 պետական ոչ առևտրային կազմակերպության կարգավիճակ ունեցող պետական բուհեր վերակազմակերպվել են հիմնադրամների, մասնավորապես՝ «Վանաձորի Հ.Թումանյանի անվան պետական համալսարան», «Գավառի պետական համալսարան», «Խ.Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան», «Ֆիզիկական կուլտուրայի հայկական պետական ինստիտուտ» և «Գյումրու Մ.Նալբանդյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտ» պետական ոչ առևտրային կազմակերպությունները վերակազմավորվել են համապատասխանաբար «Վանաձորի Հ.Թումանյանի անվան պետական համալսարան», «Գավառի պետական համալսարան», «Խ.Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան», «Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ» և «Շիրակի Մ.Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամների:

2016 թվականին երեք պետական բուհեր՝ «Գյումրու Մ.Նալբանդյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտը», «Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտը» և «Երևանի թատրոնի և կինոյի պետական ինստիտուտը», ստացել են ինստիտուցիոնալ հավատարմագրում՝ 4 տարի ժամկետով:

Նորարարությունների մրցակցային հիմնադրամի (ՆՄՀ) գործունեության շրջանակներում ընթացքում է եղել նորարարական ծրագրերի իրականացումը 6 բարձրագույն ուսումնական հաստատությունների կողմից (Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան, Երևանի պետական բժշկական համալսարան, Հայաստանի ազգային ագրարային համալսարան, ՀՀ պետական կառավարման ակադեմիա, Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարան, Երևանի պետական համալսարան)՝ 2015թ. դեկտեմբերի 24-ին կնքված պայմանագրերի համաձայն: Ծրագրերի իրականացումը կավարտվի 2017 թվականի դեկտեմբերին: Բուհերի համար կազմակերպվել և իրականացվել է աշխատաժողով՝ ծրագրերի գնումների, ֆինանսական և իրականացման այլ ընթացակարգերի պարզաբանման նպատակով: Ծրագրերի իրականացման ընթացքում մասնագիտական աջակցություն ցուցաբերելու նպատակով ընտրվել են

ոլորտային փորձագետներ, որոնք տարվա ընթացքում տրամադրել են անհրաժեշտ խորհրդատվությունը:

Միաժամանակ, քննարկվել է նորարարությունների մրցակցային հիմնադրամի շրջանակներում ևս մեկ փուլ կազմակերպելու հարցը, որին մասնակցության իրավունք էր տրվում մինչ այդ ՆՄՀ դրամաշնորհառու չհանդիսացած և իրավասության այլ պահանջներին բավարարող բուհերին: Անհրաժեշտ ընթացակարգերի հաստատումներից հետո կազմակերպվել և իրականացվել է ՆՄՀ շրջանակներում բուհերին դրամաշնորհների տրամադրման հավելյալ փուլի մրցույթը: Սահմանված վերջնաժամկետում ներկայացվել է ինը հայտ ութ բուհերի կողմից: Գնահատման արդյունքներով ՆՄՀ համակարգող խորհուրդը կայացրել է որոշում ֆինանսավորման ենթակա ծրագրերի վերաբերյալ, որի արդյունքում կնքվել են պայմանագրեր հետևյալ բուհերի հետ՝ Գլաձոր համալսարան, Հյուսիսային համալսարան, Շիրակի պետական համալսարան, Երևանի պետական կոնսերվատորիա, Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի հայկական պետական ինստիտուտ, Խ.Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան:

ՀՀ հանրակրթական ուսումնական հաստատությունների կարողությունների հզորացման նպատակով վերապատրաստվել են ատեստավորման ենթակա ուսուցիչները: Ատեստավորվել է շուրջ 7000 ուսուցիչ, առաջին աստիճանի տարակարգ է շնորհվել շուրջ 700 ուսուցչի, 2-րդ աստիճանի տարակարգ՝ շուրջ 20 ուսուցչի:

ՀՀ պետական բյուջեով տպագրվել և բաշխվել են հանրակրթական դպրոցների տարրական դասարաններում գործածության անվճար տրվող դասագրքերը և 12-րդ դասարանի 4 առարկայի դասագրքեր:

Գիտության ոլորտ

2016 թվականին *<u>գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման</u>* շրջանակներում իրականացվել են պետական գիտական ծրագրերում և թեմաներում ընդգրկված բարձր արդյունավետությամբ աշխատող, այդ թվում՝ նաև երիտասարդ (մինչև 35 տարեկան), գիտաշխատողների անհատական խրախուսման ամենամյա մրցույթները, որոնց արդյունքում Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի հաշվին իրականացվող գիտական և գիտատեխնիկական գործունեության ծրագրերում և թեմաներում ընդգրկված՝ հավելավճարի տրամադրման հայտերի ընտրության մրցույթի շահառու հանդիսացող 25 առավել բարձր արդյունավետությամբ աշխատող երիտասարդ (մինչև 35 տարեկան) գիտաշխատողներին 2016 թվականի մայիսի 1-ից 12 ամիս ժամկետով տրամադրվում են ֆինանսական միջոցներ հավելավճարի տեսքով՝ յուրաքանչյուրին տրամադրելով ամսական 75000 ՀՀ դրամ:

Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի հաշվին իրականացվող գիտական և գիտատեխնիկական գործունեության ծրագրերում և թեմաներում ընդգրկված բարձր արդյունավետությամբ աշխատող գիտաշխատողներին հավելավճարի տրամադրման հայտերի ընտրության մրցույթի շահառու հանդիսացող 97 առավել բարձր արդյունավետությամբ աշխատող գիտաշխատողներին, 2016 թվականի սեպտեմբերի 1-ից, 12 ամիս ժամկետով, տրամադրվում են ֆինանսական միջոցներ հավելավճարի տեսքով՝ յուրաքանչյուրին տրամադրելով ամսական 135000 ՀՀ դրամ:

ՀՀ 2016 թվականի պետական բյուջեից *«Գիտական և գիտատեխնիկական գործունեության ենթակառուցվածքի պահպանում ու զարգացում» ծրագրի* իրականացման համար նախատեսված ֆինանսական միջոցները տրամադրվել են.

- ՀՀ Նախագահի աշխատակազմի «ՀՀ պետական կառավարման ակադեմիային»՝ 3 ծրագիր,
- ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի նախագահությանը և ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի համակարգում գործող 35 գիտական կազմակերպությունների՝ 41 ծրագիր,
- ՀՀ առողջապահության նախարարության կառավարման ոլորտում գործող 8 գիտական կազմակերպությունների՝ 8 ծրագիր,
- ՀՀ գյուղատնտեսության նախարարության կառավարման ոլորտում գործող 4 գիտական կազմակերպությունների՝ 4 ծրագիր,
- ՀՀ մշակույթի նախարարության կառավարման ոլորտում գործող 5 գիտական կազմակերպությունների՝ 5 ծրագիր,
- ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարության «Հայաստանի ազգային արխիվին»՝ 1 ծրագիր,
- ՀՀ կրթության և գիտության նախարարության կառավարման ոլորտում գործող 15 գիտական կազմակերպությունների (այդ թվում՝ բուհերին)՝ 105 ծրագիր,
- Երևանի քաղաքապետարանի «Սրտաբանության գիտահետազոտական ինստիտուտին»՝ 1 ծրագիր,
- Գիտության ոլորտում ենթակառուցվածքի, նյութատեխնիկական բազայի արդիականացման ծրագրին,
- Գիտական կենտրոնների ստեղծմանը և տեխնոլոգիական հետազոտական համալսարանի պիլոտային ծրագրին,
- Գիտական հրատարակումների և գիտության մասսայականացման աջակցության ծրագրին,
- Միջազգային գիտական կառույցներին անդամակցության ծրագրին,

- Համակարգի գիտական գործուղումների իրականացման ծրագրին,
- Երիտասարդ գիտնականների դպրոցների կազմակերպմանն աջակցության ծրագրին,
- Գիտական միջոցառումների կազմակերպմանն աջակցության ծրագրին:

ՀՀ 2016 թվականի պետական բյուջեից *«Ազգային արժեք ներկայացնող գիտական օբյեկտների պահպանում» ծրագրի* իրականացման համար նախատեսված ֆինանսական միջոցները տրամադրվել են.

- ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի 3 գիտական կազմակերպությունների,
- ՀՀ կրթության և գիտության նախարարության «Մատենադարան» Մ. Մաշտոցի անվան հին ձեռագրերի գիտահետազոտական ինստիտուտին,
- Երևանի պետական համալսարանին:

ՀՀ 2016 թվականի պետական բյուջեից *«Գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) հետազոտություններ» ծրագրի* իրականացման համար նախատեսված ֆինանսական միջոցները տրամադրվել են.

- 2015 թվականին անցկացված մրցույթի արդյունքներով ֆինանսավորման երաշխավորված հետազոտություններին՝ 169 թեմա,
- Երիտասարդ (մինչև 35 տարեկան) գիտաշխատողների հետազոտություններին՝ 37 թեմա,
- Հայաստանի երիտասարդական հիմնադրամին՝ Երիտասարդ գիտնականների աջակցության ծրագրին,
- Արցախի հետ համագործակցության ծրագրին՝ 6 թեմա,
- «ՔԵՆԴԼ» սինքրոտրոնային հետազոտությունների ինստիտուտի «AREAL» գծային արագացուցչի վրա հետազոտությունների իրականացման ծրագրին՝ 5 թեմա,
- «Ռադիոիզոտոպների արտադրության կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության «CYCLONE 18/18» ցիկլոտրոնի վրա հետազոտությունների իրականացման ծրագրին՝ 4 թեմա,
- Շիրակի մարզի գիտական կազմակերպություններում իրականացվող գիտական հետազոտություններին՝ 5 թեմա:

ՀՀ 2016 թվականի պետական բյուջեից *«Գիտական և գիտատեխնիկական գործունեության նպատակային-ծրագրային հետազոտություններ» ծրագրի* իրականացման համար նախատեսված ֆինանսական միջոցները տրամադրվել են.

- ՀՀ կառավարության աշխատակազմի «Նորավանք» գիտակրթական հիմնադրամին,
- ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի 6 գիտական կազմակերպությունների,
- ՀՀ մշակույթի նախարարության կառավարման ոլորտում գործող 2 գիտական կազմակերպությունների,

- ՀՀ կրթության և գիտության նախարարության «Մատենադարան» Մ. Մաշտոցի անվան հին ձեռագրերի գիտահետազոտական ինստիտուտին և 3 բուհերի,
- ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության Ատոմային էլեկտրակայանների շահագործման հայկական գիտահետազոտական ինստիտուտին:

Առողջապահություն

Առողջապահության ոլորտում ՀՀ կառավարության քաղաքականությունն ուղղված է համակարգի զարգացմանը և վերակազմավորմանը՝ ձգտելով մի այնպիսի համակարգի, որի կենտրոնում գտնվում է քաղաքացին՝ որպես առողջապահական ծառայությունների պոտենցիալ սպառող:

Աղքատության հաղթահարման, անհավասարության մեղմացման և սոցիալական արդարության տեսանկյունից կարևորվում է ոչ միայն մատչելիության ապահովումը, այլև իրականացվող բուժօգնության որակի բարելավումը՝ հատկապես հանրապետության գյուղական վայրերի բնակչության համար, որի նպատակով կիրառվում է որակի վերահսկման ներքին (բուժհաստատության ներսում) և արտաքին (ՀՀ առողջապահության նախարարություն, ՀՀ մարզպետարաններ, Երևանի քաղաքապետարան) մեխանիզմների ներդրումը:

Բնակչության հիգիենիկ և համաճարակային անվտանգության ապահովում: Բնակչության հիգիենիկ և համաճարակային անվտանգության ապահովումը պետական կարևորագույն խնդիրներից է և երաշխավորվում է «Հայաստանի Հանրապետության բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով: Այս համակարգի անխափան գործունեության ապահովումը կենսական նշանակություն ունի երկրի սոցիալ-տնտեսական զարգացման և բնակչության առողջության պահպանման բնագավառում:

2016 թվականին շարունակվել են ոլորտի կառավարելիության, մատուցվող ծառայությունների որակի ու արդյունավետության բարձրացմանն ուղղված միջոցառումները, գործընթացը կանոնակարգող օրենսդրական փաստաթղթերի մշակման ու գործադրման, վարակիչ և ոչ վարակիչ հիվանդությունների դեմ պայքարի և կանխարգելման համաճարակաբանական հսկողության, ռիսկի կառավարման, արագ արձագանքման, լաբորատոր գործունեության զարգացման, ռիսկի վրա հիմնված ստուգումների համակարգի ներդրման աշխատանքները: Վերահսկողություն է իրականացվում նաև դեղերի և դեղագործական գործունեության, բժշկական օգնության և սպասարկման, աշխատանքի անվտանգության նկատմամբ: 2016 թվականին Առողջապահական պետական տեսչության կողմից տեսչական բարեփոխումների և միջազգային փորձագետի

աջակցությամբ սկսվել են և ներկայումս ավարտման փուլում են գտնվում տեսչության կողմից ռիսկի վրա հիմնված ստուգումների նոր մեթոդաբանության և ռիսկայնությունը որոշող նոր չափանիշների մշակման աշխատանքները:

2016 թվականին լրամշակվել է «Հայաստանի Հանրապետության պետական սահմանի անցման կետերում պետական կառավարման մարմինների կողմից կիրառվող ընթացակարգերում «մեկ կանգառ, մեկ պատուհան» սկզբունքի ներդրմանն ուղղված ծրագիրը: Պետական սահմանի անցման կետերում Առողջապահական պետական տեսչության սահմանային բժշկասանիտարական հսկիչ կետերի կողմից 2016 թվականի ընթացքում սանիտարակարանտինային հսկողության են ենթարկվել թվով 380556 մեքենա, 232 գնացք, 5037 ինքնաթիռ, 1600803 ուղևոր: Հիվանդության կասկածով անձինք չեն հայտնաբերվել:

Կազմակերպվել է վարակիչ հիվանդությունների առումով էնդեմիկ և անապահով երկրներից ժամանած անձանց նկատմամբ բժշկական հսկողության իրականացումը:

2016 թվականին շարունակականորեն, օրական/շաբաթական կտրվածքով իրականացվել է վարակիչ հիվանդություններին, սննդային և քիմիական թունավորումներին առնչվող տվյալների մոնիթորինգ:

Բարելավվել են խմելու ջրի վարակազերծման աշխատանքները, ինչի շնորհիվ իջել է խմելու ջրում մանրէաբանական (4.4%-ով) և մնացորդային ազատ քլոր ցուցանիշներով (4.1%-ով) շեղումների տոկոսը: Հանրապետությունում արձանագրված աղիքային բռնկումներում ջրային բռնկումներ չեն գրանցվել:

2016 թվականին պահպանվել է հանրապետությունում կարմրուկի և կարմրախտի վիրուսների տեղական փոխանցման բացակայությունը, ինչպես նաև «պոլիոմիելիտից ազատ» երկրի կարգավիճակը: Բնակչության շրջանում կազմակերպվել են կանխարգելիչ պատվաստումներ:

Վերանորոգվել և նոր սարքավորումներով վերազինվել է Ազգային կենտրոնի 3 լաբորատորիա՝ Ռեֆերենս լաբորատոր կենտրոնը, Շիրակի և Տավուշի մարզային լաբորատորիաները: Ռեֆերենս լաբորատոր կենտրոնում ներդրվել են հետազոտության նորագույն մեթոդներ, ստեղծվել է միջազգային չափանիշներին համապատասխան ռեսուրս գիտաուսումնական կենտրոն: Կենտրոնը համալրվել է շարժական 2 լաբորատորիայով՝ կահավորված ՊՇՌ (Պոլիմերազային շղթայական ռեակցիա) և ELISA սարքավորումներով: Կենտրոնում ձևավորվել է թունաբանական լաբորատորիա, որը պատրաստ է իրականացնել առաջնային թունաբանական հետազոտություններ: Տրամադրվել են 6 տեսակի (թվով 18) սարք-սարքավորումներ՝ սանիտարաքիմիական լայնածավալ հետազոտությունների իրականացման նպատակով: Ձևավորվել է կենդանի կուլտուրաների

թանգարան: Շարունակական մասնագիտական զարգացման նպատակով թվով 151 մասնագետ վերապատրաստվել են:

2016 թվականին շարունակվել են Հիվանդությունների հսկողության էլեկտրոնային համալիր (ինտեգրացված) համակարգի (ՀՀԷՀՀ) ներդրման աշխատանքները՝ Ազգային կենտրոնի 148 մասնագետ մասնակցել է դասընթացի, տեղադրվել է մոտ 73 աշխատանքային կայան, իրականացվել է համակարգի փորձնական շահագործում:

2016 թվականին 50 մասնագետներ Մոսկվա քաղաքում (Ռուսաստանի Դաշնություն) մասնակցել են «Մաքսային միության տարածքի սանիտարական պաշտպանության կազմակերպման արդիական հարցեր» թեմայով 5-օրյա ուսումնական դասընթացին:

Բնակչության առողջության առաջնային պահպանում: Որպես առաջնահերթություն շարունակվել է առողջության առաջնային պահպանման ոլորտի զարգացումը՝ որպես առողջապահության համակարգի բարեփոխումների հիմք և բնակչությանը ցուցաբերվող բժշկական օգնության առավել մատչելի հիմնական օղակ:

Շարունակվել են ամբուլատոր-պոլիկլինիկական օղակի դերի բարձրացման, կանխարգելիչ ուղղվածության ուժեղացման, բնակչության համար բուժօգնության այդ մակարդակում բժշկական օգնություն ստանալու մատչելիության ապահովման ու որակի բարելավման, ԱԱՊ ծառայություններ մատուցողների կողմից որակյալ բուժօգնության տրամադրման խրախուսման և ըստ կատարողականի փոխհատուցման մեխանիզմների ներդրման աշխատանքները:

Առավել տարածված ոչ վարակիչ հիվանդությունների վաղ հայտնաբերման և կանխարգելման նպատակով 2016 թվականի ընթացքում շարունակվել է 2015 թվականի հունվարի 1-ից մեկնարկված «Հիվանդությունների կանխարգելում և վերահսկում» ծրագրի շրջանակում իրականացվող ՈՎՀ սքրինինգային ծրագիրը, որի շրջանակում 35-ից 68 տարեկան ՀՀ բոլոր քաղաքացիները հնարավորություն ունեն անվճար հետազոտվելու սպասարկող առողջության առաջնային պահպանման բժշկական հաստատություններում՝ զարկերակային գերճնշման և շաքարային դիաբետի վաղ հայտնաբերման և ախտորոշման, իսկ 30-ից 60 տարեկան բոլոր կանայք՝ արգանդի պարանոցի նախաքաղցկեղի վաղ ախտորոշման և քաղցկեղի կանխարգելման նպատակով: ՀՀ կառավարության 2016 թվականի փետրվարի 4-ի թիվ 4 արձանագրային որոշմամբ հավանության է արժանացել «Առավել տարածված ոչ վարակիչ հիվանդությունների դեմ պայքարի 2016-2020 թվականների ծրագիրը»:

2016 թվականին հանրապետությունում գործել են ընտանեկան բժշկության 6 անհատական և խմբային անկախ պրակտիկաներ, որոնք մատուցել են առողջության առաջնային պահպանման ծառայություններ պետական պատվերի շրջանակներում:

Շտապ բուժօգնության ծառայության բարելավում: Հայաստանի Հանրապետության ամբողջ տարածքում բնակչությանը ցուցաբերվող շտապ և անհետաձգելի բուժօգնության ծառայությունների մատչելիության, հասանելիության, որակի և արդյունավետության ապահովման նպատակով ՀՀ կառավարության 2016 թվականի ապրիլի 15-ի N 14 արձանագրային որոշմամբ հավանության է արժանացել «Հայաստանի Հանրապետության բնակչության շտապ բժշկական օգնության և սպասարկման 2016-2020 թվականների ռազմավարությունը», որով սահմանվել են ռազմավարական ուղղություններ և դրանց հասնելուն ուղղված գործողություններ, մասնավորապես, շտապ բժշկական օգնության և սպասարկման առավել արդյունավետ կազմակերպման սկզբունքից բխող կառուցվածքային փոփոխություններ, շտապ բժշկական օգնության բրիգադներում մասնագիտացված բրիգադների ձևավորում, ՀՀ և Երևանի շտապ բժշկական օգնության ավտոպարկի նորացում և ժամանակակից սարքավորումներով ու դեղարկղով ապահովում, շտապ օգնության ծառայության ֆինանսավորման նոր մեխանիզմների մշակում, կանչերի ընդունման և փոխանցման միասնական բազմամակարդակ համակարգչային համակարգի ներդրում, անձնակազմի վերապատրաստումների կազմակերպում, ոլորտը կարգավորող գործող իրավական ակտերի լրամշակում և ներդրում:

Կյանքին վտանգ սպառնացող իրավիճակներում շտապ բժշկական օգնության ծառայության կողմից ցուցաբերվող շտապ և անհետաձգելի բժշկական օգնության և սպասարկման կանոնակարգման նպատակով 2016 թվականին ներդրվել են շտապ բժշկական օգնության ծառայության կողմից ցուցաբերվող շտապ և անհետաձգելի բժշկական օգնություն և սպասարկում իրականացնելու վերաբերյալ թվով 15 գործելակարգերը:

Մոր և մանկան առողջության պահպանում: Մոր և մանկան առողջության պահպանման ոլորտում իրականացված աշխատանքները կազմակերպվել են ոլորտի բուժօգնության մատչելիությանը և որակի բարելավմանը, կանանց և երեխաների առողջության պահպանմանը, մայրական և մանկական մահացության ու հիվանդացության ցուցանիշների նվազմանը, երեխաների սնուցման կարգավիճակի լավացմանն ուղղված ռազմավարական և ծրագրային փաստաթղթերի շրջանակում:

Իրականացվել են մայրական/վերարտադրողական, մանկական, այդ թվում՝ նորածնային առողջության ոլորտի նորմատիվ իրավական և գերատեսչական ակտերի չափորոշիչների մշակման աշխատանքներ:

Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի միջոցառումների ծրագրին համահունչ մշակվել և ՀՀ կառավարության կողմից հաստատվել են «Վերարտադրողական առողջության բարելավման ռազմավարությունը և 2016-2020թթ. գործողությունների ծրագիրը»,

«Երեխաների և դեռահասների առողջության բարելավման ռազմավարությունը և 2016-2020 թվականների գործողությունների ծրագիրը», «Մանուկների և վաղ տարիքի երեխաների կրծքով կերակրումը խրախուսելու ազգային ծրագրով նախատեսված մանկական սնուցման, մանկական սննդի և հարակից ապրանքների մասին տեղեկատվական և ուսուցողական նյութերի համաձայնեցման և լիազորման կարգը» և մայրությանն ու մանկությանը վերաբերող այլ որոշումներ և նախագծեր:

Հաստատվել է «Առողջության առաջնային պահպանման հաստատություններում ծնողական կրթության կենտրոնների աշխատանքի կազմակերպման գործելակարգը, ծնողական կրթության դասընթացի ծրագիրը և երեխայի առողջության անձնագրի լրացման կարգը», որով կանոնակարգվել են մարզերում ստեղծված 101 «Ծնողական կրթության կենտրոնների» աշխատանքները:

Մանկական, մայրական և վերարտադրողական առողջության պահպանման ոլորտում շարունակաբար իրագործվել են «Ծննդօգնության պետական հավաստագրի» և «Երեխաների առողջության պետական հավաստագրի» ծրագրերը, ապահովվել է շուրջ 70000 հղիների նախածննդյան հսկողություն, 18000 բարձր ռիսկի խմբի հղի ստացել է ստացիոնար հետազոտություն և բուժում, իրականացվել է երեխաների հիվանդանոցային բուժման 58417 դեպք:

Շարունակվել է սոցիալապես անապահով ընտանիքների անպտղության խնդրի հաղթահարմանն ուղղված ՀՀ կառավարության 27 մայիսի 2015թ. N568 որոշման շարունակական կիրարկումը, շուրջ 90 անպտուղ զույգ հետազոտվել և բուժվել է պետական պատվերի շրջանակներում, կազմակերպվել են 35 անպտուղ ամուսնական զույգի արտամարմնային բեղմնավորման հետազոտություն և բուժօգնություն:

Շարունակաբար իրականացվել են նորածնային սկրինինգ ծրագրերը, նկարահանվել և հեռարձակվել են «Երեխաների թերսնուցումը», «Գերքաշությունը երեխաների մոտ» և «Հիվանդ երեխայի սնուցում» ֆիլմերը, ստեղծվել է «Մանկական կուրության կանխարգելման գերազանցության կենտրոն»:

Մարզային բժշկական կազմակերպություններում ցուցաբերվող բուժօգնության որակը բարձրացնելու նպատակով Երևանում տեղակայված 3-րդ մակարդակի ծննդատները շարունակել են իրականացնել կազմակերպամեթոդական և բուժական օգնություն մարզային բժշկական կենտրոններին:

Մոր և մանկան բուժօգնության որակի բարելավմանն է ուղղվել ապացուցողական բժշկության սկզբունքներով մշակված ուղեցույցների և գործելակարգերի ներդրումը:

Շարունակվել է արդյունավետ համագործակցությունը ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի, ԱՀԿ-ի, ՄԱԿ-ի բնակչության հիմնադրամի, ինչպես նաև միջազգային այլ կազմակերպությունների (ԱՄՆ ՄԶԾ, Վորլդ Վիժն Հայաստան, Փրկեք երեխաներին, Հայ օգնության ֆոնդ, Հայաստանի մանուկներ հիմնադրամ և այլն) հետ, տարվա ընթացում իրականացվել են շուրջ երկու տասնյակ ծրագրեր և ծրագրային միջոցառումներ՝ ուղղված երեխաների և մայրերի առողջության բարելավմանը, ոլորտում աշխատող բուժանձնակազմի գիտելիքների արդիականացմանը և բուժօգնության որակի և մատչելիության բարելավմանը:

Դոնոր կազմակերպությունների հետ համագործակցության շրջանակներում շարունակվել է ծննդօգնության հաստատությունների՝ նորածնային ծառայությունների սարքավորումներով հզորացման ծրագիրը. Մուրացանի բժշկական համալիրին նվիրաբերվել է նորածնային անհետաձգելի բուժօգնության 2 մեքենա: Վերապատրաստվել են 61 բուժհաստատությունների նեոնատալ ծառայություն տրամադրող շուրջ 250 մասնագետներ: Մանկական բժիշկների հայկական ասոցիացիացիայի (ՄԲՀԱ) կողմից անցկացվել են մի շարք կոնֆերանսներ, սիմպոզիումներ և սեմինարներ, այդ թվում՝ Մանկական բժիշկների 5-րդ ազգային գիտաժողովը (միջազգային մասնակցությամբ): Մարզերում կազմակերպվել են թեմատիկ միջոցառումներ, վարպետության դասընթացներ և արտագնա սեմինարներ:

<u>Բնակչության սոցիալապես անապահով և առանձին (հատուկ) խմբերում ընդգրկված անձանց բժշկական օգնության տրամադրում:</u> Որպես առաջնահերթություն 2016 թվականին շարունակվել է բնակչության սոցիալապես անապահով և առանձին (հատուկ) խմբերում ընդգրկված անձանց բժշկական օգնության և սպասարկման առավելագույնս ապահովումը առողջապահական համակարգի բոլոր օղակներում, մասնավորապես՝

- Հիվանդանոցային բուժօգնության գծով՝ բժշկական օգնության ապահովումը հիվանդանոցային պայմաններում՝ Հայաստանի Հանրապետության առողջապահության համակարգի բժշկական համալիրներում, հիվանդանոցային բուժկազմակերպություններում, նեղ մասնագիտացված դիսպանսերների հիվանդանոցային բաժիններում՝ անկախ ախտորոշումից և տարիքից.
- Սոցիալապես անապահով և հատուկ խմբերում ընդգրկված անձանց հիվանդանոցային բուժման մեջ նորագույն, բարդ և թանկարժեք միջամտություններ, միջոցներ և ինպլանտներ պահանջող բուժման կիրառում.
- Հատուկ և դժվարամատչելի ախտորոշիչ հետազոտությունների գծով՝ ամբուլատոր-պոլիկլինիկական և/կամ հիվանդանոցային պայմաններում բուժվող հիվանդների համար հատուկ և

դժվարամատչելի ախտորոշիչ հետազոտությունների իրականացման ապահովումը՝ բժշկական հիմնավորված ցուցումների առկայության դեպքում:

Սոցիալական, հատուկ նշանակություն ունեցող և առավել տարածված ոչ վարակիչ հիվանդությունների կանխարգելում, վաղ հայտնաբերում ու բուժօգնության կազմակերպում: 2016 թվականին շարունակվել է սոցիալական կախվածություն և հատուկ նշանակություն ունեցող հիվանդությունների վաղ հայտնաբերումը, հիվանդների բուժօգնության կազմակերպումը և շարունակական հսկողությունը, բնակչության շրջանում առողջ ապրելակերպի և հիգիենայի վերաբերյալ գիտելիքների քարոզումը, մասնավորապես՝

- Նեղ մասնագետների կողմից բնակչության շրջանում առողջ ապրելակերպի քարոզչության իրականացումը՝ ուղղված սոցիալական կախվածություն և հատուկ նշանակություն ունեցող հիվանդությունների, վնասվածքների, թունավորումների և անհետաձգելի վիճակների կանխարգելմանը.
- Ինֆեկցիոն հիվանդների հայտնաբերման, բժշկական օգնության ու շարունակական հսկողության, հիվանդանոցների հետ կապի պահպանման ապահովումը, անհրաժեշտության դեպքում՝ հիվանդների հոսպիտալացման հետ կապված խնդիրների լուծումը ամբողջ բնակչության համար.
- Սիրտանոթային համակարգի հիվանդությունների դեմ պայքարի ուղղությամբ՝ սրտաբանական մասնագիտացված կաբինետների միջոցով սիրտանոթային համակարգի հիվանդություններով տառապող հիվանդների հայտնաբերման, բժշկական օգնության ու շարունակական հսկողության ապահովումը.
- Չարորակ նորագոյացությունների դեմ պայքարի ուղղությամբ՝ ուռուցքաբանական դիսպանսերներում և նեղ մասնագիտական կաբինետներում չարորակ նորագոյացություններով տառապող անձանց հայտնաբերման, հաշվառման, բժշկական օգնության ու շարունակական հսկողության ապահովումը.
- Դիաբետով հիվանդների բժշկական օգնության ապահովման ուղղությամբ՝ էնդոկրինոլոգիական դիսպանսերների և մասնագիտացված կաբինետների միջոցով դիաբետով հիվանդների վաղ հայտնաբերման, բժշկական օգնության ու շարունակական հսկողության, հիվանդանոցների հետ կապի պահպանման ապահովումը:

Դեղագործական գործունեության կազմակերպում, դեղերով եվ տեխնոլոգիաներով ապահովում: Բնակչությանը պատշաճ որակի բժշկական օգնության և սպասարկման ծառայություն մատուցելու գործում կարևոր նշանակություն ունի ՀՀ-ում անվտանգ, արդյունավետ և որակյալ դեղերի առկայությունը և դրանց մատչելիությունը՝ համապատասխան տեսականիով (ՀՀ հիմնական

դեղերի ցանկ): 2016 թվականին կարևորվել է ՀՀ հիմնական դեղերի ցանկում առկա, բայց ՀՀ-ում չգրանցված և ցածր պահանջարկ ունեցող, սակայն կենսականորեն անհրաժեշտ դեղերի՝ ՀՀ-ում առկայության ապահովման նպատակով դրանց պետական գրանցումը:

Իրավական դաշտի կատարելագործման, բնակչությանը անվտանգ, արդյունավետ և որակյալ դեղերով ապահովման նպատակով 15.12.2016թ. ուժի մեջ է մտել «Դեղերի մասին» ՀՀ նոր օրենքը, և «Դեղերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի կիրարկումն ապահովող միջոցառումների ցանկը հաստատելու մասին» ՀՀ վարչապետի թիվ 736-Ա որոշումը:

ՀՀ օրենսդրությամբ սահմանված է, որ որոշ հիվանդությունների և սոցիալական խմբերի դեպքում բնակիչներին իրավունք է տրվում դեղեր ձեռք բերել անվճար կամ արտոնյալ պայմաններով: Դեղապահովման աղբյուրներ են հանդիսանում ՀՀ պետական բյուջեի և մարդասիրական օգնության ճանապարհով ստացված դեղերը: 2016 թվականին կարևորվել է կենտրոնացված կարգով ձեռքբերվող դեղերի անվանացանկի համալրումը նորագույն բուժման սխեմաների համար անհրաժեշտ դեղերով, պարբերաբար իրականացնվել են դեղագործական շուկայում դեղերի գների ուսումնասիրություններ, վերահսկվում են բժշկական հաստատությունների կողմից բնակչությանն անվճար կամ արտոնյալ պայմաններով տրվող դեղերի գները:

Շարունակվել են դեղերի պատշաճ արտադրական գործունեության (ՊԱԳ) ներդրման և տեղական արտադրողների ՊԱԳ համապատասխանության գնահատման աշխատանքները: ՊԱԳ ստանդարտների ներդրման շարունակականության ապահովումն ընդգրկված է ՀՀ կառավարության ծրագրում և վերսկսվել է «Դեղագործական տեսչությունների համագործակցության սխեմա (PIC/S)» միջազգային կազմակերպությանն անդամակցելու գործընթացը: 1995 թվականից սկսած՝ կազմակերպությանն անդամակցում է արդեն 49 երկիր: Այդ երկրների տարածքում արտադրված դեղերի մասնաբաժինը ՀՀ դեղերի շուկայում կազմում է ավելի քան 53%: Այդ հարթակում երկրների դեղերի արտադրության, ինչպես նաև դրանց գնահատման ընթացակարգերի ներդաշնակեցման շնորհիվ հաստատվել է համակարգերի գործունեության փոխճանաչումը: Հայաստանի Հանրապետության անդամակցությունը ԴՏՀԱ-ին հատկապես կարևոր նշանակություն ունի՝ առկա ռեսուրսներն արդյունավետ օգտագործելու և տեղական արտադրողների կողմից ՊԱԳ համապատասխանության գնահատմանն ուղղված միջոցները կրճատելու տեսանկյունից, քանի որ Հայաստանի Հանրապետությունում դեղարտադրողների դիտարկումները, որոնք իրականացվում են այլ երկրների իրավասու կառույցների կողմից՝ իրենց երկրում հայկական դեղը գրանցելու ժամանակ, նշանակալի խոչընդոտ են ստեղծում ազատ արտահանմանը և մեծացնում դրա ինքնարժեքը դիտարկումների կազմակերպման համար՝ անհրաժեշտ բարձր ծախսերի հետևանքով:2016 թվականին պետության կարիքների համար կենտրոնացված կարգով ձեռք են բերվել թվով 40

անվանում դեղ, որոնց կեսից ավելին ձեռք է բերվել անմիջապես դեղարտադրող միջազգային դեղագործական կազմակերպություններից, իսկ մոտ 5 տոկոսը՝ տեղական դեղարտադրողներից:

ՀՀ հիմնական դեղերի ցանկում առկա, բայց ՀՀ-ում չգրանցված և ցածր պահանջարկ ունեցող, սակայն կենսականորեն անհրաժեշտ դեղերի՝ ՀՀ-ում առկայության ապահովման նպատակով 2016 թվականի ընթացքում ՀՀ-ում պետական գրանցում են ստացել հակատուբերկուլյոզային թվով 8 դեղեր, որոնք ներառվել են ՀՀ ԱՆ-ի կողմից կենտրոնացված կարգով գնվող դեղերի ցանկում և անվճար հատկացվել են համապատասխան հիվանդներին:

Սոցիալական պաշտպանության ոլորտ

2016 թվականը սոցիալական պաշտպանության ոլորտի համար բարդ, մեծածավալ աշխատանքներով ու ձեռքբերումներով հագեցած ժամանակահատված էր: Շարունակվեցին արդեն բնականոն դարձած նոր համակարգերի ձևավորման, սոցիալական ծառայությունների մատուցման նոր մոտեցումների ներդրման քայլերը: Բոլոր բնագավառներում արձանագրվեցին դրական տեղաշարժեր նախորդ տարիներին սկսված բարեփոխումների ուղղությամբ:

Չնայած շարունակվող համաշխարհային աննպաստ զարգացումներին՝ այնուամենայնիվ հնարավոր եղավ որոշակի չափով նվազեցնել աղքատության մակարդակը, ինչում իրենց դերն ունեցան նաև սոցիալական պաշտպանության ծրագրերը:

2016 թվականին արձանագրվեցին նաև մտահոգիչ երևույթներ, որոնք կոռուպցիոն ռիսկեր պարունակող ոլորտներում այդ ռիսկերը նվազեցնելուն և կոռուպցիոն դրսևորումները հաղթահարելուն ուղղված հայեցակարգային մոտեցումների ու ծրագրերի վերանայման խնդիր դրեցին:

Աշխատանք և զբաղվածություն

2016 թվականին շարունակվել են աշխատանքի և զբաղվածության ոլորտում իրականացվող օրենսդրական բարեփոխումները:

Իրավակիրառական պրակտիկայի արդյունքներով վեր հանված խնդիրների լուծումների ապահովման, զբաղվածության պետական ծրագրերի ծախսարդյունավետության բարձրացման, որոշակի գործառույթներ մասնավոր հատվածին պատվիրակելու, ինչպես նաև աշխատաշուկայում անմրցունակ և մասնագիտություն չունեցող երիտասարդ մայրերի՝ աշխատաշուկա մուտք գործելու հնարավորությունների մեծացման նպատակով մշակվել և 2017 թվականին ընդունվել են ծրագրերի կարգերը սահմանող՝ ՀՀ կառավարության 2014թ. ապրիլի 17-ի N 534-Ն որոշման փոփոխությունները:

Որոշակի կարգավորումներ են տրվել օտարերկրացիների՝ ՀՀ-ում աշխատելու հետ կապված խնդիրներին:

շրջանառությունից հանվել էՏրվել են աշխատանքային գրքույկներում պարունակվող տեղեկատվությունը պետական կենսաթոշակային համակարգի տվյալների շտեմարան մուտքագրելու հետ կապված կարգավորումները:

Կամավորի ինստիտուտի ձևավորման լիարժեք իրավական հիմքերի ապահովման նպատակով մշակվել է «Կամավորական գործունեության և կամավոր աշխատանքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի հայեցակարգի նախագիծը:

Համապատասխան որոշման նախագծով առավել հստակեցվել են առանձնահատուկ բնույթ ունեցող բնագավառների աշխատողների աշխատանքի և հանգստի ռեժիմի առանձնահատկությունները:

Գերփոքր ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվող գործատուների համար աշխատանքային հարաբերությունների կարգավորման որոշակի խթաններ և առանձնահատկություններ նախատեսելու նպատակով մշակվել է «Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը:

Գործող Հանրապետական եռակողմ հանձնաժողովի շրջանակներում ապահովվել է համագործակցությունը սոցիալական գործընկերների՝ Հայաստանի գործատուների հանրապետական միության և Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիայի հետ:

Սոցիալական փաթեթից օգտվելու իրավակարգավորումներում կատարվել են փոփոխություններ, հստակեցվել են առանձին դրույթներ:

Մշակվել և սահմանված կարգով շրջանառության մեջ են դրվել «Պետական պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» և «Դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծերը, որոնց նպատակն է «Պետական պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» ՀՀ օրենքի որոշ դրույթների հստակեցումը, օրենքում ամբողջական լուծում չգտած հարցերի կարգավորումը, ինչպես նաև «Պետական պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» ՀՀ օրենքի և «Դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայության մասին» ՀՀ օրենքի միջև առկա հակասության վերացումը:

2016 թվականի ընթացքում գործել է զբաղվածության պետական կարգավորման 13 ակտիվ ծրագիր:

2016 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ զբաղվածության պետական գործակալության տարածքային կենտրոններում հաշվառվել է աշխատանք փնտրող 95.8 հազար անձ, որոնց թիվը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ աճել է 7.8%-ով: Գործազուրկի կարգավիճակ ստացած անձանց թիվը կազմում է 80.5 հազար, որը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ աճել է 4.5%-ով: Կանանց տեսակարար կշիռը գործազուրկների ընդհանուր թվում կազմում է 66.0% (53.1 հազար կին): Գործազուրկների 3.6%-ը (2.9 հազար անձ) հաշմանդամություն ունեցող անձինք են, իսկ 23.7%-ը (19.1 հազար անձ)՝ 16-29 տարեկան երիտասարդներ:

Աշխատաշուկայում անմրցունակ անձի կարգավիճակ ստացած գործազուրկների թիվը կազմում է 73.4 հազար: 2016 թվականին տարածքային կենտրոնները հավաքագրել են 7884 թափուր աշխատատեղ, որոնցից 286-ը նոր ստեղծվող են: Թափուր աշխատատեղի հայտ ներկայացրած գործատուների թիվը 2778 է: 2016 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ տարածքային կենտրոններում առկա թափուր աշխատատեղերի թիվը կազմում է 1325:

2016 թվականին զբաղվածության պետական ծրագրերում փաստացի ընդգրկվել է 13006 անձ: Դիտարկվող ժամանակահատվածում տարածքային կենտրոնների միջնորդությամբ զբաղված է դարձել աշխատանք փնտրող 17470 անձ, որոնցից 7640-ն ապահովվել է սեզոնային աշխատանքով, 287-ը՝ ժամանակավոր աշխատանքով: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ տարածքային կենտրոնների միջնորդությամբ զբաղված դարձած անձանց թիվն աճել է 10.7%-ով:

«Մասնագիտական կողմնորոշման մեթոդական կենտրոն» ՊՈԱԿ-ը 2016 թվականին միջոցառումներ է իրականացրել երեք հիմնական ուղղությամբ՝ մեթոդաբանական ձեռնարկների մշակում, կադրերի վերապատրաստում և իրազեկում: 2016 թվականին վերապատրաստվել է մասնագիտական կողմնորոշման համակարգի 300 մասնագետ: Սեմինար-քննարկումների միջոցով իրականացվել են իրազեկման աշխատանքներ, որոնց մասնակցել է 300 անձ:

Սոցիալական աջակցություն

Պետական նպաստներ: 2016 թվականին պետական նպաստների բնագավառում կատարված փոփոխությունները նպաստել են ծրագրերի հասցեականության բարձրացմանն ու շահառուների սոցիալական վիճակի բարելավմանը:

Շարունակվել են պետական նպաստների, այդ թվում՝ ընտանիքների անապահովության գնահատման համակարգում առցանց եղանակով ստացվող տվյալների շրջանակի ընդլայնման

աշխատանքները: Նշվածն արտացոլվել է այդ համակարգում հաշվառված և ընտանեկան կամ սոցիալական նպաստի իրավունք ձեռք բերած ընտանիքների, ինչպես նաև նպաստի իրավունք ձեռք բերած ընտանիքների թվում երեխա ունեցող ընտանիքների թվի հարաբերակցություններում:

Այսպես, եթե 2011 թվականի դեկտեմբերին ընտանեկան նպաստ էր ստանում շուրջ 84 հազար ընտանիք, ապա 2016 թվականի դեկտեմբեր ամսվա ընթացքում նպաստառու (ընտանեկան կամ սոցիալական նպաստ ստացող) ընտանիքների թիվը կազմել է 106296:

2016 թվականին ընտանիքների անապահովության գնահատման համակարգում հաշվառված շուրջ 131000 ընտանիքից ընտանեկան կամ սոցիալական նպաստ ստացել է ամսական միջին հաշվով 106296-ը՝ հաշվառված ընտանիքների շուրջ 70.8%-ը, իսկ եռամսյակային հրատապ օգնություն՝ միջին հաշվով 5412 ընտանիք կամ հաշվառվածների 4.1%-ը, նպաստի միջին չափը կազմել է 30350 դրամ, իսկ 2016 թվականի օգոստոս ամսից՝ 31350 դրամ: Ընտանեկան նպաստի իրավունք ունեցող ընտանիքներին միանվագ դրամական օգնություն է տրվել երեխայի ծննդյան կապակցությամբ՝ 5162 ընտանիքի, երեխայի առաջին դասարան ընդունվելու կապակցությամբ՝ 11388 ընտանիքի, ընտանիքի անդամի մահվան դեպքում՝ 151 ընտանիքի:

2016 թվականի նոյեմբերի 3-ին ՀՀ կառավարությունն ընդունել է N 1122-Ն որոշումը, որի համաձայն բնական գազի և էլեկտրաէներգիայի սպառման համար մեղմացված սակագնով պետք է վճարեն սոցիալապես անապահով այն ընտանիքները, որոնք հաշվառված են ընտանիքների անապահովության գնահատման համակարգում և ունեն 20.00 միավորից բարձր անապահովության միավոր:

Ընտանիքի սոցիալական վիճակի բարելավման նպատակով խնդիր է դրվել բնական գազի և էլեկտրաէներգիայի սակագնային քաղաքականության մեջ սոցիալական աստիճանականությունն ապահովող մոտեցումների ներդրումը, որի իրականացման նպատակով, հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2016թ. նոյեմբերի 25-ի N 333-Ն որոշմամբ, հաստատվել է, որ սոցիալապես անապահով ընտանիքները գազի սպառման դիմաց պետք է վճարեն նվազ սակագնով՝ 100 դրամ (յուրաքանչյուր խորանարդ մետրի համար՝ մինչև 600 խմ ծախսի դիմաց): Որոշումն ուժի մեջ է մտել 2017 թվականի հունվարի 1-ին, և ծրագրից օգտվելու է սոցիալապես անապահով շուրջ 80 հազար ընտանիք: Իսկ էլեկտրաէներգիայի սպառման դիմաց մեղմացված սակագնով վճարման արտոնությունից կօգտվի շուրջ 131 հազար ընտանիք:

Անապահովության գնահատման մոտեցումների ու մեթոդաբանության՝ հիմք ընդունելով ընտանիքի յուրաքանչյուր աշխատունակ անդամի զբաղվածության ապահովման և պետական սոցիալական աջակցության ծրագրերը, հատկապես բնակչության անաշխատունակ շերտերին (երեխաներին, միայնակ տարեցներին, բազմազավակ ընտանիքներին և այլ խմբերին) ուղղելու

սկզբունքային մոտեցման վերանայման նպատակով մշակվել են ընտանիքների անապահովության գնահատման նոր մոտեցումներ և մեթոդաբանության վերանայման առաջարկություններ, որոնցով գնահատվում է տնտեսապես ակտիվ անձի վարքագիծն աշխատանքի շուկայում՝ նախապատվությունը տալով առավել ակտիվ գործունեություն ծավալողներին: Այս մոտեցումը հնարավորինս հակազդելու է նպաստառու ընտանիքների սոցիալական խնամառությանը՝ հնարավորինս խթանելով նրանց աշխատելու ցանկությունը:

Նախկին ԽՍՀՄ խնայբանկի ՀԽՍՀ հանրապետական բանկում մինչև 1993 թվականի հունիսի 10-ը ներդրված դրամական ավանդների փոխհատուցում: 2014 թվականի ապրիլի 23-ի ՀՀ կառավարության N 460-Ն որոշման համաձայն՝ նախկին ԽՍՀՄ խնայբանկի ՀԽՍՀ հանրապետական բանկում մինչև 1993 թվականի հունիսի 10-ը ներդրված դրամական ավանդների դիմաց փոխհատուցման իրավունք է տրվել մինչև 1931 թվականի դեկտեմբերի 31-ը ներառյալ ծնված անձանց (վճարվել է 3472 ավանդատուի), ՀՀ պաշտպանության մարտական գործողությունների մասնակից անձանց (վճարվել է 396 ավանդատուի), մարտական գործողությունների հետևանքով չօգտագործվող հողատարածքներ և հակառակորդի կողմից հողատարածքների գնդակոծման դեպքեր ունեցող՝ Հայաստանի Հանրապետության սահմանամերձ համայնքներում բնակչության պետական ռեգիստրում 2014 թվականի օգոստոսի 1-ի դրությամբ հաշվառված անձանց (վճարվել է 4331 ավանդատուի):

Սոցիալական բնակարաններ: 2016 թվականին բնակելի տարածություն ստանալու իրավունք ունեցող՝ սոցիալապես անապահով և հատուկ խմբերին դասված անձանց կացարանների տրամադրման գործընթացը շարունակվել է ՀՀ կառավարության 2015թ. սեպտեմբերի 10-ի N 1069-Ն որոշման պահանջներին համապատասխան: Տարվա ընթացքում կացարաններ են տրամադրվել սոցիալապես անապահով և հատուկ խմբերին դասված 8 անձի:

Ինտեգրված սոցիալական ծառայություններ: 2016 թվականին շարունակվել են մեկ պատուհանի սկզբունքով գործող 19 համալիր սոցիալական ծառայությունների տարածքային կենտրոնների (այսուհետ՝ ՀՍԾՏԿ) աշխատանքները:

Նոր կենտրոնների գործարկման նպատակով բավարար աշխատանքային պայմաններ ապահովելու համար մշակվել և հաստատվել են 4 ՀՍԾՏԿ-ների շինվերանորոգման էսքիզային նախագծերը, 11 ՀՍԾՏԿ-ների կառուցման կամ հիմնանորոգման նախագծանախահաշվային փաստաթղթերը և 3 ՀՍԾՏԿ-ների դիզայներական նախագծանախահաշվային փաստաթղթերը:

2016 թվականին սկսվել են Վանաձորի, Ստեփանավանի, Ամասիայի, Թալինի, Մալաթիա-Սեբաստիայի ՀՍԾՏԿ-ների շինվերանորոգման աշխատանքները, իսկ Շենգավիթի և Հրազդանի

ՀՍԾՏԿ-ների շինվերանորոգման աշխատանքներն սկսելու նպատակով սահմանված կարգով տրվել են մրցույթների հայտարարություններ:

Նոր ձևավորվող ՀՍԾՏԿ-ների գույքի և տեխնիկական վերազինման նպատակով կատարվել է կարիքների ուսումնասիրություն, և ընթացքի մեջ է դրանց ձեռք բերման մրցույթների հայտարարման գործընթացը:

2016 թվականի մայիսից մեկնարկել է միջազգային և տեղական հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների հետ ազգային մակարդակում սոցիալական համագործակցության համաձայնագրի կնքման գործընթացը, որը ենթադրում է սոցիալական կարիքների բացահայտման, ռիսկերի կանխարգելման, դեպքի վարման արդյունավետության բարձրացման, սոցիալական աջակցության տրամադրման հասցեականության բարձրացման նպատակով սոցիալական ոլորտի տեղեկատվության փոխանակման և գործողությունների իրականացման միասնական ցանցի ձևավորում: Մեկնարկել է նաև տարածքային մակարդակում սոցիալական համագործակցության համաձայնագրերի կնքման գործընթացը:

Համաձայնագրերին միանալու գործընթացը բաց է համագործակցության պատրաստ բոլոր ֆիզիկական և իրավաբանական անձանց, ինչպես նաև պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների համար:

Ինտեգրված սոցիալական ծառայությունների համակարգի ներդրման գործում կարևորելով սոցիալական աշխատողների գիտելիքների և հմտությունների բավարար մակարդակը՝ իրականացվել են «Սոցիալական աշխատանք» մասնագիտացման կամ որակավորման բարձրացման, ինչպես նաև աշխատողների կողմից կիրառվող համակարգչային հատուկ դասընթացներ՝ սոցիալական պաշտպանության ոլորտում քաղաքացիական ծառայության կամ համայնքային ծառայության պաշտոն զբաղեցնող աշխատողների համար: Արդյունքում՝ սոցիալական ծառայություններ տրամադրելու գործընթացում աշխատողների կողմից կիրառվող համակարգչային ծրագրերի ուսուցում է անցել սոցիալական աջակցության տարածքային գործակալությունների (բաժինների) շուրջ 500 աշխատող: Իսկ «Սոցիալական աշխատանք» մասնագիտության հատուկ ուսուցման դասընթացներին մասնակցել և համապատասխան վկայականներ է ստացել շուրջ 430 աշխատող:

Շարունակվում են ինտեգրված սոցիալական ծառայություններ տրամադրելու համար անհրաժեշտ մեթոդաբանությունն ամբողջականացնելուն ուղղված աշխատանքները:

<u>Հաշմանդամների և տարեցների հիմնահարցեր:</u> Հաշմանդամության բնագավառում վարվող քաղաքականությունն ու պետական նպատակային ծրագրերն ուղղված են հաշմանդամություն

ունեցող անձանց իրավունքների պաշտպանությանը, նրանց համար հավասար հնարավորությունների և մատչելի պայմանների ապահովմանը:

2016 թվականի շարունակվել են հաշմանդամության բնագավառի օրենսդրությունը «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» ՄԱԿ-ի կոնվենցիայի դրույթներին համապատասխանեցնելու աշխատանքները:

Լրամշակվել է «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանության և սոցիալական ներառման մասին» ՀՀ օրենքի նախագիծը, որը 2016 թվականի դեկտեմբերի 16-ին ՀՀ Ազգային ժողովում ընդունվել է առաջին ընթերցմամբ:

Ոլորտում առաջիկա տարիներին սոցիալական ներառման միասնական, համակարգված քաղաքականություն իրականացնելու նպատակով հաստատվել են հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական ներառման 2017-2021թթ. համալիր ծրագիրը և ծրագրի իրականացումն ապահովող միջոցառումների ցանկը:

Շարունակվել են անձի բազմակողմանի գնահատման՝ Առողջապահության համաշխարհային կազմակերպության ֆունկցիաների միջազգային դասակարգման սկզբունքների վրա հիմնված հաշմանդամության սահմանման նոր մոդելի ներդրման աշխատանքները: Նախատեսվում է բժշկասոցիալական փորձաքննության համար առաջնակի դիմողների փորձաքննությունը 2017 թվականի ապրիլի 1-ից իրականացնել նոր մոդելով: Մշակված չափորոշիչներն ու գործիքները թույլ կտան գնահատել անձին հնարավորինս օբյեկտիվ, ինչպես նաև անձի կարիքների բազմակողմանի գնահատման հիման վրա մատուցել հասցեական և նպատակային ծառայություններ: 2016 թվականի հոկտեմբերի 20-21-ին կազմակերպվել է «Աշխարհն առանց արգելքների» խորագրով միջազգային գիտաժողով, որի ժամանակ ներկայացվել է Առողջապահության համաշխարհային կազմակերպության կողմից ստեղծված Ֆունկցիաների, հաշմանդամության և առողջության միջազգային դասակարգման (ԱՀԿ ՖՄԴ կամ Ֆունկցիաների միջազգային դասակարգում) ներդրման միջազգային փորձը, ինչը նույնպես նպաստել է մոդելի ներդրման համար անհրաժեշտ եզրահանգումներ կատարելուն և առաջարկություններ ներկայացնելուն:

Շարունակվել է հաշմանդամություն ունեցող անձանց մատուցվող սոցիալ-վերականգնողական ծառայությունների պատվիրակումը հասարակական կազմակերպություններին: Ի լրումն գործող ծրագրերի՝ աուտիզմ ունեցող դեռահասներին ու երիտասարդներին զբաղվածության և սոցիալ-հոգեբանական ծառայություններ տրամադրելու նպատակով ծառայություն է պատվիրակվել նաև «Իմ ուղին» սոցիալ-վերականգնողական ցերեկային կենտրոնին:

2016 թվականին իրականացված պետական նպատակային ծրագրերի շրջանակներում հաշմանդամներին անվճար տրամադրվել են պրոթեզաօրթոպեդիկ պարագաներ, ձայնաստեղծ

սարքեր, աչքի պրոթեզներ, սայլակներ, լսողական սարքեր և այլ վերականգնողական պարագաներ: Հետևողական աշխատանքներ են տարվել ինչպես պարագաների տեխնիկական բնութագրերի հստակեցման, այնպես էլ դրանց գների վերահսկման նկատմամբ:

2016 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ հաշմանդամների հաշվառման հանրապետական շտեմարանում հաշվառված հաշմանդամություն ունեցող անձանց թիվը կազմել է 205166, որից 8177-ը՝ հաշմանդամ երեխա: 2016 թվականի ընթացքում առաջին անգամ փորձաքննվել է 18045 անձ (նախորդ տարվա համեմատ աճել է 450-ով), վերափորձաքննվել է 53532 անձ (նախորդ տարվա համեմատ նվազել է 2053-ով):

2016 թվականին շարունակվել են տարեցների սոցիալական պաշտպանության բարելավման աշխատանքները: Տարեվերջին շուրջօրյա խնամքի հաստատություններում խնամվել է 1210, տնային պայմաններում՝ սպասարկվել 1500 տարեց և հաշմանդամություն ունեցող անձ:

Աշխատանքներ են իրականացվել նաև տարեցների խնամքի այլընտրանքային ծառայությունների ստեղծման ուղղությամբ, մասնավորապես՝ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության և Բաց հասարակության հիմնադրամներ-Հայաստան կազմակերպության համագործակցության շնորհիվ 2016 թվականի հունիս ամսին Սպիտակում բացվել է Հայաստանում իր նախադեպը չունեցող՝ հոգեկան առողջության խնդիրներ ունեցող 16 անձի համար նախատեսված ընտանեկան տիպի համայնքային խնամքի տունը:

2016 թվականին մշակվել է խնամքի կարիք ունեցող 18 տարին լրացած անձանց (տարեց և (կամ) հաշմանդամություն ունեցող) առողջության վիճակի, ինքնասպասարկման ունակությունների, սոցիալական հմտությունների և կարողությունների գնահատման մեթոդաբանություն, սահմանվել են յուրաքանչյուր խմբի նկարագիրն ու տվյալ խմբին մատուցվող ծառայությունները:

Պետական աջակցություն է ցուցաբերվում «Առաքելություն Հայաստան» ԲՀԿ-ին, «Վանաձորի տարեցների տուն» հիմնադրամին և «Հանս Քրիստիան Կոֆոեդ» ԲՀ-ին:

2016 թվականի սեպտեմբերի 27-28-ը կազմակերպվել է «Ստեղծենք հասարակություն բոլոր տարիքի մարդկանց համար» կարգախոսով՝ ծերացման հիմնահարցերին նվիրված միջազգային գիտաժողով:

Ընտանիքի, կանանց և երեխաների հիմնահարցեր: 2016 թվականի ընթացքում շարունակվել է «Հայաստանի Հանրապետությունում երեխայի իրավունքների պաշտպանության 2013-2016թթ. ռազմավարական ծրագրով» նախատեսված միջոցառումների իրականացումը՝ ուղղված կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաների կյանքի որակի բարելավմանը և սոցիալական պաշտպանության երաշխիքների ապահովմանը, նրանց մատուցվող այլընտրանքային ծառայությունների ցանցի զարգացմանը, երեխաների խնամքի և պաշտպանության

հաստատություններում մատուցվող ծառայությունների որակի բարելավմանը: Այդ նպատակով մշակվել են մի շարք օրենսդրական նախագծեր: Մասնավորապես, 2016թ. մայիսի 12-ի N18 արձանագրային որոշմամբ ՀՀ կառավարությունը հավանության է արժանացրել «Հայաստանի Հանրապետությունում կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաների խնամքի այլընտրանքային ծառայությունների համակարգի զարգացման հայեցակարգը», որով սահմանվել են կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաների խնամքի այլընտրանքային ծառայությունների համակարգի զարգացման հիմնական սկզբունքները և ուղղությունները: ՀՀ կառավարության 2016թ. օգոստոսի 11-ի N 831-Ն որոշմամբ «Երևանի երեխաների խնամքի և պաշտպանության թիվ 2 գիշերօթիկ հաստատություն» ՊՈԱԿ-ը վերակազմակերպվել է «Երեխայի և ընտանիքի աջակցության կենտրոն» ՊՈԱԿ-ի, որի արդյունքում փոխվել են այդ կազմակերպության հիմնական նպատակը և գործունեության առարկան:

Քայլեր են ձեռնարկվել խնամատար ընտանիքների ներդրման գործընթացի արդյունավետությունը բարձրացնելու ուղղությամբ. ընդունվել է «Կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաներին խնամատարության հանձնելու ընթացակարգի բարեփոխման հայեցակարգը»:

Ոլորտի կարևոր ձեռքբերում է նաև ՀՀ կառավարության 2016թ. հոկտեմբերի 27-ի N 1112-Ն որոշմամբ նախատեսված՝ պետության կողմից երաշխավորված պետական մարմինների ենթակայության ներքո գտնվող սոցիալական ծառայություններ տրամադրող կազմակերպությունների կողմից անվճար տրամադրվող սոցիալական ծառայությունների և սոցիալական աջակցության վճարովի ծառայությունների տրամադրման հնարավորությունը, համաձայն որի ՊՈԱԿ-ները կիրականացնեն օրենքով սահմանված ձեռնարկատիրական գործունեություն:

Երեխաների շուրջօրյա խնամք իրականացնող բնակչության սոցիալական պաշտպանության ընդհանուր տիպի և հատուկ (մասնագիտացված) վեց հաստատությունում (մանկատներում) խնամվել է առանց ծնողական խնամքի մնացած շուրջ 650 երեխա, այդ թվում՝ շուրջ 460 երեխա խնամվել է երեք հատուկ (մասնագիտացված) հաստատությունում: Թեև երեխաների շուրջօրյա խնամք իրականացնող բնակչության սոցիալական պաշտպանության ընդհանուր տիպի հաստատություններում շարունակում է նվազել խնամվող երեխաների թիվը, այդուհանդերձ սոցիալ-տնտեսական ծանր պայմաններով պայմանավորված՝ ավելացել է առողջական խնդիրներ ունեցող երեխաների թիվը հատուկ (մասնագիտացված) հաստատություններում:

Երեխաների խնամքի յոթ գիշերօթիկ հաստատությունում մինչև 2016 թվականի հուլիս ամիսը խնամվել է սոցիալապես անապահով, ընտանիքների անապահովության գնահատման համակարգում հաշվառված ընտանիքների դպրոցահասակ շուրջ 620 երեխա, որոնց խնամքը

տարանջատվում է կրթությունից: Բարեփոխումներով պայմանավորված՝ 2016թ. օգոստոսի 11-ի N 831-Ն որոշմամբ Երևանի երեխաների խնամքի և պաշտպանության թիվ 2 գիշերօթիկ հաստատությունը վերակազմակերպվել է Երեխայի և ընտանիքի աջակցության կենտրոնի, որտեղ ցերեկային խնամք է ստանում կյանքի դժվարին իրավիճակում հայտնված 150 երեխա: Ներկայում վեց հաստատությունում շուրջօրյա խնամք է ստանում շուրջ 540 երեխա:

Երեխաների սոցիալական հոգածության ցերեկային 3 կենտրոնները ծառայություններ են տրամադրել կյանքի դժվարին իրավիճակում հայտնված, 6-18 տարեկան շուրջ 270 երեխայի և նրանց ընտանիքներին: «Հույսի կամուրջ» հասարակական կազմակերպության՝ երեխաների 4 ցերեկային կենտրոնում (Դիլիջան, Իջևան, Նոյեմբերյան, Բերդ) ծառայություններ են մատուցվել դժվար իրավիճակում հայտնված առնվազն 250 երեխայի:

«Երևանի երեխաների «Զատիկ» սոցիալական աջակցության կենտրոն» ՊՈԱԿ-ը կյանքի դժվարին իրավիճակում հայտնված, 3-18 տարեկան շուրջ 19 երեխայի տրամադրել է մինչև 6 ամիս ժամկետով շուրջօրյա խնամք:

Առանց ծնողական խնամքի մնացած շուրջ 25 երեխա խնամվել է խնամատար ընտանիքներում:

Հաստատություններից երեխաներին կենսաբանական ընտանիքներ վերադարձնելու (բեռնաթափում և կանխարգելում) միջոցառման շրջանակում ՀՀ Լոռու մարզում, 2014 թվականից՝ նաև ՀՀ Շիրակի մարզում, կենսաբանական ընտանիք է վերադարձել 40 երեխա, կանխարգելվել է 60 երեխայի մուտքը հաստատություններ: Միջոցառման շրջանակում ընտանիքներին տրամադրվել է բնաիրային օգնության փաթեթ՝ սննդի զամբյուղ, հագուստ և կոշիկ, գրենական պիտույքներ և դասագրքեր, էներգետիկ ծառայությունների փոխհատուցում:

Տարվել են նաև կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների ապահովման, թրաֆիքինգի կանխարգելման և դրա զոհերին աջակցելու աշխատանքներ:

Կենսաթոշակային ապահովության բնագավառ: 2016 թվականին կենսաթոշակային ապահովության ոլորտում իրականացված միջոցառումներն ուղղված են եղել շահառուներին մատուցվող ծառայությունների հասցեականության և մատչելիության բարձրացմանը, որակի բարելավմանը, այդ թվում՝ էլեկտրոնային ծառայություններ ներդնելու և ընդլայնելու, նշանակման և վճարման գործընթացների արդյունավետությունը բարձրացնելու միջոցով:

Չաշխատող մայրերին ևս 2016 թվականից վճարվում է մայրության նպաստ, իսկ երեխայի ծննդյան միանվագ նպաստի՝ ուղղակի վճարվող գումարը, չաշխատող անձին նշանակված մայրության նպաստը վճարվում են բացառապես անկանխիկ եղանակով:

2016 թվականին վերանայվել են երեխայի ծննդյան միանվագ վճարի՝ որպես ընտանեկան դրամագլուխ տրամադրված գումարի, տնօրինման ուղղությունները՝ դրանք ավելի մատչելի դարձնելով հատկապես գյուղական բնակավայրերի բնակիչների համար (կարող են ուղղվել նաև երեխայի ծնողին տրամադրված գյուղատնտեսական վարկի տոկոսագումարը վճարելուն և մայր գումարը մարելուն, եթե վարկի տոկոսադրույքը մասնակի սուբսիդավորվում է պետական ծրագրի շրջանակում, ՀՀ կառավարության սահմանած հեռավոր, սահմանամերձ, բարձրլեռնային, լեռնային, մինչև 1000 բնակիչ ունեցող գյուղական բնակավայրերում, Գեղարքունիքի մարզի Այգուտ, Լոռու մարզի Եղեգնուտ, Սյունիքի մարզի Տաթև, Տավուշի մարզի Իծաքար բնակավայրերում բնակարանի կամ բնակելի տան կամ այլ անշարժ գույքի գնման համար):

2016 թվականի ապրիլի 1-ից 50-140 տոկոսով բարձրացվել են Հայրենական մեծ պատերազմի կամ այլ պետություններում (այդ թվում՝ Աֆղանստանում) ԽՍՀՄ զինված ուժերի կազմում մարտական գործողությունների մասնակիցների (ովքեր հաշմանդամ չեն ճանաչվել) պարգևավճարների չափերը:

Պարզեցվել է առաջին խմբի հաշմանդամին և ռազմական ուսումնական հաստատությունում սովորող անձին նշանակվող կենսաթոշակ կամ երեխայի ծննդյան միանվագ, չաշխատող անձի մայրության և մինչև երկու տարեկան երեխայի խնամքի նպաստ նշանակելու համար դիմումը և անհրաժեշտ փաստաթղթերը ներկայացնելու կարգը. դրանք շահառուի հաշվառման տարածքային բաժին կարող է ներկայացնել այլ անձ:

2017 թվականի հունվարից երեխայի ծննդյան միանվագ նպաստ, խնամքի նպաստ, չաշխատող անձին մայրության նպաստ, ծերության նպաստ, հաշմանդամության նպաստ, կերակրողին կորցնելու դեպքում նպաստ և աշխատանքային կենսաթոշակ նշանակելու դիմումը կարող է ներկայացվել սոցիալական ապահովության պետական ծառայության ցանկացած տարածքային բաժին՝ անկախ շահառուի հաշվառման վայրից:

1-ին և 2-րդ երեխայի ծննդյան դեպքում երեխայի ծննդյան միանվագ նպաստի դիմումը կարող է ներկայացվել առցանց:

Քննության առնելով ՀՀ քաղաքացիների բարձրացրած հարցը՝ կարգավորվել են ԼՂՀ-ում հաշվառված գործատուի մոտ աշխատող՝ խնամքի արձակուրդում գտնվող ծնողին խնամքի նպաստ նշանակելուն և վճարելուն առնչվող հարաբերությունները. ԼՂՀ-ում խնամքի նպաստ չնշանակվելու դեպքում խնամքի նպաստի իրավունքն իրացվում է ՀՀ օրենսդրության համաձայն:

Կենսաթոշակ նշանակելու (տեսակը փոխելու, վերահաշվարկելու) համար անհրաժեշտ աշխատանքային ստաժը հավաստող արխիվային փաստաթղթերի ձեռքբերման պարտավորությունն այսուհետ կրելու է սոցիալական ապահովության պետական ծառայությունը: Ընդ որում, քաղաքացու

կենսաթոշակի իրավունքն իրացվում է այդ փաստաթղթերն ստանալու ժամկետներից անկախ՝ տարածքային բաժին դիմելու օրվանից:

ՀՀ երկքաղաքացու կամ կենսաթոշակային ապահովության բնագավառում ԱՊՀ երկրների միջև կնքված միջպետական համաձայնագրի մասնակից պետությունում բնակության իրավունք ունեցող ՀՀ քաղաքացու կողմից կենսաթոշակ նշանակելու (տեսակը փոխելու, վերահաշվարկելու, վճարելը վերսկսելու) դիմում ներկայացնելու դեպքում, ըստ անհրաժեշտության, համաձայնագրի մասնակից պետությունից համապատասխան տեղեկատվությունն ստացվում է սոցիալական ապահովության պետական ծառայության հարցմամբ: Այս դեպքում ևս կենսաթոշակի իրավունքն իրացվում է (կենսաթոշակի գումարները վճարվում են) տարածքային բաժին դիմելու օրվանից:

2017 թվականի հունվարի 1-ից ուժի մեջ մտած «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքում կատարված փոփոխություններով սահմանվել է, որ՝

- ավելի վճարված կենսաթոշակի գումարները ՀՀ պետական բյուջե են վերականգնվում (վերադարձվում, բռնագանձվում), եթե դրանք կենսաթոշակառուին վճարվել են սխալը (խախտումը) հայտնաբերելու օրվան նախորդող 3 տարվա ընթացքում,
- ավելի վճարված կենսաթոշակի գումարները հետ են գանձվում նաև կենսաթոշակ նշանակող ստորաբաժանման այն աշխատակցից, ում մեղքով (գործողությունների կամ անգործության հետևանքով) ավելի են վճարվել կենսաթոշակի գումարները,
- ավելի վճարված կենսաթոշակի գումարները կարող են հետ գանձվել անձի՝ կենսաթոշակ նշանակող ստորաբաժանման հետ փոխհամաձայնեցված ժամանակացույցի հիման վրա,
- ավելի վճարված կենսաթոշակի գումարների չափում չեն հաշվարկվում այն գումարները, որոնք վճարվել են մինչև 2017 թվականի հունվարի 1-ը,
- 2017 թվականի հունվարի 1-ից դադարեցվում են մինչև այդ օրը ավելի վճարված կենսաթոշակի գումարները ՀՀ պետական բյուջե վերականգնելու նպատակով կատարվող պահումները:

2017 թվականի հունվարի 1-ից ուժի մեջ մտած «Պետական նպաստների մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքով՝

- օտարերկրյա քաղաքացիներին՝ որպես չաշխատող անձանց, մայրության նպաստ, երեխայի ծննդյան միանվագ նպաստ նշանակելու համար ավելացվել է իրավունքը ձեռքբերելու օրվանից առնվազն երեք տարի անընդմեջ ՀՀ բնակության վայրի հասցեով հաշվառված լինելու պահանջը,
- հստակեցվել են խնամքի նպաստ ստանալու իրավունք տվող պայմանները,
- օտարերկրյա պետության իրավասու մարմնի կողմից նոր ծնված երեխայի ծննդի պետական գրանցումն իրականացնելու դեպքում, եթե ներկայացվում է երեխայի ծննդյան միանվագ նպաստը

երրորդ և հաջորդ երեխայի համար սահմանված չափով վճարելու դիմում, ավելացվել է օտարերկրյա պետությունում երեխայի ծննդյան կապակցությամբ միանվագ նպաստ չնշանակելու (չվճարելու) պահանջը,

- սահմանվել են օրենքի պահանջները խախտելու դեպքում կիրառվող պատասխանատվության նորմերի առանձնահատկություններն՝ ըստ նպաստների առանձին տեսակների:

2016 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ հաշվառված է 530311 կենսաթոշակառու և նպաստառու (ծերության, հաշմանդամության կամ կերակրողին կորցնողի դեպքում նպաստներ ստացող), որից 462845-ը՝ աշխատանքային կենսաթոշակառու (կենսաթոշակի միջին չափը՝ 40360 դրամ), 65125-ը՝ նպաստառու (նպաստի միջին չափը՝ 17792 դրամ), 2144-ը՝ շարքային կազմի զինծառայության հետ կապված կենսաթոշակ ստացող (ԽՍՀՄ զինված ուժերում զինվորական ծառայության ընթացքում հաշմանդամ դարձած շարքային կազմի զինծառայողներ, կենսաթոշակի միջին չափը՝ 24679 դրամ), 197-ը՝ պետական պաշտոն զբաղեցրած անձինք (ՀՀ օրենքներով նշանակված կենսաթոշակներ, կենսաթոշակի միջին չափը՝ 316565 դրամ):

<u>Ժողովրդագրության բնագավառ:</u> Ժողովրդագրության բնագավառում 2016 թվականին կատարած աշխատանքները բխել են ՀՀ ժողովրդագրական քաղաքականության ռազմավարության և դրա իրականացումն ապահովող միջոցառումների դրույթներից՝ հաշվի առնելով անցած տարիներին հանրապետությունում արձանագրված ժողովրդագրական զարգացումները:

ՀՀ ժողովրդագրական իրավիճակը բնութագրող ցուցանիշները շարունակում են մնալ մտահոգիչ և խնդրահարույց: 2016 թվականի հոկտեմբերի 1-ի դրությամբ, տարեսկզբի համեմատ, հանրապետության մշտական բնակչությունը նվազել է 4.7 հազարով՝ կազմելով 2993.9 հազար: 2016 թվականի առաջին 9 ամիսներին, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ, ժողովրդագրական զարգացման հիմնական ցուցանիշները դրսևորել են տարբեր միտումներ: Այսպես, նշված ժամանակահատվածում գրանցվել է 29914 ծնունդ (նվազում 699-ով), արձանագրվել է մահացության 20427 դեպք (նվազում 520-ով), ամուսնության 12088 դեպք (նվազում 1032-ով), ամուսնալուծության 2682 դեպք (նվազում 117-ով):

Մշակվել է «Հայաստանի Հանրապետության ժողովրդագրական իրավիճակի բարելավման ազգային ծրագիրը և ծրագրի իրականացումն ապահովող միջոցառումների ցանկը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը, որում ներառված միջոցառումները միտված են լինելու՝

- ծնունդների նյութական խրախուսմանը,
- մահացության, այդ թվում՝ մանկական և մայրական, կրճատմանը,

- բնակարանի կարիք ունեցող անձանց բնակարանով ապահովմանը՝ բնակարանով ապահովման պետական նպատակային ծրագրի (սոցիալական բնակարանային ֆոնդի) ներդրման և իրականացման միջոցով,
- տարիքային տարբեր խմբերին պատկանող մայրացած կանանց աջակցությանը,
- երիտասարդ և բազմազավակ ընտանիքների աջակցության և զարգացման այլընտրանքային մոտեցումների և տարբերակների ներդրմանը՝ ժողովրդագրական զարգացման ազգային հիմնադրամի ստեղծմամբ:

Պայմանավորված հանրապետությունում տեղի ունեցած սահմանադրական փոփոխություններով, ինչպես նաև հաշվի առնելով ծնելիության ցածր մակարդակը՝ կարևորվել է բազմազավակ ընտանիքների սոցիալական երաշխիքների սահմանման անհրաժեշտությունը. ՀՀ կառավարության 2016թ. մարտի 10-ի N 245-Ա որոշման հավելվածի 21-րդ կետով ամրագրվել է «Բազմազավակ ընտանիքների մասին» ՀՀ օրենքի նախագծի մշակումը:

Ժողովրդագրական քաղաքականության համար գիտահետազոտական հենքի ապահովման նպատակով «Ժողովրդագրական քաղաքականության ազդեցությունների վերլուծություն և գնահատում» ծրագրի շրջանակներում կատարվել է «Աջակցություն Հայաստանի Հանրապետության ժողովրդագրական իրավիճակի բարելավման ազգային ծրագրին» ուսումնասիրությունը:

Մշակույթի ոլորտ

2016 թվականին մշակույթի ոլորտի զարգացման հիմնական ուղղություններն են համարվել.

- մշակութային ժառանգության (հուշարձաններ, մշակութային արժեքներ, ոչ նյութական մշակույթ) պահպանությունը և ազգային ավանդույթների վերարտադրումը,
- ազգային հենքի վրա ժամանակակից արվեստի զարգացումը, մշակութային արտադրանքի տարածումը, ստեղծագործող երիտասարդության ներուժի բացահայտումը և ստեղծագործական գործընթացների խթանումը,
- մշակութային կրթության շարունակականությունը, համակարգի կատարելագործումը, գեղարվեստական կրթության համակարգի զարգացումը, մանուկների և պատանիների գեղագիտական դաստիարակության ապահովումն ու խթանումը,
- գրահրատարակչության, տեղեկատվության ձեռքբերման և մամուլի աջակցումը,
- մշակութային ծառայությունների ապակենտրոնացումը և համաչափության ապահովումը,
- միջազգային համագործակցության ընդլայնումը, արտերկրում հայկական մշակույթի տեղորոշումը և հանրահռչակումը,
- ազգային փոքրամասնությունների մշակութային ինքնության պահպանումը:

2016 թվականին շարունակվել են *մշակութային ժառանգության պահպանությանն* ուղղված աշխատանքները, որոնք միտված են եղել ՀՀ տարածքում և արտերկրում գտնվող մշակութային արժեքների և պատմամշակութային հուշարձանների հաշվառմանն ու գիտական ուսումնասիրությունների իրականացմանը, մշակութային նյութական և ոչ նյութական ժառանգության պահպանմանը, վերականգնմանն ու դրանց նպատակային օգտագործմանը, հանրահռչակմանը, մասնավորպես.

- թանգարանների ոլորտում իրականացված ծրագրերն ուղղվել են առկա մշակութային արժեքների և հավաքածուների հաշվառմանը, գիտական ուսումնասիրությանը, համալրմանը, պահպանությանը (առարկաների վերականգնում, ամրակայում) և հանրահռչակմանը.
- գրադարանների ոլորտում իրականացված ծրագրերն ուղղվել են գրադարանային հավաքածուների պահպանությանը, ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառման գործընթացի՝ մշակութային ժառանգության թվայնացման, տեղեկատվական շտեմարանների և միացյալ ավտոմատացված համակարգերի շարունակական զարգացմանը, համալրման անընդհատության ու օգտագործման մատչելիության ապահովմանը, տպագիր նյութերի, ազգային անձեռնմխելի ֆոնդերի վերաբերյալ մատենագիտության, կենսամատենագիտության, վիճակագրական տվյալների, տեղեկատվական ցանկերի կազմմանն ու հրապարակմանը, հանրության կողմից դրանց լիարժեք օգտագործմանը, մատչելիության ապահովմանը և մատուցվող ծառայությունների որակի բարձրացմանը.
- հուշարձանների պահպանության ոլորտում իրականացված ծրագրերն ուղղվել են պատմամշակութային հուշարձանների հաշվառմանը, ուսումնասիրմանը, պահպանությանը, վերականգնման և օգտագործման գործում առկա հիմնախնդիրների բացահայտմանն ու դրանց լուծմանը, մշակութային զբոսաշրջության խթանմանը.
- ոչ նյութական մշակութային ժառանգության ոլորտում իրականացված ծրագրերն ուղղվել են ոչ նյութական մշակութային ժառանգության՝ հանրության կենցաղում հաստատուն տեղ զբաղեցնող սովորույթների, ավանդույթների, ծեսերի, պատկերացումների, գիտելիքների ու հմտությունների պահպանությանը, կենսունակության ապահովմանը, պաշտպանությանը, հանրահռչակմանը, ՀՀ մարզերում ավանդական արհեստագործության ուսուցման, հմտությունների և գիտելիքների փոխանցման ծրագրերին, հանրապետական ձևաչափով իրականացված մրցույթ-փառատոներին, ՅՈՒՆԵՍԿՕ-ի ցանկերում հայկական ավանդական մշակույթի ներառման հայտերի ներկայացումը:

Ժամանակակից արվեստի ոլորտում իրականացված ծրագրերն ուղղվել են ազգային հենքի վրա հայ ժամանակակից թատերարվեստի, երաժշտարվեստի, պարարվեստի, կինոարվեստի և կերպարվեստի զարգացմանն ու միջազգային ասպարեզում հանրահռչակմանը, քաղաքացիական

կիրթ հասարակության ձևավորմանը, ստեղծագործական ներուժ ունեցող անհատների դրսևորմանը և նրանց գործունեության համար բարենպաստ դաշտի ստեղծմանը, նորարարական մտահղացումների խթանմանը, երիտասարդ ստեղծագործողներին միջազգային մշակութային գործընթացներին ինտեգրման աջակցմանը, մշակութային արտադրանքի ձեռքբերմանը և ազգային նկարագրով անհատների և երևույթների արժեքավորմանը և հանրայնացմանը, ոլորտում գործող ստեղծագործական միությունների և հասարակական կազմակերպությունների հետ համագործակցության ընդլայնմանն ու մրցակցային դաշտի ձևավորմանը:

Գրահրատարակչության ոլորտում իրականացված ծրագրերն ուղղվել են տպագիր արտադրանքի պահպանմանը, տարածմանը և հանրահռչակմանը, ազգային և համաշխարհային հոգևոր-մշակութային ժառանգության ներկայացմանը, հանրագիտարանային, գիտական, ճանաչողական և տեղեկատվական արժեք ներկայացնող գրականության հրատարակման միջոցով ազգաբնակչության իրազեկվածության ապահովմանը, ժամանակակից հետազոտողներին և ստեղծագործողներին աջակցմանը, համատեղ հրատարակությունների և հատուկ կարևորության գրականության հրատարակմանը, ՀՀ տարածքում բնակվող ազգային փոքրամասնությունների լեզվի, գրականության պահպանմանը և գրական, մշակութային, մարզային և այլ բնույթի մամուլի շարունակականության ապահովմանը:

Մշակութային կրթության ոլորտում իրականացված ծրագրերն ուղղվել են կադրերի պատրաստման պետպատվերի համակարգի կատարելագործմանը, մշակութային կրթության որակի բարձրացմանը, մասնագետների կրթության մատչելիության ապահովմանը, ՀՀ ապագա քաղաքացիների գեղագիտական դաստիարակության ձևավորմանը նպաստող ծրագրերի իրականացմանը, մանկապատանեկան տարիքի երեխաների, ներառյալ սոցիալապես անապահով, բազմազավակ ընտանիքների, հաշմանդամ, առանց ծնողական խնամքի մնացած երեխաների կրթության իրականացման պայմանների մատչելիության և որակի ապահովմանը:

ՀՀ մարզերում մշակութային ծառայությունների ապակենտրոնացման և համաչափության ապահովման նպատակով իրականացված ծրագրերն ուղղվել են Երևանի և ՀՀ մարզերի միջև գոյություն ունեցող մշակութային ծառայությունների քանակական և որակական տարբերությունների վերացմանը, մարզերում մշակութային կյանքի աշխուժացմանը, միջմարզային կապերի ամրապնդմանը, մշակութային գործընթացներում տեղի ազգաբնակչության ներգրավմանը, մշակութային ծառայություններից օգտվելուն և մշակութային գործունեության իրականացմանը:

Մշակույթի ոլորտում *միջազգային համագործակցության* նպատակով իրականացված ծրագրերն ուղղվել են արտերկրի հետ մշակութային երկխոսության և բազմակողմանի հարաբերությունների ընդլայնմանն ու խորացմանը, դրանց ներդաշնակ համադրմանը, արտերկրում

մշակույթի քարոզչության իրագործմանը, համաշխարհային մշակույթը Հայաստանի հանրության լայն շերտերի համար մատչելի դարձնելու գործընթացների ապահովմանը, համատեղ և համաֆինանսավորվող ծրագրերի ավելացմանը, միջազգային ծրագրերին հայաստանյան կազմակերպությունների ներգրավվածության աճի ապահովմանը, հայաստանյան հասարակությանն աշխարհի ժողովուրդների մշակույթին հաղորդակից դարձնելու գործընթացի ապահովմանը:

Հայրենիք-սփյուռք կապերի ամրապնդման ու մշակութային համագործակցության խորացման նպատակով իրականացվել են սփյուռքում գործող կազմակերպությունների և մշակութային միությունների հետ համագործակցության ծրագրեր, խրախուսվել են հայրենիքում ու արտերկրում գործող հայ արվեստագետներ, աջակցություն է ցուցաբերվել սփյուռքում գործող պարային և թատերախմբերի հյուրախաղերին, նկարիչների ցուցահանդեսներին, գրողների և գրահրատարակիչների համաժողովներին և այլն:

Ազգային փոքրամասնությունների մշակույթի զարգացման նպատակով նախատեսված հատկացումներն ուղղվել են ազգային փոքրամասնությունների համայնքների ինքնադրսևորման և ժամանակակից գործընթացների ներգրավվածության ապահովմանը, Հայաստանի մշակութային կյանքին լիարժեք ինտեգրմանը, պատմամշակութային ժառանգության պահպանության ապահով-մանը:

Ֆիզիկական կուլտուրա, սպորտ և երիտասարդության բնագավառ

Ֆիզիկական կուլտուրայի, սպորտի և երիտասարդության հարցերի բնագավառներում ՀՀ կառավարության վարած պետական քաղաքականության իրականացումը ենթադրում է մի շարք հիմնախնդիրների լուծում՝ զանգվածային ֆիզկուլտուրային-առողջարարական՝ համայնքային, տարածաշրջանային, մարզային և հանրապետական միջոցառումների, փառատոների անցկացում, հաշմանդամների տարբեր խմբերի շրջանում ֆիզկուլտուրային-առողջարարական աշխատանքների հետագա բարելավում, հաշմանդամ մարզիկների, աշխարհի և Եվրոպայի առաջնություններին հանրապետության մարզիկների մասնակցության աջակցություն, ֆիզիկական կուլտուրայի, սպորտի և առողջ ապրելակերպի արմատավորման քարոզմանն ուղղված համալիր միջոցառումների և ծրագրերի իրականացում, ոլորտը կարգավորող իրավական ակտերի մշակում, ֆիզիկական կուլտուրայի և սպորտի բնագավառում բարեփոխումներ կատարելու, սպորտի եվրոպական խարտիայի պահանջներից բխող հիմնահարցերին ծանոթացնելու նպատակով սեմինար-խորհրդակցությունների անցկացում, ֆիզիկական դաստիարակության անընդհատությանը, հայրենիքի պաշտպանությանը պատրաստ երիտասարդության դաստիարակությանը նպաստող միջոցառումների անցկացում:

Պետական աջակցության ծրագրում ընդգրկված 32 մարզական ազգային ֆեդերացիաները 2016 թվականի ընթացքում պետական աջակցության գումարներով կազմակերպել են 137 ուսումնամարզական հավաք, 93 ՀՀ առաջնություն, մասնակցել են 165 միջազգային միջոցառումների, այդ թվում՝ Եվրոպայի և աշխարհի առաջնությունների: ՀՀ հավաքական թիմերի մարզիկները 12 մարզաձևերից նվաճել են 48 ոսկե, 60 արծաթե և 62 բրոնզե մեդալ (ընդամենը՝ 170 մեդալ):

Իրականացվել են օգոստոսի 5-21-ը Ռիո դե Ժանեյրոյի օլիմպիական խաղերին Հայաստանի Հանրապետության մարզական պատվիրակության մասնակցությանն աջակցման աշխատանքներ: Օլիմպիական խաղերին մասնակցել են 32 մարզիկներ հունա-հռոմեական ըմբշամարտ (4), ազատ ոճի ըմբշամարտ (4), ծանրամարտ (7), սպորտային մարմնամարզություն (3), բռնցքամարտ (5), ձյուդո (1), աթլետիկա (5), հրաձգություն (1), լող (2) մարզաձևերից: Օլիմպիական խաղերի չեմպիոն դարձավ Արթուր Ալեքսանյանը, իսկ արծաթե մեդալակիրներ դարձան Միհրան Հարությունյանը, Սիմոն Մարտիրոսյանը և Գոռ Մինասյանը:

Իրականացվել են նաև Նորվեգիայի Լիլլեհամեր քաղաքում փետրվարի 12-21-ն անցկացված ձմեռային պատանեկան օլիմպիական խաղերին Հայաստանի Հանրապետության մարզական պատվիրակության մասնակցության աջակցման աշխատանքներ (1 մարզիկ՝ դահուկավազք մարզաձևից և 1 մարզուհի՝ գեղասահք մարզաձևից): Կատարվել են դրամական մրցանակների վերաբերյալ «Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի նոյեմբերի 5-ի № 1282-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի մշակման և լրամշակման աշխատանքներ:

ՀՀ կառավարության 2016 թվականի հունվարի 14-ի № 131-Ն որոշման 2-րդ հավելվածի 35-րդ կետի համաձայն (Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի գերակա խնդիրներ) մշակվել է «Հայկական ազգային կոխ ըմբշամարտ մարզաձևի զարգացման հայեցակարգը», որը հավանություն է ստացել Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի նոյեմբերի 18-ի նիստում:

«Հրաձգություն մարզաձևի զարգացման հայեցակարգին հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության արձանագրային որոշման լրամշակված նախագիծը հավանություն է ստացել ՀՀ կառավարության 2016 թվականի դեկտեմբերի 29-ի նիստում (ընդգրկված է եղել Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թ. գործունեության միջոցառումների ծրագրում):

Սպորտի բարձրագույն նվաճումների բնագավառում կառավարության քաղաքականությունն ուղղված է եղել սպորտի զարգացման նպատակային ծրագրերի մշակմանն ու իրագործմանը, մարզիչ-մանկավարժների վերապատրաստման աշխատանքների կազմակերպմանը, օլիմպիական

շարժման զարգացմանը, Հայաստանի ազգային օլիմպիական կոմիտեի և մարզական ֆեդերացիաների գործունեությանն աջակցմանը, մարզաձևերի զարգացման համար անհրաժեշտ նյութատեխնիկական բազայի ամրապնդմանն ու զարգացմանը, միջազգային (այդ թվում՝ սփյուռքի հետ) կապերի ամրապնդմանը, մարզաձևերի հավաքական թիմերի գիտամեթոդական աշխատանքների ապահովմանը, միջպետական մարզական հարաբերությունների զարգացմանը:

2016 թվականին 6 ցիկլով իրականացվել է 174 (104-ը՝ մարզերից) մարզիչ-մանկավարժների վերապատրաստում՝ 14 օր տևողությամբ, 72 ժամ ընդհանուր ծավալով:

2015 թվականին ցուցաբերած մարզական բարձր արդյունքների համար ՀՀ հավաքական թիմերի 209 մարզիկներին և նրանց մարզիչներին (92 մարզիկ, 117 մարզիչ) 2016 թվականին հատկացվեց ՀՀ Նախագահի անվանական թոշակ: 2016 թվականի օլիմպիական խաղերի վարկանիշի ձեռքբերմամբ պայմանավորված՝ 2016 թվականին ավելացել է անվանական թոշակ ստացողների թիվը՝ 231 մարզիկ, մարզիչ:

36 մարզական կազմակերպությունների հատկացվել է 55 անուն մարզագույք:

Մասսայական և մանկապատանեկան սպորտի բնագավառում կառավարության իրականացրած քաղաքականությունն ուղղված է տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների մարզական ոլորտի աշխատանքների ակտիվացմանը, մարզական ակտիվի ներուժի օգտագործմանը, մարզական միջոցառումներում գյուղական երիտասարդության ներգրավմանը, հասարակության լիարժեք անդամ հաշմանդամ մարզիկների համար սպորտով զբաղվելու համապատասխան պայմանների ստեղծմանը:

Մասսայական սպորտի ոլորտում իրականացվող ծրագրերը բխում են ֆիզիկական կուլտուրայի և սպորտի քարոզման, սպորտի Եվրոպական խարտիայի պահանջների կատարումը ապահովելու, Եվրոպայի խորհրդի սպորտի զարգացման կոմիտեի որոշումները կատարելու, նախադպրոցական և ուսումնական հաստատություններում ֆիզիկական դաստիարակության անընդհատությունն ապահովելու անհրաժեշտությունից: Ծրագրի հիմքում դրված է ոլորտի գերակայություններ հանդիսացող տարիքային ու սոցիալական տարբեր խմբերի, անձանց ֆիզիկական պատրաստվածության բարձրացման, ֆիզիկական դաստիարակության անընդհատության ապահովման, առողջ ապրելակերպի արմատավորման, անհատի ներդաշնակ զարգացման, հայրենիքի պաշտպանության գործին ֆիզիկապես կոփված երիտասարդների պատրաստմանն ուղղված միջոցառումների իրականացումը:

Մասսայական սպորտի ոլորտում իրականացված ծրագրերից է ՀՀ Նախագահի մրցանակի համար «Լավագույն մարզական ընտանիք» մրցույթը, որն անցկացվել է ՀՀ մարզերի 42 քաղաքային համայնքներում, ԼՂՀ 7 շրջաններում և Երևան քաղաքի 12 վարչական շրջաններում, որի

համայնքային փուլին մասնակցել են 2061 մարզական ընտանիքներ՝ 6183 մարդ: Եզրափակիչ փուլին մասնակցել են 144 ընտանիքներ՝ 432 մարդ և հաշմանդամություն ունեցող 22 ընտանիքներ (66 մարդ): Մրցույթում մրցանակային տեղեր զբաղեցրած ընտանիքներն ըստ փուլերի պարգևատրվել են ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության հավաստագրերով և դրամական մրցանակներով, իսկ եզրափակիչ փուլում՝ ՀՀ Նախագահի վկայագրով և դրամական մրցանակներով, ընդամենը՝ 2083 ընտանիք (6249 մարդ):

Հաջորդ ծրագիրը ՀՀ Նախագահի մրցանակի համար «Լավագույն մարզական նախադպրոցական հաստատություն» մրցույթն է, որին մասնակցել են ՀՀ մարզերի և ԼՂՀ Ստեփանակերտ քաղաքի 241 նախադպրոցական հաստատությունների 2892 երեխաներ: 3 փուլով անցկացված մրցույթում մրցանակային տեղեր զբաղեցրած հաստատություններն ըստ փուլերի պարգևատրվել են ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության հավաստագրերով և մարզագույքով, իսկ եզրափակիչ փուլում՝ ՀՀ Նախագահի վկայագրով և մարզագույքով:

ՀՀ Նախագահի մրցանակի համար «Հաշմանդամություն ունեցող լավագույն մարզիկ» մրցույթին մասնակցել են լսողական, տեսողական, հենաշարժողական խնդիրներ ունեցող և մտավոր սահմանափակումներ ունեցող 165 հաշմանդամություն ունեցող անձինք: Մասնակիցները մրցել են մրցույթի ծրագրում ընդգրկված 6 մարզաձևերում: Մրցանակային տեղեր զբաղեցրած մասնակիցները պարգևատրվել են ՀՀ Նախագահի վկայագրով և դրամական մրցանակներով:

Նախազորակոչային և զորակոչային տարիքի երիտասարդության հանրապետական ռազմամարզական խաղեր» մրցույթն իրականացվել է ՀՀ 38 տարածաշրջաններում և Երևան քաղաքի 12 վարչական շրջաններում՝ 4 փուլով: Մասնակցել են շուրջ 30000 ավագ տարիքի դպրոցական պատանիներ:

2016 թվականին սկիզբ է դրվել ՀՀ Նախագահի մրցանակի համար «Երեխաների խնամքի և պաշտպանության լավագույն մարզական հաստատություն» մրցույթին, որի եզրափակիչ փուլին մասնակցել են 12 հաստատությունների 120 երեխաներ: Մրցանակային տեղեր զբաղեցրած հաստատությունները պարգևատրվել են ՀՀ Նախագահի վկայագրով, և բոլոր մասնակից հաստատություններին տրամադրվել է մարզագույք:

ՀՀ մարզերում և ԼՂՀ-ում հանրապետական մարզական փառատոնն անցկացվում է ՀՀ 48 քաղաքային համայնքներում և ԼՂՀ-ի Ստեփանակերտ քաղաքում: Ծրագրում ընդգրկված են 7 մրցաձևեր: Ծրագիրն ընդգրկում է բնակչության բոլոր տարիքային խմբերը՝ պատանիներից մինչև տարեցներ՝ շուրջ 22000 մասնակից:

«Հաշմանդամային սպորտին առնչվող ծառայություններ» ծրագրի շրջանակներում իրականացվում է պետական աջակցություն «Հայաստանի ազգային պարալիմպիկ կոմիտե»,

«Հայաստանի կույրերի միավորում» հաշմանդամների հասարակական կազմակերպություն», «Խուլերի հայկական սպորտային կոմիտե», «Հայկական հատուկ օլիմպիադաներ» ՀԿ-ներին, որոնք ֆիզիկական կուլտուրայի և սպորտի միջոցով օգնում են համապատասխանաբար հենաշարժողական համակարգի, տեսողության, լսողության հետ կապված խնդիրներ ունեցող, մտավոր խանգարումներով մարդկանց ինքնադրսևորվելուն և հասարակության մեջ լիարժեք ինտեգրվելուն: Ծրագրի նպատակն է հաշմանդամային սպորտի զարգացման խթանումը, հաշմանդամություն ունեցող անձանց՝ հասարակությանն ինտեգրման գործընթացի խթանումը, բարոյահոգեբանական մթնոլորտի բարելավումը և այլն: Ծրագրի շրջանակում իրականացվել է 9 միջոցառում, որոնց մասնակցել են հաշմանդամություն ունեցող 541 անձ: Իրանի մայրաքաղաք Թեհրանում խուլերի երիտասարդների և մեծահասակների ըմբշամարտի աշխարհի առաջնությանը Հայաստանի Հանրապետությունը ներկայացրած 12 խուլ մարզիկներ նվաճել են 8 մեդալ՝ 1 ոսկե, 4 արծաթե, 3 բրոնզե: «Բրազիլիայի Ռիո դե Ժանեյրո քաղաքում կայացած 15-րդ ամառային պարալիմպիկ խաղերին Հայաստանի Հանրապետությունը ներկայացրած ծանրամարտիկ Գրետա Վարդանյանը գրավել է 5-րդ տեղը:

Պետական երիտասարդական քաղաքականության ոլորտի ռազմավարական ուղղվածությունը հանգել է հետևյալ նպատակների իրականացմանը՝

- զարգացնել մարզերում իրականացվող երիտասարդական պետական քաղաքականությունը (մարզային երիտասարդական կենտրոնների գործունեության ապահովում և համայնքային երիտասարդական կենտրոնների ստեղծում, գյուղական և սահմանամերձ շրջանների երիտասարդության զարգացմանն ուղղված միջոցառումների իրականացում),
- բարձրացնել հասարակական, քաղաքական զարգացումներին նրանց մասնակցության աստիճանը,
- նպաստել երիտասարդության գործունեությունն ապահովող իրավական դաշտի զարգացմանը, երիտասարդության շրջանում հոգևոր-մշակութային և գիտական մակարդակի բարձրացմանը, ազատ ժամանցի ակտիվ և նպատակային կազմակերպմանը,
- ուսումնասիրել առկա սոցիալ-տնտեսական հիմնախնդիրները և բարելավել երիտասարդների կենսապայմանները,
- հայտնաբերել և խրախուսել տաղանդավոր երիտասարդներին,
- նպաստել երիտասարդության շրջանում հայրենասիրական դաստիարակության, քաղաքացիական գիտակցության բարձրացմանը,
- ակտիվացնել և զարգացնել համագործակցությունը միջազգային երիտասարդական կառույցների հետ,

- ստեղծել պայմաններ երիտասարդությանն անհրաժեշտ տեղեկատվությամբ ապահովելու համար
- ստեղծել պայմաններ նրանց լիակատար ինքնադրսևորման համար:

Երիտասարդական քաղաքականության բնագավառում իրականացվել են բազմաթիվ ծրագրեր, այդ թվում՝ «Հայաստանի Հանրապետության պետական երիտասարդական քաղաքականության 2013-2017 թվականների ռազմավարության մոնիտորինգ և կառուցվածքի գնահատում», «Երիտասարդական հեռուստահաղորդաշար», «Հայաստանի Հանրապետության 2017 թվականի երիտասարդական մայրաքաղաքի հռչակման մասին տեսահոլովակի պատրաստում և հեռարձակում», «Երիտասարդ» օն-լայն պարբերական», «2016 թվականի երիտասարդական մայրաքաղաքի փակման արարողություն», «Հասարակական կազմակերպությունների կողմից դրամաշնորհային ծրագրերի հայտերի համացանցային առցանց (օնլայն) ռեժիմով ներկայացման և մրցութային ընտրության համակարգի պահպանում և զարգացում», «ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի, թմրամիջոցների, ալկոհոլի և ծխախոտի օգտագործման դեմ պայքարի վերաբերյալ երիտասարդների իրազեկության մակարդակի բարձրացում», «Մեթոդական աջակցություն Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հասարակական կազմակերպություններին և երիտասարդներին», «Երիտասարդական աշխատողի վերապատրաստում» և այլն:

Առցանց դրամաշնորհային համակարգի միջոցով հասարակական կազմակերպություններին տրամադրվել է 39 դրամաշնորհ: Վճարվել է Եվրոպայի խորհրդի «Երիտասարդական քարտի միջոցով երիտասարդության շարժունակություն» ընդլայնված մասնակի համաձայնագրին Հայաստանի Հանրապետության անդամակցության վճարը, տրամադրվել է 36 ուղևորության դրամաշնորհ:

Բնապահպանության ոլորտ

2016 թվականին բնապահպանության ոլորտում իրականացված աշխատանքները նպատակաուղղված են եղել ՀՀ կառավարության 2016 թվականի գործունեության և ՀՀ կառավարության կողմից հաստատված ռազմավարական նշանակության ծրագրերով նախատեսված բնապահպանության ոլորտի գծով գերակա խնդիրների և միջոցառումների կատարման ապահովմանը:

Ոլորտում Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի գործունեության ծրագրով նախատեսված բոլոր 6 միջոցառումները սահմանված ժամկետներում իրականացվել են, ընդ որում, ոչ միայն ապահովվել է բոլոր նախագծերի սահմանված ժամկետներում ներկայացումը, այլ նաև դրանցից 5-ն արդեն իսկ ընդունվել են ՀՀ կառավարության կողմից՝

- «Հարավային ջրավազանային տարածքի 2016-2021 թվականների կառավարման պլանը և արդյունավետ կառավարմանն ուղղված առաջնահերթ միջոցառումները հաստատելու մասին» 26.05.2016թ. N539-Ն որոշումը,
- «Հարավային ջրավազանային կառավարման տարածքի 2016-2021 թվականների կառավարման պլանի միջոցառումների ծրագրին հավանություն տալու մասին» 26.05.2016թ. N 20-3 արձանագրային որոշումը,
- «Սևանա լճի էկոհամակարգերի վերականգնման, պահպանման, վերարտադրման, բնականոն զարգացման և օգտագործման միջոցառումների 2017 թվականի տարեկան ծրագիրը հաստատելու մասին» 29.09.2016թ. N38-36 արձանագրային որոշումը,
- «Հայաստանի Հանրապետությունում «Կայուն օրգանական աղտոտիչների մասին» Ստոկհոլմի կոնվենցիայի իրականացման գործողությունների ազգային ծրագրի 2016-2020 թվականներին իրականացվելիք միջոցառումների ցանկին հավանություն տալու մասին» 08.12.2016թ. N 49-7 արձանագրային որոշումը,
- «Հայաստանի Հանրապետության կողմից վավերացված մի շարք բնապահպանական միջազգային կոնվենցիաներից բխող՝ Հայաստանի Հանրապետության պարտավորությունների կատարման միջոցառումների ցանկը հաստատելու մասին» 08.12.2016թ. N 49-8 արձանագրային որոշումը:

Գերակա խնդիրների կատարման շրջանակներում իրականացվել են Սևանա լճում և նրա ջրահավաք ավազանում ձկան ու խեցգետնի պաշարների հաշվառման աշխատանքները, որոնց արդյունքում արձանագրվել է, որ սիգ ձկնատեսակի միջին խտությունը 2016 թվականին 2013 թվականի համեմատ աճել է 80.0%-ով՝ 2.0 կգ/հա-ից հասնելով 3.6 կգ/հա-ի, իսկ ձկան ընդհանուր զանգվածն աճել է 38.9 %-ով՝ 324.0 տ-ից հասնելով 450.0 տ-ի: Սևանա լճում խեցգետնի արդյունագործական պաշարները 2016 թվականին կազմել են 4582տ: Ծրագրի շրջանակներում կատարվել են նաև Սևանա լճի և էնդեմիկ ձկնատեսակների համար ձվադրավայր հանդիսացող 7 գետերի մանրակրկիտ հիդրոէկոլոգիական հետազոտություններ, ուսումնասիրվել է դրանց էկոլոգիական վիճակը, բացահայտվել են բնական ձվադրությանը խոչընդոտող գործոնները:

«Հայաստանի բնության պետական թանգարան» ՊՈԱԿ-ի տարածքում ստեղծվել է էկոտուրիզմի տեղեկատվական կենտրոն, որն ամբողջովին կահավորված է, առկա են ՀՀ բնության հատուկ պահպանվող տարածքների քարտեզներ, բրոշյուրներ, տուրիստական ուղեցույցներ և էկոտուրիզմի մատուցման համար անհրաժեշտ այլ պարագաներ:

<u>Կենսառեսուրսների պահպանության և կառավարման բնագավառ:</u> Պետություն-մասնավոր հատված համագործակցության շրջանակներում «Ջերմուկ ազգային պարկի» ստեղծման նպատակով

2016 թվականի դեկտեմբերի 12-ին ՀՀ բնապահպանության նախարարության և «Լիդիան Արմենիա» ընկերության միջև ստորագրվել է փոխըմբռնման հուշագիր՝ «Ջերմուկ ազգային պարկ»-ի ստեղծման նպատակով: «Լիդիան Արմենիա» ՓԲԸ-ն ստանձնել է «Ջերմուկ» ազգային պարկի» ստեղծման նախագծի իրականացման խորհրդատուի դերը՝ միաժամանակ պարտավորվելով ստեղծել միջազգային և հայաստանյան մասնագետներից բաղկացած աշխատակազմ: Ներկայումս ընթանում է ազգային պարկի ստեղծմանն աջակցելու կառույցների ձևավորման գործընթացը:

Ընդունվել է ՀՀ կառավարության 2016 թվականի օգոստոսի 18-ի «Կենդանական աշխարհի օբյեկտների (որսահանդակների) պահպանության, պաշտպանության, օգտագործման կարգը և որսահանդակների ցանկը հաստատելու մասին» N 860–Ն որոշումը:

Բնության հատուկ պահպանվող տարածքներում (առանց «Սևան» ազգային պարկի) իրականացվել են.

- անտառվերականգնման աշխատանքներ 70 հա տարածքի վրա,
- տնկարանի հիմնման և խնամքի աշխատանքներ 5 հա տարածքի վրա,
- տնկանյութի աճեցման աշխատանքներ:

2016 թվականի ընթացքում բնության թանգարանը սպասարկվել է 20828 այցելու, գանձվել է մուտքավճար՝ 3484.1 հազ.դրամ:

Հատուկ պահպանվող տարածքների պահպանության, այդ տարածքներում գիտական ուսումնասիրությունների և անտառտնտեսական աշխատանքների շրջանակներում հաշվետու տարում իրականացվել են «Սևան», «Դիլիջան», «Արևիկ» և «Արփի լիճ» ազգային պարկերում, «Խոսրովի անտառ» և «Շիկահող» պետական արգելոցներում, «Սոսու պուրակ», «Զանգեզուր» և «Զիկատար» արգելավայրերում, ինչպես նաև «Արգելոցապարկային համալիր» ՊՈԱԿ-ի տնօրինության ներքո գտնվող բնության հատուկ պահպանվող տարածքներում բնական էկոհամակարգերի, լանդշաֆտային ու կենսաբանական բազմազանության, գենոֆոնդի, բնության ժառանգության գիտական ուսումնասիրության, պահպանության, վերականգնման, վերարտադրության, հաշվառման, գույքագրման դիտանցի ապահովում, ինչպես նաև տնկարկների պահպանություն և պաշտպանություն:

<u>Ջրային ռեսուրսների պահպանության և կառավարման բնագավառ:</u> Սևանա լճի մակարդակը 01.01.2017թ. դրությամբ կազմել է 1900.46մ, ինչը նախորդ տարվա նույն օրվա դրությամբ (1900.19մ) բարձրացել է 0.27մ-ով:

Սևանա լճից ոռոգման նպատակով բաց թողնված ջրաքանակը կազմել է 167.135 մլն խմ՝ ՀՀ կառավարության 02.06.2016թ. «Ոռոգման նպատակով 2016թ. Սևանա լճից ջրառի մասին» N558–Ա որոշմամբ սահմանված մինչև 170 մլն խմ ջրառի չափաքանակին համապատասխան: 2016

թվականին բաց թողնված ջրաքանակը 0.608 մլն խմ-ով պակաս է 2015 թվականի համեմատությամբ:

2017 թվականի հունվարի 1-ի դրությամբ Սևանա լճի մակարդակը կազմել է 1900.46 մ, ինչը 2002 թվականի նույն ժամանակահատվածի համեմատությամբ (1896.32մ) 4.14 մ-ով ավել է և փաստացի 1.116 մ-ով գերազանցել է «Սևանա լճի էկոհամակարգի վերականգնման, պահպանման, վերարտադրման և օգտագործման միջոցառումների տարեկան ու համալիր ծրագրերը հաստատելու մասին» ՀՀ օրենքով նախատեսված լճի մակարդակի բարձրացման տեմպերի հաշվարկային ցուցանիշը՝ 3.024 մ (տարեկան 0.216մ):

Սևանա լճի ջրածածկ անտառտնկարկների մաքրման ծրագրի շրջանակներում 2016 թվականին իրականացվել են 93 հա տարածքի մաքրման աշխատանքներ (տարեկան ծրագիրը՝ 93 հա): Բացի նշվածից, Սևանա լճի ափամերձ անտառտնկարկների մաքրման աշխատանքների շրջանակներում ընդհանուր առմամբ մաքրվել է 13.03 հա մակերեսով ջրածածկման ենթարկվող անտառների տարածք:

Սևանա լճում իշխանի պաշարների վերականգնման և ձկնաբուծության զարգացման համալիր ծրագրի շրջանակներում «Սևանի իշխանի պաշարների վերականգնման և ձկնաբուծության զարգացման» հիմնադրամի կողմից 2016 թվականի ընթացքում Սևանի իշխանի ձվադրավայր հանդիսացող հինգ հիմնական գետերում (Կարճաղբյուր, Լիճք, Ծակքար, Արգիճի, Մասրիկ) բաց է թողնվել 0.071-0.7 գրամ միջին քաշով՝ 920.7 հազ. հատ մանրաձուկ:

«Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի Սևանի և Մարտունու մասնաճյուղերում, համապատասխանաբար 2.0 և 5.0 հա տարածքների վրա իրականացվել են անտառվերականգնման աշխատանքներ: Տնկվել են թվով 10500 հատ բարդի տեսակի ծառերի տնկիներ:

«Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի Մարտունու մասնաճյուղի տարածքում հիմնվել է անտառային արժեքավոր ծառատեսակների՝ սոճենի, թխկի, հացենի, բարդի և այլնի գիտափորձարարական տնկարան՝ դրանց վեգետացիայի պոտենցիալի ուսումնասիրության նպատակով:

2016 թվականին Արարատյան դաշտում իրականացվել է 6 խորքային հորերի լուծարում, որի արդյունքում խնայվել է 94.9 լ/վրկ ջրաքանակ, կոնսերվացվել՝ 23–ը: 96 խորքային հորեր բերվել են փականային ռեժիմի, որի արդյունքում խնայվել է 5378.5 լ/վրկ ջրաքանակ: Ընդամենը խնայվել է 5473.4 լ/վրկ ջրաքանակ:

Իրականացվել են նախապատրաստական աշխատանքներ 2017 թվականի ընթացքում «Գիտական առաջադեմ տեխնոլոգիաների օգտագործում և համագործակցություն՝ հանուն

ռեսուրսների համալիր պահպանության» (ԳԱՏՕ) ծրագրի կողմից ձկնաբուծարաններում առնվազն 20 ավտոմատ կենտրոնացված համակարգի ներդրման ուղղությամբ:

Հիմք ընդունելով Արարատյան և Հարավային ջրավազանային կառավարման պլանները՝ ԵՄ «Միջազգային գետավազանների շրջակա միջավայրի պահպանություն» ծրագրի աջակցությամբ մշակվել է Ախուրյանի ջրավազանային կառավարման պլանը:

Շրջակա միջավայրի վրա ներգործության պետական մոնիթորինգի բնագավառ: «Շրջակա միջավայրի վրա ներգործության մոնիտորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ը հաշվետու տարում իրականացրել է ՀՀ մակերևութային ջրերի՝ մեծ և միջին մեծության 42 գետի և Սևանա լճի ջրի որակի դիտարկումներ 131 դիտակետում՝ տարվա ընթացքում 7-12 անգամ հաճախականությամբ:

Մակերևութային ջրերի որակի մոնիտորինգի արդյունքների վերլուծությունը ցույց է տալիս, որ գետերի ակունքներում և բնակավայրերից վերև ընկած հատվածներում ջրի որակը «գերազանց» և «լավ» է: Խոշոր բնակավայրերից և քաղաքներից հետո չմաքրված կոմունալ-կենցաղային կեղտաջրերի՝ գետին խառնվելուց հետո դիտվում է աղտոտվածության աճ, և հիմնականում ջուրը «միջակից» «վատ» որակի է:

ՀՀ բնակավայրերի օդային ավազանի որակի 2016 թվականի մոնիթորինգի արդյունքների համաձայն ծծմբի երկօքսիդի սահմանային թույլատրելի կոնցենտրացիայից (ՍԹԿ) գերազանցում դիտվել է Ալավերդի, Վանաձոր և Գյումրի քաղաքներում՝ համապատասխանաբար 1,2-2,0, 1,2-1,9 և 1,2-1,8 անգամ: Որոշված մյուս ցուցանիշների կոնցենտրացիաները չեն գերազանցել համապատասխան ՍԹԿ-ները: Նախորդ տարվա համեմատությամբ մթնոլորտային օդի աղտոտվածության էական փոփոխություններ չեն դիտվել:

Միջազգային համագործակցություն: Հայաստանի Հանրապետությունն անդամակցում է բնապահպանական ոլորտի 22 միջազգային կոնվենցիաների ու արձանագրությունների, որոնց դրույթների կատարման ուղղությամբ կատարվում է զգալի աշխատանք: Ինչպես և նախկինում, 2016 թվականին շարունակվել է միջազգային պայմանագրերի դրույթների կատարումն ապահովող օրենսդրական դաշտի կատարելագործումը:

ՀՀ բնապահպանության նախարարության «Բնապահպանական ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկը 04.11.2016թ. հավատարմագրվել է որպես ՄԱԿ-ի Կլիմայի փոփոխության շրջանակային կոնվենցիայի Հարմարվողականության հիմնադրամի Ազգային իրականացնող մարմին, որի շրջանակներում տրամադրվելու է 4.0 մլն դոլարի դրամաշնորհ: Ծրագիրը դեռևս գտնվում է մշակման փուլում, նախատեսվում է Արթիկի շրջանում հիմնել կենսոլորտային կենտրոն, որի նպատակը կլիմայի գլոբալ փոփոխությունները, օզոնային շերտի քայքայումը, մեծ հեռավորությունների վրա օդի, ջրերի անդրսահմանային աղտոտումն,

արդյունաբերական վթարների անդրսահմանային ներգործությունները, հողերի դեգրադացիան (անապատացում, աղակալում, էռոզիա և այլն) կանխելն է կամ դրա վրա վնասակար ազդեցության առավելագույն չափով նվազեցնելը:

2016 թվականի ընթացքում իրականացված միջազգային համագործակցության շրջանակներում արդեն իսկ ձեռք է բերվել համաձայնություն՝

- 20.42 մլն ԱՄՆ դոլար գումարի ներդրման՝ «Շենքերի էներգաարդյունավետության արդիականացմանն ուղղված ներդրումների ռիսկի նվազեցում և մասշտաբավորում» ծրագրի ֆինանսավորման նպատակով, որը հաստատվել է Կանաչ կլիմայի հիմնադրամի կողմից: Ներկայումս գումարը փոխանցելու նպատակով ընթանում են բանակցություններ ՀՀ կառավարության և Կանաչ կլիմայի հիմնադրամի միջև պայմանագրի կնքման ուղղությամբ.
- 852.0 հազ. ԱՄՆ դոլար գումարի ֆինասավորման «Կլիմայի փոփոխության մասին ՄԱԿ-ի շրջանակային կոնվենցիայի ներքո Հայաստանի չորրորդ ազգային հաղորդագրության և երկամյա առաջընթացի երկրորդ զեկույցի պատրաստում» ծրագրի իրականացման, հաշվետվությունների պատրաստման և մոնիտորինգի անցկացման համար,
- 700.0 հազ. եվրո գումարի ֆինասավորման՝ Կովկասի Բնության Հիմնադրամի միջոցներից ԲՀՊՏ-ների լրացուցիչ ֆինանսավորման, «Խոսրովի անտառ» պետական արգելոցի կառավարման պլանի մշակման, «Քարերի սիմֆոնիա» բնության հուշարձանի անձնագրավորման, «Խոսրովի անտառ» պետական արգելոցի և «Դիլիջան» ազգային պարկի կենսաբազմազանության մոնիթորինգի, ազնվացեղ եղջերուի վերաբնակեցում «Դիլիջան» ազգային պարկում և այլ ծրագրերի ֆինանսավորման համար:

Բյուջեների կազմման բնագավառ

Ծրագրային բյուջետավորման համակարգի ամբողջական ներդրման համար աշխատանքներն իրականացվում են ՀՀ կառավարության 2015 թվականի օգոստոսի 13-ի նիստի N38 արձանագրային որոշմամբ հավանության արժանացած «Հայաստանի Հանրապետությունում ծրագրային բյուջետավորման համակարգի ամբողջական ներդրման մանրամասն գործողությունների ծրագրով» սահմանված ժամանակացույցի համաձայն, մասնավորապես.

- Մեթոդաբանական հիմքերի գծով 2016 թվականի ընթացքում հիմնականում ավարտվել է համապատասխան փաստաթղթերի նախագծերի մշակումը և 2017 թվականի տարեվերջին կընդունվի ծրագրային բյուջետավորման միասնական ուղեցույց.
- Ծրագրային բյուջետավորման հետ կապված մնացած աշխատանքները՝ օրենսդրական, բյուջետային տեղեկատվության որակի, ներքին կառավարման հսկողության, մարդկային

ռեսուրսների կառավարման ու կարողությունների ձևավորման, ավտոմատացման և այլն, ընթացքի մեջ են և կիրականացվեն ըստ սահմանված ժամանակացույցի:

Հարկային, մաքսային քաղաքականության և վարչարարության ոլորտ

2016 թվականին հարկային քաղաքականությունը հիմնականում ուղղված է եղել կայուն և կանխատեսելի հարկային միջավայր ստեղծելու նպատակով ՀՀ հարկային օրենսգրքի մշակման աշխատանքների իրականացմանը, որը ընդունվել է նույն թվականի հոկտեմբերի 4-ին: Այս առումով, 2016 թվականի ընթացքում հարկային հարաբերությունները կարգավորող՝ գործող օրենսդրությամբ սահմանված նորմերը հիմնականում չեն վերանայվել, հաշվի առնելով նաև այն, որ հիմնական փոփոխությունները նախատեսվել և իրականացվել են ՀՀ հարկային օրենսգրքի շրջանակներում:

Միաժամանակ, հաշվի առնելով պետական բյուջեի ընթացիկ եկամուտների ապահովման խնդիրը, ինչպես նաև Եվրասիական տնտեսական միության շրջանակներում ընթացող ինտեգրման գործընթացները՝ վերանայվել են մի շարք ակցիզային հարկով հարկման ենթակա ապրանքների դրույքաչափերը, ինչպես նաև ընդլայնվել է ակցիզային հարկով հարկման ենթակա ապրանքների ցանկը:

Մաքսային քաղաքականության ոլորտում իրականացվող աշխատանքները հիմնականում ուղղված են եղել Եվրասիական տնտեսական միության նոր մաքսային օրենսգրքի նախագծի մշակման աշխատանքների իրականացմանը: Նշյալ աշխատանքներն ավարտվել են 2016 թվականի դեկտեմբերին, և նախագիծը ստորագրվել է ԵԱՏՄ անդամ բոլոր պետությունների կողմից: Եվրասիական տնտեսական միության նոր մաքսային օրենսգիրքն ուժի մեջ կմտնի 2017 թվականի հուլիսի 1-ին:

Պետական եկամուտների վարչարարության ոլորտում իրականացված միջոցառումները բխել են ՀՀ կառավարության գործունեության ծրագրից, ՀՀ 2014-2025թթ. հեռանկարային զարգացման ռազմավարական ծրագրից, հարկային և մաքսային վարչարարության ոլորտը կարգավորող ծրագրերից:

Հարկային ոլորտ: ԵԱՏՄ անդամակցությամբ պայմանավորված՝ հարկային հարաբերությունները կարգավորող ենթաօրենսդրական կարգավորումները համապատասխանեցվել են Եվրասիական տնտեսական միության օրենսդրությանը, մշակվել են անդամակցությունից բխող նոր ընթացակարգեր: Ներդրվել է «ԵԱՏՄ գործարքների դարան» ենթահամակարգը՝ ԵԱՏՄ շրջանակներում իրականացվող գործարքների վերաբերյալ ներկայացվող նոր հաշվետվական ձևերի, այդ թվում՝ ներմուծման հարկային հայտարարագրի, արտահանման հարկային հայտարարագրի, ապրանքների ներմուծման և անուղղակի հարկերի վճարման, կամ անուղղակի

հարկերից ազատման, անուղղակի հարկերն այլ կարգով վճարելու մասին հայտարարությունների ընդունման, հաշվառման, հաստատման, ինչպես նաև ԵԱՏՄ գործընկեր երկրների հետ տվյալների փոխանակման նպատակով:

Հետևողական աշխատանքներ են իրականացվել 2016 թվականի ՀՀ պետական բյուջեի հարկային եկամուտների ապահովման ուղղությամբ:

Շարունակվել են աշխատանքները ռիսկերի կառավարման մեխանիզմների հիման վրա թիրախային հարկային հսկողության իրականացման ուղղությամբ (այդ թվում՝ վերլուծական գործիքների կիրառմամբ), մասնավորապես.

- ներդրվել է շրջանառության հարկով հարկվող հարկ վճարողների նկատմամբ կատարվող կամերալ ուսումնասիրությունների արդյունքում կազմվող արձանագրությունների, ակտերի նախագծերի և ակտերի ավտոմատացված հաշվառման ենթահամակարգը: Արդյունքում 2016 թվականի նոյեմբեր և դեկտեմբեր ամիսների ընթացքում կամերալ ուսումնասիրություններով կազմված արձանագրությունների հիման վրա կազմվել են թվով 36 ստուգման ակտեր, որոնցով առաջադրվել է բյուջե վճարման ենթակա 24.9 մլն դրամ հարկային պարտավորություն.
- նոր և արդիականացված վերլուծական գործիքակազմի կիրառմամբ բացահայտվել են ռիսկային տնտեսավարող սուբյեկտները, ռիսկային ոլորտների գործունեության տեսակները, և ըստ ռիսկայնության աստիճանի նրանց նկատմամբ ցուցաբերվել են տարբերակված մոտեցումներ.
- կատարվել են ռիսկային համարվող գործունեության տեսակների (ոլորտների) և ապրանքախմբերի (ապրանքատեսակների) հարկման բազաների (պոտենցիալների) վերլուծություն՝ ըստ հարկատեսակների (վճարատեսակների), հարկ վճարողների և հարկային տեսչությունների.
- շարունակվել են աշխատանքները գործարքների փաստաթղթավորման նկատմամբ հսկողության իրականացման ուղղությամբ: Մասնավորապես՝ 2016 թվականի ընթացքում իրականացված օպերատիվ հետախուզական միջոցառումների արդյունքում տնտեսավարող սուբյեկտների կողմից առանց ուղեկցող հաշվարկային փաստաթղթերի կամ խախտումով դուրս գրված ուղեկցող հաշվարկային փաստաթղթերով արտադրանքի, ապրանքների տեղափոխման, առաքման դեպքերի բացահայտման նպատակով իրականացվել է 1254 օպերատիվ հետախուզական միջոցառում, որից 1155 դեպքով կազմվել են վարչական ակտեր՝ ընդհանուր 722.4 մլն դրամ բյուջե լրացուցիչ վճարման ենթակա գումարով.
- երրորդ անձանցից ստացվող տեղեկությունների վերլուծության աշխատանքների շրջանակներում ուսումնասիրվել և վերլուծվել են տնտեսավարող սուբյեկտների իրականացրած գործարքների վերաբերյալ երրորդ անձանցից, մասնավորապես՝ ՀՀ ԿԱ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեից ստացված տեղեկությունները: Բացի այդ, իրականացվող վերլուծությունների

գործընթացն առավել արդյունավետ կազմակերպելու նպատակով կանոնակարգվել են անշարժ և շարժական գույքի վերաբերյալ երրորդ անձանցից ստացված տեղեկությունների վերլուծության, իրացման և դրանց արդյունքում ի հայտ եկած ռիսկերի հաշվառման ընթացակարգերը.

- շարունակվել են աշխատանքները ստվերային շրջանառությունների բացահայտման, գործարքների փաստաթղթավորման նկատմամբ հսկողական միջոցառումների արդյունավետության բարձրացման ուղղություններով:

2016 թվականի ընթացքում շարունակվել են աշխատանքները հարկ վճարողներին մատուցվող ծառայությունների ընդլայնման և որակի բարելավման ուղղությամբ, մասնավորապես.

- իրականացվել են սպասարկման կենտրոնների կողմից հարկ վճարողներին մատուցվող ծառայությունների որակի գնահատման համակարգի ներդրմանն ուղղված աշխատանքներ.
- վարչարարության գործընթացի պարզեցման և հաշվետվությունների էլեկտրոնային եղանակով ներկայացման համակարգին ամբողջական անցում կատարելու նպատակով շարունակվել են ՀՀ ԿԱ ՊԵԿ էլեկտրոնային կառավարման համակարգի կատարելագործման աշխատանքները: Մասնավորապես՝ 2016 թվականի արդյունքներով հարկային մարմին ներկայացվող հաշվետվությունների ավելի քան 92%-ը ներկայացվել է էլեկտրոնային եղանակով: Մեկ միասնական գանձապետական հաշվի ներդրման աշխատանքների շրջանակներում մշակվել է էլեկտրոնային հարկային հաշվետվությունների ներկայացման դարանում հարկային պարտավորությունների ցուցադրման համակարգի տեխնիկական առաջադրանքը, որի իրականացման համար հայտարարվել է մրցույթ.
- 2016 թվականի ընթացքում շարունակվել են հարկ վճարողների իրազեկվածության բարձրացմանն ուղղված աշխատանքները՝ հեռախոսազանգերի սպասարկման կենտրոնի, ինտերնետային կայքի, հարկ վճարողների գրավոր հարցումներին պատասխանելու, ինչպես նաև հարկ վճարողների համար դասընթացներ կազմակերպելու միջոցով: Մասնավորապես՝ 2016 թվականի ընթացքում հեռախոսազանգերի սպասարկման կենտրոնը ստացել է 263580 հարցադիմում, ինչը 17.3%-ով գերազանցում է 2015 թվականի և 36%-ով՝ 2014 թվականի ցուցանիշը: Հարկ վճարողների իրազեկվածության մակարդակի բարձրացման նպատակով «ՀՀ ԿԱ ՊԵԿ ուսումնական կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից հարկ վճարողների տարբեր խմբերի համար 2016 թվականի ընթացքում կազմակերպվել են 18 դասընթացներ, որոնց մասնակցել է 290 ունկնդիր:

Մաքսային ոլորտ: «Եվրասիական տնտեսական միության մաքսային օրենսգրքի մասին» պայմանագրի շրջանակներում նախատեսվել է՝

- էլեկտրոնային մաքսային հայտարարագրման գերակայություն և գրավոր հայտարարագրման կիրառում միայն որոշակի դեպքերում (հոդված 104, կետ 3,4,5).

- ապրանքների հայտարարագրի ներկայացման հնարավորություն մաքսային մարմին առանց այնպիսի փաստաթղթեր ներկայացնելու, որոնց հիման վրա լրացվել է ապրանքների հայտարարագիրը (հոդված 109, կետ 8) և տարանցման հայտարարագիրը (հոդված 109, կետ 7).
- ԵՏՄ մաքսային օրենսգրքով հնարավորություն է ընձեռվել միության մաքսային տարածք ներմուծվող ապրանքների և տրանսպորտային միջոցների մասին մաքսային մարմիններին ներկայացվող նախնական տեղեկատվությունն օգտագործել հետագայում ապրանքների հայտարարագրման, ժամանակավոր պահպանության և այլ նպատակներով (հոդված 11).
- հավաքված կամ կազմատած ձևով մաքսային սահմանով տեղափոխվող ապրանքների մաքսային հայտարարագրման առանձնահատկությունների սահմանում (հոդված 117).
- ապրանքների բացթողնման ժամկետների կրճատում մաքսային հայտարարագրի գրանցման պահից մինչև 4 ժամ, եթե մաքսային հայտարարագրի ստուգման արդյունքներով չի առաջացել այն լրացնելու համար փաստաթղթեր պահանջելու կամ մաքսային հսկողության որոշակի ձևերի իրականացման անհրաժեշտություն (հոդված 119).
- մաքսատուրքերի, հարկերի վճարման ապահովման ներկայացմամբ ապրանքների բացթողնման հնարավորություն, եթե նախքան ապրանքների բացթողումը սկսված մաքսային հսկողությունը դեռևս չի ավարտվել (հոդված 121).
- լիազորված տնտեսական օպերատորի ինստիտուտի կատարելագործում, մասնավորապես՝ նախատեսվում է ներդնել լիազորված տնտեսական օպերատորի երեք տեսակի վկայականներ՝ համաշխարհային մաքսային կազմակերպության կողմից մշակված ստանդարտներին համապատասխան: Նշված երեք տեսակի վկայականների ներդրումն արդեն լիովին համահունչ կլինի Կիոտոյի միջազգային կոնվենցիայում և Համաշխարհային առևտրի անվտանգության և դյուրացման շրջանակային ստանդարտներում (SAFE Framework) ամրագրված դրույթներին (բաժին 8 գլուխ 61).
- առանձին մաքսային ընթացակարգերի պայմանների հստակեցում (գլուխ 4).
- Եվրասիական տնտեսական միության մաքսային սահմանով առանձին տեսակի ապրանքների տեղափոխման պայմանների և կարգի պարզեցում՝ նախքան ապրանքների մասին հայտարարագրի ներկայացումը ապրանքների բացթողման հնարավորություն ունեցող ապրանքների ցանկի ընդլայնում (հոդված 120):

Ընդլայնվել են ոչ ռիսկային համարվող երկրներից կատարվող ներմուծումների մասով գործարքի գնի մեթոդով մաքսային արժեքի որոշման շրջանակները, և վերանայվել են մաքսային արժեքի հայտարարագրման մոտեցումները, գործարկվել է մաքսային արժեքի էլեկտրոնային հայտարարագրման համակարգը: Արդյունքում, բարելավվել է գործարքի գնի մեթոդով մաքսային

արժեքի որոշման գործընթացը՝ այս մեթոդով մաքսային արժեքի որոշման տեսակարար կշիռը հասցնելով 65%-ի:

Ֆիզիկական անձանց կողմից թեթև մարդատար ավտոմեքենաների ներմուծման ժամանակ հնարավորություն է ընձեռվել մաքսային արժեքի որոշման նպատակով օգտագործել տվյալ տրանսպորտային միջոցի ձեռքբերման շուկայի վերաբերյալ ինտերնետային կայքերում առկա տվյալները, որոնց վերաբերյալ տեղեկատվությունը հնարավոր է ճշտել տեղում՝ մասնագիտացված մաքսատանը տեղակայված համակարգիչների միջոցով:

Շահագործման է հանձնվել «Սննդամթերքի անվտանգության պետական ծառայության կողմից թույլտվությունների տրամադրման «Մեկ պատուհան» համակարգը, ինչը հնարավորություն է տալիս սահմանային անցումային կետում և հետագա մաքսային ձևակերպումների ընթացքում թույլտվությունների ստացման գործընթացը կազմակերպել էլեկտրոնային եղանակով:

Շահագործման է հանձնվել «Միջազգային փոստային և սուրհանդակ կապի ծառայությունների առաքանիների մաքսային հաշվառման» համակարգը, ինչը հնարավորություն է ընձեռում վարել առաքանիների ամբողջական հաշվառում, իրականացնել դրանց նկատմամբ վերահսկողություն, նախատեսված վճարների վճարում՝ առանց քաղաքացիների մաքսային մարմիններ ներկայանալու պահանջի:

Պետական գնումների ոլորտ

Մշակվել և ՀՀ ԱԺ-ի կողմից 16.12.2016թ. հաստատվել է «Գնումների մասին» նոր օրենքը, որի արդյունքում նվազում են գնման ձևերը, պարզեցվում են ընթացակարգերի կազմակերպման ու դրանց մասնակցության հետ կապված պայմանները, ձևավորվում է բողոքարկման արտադատական գործունակ և անկախ համակարգ, բարձրացվում է գնման գործընթացների թափանցիկության և հրապարակայնության աստիճանը, մեխանիզմներ են նախատեսվում կոռուպցիոն հնարավոր դեպքերը կանխարգելելու համար:

Ֆունկցիոնալ կառուցակարգային փոփոխությունների արդյունքում՝

- էականորեն նվազել են պետության կարիքների համար հրատապության հիմքով պայմանավորված մեկ անձից գնումների կատարման ծավալները. 2015 թվականին փաստացի կատարված մեկ անձից գնումների ծավալը կազմել է շուրջ 21.2 մլրդ դրամ (ընդամենը ոչ մենաշնորհային գնումների համար նախատեսված միջոցների 18.6%-ը), իսկ 2016 թվականին՝ շուրջ 6.6 մլրդ դրամ (ընդամենը ոչ մենաշնորհային գնումների համար նախատեսված միջոցների 7.2%-ը).
- մեծացել է մրցակցային ընթացակարգերում մասնակցության միջին ցուցանիշը: Մասնավորապես՝ 2015 թվականին բաց ընթացակարգերում, պարզեցված ընթացակարգերում և

մրցակցային բանակցություններում միջին ցուցանիշը մեկ ընթացակարգի հաշվարկով կազմել է համապատասխանաբար 3.4, 1.5 և 1.9, իսկ 2016 թվականին՝ 6.4, 3.3 և 3.6 մասնակից.

- ընդլայնվել է էլեկտրոնային գնումների համակարգն օգտագործող պատվիրատուների և էլեկտրոնային գնումների համակարգով իրականացվող գնումների շրջանակը: Մասնավորապես՝
  - էլեկտրոնային գնումների համակարգում ներառվել է հրատապության հիմքով պայմանավորված մեկ անձից գնումների կատարման ընթացակարգը՝ պետական մարմինների և քաղաքային համայնքների համար.
  - էլեկտրոնային են դարձվել նաև պետության հիսուն տոկոսից ավելի մասնակցությամբ առևտրային կազմակերպությունների կարիքների համար մրցակցային, ինչպես նաև հրատապության հիմքով պայմանավորված մեկ անձից գնումների կատարման ընթացակարգերը:

Գնումների ընթացակարգերի թափանցիկության և հրապարակայնության աստիճանը բարձրացնելու նպատակով՝

- ներդրվել է ինտերնետ միջավայրում գործող գնումների հաշվետվողականության ծրագիրը, որը շահագրգիռ անձանց որոնման ճկուն համակարգի միջոցով հնարավորություն է ընձեռում ստանալ ամբողջական տեղեկատվություն գնման ընթացակարգերի մասին, այդ թվում՝ իրականացնել վերլուծություններ.
- էլեկտրոնային գնումների համակարգում կատարվել է ծրագրային փոփոխություն, որի արդյունքում հայտերը բացելուց հետո ինտերնետ միջավայրում ավտոմատ եղանակով հասանելի են դառնում մասնակիցների ներկայացրած հայտերը, ինչպես նաև վերացվել են տնտեսավարող սուբյեկտների կողմից հիշյալ համակարգը շահագործելու ընթացքում առաջացած տեխնիկական խնդիրները:

Մշակվել և ՀՀ կառավարության 09.02.2017թ. թիվ 104-Ն որոշմամբ հաստատվել է ՀՀ կառավարության համապատասխան որոշումը, որով՝

- նախատեսվում է ներդնել գնումների մասնակի կենտրոնացման համակարգ: Այս կապակցությամբ ձեռնարկվել են նաև միջոցներ էլեկտրոնային գնումների ARMEPS համակարգում ծրագրային փոփոխություններ կատարելու ուղղությամբ, որի շրջանակում նախատեսվում է կենտրոնացված գնումների կարգը հաստատվելուց հետո էլեկտրոնային դարձնել գնման հայտերը պատվիրատուների կողմից կենտրոնացված գնումներ կատարող մարմնին ներկայացնելու գործընթացը.
- պարզեցվել է գնման ընթացակարգը՝ հանելով մասնակիցներին ներկայացվող ձևական պահանջները:

Ձեռնարկվել են միջոցներ Համաշխարհային Բանկի ֆինանսավորմամբ իրականացվող ծրագրերի հաշվին կատարվող գնանշման հարցումները և ազգային շեմը չգերազանցող մրցույթները 2017 թվականի ապրիլի 1-ից էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով կազմակերպելու ուղղությամբ: Մասնավորապես՝ 2016 թվականին պիլոտային եղանակով էլեկտրոնային գնումների ARMEPS համակարգի միջոցով կազմակերպվել է գնանշման հարցման ընթացակարգ (shopping), որի արդյունքում համակարգում ծրագրային խնդիրներ չեն առաջացել: 2017 թվականի փետրվարին պիլոտային եղանակով նշված համակարգի միջոցով կազմակերպվել է նաև բաց ազգային մրցույթի ընթացակարգ (NCB), որը նույնպես հաջողությամբ իրականացվել է: Նշվածի հիման վրա ՀՀ վարչապետի 22.03.2017թ. թիվ 02/23.9/6691-17 հանձնարարականով Համաշխարհային բանկի ֆինանսավորմամբ ծրագրեր իրականացնող բոլոր ԾԻԳ-երին, հիմնադրամներին ու ՓԲԸ-ներին հանձնարարվել է վերոհիշյալ գնման ընթացակարգերը կազմակերպել էլեկտրոնային գնումների ARMEPS համակարգի միջոցով: էլեկտրոնային գնումների ARMEPS համակարգում կատարվել է փոփոխություն, որի արդյունքում հնարավոր է դարձել 2017 թվականի ապրիլի 1-ից էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով նոր գնման գործընթացների շրջանակում կնքվող պայմանագրերի արդյունքների հանձնման-ընդունման գործընթացն իրականացնել էլեկտրոնային համակարգի միջոցով: Ընդ որում, նշված գործառույթի իրականացման հիմքը սահմանվել է ՀՀ կառավարության 09.02.2017թ. թիվ 104-Ն որոշմամբ:

Գնումների համակարգողների համար կազմակերպվել են թվով 368 որակավորման քննություններ, որոնցից քննությունը հաջողությամբ հանձնել և որակավորում են ստացել թվով 270 մասնագետներ:

Պետական ֆինանսների կառավարման ոլորտ

Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի փետրվարի 18-ի նիստի N 6 արձանագրության 15-րդ կետով հավանության արժանացած արձանագրային որոշմամբ հաստատվել է Պետական ֆինանսների կառավարման համակարգի (ՊՖԿՀ) բարեփոխումների վերանայված ռազմավարությունը և 2016-2020 թվականներին ՊՖԿՀ բարեփոխումների ոլորտում իրականացվելիք գործողությունների ծրագիրը (Գործողությունների ծրագիր), որը մշակվել է՝ հիմք ընդունելով Պետական ծախսերի և ֆինանսական հաշվետվողականության (ՊԾՖՀ-PEFA) քարտուղարության կողմից ընդունված ՊԾՖՀ-PEFA 2016 նոր շրջանակը:

ՊՖԿՀ բարեփոխումների նպատակն է մեծացնել պետական ծախսերի կառավարման արդյունավետությունը՝ ապահովելով ընթացակարգերի ու մատուցվող ծառայությունների բարելավված որակ:

ՊՖԿՀ բարեփոխումների հիմնական տեսլականն է՝ «Կենտրոնացված կարգավորում - ապակենտրոնացված կառավարում»:

ՊՖԿՀԲ ռազմավարությամբ նախատեսվում է, որ պետական ֆինանսների կառավարման համակարգի բարեփոխումները կիրականացվեն նախանշված ժամկետներում, որի արդյունքում կբարձրանա պետական ծախսերի կառավարման արդյունավետությունը՝ ապահովելով դրամի դիմաց առավելագույն արդյունքի ստացումը և, հետևաբար, հանրությանը մատուցվող ծառայությունների բարձր որակը:

Այդուհանդերձ, ՊՖԿՀ բարեփոխումների շրջանակում 2016-2020 թվականների համար նախատեսված միջոցառումների մի մասի իրականացումը հնարավոր է ապահովել միայն միջազգային գործընկեր կազմակերպությունների աջակցությամբ: Այդ նպատակով մշակվել և միջազգային գործընկեր կազմակերպություններին է ներկայացվել բոլոր միջոցառումների իրականացման գործողությունների մանրամասն ծրագիրը:

Պետական ներքին ֆինանսական հսկողություն

Ֆինանսական կառավարման և հսկողության ոլորտ: ՊՖԿՀ բարեփոխումների վերանայված ռազմավարության և 2016-2020 թվականներին ՊՖԿՀ բարեփոխումների ոլորտում իրականացվելիք գործողությունների ծրագրում ներառված են նաև Պետական ներքին ֆինանսական հսկողության (ՊՆՖՀ) համակարգի ռազմավարությանն առնչվող դրույթները, ինչպես նաև ՊՆՖՀ համակարգի 2016-2020թթ. իրականացվելիք գործողությունների ծրագիրը:

ՀՀ ՊՆՖՀ կայացմանն օժանդակելու նպատակով 2014-2016 թվականներին իրականացվել է ԵՄ-ի կողմից ֆինանսավորվող՝ Հայաստանի Հանրապետությունում ՊՆՖՀ կարգավորիչ և ինստիտուցիոնալ շրջանակի ուժեղացման և նոր համակարգի գործարկման հարցում Կենտրոնական ներդաշնակեցման մարմնին օժանդակելու մասին Թվինինգ ծրագիրը: Ծրագրի նպատակն էր ԵՄ լավագույն փորձի հիման վրա զարգացնել ՀՀ ՊՆՖՀ ոլորտը:

Թվինինգ ծրագրի շրջանակում մշակվել են Հայաստանի Հանրապետության հանրային հատվածում ֆինանսական կառավարման և հսկողության ոլորտի օրենսդրական ակտերի նախագծերը, մասնավորապես.

- Ֆինանսական կառավարման և հսկողության (ՖԿՀ) ձեռնարկ,
- Ներքին հսկողության ստանդարտների ուղեցույց,
- Կառավարչական հաշվետվողականության մեթոդաբանության փաստաթուղթը՝ ԿՆՄ-ի կողմից հետագա օրենսդրական ակտի մշակման համար,

- Ռիսկերի կառավարման մեթոդաբանության նախագիծ՝ Ֆինանսական կառավարման և հսկողության համատեքստում:

Գերմանիայի Միջազգային Համագործակցության Ընկերությունը (ԳՄՀԸ) պատրաստակամություն է հայտնել աջակցելու ՀՀ 2016–2017թթ. հանրային հատվածի ներքին հսկողության համակարգի բացերի վերլուծություն իրականացնելու և ՖԿՀ ոլորտին առնչվող փաստաթղթերը (այդ թվում նաև ՖԿՀ մասին օրենքի և ՖԿՀ օրենքի հայեցակարգի նախագծերը) վերանայելու, իսկ 2017 թվականի ընթացքում՝ հանրային հատվածի առնվազն երկու կազմակերպություններում վերանայված ՖԿՀ մեթոդաբանության պիլոտավորում իրականացնելու համար:

Մասնավորապես՝ ԳՄՀԸ-ի աջակցությամբ 2017 թվականին նախատեսվում է ձեռք բերել կարճաժամկետ խորհրդատվական ծառայություններ, որոնց շրջանակներում խորհրդատվական ծառայություններ իրականացնող խումբը բնագավառում լիազոր մարմնին կաջակցի հետևյալ խնդիրների իրականացման հարցում.

- ընթացիկ իրավիճակի վերլուծություն (Analysis of status quo) (կազմակերպություններում առկա բիզնես գործընթացների և ընթացիկ ներքին հսկողության համակարգի), ինչպես նաև նոր ՖԿՀ համակարգի ներդրման նպատակով բացերի վերլուծություն՝ հաշվի առնելով վերանայման տեսանկյունից ծրագրային բյուջետավորման բարեփոխումները,
- ՖԿՀ ոլորտին առնչվող մեթոդաբանության վերանայում և վերջնական տեսքի բերում, ինչպես նաև ըստ անհրաժեշտության ոլորտին առնչվող այլ իրավական ակտերի վերանայում.
- ՖԿՀ պիլոտավորման և համակարգի հետագա ներդրման մանրամասն գործողությունների ծրագրի կազմում:

Ներքին աուդիտի ոլորտ: Ներքին աուդիտի ոլորտում 2016 թվականի ընթացքում կատարվել են հետևյալ հիմնական աշխատանքները:

ՀՀ ֆինանսների նախարարի 2012 թվականի փետրվարի 17-ի «Հայաստանի Հանրապետության հանրային հատվածի ներքին աուդիտի ձեռնարկների և ներքին աուդիտի կանոնակարգի մշակման ուղեցույցները հաստատելու և Հայաստանի Հանրապետության ֆինանսների և էկոնոմիկայի նախարարի 2002 թվականի դեկտեմբերի 30-ի թիվ 934-Ն հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 143-Ն հրամանում ՀՀ ֆինանսների նախարարի 2016 թվականի օգոստոսի 26-ի N 902-Ն հրամանով կատարվել են փոփոխություններ և լրացումներ՝ սահմանելով, որ ընթացիկ տարվա համար պլանավորված և փաստացի իրականացված աուդիտորական առաջադրանքների քանակի տարբերությունն առավելագույնը կարող է կազմել 10%, իսկ ընթացիկ

տարվա պլանով նախատեսված աուդիտորական առաջադրանքների առնվազն 90%-ը պետք է կատարվի:

ԳՄՀԸ կազմակերպության աջակցությամբ մշակվել և աշխատավարձերի հաշվարկման ու վճարման ներքին հսկողական համակարգերի արդյունավետության գնահատման աուդիտի օրինակով փորձարկվել է համակարգահեն աուդիտի ձեռնարկը, որի նպատակն է աջակցել ներքին աուդիտորներին իրականացնել համակարգահեն աուդիտ միջազգային լավագույն փորձին համապատասխան և գործնականում կիրառել ներքին աուդիտի ստանդարտները: Արդյունքների ամփոփումից հետո ձեռնարկը կներկայացվի հանրային հատվածի կազմակերպությունների քննարկմանը:

Համաձայն «Ներքին աուդիտի մասին» ՀՀ օրենքի՝ ՀՀ հանրային հատվածում ներքին աուդիտոր աշխատելու համար անհրաժեշտ է ունենալ համապատասխան որակավորում: Այդ նպատակով ՀՀ ֆինանսների նախարարությունը, որպես ներքին աուդիտի ոլորտի լիազոր մարմին, դիմորդների համար կազմակերպում է ներքին աուդիտի որակավորման քննություններ: 2016 թվականի ընթացքում անցկացվել են ներքին աուդիտորի որակավորման թվով 15 քննություն 240 դիմորդի համար, որոնցից 185-ին շնորհվել է ՀՀ հանրային հատվածի ներքին աուդիտորի որակավորում:

Համաձայն «Ներքին աուդիտի մասին» ՀՀ օրենքի՝ որակավորված ներքին աուդիտորները մասնագիտական գիտելիքների և կարողությունների զարգացման նպատակով պետք է յուրաքանչյուր տարի անցնեն շարունակական մասնագիտական վերապատրաստում: Այս նպատակով ՀՀ ֆինանսների նախարարությունը 2016 թվականի ընթացքում կազմակերպել է դասընթաց ՀՀ հանրային հատվածի թվով 183 որակավորված ներքին աուդիտորների համար: Նշված դասընթացի մասնակիցները դասընթացի ավարտից հետո հանձնում են թեստ՝ տրամադրված գիտելիքների յուրացման արդյունավետության գնահատման նպատակով:

Պետական գույքի կառավարում

2016 թվականի ընթացքում շարունակվել է պետական գույքի կառավարման, այդ թվում՝ մասնավորեցման և պետական մասնակցությամբ ընկերությունների գործունեության կարգավորման ու լուծարման բնագավառներում Հայաստանի Հանրապետության կառավարության որդեգրած քաղաքականությունը՝ առաջնորդվելով «Պետական գույքի կառավարման մասին», «Պետական գույքի մասնավորեցման (սեփականաշնորհման) մասին», Հայաստանի Հանրապետության օրենքներով, պետական գույքի մասնավորեցման ծրագրերի մասին Հայաստանի Հանրապետության օրենքներով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի հունվարի 14-ի

N 131-Ն որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի գործունեության միջոցառումների ծրագրով, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով, Հայաստանի Հանրապետության այլ օրենքներով և իրավական ակտերով:

Պետական գույքի կառավարման արդյունավետության բարձրացման, ինչպես նաև օրենսդրական բարեփոխումների նպատակով 2016 թվականի ընթացքում շարունակվել են պետական գույքի կառավարման ոլորտում մեթոդական բնույթի օրենսդրական փոփոխությունները, որոնց հիմնական նպատակն է կանոնակարգել, հստակեցնել կառավարման գործառույթները և լրացնել այն բացերը, որոնք առաջանում են նոր իրավական ակտերի կիրառման արդյունքում: Մասնավորապես՝ 2011 թվականից ձևավորվել է պետական գույքի կառավարման ինստիտուցիոնալ համակարգը, մշակվել և գործում է պետական գույքի կառավարման նոր մոտեցումների ամբողջ տիրույթի օրենսդրական և մեթոդական դաշտ:

ՀՀ Ազգային ժողովի կողմից 2016 թվականի հունիսի 7-ին ընդունվել է «Պետական գույքի մասնավորեցման 2006-2007 թվականների ծրագրի կատարման 2014 թվականի տարեկան հաշվետվությունը հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը (ՀՕ-99-Ն):

ՀՀ Ազգային ժողովի կողմից 2016 թվականի հոկտեմբերի 3-ին ընդունվել է «Պետական գույքի մասնավորեցման 2006-2007 թվականների ծրագրի կատարման 2015 թվականի տարեկան հաշվետվությունը հաստատելու մասին» ՀՀ օրենքը (ՀՕ-151-Ն):

Հաշվետու ժամանակահատվածում մշակվել և ՀՀ Ազգային Ժողովի քննարկմանն են ներկայացվել «Պետական գույքի մասնավորեցման 2006-2007 թվականների ծրագրի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» («Ավտոմատիկա» ՓԲԸ-ն մասնավորեցման ծրագրում ընդգրկելու վերաբերյալ) և «Պետական գույքի մասնավորեցման 2006-2007 թվականների ծրագրի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն և լրացում կատարելու մասին» («Ռադիոիզոտոպների արտադրության կենտրոն» ՓԲԸ-ն մասնավորեցման ծրագրում ընդգրկելու վերաբերյալ, որն ընդունվել է Ազգային ժողովի երկրորդ ընթերցմամբ) ՀՀ օրենքների նախագծերը:

Մշակվել է «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը, որն ընդունվել է 2017 թվականի մարտի 1-ին: Օրենքով առաջարկվում է գույքի հավատարմագրային կառավարման պայմանագրի առավելագույն ժամկետը սահմանել մինչև 49 տարի՝ ներկայիս գործող 5 տարի առավելագույն ժամկետի փոխարեն: Առաջարկվող փոփոխության իմաստն այն է, որ գույքի (ներառյալ պետական գույքի և պետական մասնակցությամբ առևտրային կազմակերպությունների բաժնետոմսերի) հավատարմագրային կառավարումը ստանձնելու հավակնություն ունեցող անձինք ցանկանում են երաշխիքներ ունենալ

իրենց կողմից կատարված ներդրումների հետգնման հնարավորության, շահութաբերության ապահովման, ինչպես նաև տվյալ գույքի (կազմակերպության) կառավարումը շարունակելու հնարավորությունների վերաբերյալ:

Մշակվել և 2016 թվականի հոկտեմբերի 13-ին ՀՀ կառավարության կողմից ընդունվել է «Պետական սեփականություն հանդիսացող գույքի նվիրաբերության կարգը հաստատելու մասին» N 1067-Ն որոշումը: Որոշմամբ հաստատվել է նվիրաբերության ենթակա պետական գույքի կազմը, նվիրաբերության սուբյեկտները և պետական գույքը նվիրաբերության սուբյեկտներին նվիրաբերելու պայմանները:

2016 թվականի նոյեմբերի 10-ին ՀՀ կառավարության կողմից ընդունվել է «Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի ապրիլի 29-ի N 474-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման» N 1160-Ն որոշումը: Որոշման ընդունմամբ կանոնակարգվել են.

- պետական գույքի կառավարման եռամյա ծրագրերի կազմումը և դրանց կատարման հաշվետվողականությունը,
- 50-ից ավելի տոկոս պետական մասնակցությամբ առևտրային կազմակերպություններում տնօրենների խորհրդի ստեղծման և պետության ներկայացուցչի մասնակցության առանձնահատկությունները,
- լուծարվող պետական մասնակցությամբ կազմակերպությունների լուծարման գործընթացները, ներառյալ՝ այդ ընթացքում առաջացող խնդիրների լուծումը, խորհրդատվությունը և տարբեր պետական մարմինների գործողությունների համակարգումը:

Մշակվել է «Կանոնադրական կապիտալում հիսուն տոկոսից պակաս պետական սեփականություն հանդիսացող բաժնետոմսեր (բաժնեմաս) ունեցող առևտրային կազմակերպությունների պետական սեփականություն հանդիսացող բաժնետոմսերի (բաժնեմասի) ամբողջությամբ կամ մասնակի մասնավորեցման գործընթացը կանոնակարգելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 1999 թվականի օգոստոսի 5-ի N 499 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը, որը ՀՀ կառավարության կողմից հաստատվել է 2017 թվականի փետրվարի 9-ի թիվ 101-Ն որոշմամբ: Վերջինիս նպատակն է տվյալ որոշման մեջ սահմանել այնպիսի դրույթներ, որոնք թույլ կտան հնարավոր սեղմ ժամկետում և արդյունավետ կերպով իրականացնել մասնավորեցման ծրագրում ընդգրկված ընկերությունների՝ պետությանը պատկանող բաժնետոմսերի մասնավորեցումը: Այդ նպատակի իրականացման համար հստակ և պարզ ձևով կանոնակարգված են պետությանը պատկանող բաժնետոմսերի գնահատման գործընթացը, աճուրդով մասնավորեցման դեպքերը և ընթացակարգը, ուղղակի վաճառքի ձևով

մասնավորեցման դեպքերը և ընթացակարգը, ինչպես նաև սահմանված է ոչ պետական բաժնետերերի նախապատվության իրավունքի իրացման ընթացակարգը:

Մշակվել և ՀՀ Իրավաբանական անձանց պետական ռեգիստրում պետական գրանցում է ստացել ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչության պետի 2016 թվականի մարտի 14-ի N 24-Ա հրամանով հաստատված «Կարեն Դեմիրճյանի անվան մարզահամերգային համալիր» պետական ոչ առևտրային կազմակերպության կանոնադրությունը:

Անշարժ գույքի կադաստր

Անշարժ գույքի կադաստրի համակարգում գործառույթների իրականացման թափանցիկության բարձրացմանը, վարչարարության պարզեցմանը, պաշտոնյա-քաղաքացի անմիջական շփման անհրաժեշտության բացառմանը և դրանով իսկ կոռուպցիոն ռիսկերի նվազեցմանն ուղղված համակարգի համալիր, արմատական բարեփոխումները շարունակվել են նաև 2016 թվականի ընթացքում:

Գեոդեզիայի և քարեզագրության ոլորտում իրականացվել են աշխատանքներ հետևյալ ուղղություններով՝

- գեոդեզիական բնագավառում (Սպիտակի տարածաշրջան).
- քվազիգեոիդի մոդելի ստեղծման բնագավառ.
- տեղագրական քարտեզագրության բնագավառ.
- աշխարհագրական անվանումների բնագավառ.
- ՀՀ բազային երկրատեղեկատվական համակարգի ստեղծման և ներդրման աշխատանքներ.
- թեմատիկ քարտեզագրության աշխատանքներ.
- ՀՀ համայնքների կադաստրային քարտեզների թարմացման աշխատանքներ.
- ՀՀ մարզերի վարչական սահմանների նկարագրման աշխատանքներ.
- նախագծահետազոտական ծախսեր:

Հաշվառման և հողաշինարարության բնագավառում ի կատարումն ՀՀ կառավարության 2016 թվականի հունվարի 14-ի N 131-Ն որոշմամբ հաստատված ծրագրի 55-րդ կետի՝ ամփոփվել են ՀՀ մարզպետների և Երևանի քաղաքապետի կողմից ներկայացված 2016 թվականի հուլիսի 1-ի դրությամբ կազմված հողային հաշվեկշիռները, կազմվել է Հայաստանի Հանրապետության 2016 թվականի հողային հաշվեկշիռը, որը հաստատվել է ՀՀ կառավարության 13.10.2016թ. թիվ 1059-Ն որոշմամբ: Հողային օրենսգրքի 34-րդ հոդվածի և ՀՀ կառավարության 23.10.2000թ. N 656 որոշման պահանջների համաձայն, յուրաքանչյուր տարի իրականացվում է հողերի ընթացիկ

պետական հաշվառում՝ անկախ սեփականության ձևից: Ընթացիկ հաշվառման տվյալներում ներառվում են մեկ տարվա ընթացքում ՀՀ հողային ֆոնդում օրենդրությամբ սահմանված կարգով իրականացված փոփոխություններն՝ ըստ նպատակային և գործառնական նշանակությունների, հողատեսքերի, այդ թվում՝ ոռոգվող հողերի համար: Արդյունքում, յուրաքանչյուր տարի կազմվում է Հայաստանի Հանրապետության հողային ֆոնդի առկայության և բաշխման մասին հաշվետվությունը (հողային հաշվեկշիռը): ՀՀ կառավարության կողմից հաստատվելուց և հրապարակվելուց հետո հողային հաշվեկշռի տվյալներից օգտվում են պետական և տեղական ինքնակառավարման մարմինները, իրավաբանական և ֆիզիկական անձինք:

Իրականացվել է վերահսկողություն ՀՀ կառավարության որոշումներով Հայաստանի Հանրապետության 448 համայնքների վարչական սահմաններում ընդգրկված գյուղատնտեսական նշանակության հողերի կադաստրային հողագնահատման ծրագրի իրականացման նկատմամբ:

Ծրագրի իրականացման նպատակն էր համայնքների վարչական սահմաններում ընդգրկված հողերն ապահովել հողագնահատման հատակագծերով և գյուղատնտեսական հողատեսքերի հողագնահատման տեղեկագրերով:

Ծրագրի իրականացման արդյունքում արդեն կան համայնքների վարչական սահմաններում ընդգրկված հողերի հողագնահատման քարտեզներ և գյուղատնտեսական հողատեսքերի գնահատման տեղեկագրեր:

Նշված կադաստրային գնահատումը թույլ կտա համայնքներին մեթոդապես ճշգրիտ հիմքերի վրա դնել գյուղատնտեսական հողատեսքերի գների սահմանումը, հողի հարկի, վարձավճարի, գրավի նորմաների որոշումը, արդյունավետ հողօգտագործման տարբեր բնույթի հարաբերությունների կարգավորումը:

Ուսումնասիրվել և կարծիք է տրամադրվել հողերի նպատակային նշանակությունը փոխելու վերաբերյալ կազմված 138 հողաշինարարական գործերի, 130 համայնքների (բնակավայրերի) պարզեցված գլխավոր հատակագծերի և համայնքների գլխավոր հատակագծերում փոփոխություններ կատարելու առաջարկությունների վերաբերյալ: Դրանք ընթացիկ, շարունակական աշխատանքներ են, որոնք իրականացվում են ՀՀ կառավարության 29.12.2011թ. N 1918-Ն և N 1920-Ն որոշումներով հաստատված կարգերի համաձայն:

Իրականացվել է վերահսկողություն ՀՀ մարզերի վարչական սահմանների նկարագրման ծրագրի իրականացման նկատմամբ: Ծրագրի իրականացման նպատակն էր «Հայաստանի Հանրապետության վարչատարածքային բաժանման մասին» ՀՀ օրենքի պահանջների կատարումը:

Ծրագրի իրականացման արդյունքում ՀՀ բոլոր մարզերի վարչական սահմանները նկարագրվել են և ամրագրվել վերոհիշյալ օրենքում, որով նվազագույնի են հասցվել ՀՀ մարզերի վարչական սահմանների անճշտությունները և սահմանային վեճերը:

ՀՀ կառավարության կողմից համայնքների խոշորացման ծրագրի իրականացման շրջանակներում ստուգվել և համապատասխան ընթացք է տրվել 18 խոշորացված համայնքների վարչական սահմանների նկարագրերի կազմման աշխատանքներին: Խոշորացված համայնքների ցանկը և սահմանների նկարագրերն ամրագրվել են «Հայաստանի Հանրապետության վարչատարածքային բաժանման մասին» ՀՀ օրենքով: Ծրագրի իրականացման աշխատանքները շարունակվում են:

Միջազգային համագործակցություն: 2016 թվականի հոկտեմբերին Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի և Շվեդական «Սվիդսերվեյ» կազմակերպության միջև ստորագրվել է փոխըմբռնման հուշագիր, որի շրջանակներում կազամակերպվել է Շվեդական «Սվիդսերվեյ» կազմակերպության գործադիր տնօրեն Ֆրեդերիկ Զետեռքուեստի այցը Հայաստանի Հանրապետություն: Այցի նպատակը վերոնշյալ հուշագրի ստորագրմամբ հողային կառավարման ոլորտում համագործակցության ամրապնդմանը, տեխնիկայի և նոու-հաուի զարգացմանը նպաստելն էր, ինչպես նաև համատեղ ծրագրերի իրագործման նոր հեռանկարների քննարկումը: Կողմերը նախանշեցին համատեղ աշխատանքային գործունեության զարգացման նոր ոլորտներ, ներառյալ՝ հողային կառավարման էլեկտրոնային ծառայությունները, ազգային և համաշխարհային գեոդեզիական ռեֆերենց համակարգերը, մասնագետների ուսուցումը և այլն:

2016 թվականի հոկտեմբերի 18-19-ը Մոլդովայի Քիշնև քաղաքում կայացել է Գեոդեզիայի, քարտեզագրության, կադաստրի և Երկրի հեռահար զոնդավորման ԱՊՀ միջպետական խորհրդի հերթական 38-րդ նստաշրջանը, որին մասնակցել են 8 անդամ պետությունների, ինչպես նաև ԱՊՀ գործադիր կոմիտեի պատվիրակությունները: Ապահովվել է Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի ներկայացուցիչների մասնակցությունը: ԱՊՀ միջպետական խորհրդի ամենամյա նստաշրջանների շրջանակներում անդամ-պետությունները մշակում են գեոդեզիայի, քարտեզագրության, կադաստրի և երկրի հեռահար զոնդավորման ոլորտի միասնական կարգավորման մեխանիզմներ, որոնք արտացոլվում են ամեն հերթական նստաշրջանի ավարտին ստորագրվող արձանագրության մեջ: Ոլորտի կարգավորման մեկ միասնական ծածկույթի առկայությունը նպաստում է անդամ-պետությունների համար համարժեք կարևորության հարցերի առավել արդյունավետ և համապարփակ կարգավորմանը:

Անշարժ գույքի գնահատում: Միասնական հարկման նպատակով «Գույքահարկի մասին» և «Հողի հարկի մասին» ՀՀ օրենքների պահանջների համաձայն՝ նոր եռամյա ժամանակահատվածի՝ 2017-2019 թթ. հարկման բազաների ձևավորման համար 2016 թվականի հուլիսի 1-ի դրությամբ հաշվառված տվյալների հիման վրա կադաստրի համակարգի կողմից իրականացվել են ՀՀ տարածքում գտնվող, հարկվող օբյեկտ համարվող շենքերի և շինությունների, հողամասերի կադաստրային գնահատում, և շենքերի, շինությունների ու հողամասերի գնահատման (վերագնահատման) ամփոփ ցուցակների տեղադրում Հայաստանի Համրապետության տեղական ինքնակառավարման մարմինների համար հասանելի՝ կադաստրի պետական կոմիտեի պաշտոնական ինտերնետային կայքում:

Հասարակական կարգի պահպանություն

ՀՀ ոստիկանությունը հաշվետու տարում ամբողջ ծավալով կատարել է իր առջև դրված խնդիրները՝ օրենքով վերապահված լիազորությունների շրջանակներում հանրապետությունում վերահսկվել է օպերատիվ իրավիճակը, ապահովվել է կայուն հասարակական կարգը:

Հիմնական նպատակ ունենալով ժողովրդավարական հասարակարգերում ձևավորված չափանիշներին համապատասխանող ոստիկանություն ունենալու՝ հասարակության և պետության արդի պահանջը՝ հատուկ ուշադրության կենտրոնում է պահվել ոստիկանության տարածքային բաժինների պետերի, նրանց տեղակալների և հետաքննիչների համար կազմակերպվող ամենամսյա ծառայողական-մասնագիտական պարապմունքների անցկացման գործընթացը:

Ոստիկանության գործունեությունը կանոնակարգող իրավական համակարգի կատարելագործման նպատակով ընդունվել է 5 օրենք, ՀՀ կառավարության՝ 39 և ՀՀ վարչապետի՝ 2 որոշում, ՀՀ ոստիկանության պետի՝ 11 նորմատիվ հրաման:

Հանցագործությունների նախականխման, կանխման, բացահայտման և հետախուզվողների հայտնաբերման աշխատանքներում օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմինների աշխատանքի արդյունավետությունը բարձրացնելու նպատակով ՀՀ ոստիկանության քրեական հետախուզության գլխավոր վարչությունում կազմավորվել է օպերատիվ-հետախուզական տեղեկատվության վարչություն, որն իր մեջ ներառում է օպերատիվ տեղեկատվության համակարգի ձևավորման, արտագերատեսչական կապերի և դիմապատկերի միջոցով նույնականացման, օպերատիվ տեղեկատվության վերլուծության և օպերատիվ տեղեկատվության անվտանգության ապահովման և վերահսկողության բաժինները:

Ձեռք է բերվել դիմապատկերի միջոցով անձանց նույնացման մոդուլի կիրառմամբ համակարգ, որը հնարավորություն է տալիս անձանց նույնացնել ինչպես լուսանկարի, այնպես էլ դիմապատկերի, տեսահոսքի, տեսանյութի և բառացի նկարագրության հիման վրա ստեղծված պատկերի միջոցով:

Տեխնիկական միջոցներով պահպանության պատշաճ ծառայություն իրականացնելու, ինչպես նաև առկա սահմանափակ ուժերն ու միջոցները խնայողաբար օգտագործելու համար 2016 թվականի հունվար ամսից սկսվել են «Գլոբալ ցանցի» կառուցման, պահպանվող օբյեկտներում թվով 100 հատ «Տվյալների հաղորդման» սարքերի տեղադրման աշխատանքները Երևան քաղաքի բաժինների կողմից պահպանվող օբյեկտներում, իսկ հետագայում նաև մարզերի տարածքային բաժին-բաժանմունքների կողմից պահպանվող օբյեկտներում:

Պետական հատվածի արդիականացման երրորդ ծրագրի շրջանակներում 2016 թվականից մեկնարկել են Երևան քաղաքի օպերատիվ կառավարման կենտրոնի օրինակով Գյումրի և Վանաձոր քաղաքներում նմանատիպ կենտրոններ ստեղծելու աշխատանքները, որոնք ներկայումս գտնվում են ընթացքի մեջ:

Համայնքային ոստիկանության աշխատանքների արդյունավետության հետագա բարձրացման նպատակով 2016 թվականին կառուցվել և շահագործման է հանձնվել համայնքային ոստիկանության նոր 4 հենակետ, որից 2-ը՝ Երևանում, իսկ 2–ը՝ մարզերում (Վանաձոր և Հրազդան):

Զգալի աշխատանքներ են կատարվել թմրամոլության և թմրամիջոցների ապօրինի շրջանառության դեմ պայքարի 2016 թվականի միջոցառումների ծրագրի շրջանակներում:

Ճանապարհային երթևեկության անվտանգության ոլորտ: Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մակարդակի բարձրացման, մահվան ելքով ճանապարհատրանսպորտային պատահարների քանակի նվազեցման նպատակով շարունակվել են երթևեկության կազմակերպման միջոցների արդիականացման, քարոզչական-նախականխիչ միջոցառումները: Մասնավորապես՝ ձեռք են բերվել ապակիների լուսաթափանցելիությունը չափող սարքեր, ճանապարհապարեկային ծառայության տեսչական կազմի համազգեստին ամրացվել են տեսախցիկներ, որոնցով վերահսկվում են ինչպես ոստիկան-վարորդ փոխհարաբերությունները, այնպես էլ ոստիկանի ամբողջ ծառայությունը: Շահագործման է հանձնվել բանկերում, վճարային կազմակերպություններում և վճարային տերմինալներով վարչական տուգանքների վճարման ժամանակ վարչական տույժ նշանակելու մասին որոշումը և վճարելիք գումարն առցանց եղանակով ստուգելու և վճարման փաստը հավաստող հաղորդագրությունն ստանալու ծրագրային համակարգը, որը բացառում է վճարումների չնույնականացումը, իսկ դրա արդյունքում՝ վճարված տուգանքները հարկադիր կատարման ներկայացնելը: Ճանապարհային ոստիկանության Փարաքարի անշարժ

պահակետում ևս տեղադրվել է հետախուզման մեջ գտնվող տրանսպորտային միջոցների հայտնաբերման նպատակով օգտագործվող համարանիշների ավտոմատ ճանաչման համակարգ:

Անձնագրային և վիզաների ոլորտում քաղաքացիներին մատուցվող ծառայությունների որակը բարելավելու, վարչարարությունը պարզեցնելու, ինչպես նաև տվյալ բնագավառը կանոնակարգող իրավական ակտերում առկա անհամապատասխանությունները վերացնելու և իրավակիրառ պրակտիկայում վարչական մարմնի գործունեության ընթացքում հայեցողական լիազորությունների չարաշահման ռիսկերը նվազեցնելու նպատակով 2016 թվականին կատարվել են մի շարք օրենսդրական փոփոխություններ:

Հաշվետու տարում ամբողջությամբ ավարտվել է ԱՎՎ բոլոր սահմանային անցման կետերում անձնագրում օտարերկրյա պետությունում վավերականության նշում կատարելու և վավերականության ժամկետը երկարաձգելու ծառայության ներդրման գործընթացը: Կատարվել են նաև կազմ-հաստիքային փոփոխություններ, որի արդյունքում ապահովվել է սպասարկման «Մեկ պատուհանի» սկզբունքով համակարգի լիարժեք գործունեունեությունը (Բագրատաշեն, Բավրա, Գոգավան):

Ոստիկանության ծառայողների աշխատանքային պայմանների բարելավման և աշխատանքի արդյունավետության բարձրացման նպատակով վերանորոգման աշխատանքներ են իրականացվել ՀՀ ոստիկանության մի շարք մասնաշենքերում, ստորաբաժանումները հնարավորինս հագեցվել են գույքով, համակարգիչներով և ապահովվել համացանցային կապով: Շահագործման է հանձնվել Դավիթաշենի բաժանմունքի նոր վարչական շենքը: Շարունակվել են Կումայրիի ոստիկանության բաժնի նոր շենքի շինարարական աշխատանքները, որոնք նախատեսվում է ավարտել 2017 թվականին:

Ոստիկանության ծառայողների մասնագիտական գիտելիքների զարգացման նպատակով «ՀՀ ոստիկանության կրթահամալիր» ՊՈԱԿ-ում ներդրվել է էլեկտրոնային քարտադարան:

Միջազգային համագործակցության ոլորտ: ՀՀ իրավապահ գերատեսչություններն ինտեգրվել են Ինտերպոլի հեռահաղորդակցման 1-24/7 համակարգին: Ինտերպոլի գլխավոր քարտուղարության կողմից օգտագործման իրավունքով ՀՀ-ում Ինտերպոլի Ազգային կենտրոնական բյուրոյին (ԱԿԲ) տրամադրվել է ԴՆԹ տվյալների նույնականացման ծրագրի ապահովման փաթեթ՝ ոստիկանության ՓՔՎ-ում ԴՆԹ պրոֆիլների պահոց ստեղծելու նպատակով:

ՀԱՊԿ անդամ-պետությունների օպերատիվ արձագանքման հավաքական ուժերի կազմում ներգրավված հատուկ նշանակության ուժերի, ներքին գործերի և ոստիկանության ստորաբաժանումների մասնակցությամբ մայիսին «Բաղրամյան» զորավարժարանում անց է կացվել «Կոբալտ-2016» մարտավարամասնագիտական զորավարժությունը:

Շարունակվում է սերտ երկկողմ համագործակցությունը Ռուսաստանի Դաշնության, Վրաստանի, Լեհաստանի, Ֆրանսիայի, Չինաստանի և Արաբական Միացյալ Էմիրությունների գործընկերների հետ:

ՀՀ ոստիկանության գործունեության թափանցիկության, դրա վերաբերյալ հանրային իրազեկվածության բարձրացման նպատակով ոստիկանության ծառայողների մասնակցությամբ տարբեր միջազգային և հասարակական կազմակերպությունների հետ կազմակերպվել են իրավապահ ոլորտին առնչվող մի շարք դասընթացներ, սեմինարներ և հանդիպումներ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ 2016 ԹՎԱԿԱՆԻՆ

2016 թվականի տարեկան տվյալների ամփոփումը ցույց տվեց, որ տնտեսության զարգացման միտումները նախորդ տարվա համեմատ դանդաղել են: Տարվա առաջին երեք ամիսներին տնտեսական աճը դրսևորեց արագացման միտումներ, սակայն մինչև տարեվերջ այն էապես դանդաղեց և կազմեց ընդամենը 0.2%՝ կրելով հիմնական գործընկեր երկրների տնտեսական անբարենպաստ զարգացումների, մետաղների միջազգային գների նվազման, Ռուսաստանից ներհոսող դրամական փոխանցումների կրճատման և, դրա արդյունքում, տնօրինվող եկամուտների դեռևս ցածր մակարդակի ազդեցությունը, որոնց ՀՀ կառավարությունն արձագանքեց հակացիկլային հարկաբյուջետային քաղաքականությամբ:

2016 թվականին միջին գնանկումը կազմել է 1.4%: Արձանագրվել է պետական բյուջեի եկամուտների անվանական 0.3% աճ, ծախսերի՝ 2.8% աճ: Ամբողջական պահանջարկի խթանման և մասնավոր ներդրումների թույլ ակտիվության բացասական հետևանքները մեղմելու նպատակով 2016 թվականի ընթացքում իրականացվել է ընդլայնող հարկաբյուջետային քաղաքականություն: Արդյունքում, պետական բյուջեի պակասուրդը տարվա արդյունքներով կազմել է ՀՆԱ-ի 5.5%-ը:

Համախառն առաջարկ

2016 թվականին արտաքին աշխարհից եկող ոչ բարենպաստ տնտեսական զարգացումների՝ գործընկեր երկրներում տնտեսական ակտիվության և հումքային ապրանքների գների նվազման պայմաններում, արձանագրվել է տնտեսական աճի դանդաղում: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ գրանցվել է ՀՆԱ-ի 0.2% աճ, ինչը զիջում է նախորդ տարվա ցուցանիշը 2.8 տոկոսային կետով: Ընդ որում՝ ՀՆԱ-ի աճին դրականորեն են նպաստել արդյունաբերության (0.8 տոկոսային կետ) և ծառայությունների (1.9 տոկոսային կետ) ճյուղերը, իսկ գյուղատնտեսությունը (-1.0 տոկոսային կետ) և շինարարությունը (-1.0 տոկոսային կետ) տնտեսական աճի վրա ունեցել են բացասական ազդեցություն:

Գծապատկեր 1. 2015-2016 թվականներին տնտեսության ճյուղերի ավելացված արժեքների նպաստումները ՀՆԱ-ի իրական աճին, տոկոսային կետ





2016 թվականին արդյունաբերությունն[1] աճել է՝ պայմանավորված մշակող և հանքագործական արդյունաբերության աճով: Արձանագրվել է արդյունաբերական արտադրանքի թողարկման ծավալի 6.7% աճ: Արդյունաբերությանը հիմնականում նպաստել են մշակող արդյունաբերության՝ 7.7%, ինչպես նաև հանքագործական արդյունաբերության 8.3% աճերը:

Մշակող արդյունաբերության աճն էապես պայմանավորված էր արտաքին շուկայում իրացված ապրանքների աճով: Մշակող արդյունաբերությունն աճել է 7.7%-ով, ինչը պայմանավորված է եղել հիմնականում ծխախոտային արտադրատեսակների (23.5%) և ոսկերչական արտադրատեսակների (97.7%) աճերով: Ծխախոտային արտադրատեսակների արտադրության աճը պայմանավորված է եղել ծխախոտի արտահանման ծավալների աճով: Ոսկերչական արտադրատեսակների արտադրության աճը նույնպես պայմանավորված է եղել արտահանման ծավալների աճով: Սննդամթերքի (2.6%) և խմիչքների (7.4%) արտադրության ծավալները նույնպես դրականորեն են նպաստել մշակող արդյունաբերության աճին:

Էլեկտրաէներգիայի և ջրամատակարարման ճյուղերն աճի ցուցանիշներ են արձանագրել: Էլեկտրաէներգիայի և ջրամատակարարման ճյուղերում արձանագրվել է համապատասխանաբար 2.0% և 7.0% աճ: Հատկանշական է, որ ոլորտի աճն ապահովվել է էլեկտրաէներգիայի բաշխման էական աճով, իսկ էլեկտրաէներգիայի արտադրությունը նվազել է 6.2%-ով: Էլեկտրաէներգիայի և ջերմաէներգիայի արտադրության նվազումը պայմանավորված է եղել հիմնականում ՀԱԷԿ-ի կողմից արտադրված էլեկտրաէներգիայի՝ 14.6% և ՋԵԿ-երի կողմից արտադրված էլեկտրաէներգիայի 7.8% նվազմամբ: Միևնույն ժամանակ ՀԷԿ-երի արտադրության ծավալներն աճել են 6.6%-ով:

[1] Այսուհետ ներկայացված են ճյուղերի համախառն թողարկումների ցուցանիշները:

Գյուղատնտեսությունը նվազել է՝ պայմանավորված բուսաբուծության նվազմամբ: 2016 թվականին գյուղատնտեսության համախառն արտադրանքն իրական արտահայտությամբ նվազել է 5%-ով: Գյուղատնտեսության նվազումը պայմանավորված է եղել բուսաբուծության 11.7% նվազմամբ: Բուսաբուծության նվազմանն ամենամեծ նպաստումն են ունեցել պտուղ, հատապտղի և խաղողի համապատասխանաբար 37.2% և 42.2% նվազումները:

Միևնույն ժամանակ, անասնաբուծությունը և ձկնորսությունը դրականորեն են նպաստել գյուղատնտեսությանը՝ աճելով համապատասխանաբար 4.7%-ով և 3.0%-ով: Անասնաբուծության ճյուղի աճը պայմանավորված է եղել հիմնականում մսի արտադրության 6.2% աճով: Կաթի և ձվի արտադրությունները նույնպես աճել են՝ համապատասխանաբար 3.5%-ով և 5.3%-ով:

Շինարարության ծավալների նվազումը խորացել է: 2016 թվականին ֆինանսավորման բոլոր աղբյուրների հաշվին իրականացված շինարարության ծավալները նախորդ տարվա նկատմամբ նվազել են 10.8%-ով, ինչը հիմնականում պայմանավորված է եղել պետական բյուջեի (36.9%, առանց արտաքին աղբյուրներից տրամադրված միջոցների), կազմակերպությունների (8.6%), բնակչության (11.6%), ինչպես նաև մարդասիրական օգնության միջոցների (60.3%) հաշվին իրականացված շինարարության ծավալների նվազմամբ: Շինարարության նվազմանը հակազդել է միջազգային վարկերի հաշվին իրականացվող շինարարության աճը (28.3%):

Շինարարության նվազումը, ըստ տնտեսական գործունեության տեսակների, 2016 թվականին հիմնականում պայմանավորված է եղել կացության և հանրային սննդի կազմակերպում (79.9%), անշարժ գույքի հետ կապված (15.3%), ջրամատակարարում, կոյուղի, թափոնների կառավարում և վերամշակում (43.3%), ինչպես նաև կրթություն (49.7%) գործունեության տեսակների մասով իրականացված շինարարության ծավալների նվազմամբ: Շինարարության նվազմանը հիմնականում հակազդել են էլեկտրականության, գազի, գոլորշու և լավորակ օդի մատակարարում (54.6%), գյուղատնտեսություն, անտառային տնտեսություն և ձկնորսություն (55.8%), հանքագործական արդյունաբերություն և բաց հանքերի շահագործում (89.4%), ինչպես նաև մշակող արդյունաբերության (61.7%) ոլորտներում իրականացված շինարարության աճը:

Ծառայություններն աճել են, առևտուրը՝ վերականգնվել: 2016 թվականի ընթացքում մատուցված ծառայությունների ծավալը նախորդ տարվա նկատմամբ աճել է 7.1%-ով, ինչը հիմնականում պայմանավորված է եղել մշակույթ, զվարճություններ և հանգիստ (22.2%), տրանսպորտ (17.9%, հատկապես՝ ցամաքային տրանսպորտ), ինչպես նաև ֆինանսական և ապահովագրական (3.9%) գործունեության տեսակների հետ կապված ծառայությունների աճով: Ծառայությունների աճին չնչին հակազդել է մասնագիտական, գիտական և տեխնիկական

գործունեության հետ կապված ծառայությունների նվազումը (2.9%, հատկապես՝ գիտական հետազոտությունների և մշակումների մասով):

2016 թվականին նախորդ տարվա նկատմամբ առևտրի շրջանառությունն աճել է 1%-ով, ինչը պայմանավորված է եղել մեծածախ առևտրի և ավտոմեքենաների առևտրի շրջանառության ծավալների համապատասխանաբար 4.5% և 22.5% աճերով: Առևտրի շրջանառության աճին հակազդել է մանրածախ առևտրի 2.6% նվազումը, ինչը հիմնականում պայմանավորված է եղել առևտրի այլ օբյեկտների[2] 23.8% նվազմամբ, իսկ խանութներում առևտրի աճը (2.1%) հակազդել է մանրածախ առևտրի շրջանառության ընդհանուր նվազմանը:

Ընդհանուր օգտագործման տրանսպորտով բեռնափոխադրումների ծավալներն աճել են, իսկ ուղևորափոխադրումների ծավալները՝ նվազել:

Բեռնափոխադրումների ծավալն աճել է հիմնականում ավտոմոբիլային տրանսպորտի միջոցներով իրականացված ներհանրապետական փոխադրումների հաշվին: 2016 թվականին նախորդ տարվա համեմատ արձանագրվել է բեռնափոխադրումների ծավալի 85.3% աճ՝ պայմանավորված հիմնականում ավտոմոբիլային տրանսպորտով (2.4 անգամ) ներհան-րապետական բեռնափոխադրումների զգալի աճով: Օդային[3] (հիմնականում արտահանման) և երկաթուղային (հիմնականում ներհանրապետական) տրանսպորտի տեսակներով ևս արձանագրվել է բեռնափոխադրումների աճ (համապատասխանաբար 79.4% և 3.1%), սակայն, պայմանավորված ընդհանուր բեռնափոխադրումների մեջ վերջիններիս փոքր տեսակարար կշռով, բեռնափոխադրումների ընդհանուր աճին նպաստումները եղել են զգալիորեն փոքր: Մայրուղային խողովակաշարային տրանսպորտով բեռնափոխադրումները նվազել են 2.3%-ով՝ փոքր-ինչ հակազդելով ընդհանուր բեռնափոխադրումների ծավալի աճին:

Ուղևորափոխադրումների ծավալը նվազել է՝ պայմանավորված հիմնականում ավտոմոբիլային տրանսպորտային միջոցներով իրականացված փոխադրումներով: 2016 թվականին նախորդ տարվա համեմատ ուղևորափոխադրումների ծավալը նվազել է 1.3%-ով՝ պայմանավորված հիմնականում ավտոմոբիլային տրանսպորտով (հատկապես տաքսիներով) իրականացվող ուղևորափոխադրումների ծավալի 1.5% նվազմամբ: Ուղևորափոխադրումների նվազմանը չնչին հակազդել է օդային և երկաթուղային տրանսպորտով իրականացվող ուղևորափոխադրումների ծավալների աճը (համապատասխանաբար 10.4% և 1.6%):

Կապի ծառայությունները նվազման միտում են դրսևորել: 2016 թվականին կապի ծառայություններից ստացված հասույթը նախորդ տարվա նկատմամբ նվազել է 9.5%-ով, ինչը

[2] Այն ներառում է շարժիչային և կենցաղային վառելիքի մանրածախ առևտրի կետերը:
[3] Այն իր մեջ ներառում է նաև այլ երկրների ավիաընկերությունների ինքնաթիռներով իրականացված բեռնափոխա-դրումները:

հիմնականում պայմանավորված է եղել հեռահաղորդակցության ծառայությունների 21.5%-ով կրճատմամբ՝ հիմնականում պայմանավորված բջջային հեռահաղորդակցման ծառայությունների 16% նվազմամբ:

Աշխատանքի շուկա

Իրական և անվանական աշխատավարձերն աճել են: 2016 թվականին միջին ամսական անվանական աշխատավարձը 2015 թվականի նկատմամբ աճել է 2.3%-ով՝ կազմելով 188851 դրամ[4]: Միջին ամսական անվանական աշխատավարձը պետական հատվածում նվազել է 1.2%-ով՝ կազմելով 162,983 դրամ, իսկ ոչ պետական հատվածում աճել է 5.0%-ով՝ կազմելով՝ 222,699 դրամ: Իրական աշխատավարձը 2015 թվականի համեմատ աճել է 3.7%-ով, իսկ աշխատուժի արտադրողականությունն իրական արտահայտությամբ աճել է 6.8%-ով:

Գործազրկության մակարդակը 2016 թվականին նվազման միտում է ցուցաբերել՝ նվազելով 0.5 տոկոսային կետով և կազմելով 18.0%:

Համախառն պահանջարկ

2016 թվականի տնտեսական աճն ուղեկցվել է սպառման վերականգնմամբ և նախորդ տարվա նկատմամբ զուտ արտահանման բարելավմամբ:

Վերջնական սպառումն աճել է՝ պայմանավորված և՛ մասնավոր, և՛ պետական հատվածի սպառման աճով: Առևտրի վերականգնման և սպառողների վստահության բարելավման պայմաններում սպառումը նախորդ տարվա նկատմամբ իրական արտահայտությամբ աճել է 1.4%-ով: Ընդ որում՝ մասնավոր սպառումն աճել է 1.0%-ով, իսկ պետականը՝ 3.8%-ով:

Կապիտալ ներդրումները նվազել են՝ պայմանավորված մասնավոր ներդրումների նվազմամբ: 2016 թվականին կապիտալ ներդրումները նախորդ տարվա նկատմամբ իրական արտահայտությամբ նվազել են 8.5%-ով՝ պայմանավորված մասնավոր ներդրումների 12.1% իրական նվազմամբ: Մասնավոր ներդրումների թույլ ակտիվության բացասական հետևանքները մեղմելու նպատակով իրականացվել է խթանող հարկաբյուջետային քաղաքականություն, որի արդյունքում 2016 թվականին պետական ներդրումներն իրական արտահայտությամբ աճել են 9.1%-ով:

Ներդրումների փոփոխությանը դրականորեն են նպաստել գյուղատնտեսության և արդյունաբերության ճյուղում կատարված ներդրումների աճը, բացասական նպաստում է ունեցել ծառայությունների ճյուղում կատարված ներդրումների նվազումը[5]:

---

[4] Ցուցանիշը նախնական է: Ներառված չեն փոքր և գերփոքր կազմակերպությունների տվյալները:

[5] Ներդրումների ճյուղային կառուցվածքի ցուցանիշները վերաբերում են ներդրումների կապիտալ շինարարությանն ուղղվող մասին: Ավելի մանրամասն տես «Շինարարություն» հատվածում:

Զուտ արտահանումը բարելավվել է՝ հիմնականում պայմանավորված արտահանման՝ ներմուծման համեմատ առաջանցիկ աճով: 2016 թվականին ապրանքների և ծառայությունների արտահանման իրական դրամային ծավալները նախորդ տարվա համեմատ աճել են 19.2%-ով՝ հիմնականում պայմանավորված արտահանման մրցունակության բարելավմամբ: Ապրանքների և ծառայությունների ներմուծումն իրական արտահայտությամբ աճել է 8.8%-ով, ինչը հիմնականում պայմանավորված է եղել բնակչության տնօրինվող եկամտի և վարկավորման ծավալների աճով:

Գներ և սակագներ

2016 թվականին պահպանվեց նախորդ տարվա կեսից սկիզբ առած գնանկումային միջավայրը: 2016 թվականին միջին գնանկումը կազմեց 1.4%, որին հիմնականում նպաստեցին ներքին թույլ պահանջարկը, միջազգային շուկաներում որոշ ապրանքների գծով ձևավորված գների ցածր մակարդակը, ինչպես նաև գյուղատնտեսության ճյուղի զարգացումներով պայմանավորված՝ պարենային ապրանքների ցածր գների ձևավորումը: 2016 թվականի առաջին եռամսյակում գնանկումային միջավայրը խորացել է և պահպանվել հաջորդող երկու եռամսյակներում, սակայն չորրորդ եռամսյակում այն որոշ չափով մեղմվել է, և տարվերջին 12-ամսյա գնանկումը կազմել է 1.1%:

Գծապատկեր 2. 2015-2016 թվականներին 12-ամսյա գնաճի նպաստումները 3 խոշոր ապրանքախմբերով, տոկոսային կետ





ՀՀ սպառողական շուկայում արձանագրված 1.1% 12-ամսյա գնանկմանը նպաստել են բոլոր խոշոր ապրանքախմբերը: 12-ամսյա գնանկումն առավելապես պայմանավորվել է պարենային ապրանքների (ներառյալ ոգելից խմիչքը և ծխախոտ) ապրանքախմբում արձանագրված 0.2% գնանկմամբ (բացասական նպաստումը գնաճին՝ 0.1 տոկոսային կետ), ոչ պարենային ապրանքների խմբում արձանագրված 3.4% գնանկմամբ (բացասական նպաստումը գնաճին՝ 0.8 տոկոսային կետ)

և բնակչությանը մատուցված ծառայությունների ոլորտում արձանագրված սակագների 0.7% նվազմամբ (բացասական նպաստումը գնաճին՝ 0.2 տոկոսային կետ):

Տարվա ընթացքում ՀՀ ԿԲ-ը արձագանքել է գնանկումային միջավայրին՝ իրականացնելով ընդլայնող դրամավարկային քաղաքականություն: Այսպես. վերաֆինանսավորման տոկոսադրույքն իջեցվել է 2.5 տոկոսային կետով՝ դեկտեմբերի վերջին կազմելով 6.25%:

Արտաքին հատված

Ընթացիկ հաշվի պակասուրդը մնացել է նախորդ տարվա ցածր մակարդակում: 2016 թվականին տնտեսության արտաքին հատվածը բնութագրող ցուցանիշների բարելավումը շարունակվել է. պահպանվել են արտահանման բարձր աճի տեմպերը, ինչին զուգընթաց տարվա արդյունքներով գրանցվել է ներմուծման ցածր աճի տեմպ:

Ապրանքների և ծառայությունների հաշվեկշռի բարելավման միտումը պայմանավորվել է ներմուծման աճի համեմատ արտահանման առաջանցիկ աճով (համապատասխանաբար 3.4% և 11.6%): Տնտեսություն ներհոսող դրամական փոխանցումների ծավալները 2016 թվականին կրճատվել են 8.6%-ով՝ շարունակելով նախորդ երկու տարիների կրճատման միտումը: Նշված գործոններով պայմանավորված՝ ընթացիկ հաշվի պակասուրդը կազմել է ՀՆԱ-ի 2.7%-ը և պահպանել է նախորդ տարվա մակարդակը:

Գծապատկեր 3. Ընթացիկ հաշվի դինամիկան և բաղադրատարրերը, % ՀՆԱ-ի նկատման



Ապրանքների և ծառայությունների արտահանման կշիռը ՀՆԱ-ում 2016 թվականին կազմել է 33.2%՝ բարելավելով նախորդ տարվա ցուցանիշը 3.4 տոկոսային կետով: Իսկ ապրանքների և

ծառայությունների ներմուծման մասնաբաժինը կազմել է 43.3%-ը՝ նախորդ տարվա 42%-ի դիմաց: Դրամական փոխանցումները տարվա արդյունքներով կազմել են ՀՆԱ-ի 9.4%-ը՝ մոտենալով 2000 թվականի պատմական ամենացածր մակարդակին:

Դոլարային արտահայտությամբ արտահանման[6] զգալի աճով պայմանավորված՝ 2016 թվականին ավելացել է արտաքին առևտրաշրջանառությունը և կրճատվել առևտրային հաշվեկշռի բացասական մնացորդը: Ապրանքների արտաքին առևտրի բացասական մնացորդը նախորդ տարվա նկատմամբ բարելավվել է 13.9%-ով՝ կազմելով 1509.5 մլն ԱՄՆ դոլար:

Գծապատկեր 4. Առևտրային հաշվեկշռի դինամիկան (մլն ԱՄՆ դոլար)



Արտաքին ապրանքաշրջանառությունը 2016 թվականին կազմել է 5075.3 մլն ԱՄՆ դոլար՝ նախորդ տարվա համեմատ աճելով 7.4%-ով: Հաշվետու ժամանակահատվածում տեղի է ունեցել դոլարային արտահայտությամբ արտահանման և ներմուծման ծավալների աճ. արտահանումն աճել է 20%-ով՝ կազմելով 1782.9 մլն ԱՄՆ դոլար, իսկ ներմուծումը՝ 1.6%-ով և կազմել է 3292.4 մլն ԱՄՆ դոլար:

Ներքին թույլ պահանջարկի և հումքային ապրանքների գների նվազման պայմաններում արձանագրվել է ներմուծման ծավալների թույլ աճ: Ներմուծման 1.6% աճի 5 տոկոսային կետը պայմանավորվել է «Մանածագործական իրեր», «Մեքենաներ, սարքավորումներ և մեխանիզմներ» և «Թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ և դրանցից իրեր» ապրանքախմբերով:

[6] Այսուհետ ներկայացված է արտաքին առևտրի (ներմուծում՝ ՍԻՖ գներով) վիճակագրությունն ըստ բեռնամաքսային հայտարարագրերի:

Ներմուծման կառուցվածքում ամենամեծ (18%) կշիռ ունեցող «Հանքահումքային արտադրանք» ապրանքախումբը կրճատել է ներմուծվող ծավալները՝ 1.5 տոկոսային կետով, ինչը հիմնականում պայմանավորված է եղել հումքային ապրանքների գների նվազմամբ: Մեկական տոկոսային կետերով ներմուծման վրա բացասական ազդեցություն են ունեցել նաև «Ոչ թանկարժեք մետաղներ և դրանցից պատրաստված իրեր» և «Վերգետնյա օդային և ջրային տրանսպորտի միջոցներ» ապրանքախմբերը՝ շարունակելով նախորդ տարվա նվազման միտումները:

Տարվա արդյունքներով ըստ ապրանքների լայն տնտեսական դասակարգման[7] ներմուծման աճին նպաստել են. «Վերջնական սպառման ապրանքները»՝ 2.4 տոկոսային կետով, «Կապիտալ ապրանքները»՝ 0.4 տոկոսային կետով, իսկ «Մարդատար ավտոմեքենաները» և «Միջանկյալ սպառման ապրանքները» հակազդել են ներմուծման աճին՝ համապատասխանաբար 0.9 և 0.2 տոկոսային կետերով:

Հիմնականում պայմանավորված տարածաշրջանային երկրներում պահանջարկի վերականգնմամբ և տնտեսության մրցունակության բարձրացմամբ՝ 2016 թվականին արձանագրվել է արտահանման երկնիշ աճ: Դեպի ԵԱՏՄ անդամ պետություններ ՀՀ արտահանման ծավալները զգալիորեն աճել են՝ կրելով հիմնական գործընկեր երկրների տնտեսական զարգացումների ազդեցությունը: 2016 թվականի արտահանման 20% աճին հիմնականում նպաստել են «Թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ և դրանցից իրեր» (9.6 տոկոսային կետ), «Պատրաստի սննդի արտադրանք» (6.3 տոկոսային կետ) և «Բուսական ծագման արտադրանք» (2.1 տոկոսային կետ) ապրանքախմբերը:

Զգալի է եղել նաև «Մանածագործական իրեր» խմբի դրական նպաստումը (1.7 տոկոսային կետ), որը վերջին տարիներին դրսևորել է արտահանվող ծավալների կայուն աճի միտում և ըստ գնահատականների արտաքին շուկաներում ունի բացահայտված հարաբերական առավելություն:

Արտահանման աճը զսպել են հիմնականում «Ոչ թանկարժեք մետաղներ և դրանցից պատրաստված իրեր» (0.5 տոկոսային կետ) և «Հանքահումքային արտադրանք» (0.4 տոկոսային կետ) ապրանքախմբերը, ինչը մասամբ պայմանավորվել է միջազգային շուկաներում մետաղների գների նվազմամբ:

Ներմուծման ծածկման գործակիցը գտնվում է իր պատմական առավելագույն մակարդակին՝ հիմնականում պայմանավորված արտահանման երկնիշ աճով: 2016 թվականի ընթացքում ներմուծման ծածկման գործակիցը նախորդ տարվա համեմատ աճել է 5.6 տոկոսային կետով. արտահանման հաշվին ֆինանսավորվել է ապրանքների և ծառայությունների ներմուծման 76.6%-ը:

[7] Ապրանքների լայն տնտեսական դասակարգմամբ (BEC) խմբավորումները ՀՀ ֆինանսների նախարարության գնահատականներն են:

Գծապատկեր 5. Ներմուծման ծածկման գործակիցը, տոկոսներով



2016 թվականին ՀՀ արտաքին առևտրի աշխարհագրությունը փոխվել է ի օգուտ ԵԱՏՄ երկրների: 2016 թվականի արտաքին առևտրաշրջանառության 30.4%-ը բաժին է ընկել ԱՊՀ (որից 27.8%-ը՝ ԵԱՏՄ), 24%-ը՝ ԵՄ և 45.6%-ը՝ այլ երկրներին: ՀՀ արտաքին առևտրաշրջանառության մեջ ԵԱՏՄ երկների կշիռը նախորդ տարվա նկատմամբ աճել է 1.9 տոկոսային կետով, ինչը հիմնականում պայմանավորվել է դեպի այդ երկներ արտահանման 53% աճով (հիմնականում՝ Ռուսաստան):

2016 թվականին ՀՀ խոշոր առևտրային գործընկերների շրջանակում ընդգրկված էին ԱՊՀ երկրներից՝ Ռուսաստանը (առևտրաշրջանառության 26.9%-ը՝ նախորդ տարվա 25.1%-ի դիմաց) և Ուկրաինան (համապատասխանաբար՝ 2.2% և 2.8%), իսկ ԵՄ և այլ երկրներից՝ Չինաստանը (8.9% և 10.2%), Գերմանիան (6.4% և 7.2%), Իրանը (4.7% և 5.9%), Վրաստանը (4.8% և 4.1%), Իտալիան (3.2% և 3.8%), ԱՄՆ-ն (2.5% և 3.4%), Թուրքիան (3.2% և 2.9%), Կանադան (3% և 2.6%), Իրաքը (2.7% և 2.8%): Հանրապետության թվով 38 հիմնական գործընկեր երկրները մեծամասամբ (89.5%-ով) հանդիսանում են ԱՀԿ անդամ պետություններ:

ՀՀ դրամը շարունակել է արժեզրկվել ԱՄՆ դոլարի նկատմամբ: Չնայած 2016 թվականի տարեսկզբից նկատվող արժևորմանը՝ 2016 թվականի չորրորդ եռամսյակում ԱՄՆ դոլարի նկատմամբ ՀՀ դրամի փոխարժեքը դրսևորել է արժեզրկման միտում: Արդյունքում 2016 թվականի դեկտեմբեր ամսվա միջին փոխարժեքը կազմել է 482.8 դրամ ԱՄՆ դոլարի դիմաց, որը նախորդ տարվա դեկտեմբեր ամսին ձևավորված միջինի (482.9) նկատմամբ արժեզրկվել է փոքր չափով՝ 0.02%-ով, իսկ նախորդ ամսվա միջինի նկատմամբ՝ 0.9%-ով:

2016 թվականի տարեկան միջին փոխարժեքը կազմել է 480.5 դրամ մեկ ԱՄՆ դոլարի դիմաց՝ նախորդ տարվա (477.9) նկատմամբ արժեզրկվելով 0.5%-ով՝ 2015 թվականի համապատասխան ցուցանիշի 13% արժեզրկման դիմաց:

Դրամավարկային հատված և ֆինանսական շուկա

2016 թվականին փողի բազան ընդլայնվել է ՀՀ ԿԲ զուտ արտաքին ակտիվների համալրման հաշվին, ինչը զուգորդվել է զուտ ներքին ակտիվների նվազմամբ: 2016 թվականի տարեվերջին փողի բազան կազմել է շուրջ 1042.3 մլրդ դրամ՝ տարեսկզբի համեմատ աճելով 13.1%-ով: Ընդ որում, զուտ արտաքին ակտիվներն աճել են 35%-ով, իսկ զուտ ներքին ակտիվները նվազել են 12.6%-ով:

Փողի բազայի աճին հիմնականում նպաստել են ՀՀ ԿԲ-ում արտարժութային թղթակցային հաշիվները և ԿԲ-ից դուրս կանխիկը: Այսպես, փողի բազայում ԿԲ-ից դուրս կանխիկն աճել է 10.1%-ով (նպաստումը փողի բազայի աճին կազմել է 4.5 տոկոսային կետ), իսկ պարտադիր պահուստները դրամով նվազել են 2.3%-ով և արտարժույթով՝ աճել 40%-ով (նպաստումը փողի բազայում կազմել է համապատասխանաբար -0.8 և 7.9 տոկոսային կետ):

Փողի զանգվածի աճը արագացման միտում է ցուցաբերել: 2016 թվականի տարեվերջին փողի զանգվածը կազմել է 2180.1 մլրդ դրամ՝ տարեսկզբի նկատմամբ աճելով 17.5%-ով, նախորդ տարվա 10.8%-ի համեմատ: Ընդ որում, զուտ արտաքին ակտիվների աճը կազմել է 31.1%, իսկ զուտ ներքին ակտիվներինը՝ 11.3%:

Փողի զանգվածի աճը պայմանավորվել է հիմնականում դրամային դեպոզիտների աճով: Փողի զանգվածի աճին բանկային համակարգից դուրս կանխիկը նպաստել է 2.4 տոկոսային կետով, իսկ դրամային և արտարժութով ավանդները՝ համապատասխանաբար 9 և 6 տոկոսային կետերով:

Գծապատկեր 6. 2016 թվականին փողի բազայի և փողի զանգվածի աճին նպաստումները, տոկոսային կետ





2016 թվականի ընթացքում դոլարայնացման մակարդակը նվազել է՝ ի տարբերություն 2015 թվականին արձանագրված աճի: Ռեզիդենտների արտարժութային ավանդներ/փողի զանգված հարաբերակցությունը նախորդ տարվա դեկտեմբերի նկատմամբ նվազել է 3 տոկոսային կետով՝ կազմելով 49.2%:

2016 թվականին ավանդների ծավալների աճն արագացել է նախորդ տարվա համեմատ: Առևտրային բանկերի կողմից ռեզիդենտներից և ոչ ռեզիդենտներից ներգրավված ավանդները 2016 թվականին նախորդ տարվա նկատմամբ աճել են 23.7%-ով, որին 13.4 տոկոսային կետով նպաստել է դրամային ավանդների, 10.3 տոկոսային կետով՝ արտարժույթային ավանդների աճը:

2016 թվականին վարկերի ծավալներն աճել են նախորդ տարվա նվազման համեմատ: Առևտրային բանկերի կողմից ռեզիդենտներին և ոչ ռեզիդենտներին տրամադրված վարկերի ծավալները 2016 թվականին նախորդ տարվա նկատմամբ զգալիորեն աճել են՝ 14.9%[8]-ով, 2015 թվականի 3.1% նվազման դիմաց (վարկավորման ընդհանուր կառուցվածքում գերակշռում են արտարժույթով վարկերը՝ 63%): Վարկերի աճին 8.16 տոկոսային կետով նպաստել է դրամային վարկերի և 6.77 տոկոսային կետով՝ արտարժութային վարկերի աճը: Վարկերի աճին հիմնականում դրականորեն են նպաստել արդյունաբերության, սպասարկման ոլորտի և սպառողական վարկերի

[8] Ընդգրկված չեն կուտակված տոկոսները: Վարկերի մեջ ներառված են նաև ֆակտորինգային, լիզինգային գործառնությունները և ռեպո համաձայնագրերը:

աճերը, իսկ գյուղատնտեսության, շինարարության ու առևտրի ոլորտին տրամադրված վարկերը նվազել են՝ բացասաբար նպաստելով վարկերի աճին:

Գծապատկեր 7. 2015-2016 թվականներին վարկերի և ավանդների ծավալների աճը, (նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ, %)





Ֆինանսական շուկայում արտարժույթով և դրամով միջին կշռված մինչև 1 տարի ժամկետով տոկոսադրույքների միջև սպրեդը 2016 թվականին մնացել է անփոփոխ՝ կազմելով շուրջ 4.5 տոկոսային կետ: Ընդ որում դրամով վարկերի և ավանդների միջև տոկոսադրուքների սպրեդն աճել է 2.3 տոկոսային կետով՝ կազմելով 5.7, իսկ արտարժույթով սպրեդը նվազել է 0.8-ով՝ կազմելով 3.7 տոկոսային կետ:

Ավանդների և վարկերի տոկոսադրույքները նվազման միտումներ են դրսևորել: 2016 թվականին ՀՀ դրամային ավանդների (մինչև մեկ տարի ժամկետով) միջին տարեկան տոկոսադրույքը կազմել է 11.6%՝ նախորդ տարվա համեմատ նվազելով 2.5 տոկոսային կետով: ՀՀ դրամով վարկավորման (մինչև մեկ տարի ժամկետով) միջին տարեկան տոկոսադրույքը կազմել է 17.4%՝ նվազելով 0.2 տոկոսային կետով:

Արտարժույթով ավանդների (մինչև մեկ տարի ժամկետով) միջին տարեկան տոկոսադրույքը 2016 թվականին կազմել է 5.3%՝ նախորդ տարվա համեմատ նվազելով 0.4 տոկոսային կետով: Արտարժույթով վարկավորման (մինչև մեկ տարի ժամկետով) միջին տարեկան տոկոսադրույքը կազմել է 9%՝ նվազելով 1.3 տոկոսային կետով:

ՀՀ պետական պարտատոմսերի շուկայում նկատվել է ՊՊ տեղաբաշխման միջին կշռված եկամտաբերության նվազում: Նվազումը պայմանավորված է եղել ՀՀ ԿԲ-ի վերաֆինասավորման տոկոսադրույքի նվազմամբ, ինչպես նաև ընդհանուր առմամբ ֆինանսական շուկայի տոկոսադրույքների նվազման միտումներով: 2016 թվականի ընթացքում ՀՀ պետական պարտատոմսերի շուկայում նկատվել է միջին կշռված եկամտաբերության նվազում (շուրջ 3.5 տոկոսային կետով): Այսպես, եթե 2015 թվականին տեղաբաշխված պետական արժեթղթերի միջին կշռված եկամտաբերությունը կազմել է 14.6%, ապա 2016 թվականին այն կազմել է 11.1%: Նույն ժամանակահատվածում տեղաբաշխված պետական արժեթղթերի ծավալը կազմել է 143.9 մլրդ դրամ՝ 2016 թվականի 317.3 մլրդ դրամի դիմաց, իսկ միջին ժամկետայնությունը՝ 2077 օր, 2015 թվականի նույն ժամանակահատվածի 1939-ի համեմատ:

2016 թվականին պետական (շուկայական) պարտատոմսերի նկատմամբ պահանջարկը գերազանցել է թողարկման ցուցանիշը 2.38 անգամ (2015 թվականին՝ 1.67 անգամ), իսկ տեղաբաշխում/թողարկում հարաբերակցության միջին մեծությունը կազմել է 0.98 (2015 թվականին՝ 0.97):

ՀՀ եվրապարտատոմսերի երկրորդային շուկայում ևս նկատվել է միջին կշռված եկամտաբերության նվազում: Միջազգային կապիտալի շուկայում 2013 թվականին 6.25% եկամտաբերությամբ թողարկված պետական արտարժութային պարտատոմսերի եկամտաբերությունը 2016 թվականի տարեվերջին կազմել է 4.99%՝ 2015 թվականի տարեվերջին արձանագրված 6.76%-ի դիմաց: Իսկ 2015 թվականին 7.5% եկամտաբերությամբ թողարկված պետական արտարժութային պարտատոմսերի եկամտաբերությունը 2016 թվականի տարեվերջին կազմել է 6.34%՝ 2015 թվականի տարեվերջին արձանագրված 7.58%-ի դիմաց:

Հարկաբյուջետային հատված

Ներքին տնտեսության թույլ ակտիվության պայմաններում պետական բյուջեի հարկերի և տուրքերի մասնաբաժինը ՀՆԱ-ում փոքր-ինչ բարելավվել է: 2016 թվականի արդյունքներով պետական բյուջեի ընդհանուր եկամուտները կազմել են ՀՆԱ-ի 23.1%-ը՝ նախորդ տարվա 23.2%-ի դիմաց, իսկ հարկերը և տուրքերը՝ ՀՆԱ-ի 21.3%-ը՝ նախորդ տարվա 21.2%-ի դիմաց: Նախորդ տարվա նկատմամբ պետական բյուջեի եկամուտների անվանական աճը կազմել է 0.3%, իսկ հարկերինը և տուրքերինը՝ 1.1%:

Հարկերի և տուրքերի աճին դրականորեն են նպաստել ներքին տնտեսությունից հավաքագրված հարկերը և բացասաբար՝ ներմուծման հարկերը: Այսպես, ներքին տնտեսությունից հավաքագրված հարկերը 1.6 տոկոսային կետով դրականորեն են նպաստել հարկերի և տուրքերի

աճին՝ աճելով 2.4%-ով, իսկ ներմուծման հարկերը (ներառյալ մաքսատուրքը) բացասաբար են նպաստել 0.6 տոկոսային կետով՝ նվազելով 1.6%-ով, որը հիմնականում պայմանավորված էր ԵԱՏՄ անդամ երկրներից ներմուծման 2% նվազման ցուցանիշով:

Գծապատկեր 8. Հարկերի և տուրքերի աճի նպաստումներն ըստ տնտեսության առանձին հատվածների 2015-2016թթ.





2016 թվականին հարկային եկամուտների աճն ապահովվել է ուղղակի հարկերի հաշվին: Հարկերի և տուրքերի տարեկան աճն ըստ հարկատեսակների հիմնականում պայմանավորվել է եկամտային հարկի և շահութահարկի աճով, իսկ բացասական նպաստում է արձանագրվել ավելացված արժեքի հարկի մասով:

Պետական բյուջեի ծախսերը ՀՆԱ-ի նկատմամբ բարելավվել են՝ հիմնականում պայմանավորված ընթացիկ ծախսերով: ՀՆԱ-ի նկատմամբ պետական բյուջեի ծախսերի ցուցանիշը 2016 թվականի արդյունքներով նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ աճել է 0.6 տոկոսային կետով՝ կազմելով 28.6%: Ծախսերի աճին նպաստել են հիմնականում ընթացիկ ծախսերը՝ աճելով 3.5%-ով (նպաստումը՝ 3 տոկոսային կետ), իսկ ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերն աճել են 1.7%-ով՝ ծախսերի աճին նպաստելով 0.2 տոկոսային կետով:

Արդյունքում տնտեսական աճի նվազման ռիսկերի մեղմմանն ուղղված խթանող հարկաբյուջետային քաղաքականության անհրաժեշտությամբ պայմանավորված՝ պետական բյուջեի պակասուրդն աճել է: Պետական բյուջեի պակասուրդը 2016 թվականին կազմել է ՀՆԱ-ի 5.5%-ը՝ նախորդ տարվա 4.8%-ի համեմատ: Պակասուրդի ֆինանսավորման 61.4%-ը կատարվել է արտաքին աղբյուրների միջոցների ներգրավմամբ, որով պայմանավորված՝ 2016 թվականին արտաքին պետական պարտք/ՀՆԱ ցուցանիշը կազմել է 45.9%՝ նախորդ տարվա 41.5%-ի համեմատ:

Արդյունքում կառավարության պարտք/ՀՆԱ ցուցանիշը կազմել է 51.9%, իսկ պետական պարտք/ՀՆԱ ցուցանիշը՝ 56.7%:

Հարկաբյուջետային ազդակը

ՀՀ կառավարությունը տնտեսության թույլ ակտիվությունը խթանելու նպատակով իրականացրել է հակացիկլային հարկաբյուջետային քաղաքականություն: ՀՀ կառավարության խթանող հարկաբյուջետային քաղաքականությունը պայմանավորվել է թե՛ ծախսերի և թե՛ եկամուտների ընդլայնող ազդեցությամբ:

Գծապատկեր 9. Հարկաբյուջետային ազդակը 2009-2016 թվականներին



ՀՀ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԸ

Հայաստանի Հանրապետության 2016 թվականի պետական բյուջեով, ելնելով 2.2% տնտեսական աճի կանխատեսումից, ծրագրվել էր ստանալ շուրջ 1186.3 մլրդ դրամ եկամուտներ, որից 1154.8 մլրդ դրամը՝ ներքին աղբյուրներից, 31.5 մլրդ դրամը՝ արտաքին պաշտոնական դրամաշնորհների տեսքով: Ելնելով օրենսդրության պահանջներից՝ պետության դրամական միջոցների համախմբված հաշվառման նպատակով պետական բյուջեի ծրագրային և փաստացի ցուցանիշներում ներառվել են նաև ՀՀ պետական հիմնարկների համար բացված արտաբյուջետային հաշիվների շրջանառությունը, ինչպես նաև առանց սահմանափակման պետական բյուջեից կատարվող վճարումները: Նշված միջոցները ներառյալ, ինչպես նաև հաշվի առնելով կառավարության լիազորությունների շրջանակներում կատարված մյուս փոփոխությունները՝ ՀՀ պետական բյուջեի եկամուտների ծրագիրն ավելացվել է 92.2 մլրդ դրամով (7.8%-ով) և կազմել շուրջ 1278.5 մլրդ դրամ, որից 1235.5 մլրդ դրամը՝ ներքին աղբյուրներից ստացվող եկամուտների, 43 մլրդ դրամը՝ արտաքին պաշտոնական դրամաշնորհների գծով: 2016 թվականին պետական բյուջեի փաստացի եկամուտները կազմել են 1171.1 մլրդ դրամ, որոնք 91.6%-ով ապահովել են ճշտված ծրագրի կատարումը և 0.3%-ով կամ շուրջ 3.4 մլրդ դրամով գերազանցել նախորդ տարվա փաստացի ցուցանիշը: Ստացված եկամուտներից 1139.7 մլրդ դրամը կազմել են ներքին աղբյուրներից ստացված եկամուտները, 31.4 մլրդ դրամը՝ պաշտոնական դրամաշնորհները, որոնց ծրագիրը կատարվել է համապատասխանաբար 92.2%-ով և 73.1%-ով: Մասնավորապես՝ 92%-ով ապահովվել են հարկային եկամուտները և պետական տուրքերը, 97.3%-ով՝ այլ եկամուտները: Նշենք, որ պետական հիմնարկների արտաբյուջետային եկամուտները կազմել են շուրջ 33.8 մլրդ դրամ կամ կանխատեսված ցուցանիշի 85.1%-ը: Առանց արտաբյուջետային միջոցների՝ պետական բյուջեի եկամուտները կազմում են 1137.3 մլրդ դրամ՝ ապահովելով 91.8% կատարողական:

Գծապատկեր 10. ՀՀ 2016 թվականի պետական բյուջեի եկամուտները



2016 թվականին ՀՆԱ-ի նկատմամբ ՀՀ պետական բյուջեի եկամուտների հարաբերակցությունը կազմել է 23.1%, որը 0.1 տոկոսային կետով զիջել է նախորդ տարվա ցուցանիշը, սակայն 1.3 տոկոսային կետով գերազանցել է կանխատեսված ցուցանիշը:

2015 թվականի համեմատ պետական բյուջեի եկամուտների 0.3%-ով (կամ 3.4 մլրդ դրամով) աճը ձևավորվել է հարկային եկամուտների (ներառյալ պետական տուրքերը) և պաշտոնական դրամաշնորհների համապատասխանաբար 1.1% (11.8 մլրդ դրամ) և 5.1% (1.5 մլրդ դրամ) աճի ու այլ եկամուտների 14.2% (շուրջ 10 մլրդ դրամ) նվազման արդյունքում:

Գծապատկեր 11. ՀՀ պետական բյուջեի եկամուտների աճը, 2015=100%



Արդյունքում 2015 թվականի համեմատ 2016 թվականի պետական բյուջեի եկամուտներում 0.8 տոկոսային կետով ավելացել է հարկային եկամուտների (ներառյալ պետական տուրքերը) և 0.1 տոկոսային կետով՝ պաշտոնական դրամաշնորհների տեսակարար կշիռը, իսկ այլ եկամուտների գծով նույն ցուցանիշը նվազել է 0.9 տոկոսային կետով:

Գծապատկեր 12. ՀՀ պետական բյուջեի եկամուտների կառուցվածքը



<u>Հարկային եկամուտներ և պետական տուրքեր</u>

ՀՀ 2016 թվականի պետական բյուջեի եկամուտների 92.2%-ն ապահովվել է հարկային եկամուտների և պետական տուրքերի հաշվին, որոնք կազմել են 1079.7 մլրդ դրամ և 92%-ով ապահովել ՀՀ կառավարության լիազորությունների շրջանակներում ճշտված տարեկան ծրագիրը: Նշված գումարից 1046.4 մլրդ դրամը կազմել են հարկային եկամուտները, 33.3 մլրդ դրամը՝ պետական տուրքերը:

2016 թվականին ՀՆԱ-ի նկատմամբ հարկային եկամուտների և պետական տուրքերի հարաբերակցության ցուցանիշը կազմել է 21.3%՝ 0.1 տոկոսային կետով գերազանցելով նախորդ տարվա փաստացի և 0.6 տոկոսային կետով՝ հաշվետու տարվա կանխատեսված ցուցանիշը: Հարկային սահմանության գործակիցը 2016 թվականին կազմել է 1.6՝ 2015 թվականի 0.1-ի դիմաց:

2015 թվականի համեմատ հարկային եկամուտները և պետական տուրքերն աճել են 1.1%-ով կամ 11.8 մլրդ դրամով: Ընդ որում, հարկային եկամուտներն աճել են 1.1%-ով կամ շուրջ 10.9 մլրդ դրամով, իսկ պետական տուրքերը՝ 2.8%-ով կամ շուրջ 904.6 մլն դրամով: Նախորդ տարվա համեմատ հարկային եկամուտների և պետական տուրքերի աճը հիմնականում ձևավորվել է շահութահարկի, եկամտային հարկի, ակցիզային հարկի, շրջանառության հարկի, նպատակային սոցիալական վճարների, հանրային ծառայությունների կարգավորման պարտադիր վճարների աճի և

ավելացված արժեքի հարկի, մաքսատուրքի ու բնապահպանական և բնօգտագործման վճարների գծով մուտքերի նվազման արդյունքում:

Գծապատկեր 14. ՀՀ պետական բյուջեի հարկային եկամուտների կառուցվածքը, 2015-2016թթ.



2016 թվականին հարկային եկամուտների և պետական տուրքերի 36.2%-ն ապահովվել է *ավելացված արժեքի հարկի* հաշվին, որը կազմել է շուրջ 391.1 մլրդ դրամ: Նշված գումարից 168.2 մլրդ դրամը ստացվել է ՀՀ սահմանին հարկումից, 222.9 մլրդ դրամը՝ ապրանքների և ծառայությունների ներքին շրջանառությունից: Նախորդ տարվա համեմատ պետական բյուջե մուտքագրված ԱԱՀ-ն նվազել է 7.7%-ով կամ 32.8 մլրդ դրամով: Ընդ որում, մաքսային սահմանին գանձված մուտքերը նվազել են 11.9%-ով (կամ 22.8 մլրդ դրամով), իսկ ներքին շրջանառությունից ստացված մուտքերը՝ 4.3%-ով (կամ 10.1 մլրդ դրամով): ԱԱՀ-ի նվազումը հիմնականում բացատրվում է անբարենպաստ մակրոտնտեսական միջավայրով: 2016 թվականին անվանական ՀՆԱ-ն կանխատեսվել էր 5,442.8 մլրդ դրամ, այնինչ փաստացի արդյունքներով արձանագրվել է ՀՆԱ-ի 5,067.9 մլրդ դրամ մակարդակ, որի վրա ազդեցություն է ունեցել նաև ՀՆԱ-ի ինդեքս-դեֆլյատորի ցածր մակարդակը, որը կանխատեսված 104.0 տոկոսի փոխարեն կազմել է ընդամենը 100.5 տոկոս: ՀՆԱ-ի կանխատեսված և փաստացի ցուցանիշների տարբերությունը կազմում է 374.9 մլրդ դրամ կամ ՀՀ պետական բյուջեի կատարման հիմքում դրված ցուցանիշից 6.9%-ով պակաս: 374.9 մլրդ դրամ ՀՆԱ-ն, այլ հավասար պայմաններում, համարժեք է 29.1 մլրդ դրամ ԱԱՀ-ի՝ հաշվի առնելով ՀՀ 2016 թվականի պետական բյուջեի հիմքում դրված 7.77% ԱԱՀ/ՀՆԱ հարաբերակցությունը (374.9*7.77%):

Ավելացված արժեքի հարկի մուտքերի վրա բացասական ազդեցություն են գործել նաև ներմուծման ծավալների անկումը, ներմուծվող ապրանքների որոշ տեսակների (կվարցային ավազ, կավիճ, կարբոնատներ, պոլիէթիլեն, վինիլացետատ, վառարաններ, կռունկներ, բուլդոզերներ և

այլն) գծով ԱԱՀ-ի հետաձգումը («ԱԱՀ-ի մասին» օրենքի 61-րդ հոդվածի և ՀՀ կառավարության անհատական որոշումների համաձայն հետաձգվել է 12,899 մլն դրամ ԱԱՀ-ի վճարում՝ նախորդ տարվա 9,241 մլն դրամի փոխարեն, այսինքն՝ նախորդ տարվա համեմատ ավել ԱԱՀ է հետաձգվել շուրջ 3,658 մլն դրամի չափով), ինչպես նաև կատարված օրենսդրական փոփոխությունները: Մասնավորապես.

2014 թվականի նոյեմբերի 19-ին ՀՀ Ազգային Ժողովի կողմից ընդունված՝ «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՕ-186-Ն ՀՀ օրենքով (ուժի մեջ է մտել 2015 թվականի հունվարի 1-ից) սահմանվել է, որ ԱԱՀ-ի գծով հաշվանցումներ կատարելու համար նույն օրենքով սահմանված մնացած բոլոր պայմանները բավարարված համարվելու դեպքերում ձեռքբերված ապրանքների ու ստացված ծառայությունների գծով հարկային հաշիվներում առանձնացված ԱԱՀ-ի գումարները 2016 թվականի հունվարի 1-ից առանց մատակարարներին կամ ծառայություն մատուցողներին վճարում կատարելու կարող են հաշվանցել այն անձինք, որոնց կողմից նախորդ օրացուցային տարվա ընթացքում իրականացված՝ «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածի 1-ին, 2-րդ (կամ) 3-րդ կետերով սահմանված գործարքների հարկվող շրջանառությունը (առանց ԱԱՀ-ի) չի գերազանցել 500 միլիոն դրամը:

2015 թվականի մայիսի 7-ին ՀՀ Ազգային Ժողովի կողմից ընդունված՝ «Շրջանառության հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՕ-38-Ն օրենքով (ուժի մեջ է մտել 2015 թվականի հուլիսի 1-ից) բարձրացվել է ավելացված արժեքի հարկով չհարկվող շեմը՝ տարեկան 58.35 մլն դրամի փոխարեն սահմանվելով 115 մլն դրամ: Արդյունքում 2016 թվականին 121.6 մլրդ դրամ շրջանառություն անցել է շրջանառության հարկով հարկման դաշտ, որն այլ հավասար պայմաններում համարժեք է 4.8 մլրդ դրամ ԱԱՀ-ի մուտքերի (121.6*3.94%), եթե հաշվի առնենք, որ 2016 թվականի տարեկան արդյունքներով հաշվարկված ԱԱՀ-ի և ԱԱՀ-ի կրեդիտային շրջանառության հարաբերությունը կազմել է 3.94%:

2015 թվականի նոյեմբերի 24-ին ՀՀ Ազգային Ժողովի կողմից ընդունված՝ «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՕ-160-Ն ՀՀ օրենքով (ուժի մեջ է մտել 2016 թվականի հունվարի 1-ից) սահմանվել է, որ ԱԱՀ-ից ազատվում է ԱՏԳ ԱԱ դասակարգչի 0106 41 000, 0106 90 00 90, 5305 00 000 0, 9406 00 310 0 ծածկագրերին դասվող ապրանքների իրացումը:

2015 թվականի դեկտեմբերի 21-ին ՀՀ Ազգային Ժողովի կողմից ընդունված՝ «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՕ-201-Ն ՀՀ օրենքով (ուժի մեջ է մտել 2016 թվականի հունվարի 9-ից) սահմանվել է, որ ԱԱՀ-ի զրոյական դրույքաչափ կիրառվում է ոչ միայն օդանավակայանում, այլ նաև Հայաստանի

Հանրապետության այլ վայրերում գործող անմաքս առևտրի խանութից միջազգային երթուղիներով մեկնող և ժամանող ուղևորներին ապրանքների մանրածախ վաճառքի, ինչպես նաև այլ հարկ վճարողների կողմից անմաքս առևտրի խանութի կազմակերպչին այդ ապրանքների մատակարարման դեպքերում:

2016 թվականի մարտի 17-ին ՀՀ Ազգային Ժողովի կողմից ընդունված՝ «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում և փոփոխություն կատարելու մասին» ՀՕ-31-Ն ՀՀ օրենքով (ուժի մեջ է մտել 2016 թվականի մարտի 31-ից) սահմանվել է, որ ԱԱՀ-ով հարկվող գործարք չի համարվում անհատ ձեռնարկատեր կամ նոտար չհանդիսացող ֆիզիկական անձանց կողմից ԵՏՄ անդամ պետություններից ավտոմեքենաների ներմուծումը, ինչի հետևանքով 2016 թվականի արդյունքներով 3.7 մլրդ դրամ գումար չի հավաքագրվել ՀՀ պետական բյուջե: Մյուս կողմից, երրորդ երկրներից ներմուծվող ավտոմեքենաների քանակի նվազումը պայմանավորված է ինչպես գնողունակ պահանջարկի նվազմամբ, այնպես էլ նախորդ տարիներին աննախադեպ քանակությամբ (2014թ. ներմուծվել է 46,475, 2015թ.՝ 23,098, 2016թ.՝ 16,714 ավտոմեքենա) ավտոմեքենաների ներմուծմամբ: Բացի այդ, ԵՏՄ-ից ներկրվող ավտոմեքենաների համար ԱԱՀ-ի վերացումը հանգեցրել է երրորդ երկրներից ավտոմեքենաների ներմուծման ծավալների նվազման: Նախորդ տարվա համեմատ երրորդ երկրներից ներմուծված ավտոմեքենաների քանակը նվազել է 6,384 հատով, իսկ դրանց դիմաց կատարված վճարումները՝ 7,619 մլն դրամով:

2015 թվականի նոյեմբերի 24-ին ՀՀ Ազգային Ժողովի կողմից ընդունված՝ «Սահմանամերձ գյուղական համայնքներում իրականացվող գործունեությունը հարկերից ազատելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին ՀՕ-141-Ն օրենքով (ուժի մեջ է մտել 2015 թվականի դեկտեմբերի 10-ից) սահմանվել է, որ սահմանամերձ համայնքներում գործունեություն իրականացնող կազմակերպություններն ու անհատ ձեռնարկատերերը կարող են իրենց գրանցման վայրի հարկային մարմին ներկայացնել օտարման գործարքների մասով ավելացված արժեքի հարկից ազատման արտոնությունից հրաժարվելու վերաբերյալ հայտարարություն և օտարման գործարքների մասով հարկվեն ավելացված արժեքի հարկով:

ՀՀ 2016 թվականի պետական բյուջեի փաստացի հարկային եկամուտների և պետական տուրքերի 11.8%-ն ապահովվել է *շահութահարկի* հաշվին՝ կազմելով 127.2 մլրդ դրամ: Նախորդ տարվա համեմատ շահութահարկի մուտքերն աճել են 22.7%-ով կամ 23.5 մլրդ դրամով: Շահութահարկի աճի հիմնական պատճառ է հանդիսացել, մասնավորապես, 1 կազմակերպության մասով գույքի վաճառքից գոյացած շահույթից 2016 թվականին վճարված ռեզիդենտի շահութահարկը, ինչպես նաև թվով 3 ընկերությունների կողմից մեկանգամյա գործարքներով

պայմանավորված՝ 2016 թվականին վճարված ոչ ռեզիդենտի շահութահարկը, որոնց գումարը կազմել է շուրջ 26.4 մլրդ դրամ՝ նախորդ տարվա 2.8 մլրդ դրամի փոխարեն, կամ զուտ աճը կազմել է 23.6 մլրդ դրամ: Այնուամենայնիվ, անհրաժեշտ ենք համարում նշել, որ վերոնշյալ 4 կազմակերպությունների շահութահարկի գծով մուտքերը բացառելու պարագայում շահութահարկի մուտքերը ոչ թե կաճեին, այլ կնվազեին: Նշվածը պայմանավորված է հիմնականում ՀՆԱ-ի կառուցվածքում շահութահարկի հաշվարկման բազա հանդիսացող տնտեսության ճյուղերում արձանագրված անկման միտումներով, որի ազդեցությունն ըստ գնահատականների կազմում է 7.4 մլրդ դրամ՝ հաշվի առնելով ՀՀ 2016 թվականի պետական բյուջեի հիմքում դրված 1.97% շահութահարկ/ՀՆԱ հարաբերակցությունը (374.9*1.97%): Ընդ որում, անհրաժեշտ է նշել, որ շահութահարկի հաշվարկման բազա հանդիսացող տնտեսության ճյուղերում արձանագրված անկման միտումները հատկապես զգալի են եղել ֆինանսավարկային կազմակերպությունների և օտարերկրյա ներդրումներով կազմակերպությունների համար, որոնց շահութահարկի մուտքերը նվազել են համապատասխանաբար 50.2 տոկոսով կամ շուրջ 6 մլրդ դրամով և 6.8 տոկոսով կամ 380 մլն դրամով:

2014 թվականի դեկտեմբերի 17-ին Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի կողմից ընդունված՝ «Շահութահարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության ՀՕ-246-Ն օրենքով (ուժի մեջ է մտել 2015 թվականի հունվարի 9-ից) սահմանվել է, որ «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի իմաստով եկամուտ և ծախս չեն համարվում «Տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի պետական աջակցության մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով հավաստագրված ռեզիդենտների կողմից հավաստագրի գործողության ժամկետում տեղեկատվական տեխնոլոգիաների իրացումից ստացվող եկամուտները և վերջիններիս ստացման հետ կապված ծախսերը:

2015 թվականի մարտի 3-ին ՀՀ Ազգային Ժողովի կողմից ընդունված՝ «Շահութահարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություն կատարելու մասին» ՀՕ-4-Ն ՀՀ օրենքով (ուժի մեջ է մտել 2015 թվականի մարտի 19-ից) սահմանվել է, որ ՀՀ կառավարության հավանությանն արժանացած արտահանման ծրագիր իրականացնող և այդ ծրագրում ընդգրկված՝ ՀՀ ռեզիդենտ հարկ վճարողների խմբի մեջ մտնող հարկ վճարողի կամ ռեզիդենտ հարկ վճարողի շահութահարկի գումարը հարկվող շահույթի նկատմամբ հաշվարկվում է՝

1) 5 տոկոս դրույքաչափով, եթե հարկ վճարողների խմբի կողմից հաշվետու տարվա ընթացքում ՀՀ տարածքից «Արտահանում» մաքսային ընթացակարգով արտահանված և (կամ) Եվրասիական տնտեսական միության անդամ պետություններ տեղափոխված՝ ապրանքների մաքսային արժեքի, ոչ ռեզիդենտ կազմակերպություններին ՀՀ տարածքից դուրս մատուցված

ծառայությունների և (կամ) ոչ ռեզիդենտ կազմակերպությունների համար ՀՀ տարածքից դուրս կատարված աշխատանքների արժեքի հանրագումարը կազմում է առնվազն 40 մլրդ դրամ,

2) 2 տոկոս դրույքաչափով, եթե հարկ վճարողների խմբի կողմից հաշվետու տարվա ընթացքում ՀՀ տարածքից «Արտահանում» մաքսային ընթացակարգով արտահանված և (կամ) Եվրասիական տնտեսական միության անդամ պետություններ տեղափոխված՝ ապրանքների մաքսային արժեքի, ոչ ռեզիդենտ կազմակերպություններին ՀՀ տարածքից դուրս մատուցված ծառայությունների և (կամ) ոչ ռեզիդենտ կազմակերպությունների համար ՀՀ տարածքից դուրս կատարված աշխատանքների արժեքի հանրագումարը կազմում է առնվազն 50 մլրդ դրամ:

2015 թվականի մայիսի 7-ին ՀՀ Ազգային Ժողովի կողմից ընդունված՝ «Շահութահարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՕ-37-Ն ՀՀ օրենքով (ուժի մեջ է մտել 2015 թվականի հունիսի 13-ից) սահմանվել է, որ ՀՀ կառավարության հավանությանն արժանացած ծրագիր իրականացնող և այդ ծրագրում ընդգրկված՝ ՀՀ ռեզիդենտ հարկ վճարողների խմբի մեջ մտնող հարկ վճարողի կամ ռեզիդենտ հարկ վճարողի շահութահարկի գումարը հարկվող շահույթի նկատմամբ հաշվարկվում է 5 տոկոս դրույքաչափով, եթե վերջին(ներ)ս գործունեություն է (են) իրականացնում շինարարության կամ շինմոնտաժային ոլորտում և բացառապես ՀՀ տարածքից դուրս:

Հաշվետու ժամանակահատվածում ՀՀ պետական բյուջե է մուտքագրվել 332.7 մլրդ դրամ *եկամտային հարկ*՝ ապահովելով հարկային եկամուտների և պետական տուրքերի 30.8%-ը: Եկամտային հարկից մուտքերը նախորդ տարվա համեմատ աճել են 3.9%-ով կամ 12.5 մլրդ դրամով, որը գրանցվել է աշխատանքի վարձատրության և դրան հավասարեցված այլ եկամուտների գծով: Եկամտային հարկի աճը հիմնականում պայմանավորված է «Նվազագույն աշխատավարձի մասին» ՀՀ օրենքում կատարված փոփոխությամբ (ՀՕ-205-Ն, ընդունվել է 01.12.2014թ.), ըստ որի 2015 թվականի հուլիսի 1-ից նվազագույն ամսական աշխատավարձը սահմանվեց 55000 դրամ՝ նախկին 50000 դրամի փոխարեն: Նշված բաղադրիչով պայմանավորված՝ եկամտային հարկի աճը, ըստ գնահատականների, կազմել է 1.46 մլրդ դրամ: Եկամտային հարկի աճը պայմանավորված է նաև միջին ամսական աշխատավարձի աճով (2016 թվականի հունվար-դեկտեմբերին նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի նկատմամբ աճել է 2.3 տոկոսային կետով): Մյուս եկամտատեսակներից գանձվող եկամտային հարկի մուտքերը նվազել են: Վերջիններիս անկումը պայմանավորված է հիմնականում ՀՆԱ-ի կառուցվածքում եկամտային հարկի հաշվարկման բազա հանդիսացող տնտեսության ճյուղերում արձանագրված եկամտի անկման միտումներով:

2014 թվականի դեկտեմբերի 17-ին ՀՀ Ազգային Ժողովի կողմից ընդունված՝ ««Եկամտային հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» ՀՕ-248-Ն ՀՀ օրենքով (ուժի մեջ է մտել 2015 թվականի հունվարի 9-ից) սահմանվել է, որ

«Եկամտային մասին» ՀՀ օրենքի իմաստով՝ «Տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի պետական աջակցության մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով հավաստագրված հարկ վճարողների կողմից հավաստագրի գործողության ժամկետում տեղեկատվական տեխնոլոգիաների իրացումից ստացվող եկամուտները համարվում են նվազեցվող եկամուտներ, իսկ ծախսերը ծախս չեն համարվում:

ՀՀ 2016 թվականի պետական բյուջեի հարկային եկամուտների ու պետական տուրքերի 5.5%-ն ապահովվել է *ակցիզային հարկի* հաշվին՝ կազմելով ավելի քան 59.7 մլրդ դրամ: Մասնավորապես՝ հանրապետություն ներմուծվող ենթաակցիզային ապրանքների հարկումից ստացվել է 35.7 մլրդ դրամ, հանրապետությունում արտադրվող ենթաակցիզային ապրանքների հարկումից՝ շուրջ 24.1 մլրդ դրամ: 2015 թվականի համեմատ ակցիզային հարկի մուտքերն աճել են 22%-ով կամ 10.8 մլրդ դրամով: Ընդ որում, աճ է արձանագրվել և՛ տեղական արտադրության (30.7%-ով կամ 5.7 մլրդ դրամով), և՛ ներմուծվող ենթաակցիզային ապրանքների (16.7%-ով կամ 5.1 մլրդ դրամով) գծով մուտքերում: ՀՀ տարածքում արտադրվող ապրանքների գծով մուտքերի աճը հիմնականում պայմանավորված է ծխախոտի արտադրանքի իրացումից ստացված մուտքերի աճով, որոնք կազմել են 14.8 մլրդ դրամ՝ նախորդ տարվա համեմատ աճելով 35%-ով կամ 3.8 մլրդ դրամով: ՀՀ տարածք ներմուծվող ապրանքների գծով մուտքերի աճը պայմանավորված է բենզինի, դիզելային վառելիքի, ինչպես նաև ծխախոտի արտադրանքի ներմուծումից ստացված մուտքերի աճով: Մասնավորապես՝ ՀՀ ներմուծվող դիզելային վառելիքի և բենզինի համար վճարված ակցիզային հարկի գծով մուտքերն աճել են համապատասխանաբար 5.3 անգամ (կամ շուրջ 3.5 մլրդ դրամով) և 6.6 անգամ (կամ 2.8 մլրդ դրամով)՝ կազմելով 4.3 մլրդ դրամ և 3.3 մլրդ դրամ, իսկ ՀՀ ներմուծված ծխախոտային արտադրանքի իրացման համար վճարված ակցիզային հարկի գծով մուտքերն աճել են 24.4%-ով կամ ավելի քան 3 մլրդ դրամով՝ կազմելով 15.5 մլրդ դրամ: Ակցիզային հարկի գծով մուտքերի աճը պայմանավորված է հիմնականում 2015 թվականի հոկտեմբերի 29-ին ՀՀ Ազգային Ժողովի կողմից ընդունված՝ «Ակցիզային հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՕ-116-Ն ՀՀ օրենքի գործողությամբ, որի համաձայն 2016 թվականի մայիսի 1-ից սեղմված բնական գազը (բացառությամբ սեղմված չհամարվող բնական գազի) ներառվել է ակցիզային հարկով հարկման ենթակա ապրանքների ցանկում, և 1մ^3 բնական գազի համար սահմանվել է ակցիզային հարկի 8330 դրամ դրույքաչափ: Ընդ որում, օրենքի իմաստով սեղմված բնական գազ է համարվում ԱՏԳ ԱԱ 2711 21 ապրանքային դիրքին դասվող բնական գազը, որը ստացվում է ավտոտրանսպորտային միջոցների գազալցման (գազալիցքավորման) գործունեություն իրականացնող անձանց կողմից մի քանի փուլով (խառնուրդի մաքրում, խոնավության և այլ աղտոտիչների հեռացում ու սեղմում) գազի մշակման արդյունքում՝ առանց բնական գազի բաղադրության փոփոխության: Ակցիզային հարկ վճարող են համարվում

ավտոտրանսպորտային միջոցների գազալցման (գազալիցքավորման) գործունեություն իրականացնող իրավաբանական (այդ թվում՝ Հայաստանի Հանրապետությունում սահմանված կարգով գրանցված օտարերկրյա իրավաբանական անձանց ներկայացուցչությունները և մասնաճյուղերը) և ֆիզիկական անձինք: Նշենք, որ ՀՀ տարածքում ավտոտրանսպորտային միջոցների գազալցման (գազալիցքավորման) գործունեություն իրականացնողների կողմից սեղմված բնական գազի օտարումից վճարված մուտքերը հաշվետու տարում կազմել են 2.2 մլրդ դրամ: Նշենք, որ վերոհիշյալ օրենքի համաձայն 2016 թվականի մայիսի 1-ից նաև բարձրացվել են ծխախոտի արտադրանքի և սպիրտային խմիչքների (ԱՏԳ ԱԱ 2208, 2402 10 00011, 2402 90 00011, 2402 10 00012, 2402 90 00012, 2402 20 90011, 2402 20 10011, 2402 90 00013, 2402 20 90012, 2402 20 10012, 2402 90 00014, 2710, 2711 ծածկագրերին դասվող ապրանքների) ակցիզային հարկի դրույքաչափերը, իսկ բենզինի 1 տոննայի համար սահմանված ակցիզային հարկի և օրենսդրությամբ սահմանված կարգով հաշվարկված ԱԱՀ-ի հանրագումարը 120000 ՀՀ դրամից պակաս լինելու դեպքում սահմանվել է, որ ակցիզային հարկն ավելացվում է այն չափով, որպեսզի բենզինի 1 տոննայի համար գանձվող ակցիզային հարկի և ԱԱՀ-ի հանրագումարը հավասարվի 120000 ՀՀ դրամի (112000 դրամի փոխարեն):

2015 թվականի նոյեմբերի 24-ին ՀՀ Ազգային Ժողովի կողմից ընդունված՝ «Ակցիզային հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՕ-157-Ն ՀՀ օրենքով (ուժի մեջ է մտել 2016 թվականի հունվարի 1-ից) սահմանվել է, որ ակցիզային հարկով չի հարկվում ակցիզային հարկով հարկման ենթակա ապրանքների մատակարարումը օդանավակայանում գործող անմաքս առևտրի խանութի կազմակերպչին:

Հաշվետու տարվա պետական բյուջեի հարկային եկամուտների ու պետական տուրքերի 5.1%-ն ապահովվել է *մաքսատուրքի* հաշվին՝ կազմելով 55.4 մլրդ դրամ, որից շուրջ 19 մլրդ դրամը կազմում է 2014 թվականի մայիսի 29-ի Եվրասիական տնտեսական միության մասին պայմանագրի գործողության արդյունքում ՀՀ ստացած զուտ մուտքը: Նախորդ տարվա համեմատ մաքսատուրքի գծով բյուջետային մուտքերը նվազել են 9.9%-ով կամ շուրջ 6.1 մլրդ դրամով, որը հիմնականում պայմանավորված է ինչպես Հայաստանի Հանրապետության՝ ԵՏՄ անդամ երկրներին համամասնորեն տրվող մաքսատուրքի գումարների նվազմամբ, այնպես էլ երրորդ երկրներից ֆիզիկական անձանց կողմից ներմուծվող՝ մաքսատուրքով հարկվող ապրանքների ծավալների կրճատմամբ: Մասնավորապես՝ «Ղրղզստանի Հանրապետության՝ «Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրին միանալու մասին» պայմանագրի 8-րդ հոդվածով 2014 թվականի մայիսի 29-ի «Եվրասիական տնտեսական միության մասին» պայմանագրի 5-րդ հավելվածով հաստատված՝ «Ներմուծման մաքսատուրքերի (համարժեք այլ վճարների, հարկերի և տուրքերի) գումարները հաշվեգրելու և բաշխելու, դրանք որպես եկամուտ

անդամ պետությունների բյուջեներ փոխանցելու կարգի վերաբերյալ» արձանագրության մեջ կատարված փոփոխությամբ սահմանվել է, որ ներմուծման մաքսատուրքի գումարների բաշխման նորմատիվը ՀՀ համար 2015 թվականի հոկտեմբերի 1-ից 1.13 տոկոսի փոխարեն կազմում է 1.11 տոկոս: 2016 թվականին ԵՏՄ-ից փոխանցված մաքսատուրքը կազմել է 52,981.5 մլն դրամ՝ 2015 թվականի նույն ժամանակահատվածում վճարված 53,445.8 մլն դրամի փոխարեն: Սակայն, եթե հաշվի առնենք այն հանգամանքը, որ 2016 թվականի հունվար ամսին ԵՏՄ-ից ՀՀ է փոխանցվել 2,534.0 մլն դրամ մաքսատուրք, որը 2015 թվականի հունվար ամսին բացակայել է, նախորդ տարվա համեմատ 2016 թվականին մաքսատուրքի մուտքերի անկումը կկազմի 2,998.3 մլն դրամ: Իսկ ֆիզիկական անձանց կողմից ներմուծվող ապրանքների արժեքից գանձվող մաքսատուրքը նվազել է 2,018.0 մլն դրամով կամ 46.2%-ով: Միաժամանակ, փոփոխություններ են կատարվել նաև ԵՏՄ տարածքում միասնական մաքսատուրքի դրույքաչափեր սահմանող՝ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի 2012 թվականի հուլիսի 16-ի թիվ 54 որոշման մեջ, որոնց շրջանակներում վերանայվել են մի շարք ապրանքատեսակների ԵՏՄ միասնական մաքսատուրքի դրույքաչափերը:

2014 թվականի մայիսի 29-ի «Եվրասիական տնտեսական միության մասին» պայմանագրի 5-րդ հավելվածով հաստատված՝ «Ներմուծման մաքսատուրքերի (համարժեք այլ վճարների, հարկերի և տուրքերի) գումարները հաշվեգրելու և բաշխելու, դրանք որպես եկամուտ անդամ պետությունների բյուջեներ փոխանցելու կարգի վերաբերյալ» արձանագրության համաձայն՝ 2016 թվականի ընթացքում ՀՀ ֆինանսների նախարարության միասնական գանձապետական հաշվին հաշվեգրված ներմուծման մաքսատուրքի գումարներից ԵԱՏՄ պետությունների միջև բաշխվել է 33520.2 մլն դրամ, և փոխանցվել է Հայաստանի Հանրապետության պետական բյուջե 372.07 մլն դրամ, Ռուսաստանի Դաշնություն՝ 28599.40 մլն դրամ, Ղրղզստանի Հանրապետություն՝ 636.88 մլն դրամ, Բելառուսի Հանրապետություն՝ 1528.52 մլն դրամ, Ղազախստանի Հանրապետություն՝ 2383.28 մլն դրամ:

2016 թվականին *շրջանառության հարկի* գծով ՀՀ պետական բյուջե է մուտքագրվել շուրջ 15.3 մլրդ դրամ՝ կազմելով հարկային եկամուտների և պետական տուրքերի 1.4%-ը, որը 28.7%-ով կամ 3.4 մլրդ դրամով գերազանցել է նախորդ տարվա համապատասխան ցուցանիշը՝ հիմնականում պայմանավորված առևտրական (առք ու վաճառքի) և այլ գործունեությունից գանձված եկամուտների աճով: Շրջանառության հարկի գումարից 8.2 մլրդ դրամը մուտքագրվել է առևտրական (առք ու վաճառքի) գործունեությունից (նախորդ տարվա համեմատ աճել է 34.1%-ով կամ 2.1 մլրդ դրամով), 1.4 մլրդ դրամը՝ արտադրական գործունեությունից (նախորդ տարվա համեմատ աճել է 14.7%-ով կամ 182.5 մլն դրամով), 795.1 մլն դրամը՝ ռեզիդենտների կողմից ստացվող պասիվ եկամուտներից (նախորդ տարվա համեմատ աճել է 11.8%-ով կամ 84 մլն դրամով), շուրջ 235 մլն դրամը՝ նոտարական գործունեությունից (նախորդ տարվա համեմատ գրեթե չի փոփոխվել) և 4.6 մլրդ

դրամը՝ գործունեության այլ տեսակներից (նախորդ տարվա համեմատ աճել է 29.5%-ով կամ ավելի քան 1 մլրդ դրամով):

Շրջանառության հարկի աճը հիմնականում պայմանավորված է օրենսդրական փոփոխությամբ (ընդունվել է 07.05.2015թ., ՀՕ-38-Ն), ըստ որի 2015 թվականի հուլիսի 1-ից ԱԱՀ-ով հարկվող շեմը 58.35 մլն դրամից բարձրացվել է 115.0 մլն դրամ, ինչի հետևանքով 2016 թվականի արդյունքներով 121.6 մլրդ դրամ շրջանառություն անցել է շրջանառության հարկով հարկման դաշտ, որն այլ հավասար պայմաններում համարժեք է շուրջ 4 մլրդ դրամ շրջանառության հարկի մուտքերի (121.6*3.28%), եթե հաշվի առնենք, որ 2016 թվականի տարեկան արդյունքներով հաշվարկված շրջանառության հարկի և շրջանառության հարկով հարկվող շրջանառության հարաբերությունը կազմել է 3.28%: Այսինքն՝ առանց վերը նշված գործոնի, շրջանառության հարկի մուտքերը ոչ թե աճել, այլ նվազել են, ինչը հիմնականում պայմանավորված է առևտրի ոլորտի շրջանառության ծավալների կրճատմամբ: Վերոհիշյալ օրենքով սահմանվել է նաև, որ՝

1) առևտրային կազմակերպությունները, անհատ ձեռնարկատերերը և նոտարները շրջանառության հարկ վճարողներ չեն կարող համարվել, եթե շրջանառության հարկ վճարող համարվելու ժամանակաշրջանում մեկ օրացուցային տարվա ընթացքում թույլ են տվել հսկիչ-դրամարկղային մեքենաների շահագործման կանոնների խախտման երրորդ դեպք՝ խախտումն արձանագրելու օրվանից մինչև խախտումը կատարելու օրացուցային տարվան հաջորդող մեկ տարին լրանալը,

2) առևտրական (առք ու վաճառքի) գործունեություն իրականացնող շրջանառության հարկ վճարողները յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի համար շրջանառության հարկը հաշվարկում են հարկվող օբյեկտի նկատմամբ 5 տոկոս դրույքաչափով (նախկին 1 տոկոսի փոխարեն): Միաժամանակ, սահմանվել է, որ հաշվետու ժամանակաշրջանի համար առևտրական (առք ու վաճառքի) գործունեությունից ստացվող եկամուտների մասով հաշվարկված շրջանառության հարկի գումարը նվազեցվում է տվյալ հաշվետու ժամանակաշրջանում անմիջական վաճառքի նպատակով ձեռքբերված ապրանքների գծով կատարված ծախսերի՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված երկկողմանի հաստատված (վավերացված) հաշվարկային փաստաթղթերով հիմնավորված ծախսերի (ներառյալ՝ անուղղակի հարկերը), ինչպես նաև ՀՀ ներմուծված ապրանքների մասով ներմուծման հայտարարագրերում արտացոլված մաքսային արժեքի և հաշվարկված անուղղակի հարկերի հանրագումարի կամ ավելացված արժեքի հարկով հարկման բազայի ու հաշվարկված ավելացված արժեքի հարկի հանրագումարի 4 տոկոսը կազմող գումարի չափով: Եթե նշյալ նվազեցումներից հետո շրջանառության հարկի գումարը կազմում է առևտրական (առք ու վաճառքի) գործունեությունից ստացվող եկամուտների նկատմամբ հաշվարկված 1.5 տոկոսից, իսկ 2015 թվականի հուլիսի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ն ընկած հաշվետու

ժամանակաշրջանների համար՝ 1 տոկոսից պակաս գումար, ապա առևտրական (առք ու վաճառքի) գործունեությունից ստացվող եկամուտների համար շրջանառության հարկը հաշվարկվում է հարկվող օբյեկտի նկատմամբ 1.5 տոկոս, իսկ 2015 թվականի հուլիսի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ն ընկած հաշվետու ժամանակաշրջանների համար՝ 1 տոկոս դրույքաչափով: Շրջանառության հարկի գումարից չնվազեցված մասը նվազեցվում է հետագա հաշվետու ժամանակաշրջանների համար առևտրական (առք ու վաճառքի) գործունեությունից ստացվող եկամուտների նկատմամբ հաշվարկվող շրջանառության հարկի գումարից:

3) առևտրական (առք ու վաճառքի) գործունեությունից ստացվող եկամուտների մասով հաշվարկված շրջանառության հարկի գումարից օրենքով սահմանված ապրանքների ձեռքբերման ծախսերի, ինչպես նաև հաշվետու ժամանակաշրջանում շրջանառության հարկի գումարից չնվազեցվող և փոխանցվող գումարների մասով նվազեցումներն ավել կատարելու դեպքում գանձվում է դրա արդյունքում պակաս հաշվարկված շրջանառության հարկը, ինչպես նաև տուգանք՝ այդ գումարի 100 տոկոսի չափով: Միաժամանակ, սահմանվել է նաև, որ նշյալ չափով տուգանքը չի կիրառվում, եթե կատարվող վերահաշվարկների արդյունքում վճարման ենթակա շրջանառության հարկի գումարը չի գերազանցում շրջանառության հարկ վճարողի կողմից այդ գործունեության մասով հարկվող օբյեկտի նկատմամբ 1.5 տոկոս, իսկ 2015 թվականի հուլիսի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ն ընկած հաշվետու ժամանակաշրջանների համար՝ 1 տոկոս դրույքաչափով հաշվարկված հարկի գումարը:

Շրջանառության հարկի մուտքերի վրա իր բացասական ազդեցությունն է թողել նաև «Շրջանառության հարկի մասին» ՀՀ օրենքում լրացում և փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքով (04.02.2016թ, ՀՕ-28-Ն, ուժի մեջ է մտել 2016 թվականի մարտի 12-ից և տարածվում է 2015 թվականի հուլիսի 1-ից հետո ծագած հարաբերությունների վրա ու գործում է մինչև 2018 թվականի դեկտեմբերի 31-ը ներառյալ) սահմանված այն դրույթի կիրառումը, համաձայն որի երկրորդային հումքի իրացումից ստացվող եկամուտների համար կիրառելի չեն առևտրական (առք ու վաճառքի) գործունեությունից ստացվող եկամուտների մասով շրջանառության հարկի հաշվարկման համար սահմանված դրույքաչափերը, և այդ եկամուտներից շրջանառության հարկը հաշվարկվում է հարկվող օբյեկտի նկատմամբ 1.5 տոկոս դրույքաչափ կիրառելով:

2015 թվականի նոյեմբերի 24-ին ՀՀ Ազգային Ժողովի կողմից ընդունված՝ «Շրջանառության հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություն կատարելու մասին» ՀՕ-167-Ն ՀՀ օրենքով (ուժի մեջ է մտել 2016 թվականի հունվարի 1-ից) սահմանվել է, որ «Շրջանառության հարկի մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 3-րդ մասի 4-րդ կետի «ա»-«գ» ենթակետերով նախատեսված դեպքերում կազմակերպությունը, անհատ ձեռնարկատերը և նոտարը օրենքով սահմանված այլ պայմանները բավարարելու դեպքում համարվում են (շարունակում են

համարվել) շրջանառության հարկ վճարող, եթե այդ ենթակետերում նշված այլ անձինք հարկային մարմին են ներկայացրել գործունեությունը դադարեցնելու մասին հայտարարություն և փաստացի գործունեություն չեն իրականացրել:

2016 թվականին պետական բյուջե են մուտքագրվել 3.2 մլրդ դրամ *հաստատագրված վճարներ*՝ ապահովելով հարկային եկամուտների ու պետական տուրքերի 0.3%-ը: Նշված ցուցանիշը նախորդ տարվա համեմատ աճել է 3.1%-ով, որը հիմնականում պայմանավորված է տրանսպորտային գործունեության իրականացման, կազմակերպությունների կողմից տոտալիզատորի և վիճակախաղերի կազմակերպման համար գանձվող հաստատագրված վճարի մուտքերի աճով: Հաշվետու ժամանակաշրջանում նշված մուտքերը կազմել են համապատասխանաբար 2.3 մլրդ դրամ, 424.7 մլն դրամ և 451.7 մլն դրամ՝ նախորդ տարվա համեմատ աճելով 6.8%-ով (կամ 148.2 մլն դրամով), 44.1%-ով (կամ 130 մլն դրամով) և 16.4%-ով (կամ 63.8 մլն դրամով): Միաժամանակ, մուտքեր չեն ստացվել ավտոտրանսպորտային միջոցների գազալցման գործունեության կազմակերպման համար գանձվող հաստատագրված վճարի գծով (2015 թվականին ստացվել էր 229.1 մլն դրամ), որի պատճառը հարկ վճարողների կողմից ավտոտրանսպորտային միջոցների գազալցման գործունեություն կազմակերպելիս Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած տեխնիկական կանոնակարգին համապատասխան լիցքավորման բաշխիչ աշտարակների օգտագործումն է, որի պարագայում նշված գործունեությունը «Հաստատագրված վճարների մասին» ՀՀ օրենքի 59.8-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն չի համարվում հաստատագրված վճարով հարկվող օբյեկտ:

2016 թվականին ՀՀ պետական բյուջե են մուտքագրվել շուրջ 27.4 մլրդ դրամ *բնապահպանական և բնօգտագործման վճարներ*՝ կազմելով հարկերի և տուրքերի 2.5%-ը: Նշված գումարից 7.7 մլրդ դրամը կազմել են բնապահպանական վճարները, 19.7 մլրդ դրամը՝ բնօգտագործման վճարները, որից 18.3 մլրդ դրամը կազմել է արդյունահանված մետաղական օգտակար հանածոների և դրանց վերամշակման արդյունքում ստացված արտադրանքի իրացման համար վճարվող ռոյալթին: Նախորդ տարվա համեմատ բնապահպանական և բնօգտագործման վճարները նվազել են 12.4%-ով կամ 3.9 մլրդ դրամով, որը հիմնականում պայմանավորված է այլ պետություններում գրանցված տրանսպորտային միջոցներից օդային ավազան վնասակար նյութեր արտանետելու համար գանձվող վճարների գծով մուտքերի և արդյունահանված մետաղական օգտակար հանածոների և դրանց վերամշակման արդյունքում ստացված արտադրանքի իրացման համար վճարվող ռոյալթիից ստացված մուտքերի համապատասխանաբար 72.2%-ով և 13.2%-ով նվազմամբ:

Այլ պետություններում գրանցված տրանսպորտային միջոցներից օդային ավազան վնասակար նյութեր արտանետելու համար վճարների նվազումը պայմանավորված է հիմնականում ԵՏՄ

անդամակցությամբ պայմանավորված ԵՏՄ անդամ երկրներից ՀՀ սահմանը հատող այլ պետություններում գրանցված տրանսպորտային միջոցներից օդային ավազան վնասակար նյութեր արտանետելու համար վճարների գանձման մեխանիզմների փոփոխությամբ: Արդյունահանված մետաղական օգտակար հանածոների և դրանց վերամշակման արդյունքում ստացված արտադրանքի իրացման համար վճարվող ռոյալթիների նվազումը պայմանավորված է նաև 2016 թվականին 2015 թվականի համեմատ Լոնդոնի մետաղների բորսայի տվյալների հիման վրա հայտարարված՝ հիմնական արտադրատեսակներ համարվող պղնձի և մոլիբդենի տարեկան միջին գների նվազմամբ: Մասնավորապես՝ պղնձի 2016 թվականի տարեկան միջին գինը 2015 թվականի համեմատ նվազել է 11.6%-ով, իսկ մոլիբդենինը՝ 3.2%-ով: Միաժամանակ, նվազմանը նպաստել են նաև պինդ օգտակար հանածոների, բացառությամբ մետաղական օգտակար հանածոների մարված պաշարների, ստորերկրյա քաղցրահամ ու հանքային ջրերի և աղի արդյունահանված պաշարների, ինչպես նաև կենսապաշարների օգտագործման համար բնօգտագործման վճարները, որոնց գծով մուտքերը կազմել են համապատասխանաբար 813.0 մլն դրամ և 121.2 մլն դրամ՝ նախորդ տարվա նկատմամբ նվազելով համապատասխանաբար՝ 178.4 մլն դրամով կամ 18.0%-ով և 109.4 մլն դրամով կամ 47.4%-ով: Նշված վճարատեսակների գծով նվազումը պայմանավորված է մարված պաշարների և կենսապաշարների ծավալների նվազմամբ:

Բնապահպանական վճարների մուտքերի մասով նվազում է արձանագրվել ամրակայված աղբյուրներից օդային ավազան վնասակար նյութերի արտանետման և աղբյուսներում թափոնների տեղադրման համար բնապահպանական վճարների գծով, որոնց գծով մուտքերը նախորդ տարվա նկատմամբ նվազել են համապատասխանաբար՝ 52.4 մլն դրամով կամ 19.2%-ով և 8.6 մլն դրամով կամ 8.2%-ով՝ 2016 թվականին կազմելով համապատասխանաբար 220.5 մլն դրամ և 96.5 մլն դրամ: Նշված վճարատեսակների գծով մուտքերի նվազումը պայմանավորված է ամրակայված աղբյուրներից օդային ավազան վնասակար նյութերի արտանետման և աղբյուսներում թափոնների տեղադրման ծավալների կրճատմամբ:

Մյուս կողմից, մնացած վճարատեսակների գծով արձանագրվել է աճ: Մասնավորապես՝ աճել են ջրօգտագործման, ավտոմեքենաներից, գյուղմեքենաներից և լողամիջոցներից վնասակար նյութեր արտանետելու, ջրային ավազան վնասակար նյութերի արտանետման, ՀՀ ներմուծվող շրջակա միջավայրին վնաս պատճառող ապրանքների և ՀՀ-ում արտադրվող ու իրացվող շրջակա միջավայրին վնաս պատճառող ապրանքների համար գանձվող բնապահպանական և բնօգտագործման վճարների գծով մուտքերը՝ նախորդ տարվա նկատմամբ աճելով համապատասխանաբար 64.7 մլն դրամով կամ 16.6%-ով, 34.7 մլն դրամով կամ 5.1%-ով, 350.3 մլն դրամով կամ 150.2%-ով, 2,027.4 մլն դրամով կամ 118.5%-ով և 251.8 մլն դրամով կամ 33.3%-ով՝ 2016 թվականին կազմելով համապատասխանաբար 454.0 մլն դրամ, 717.7 մլն դրամ, 583.5 մլն դրամ,

3,738.2 մլն դրամ և 1,007.2 մլն դրամ: Նշված վճարատեսակների գծով մուտքերի աճը պայմանավորված է համապատասխանաբար ջրօգտագործման ծավալների ավելացման, շրջակա և ջրային ավազան վնասակար նյութեր արտանետման ծավալների ավելացման, ՀՀ ներմուծվող շրջակա միջավայրին վնաս պատճառող ապրանքների ու ՀՀ-ում արտադրվող և իրացվող շրջակա միջավայրին վնաս պատճառող ապրանքների ներմուծման և իրացման ծավալների ավելացման հետևանքով:

Հաշվետու ժամանակահատվածում շուրջ 13.4 մլրդ դրամ են կազմել *նպատակային սոցիալական վճարները,* որոնց գծով մուտքերը սկսել են գանձվել 2014 թվականի հուլիսի 1-ից՝ «Կուտակային կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքում կատարված փոփոխության համաձայն: Նշված մուտքերը նախորդ տարվա համեմատ աճել են 23%-ով կամ շուրջ 2.5 մլրդ դրամով, որը պայմանավորված է ինչպես նպատակային սոցիալական վճար վճարողների քանակի, այնպես էլ միջին ամսական աշխատավարձի աճով (2016 թվականին նախորդ տարվա համեմատ աճել է 1.7 տոկոսային կետով):

Հաշվետու տարվա ընթացքում ՀՀ պետական բյուջե են մուտքագրվել 21 մլրդ դրամ *այլ հարկեր*՝ կազմելով հարկերի և տուրքերի 1.9%-ը: Նախորդ տարվա համեմատ այլ հարկերի փաստացի ցուցանիշն աճել է 4.6%-ով կամ 921.7 մլն դրամով: Այլ հարկերում շուրջ 6.4 մլրդ դրամ են կազմել ռադիոհաճախականության օգտագործման պարտադիր վճարները՝ նախորդ տարվա համեմատ աճելով 19.1%-ով կամ 1 մլրդ դրամով, ինչը պայմանավորված է որոշ ընկերությունների կողմից 2014 թվականի 4-րդ եռամսյակի և 2015 թվականի 1-ին ու 2-րդ եռամսյակների ռադիոհաճախականության օգտագործման պարտադիր վճարները 2014 թվականի 4-րդ եռամսյակում վճարելու և 2016 թվականի 4-րդ եռամսյակի վճարների մի մասը 2016 թվականի 4-րդ եռամսյակում վճարելու հանգամանքներով:

2016 թվականին շուրջ 6.3 մլրդ դրամ են կազմել արտոնագրային վճարները՝ նախորդ տարվա համեմատ նվազելով 4.3%-ով կամ 283 մլն դրամով: Նվազման հիմնական պատճառ են հանդիսացել հանրային սննդի ոլորտում իրականացվող գործունեության (նվազել է 4.1%-ով կամ 141.1 մլն դրամով), թեթև մարդատար մեքենայով ուղևորափոխադրումների (նվազել է 14.2%-ով կամ 29.9 մլն դրամով) և վարսավիրական ծառայությունների մատուցման գործունեության (նվազել է 3.4%-ով կամ 25.4 մլն դրամով) համար վճարված արտոնագրային վճարների գծով մուտքերի նվազումը: Նվազման հիմնական պատճառ է հանդիսացել սպառման կրճատմամբ պայմանավորված՝ արտոնագրային վճարով հարկվող գործունեության տեսակների կրճատումը: Բացի այդ, արտոնագրային վճարի մուտքերի վրա իր բացասական ազդեցությունն է թողել «Սահմանամերձ գյուղական համայնքներում իրականացվող գործունեությունը հարկերից ազատելու մասին» ՀՀ օրենքում փոփոխություն և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքը (24.11.2015թ. ՀՕ-141-Ն), որի

հիման վրա ՀՀ կառավարության որոշմամբ հաստատված ցանկում ներառված քաղաքային՝ Բերդ և Ճամբարակ համայնքներում իրականացվող արտոնագրային վճարով հարկվող գործունեության տեսակների մասով կիրառվում է «Արտոնագրային վճարների մասին» ՀՀ օրենքով սահմանված արտոնագրային վճարից ազատման արտոնություն:

2015 թվականի հունիսի 19-ին ՀՀ Ազգային Ժողովի կողմից ընդունված՝ «Արտոնագրային վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՕ-67-Ն օրենքի համաձայն (ուժի մեջ է մտել 2015 թվականի հուլիսի 1-ից) սահմանվել է, որ արտոնագրային վճար վճարող կարող են համարվել առևտրի իրականացման վայրերում (ոսկու շուկաներ) վաճառասեղանների կամ վաճառակետերի միջոցով թանկարժեք մետաղների, թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի կամ թանկարժեք քարերի առքուվաճառքի գործունեություն իրականացնողները, որոնք ունեն տարեկան 115 մլն դրամ իրացման շրջանառություն: Հաշվետու տարում նշված գործունեության համար վճարվող արտոնագրային վճարները կազմել է 21.8 մլն դրամ՝ նախորդ տարվա համեմատ աճելով 22.6%-ով կամ 4 մլն դրամով: Միաժամանակ, սահմանվել են նշյալ գործունեության մասով արտոնագրային վճարի դրույքաչափերը, մասնավորապես.

1. Երևան քաղաքում՝ մինչև 0.5մ^2 ներառյալ վաճառասեղանի կամ վաճառակետի դեպքում՝ 35000 դրամ, իսկ դրանից ավելիի դեպքում՝ 35000 դրամ գումարած 0.5մ^2 գերազանցող մինչև յուրաքանչյուր 0.1մ^2 համար 7000 դրամ,
2. մարզկենտրոններում՝ մինչև 0.5մ^2 ներառյալ վաճառասեղանի կամ վաճառակետի դեպքում՝ 25000 դրամ, իսկ դրանից ավելիի դեպքում՝ 25000 դրամ գումարած 0.5մ^2 գերազանցող մինչև յուրաքանչյուր 0.1մ^2 համար 5000 դրամ,
3. այլ քաղաքներում՝ մինչև 0.5մ^2 ներառյալ վաճառասեղանի կամ վաճառակետի դեպքում՝ 20000 դրամ, իսկ դրանից ավելիի դեպքում՝ 20000 դրամ գումարած 0.5մ^2 գերազանցող մինչև յուրաքանչյուր 0.1մ^2 համար 4000 դրամ,
4. այլ վայրերում՝ մինչև 0.5մ^2 ներառյալ վաճառասեղանի կամ վաճառակետի դեպքում՝ 15000 դրամ, իսկ դրանից ավելիի դեպքում՝ 15000 դրամ գումարած 0.5մ^2 գերազանցող մինչև յուրաքանչյուր 0.1մ^2 համար 3000 դրամ,
5. սահմանամերձ գյուղերում՝ 0:

2016 թվականին շուրջ 3.9 մլրդ դրամ է մուտքագրվել *ճանապարհային վճարների* գծով, որը նախորդ տարվա համեմատ աճել է 6.5%-ով կամ 236.8 մլն դրամով՝ հիմնականում պայմանավորված այլ պետություններում գրանցված տրանսպորտային միջոցներով երթևեկության համար (աճել է 7%-ով կամ 184.8 մլն դրամով) և այլ պետություններում գրանցված ծանրաքաշ տրանսպորտային

միջոցներով երթևեկության համար (աճել է 3.4%-ով կամ 28.4 մլն դրամով) վճարվող ճանապարհային վճարների գծով մուտքերի աճով:

Հաշվետու ժամանակահատվածում 1.5 մլրդ դրամ են կազմել հարկային օրենսդրության խախտման համար «Հարկերի մասին» ՀՀ օրենքով սահմանված տուգանքները՝ 65%-ով գերազանցելով նախորդ տարվա ցուցանիշը:

Շուրջ 1.4 մլրդ դրամ են կազմել ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի հարկային ծառայության համակարգի և մաքսային ծառայության նյութական խրախուսման և համակարգի զարգացման ֆոնդի հարկային մուտքերը՝ 38.1%-ով զիջելով նախորդ տարվա ցուցանիշը, որը պայմանավորված է հարկային ընթացակարգով հայտնաբերվող խախտումների ծավալի նվազմամբ:

Հաշվետու տարում 765.7 մլն դրամ է մուտքագրվել հանրային ծառայությունների կարգավորման պարտադիր վճարների գծով՝ 3.2%-ով կամ 23.7 մլն դրամով գերազանցելով նախորդ տարվա ցուցանիշը:

475.8 մլն դրամ են կազմել դրոշմապիտակների իրացումից մուտքերը, որոնք 20.2%-ով գերազանցել են նախորդ տարվա ցուցանիշը՝ պայմանավորված պիտակավորման ենթակա ապրանքների ծավալի աճով:

Հաշվետու տարում 215.7 մլն դրամ է մուտքագրվել ԵՏՄ անդամ չհանդիսացող պետություններից ՀՀ մաքսային մարմինների կողմից գանձվող միասնական մաքսային վճարների գծով, որոնք նախորդ տարվա ցուցանիշը գերազանցել են 29.4%-ով կամ շուրջ 49 մլն դրամով՝ հիմնականում պայմանավորված ՀՀ տարածք ներմուծվող փոստածրարների քանակի աճով:

2016 թվականին շուրջ 31.8 մլն դրամ են կազմել ռադիոհաճախականության թույլտվության տրամադրման վճարները՝ 52.7%-ով կամ 35.4 մլն դրամով զիջելով նախորդ տարվա ցուցանիշը, ինչը հիմնականում պայմանավորված է վճարողների թվաքանակի նվազմամբ:

2015 թվականի նոյեմբերի 24-ին ՀՀ Ազգային Ժողովի կողմից ընդունված՝ «Հարկերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում ՀՕ-146-Ն օրենքով (ուժի մեջ է մտել 2016 թվականի հունվարի 1-ից) սահմանվել է, որ ընտանեկան ձեռնարկատիրության սուբյեկտներ կարող են համարվել նաև «Արտոնագրային վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի հավելված 1-ով հաստատված ցանկի 13-րդ կետով նախատեսված գործունեության տեսակն (զբոսաշրջային տների միջոցով հյուրանոցային ծառայությունների մատուցում) իրականացնող անհատ ձեռնարկատերերը:

2016 թվականի մայիսի 12-ին ՀՀ Ազգային Ժողովի կողմից ընդունված՝ «Հարկերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության ՀՕ-69-Ն օրենքով (ուժի մեջ է մտել 2016 թվականի հունիսի 18-ից) սահմանվել է,

որ հարկային օրենսդրության կիրառման առումով ձեռնարկատիրական գործունեություն չի համարվում քաղաքացիների սեփական կարիքների բավարարման համար վերականգնվող էներգետիկ ռեսուրսներ օգտագործող անհատ ձեռնարկատեր չհանդիսացող՝ ֆիզիկական անձ ինքնավար էներգաարտադրողների արտադրած էլեկտրական էներգիայի հանձնումն էլեկտրական էներգիայի բաշխման լիցենզիա ունեցող անձին, այդ թվում՝ դրա դիմաց ստացվող հատկացումները, եթե էլեկտրական էներգիա արտադրող իրենց տեղակայանքների դրվածքային հզորությունը չի գերազանցում էլեկտրական էներգիայի տեղակայված իրենց սպառիչների ընդհանուր հզորությունը, բայց ոչ ավելի, քան 150 կիլովատը:

2016 թվականի ընթացքում ՀՀ պետական բյուջե են մուտքագրվել 33.3 մլրդ դրամ *պետական տուրքեր*՝ 0.7%-ով զիջելով ՀՀ կառավարության տարեկան ծրագրով կանխատեսված ցուցանիշը: Պետական տուրքի բոլոր տեսակները գրեթե ամբողջությամբ ապահովել կամ գերազանցել են ծրագրային ցուցանիշները, բացառությամբ լիցենզավորման ենթակա գործունեություն իրականացնելու նպատակով լիցենզիաներ տալու և մշակութային արժեքների արտահանման կամ ժամանակավոր արտահանման իրավունքի վկայագիր տրամադրելու համար վճարվող տուրքերի: Նախորդ տարվա համեմատ պետական տուրքի մուտքերն աճել են 2.8%-ով կամ շուրջ 904.6 մլն դրամով, որը հիմնականում ձևավորվել է օրենքով սահմանված այլ ծառայությունների և գործողությունների և դատարան տրվող հայցադիմումների, դիմումների ու գանգատների, դատարանների վճիռների և որոշումների դեմ տրվող վճռաբեկ բողոքների, ինչպես նաև դատարանի կողմից տրվող փաստաթղթերի պատճեններ (կրկնօրինակներ) տալու համար գանձվող տուրքերի աճի և ֆիզիկական անձանց տրվող իրավաբանական նշանակության փաստաթղթերի, որոշակի ծառայությունների կամ գործողությունների համար գանձվող տուրքերի նվազման արդյունքում:

2016 թվականին *դատարան տրվող հայցադիմումների, դիմումների ու գանգատների, դատարանների վճիռների և որոշումների դեմ տրվող վճռաբեկ բողոքների, ինչպես նաև դատարանի կողմից տրվող փաստաթղթերի պատճեններ (կրկնօրինակներ) տալու* համար պետական բյուջե է վճարվել 2.6 մլրդ դրամ (որից 878.4 մլն դրամը կազմում են պետական կառավարման մարմինների կողմից վճարված և պետական բյուջեից փոխհատուցված գումարները)՝ 1.5%-ով գերազանցելով կանխատեսված ցուցանիշը: Նախորդ տարվա համեմատ նշված մուտքերն աճել են 49.7%-ով կամ 856.9 մլն դրամով, որը պայմանավորված է դատարան տրված հայցադիմումների, դիմումների ու գանգատների, դատարանների վճիռների և որոշումների դեմ տրվող վճռաբեկ բողոքների համար, ինչպես նաև դատարանի կողմից տրված փաստաթղթերի պատճենների (կրկնօրինակների) քանակի աճով:

Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ստանալու և Հայաստանի Հանրապետության քաղաքացիության փոփոխման համար վճարվող տուրքերը կազմել են 79.3 մլն

դրամ՝ 100%-ով ապահովելով կանխատեսված ցուցանիշը և 66.4%-ով գերազանցելով նախորդ տարվա փաստացի մուտքերը, ինչը պայմանավորված է ՀՀ քաղաքացիություն ստանալու և ՀՀ քաղաքացիության փոփոխման համար դիմած քաղաքացիների թվի աճով:

Հյուպատոսական ծառայությունների կամ գործողությունների դիմաց պետական բյուջե է վճարվել 2 մլրդ դրամ՝ ապահովելով 100% կատարողական: 2015 թվականի համեմատ նշված տուրքերն աճել են 4.5%-ով կամ 86.6 մլն դրամով, որը հիմնականում պայմանավորված է հյուպատոսական ծառայությունների և գործողությունների քանակի աճով: Ընդ որում, պետական տուրքի մուտքերի ավելացումն արձանագրվել է Իրանի Իսլամական Հանրապետության քաղաքացիների համար վիզային ռեժիմի վերացման պայմաններում, որն ուժի մեջ է մտել 2016 թվականի օգոստոսի 10-ից:

Պետական տուրքերի 11.3%-ը բյուջե է վճարվել *պետական գրանցումների* դիմաց՝ կազմելով շուրջ 3.8 մլրդ դրամ, որը 99.8%-ով ապահովել է ծրագրային ցուցանիշը և 1.9%-ով գերազանցել նախորդ տարվա փաստացի մուտքերը: Նախորդ տարվա համեմատ պետական գրանցման համար գանձված տուրքերի աճը պայմանավորված է լիցենզառուներին տրանսպորտային միջոցների պարտադիր տեխնիկական զննության համապատասխան նմուշի փաստաթուղթ տրամադրելու համար գանձված տուրքերի աճով (8.4%-ով), որոնք կազմել են 952 մլն դրամ կամ ծրագրվածի 99.8%-ը, ավտոմեքենայի պետական համարանիշ տալու, կորցրած պետական համարանիշը վերականգնելու, գյուղատնտեսական ինքնագնաց մեքենայի գրանցման, պետական համարանիշ տալու, ինչպես նաև կորցրած պետական համարանիշը վերականգնելու համար գանձված տուրքերի աճով (4.5%-ով), որոնք կազմել են 1.2 մլրդ դրամ կամ ծրագրվածի 100%-ը, և ավտոմեքենայի (մոտոցիկլետի) տեխնիկական անձնագիր (գրանցման վկայական) և կորցրած տեխնիկական անձնագրի (գրանցման վկայականի) կրկնօրինակ տալու համար գանձված տուրքերի աճով (5.2%-ով), որոնք կազմել են 625.9 մլն դրամ կամ ծրագրվածի 100%-ը: Վերջիններիս աճը պայմանավորված է տրանսպորտային միջոցների հաշվառման համարանիշերի երկու նոր տառատեսակներ թողարկելու և որպես միանվագ միջոցառում՝ տարեվերջին մեծ պահանջարկ ունեցող համարանիշերի իրացման գները նվազեցնելու արդյունքում իրացման ծավալների որոշակի աճով:

Հաշվետու տարվա ընթացքում 784.1 մլն դրամ է ստացվել գույքի նկատմամբ պետական գրանցման դիմաց, որը կազմել է ծրագրված մուտքերի 99.2%-ը և 6.8%-ով զիջել նախորդ տարվա ցուցանիշը: Մուտքերի անկումը հիմնականում պայմանավորված է գործարքների թվի նվազմամբ:

2016 թվականի հոկտեմբերի 20-ին ՀՀ Ազգային Ժողովի կողմից ընդունված՝ «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՕ-167-Ն ՀՀ օրենքով (ուժի մեջ է մտել 2016 թվականի նոյեմբերի 14-ից)

փոփոխվել են գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցում կատարելու համար պետական տուրքի դրույքաչափերը, մասնավորապես՝

1) ՀՀ կառավարության սահմանած ցանկերում ընդգրկված սահմանամերձ և բարձրլեռնային բնակավայրերում գտնվող անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման համար պետական տուրքի դրույքաչափը սահմանվել է պետական տուրք բազային տուրքի 50 տոկոսի չափով՝ նախկինում գործող 30 տոկոսի փոխարեն,

2) սահմանվել է, որ անշարժ գույքի միավորի նկատմամբ միաժամանակ տարբեր հիմքով, ինչպես նաև անշարժ գույքի միավորի նկատմամբ միաժամանակ մեկից ավելի իրավունքների պետական գրանցման դեպքում կիրառվելու է դրանց համար սահմանված պետական տուրքի դրույքաչափերից առավելագույնը, իսկ պետական տուրքի դրույքաչափերը հավասար լինելու դեպքում՝ մեկ պետական տուրք:

2016 թվականի նոյեմբերի 17-ին ՀՀ Ազգային Ժողովի կողմից ընդունված՝ «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» ՀՕ-208-Ն ՀՀ օրենքով (ուժի մեջ է մտել 2016 թվականի դեկտեմբերի 17-ից)՝

1) պետական ռեգիստրում գրանցման ենթակա օտարերկրյա իրավաբանական անձանց՝ ՀՀ-ում ռեդոմիցիլացման նախնական գրանցման համար սահմանվել է պետական տուրք բազային տուրքի տասնապատիկի չափով,

2) պետական ռեգիստրում գրանցման ենթակա իրավաբանական անձանց՝ ՀՀ-ից այլ պետություն ռեդոմիցիլացման համար սահմանվել է պետական տուրք բազային տուրքի քսանապատիկի չափով:

2016 թվականի մայիսի 17-ին ՀՀ Ազգային Ժողովի կողմից ընդունված՝ «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն և լրացումներ կատարելու մասին» ՀՕ-88-Ն ՀՀ օրենքով (ուժի մեջ է մտել 2016 թվականի դեկտեմբերի 15-ից) հանվել է դեղագործական արտադրանքի, բժշկական նշանակության առարկաների, բժշկական գործիքների, սարքերի և տեխնիկայի պետական գրանցման համար «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքով սահմանված պետական տուրքը, ինչպես նաև դեղերի պետական գրանցման համար մի շարք դեպքերում սահմանվել է պետական տուրք:

Մշակութային արժեքների արտահանման կամ ժամանակավոր արտահանման իրավունքի վկայագիր տրամադրելու դիմաց 2016 թվականին պետական բյուջե է վճարվել 775 հազար դրամ, որը 3.1%-ով զիջել է նախատեսվածը և 15.7%-ով՝ գերազանցել նախորդ տարվա փաստացի մուտքերը: 2016 թվականին մշակութային արժեքների արտահանման համար տրամադրված վկայագրերի և դրանց կրկնօրինակների քանակը, որոնց դիմաց գանձվել է պետական տուրք, կազմել է 155՝ նախատեսված 160-ի և 2015 թվականի 134-ի դիմաց:

Գյուտերի, օգտակար մոդելների, արդյունաբերական նմուշների, ապրանքային և սպասարկման նշանների, ապրանքների ծագման տեղանունների, ֆիրմային անվանումների, ինտեգրալ միկրոսխեմաների տոպոլոգիաների իրավական պահպանության հետ կապված գործողությունների համար հաշվետու տարում ՀՀ պետական բյուջե է վճարվել 509.9 մլն դրամ պետական տուրք՝ 12.6%-ով գերազանցելով կանխատեսված ցուցանիշը, ինչը պայմանավորված է հայտատուների թվաքանակի աճով: Նշված մուտքերը նախորդ տարվա համեմատ գրեթե չեն փոփոխվել:

2016 թվականի սեպտեմբերի 28-ին ՀՀ Ազգային Ժողովի կողմից ընդունված՝ «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն և լրացումներ կատարելու մասին» ՀՕ-156-Ն ՀՀ օրենքով (ուժի մեջ է մտել 2016 թվականի նոյեմբերի 5-ից)՝

1) ապրանքային նշանների պետական գրանցամատյանից քաղվածքներ տալու համար պետական տուրք է սահմանվել բազային տուրքի կրկնապատիկի չափով,

2) սահմանվել է, որ գյուտի, օգտակար մոդելի արտոնագիր տալու համար, արդյունաբերական նմուշի, ապրանքային նշանների գրանցման և վկայագիր տալու, աշխարհագրական նշումների և ծագման տեղանունների գրանցման և (կամ) օգտագործման վկայագիր տալու, երաշխավորված ավանդական արտադրանքի գրանցման տալու համար պետական տուրքերը՝ այդ մասին լիազորված պետական կառավարման մարմնի որոշումը ստանալու օրվանից եռամսյա ժամկետի ավարտից հետո վճարվելու դեպքում՝ ապրանքային նշանների գրանցման և վկայագիր տալու համար տուրքերի չափերն ավելացվում են ոչ թե 50 տոկոսով, այլ 20 տոկոսով,

3) սահմանվել է, որ ապրանքային նշանի գրանցման գործողության, ինչպես նաև աշխարհագրական նշման կամ ծագման տեղանվան օգտագործման իրավունքի վկայագրի գործողության ժամկետը երկարաձգելու համար պետական տուրքը գործողության տասներորդ տարվա ավարտից հետո վճարվելու դեպքում՝ ապրանքային նշանի գրանցման գործողության ժամկետը երկարաձգելու համար տուրքի չափն ավելացվում է ոչ թե 50 տոկոսով, այլ 20 տոկոսով,

4) սահմանել, որ ապրանքային նշանի գրանցման գործողության ժամկետը երկարաձգելու համար մեկից ավելի յուրաքանչյուր դասի համար՝ լրացուցիչ տուրքը ֆիզիկական անձինք, ինչպես նաև մինչև 25 աշխատող ունեցող իրավաբանական անձինք վճարում են 75 տոկոս զեղչով, իսկ 25-ից 100 աշխատող ունեցող իրավաբանական անձինք՝ 50 տոկոս զեղչով:

Ֆիզիկական անձանց տրվող իրավաբանական նշանակության փաստաթղթերի, որոշակի ծառայությունների կամ գործողությունների համար 2016 թվականին գանձվել է շուրջ 3.9 մլրդ դրամ (պետական տուրքի մուտքերի 11.6%-ը)՝ 99.9%-ով ապահովելով կանխատեսված ցուցանիշը և 23.7%-ով զիջելով նախորդ տարվա փաստացի մուտքերը, ինչը հիմնականում պայմանավորված է նույնականացման քարտեր և կենսաչափական կողմնորոշիչներ պարունակող անձնագրերի համար դիմողների թվի նվազմամբ՝ կապված 2016 թվականի օգոստոս ամսին ընդունված «Հայաստանի

Հանրապետության քաղաքացու անձնագրի մասին» և «Նույնականացման քարտերի մասին» ՀՀ օրենքներում կատարված փոփոխությունների հետ, որի համաձայն մինչև 2019 թվականը ՀՀ քաղաքացիներն իրենց ցանկությամբ կարող են ստանալ նաև ՀՀ կառավարության 1998 թվականի դեկտեմբերի 25-ի թիվ 821 որոշմամբ նախատեսված անձնագրեր՝ նույնականացման քարտի և (կամ) «Հայաստանի Հանրապետության քաղաքացու անձնագրի մասին» ՀՀ օրենքով նախատեսված անձնագրի (կենսաչափական կողմնորոշիչներ պարունակող էլեկտրոնային անձնագիր) փոխարեն: Նշվածով պայմանավորված՝ 2016 թվականի երկրորդ կեսից կրճատվել է նույնականացման քարտեր և կենսաչափական կողմնորոշիչներ պարունակող անձնագրերի համար դիմողների թիվը, հետևաբար և համապատասխան բյուջետային մուտքերի ծավալը: Եվ հակառակը, ավելացել է ՀՀ կառավարության 1998 թվականի դեկտեմբերի 25-ի թիվ 821 որոշմամբ նախատեսված անձնագրեր ստացողների թիվը, որով էլ պայմանավորված՝ նախորդ տարվա համեմատ ավելացել են բյուջետային համապատասխան մուտքերը: Մինչև փոփոխություններ կատարելը մինչև 16 տարեկան քաղաքացիներին անձնագիրը տրամադրվում էր 3 տարի վավերականության ժամկետով, իսկ 16 տարին լրացած քաղաքացիներին՝ 10 տարի վավերականության ժամկետով, փոփոխությունների արդյունքում մինչև 6 տարեկան քաղաքացիներին անձնագիրը տրամադրվում է 3 տարի վավերականության ժամկետով, 6 տարեկանից մինչև 16 տարին լրացած քաղաքացիներին՝ 5 տարի վավերականության ժամկետով, բայց ոչ ավել, քան 18 տարին լրանալը, իսկ 16 տարին լրացած քաղաքացիներին՝ 10 տարի վավերականության ժամկետով:

2015 թվականի դեկտեմբերի 17-ին ՀՀ Ազգային Ժողովի կողմից ընդունված՝ «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՕ-195-Ն ՀՀ օրենքով (ուժի մեջ է մտել 2016 թվականի հունիսի 30-ից) փախստականի կենսաչափական տվյալներ պարունակող կոնվենցիոն ճամփորդական փաստաթուղթ և փախստականի նույնականացման քարտ տալու համար սահմանվել է պետական տուրք՝ համապատասխանաբար բազային տուրքի 25-ապատիկի և 3-ապատիկի չափով:

2015 թվականի հունիսի 22-ին ՀՀ Ազգային Ժողովի կողմից ընդունված՝ «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» ՀՕ-83-Ն օրենքով (ուժի մեջ է մտել 2015 թվականի հուլիսի 30-ից) սահմանվել է, որ օտարերկրյա քաղաքացիների համար Հայաստանի Հանրապետությունում աշխատանքի թույլտվություն ստանալու համար գործատուից գանձվում է պետական տուրք՝ բազային տուրքի 25-ապատիկի չափով:

Հաշվետու տարում պետական բյուջե մուտքագրված պետական տուրքերի 27.7%-ը ստացվել է *լիցենզավորման ենթակա գործունեություն իրականացնելու նպատակով լիցենզիաներ տալու* համար: Նշված տուրքերի գծով պետական բյուջե է մուտքագրվել 8.4 մլրդ դրամ՝ 12.5%-ով զիջելով կանխատեսված և 7.5%-ով՝ նախորդ տարվա փաստացի ցուցանիշները: Կանխատեսված

ցուցանիշից շեղումը հիմնականում պայմանավորված է օրենսդրական փոփոխություններով: 2015 թվականի նոյեմբերի 13-ին ընդունվել է «Գործունեության իրականացման ծանուցման մասին» թիվ ՀՕ-124-Ն օրենքը, որով սահմանվել են ծանուցման ենթակա գործունեության տեսակները: Համապատասխան փոփոխություններ են կատարվել «Լիցենզավորման մասին» և «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքներում («Լիցենզավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» 13.11.2015թ. թիվ ՀՕ-121-Ն օրենք և «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 13.11.2015թ. թիվ ՀՕ-121-Ն օրենք), որոնց համաձայն 2015 թվականից դեկտեմբերի 5-ից պարզ ընթացակարգով լիցենզավորման ենթակա գործունեթյան տեսակները (բացառությամբ ինտերնետ շահումով խաղերի կազմակերպման գործունեության տեսակի) և գործունեության մի շարք այլ տեսակներ դարձել են ծանուցման ենթակա գործունեության տեսակներ, իսկ ինտերնետ շահումով խաղերի կազմակերպման գործունեությունը ներառվել է վիճակախաղերի, շահումներով խաղերի բնագավառում: 2016 թվականի ընթացքում օրենքով սահմանված դեպքերում ծանուցման ենթակա գործունեությամբ զբաղվելու իրավունք ձեռք բերելու համար պետական բյուջե է մուտքագրվել 816.6 մլն դրամ պետական տուրք:

Հաշվետու տարում 530.2 մլն դրամ ստացվել է պետական սեփականություն հանդիսացող ընդերքի և բնական ռեսուրսների օգտագործման բնագավառից՝ կազմելով ծրագրի 70.5%-ը, որը պայմանավորված է ընդերքօգտագործման բնագավառում տրված թույլտվությունների քանակի նվազմամբ՝ որոշ կազմակերպությունների իրավունքների դադարեցմամբ և հրաժարմամբ, ինչպես նաև ընկերությունների կողմից դեռևս չվաճարված տուրքերով: Նշված մուտքերը 1.7%-ով կամ 9.0 մլն դրամով գերազանցել են նախորդ տարվա ցուցանիշը, որը պայմանավորված է ընդերքօգտագործման բնագավառում տնտեսավարող սուբյեկտների և լիցենզառուների նոր իրավունքների աճով՝ տրվել են երկրաբանական ուսումնասիրության և հանքավայրերի շահագործման իրավունքներ:

Տրանսպորտի բնագավառի լիցենզավորման գծով ՀՀ պետական բյուջե է մուտքագրվել 418.9 մլն դրամ՝ կազմելով ծրագրի 100%ը և 2.4%-ով գերազանցելով նախորդ տարվա ցուցանիշը, որը պայմանավորված է լիցենզառուների թվաքանակի աճով:

Քաղաքաշինության բնագավառում լիցենզավորման գծով մուտքերը կազմել են 324.3 մլն դրամ կամ ծրագրային ցուցանիշի 83.5%-ը, ինչը պայմանավորված է նրանով, որ շինարարության որակի տեխնիկական հսկողության, շենքերի և շենք-շինությունների տեխնիկական վիճակի հետազննության հաշվետվությունները չներկայացնելու, որոշումներին չհամապատասխանեցնելու, ինչպես նաև հաշվետվությունները խեղաթյուրված կամ թերի ներկայացնելու, ինչպես նաև տարեկան պետական տուրքը չվճարելու պատճառով կասեցվել կամ դադարեցվել են մի շարք

կազմակերպությունների լիցենզիաները: Նշված մուտքերը նախորդ տարվա համեմատ աճել են 4.4%-ով:

Էներգետիկայի բնագավառի լիցենզավորման գծով ստացվել է 304.9 մլն դրամ, որը 15.8%-ով գերազանցել է նախատեսված և 10.5%-ով նախորդ տարվա փաստացի ցուցանիշները՝ պայմանավորված էներգետիկայի բնագավառում նոր լիցենզիաների տրամադրմամբ, ինչպես նաև լիցենզավորված անձանց կողմից կատարված գերավճարներով:

Հեռահաղորդակցության բնագավառում լիցենզավորման գծով ստացվել է 225.6 մլն դրամ՝ կազմելով ծրագրի 101%ը և 10.2%-ով զիջելով նախորդ տարվա ցուցանիշը, ինչը պայմանավորված է նրանով, որ 2016 թվականի հունվար ամսվա պետական տուրքի գծով գումարների մի մասը վճարվել է 2015 թվականի դեկտեմբեր ամսին:

Առողջապահության բնագավառի լիցենզավորման գծով ստացվել է 190.9 մլն դրամ, որը 17.8%-ով զիջել է նախատեսված և 1.7%-ով՝ նախորդ տարվա փաստացի ցուցանիշները՝ պայմանավորված լիցենզավորվող կազմակերպությունների թվաքանակի նվազմամբ: 2016 թվականի մայիսի 17-ին ՀՀ Ազգային Ժողովի կողմից ընդունված՝ «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն և լրացումներ կատարելու մասին» ՀՕ-88-Ն ՀՀ օրենքով (ուժի մեջ է մտել 2016 թվականի դեկտեմբերի 15-ից) դեղերի մեծածախ իրացման համար սահմանվել է տարեկան պետական տուրք բազային տուրքի 100-ապատիկի չափով:

Լիցենզավորումից ստացված մուտքերի վրա ազդեցություն են գործել նաև հետևյալ օրենսդրական փոփոխությունները:

2015 թվականի հունիսի 23-ին ՀՀ Ազգային Ժողովի կողմից ընդունված՝ «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում և փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության ՀՕ-112-Ն օրենքով (ուժի մեջ է մտել 2016 թվականի հունվարի 22-ից) խմելու ջրամատակարարման կամ ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) ծառայությունների մատուցման համար սահմանվել է տարեկան պետական տուրք բազային տուրքի 100-ապատիկի չափով: Միաժամանակ, նշյալ օրենքով ուժը կորցրած է ճանաչվել «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 19.4-րդ հոդվածի 8-րդ կետը, որով ջրային համակարգի օգտագործման թույլտվության տրամադրման համար սահմանված էր պետական տուրք ֆիզիկական անձանց համար բազային տուրքի չափով, իսկ իրավաբանական անձանց համար՝ բազային տուրքի 10-ապատիկի չափով:

2015 թվականի դեկտեմբերի 18-ին ՀՀ Ազգային Ժողովի կողմից ընդունված՝ «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» ՀՕ-204-Ն ՀՀ օրենքով (ուժի մեջ է մտել 2016 թվականի հունվարի 1-ից)՝

1) վերացվել է անալոգային հեռարձակումների թույտվության տրամադրման համար սահմանված պետական տուրքը,

2) մասնավոր մուլտիպլեքսորի գործունեության համար սահմանվել է տարեկան պետական տուրք բազային տուրքի 100000-ապատիկի չափով:

2015 թվականի դեկտեմբերի 21-ին ՀՀ Ազգային Ժողովի կողմից ընդունված՝ «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» ՀՕ-10-Ն ՀՀ օրենքով (ուժի մեջ է մտել 2016 թվականի հունվարի 23-ից) չմասնատվող բեռ փոխադրող ծանրաքաշ տրանսպորտային միջոցին օրենքով սահմանված դեպքերում ՀՀ ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային ճանապարհներով մեկանգամյա փոխադրման իրականացման հատուկ թույլտվություն տալու համար սահմանվել է պետական տուրք՝ բազային տուրքի 10-ապատիկի չափով:

2015 թվականի հոկտեմբերի 6-ին ՀՀ Ազգային Ժողովի կողմից ընդունված՝ «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» ՀՕ-114-Ն ՀՀ օրենքով (ուժի մեջ է մտել 2016 թվականի մայիսի 4-ից) շարունակական մասնագիտական զարգացման հավաստագիր ստանալու համար սահմանվել է պետական տուրք՝ ավագ բուժաշխատողի համար՝ բազային տուրքի եռապատիկի չափով, իսկ միջին բուժաշխատողի համար՝ բազային տուրքի չափով:

2016 թվականի մայիսի 12-ին ՀՀ Ազգային Ժողովի կողմից ընդունված՝ «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» ՀՕ-78-Ն ՀՀ օրենքով (ուժի մեջ է մտել 2016 թվականի հունիսի 18-ից) վանակատի (օբսիդիանի) յուրաքանչյուր հանքավայրի օգտագործման (շահագործման) թույլտվության տրամադրման համար պետական տուրքի դրույքաչափը բազային տուրքի 10000-ապատիկի փոխարեն սահմանվել է բազային տուրքի 100-ապատիկի չափով:

2016 թվականի մայիսի 12-ին ՀՀ Ազգային Ժողովի կողմից ընդունված՝ «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» ՀՕ-79-Ն ՀՀ օրենքով (ուժի մեջ է մտել 2016 թվականի հունիսի 18-ից) Եվրասիական տնտեսական միության շրջանակներում արտաքին առևտրի ոլորտում սահմանափակումների ենթակա ապրանքներ երրորդ երկրներից ներմուծելու և (կամ) երրորդ երկրներ արտահանելու լիցենզիաներ կամ թույլտվություններ կամ հավաստագրեր (կամ դրանց կրկնօրինակներ) տրամադրելու համար պետական տուրք է սահմանվել բազային տուրքի չափով, եթե «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքով այլ դրույքաչափ նախատեսված չէ:

2015 թվականի դեկտեմբերի 21-ին ՀՀ Ազգային Ժողովի կողմից ընդունված՝ «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» ՀՕ-20-Ն ՀՀ

օրենքով (ուժի մեջ է մտել 2016 թվականի հուլիսի 20-ից) ստորերկրյա քաղցրահամ ջրերի օգտագործման նպատակով հորատման գործունեության համար սահմանվել է պետական տուրք տարեկան բազային տուրքի 200-ապատիկի չափով:

2016 թվականի հունիսի 29-ին ՀՀ Ազգային Ժողովի կողմից ընդունված՝ «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության ՀՕ-123-Ն օրենքով (ուժի մեջ է մտել 2016 թվականի օգոստոսի 6-ից)՝

1) ջրօգտագործման թույլտվության տրամադրման, թույլտվության գործողության ժամկետի երկարաձգման, թույլտվության վերաձևակերպման համար պետական տուրք է սահմանվել ֆիզիկական անձանց համար՝ բազային տուրքի չափով, իսկ իրավաբանական անձանց համար՝ բազային տուրքի 10-ապատիկի չափով,

2) երկակի նշանակության ապրանքների արտահանման և երկակի նշանակության տեղեկատվության և մտավոր գործունեության արդյունքների փոխանցման անհատական թույլտվություն տալու համար պետական տուրքի դրույքաչափը բազային տուրքի 20-ապատիկի փոխարեն սահմանվել է բազային տուրքի 30-ապատիկի չափով,

3) երկակի նշանակության ապրանքների արտահանման և երկակի նշանակության տեղեկատվության և մտավոր գործունեության արդյունքների փոխանցման անհատական և ընդհանուր թույլտվության իրավունքը հավաստող փաստաթղթի կրկնօրինակը տալու համար պետական տուրք է սահմանվել բազային տուրքի 5-ապատիկի չափով:

2016 թվականին օրենքով սահմանված *այլ ծառայությունների և գործողությունների* համար գանձվել են շուրջ 11.3 մլրդ դրամ պետական տուրքեր՝ ապահովելով 100.6% կատարողական և պետական տուրքի մուտքերի 33.9%-ը: Նախորդ տարվա համեմատ օրենքով սահմանված այլ ծառայությունների և գործողությունների համար գանձված տուրքերն աճել են 9%-ով կամ 929.1 մլն դրամով, որը մեծ մասամբ պայմանավորված է նշված խմբում մեծ տեսակարար կշիռ ունեցող՝ ՀՀ-ից օդային տրանսպորտով ֆիզիկական անձանց (օդային ուղևորների) ելքի համար բյուջե մուտքագրված տուրքերի նվազմամբ: Հաշվետու տարում նշված մուտքերը կազմել են շուրջ 9.5 մլրդ դրամ՝ 100%-ով ապահովելով կանխատեսված և 8.9%-ով գերազանցելով նախորդ տարվա փաստացի ցուցանիշը, որը պայմանավորված է փաստացի մեկնող ուղևորների քանակի ավելացմամբ:

Օրենքով սահմանված այլ ծառայությունների և գործողությունների համար գանձված պետական տուրքի գումարներից 917.2 մլն դրամը ստացվել է վարորդական իրավունքի վկայական և կորցրած վկայականի կրկնօրինակը տալու համար՝ 100.9%-ով ապահովելով կանխատեսված և

8.9%-ով գերազանցելով նախորդ տարվա փաստացի ցուցանիշները, ինչը պայմանավորված է դիմողների քանակի աճով:

Պետական մենաշնորհային բնույթի ծառայությունների (գործողությունների) մատուցումը հաստատող փաստաթղթի (վկայականի) տրամադրման համար յուրաքանչյուր քննությունը ընդունելու համար գանձված տուրքերը կազմել են 274.5 մլն դրամ՝ 99.7%-ով ապահովելով կանխատեսված և 8.2%-ով գերազանցելով նախորդ տարվա փաստացի ցուցանիշներրը: Նախորդ տարվա համեմատ նշված մուտքերի աճը պայմանավորված է դիմողների քանակի աճով:

Գունավոր մետաղի թափոնների և ջարդոնի արտահանման համար գանձված պետական տուրքերը կազմել են 285.8 մլն դրամ՝ 22.1%-ով գերազանցելով կանխատեսված և 15.3%-ով՝ նախորդ տարվա փաստացի ցուցանիշը, որը պայմանավորված է տուրք վճարողների քանակի աճով (հաշվետու տարում տուրք վճարողների քանակը կազմել է 4՝ նախորդ տարվա 1-ի դիմաց):

«Հայ», «Հայաստան», «հայկական» բառերը և դրանց թարգմանությունները ֆիրմային անվանման տարբերակող նշանակության անվան մեջ օգտագործելու թույլտվության համար գանձված տուրքերը կազմել են շուրջ 100.5 մլն դրամ՝ 100%-ով ապահովելով կանխատեսված և 1.9%-ով գերազանցելով նախորդ տարվա փաստացի ցուցանիշները:

2015 թվականի դեկտեմբերի 16-ին ՀՀ Ազգային Ժողովի կողմից ընդունված՝ «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» ՀՕ-192-Ն ՀՀ օրենքով (ուժի մեջ է մտել 2016 թվականի հունվարի 9-ից) սահմանվել է, որ ՀՀ պետական ռեգիստրում պահվող և ինտերնետային կայքում տեղադրված ամբողջական տեղեկությունների տրամադրման համար պետական տուրքի վճարումից ազատվում են նաև Հայաստանի Հանրապետության դատախազական մարմինները:

2016 թվականի փետրվարի 19-ին ՀՀ Ազգային Ժողովի կողմից ընդունված՝ «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն և լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության ՀՕ-30-Ն օրենքով (ուժի մեջ է մտել 2016 թվականի մարտի 20-ից) խաղողի օղիների և խաղողի օղու թորվածքների արտադրության իրականացման իրավունք ձեռք բերելու համար սահմանվել է պետական տուրք տարեկան բազային տուրքի 50-ապատիկի չափով՝ նախկինում գործող տարեկան բազային տուրքի 15000-ապատիկի փոխարեն:

2016 թվականի մայիսի 17-ին ՀՀ Ազգային Ժողովի կողմից ընդունված՝ «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն և լրացումներ կատարելու մասին» ՀՕ-88-Ն ՀՀ օրենքով (ուժի մեջ է մտել 2016 թվականի դեկտեմբերի 15-ից)՝

1) պատշաճ արտադրական գործունեության հավաստագիր տալու համար, պատշաճ բաշխման գործունեության հավաստագիր տալու համար սահմանվել է պետական տուրք տարեկան բազային տուրքի 30-ապատիկի չափով,

2) դեղերի, դեղանյութերի, դեղաբուսական հումքի և հետազոտվող դեղագործական արտադրանքի ներմուծման կամ արտահանման հավաստագիր տալու համար սահմանվել է պետական տուրք տարեկան բազային տուրքի 5-ապատիկի չափով:

<u>Պաշտոնական դրամաշնորհներ</u>

2016 թվականին արտաքին աղբյուրներից տրամադրվել են շուրջ 31.4 մլրդ դրամ պաշտոնական դրամաշնորհներ՝ կազմելով տարեկան ճշտված ծրագրի 73.1%-ը, այսինքն՝ կանխատեսվածից պակաս է ստացվել 11.6 մլրդ դրամ: Շեղումը հիմնականում պայմանավորված է նպատակային ծրագրերի կատարման աստիճանով, որոնց շրջանակներում հաշվետու ժամանակահատվածում ստացվել է 19.1 մլրդ դրամ՝ կազմելով ծրագրային ցուցանիշի 63.1%-ը: Նշված գումարից 3.0 մլրդ դրամը ստացվել է ՀՀ պետական մարմինների արտաբյուջետային ծրագրերի շրջանակներում, որը կազմել է կանխատեսված ցուցանիշի 77%-ը: Դրա հիմնական մասը՝ 1.8 մլրդ դրամը, ստացվել է «Աջակցություն մարդու իրավունքների պաշտպանությանը Հայաստանի Հանրապետությունում» ծրագրի շրջանակներում, որը հատկացվել է Միացյալ ազգերի կազմակերպության զարգացման ծրագրին՝ ՀՀ-ում ընտրական գործընթացներին աջակցության ծրագիրը համակարգելու համար, և ընտրական գործընթացի թափանցիկությունն ապահովելու նպատակով տեսահսկողության համակարգի ձեռքբերմանը: Արտաբյուջետային ծրագրերի շրջանակներում ստացված միջոցների շեղումը ծրագրվածից հիմնականում պայմանավորված է ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության «Սոցիալական ոլորտի բարեփոխումներ» դրամաշնորհային ծրագրի աշխատանքներով, որոնք տեղափոխվել են 2017 թվական, և ՀՀ կառավարության աշխատակազմի «Օժանդակություն Հայաստանի հակակոռուպցիոն ռազմավարության իրականացմանը» դրամաշնորհային ծրագրի կատարողականով, որի մեկնարկը սկսվել է նախատեսվածից ավելի ուշ՝ 2016 թվական նոյեմբերից:

Մյուս նպատակային ծրագրերի շրջանակներում ստացվել է կանխատեսված միջոցների 61.0%-ը՝ շուրջ 16.0 մլրդ դրամ: Նպատակային ծրագրերի շրջանակներում 3.5 մլրդ դրամ (նախատեսվածի 84.4%-ը) հատկացվել է Եվրոպական միության հարևանության ներդրումային ծրագրի, 3.4 մլրդ դրամ (նախատեսվածի 93.7%-ը)՝ Համաշխարհային բանկի, 2.7 մլրդ դրամ (նախատեսվածի 70.8%-ը)՝ Ռուսաստանի Դաշնության, 1.9 մլրդ դրամ (նախատեսվածի 98.5%-ը)՝ Գլոբալ հիմնադրամի, 1.2 մլրդ դրամ (նախատեսվածի 96.7%-ը)՝ Գերմանիայի զարգացման վարկերի բանկի, 1.1 մլրդ դրամ (նախատեսվածի 90.5%-ը)՝ Եվրոպական ներդրումային բանկի, 745.7 մլն դրամ (նախատեսվածի 80.5%-ը)՝ Դանիական Թագավորության, 418.1 մլն դրամ (նախատեսվածի 76.4%-ը)՝ Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի, 342.8 մլն դրամ (նախատեսվածի

99.0%-ը)՝ ԱՄՆ-ի, 369.3 մլն դրամ (նախատեսվածի 98.9%-ը)՝ Իրանի Իսլամական Հանրապետության, 186.9 մլն դրամ (նախատեսվածի 121.0%-ը)՝ Գլոբալ էկոլոգիական հիմնադրամի, 97.0 մլն դրամ (նախատեսվածի 94.0%-ը)՝ Գյուղատնտեսության զարգացման միջազգային հիմնադրամի, 25.8 մլն դրամ (նախատեսվածի 100.0%-ը)՝ Ավստրիայի զարգացման գործակալության, 21.6 մլն դրամ (նախատեսվածի 52.4%-ը)՝ ՄԱԿ-ի ՇՄ ծրագրի և 13.3 մլն դրամ (նախատեսվածի 86.4%-ը)՝ Նիդերլանդների կառավարության կողմից: Նշենք նաև, որ 2016 թվականին Եվրոպական միության, ինչպես նաև Գերմանիայի զարգացման և Եվրոպական միության հարևանության ներդրումային բանկի աջակցությամբ իրականացվող ծագրերի շրջանակներում նախատեսված դրամաշնորհները՝ համապատասխանաբար 5.3 մլրդ և 2.4 մլրդ դրամի չափով, չեն ստացվել:

2016 թվականին շուրջ 12.4 մլրդ դրամ է ստացվել Եվրամիության կողմից ոչ նպատակային ծրագրերի շրջանակներում՝ կազմելով ծրագրվածի 96.8%-ը: Մասնավորապես՝ նշված գումարից Հայաստանում արդարադատության ոլորտի բարեփոխումներին աջակցության ծրագրի 2-րդ փուլի շրջանակներում նախատեսված 5.2 մլրդ դրամի դիմաց ստացվել է ավելի քան 4.9 մլրդ դրամ կամ ծրագրվածի 95.0%-ը: Ավելի քան 1.5 մլրդ դրամը ստացվել է ԵՀՔ գործողությունների ծրագրի իրականացմանը և ապագա Ասոցիացման համաձայնագրի գծով նախապատրաստական աշխատանքներին ՀՀ կառավարությանն աջակցության ծրագրի 2-րդ փուլի շրջանակներում՝ կազմելով նախատեսված 3.6 մլրդ դրամի 42.5%-ը, որը պայմանավորված է հետևյալով. Եվրոպական միությունը համարում է, որ հարաբերական առաջընթաց արձանագրելով ԵՄ-Հայաստան Եվրոպական հարևանության քաղաքականության գործողությունների ծրագրի և Հայաստանի ազգային զարգացման ռազմավարության իրականացման մեջ, Հայաստանի կառավարությունը համապատասխանում է ընդհանուր պայմաններին, արժանահավատ և կայունությանն ուղղված համապատասխան մակրոտնտեսական քաղաքականության իրականացմանը, հանրային ֆինանսների կառավարման և բյուջեի թափանցիկության և վերահսկողության բարեփոխումների առաջընթացին: Ինչ վերաբերում է հատուկ պայմանների իրականացմանը, ըստ ԵՄ գնահատականների, չորս պայմանները մասնակիորեն կատարվել են, իսկ մեկ պայմանի ձեռքբերումը հետաձգվել է մինչև 2017 թվականի ավարտը: ԵՄ կողմից «Աջակցություն ՀՀ գյուղատնտեսությանը և գյուղի զարգացմանը» 2013 թվականի ԵՄ բյուջետային աջակցության ծրագրի ֆինանսավորման համաձայնագրի 1-ին հատկացման շրջանակներում 2016 թվականին նախատեսված 3.6 մլրդ դրամը հատկացվել է գրեթե ամբողջությամբ: Շուրջ 2 մլրդ դրամ է ստացվել Եվրոպական հարևանության շրջանակներում ՀՀ-ԵՄ գործողությունների ծրագրով նախատեսված՝ «Մասնագիտական կրթության և ուսուցման (ՄԿՈՒ) բարեփոխման շարունակություն և զբաղվածության հայեցակարգի մշակում» 2009 թվականի ֆինանսավորման համաձայնագրի

շրջանակներում, որը նախատեսված էր 2015 թվականի պետական բյուջեով: ԵՄ կողմից «Աջակցություն Հայաստանում մարդու իրավունքների պաշտպանությանը» ԵՄ բյուջետային աջակցության ծրագրի ֆինանսավորման համաձայնագրի հատկացման շրջանակներում 2016 թվականին նախատեսված 260.4 մլն դրամը տրամադրվել է գրեթե ամբողջությամբ:

Նախորդ տարվա համեմատ պաշտոնական դրամաշնորհներից պետական բյուջեի մուտքերն աճել են 5.1%-ով կամ 1.5 մլրդ դրամով:

<u>Այլ եկամուտներ</u>

2016 թվականին ՀՀ պետական բյուջե են մուտքագրվել շուրջ 60.0 մլրդ դրամ այլ եկամուտներ, որը կազմում է բյուջեի եկամուտների 5.1%-ը՝ նախորդ տարվա 6%-ի դիմաց: Այլ եկամուտների՝ կառավարության լիազորությունների շրջանակներում ճշտված ծրագրով սահմանված ցուցանիշն ապահովվել է 97.3%-ով: Այլ եկամուտներից 29.4 մլրդ դրամը կազմել են պետական հիմնարկների արտաբյուջետային հաշիվների մուտքերը, որոնք ստացվել են 86.2%-ով: 2015 թվականի համեմատ այլ եկամուտները նվազել են 14.2%-ով՝ հիմնականում պայմանավորված բանկերում և այլ ֆինանսական հաստատություններում բյուջեի ժամանակավոր ազատ միջոցների տեղաբաշխումից և դեպոզիտներից ստացվող տոկոսավճարների, ռեզիդենտներին տրամադրված վարկերի օգտագործման տոկոսավճարների, ապրանքների մատակարարումից ու ծառայությունների մատուցումից և իրավախախտումների համար գործադիր և դատական մարմինների կողմից կիրառվող պատժամիջոցներից մուտքերի նվազմամբ:

2016 թվականին 487.5 մլն դրամ պետական բյուջե է մուտքագրվել *պետական սեփականություն հանդիսացող գույքի վարձակալության* դիմաց, որը գերազանցել է կանխատեսված մուտքերը 2.5 անգամ: Մասնավորապես՝ 468.2 մլն դրամ է մուտքագրվել պետական հիմնարկների հաշվեկշիռներում հաշվառվող գույքի վարձակալությունից: Ծրագրի գերազանցումը հիմնականում պայմանավորված է ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտեի գծով ստացված մուտքերով, որոնք ՀՀ 2016 թվականի պետական բյուջեով չէին նախատեսվել: «Երևան Ջուր» ՓԲԸ-ի հետ ստորագրված գույքի վարձակալության պայմանագրում 2016 թվականին կատարված փոփոխությունների համաձայն պայմանագրի երկարացված ժամանակահատվածի համար ՀՀ պետական բյուջե է վճարվել 184.8 մլն դրամ՝ 2015 թվականի 316.9 մլն դրամի դիմաց: Հիմնականում նշված եկամուտների նվազման արդյունքում 2015 թվականի համեմատ պետական սեփականություն հանդիսացող գույքի վարձակալությունից եկամուտները նվազել են 23.4%-ով:

Հաշվետու տարվա ընթացքում *բանկերում և այլ ֆինանսավարկային հաստատություններում բյուջեի ժամանակավոր ազատ միջոցների տեղաբաշխումից և դեպոզիտներից* ստացվել են ավելի քան 5.2 մլրդ դրամ տոկոսավճարներ՝ 100.0%-ով ապահովելով ծրագիրը: 2016 թվականին ՀՀ կենտրոնական բանկի և ՀՀ ֆինանսների նախարարության միջև կնքվել է թվով 136 ավանդային պայմանագիր՝ 726.5 մլրդ դրամ ընդհանուր գումարով: Նախորդ տարի կնքվել է 112 ավանդային պայմանագիր՝ 701 մլրդ դրամ ընդհանուր գումարով: 2015 թվականի համեմատ ավանդադրվող գումարի տարբերությունը բացատրվում է այն հանգամանքով, որ 2016 թվականի ընթացքում դրամավարկային և հարկաբյուջետային քաղաքականությունների կոորդինացման, ինչպես նաև կանխիկ հոսքերի կառավարման շրջանակներում պարբերաբար թողարկվել են պարտատոմսեր և ավանդադրվել ՀՀ կենտրոնական բանկում: Նախորդ տարվա համեմատ նշված եկամուտները նվազել են 47.6%-ով կամ 4.7 մլրդ դրամով: Վերջինս պայմանավորված է տոկոսադրույքների նվազմամբ, մասնավորապես՝ 2016 թվականի ընթացում ներդրված ավանդների միջին կշռված տոկոսադրույքը կազմել է 7.6%՝ նախորդ տարվա 11.4%-ի դիմաց:

Իրավաբանական անձանց բաժնետիրական կապիտալում կատարված ներդրումներից ստացվել են շուրջ 1.7 մլրդ դրամ շահութաբաժիններ՝ 2.3 անգամ գերազանցելով ծրագրային ցուցանիշը և 50.5%-ով՝ նախորդ տարվա ցուցանիշը: Մուտքերի նման բարձր մակարդակը հիմնականում պայմանավորված է նրանով, որ ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության համակարգի «Բարձրավոլտ էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի կողմից ծրագրավորված 47.0 մլն դրամի դիմաց ՀՀ պետական բյուջե է վճարվել 915.1 մլն դրամ՝ 2015 թվականի գործունեության արդյունքներով արտարժույթի փոխարժեքի փոփոխությունից շահույթ ունենալու, ինչպես նաև ծառայությունների մատուցման բավարար սակագին ունենալու արդյունքում: Շահութաբաժինների գծով մուտքերի աճը պայմանավորված է նաև որոշ կազմակերպությունների՝ նախորդ տարիների պարտավորությունների մարումներով:

Պետության կողմից տրված վարկերի օգտագործման դիմաց ստացված տոկոսավճարները 10.3%-ով գերազանցել են ծրագիրը՝ կազմելով շուրջ 13.1 մլրդ դրամ, որից 13.0 մլրդ դրամը ստացվել է ռեզիդենտներին, 175.6 մլն դրամը՝ ոչ ռեզիդենտներին (Վրաստանին) տրամադրված վարկերի օգտագործման դիմաց: Ռեզիդենտներին տրամադրված վարկերի օգտագործման տոկոսավճարներն ապահովելով են ծրագրային ցուցանիշը 110.4%-ով, ինչը պայմանավորված է տրամադրված այլ բյուջետային վարկի գծով չծրագրված 518.2 մլն դրամ տոկոսագումարի վճարմամբ, նախկինում տրամադրված վարկերի գծով նոր մասհանումների և տրամադրված վարկերի մարման ժամկետների փոփոխության արդյունքում վարկերի հիմնական գումարների ավելացմամբ պայմանավորված՝ լրացուցիչ շուրջ 470.0 մլն դրամ տոկոսագումարների հաշվարկմամբ և մարմամբ, ինչպես նաև 2016 թվականի ընթացքում արտարժույթի փոխարժեքի տատանման արդյունքում 230.0 մլն դրամ

լրացուցիչ մուտքերով: Նախորդ տարվա համեմատ տոկոսավճարներից մուտքերը նվազել են 14.5%-ով կամ 2.2 մլրդ դրամով, որը պայմանավորված է ՀՀ կառավարության կողմից այլ վարկերի գծով նախատեսված տոկոսագումարների և հիմնական գումարի վճարման ժամկետի երկարաձգմամբ:

2016 թվականի ընթացքում պետական բյուջե են մուտքագրվել 444.0 մլն դրամ *ոչ պաշտոնական դրամաշնորհներ*՝ ամբողջությամբ ապահովելով տարեկան ծրագրային ցուցանիշը: Նախորդ տարվա համեմատ ոչ պաշտոնական դրամաշնորհներից մուտքերը նվազել են 47.8%-ով կամ 406.6 մլն դրամով՝ հիմնականում պայմանավորված արտաքին գործերի նախարարության արտաբյուջետային մուտքերի նվազմամբ:

Իրավախախտումների համար գործադիր և դատական մարմինների կողմից կիրառվող պատժամիջոցներից ՀՀ պետական բյուջե է գանձվել շուրջ 13.4 մլրդ դրամ՝ կազմելով ծրագրի 95.6%-ը: Շեղումը հիմնականում պայմանավորված է ՀՀ կառավարության 2015 թվականի հուլիսի 30-ի N 839-Ա որոշման համաձայն 2016 թվականին տեսչական ստուգումների թվաքանակի, հետևաբար նաև կիրառված պատժամիջոցների թվաքանակի զգալիորեն սահմանափակմամբ: Հիմնականում նշվածով պայմանավորված՝ մուտքերի անկում է արձանագրվել նաև 2015 թվականի համեմատ, որը կազմել է 8.2% կամ 1.2 մլրդ դրամ: Մասնավորապես՝ 16.9%-ով կամ 331.2 մլն դրամով նվազել են ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի, 70%-ով կամ 150.6 մլն դրամով՝ ՀՀ բնապահպանության նախարարության, 86.8%-ով կամ 102 մլն դրամով՝ ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի կողմից գանձված մուտքերը, որոնք 2016 թվականին կազմել են համապատասխանաբար 1.6 մլրդ դրամ, 64.4 մլն դրամ և 15.5 մլն դրամ:

Հաշվետու տարում *ապրանքների մատակարարումից և ծառայությունների մատուցումից* ստացված եկամուտները կազմել են 21.6 մլրդ դրամ՝ 81.1%-ով ապահովելով ծրագիրը: Շեղումը հիմնականում պայմանավորված է ՀՀ կառավարությանն առընթեր քաղաքաշինության պետական կոմիտեի պետական ծառայողներին մատչելի բնակարաններով ապահովելու ծրագրի շրջանակներում փաստացի մուտքերով, որոնք կազմել են 3.1 մլրդ դրամ կամ կանխատեսվածի 53.2%-ը, ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի ստորաբաժանումների կողմից մատուցված ծառայությունների դիմաց վճարների ցուցանիշով, որոնք կազմել են 3.3 մլրդ դրամ կամ 77.8%, ինչը պայմանավորված է 2016 թվականին կատարված գործարքների թվի նվազմամբ, ինչպես նաև ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի հարկային ծառայության համակարգի և մաքսային ծառայության նյութական խրախուսման և համակարգի զարգացման ֆոնդի՝ մաքսավճարների գծով մուտքերով, որոնք կազմել են 3.0 մլրդ դրամ կամ 77.5%՝ պայմանավորված արտաքին տնտեսական գործունեություն իրականացնողների կողմից մաքսային ձևակերպումների քանակի նվազմամբ:

Ապրանքների մատակարարումից և ծառայությունների մատուցումից ստացված եկամուտներից 17.8 մլրդ դրամը կազմել են ՀՀ պետական մարմինների արտաբյուջետային մուտքերը, մասնավորապես՝ 7.2 մլրդ դրամ են կազմել ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանության ստորաբաժանումների կողմից ՀՀ անունից պայմանագրային հիմունքներով պահպանության և անվտանգության գծով իրականացվող ծառայությունների մատուցումից, 2.7 մլրդ դրամ՝ ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանության ճանապարհային ոստիկանության կողմից արձանագրված խախտումների համար վարչական տուգանքների գանձումներից, գրանցման-քննական ծառայությունների դիմաց վճարումներից և այլ վճարովի ծառայությունների դիմաց ստացված միջոցները, 3.1 մլրդ դրամը՝ ՀՀ կառավարությանն առընթեր քաղաքաշինության պետական կոմիտեի պետական ծառայողներին մատչելի բնակարաններով ապահովելու ծրագրի շրջանակներում ստացված վճարները:

Նախորդ տարվա համեմատ ապրանքների մատակարարումից և ծառայությունների մատուցումից ստացված եկամուտները նվազել են 7.7%-ով կամ շուրջ 1.8 մլրդ դրամով, ինչը հիմնականում պայմանավորված է պետական ծառայողներին մատչելի բնակարաններով ապահովելու ծրագրի շրջանակներում ստացված միջոցների, ինչպես նաև ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի ու ՀՀ կառավարությանն առընթեր ոստիկանության արտաբյուջետային եկամուտների նվազմամբ:

Օրենքով և իրավական այլ ակտերով սահմանված այլ եկամուտների գծով պետական բյուջե է մուտքագրվել 4.1 մլրդ դրամ՝ 59.8%-ով գերազանցելով ծրագիրը և 1.7%-ով զիջելով նախորդ տարվա մուտքերը:

ՀՀ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԾԱԽՍԵՐԸ

ՀՀ 2016 թվականի պետական բյուջեի մասին օրենքով նախատեսվել էր 1,377.0 մլրդ դրամ ծախսերի կատարում: Ելնելով օրենսդրության պահանջներից՝ պետության դրամական միջոցների համախմբված հաշվառման նպատակով, պետական բյուջեի ծրագրային և փաստացի ցուցանիշներում ներառվել են նաև ՀՀ պետական հիմնարկների արտաբյուջետային հաշիվների շրջանառությունը, ինչպես նաև առանց սահմանափակման պետական բյուջեից կատարվող վճարումները: Նշված միջոցները, ինչպես նաև օրենքով ՀՀ կառավարությանը վերապահված լիազորությունների շրջանակներում կատարված փոփոխությունները ներառյալ՝ ՀՀ պետական բյուջեի ծախսերի ծրագիրն ավելացվել է 82 մլրդ դրամով (6%-ով)՝ կազմելով շուրջ 1,459.0 մլրդ դրամ: Վերջինիս դիմաց փաստացի ծախսերը կազմել են շուրջ 1,449.1 մլրդ դրամ՝ ապահովելով պետական բյուջեի ծախսային ծրագրերի շրջանակներում պետական մարմինների կողմից սահմանված կարգով ստանձնած պարտավորությունների ամբողջական և ծրագրի՝ 99.3% կատարողական: Պետական հիմնարկների արտաբյուջետային միջոցների հաշվին 2016 թվականին կատարվել են 27.1 մլրդ դրամի ծախսեր, որոնք կազմել են ծրագրի 77.5%-ը:

2016 թվականին նախորդ տարվա համեմատ ՀՆԱ-ի անվանական մեծության 0.7% աճի պայմաններում ՀՀ պետական բյուջեի ծախսերն ավելացել են 2.8%-ով, ինչը հանգեցրել է ՀՆԱ-ի նկատմամբ ծախսերի հարաբերակցության աճին. այն կազմել է 28.6%՝ 2015 թվականի 28%-ի և կանխատեսված 25.3%-ի դիմաց:

Տնտեսագիտական դասակարգում

Ընթացիկ ծախսեր

ՀՀ 2016 թվականի պետական բյուջեի ծախսերի 88.5%-ն ուղղվել է ընթացիկ ծախսերի ֆինանսավորմանը կազմելով՝ 1,281.8 մլրդ դրամ և տարեկան ծրագրի՝ 99%-ը: Նախորդ տարվա համեմատ ընթացիկ ծախսերն աճել են 3.5%-ով, ինչը հիմնականում պայմանավորված է տոկոսավճարների, կենսաթոշակների, նպաստների, դրամաշնորհների և այլ ծախսերի աճով:

Հաշվետու տարում ընթացիկ ծախսերի 11.1%-ը՝ շուրջ 142.4 մլրդ դրամ, տրամադրվել է պետական հիմնարկների աշխատողների աշխատանքի վարձատրությանը: Նշված ծախսերի գծով օգտագործվել է տարեկան նախատեսված միջոցների 97.5%-ը: Նախորդ տարվա համեմատ աշխատանքի վարձատրության ծախսերն ավելացել են 1%-ով:

2016 թվականին ծառայությունների և ապրանքների ձեռքբերման նպատակով պետական բյուջեից տրամադրվել է 162.2 մլրդ դրամ կամ բյուջեի ընթացիկ ծախսերի 12.7%-ը: Նշված ծախսերի

տարեկան ծրագիրը կատարվել է 95.3%-ով: Նախորդ տարվա համեմատ ծառայությունների և ապրանքների ձեռքբերման ծախսերը նվազել են 37.3%-ով կամ 96.5 մլրդ դրամով՝ հիմնականում պայմանավորված նախադպրոցական և հանրակրթական հաստատությունների ֆինանսավորման սկզբունքի փոփոխությամբ. եթե նախորդ տարի այն դիտարկվում էր որպես պայմանագրային ծառայությունների ձեռքբերում, ապա 2016 թվականից՝ որպես այդ կազմակերպությունների սուբսիդավորում: Նշված գործոնը հաշվի չառնելու դեպքում ծառայությունների և ապրանքների ձեռքբերման ծախսերի անկումը կկազմի 4.5% կամ 9.2 մլրդ դրամ, որը հիմնականում պայմանավորված է նյութերի և ընթացիկ նորոգման ու պահպանման ծախսերի նվազմամբ:

Հաշվետու տարվա ընթացքում պետական բյուջեի ընթացիկ ծախսերի 7.7%-ը՝ շուրջ 98.3 մլրդ դրամ, ուղղվել է ՀՀ կառավարության պարտքի և մուրհակների սպասարկմանը, որն օգտագործվել է 99.6%-ով: Մասնավորապես՝ ներքին տոկոսավճարները կազմել են 42 մլրդ դրամ, արտաքին տոկոսավճարները՝ 56.2 մլրդ դրամ: Նախորդ տարվա համեմատ արձանագրվել է հիշյալ պարտավորությունների սպասարկման ծախսերի 32.7%-ով (24.2 մլրդ դրամով) աճ՝ պայմանավորված և՛ ներքին, և՛ արտաքին տոկոսավճարների աճով: Ներքին տոկոսավճարներն աճել են 30.6%-ով (9.9 մլրդ դրամով), իսկ արտաքին տոկոսավճարները՝ 34.2%-ով (14.3 մլրդ դրամով)[9]:

2016 թվականին ՀՀ պետական բյուջեից տրամադրվել են 120.8 մլրդ դրամ սուբսիդիաներ՝ կազմելով ընթացիկ ծախսերի 9.4%-ը, որից 116.3 մլրդ դրամը հատկացվել է պետական կազմակերպություններին, 4.5 մլրդ դրամը՝ ոչ պետական կազմակերպություններին: Հատկացված սուբսիդիաներից, ըստ բյուջետային գործառական դասակարգման բաժինների, 87.9 մլրդ դրամը տրամադրվել է կրթության, 10.8 մլրդ դրամը՝ հանգստի, մշակույթի և կրոնի, 8.5 մլրդ դրամը՝ տնտեսական հարաբերությունների, 6.1 մլրդ դրամը՝ սոցիալական պաշտպանության, 5.4 մլրդ դրամը՝ բնակարանային շինարարության և կոմունալ ծառայությունների, 1.7 մլրդ դրամը՝ ընդհանուր բնույթի հանրային ծառայությունների, 97.3 մլն դրամը՝ շրջակա միջավայրի պաշտպանության, 56.6 մլն դրամը՝ հասարակական կարգի, անվտանգության և դատական գործունեության բնագավառների կազմակերպություններին, և ևս 246.6 մլն դրամ տրամադրվել է ՀՀ կառավարության պահուստային ֆոնդից: Սուբսիդիաների 2016 թվականի ծրագիրը կատարվել է 99.6%-ով: 2015 թվականի համեմատ պետական բյուջեից տրամադրված սուբսիդիաների գումարն աճել է շուրջ 3.7 անգամ կամ 87.9 մլրդ դրամով՝ հիմնականում պայմանավորված կրթության ոլորտի ֆինանսավորման սկզբունքի վերոհիշյալ փոփոխությամբ: Նշված գործոնը հաշվի չառնելու դեպքում

[9] ՀՀ կառավարության պարտքի սպասարկման ծախսերի մանրամասն վերլուծությունը ներկայացված է պետական բյուջեի գործառական դասակարգմամբ ծախսերի վերլուծության բաժնում (էջ 200-201):

սուբսիդիաների աճը կկազմի 1.8% կամ 583.8 մլն դրամ, որը հիմնականում պայմանավորված է ջրամատակարարման և ոռոգման համակարգերի կազմակերպությունների սուբսիդավորման աճով:

2016 թվականին ՀՀ պետական բյուջեից տրամադրված դրամաշնորհները կազմել են 158.1 մլրդ դրամ՝ ապահովելով 98.7% կատարողական և ընթացիկ ծախսերի 12.3%-ը: Մասնավորապես՝ 155.2 մլրդ դրամ է տրամադրվել պետական հատվածի այլ մակարդակներին, 2.9 մլրդ դրամ՝ միջազգային կազմակերպություններին: Պետական բյուջեից համայնքների բյուջեներին համահարթեցման սկզբունքով տրվող դոտացիաները հատկացվել են նախատեսված ամբողջ ծավալով՝ կազմելով 47.1 մլրդ դրամ, որը 6.9%-ով կամ 3.1 մլրդ դրամով գերազանցել է նախորդ տարվա մակարդակը: 6.6 մլրդ դրամի սուբվենցիաներ են տրամադրվել համայնքների բյուջեներին, որից 6.4 մլրդ դրամը կազմել են ընթացիկ սուբվենցիաները, որոնք կատարվել են 99.9%-ով, 273 մլն դրամը՝ կապիտալ սուբվենցիաները, որոնց կատարողականը կազմել է 98.6%: 2015 թվականի համեմատ պետական բյուջեից տրամադրված դրամաշնորհներն աճել են 3.4%-ով՝ մեծ մասամբ պայմանավորված ավելացված արժեքի հարկի վերադարձի ծախսերի աճով:

Հաշվետու տարում պետական բյուջեի ընթացիկ ծախսերի 31.6%-ը՝ 405.1 մլրդ դրամ են կազմել սոցիալական նպաստները և կենսաթոշակները, որոնց տարեկան ծրագիրը կատարվել է 99.4%-ով: Նշված հատկացումներից 130.1 մլրդ դրամն ուղղվել է նպաստների, 275 մլրդ դրամը՝ կենսաթոշակների ֆինանսավորմանը, որոնք կատարվել են համապատասխանաբար 98.2%-ով և 100%-ով: Նախորդ տարվա համեմատ սոցիալական նպաստների և կենսաթոշակների ծախսերն աճել են 3.6%-ով կամ 14 մլրդ դրամով: Մասնավորապես՝ 5.4%-ով նպաստների աճը հիմնականում պայմանավորված է բյուջեից տրամադրվող մայրության նպաստների և այլ նպաստների, մասնավորապես՝ ՀՄՊ մասնակիցներին, ՀՄՊ և այլ պետություններում մարտական գործողությունների ընթացքում զոհված զինծառայողների ընտանիքներին տրվող և 25.11.1998 թ. ՀՕ-258 օրենքի 34.1 հոդվածի 1-ին մասով սահմանված պարգևավճարների տրամադրման, բարձրագույն մասնագիտական կրթության գծով ուսանողական նպաստների տրամադրման, ծերության, հաշմանդամության, կերակրողին կորցնելու դեպքում սոցիալական նպաստների և պետական հիմնարկների ու կազմակերպությունների աշխատողների սոցիալական փաթեթով ապահովման ծրագրերի շրջանակներում տրամադրված նպաստների աճով: Կենսաթոշակների գծով ծախսերը հաշվետու տարում աճել են 2.8%-ով՝ հիմնականում պայմանավորված կուտակային կենսաթոշակային համակարգի ներդրման, ինչպես նաև սպայական անձնակազմի և նրանց ընտանիքների անդամների ու աշխատանքային կենսաթոշակների գծով ծախսերի աճով:

2016 թվականի պետական բյուջեի ընթացիկ ծախսերի 15.2%-ը կամ 195 մլրդ դրամը կազմել են այլ ծախսերը, որոնց տարեկան ծրագիրը կատարվել է 102.1%-ով՝ պայմանավորված արտաքին աջակցությամբ իրականացվող ծրագրերի շրջանակներում նախատեսվածից ավել միջոցների

օգտագործման հանգամանքով: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 3.5%-ով՝ հիմնականում պայմանավորված պաշտպանության, գյուղատնտեսության և ոռոգման բնագավառներին հատկացված գումարների աճով:

<u>Ոչ ֆինանսական ակտիվների հետ գործառնություններ</u>

2016 թվականին պետական բյուջեի ոչ ֆինանսական ակտիվների հետ գործառնությունները կազմել են շուրջ 167.3 մլրդ դրամ կամ ընդհանուր ծախսերի 11.5%-ը և տարեկան ծրագրի 101.8%-ը: 2015 թվականի համեմատ ոչ ֆինանսական ակտիվների հետ գործառնությունների ցուցանիշը նվազել է 1.6%-ով, որը պայմանավորված է ոչ ֆինանսական ակտիվների օտարումից մուտքերի 3.7 անգամ աճով:

2016 թվականին ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերը կազմել են 175.1 մլրդ դրամ՝ ապահովելով ծրագրի 101.7%-ը, որը պայմանավորված է արտաքին աջակցությամբ իրականացվող վարկային և դրամաշնորհային ծրագրերի կատարողականով: Ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերից 131.3 մլրդ դրամը կատարվել է արտաքին աջակցությամբ իրականացվող ծրագրերի շրջանակներում, որոնք կատարվել են 106.9%-ով և 17.5%-ով գերազանցել նախորդ տարվա ցուցանիշը: Ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերից 127.3 մլրդ դրամը՝ նախատեսվածի 104.3%-ը, օգտագործվել է շենքերի և շինությունների ձեռքբերման, շինարարության և կապիտալ վերանորոգման, 44.8 մլրդ դրամը կամ նախատեսվածի 98.6%-ը՝ մեքենաների և սարքավորումների ձեռքբերման, պահպանման և հիմնանորոգման, 3.1 մլրդ դրամը կամ նախատեսվածի 63.9%-ը՝ այլ հիմնական միջոցների ձեռքբերման նպատակով: 2015 թվականի համեմատ ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերն աճել են 1.7%-ով կամ 2.9 մլրդ դրամով՝ հիմնականում պայմանավորված մեքենաների և սարքավորումների ձեռքբերման, պահպանման և հիմնանորոգման ծախսերի աճով:

Հաշվետու տարվա ընթացքում ավելի քան 7.8 մլրդ դրամ է մուտքագրվել ոչ ֆինանսական ակտիվների օտարումից՝ ապահովելով ծրագրված ցուցանիշի 100.1% կատարում: Նշված գումարից 47.3 մլն դրամը ստացվել է հողի, 7.8 մլրդ դրամը՝ այլ ակտիվների օտարումից:

Գործառական դասակարգում

<u>Ընդհանուր բնույթի պետական ծառայություններ</u>

ՀՀ 2016 թվականի պետական բյուջեից 292.1 մլրդ դրամ տրամադրվել է *ընդհանուր բնույթի հանրային ծառայությունների* ծախսերին՝ ապահովելով ծրագրի 96.8% կատարողական: Շեղումը հիմնականում պայմանավորված է արտաքին աջակցությամբ իրականացվող ծրագրերի, ինչպես նաև հարկային ծառայության մարմնի համակարգի և մաքսային ծառայության նյութական խրախուսման և համակարգի զարգացման ֆոնդի ծախսերի կատարողականով: 2015 թվականի համեմատ ոլորտի ծախսերն աճել են 3.8%-ով կամ 10.7 մլրդ դրամով: Աճի հիմնական մասը բաժին է ընկել պետական պարտքի սպասարկման ծախսերին:

«Օրենսդիր և գործադիր մարմիններ, պետական կառավարում» դասի ծախսերը հաշվետու տարում կազմել են 23.1 մլրդ դրամ՝ ապահովելով ծրագրի 95.4%-ը: Շեղումը հիմնականում պայմանավորված է «Օժանդակություն Հայաստանի հակակոռուպցիոն ռազմավարության իրականացմանը» դրամաշնորհային ծրագրի, ինչպես նաև տվյալ դասում ընդգրկված՝ գործադիր իշխանության, պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների պահպանման և վարչական օբյեկտների հիմնանորոգման ծախսերի կատարողականով: Նախորդ տարվա համեմատ նշված դասի ծախսերն էական փոփոխության չեն ենթարկվել:

2016 թվականին ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմի և պատգամավորների պահպանման համար նախատեսված միջոցները գրեթե ամբողջությամբ օգտագործվել են՝ կազմելով շուրջ 4.5 մլրդ դրամ: Նախորդ տարվա համեմատ դրանք աճել են 2.8%-ով՝ հիմնականում պայմանավորված աշխատանքի վարձատրության ծախսերի աճով:

Հաշվետու տարում ՀՀ վերահսկիչ պալատի պահպանման նպատակով տրամադրվել է 936.2 մլն դրամ՝ կազմելով ծրագրի 98%-ը, որը պայմանավորված է տնտեսումներով: Նախորդ տարվա համեմատ դրանք աճել են 2.3%-ով՝ պայմանավորված գործուղումների գծով ծախսերի աճով:

Գործադիր իշխանության, պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների պահպանմանը տրամադրվել է 10.5 մլրդ դրամ՝ կազմելով ծրագրի 97.4%-ը, որը պայմանավորված է տնտեսումներով: Հատկացված միջոցներն ուղղվել են ՀՀ Նախագահի և կառավարության աշխատակազմերի, ինչպես նաև ՀՀ մարզպետարանների պահպանմանը: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը նվազել են 0.8%-ով:

ՀՀ տարածքային կառավարման նախարարության, ՀՀ արդարադատության նախարարության և ՀՀ սփյուռքի նախարարության պահպանման ծախսերը՝ նախարարների աշխատակազմերի մասով, 2016 թվականին կազմել են շուրջ 1.9 մլրդ դրամ, իսկ նախարարությունների

աշխատակազմերի մասով՝ 2.8 մլրդ դրամ, և ապահովել համապատասխանաբար 94.5% և 96.7% կատարողական: Նշված ծրագրերում առկա են տնտեսումներ, իսկ նախորդ տարվա համեմատ ծախսերն աճել են համապատասխանաբար 2.3%-ով և 6.2%-ով: Վերջինս հիմնականում պայմանավորված է 2016 թվականին ՀՀ արդարադատության նախարարության կազմում ՀՀ պետական պրոբացիայի ծառայության ստեղծմամբ:

Վարչական օբյեկտների շինարարության նպատակով նախատեսվել էր 50 մլն դրամ հատկացնել ՀՀ Նախագահի աշխատակազմին, սակայն աշխատանքները հետաձգվել են 2017 թվական, և գումարը չի օգտագործվել:

Վարչական օբյեկտների հիմնանորոգման համար օգտագործվել է 806.6 մլն դրամ՝ կազմելով նախատեսվածի 85%-ը: 2016 թվականի ընթացքում իրականացվել են ՀՀ Նախագահի աշխատակազմի վարչական շենքի ներքին հարդարման, ջրի խողովակների անցկացման, ազգային անվտանգության խորհրդի քարտուղարության մասնաշենքի համակարգչային ցանցի և հեռախոսագծերի տեղադրման աշխատանքներ, ԱԺ վարչական շենքի արտաքին պատուհանների, տնտեսական մասնաշենքի պոմպակայանի, ավտոտնտեսության, ջրամատակարարման և կոյուղու համակարգերի հիմնանորոգում: Իրականացվել են նաև ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության նոր համալիրի վերակառուցման աշխատանքները: Ծախսերի ծրագրից շեղումը առաջացել է հիմնականում ՀՀ Նախագահի աշխատակազմի ծախսերում, որտեղ նախատեսված 4 օբյեկտից 2-ի հիմնանորոգման աշխատանքները տեղափոխվել են 2017 թվական: Բացի այդ, 2016 թվականին խնայողության ռեժիմի անցնելու հետ կապված՝ ամբողջությամբ չեն իրականացվել նաև ՀՀ կառավարության աշխատակազմում նախատեսված հիմնանորոգման աշխատանքները:

Հաշվետու տարվա ընթացքում շուրջ 1.1 մլրդ դրամ սուբվենցիա է հատկացվել Երևանի քաղաքապետարանին՝ աշխատակազմի պահպանման նպատակով, որն ամբողջությամբ օգտագործվել է և 2.4%-ով գերազանցել նախորդ տարվա ցուցանիշը, ինչը հիմնականում պայմանավորված է էլեկտրաէներգիայի սակագնի բարձրացմամբ:

ՀՀ վերահսկիչ պալատի պահուստային ֆոնդի գծով նախատեսված 18.8 մլն դրամը օգտագործվել է 98.4%-ով և նախորդ տարվա համեմատ նվազել 2%-ով, որը խնայողության արդյունք է:

Գործադիր իշխանության, պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների կարողությունների զարգացմանը տրամադրվել է 61.6 մլն դրամ՝ կազմելով ծրագրի 87.3%-ը, որը պայմանավորված է տնտեսումներով: Հատկացված միջոցներով ՀՀ Նախագահի և ՀՀ կառավարության աշխատակազմերի համար ձեռք են բերվել վարչական սարքավորումներ:

Գործադիր իշխանության, պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների կարողությունների զարգացման ծրագրի շրջանակներում (նախարարությունների աշխատակազմերի մասով) օգտագործվել է 240 հազ. դրամ, որը կազմել է նախատեսված գումարի 12%-ը: Նշված գումարը տրամադրվել է ՀՀ արդարադատության նախարարությանը, որով ձեռք են բերվել երկու՝ հաշվապահական հաշվառման ծրագրային ապահովում և համակարգչային օժանդակ ծրագիր: Նշված ծրագրի գծով ծախսերի կատարողականը պայմանավորված է այն հանգամանքով, որ նախատեսված արտասահմանյան գրականության ձեռքբերման համար պայմանագրեր չեն կնքվել:

Նախատեսված ողջ ծավալով իրականացվել են ՀՀ կառավարության գործունեության գնահատականների, կյանքի որակի և համայնքային կարիքների գնահատման հետազոտությունների ծախսերը, որոնք կազմել են 123.3 մլն դրամ և պահպանվել նախորդ տարվա մակարդակին: Ծրագրի շրջանակներում 2016 թվականին իրականացվել են մի շարք սոցիոլոգիական հետազոտություններ, մասնավորապես՝ Հայաստանի Հանրապետության կառավարության գործունեության գնահատականների (Government Success Index) 4 հետազոտություն (եռամսյակը մեկ անգամ), կյանքի որակի (Quality of Life Index) 1 հետազոտություն, համայնքային կարիքների գնահատման (Community Needs Assessment) 3 հետազոտություն, որոնց արդյունքները հրապարակվել են ՀՀ կառավարության կայք-էջում: Այս հետազոտությունները հիմք են հանդիսացել ՀՀ կառավարության աշխատակազմի բարեփոխումների ռազմավարության մշակման համար և տալիս են օբյեկտիվ ու ճգրիտ տեղեկատվություն ոլորտների զարգացման մասին:

ՀՀ արդարադատության նախարարության «Ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկի պահպանման նպատակով 2016 թվականին տրամադրվել է 20.4 մլն դրամ՝ կազմելով ծրագրի 96.6%-ը: Շեղումը պայմանավորված է տնտեսումներով: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը նվազել են 7.2%-ով՝ հիմնականում պայմանավորված ծառայությունների ձեռքբերման ծախսերի կրճատմամբ:

ՀՀ կառավարության աշխատակազմի «Օրենսդրության կարգավորման ազգային կենտրոն» ծրագրերի իրականացման գրասենյակին տրամադրվել է 22.2 մլն դրամ՝ կազմելով ծրագրի 98.4%-ը: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 2.3 անգամ՝ հիմնականում պայմանավորված այն հանգամանքով, որ 2016 թվականին պահպանման ծախսերում ընդգրկվել են նաև աշխատողների աշխատավարձերը, որոնք 2015 թվականին ֆինանսավորվում էին Ավստրիայի զարգացման գործակալության միջոցներով: Օրենսդրության կարգավորման ազգային կենտրոնի գործունեության հիմնական նպատակը ՀՀ տնտեսական ոլորտը կարգավորող նորմատիվ իրավական ակտերի վերանայման արդյունքում դրանց կրճատմանը, ինչպես նաև հստակեցմանը և

պարզեցմանն ուղղված աշխատանքների և ծրագրերի իրականացման ապահովումը, նոր կարգավորող օրենսդրական նորմերի ուսումնասիրությունը, դրանց սահմանման նպատակահարմարության վերլուծությունը և ազդեցության գնահատումն է:

ՀՀ արդարադատության նախարարության «Անձնական տվյալների պաշտպանության գործակալության» պահպանմանը տրամադրվել է 16.2 մլն դրամ՝ կազմելով ծրագրի 79.6%-ը, ինչը պայմանավորված է թափուր հաստիքների առկայությամբ: Գործակալությունը ստեղծվել է 2015 թվականի հուլիսին և 2015 թվականին ֆինանսավորվել է ՀՀ կառավարության պահուստային ֆոնդի միջոցների հաշվին:

ՀՀ արդարադատության նախարարության արտաբյուջետային միջոցների հաշվին գործադիր իշխանության, պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների պահպանման ծրագրի շրջանակներում իրականացվել են 204.7 մլն դրամի ծախսեր՝ կազմելով ծրագրի 100%-ը և նախորդ տարվա համեմատ աճելով 4.3%-ով: Տվյալ միջոցները գոյանում են իրավաբանական անձանց պետական գրանցման, անհատ ձեռնարկատերերի պետական հաշվառման, քաղաքացիական կացության ակտերի գրանցման և ապոստիլ դնելու վճարովի ծառայությունների մատուցումից:

«Օժանդակություն Հայաստանի հակակոռուպցիոն ռազմավարության իրականացմանը» դրամաշնորհային ծրագրի շրջանակներում կատարված ծախսերը կազմել են 5.1 մլն դրամ՝ կազմելով նախատեսվածի 1.7%-ը: Ծրագիրն իրականացվում է ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության աջակցությամբ և նպատակ ունի օժանդակություն տրամադրել ՀՀ Կառավարությանը՝ իրականացնելու 2015-2018թթ. Հայաստանի Հանրապետության հակակոռուպցիոն ռազմավարությունը: Համաձայնագրով ՀՀ կառավարության աշխատակազմին տրամադրվել է 14 ամսվա համար ֆինանսական օժանդակություն՝ փորձագիտական հանձնախումբ ձևավորելու և տեխնիկական կարողություններ ձեռք բերելու համար: Ըստ համաձայնագրի՝ ծրագրի իրականացման համար նախ և առաջ պետք է ներգրավվեին 2 միջազգային փորձագետներ՝ ոլորտային փորձագիտական հանձնախմբի գործունեությունը սկզբնական ժամանակահատվածում ուղղորդելու նպատակով: Սակայն, միջազգային փորձագետների մրցույթը չի կայացել, և միջազգային փորձագետներ չեն ներգրավվել: 4 տեղացի փորձագետների ներգրավման տեխնիկական առաջադրանքը, որն, ըստ համաձայնագրի, պետք է մշակվեր միջազգային փորձագետների կողմից, մշակվել է ՀՀ կառավարության աշխատակազմի հակակոռուպցիոն ծրագրերի մոնիթորինգի բաժնի կողմից 2016 թվականի մայիսին: Տեխնիկական առաջադրանքի հրապարակումից հետո 4 փորձագետների մրցույթի հիման վրա ընտրված փորձագետների հետ պայմանագրեր կնքվել են միայն 2016 թվականի նոյեմբերի մեկին: Հետևաբար ծրագրի փաստացի մեկնարկը տրվել է նախատեսվածից ավելի ուշ՝ 2016 թվականի նոյեմբերի մեկից:

«ՀՀ արդարադատության նախարարության և ԱՄՆ ՄԶԳ-ի միջև 2016 թվականի սեպտեմբերի 13-ին կնքված N AAG-111-G-13-001 Զարգացման համագործակցության համաձայնագրի ներքո իրականացվող» դրամաշնորհային ծրագրի շրջանակներում ծախսվել է նախատեսված միջոցների ընդամենը 1.6%-ը՝ 1.4 մլն դրամ, ինչը պայմանավորված է համաձայնագիրը սեպտեմբեր ամսին ստորագրելու հանգամանքով:

«Ավստրիայի զարգացման գործակալություն» ընկերության աջակցությամբ իրականացվող «Հայաստանի Հանրապետությունում կարգավորիչ գիլյոտին» դրամաշնորհային ծրագրի շրջանակներում կենտրոնի պահպանման համար Ավստրիայի զարգացման գործակալության կողմից հատկացված 25.8 մլն դրամ դրամաշնորհային միջոցներն ամբողջությամբ օգտագործվել են: Դրանք ուղղվել են 2015 թվականին կենտրոնի աշխատակիցների աշխատավարձերի մասնակի վճարման համար ՀՀ կառավարության պահուստային ֆոնդից հատկացված միջոցների փոխհատուցմանը, ինչպես նաև աշխատավարձերի, հարկային պարտավորությունների և աուդիտի ծառայությունների դիմաց վճարմանը:

Ֆինանսական և հարկաբյուջետային հարաբերությունների դասի ծրագրերին 2016 թվականին տրամադրվել է 76.7 մլրդ դրամ՝ կազմելով նախատեսվածի 90.1%-ը: Շեղումը հիմնականում պայմանավորված է արտաքին աջակցությամբ իրականացվող վարկային և դրամաշնորհային ծրագրերի ու հարկային ծառայության մարմնի համակարգի և մաքսային ծառայության նյութական խրախուսման և համակարգի զարգացման ֆոնդի ծախսերի կատարողականով: Նախորդ տարվա համեմատ նշված դասի ծախսերը նվազել են 18.8%-ով կամ 17.7 մլրդ դրամով՝ հիմնականում պայմանավորված արտաքին աջակցությամբ իրականացվող ծրագրերի շրջանակներում կատարված ծախսերի, գործադիր իշխանության մարմինների պահպանման, դրոշմապիտակների ձեռքբերման ծախսերի կրճատմամբ, ինչպես նաև 2015 թվականին հարկային վարչարարությանն օժանդակության նպատակով վիճակահանության անցկացման և պարգևավճարների տրամադրման նպատակով միջոցների հատկացմամբ:

ՀՀ պետական պարտքի կառավարման գործընթացի հրապարակայնության ապահովման համար հաշվետու տարում տրամադրվել է 30.5 մլն դրամ՝ կազմելով նախատեսվածի 100%-ը: Ծրագրի շրջանակներում իրականացվում են պետական պարտատոմսերի թողարկման, պետական բյուջեի պակասուրդի ֆինանսավորման վերաբերյալ կիսամյակային և տարեկան հաշվետվությունների, հեռուստատեսային և ռադիո հաղորդումների, հայտարարությունների պատրաստման և տարածման (հեռարձակման) աշխատանքները: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը գրեթե չեն փոփոխվել:

Ակցիզային դրոշմանիշերի ձեռքբերման ծախսերը կազմել են 957 մլն դրամ՝ ապահովելով 99.9% կատարողական: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 14.8%-ով, որը

պայմանավորված է ակցիզային դրոշմանիշերի պահանջարկով և պահեստավորված մնացորդի բացակայությամբ:

Ֆինանսական և հարկաբյուջետային հարաբերությունների դասում ընդգրկված՝ Գործադիր իշխանության, պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների պահպանման ծրագրին տրամադրվել է 14 մլրդ դրամ, որն օգտագործվել է 99.1%-ով: Միջոցներն ուղղվել են ՀՀ ֆինանսների նախարարության և ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի պահպանմանը: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը նվազել են 13.1%-ով՝ հիմնականում պայմանավորված աշխատանքի վարձատրության ու ծառայությունների և ապրանքների ձեռք բերման ծախսերի կրճատմամբ:

Հաշվետու տարում ֆինանսական կառավարման համակարգի վճարահաշվարկային սպասարկումն ապահովելու նպատակով ՀՀ պետական բյուջեից տրամադրվել է 108 մլն դրամ՝ կազմելով ծրագրի 76.3%-ը, որը պայմանավորված է բանկերի կողմից փաստացի մատուցված ծառայությունների ծավալով: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն ավելացել են 1.9%-ով՝ պայմանավորված է նոր ծրագրային ապահովման ձեռքբերմամբ:

Նախատեսված ողջ ծավալով օգտագործվել են ավելացված արժեքի հարկի վերադարձի համար նախատեսված միջոցները, որոնք կազմել են շուրջ 48.7 մլրդ դրամ: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 11.3%-ով:

Էլեկտրոնային գնումների համակարգի ներդրման գծով նախատեսված շուրջ 50.9 մլն դրամն օգտագործվել է ամբողջությամբ: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 13.1%-ով, որը պայմանավորված է էլեկտրոնային գնումների ARMEPS համակարգի թարգմանության ծառայությունների ձեռքբերմամբ:

Գործադիր իշխանության, պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների կարողությունների զարգացմանը (նախարարությունների աշխատակազմերի մասով) հատկացվել է 352.6 մլն դրամ, որն օգտագործվել է 91.6%-ով: Շեղումը պայմանավորված է տնտեսումներով: Նախորդ տարվա համեմատ դրանք նվազել են 52.7%-ով՝ հիմնականում պայմանավորված ծրագրի շրջանակներում վարչական սարքավորումների ձեռքբերման ծախսերի նվազմամբ:

Դրոշմապիտակների ձեռքբերման ծախսերն իրականացվել են նախատեսված ողջ ծավալով՝ կազմելով շուրջ 1.9 մլրդ դրամ, որը նախորդ տարվա համեմատ նվազել է 48.6%-ով՝ պայմանավորված դրոշմապիտակների պահանջարկով և պահեստավորված մնացորդի առկայությամբ:

Բլումբերգ և Ռոյթերս տեղեկատվական համակարգերի առևտրային տերմինալների սպասարկման վճարը կազմել է 31.5 մլն դրամ կամ 95%՝ պայմանավորված պետական բյուջեի

կանխատեսումների հիմքում դրված փոխարժեքի նկատմամբ փաստացի ցածր փոխարժեքով: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 49.9%-ով, որը պայմանավորված է այն հանգամանքով, որ ծրագիրը մեկնարկել էր 2015 թվականի ապրիլի 28-ից:

Հարկային ծառայության մարմնի համակարգի և մաքսային ծառայության նյութական խրախուսման և համակարգի զարգացման ֆոնդի ծախսերը կազմել են 4.1 մլրդ դրամ կամ նախատեսվածի 65.8%-ը, իսկ նախորդ տարվա համեմատ դրանք նվազել են 26%-ով: Վերջինս հետևանք է նշյալ ֆոնդի եկամտային մասի նվազման, որն էլ իր հերթին բացատրվում է ներմուծման ծավալների կրճատումով պայմանավորված մաքսային ձևակերպումների թվաքանակի նվազմամբ և հարկային վարչարարության մոտեցումներով պայմանավորված ստուգումների քանակի կրճատմամբ:

Եվրոպական ներդրումային բանկի աջակցությամբ իրականացվող ՀՀ պետական սահմանի «Բագրատաշեն», «Բավրա» և «Գոգավան» անցման կետերի արդիականացման վարկային ծրագրի շրջանակներում նախատեսված միջոցներն օգտագործվել են 54%-ով՝ կազմելով շուրջ 1.5 մլրդ դրամ:

Չինական Արտահանման-ներմուծման բանկի աջակցությամբ իրականացվող ՀՀ մաքսային զննման տեխնոլոգիաների և սարքավորումների արդիականացման վարկային ծրագրի շրջանակներում նախատեսված միջոցներն օգտագործվել են 94.6%-ով՝ կազմելով 2.4 մլրդ դրամ: Կատարողականը պայմանավորված է պետական բյուջեի կանխատեսումների հիմքում դրված փոխարժեքի նկատմամբ փաստացի ցածր փոխարժեքով: Ծրագիրն ուղղված է մաքսային համակարգում զննման տեխնոլոգիաների և սարքավորումների արդիականացմանը: Ըստ կնքված պայմանագրի մաքսային զննման սարքավորումները ներմուծվել են ամբողջությամբ: Սարքավորումների տեղադրման և շահագործման համար կատարվում են ընթացիկ աշխատանքներ, որոնք կավարտվեն 2017 թվականի հունիսի 30-ին:

ՌԴ կառավարության աջակցությամբ իրականացվող ԵՏՄ անդամակցության շրջանակներում ՀՀ տեխնիկական և ֆինանսական աջակցություն ցուցաբերելու դրամաշնորհային ծրագրի շրջանակներում նախատեսված միջոցներն օգտագործվել են 40.3%-ով՝ կազմելով 944.3 մլն դրամ: Նշված գումարից 663.3 մլն դրամը տրամադրվել է ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի տեխնիկական ենթակառուցվածքի արդիականացման, ԵՏՄ-ում գործող ենթակառուցվածքների հետ ինտեգրման և ներդրման ծառայությունների ֆինանսավորմանը, որն օգտագործվել է 32.9%-ով՝ պայմանավորված այն հանգամանքով, որ աշխատանքներն ավարտվել են 2017 թվականի հունվարին: 237.0 մլն դրամ (նախատեսվածի 100.2%-ը) է տրամադրվել ՀՀ կառավարության աշխատակազմում տեսակոնֆերանսների դահլիճի ստեղծմանը, որն օգտագործվում է ԵՏՄ շրջանակներում իրականացվող տեսակոնֆերանսների համար: Ծրագրի շրջանակներում 2016 թվականի դեկտեմբեր ամսին Ծաղկաձորում տեղի է ունեցել «ԵԱՏՄ-

Հայաստան՝ արդյունաբերական կոոպերացիայի զարգացման հեռանկարները» թեմայով համաժողով, որի անցկացման ծախսերը կազմել են 32.9 մլն դրամ կամ նախատեսվածի 88%-ը: Շեղումը պայմանավորված է այն հանգամանքով, որ ՀՀ կառավարության և ՌԴ կառավարության միջև ԵՏՄ համաձայնագրի հիման վրա դրամաշնորհային միջոցները պետք է ծախսվեն գործող տեղեկատվական համակարգերի արդիականացման համար, որի պահանջները մյուս անդամ երկրներում գտնվում են քննարկման փուլում: Նշված գումարից 7.3 մլն դրամը հատկացվել է «Այրում-Ջիլիզա» սահմանային հսկիչ կետի վերակառուցման և Մաքսային միության հանձնաժողովի կողմից սահմանված պահանջներին համապատասխանեցնելու նպատակով անշարժ գույքի ձեռքբերման համար և 3.8 մլն դրամը՝ «Սննդամթերքի անվտանգության ոլորտի ռիսկերի գնահատման և վերլուծության գիտական կենտրոն» ՊՈԱԿ-ի լաբորատոր մասնաշենքի չափագրումների և ակնադիտական հետազննությունների, հետախուզահորերի բացման, գրունտների ուսումնասիրման և գործիքային չափագրումների, հաշվարկների կատարման և սեյսմազինվածության ճշգրտման, տվյալների ամփոփման և եզրակացության կազմման աշխատանքների իրականացման համար:

Եվրոպական միության աջակցությամբ իրականացվող ՀՀ պետական սահմանի «Բագրատաշեն», «Բավրա» և «Գոգավան» անցման կետերի արդիականացման դրամաշնորհային ծրագրի շրջանակներում նախատեսված 3.3 մլրդ դրամի միջոցները չեն օգտագործվել:

Եվրոպական միության Հարևանության ներդրումային ծրագրի աջակցությամբ իրականացվող ՀՀ պետական սահմանի «Բագրատաշեն», «Բավրա» և «Գոգավան» անցման կետերի արդիականացման դրամաշնորհային ծրագրի շրջանակներում նախատեսված միջոցներն օգտագործվել են 100%-ով՝ կազմելով 1.6 մլրդ դրամ[10]:

Հաշվետու տարում 14.7 մլրդ դրամ է տրամադրվել *արտաքին հարաբերությունների* դասի ծրագրերին, որը կազմել է նախատեսված հատկացումների 97.5%-ը: Շեղումը հիմնականում պայմանավորված է միջազգային կազմակերպություններին Հայաստանի Հանրապետության անդամակցության վճարների գծով նախատեսված միջոցների տնտեսմամբ: Արտաքին հարաբերությունների ծախսերը 2015 թվականի համեմատ աճել են 5.7%-ով՝ հիմնականում պայմանավորված ՀՀ դեսպանությունների և ներկայացուցչությունների պահպանման, ինչպես նաև միջազգային կազմակերպություններին Հայաստանի Հանրապետության անդամակցության վճարների գծով ծախսերի աճով:

Արտաքին հարաբերությունների դասում շուրջ 9.6 մլրդ դրամ պետական բյուջեի հաշվին և 446 մլն դրամ՝ արտաբյուջետային միջոցների հաշվին ուղղվել է ՀՀ դեսպանությունների և

[10] «Բագրատաշեն», «Բավրա» և «Գոգավան» անցման կետերի արդիականացման ծրագիրն իրականացվում է ՀՀ-ում ՄԱԿ-ի գրասենյակի կողմից:

ներկայացուցչությունների պահպանմանը, որոնք օգտագործվել են նախատեսված ողջ ծավալով: Հատկացումները ծախսվել են արտերկիր գործուղված դիվանագետների աշխատավարձերի, ամսական փոխհատուցման, բնակարանների վարձակալության համար, ինչպես նաև ծառայողական շենքերի վարձակալության, պահպանման և դեսպանության մյուս ծախսերի համար: Օտարերկրյա պետություններում գործում է 57 դիվանագիտական ներկայացուցչություն: Նախորդ տարվա համեմատ պետական բյուջեի հաշվին կատարված ծախսերն աճել են 11.9%-ով՝ պայմանավորված 2016 թվականի պետական բյուջեի հիմքում դրված՝ ԱՄՆ դոլարի և եվրոյի փոխարժեքների աճով, ինչպես նաև Սուրբ Աթոռում ՀՀ դեսպանության պահպանման ծախսերի համար միջոցների հատկացմամբ, որոնք նախորդ տարիներին կատարվում էին նվիրատվությունների հաշվին: Արտաբյուջետային միջոցների հաշվին ՀՀ դեսպանությունների և ներկայացուցչությունների պահպանման ծախսերը նվազել են 45.5%-ով:

Միջազգային կազմակերպություններին Հայաստանի Հանրապետության անդամակցության ծախսերը կազմել են 2.3 մլրդ դրամ կամ նախատեսվածի 89.6%-ը, ինչը պայմանավորված է հիմնականում ՄԱԿ-ի կանոնավոր բյուջեին անդամ պետությունների անդամավճարների տոկոսադրույքի իջեցմամբ, որը հիմք է հանդիսանում մի շարք կազմակերպությունների տվյալ տարվա անդամավճարների չափի հաշվարկման համար: Ներկայումս Հայաստանի Հանրապետությունն անդամակցում է 106 միջազգային կազմակերպությունների և ԱՊՀ կառույցների: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 19.3%-ով, ինչը պայմանավորված է արտարժույթների (ԱՄՆ դոլար, եվրո, ռուսական ռուբլի, շվեյցարական ֆրանկ)՝ բյուջեի հիմքում դրված փոխարժեքների աճով (անդամակցության վճարները կատարվում են բյուջեում կանխատեսված փոխարժեքներով), ինչպես նաև նոր կազմակերպություններին ՀՀ անդամակցության հանգամանքով:

Արտասահմանյան պատվիրակությունների ընդունելությունների և արտասահմանյան պաշտոնական գործուղումների նպատակով հաշվետու տարում օգտագործվել է համապատասխանաբար 346.4 մլն դրամ և 411.5 մլն դրամ, որոնք կատարվել են 96.2%-ով և 98.4%-ով: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը նվազել են համապատասխանաբար 5.8%-ով և 36.1%-ով:

ՀՀ արտաքին գործերի նախարարության աշխատակազմի «Պետական արարողակարգի ծառայություն» գործակալության պահպանմանը տրամադրվել է 141.3 մլն դրամ՝ կազմելով ծրագրի 79.9%-ը, ինչը պայմանավորված է տնտեսումներով, որոնց արդյունքում նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը նվազել են 8.3%-ով:

2016 թվականին արտաքին հարաբերությունների դասում ընդգրկված՝ գործադիր իշխանության, պետական կառավարման հանրապետական և տարածքային մարմինների

պահպանման (նախարարությունների աշխատակազմերի մասով) ծրագրի շրջանակներում ՀՀ արտաքին գործերի նախարարության և ՀՀ միջազգային տնտեսական ինտեգրման և բարեփոխումների նախարարության աշխատակազմերի պահպանման նպատակով տրամադրվել է շուրջ 1.3 մլրդ դրամ՝ ապահովելով ծրագրի 96.4% կատարողական, որը պայմանավորված է տնտեսումներով: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 4.6%-ով՝ հիմնականում պայմանավորված աշխատավարձերի բարձրացմամբ, ինչպես նաև 10 նոր լրացուցիչ կցորդի հաստիքների ավելացմամբ:

Նախատեսված ծավալով իրականացվել են դեսպանությունների շենքերի գնման ծախսերը, որոնք կազմել են 33.8 մլն դրամ: Գումարն ուղղվել է Բրյուսելում ՀՀ դեսպանության շենքի գնման նպատակով վերցված վարկի գծով 2016 թվականի չափաբաժնի մարմանը: Նշված ծախսերը 2015 թվականի համեմատ աճել են 1.3%-ով՝ պայմանավորված ՀՀ 2016 թվականի պետական բյուջեի հիմքում դրված՝ եվրոյի փոխարժեքի աճով:

Հայաստանի Հանրապետությանը սուվերեն վարկանիշ շնորհելու կապակցությամբ կազմակերպությունների մատուցած ծառայությունների դիմաց վճարման ծախսերը կազմել են 94.2 մլն դրամ՝ ապահովելով ծրագրի 99.5% կատարողական: Ծրագիրը նախատեսված է ՀՀ տնտեսական, քաղաքական և ֆինանսական ցուցանիշների գնահատման, գնահատականների հիման վրա վարկանիշ շնորհող հեղինակավոր միջազգային ընկերությունների հետ արդյունավետ համագործակցության իրագործման համար: Ծրագրի նպատակն է միջնաժամկետ և երկարաժամկետ հեռանկարում ներքին ու արտաքին աղբյուրներից պետական բյուջեի պակասուրդի կայուն, հուսալի և ոչ ռիսկային ֆինանսավորման համար բարենպաստ պայմանների ապահովումը: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 2.4%-ով՝ պայմանավորված բյուջեի հաշվարկների հիմքում դրված ԱՄՆ դոլարի փոխարժեքի աճով:

ՆԱՏՕ-ի նոր կենտրոնակայանի շենքի վերակառուցման աշխատանքների ծախսերի փոխհատուցման ՀՀ մասնաբաժինը կազմել է 8.5 մլն դրամ (98.5%): ՆԱՏՕ-ում ՀՀ առաքելությունը տեղակայված է Բրյուսելում: ՆԱՏՕ-ի նոր կենտրոնակայանի շահագործումից հետո Գործընկերների համար հատկացված մասնաշենքում տարածքների վարձակալության վերաբերյալ ՆԱՏՕ-ն որոշում է կայացրել, որ ծախսերի հիմնական մասը կիրականացվի իր կողմից՝ պայմանով, որ դրանք վարձակալների կողմից սկսեն մարվել 2016 թվականից սկսած: Այդ գումարները պետք է վճարեն գործընկերներ-երկրները՝ ըստ իրենց զբաղեցրած տարածքների: Հայաստանի մասնաբաժինը կազմում է 154970 եվրո, որից 16628 եվրոն (8.5 մլն դրամ)՝ ներքին հարդարման լրացուցիչ աշխատանքների համար է և վճարվել է 2016 թվականի ընթացքում:

Հաշվետու տարում 712.9 մլն դրամ է տրամադրվել *աշխատակազմի (կադրերի) գծով ընդհանուր բնույթի ծառայությունների* դասի ֆինանսավորմանը՝ կազմելով ծրագրի 95.2%-ը: Դասի բոլոր

ծրագրերում առկա են որոշակի շեղումներ ծրագրված հատկացումներից: 2015 թվականի համեմատ տվյալ դասի ծախսերը նվազել են 2.6%-ով՝ հիմնականում պայմանավորված քաղաքացիական ծառայության կադրերի ռեզերվում գտնվող քաղաքացիական ծառայողների վարձատրության հետ կապված ծախսերի կրճատմամբ, որոնք կազմել են 88.1 մլն դրամ կամ նախատեսվածի 77.6%-ը: Շեղումը պայմանավորված է կադրերի ռեզերվում քաղաքացիական ծառայողների նախատեսվածից պակաս թվով գրանցմամբ, ինչի արդյունքում նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը նվազել են 15.2%-ով: 2016 թվականին քաղաքացիական ծառայության կադրերի կարճաժամկետ ռեզերվում գրանցվել է 138 քաղաքացիական ծառայող՝ նախատեսված 250-ի և նախորդ տարվա 131-ի դիմաց:

Տվյալ դասում ընդգրկված՝ գործադիր իշխանության, պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների պահպանման ծախսերը կազմել են 307.2 մլն դրամ կամ նախատեսվածի 97.9%-ը: Միջցներն ուղղվել են ՀՀ քաղաքացիական ծառայության խորհրդի պահպանմանը: Շեղումը պայմանավորված է այն հանգամանքով, որ պետական բյուջեով գնման ենթակա ապրանքները և ծառայությունները ձեռք են բերվել նախատեսվածից ցածր գներով: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 1.9%-ով հիմնականում պայմանավորված աշխատանքի վարձատրության ծախսերի աճով:

Քաղաքացիական կացության ակտերի գրանցման ծառայության գործունեության կազմակերպման բնագավառում պետության կողմից համայնքի ղեկավարին պատվիրակված լիազորությունների իրականացումը ֆինանսավորելու նպատակով հաշվետու տարվա ընթացքում պետական բյուջեից տրամադրվել է 317.6 մլն դրամ՝ կազմելով նախատեսվածի 98.8%-ը՝ կապված տնտեսումների հետ: Նախորդ տարվա համեմատ տվյալ ծախսերը գրեթե չեն փոփոխվել:

«Ծրագրման և վիճակագրական ընդհանուր ծառայություններ» դասի ծախսերը հաշվետու տարում կազմել են շուրջ 2.9 մլրդ դրամ կամ նախատեսվածի 98%-ը: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 32.7%-ով՝ հիմնականում պայմանավորված ՀՀ պետական մարմիններին լիցենզիոն ծրագրային փաթեթներով ապահովման համար տվյալ դասում 2016 թվականին միջոցների նախատեսման հանգամանքով, որոնց համար 2015 թվականին միջոցները հատկացվել էին ՀՀ կառավարության պահուստային ֆոնդից:

Տվյալ դասում ընդգրկված՝ գործադիր իշխանության, պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների պահպանման ծախսերը կազմել են 1.1 մլրդ դրամ կամ ծրագրի 99.2%-ը: Միջոցները հատկացվել են ՀՀ Ազգային վիճակագրական ծառայության պահպանմանը: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 1.6%-ով՝ հիմնականում պայմանավորված աշխատանքի վարձատրության ծախսերի աճով:

Պետական վիճակագրական տեղեկատվության հավաքագրման ծախսերը կազմել են 731.1 մլն դրամ՝ կազմելով նախատեսվածի 99.8%-ը: Նախորդ տարվա համեմատ տվյալ ծախսերն աճել են 2.8%-ով, ինչը պայմանավորված է մասնագիտական ծառայությունների ձեռքբերմամբ:

Տեղեկատվական տեխնոլոգիաների (ՏՏ) ոլորտի խթանման ծառայությունների ծախսերը կազմել են 91.7 մլն դրամ կամ նախատեսվածի 97.9%-ը և 3.5%-ով գերազանցել նախորդ տարվա ցուցանիշը: Ծրագրի շրջանակներում 2016 թվականին իրականացվել է տեղեկատվական տեխնոլոգիաների (ՏՏ) ոլորտի վարչական վիճակագրական ռեգիստրի վարումը: Մասնավորապես՝ ռեգիստրի տեղեկատվական համակարգում 2016 թվականի ընթացքում գրանցվել և հաշվետվություններ են ներկայացրել 512 ընկերություններ և անհատ ձեռնարկատերեր (բացառապես ՏՏ ծառայությունների մասով): «Տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի պետական աջակցության մասին» ՀՀ օրենքի շրջանակում հարկային արտոնություններից օգտվելու նպատակով հավաստագրեր ստանալու համար դիմած 105 ընկերություններից 102-ը, և ստեղծվել են 412 նոր աշխատատեղեր:

Գյումրու և Վանաձորի տեխնոլոգիական կենտրոնների գործունեության իրականացման ծրագրին տրամադրվել է 152.5 մլն դրամ, որն օգտագործվել է նախատեսված ողջ ծավալով: 2015 թվականի համեմատությամբ ծախսերն աճել են 15.1%-ով՝ պայմանավորված այն հանգամանքով, որ Վանաձորի տեխնոլոգիական կենտրոնը սկսել է գործել 2016 թվականի հուլիս ամսից, ինչի հետ կապված ավելացել են նշված ծրագրի գծով ծախսերը:

ՀՀ պետական մարմիններին լիցենզիոն ծրագրային փաթեթներով ապահովման ծրագրի շրջանակներում 2016 թվականին ՀՀ պետական բյուջեից տրամադրվել է 565.5 մլն դրամ՝ կազմելով նախատեսվածի 97.1%-ը: Ծրագիրն իրականացվում է «Էլեկտրոնային կառավարման ենթակառուցվածքների գրասենյակ» ՓԲԸ-ի կողմից: Տարբերությունը պայմանավորված է բյուջեի հիմքում դրված փոխարժեքի համեմատ փաստացի ցածր փոխարժեքով: Գումարը հատկացվել է «Հայաստանի ՏՏ-ի ոլորտի մրցունակության բարձրացում, Հայաստանի վարկանիշի ձևավորում՝ որպես ՏՏ-ի տարածաշրջանային կենտրոն» ծրագրի շրջանակներում, որն ընդգրկում է ՀՀ պետական կառավարման մարմինների համար «Մայքրոսոֆթ» ընկերության լիցենզիոն ծրագրային փաթեթների ձեռքբերման և բաշխման գործընթացը: 2015 թվականին նշված նպատակով միջոցները հատկացվել էին ՀՀ կառավարության պահուստային ֆոնդից:

2015 թվականի Հայաստանի ժողովրդագրության և առողջության հարցերի հետազոտության նպատակով պետական բյուջեից տրամադրվել է 242.6 մլն դրամ, որը կազմել է ծրագրի 88.5%-ը: Շեղումը պայմանավորված է գնումների պլանով նախատեսված որոշ գնման ընթացակարգերի չկայացմամբ, ինչպես նաև հայտարարված մրցույթների արդյունքում պայմանագրերն ավելի էժան կնքելու հանգամանքներով: Ծրագրի շրջանակներում իրականացվել են ՀՀ բնակչության,

առողջության և սնուցման վերաբերյալ տվյալների հավաքման, վերլուծության և ներկայացման աշխատանքներ: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 62.2%-ով՝ պայմանավորված այն հանգամանքով, որ ծրագրի աշխատանքները սկսվել են 2015 թվականի օգոստոս ամսից:

Ընդհանուր բնույթի այլ ծառայությունների դասին հաշվետու տարում ՀՀ պետական բյուջեից տրամադրվել է ավելի քան 1 մլրդ դրամ կամ նախատեսվածի 96.8%-ը: Մասնավորապես՝ 596.1 մլն դրամ տրամադրվել է տվյալ դասում ընդգրկված՝ գործադիր իշխանության, պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմիններին, 4.9 մլն դրամ՝ Գեղարքունիքի մարզի Արծվաշեն համայնքի ղեկավարի աշխատակազմի պահպանմանը, որոնց կատարողականը կազմել է համապատասխանաբար 94.5% և 99.9%: Նախորդ տարվա համեմատ նշված առաջին ծրագրի ծախսերը նվազել են 7.9%-ով՝ կապված տնտեսումների հետ, իսկ մյուսինը՝ աճել 3%-ով:

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին պետական աջակցությունը տրամադրվել է նախատեսված ողջ ծավալով՝ կազմելով 156.5 մլն դրամ: Նախորդ տարվա համեմատ տվյալ ծախսերը չեն փոփոխվել:

Հաշվետու տարում պետական աջակցությունը «Սպասարկում» ՊՈԱԿ-ին կազմել է 286.6 մլն դրամ կամ ծրագրի 100%-ը: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը նվազել են 24%-ով, ինչը պայմանավորված է այն հանգամանքով, որ կառավարական N 2 և N 3 շենքերի սպասարկումը 2016 թվականին չի իրականացվել «Սպասարկում» ՊՈԱԿ-ի կողմից:

2015 թվականի համեմատ ընդհանուր բնույթի այլ ծառայությունների դասի ծախսերը նվազել են 11.9%-ով՝ պայմանավորված «Սպասարկում» ՊՈԱԿ-ին պետական աջակցության և գործադիր իշխանության, պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների պահպանման ծախսերի նվազմամբ:

2016 թվականին *«Ընդհանուր բնույթի հետազոտական աշխատանք»* դասին ՀՀ պետական բյուջեից տրամադրվել է 10.8 մլրդ դրամ, որը կազմել է նախատեսված ցուցանիշի 99.6%-ը: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 1%-ով՝ հիմնականում պայմանավորված գիտական և գիտատեխնիկական գործունեության ենթակառուցվածքների պահպանման ու զարգացման ծախսերի աճով:

Գիտաշխատողներին գիտական աստիճանների համար 2016 թվականին ՀՀ պետական բյուջեից տրամադրվել են 892.8 մլն դրամ հավելավճարներ՝ ապահովելով 99.5% կատարողական և 9.3%-ով զիջելով նախորդ տարվա ցուցանիշը: Ծախսերի նվազումը պայմանավորված է գիտական թեմաների քանակի, հետևաբար՝ դրանցում ընդգրկված գիտաշխատողների թվի նվազմամբ:

«Գիտական և գիտատեխնիկական գործունեության հիմնարար և կարևորագույն նշանակություն ունեցող կիրառական հետազոտություններ» ծրագրի շրջանակներում 14.4 մլն դրամ

տրամադրվել է ՀՀ սփյուռքի նախարարությանը, որի հաշվին պատվիրվել են սփյուռքին վերաբերող թվով 12 գիտական հետազոտություններ: Միջոցներն օգտագործվել են նախատեսված ողջ ծավալով և նախորդ տարվա համեմատ փոփոխություն չեն կրել:

Գիտական և գիտատեխնիկական գործունեության ենթակառուցվածքների պահպանման ու զարգացման ծախսերը կազմել են ավելի քան 7.9 մլրդ դրամ կամ նախատեսվածի 99.5%-ը: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն ավելացել են 2.3%-ով՝ հիմնականում պայմանավորված գիտաժողովների թվի ավելացմամբ:

«Ա. Ալիխանյանի անվան ազգային գիտական լաբորատորիա» հիմնադրամի գիտական և գիտատեխնիկական գործունեության ենթակառուցվածքի պահպանման ու զարգացման և գիտական ներուժի արդիականացման ծրագրի ծախսերը կազմել են 749.6 մլն դրամ՝ ամբողջությամբ ապահովելով ծրագրային ցուցանիշը: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 1%-ով:

Ազգային արժեք ներկայացնող գիտական օբյեկտների պահպանության համար նախատեսված միջոցները նույնպես ամբողջությամբ օգտագործվել են՝ կազմելով 876.4 մլն դրամ: Ծրագրում ընդգրկված են Մ.Մաշտոցի անվան հին ձեռագրերի ինստիտուտը, Երևանի պետական համալսարանը և ՀՀ ԳԱԱ մի շարք կազմակերպություններ: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն ավելացել են 1.3%-ով՝ հիմնականում պայմանավորված Մատենադարանի պահպանման և սպասարկման ծախսերի ավելացմամբ:

Ամբողջությամբ կատարվել են նաև ««ՔԵՆԴԼ» սինքրոտրոնային հետազոտությունների ինստիտուտ» հիմնադրամին պետական աջակցության ծախսերը, որոնք կազմել են 293.2 մլն դրամ: «Քենդլ» սինքրոտրոնային հետազոտությունների ինստիտուտ» հիմնադրամում ԱՐԵԱԼ գծային արագացուցչի ծրագրի շնորհիվ հնարավորություն ստեղծվեց հիմնարար և կիրառական գիտական հետազոտություններ իրականացնել ֆիզիկայի, քիմիայի, կենսաբանության, նյութագիտության, նանոէլեկտրոնիկայի և այլ բնագավառներում: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 1%-ով:

Ընդհանուր բնույթի հանրային ծառայությունների գծով հետազոտական և նախագծային աշխատանքների դասի ծախսերը 2016 թվականին կազմել են ավելի քան 1.5 մլրդ դրամ կամ նախատեսվածի 95.7%-ը: 2015 թվականի համեմատ նշված ծախսերն աճել են 6.2%-ով՝ հիմնականում պայմանավորված գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) հետազոտությունների ծախսերի աճով: Խմբի ծախսերի զգալի մասը՝ 1.3 մլրդ դրամ, տրամադրվել է նշված ծրագրին, որի շրջանակներում նախատեսված միջոցներն օգտագործվել են 95.1%-ով: Նախորդ տարվա համեմատ պայմանագրային (թեմատիկ) հետազոտությունների ծախսերն աճել են 8.8%-ով՝ պայմանավորված ֆինանսավորվող թեմաների քանակի ավելացմամբ: 2015-2017թթ. մրցույթի արդյունքում 2015 թվականի դեկտեմբերից սկսվել են

ֆինանսավորվել 153 գիտական թեմաներ, մասնավորապես՝ «ՔԵՆԴԼ» Սինքրոտրոնային հետազոտությունների ինստիտուտ» հիմնադրամի «ԱՐԵԱԼ» գծային արագացուցչի վրա իրականացվող թեմաները, ՈՒռուցքաբանության գերազանցության կենտրոնի գիտական ուղղությունների հետ առնչվող գիտական թեմաները, Շիրակի մարզի գիտական կազմակերպություններում իրականացվող գիտական հետազոտությունների աջակցության ծրագիրը:

Գիտական և գիտատեխնիկական նպատակային-ծրագրային հետազոտությունների հատկացումներն իրականացվել են 99.9%-ով, որոնք կազմել են 206.4 մլն դրամ և 7.8%-ով զիջել նախորդ տարվա ցուցանիշը՝ հիմնականում պայմանավորված նպատակային-ծրագրային հետազոտությունների քանակով:

Ընդհանուր բնույթի հանրային ծառայությունների (այլ դասերին չպատկանող) դասի ծախսերը հաշվետու տարում կազմել են շուրջ 13.1 մլրդ դրամ՝ 9.4%-ով գերազանցելով ծրագիրը, որը հիմնականում պայմանավորված է Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող Էլեկտրոնային հասարակության և մրցունակության համար նորարարության վարկային ծրագրի ծախսերի կատարողականով: Նախորդ տարվա համեմատ այլ դասերին չպատկանող ընդհանուր բնույթի հանրային ծառայությունների դասի ծախսերն աճել են 4.9%-ով, ինչը հիմնականում պայմանավորված է 2016 թվականին ՀՀ տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների անցկացմամբ և Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող Էլեկտրոնային հասարակության և մրցունակության համար նորարարության վարկային ծրագրի շրջանակներում կատարված ծախսերի աճով:

Հաշվետու տարվա ընթացքում 989.5 մլն դրամ է տրամադրվել այս դասում ընգրկված պետական կառավարման մարմինների՝ ՀՀ հանրային ծառայությունների կարգավորման հանձնաժողովի և ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովի պահպանմանը, որը կազմել է ծրագրի 96.4%-ը՝ պայմանավորված տնտեսումներով: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 4.2%-ով՝ հիմնականում պայմանավորված գործառույթների ընդլայնման արդյունքում հաստիքային միավորների ավելացմամբ:

2016 թվականին ՀՀ տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններ կազմակերպելու նպատակով 1.4 մլրդ դրամ է տրամադրվել ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովին և ՀՀ Ոստիկանությանը՝ ապահովելով 99.9% կատարողական:

Փորձաքննությունների ծառայությունների ձեռքբերման նպատակով ՀՀ դատախազությանը, ՀՀ արդարադատության նախարարությանը և ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեին տրամադրվել է 509.9 մլն դրամ՝ կազմելով ծրագրի 100%-ը: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 23%-ով՝ հիմնականում պայմանավորված փորձաքննությունների քանակի աճով:

Աճուրդների կազմակերպման և անցկացման աշխատանքներն իրականացնելու համար ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչությանը տրամադրվել է 33 մլն դրամ՝ կազմելով ծրագրի 100%-ը և նախորդ տարվա համեմատ աճելով 0.5%-ով: 2016 թվականին իրականացվել են թվով 430 պետական գույքի աճուրդով վաճառքի կազմակերպում և անցկացում՝ նախորդ տարվա 330-ի փոխարեն:

Պետական գույքի հաշվառման, գույքագրման, ուսումնասիրությունների և գնահատման աշխատանքների իրականացման ծախսերը կազմել են 37.2 մլն դրամ, որոնք նույնպես նախատեսված ծավալով իրականացվել են և նախորդ տարվա համեմատ գրեթե չեն փոփոխվել:

Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող պետական հատվածի բարեփոխումների երկրորդ վարկային ծրագրի շրջանակներում օգտագործվել է 584.7 մլն դրամ կամ նախատեսվածի 119.9%-ը: Ծրագրի գերազանցումը պայմանավորված է 2015 թվականից հետաձգված մատակարարումների և աշխատանքների համար 2016 թվականին կատարված վճարումներով: Ծրագրի նպատակն է՝ կատարելագործել հանրային հատվածի կառավարման իրականացումը և ծառայությունների մատուցումը՝ քաղաքականության մշակման ոլորտում գերատեսչական հզորությունների ուժեղացման, մարդկային կապիտալի արդյունավետությունն առավելագույնի հասցնելու և ներքին աշխատանքային հոսքերի և արտաքին հաղորդակցության համար տեղեկատվական համակարգերի ստեղծման միջոցով: Ծրագիրը բաղկացած է հետևյալ բաղադրիչներից.

- Քաղաքականության ձևավորման և ծառայությունների մատուցման ձևաչափում գերատեսչական կարողությունների զարգացում,
- Հանրային հատվածում մարդկային ռեսուրսների գործունեության արդյունավետության բարձրացում,
- Կատարողականի և թափանցիկության բարելավման նպատակով համակարգերի մշակում,
- Ժամանակին պահանջվող տեխնիկական աջակցություն,
- Ծրագրի կառավարում և իրականացում:

2016 թվականին ծրագրի շրջանակներում պետական կառավարման մարմինների համար ձեռք են բերվել համակարգչային սարքավորումներ: Ծրագիրն ավարտվել է 2017 թվականի հունվարի 31-ին, և նախատեսված բոլոր աշխատանքներն իրականացվել են:

Սեյսմիկ պաշտպանության ազգային ծառայությանը հաշվետու տարում տրամադրվել է 810.1 մլն դրամ, որը կազմել է ծրագրի 100%-ը և 5.7%-ով զիջել նախորդ տարվա ցուցանիշը, որը պայմանավորված է հաստիքների կրճատմամբ:

ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի ստորաբաժանումների կողմից մատուցվող ծառայություններից ստացվող եկամուտների հաշվին

կոմիտեի համակարգի պահպանման ծախսերը կազմել են 2.9 մլրդ դրամ կամ ծրագրի 76.3%-ը, որը պայմանավորված է հաստիքների կրճատմամբ, մարզային ստորաբաժանումների միավորմամբ և սպասարկման գրասենյակների լուծարմամբ, ինչպես նաև նախատեսված գործուղումները չիրականացնելու հանգամանքով: 2015 թվականի համեմատ նշված ծախսերն աճել են 7.4%-ով, որը պայմանավորված է կոմիտեի արտաբյուջետային եկամուտների աճով:

ԱՄՆ կառավարության աջակցությամբ իրականացվող «Հազարամյակի մարտահրավեր» դրամաշնորհային ծրագրի շրջանակներում օգտագործվել է 100.7 մլն դրամ կամ նախատեսվածի 89.2%-ը: Ծրագրի ընդհանուր նպատակն է գյուղական աղքատության կրճատումը՝ Հայաստանում գյուղատնտեսական ոլորտի կայուն տնտեսական աճի միջոցով, գյուղատնտեսության ոլորտի արդյունավետության մեծացումը՝ ոռոգման համակարգերի ընդգրկումն ընդլայնելու և որակի բարելավման, համակարգը կառավարող մարմինների հզորացման և ֆերմերների արտադրանքի եկամտաբերությունն ավելացնելու հնարավորություններ ստեղծելու միջոցով: Ծրագրով նախատեսված աշխատանքները կատարված են, և ծրագրից շեղումը հանդիսանում է ծախսերի խնայողություն:

Տվյալ դասում ընդգրկված՝ պետական կառավարման մարմինների կարողությունների զարգացման ծախսերին տրամադրվել է 7.9 մլն դրամ՝ նախատեսված 19.9 մլն դրամի դիմաց, որը պայմանավորված է նախատեսվածից ցածր գներով ապրանքների ձեռքբերման, ինչպես նաև գնման որոշ ընթացակարգերի չկայացման հետևանքով: Նշված ծրագրի շրջանակում ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի համար ձեռք է բերվել համակարգչային և կենցաղային տեխնիկա:

ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի ստորաբաժանումների կողմից մատուցվող ծառայություններից ստացվող եկամուտների հաշվին կոմիտեի համակարգի կարողությունների զարգացմանը տրամադրվել է շուրջ 434.5 մլն դրամ կամ նախատեսվածի 84.6%-ը, որը հիմնականում պայմանավորված է աշխատանքների կատարման համար պայմանագրերի՝ ավելի ցածր արժեքով կնքման հանգամանքով, ինչպես նաև կոմիտեի կողմից հավաքվող եկամուտների ցածր մակարդակով: 2015 թվականի համեմատ նշված ծախսերը նվազել են 19.1%-ով՝ հիմնականում պայմանավորված գեոդեզիական աշխատանքների ծավալների նվազմամբ:

Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող Էլեկտրոնային հասարակության և մրցունակության համար նորարարության վարկային ծրագրի շրջանակներում օգտագործվել է շուրջ 4.3 մլրդ դրամ՝ 152.2%-ով գերազանցելով ծրագրային հատկացումները: Բարձր կատարողականը պայմանավորված է 2015 թվականից հետաձգված մատակարարումների և աշխատանքների համար վճարումներով: Ծրագիրն ուղղված է էլեկտրոնային հասարակության և ինովացիոն ծրագրի

նախապատրաստմանն օժանդակելուն, նպատակներն են՝ տնային տնտեսությունների, բիզնեսի և պետական կազմակերպությունների համար համացանցի, համակարգիչների և էլեկտրոնային ծառայությունների մատչելիությունը և հասանելիությունը, գիտելիքահեն և տեխնոլոգիահեն հատվածի ծավալների ու տվյալ հատվածում զբաղվածության աճը, ինչպես նաև հասանելիությունը շուկաներին, ֆինանսներին, հմտություններին: Ծրագիրը բաղկացած է հետևյալ բաղադրիչներից.

- Էլեկտրոնային հասարակության ենթակառուցվածքների զարգացում,
- Ձեռնարկությունների ինովացիոն ենթակառուցվածքների խթանում,
- Ծրագրի կառավարում և իրականացում:

2016 թվականին իրականացվել են Գյումրու և Վանաձորի Տեխնոլոգիական կենտրոնների, Մոբայլ լուծումների /mLab/ տարածաշրջանային լաբորատորիայի, Նորարարական լուծումների և տեխնոլոգիաների և Հայ-Հնդկական ուսումնական կենտրոնների հիմնանորոգման աշխատանքները և նրանց համար կահույքի ու այլ սարքավորումների ձեռքբերումը: Ծրագիրն ավարտվել է 2016 թվականի հունիսի 30-ին, և բոլոր նախատեսված աշխատանքներն իրականացվել են:

Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող Հարկային վարչարարության արդիականացման ծրագրի իրականացման համար ծախսվել է 408 մլն դրամ կամ նախատեսվածի 58.7%-ը: Ծրագրի կատարողականի պատճառներից հիմնականն այն է, որ 2016 թվականի գնումների պլանը վերանայվել է, և աշխատանքների մի մասը տեղափոխվել է 2017 թվական:

Ծրագրի նպատակն է օժանդակել Հայաստանի եկամուտների վարչարարության համապարփակ արդիականացմանը: Ծրագրի շրջանակներում ֆինանսավորվում են ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի ՏՀՏ ենթակառուցվածքում կարևոր ներդրումները, որպեսզի հնարավորություն ընձեռվի արդիականացնել բիզնես գործընթացները, ընդլայնվի էլեկտրոնային կառավարման կիրարկումը, այդ թվում՝ նաև հարկային հայտարարագրերի էլեկտրոնային եղանակով ներկայացումը, ինչպես նաև առավել թիրախավորված, ռիսկի վրա հիմնված պարտավորությունների իրականացման ռազմավարության ներդրումը՝ հիմնվելով պարտավորությունների կամավոր իրականացման վրա: Ծրագիրը բաղկացած է հետևյալ բաղադրիչներից.

- Ինստիտուցիոնալ զարգացում և փոփոխության կառավարում,
- Գործընթացի արդիականացում և պարտավորությունների կատարման կառավարում,
- ՏՏ ենթակառուցվածքի և համակարգերի արդիականացում,
- Ծրագրի կառավարում և իրականացում:

Ծրագրի շրջանակներում 2016 թվականին մշակվել են հեռախոսազանգերի կառավարման և հաշվետվությունների ստացման ծրագիր մոնիթորինգային կենտրոնի համար և «Հարկատու 3» համակարգի մոնիթորինգային ծրագիր: Կատարվել են ՊԵԿ մոնիթորինգային կենտրոնի և հարկ

վճարողների սպասարկման սրահներում սարքավորումների և սպասարկման որակի գնահատման համակարգերի ներդրման աշխատանքները: Ներդրվել են տվյալների մշակման կենտրոններ Երևանում և Դիլիջանում, վերազինվել են Խոշոր հարկ վճարողների ՀՏ-ի և Ահարոնյան 12/3 հասցեում գտնվող շենքի ներքին ցանցերը:

Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող հանրային հատվածի վերահսկողության (Վերահսկիչ պալատի) կարողությունների զարգացման դրամաշնորհային ծրագրի շրջանակներում նախատեսվել էին 4.7 մլն դրամ ծախսեր, որոնք չեն օգտագործվել, քանի որ ծրագիրն ավարտվել է, և նախատեսված բոլոր աշխատանքներն իրականացվել են 2015 թվականին՝ պետական հատվածի արտաքին աուդիտի կողմից կարողության ստեղծման ռազմավարության ու գործողությունների ծրագրի ընդունման և աուդիտի ստանդարտացված մեթոդների մշակման ու կիրառման համար:

Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող ՀՀ ֆինանսների նախարարության կարողությունների զարգացման դրամաշնորհային ծրագրի շրջանակներում օգտագործվել է 25.9 մլն դրամ՝ նախատեսված 3.5 մլն դրամի դիմաց: Ծրագրի գերազանցումը պայմանավորված է նրանով, որ 2015 թվականից հետաձգված մատակարարումների և կատարված որոշ աշխատանքների դիմաց վճարումները կատարվել են 2016 թվականին: Ծրագրի նպատակն էր զարգացնել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության համապատասխան վարչությունների կարողությունները, որոնք պատասխանատու են ֆինանսական շուկայի զարգացման և փողերի լվացման դեմ պայքարի քաղաքականությունների համար:

Ծրագիրը բաղկացած է հետևյալ բաղադրիչներից.

- Ինստիտուցիոնալ զարգացում,
- Ֆինանսական շուկայի զարգացում:

Ծրագիրն ավարտվել է, և նախատեսված բոլոր աշխատանքներն իրականացվել են: Մասնավորապես՝

- Իրականացվել է փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի ոլորտի ՀՀ օրենսդրության և այդ ոլորտի միջազգային լավագույն փորձի համեմատություն, հայտնաբերված բացերի հիման վրա մշակվել է գործողությունների ծրագիր, ինչպես նաև խաղային գործի բնագավառում գործող կազմակերպությունների համար ՀՀ ֆինանսների նախարարություն ներկայացման ենթակա պարբերական հաշվետվական ձևերը: Օրենսդրական դաշտի կատարելագործմանն ուղղված միջոցառումների նպատակն է խաղային գործի բնագավառում առկա ռիսկերը դարձնել տեսանելի և կառավարելի.
- Մշակվել և ներդրվել է ներկայումս գործող «Հարկատու-3» էլեկտրոնային կառավարման համակարգի հետ ինտեգրված լիցենզավորման գործընթացի վարման մոդուլը, որի արդյունքում

ավտոմատացվել է ՀՀ ֆինանսների նախարարության կողմից լիցենզավորման ենթակա գործունեության տեսակների համար լիցենզիաների հայտերի ընդունման, լիցենզիաների տրման և հաշվառման գործընթացը: Վերջնական արդյունքում ՀՀ ֆինանսների նախարարությունն ունի իր կողմից լիցենզավորման ենթակա գործունեությամբ զբաղվող տնտեսավարող սուբյեկտների լիցենզավորման գործընթացի կատարելագործված և ավտոմատացված համակարգ, որի գործարկման արդյունքում կնվազեն կոռուպցիոն ռիսկերը և ծախսվող ժամանակը:

Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող Հայաստանի կառավարության կարգավորող բարեփոխումների գրասենյակի կարողությունների զարգացման դրամաշնորհային ծրագրի շրջանակներում նախատեսվել էր 4.7 մլն դրամ, որը չի օգտագործվել: Ծրագիրն ավարտվել է, և բոլոր նախատեսված աշխատանքներն իրականացվել են 2015 թվականին՝ ՀՀ կառավարության Կարգավորիչ բարեփոխումների ստորաբաժանման կարողությունները զարգացնելու համար, որը պատասխանատու է գործարարների և քաղաքացիների գործունեության վրա ազդող իրավական նորմերի գույքագրման ու վերանայման և անօգուտ կամ ավելորդ հանդիսացողների վերացման կամ պարզեցման միջոցով Կարգավորիչ «գիլյոտինի» ծրագրի իրականացման համար:

Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող Հայաստանի հանրային ֆինանսական կառավարման հզորացման դրամաշնորհային ծրագրի գծով ծախսվել է 2.2 մլն դրամ կամ նախատեսված միջոցների 43.6%-ը: Ծրագրի նպատակն է քաղաքականության վրա հիմնված բյուջետավորման խորացումը և Հայաստանում պետական ներդրումների կառավարման համակարգի զարգացումը:

Ծրագիրը բաղկացած է հետևյալ բաղադրիչներից.

- Քաղաքականության վրա հիմնված բյուջետավորման և Հայաստանում հանրային ներդրումների կառավարման համակարգերի հզորացում,
- Տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառման և կառավարման բարելավում,
- Բիզնես գործընթացների ուսումնասիրություն:

Ծրագիրն ավարտվել է, և նախատեսված բոլոր աշխատանքներն իրականացվել են: Մասնավորապես՝

- Աշխատանքներ են իրականացվել կառավարության ֆինանսների կառավարման տեղեկատվական համակարգի (այսուհետ՝ ԿՖԿՏՀ) տեխնիկական և գործառութային պահանջների և տեխնիկական առաջադրանքի մշակման, ինչպես նաև մրցութային փաստաթղթերի և նախահաշիվների կազմման ուղղությամբ.
- Մշակվել է գնումների ինտեգրված էլեկտրոնային համակարգ, որը ներառում է գնումների պլանավորումը, գնման գործընթացի կազմակերպումը և անցկացումը, գնման պայմանագրերի կառավարումը և իրականացված գնումների վերաբերյալ հաշվետվությունների պատրաստումը՝

գնումների գործընթացների ավտոմատացման, գնումների արդյունավետությունը և թափանցիկությունը բարձրացնելու նպատակով: Իրականացվել է նաև պետական ֆինանսների կառավարման ոլորտի մասնագետների՝ էլեկտրոնային եղանակով թեստավորման համակարգի ավտոմատացումը.

- ՀՀ ֆինանսների նախարարությանը և այլ մարմիններին մեթոդական աջակցություն է ցուցաբերվել բյուջեի պատրաստման, այդ թվում՝ կապիտալ ներդրումների բյուջետավորման կատարելագործված ընթացակարգերի նախագծման և գործարկման հարցում: Իրականացվել է քաղաքականության վրա հիմնվող բյուջետավորման խորացում, որի շրջանակներում հիմնական գործողություններն են՝ նոր հաշվային պլանի ծրագրային սեգմենտի մշակումը և ծրագրի ծախսակազմումը:

Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող կենսաթոշակների մասին հանրային իրազեկման և գրագիտության դրամաշնորհային ծրագրի շրջանակներում օգտագործվել է 44.2 մլն դրամ կամ նախատեսվածի 116.5%-ը: Ծրագրի նպատակն է ուժեղացնել ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության, ինչպես նաև վերջինիս սոցիալական ապահովության պետական ծառայության կարողությունները՝ բարելավելու լայն հասարակության և հատուկ թիրախային խմբերի իրազեկումը կենսաթոշակային բարեփոխման մասին և ֆինանսական գրագիտությունը:

Ծրագիրը բաղկացած է հետևյալ բաղադրիչներից.

- Իրազեկման և ֆինանսական գրագիտության բարձրացման կարողությունների կատարելագործում,
- Դասախոսների վերապատրաստման շնորհիվ դասախոսների դյուրաշարժ խմբերի կազմավորում:

Ծրագիրն ավարտվել է 2016 թվականի հունիսին, և բոլոր նախատեսված աշխատանքներն իրականացվել են:

Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող քաղաքաշինական թույլտվությունների էլեկտրոնային մշակման և մեկ պատուհանից տրամադրման ծրագրի համար Ինստիտուցիոնալ զարգացման հիմնադրամի (ԻԶՀ) դրամաշնորհային ծրագրի շրջանակներում օգտագործվել է 108.2 մլն դրամ կամ նախատեսվածի 227.9%-ը: Ծրագրի տվյալ ժամանակահատվածի նախատեսված ցուցանիշի գերազանցումը պայմանավորված է 2015 թվականից հետաձգված մատակարարումների և աշխատանքների համար վճարումներով: Ծրագրի նպատակն է բարելավել բիզնես միջավայրը՝ կրճատելով քաղաքաշինական թույլտվությունների հետ կապված ընթացակարգերի իրականացման համար անհրաժեշտ ծախսերը և դրանց համար

պահանջվող ժամանակը՝ այս ընթացակարգերի պարզեցման և ավտոմատացման միջոցով: Ծրագիրը բաղկացած է հետևյալ բաղադրիչներից.

- Մեկ պատուհանի միջոցով քաղաքաշինական թույլտվությունների արդիականացված մշակում,
- Տվյալների էլեկտրոնային մշակման և ծառայությունների մատուցման ներդրում:

Ծրագիրն ավարտվել է, և նախատեսված բոլոր աշխատանքներն իրականացվել են՝ կրճատելով քաղաքաշինական թույլտվությունների հետ կապված ընթացակարգերի արժեքը և դրանց համար պահանջվող ժամանակը, այս ընթացակարգերի պարզեցման և ավտոմատացման միջոցով բիզնես միջավայրը բարելավելու համար:

Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող առևտրի և ենթակառուցվածքների զարգացման ծրագրի շրջանակներում օգտագործվել է 57.8 մլն դրամ՝ կազմելով նախատեսվածի 15.2%-ը: Վերջինս պայմանավորված է գնումների պլանի վերանայման ձգձգմամբ: Ծրագրի նպատակն է զարգացնել արտահանման խթանման, ներդրումների ներգրավման և ձեռնակություններին տրամադրվող որակի կառավարման ծառայությունների կարողությունները:

Ծրագիրը բաղկացած է հետևյալ բաղադրիչներից.

- Առևտրի խթանման և որակի համակարգերի արդյունավետության բարելավում,
- Ներդրումների և արտահանման խթանում,
- Որակի ազգային ենթակառուցվածքի արդիականացում,
- Ծրագրի կառավարում, մոնիտորինգ և գնահատում:

2016 թվականին մշակված գնումների ժամանակացույցի և այլ փաստաթղթերի հիման վրա իրականացվել են ծրագրի մեկնարկի և գնումների բնականոն ընթացքի համար անհրաժեշտ աշխատանքներ ծրագրի կառավարման բաղադրիչի շրջանակում՝ աշխատանքային խմբի մասնագետների հետ: Համաձայնագրով սահմանված՝ պետական բյուջեին աջակցության համար 2016 թվականի արդյունքները կատարված են, և Համաշխարհային բանկի կողմից որպես ուղղակի աջակցություն ՀՀ պետական բյուջե է փոխանցվել 2.325 մլն ԱՄՆ դոլար:

Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող երիտասարդների ներգրավվածության խթանման դրամաշնորհային ծրագրի միջոցներից օգտագործվել է 246.6 մլն դրամ կամ նախատեսվածի 132.2%-ը: Ծրագրի նպատակն է առաջնորդության և ապրուստի զարգացման հնարավորությունների ավելացման շնորհիվ թիրախային շրջաններում երիտասարդների խոցելի խմբերի սոցիալական և տնտեսական ներգրավվածության խթանումը: Ծրագիրը բաղկացած է հետևյալ բաղադրիչներից.

- Երիտասարդների առաջնորդության զարգացում,
- Երիտասարդների ապրուստի խթանում,

- Ծրագրի կառավարում:

Ծրագրի կատարողականը պայմանավորված է այն հանգամանքով, որ ծրագիրն իրականացնող անհատ խորհրդատուների հետ պայմանագրերը կնքվել են 2015 թվականի հոկտեմբեր-դեկտեմբեր ամիսների ընթացքում: Մինչ այդ՝ հուլիս ամսին, Համաշխարհային բանկին առաջարկվել է ծրագրի վերջնաժամկետը երկարաձգել մինչև 2017 թվականի սեպտեմբերի 30-ը՝ 2016 թվականի մարտի 31-ի փոխարեն, սակայն ՀԲ կողմից համաձայնություն չի ստացվել: Ըստ այդմ, ծրագրի միջոցառումների համար սահմանվել են կարճ ժամկետներ, իսկ մեկ միջոցառում (Փոքր բիզնեսի դրամաշնորհների տրամադրում) ընդհանրապես հանվել է գնումների պլանից, քանի որ այն չէր կարող ավարտվել մինչև ծրագրի համար սահմանված վերջնաժամկետը: Ծրագրի շրջանակներում 30 սահմանամերձ համայնքներում տրամադրվել են դրամաշնորհներ՝ բարձրացնելով երիտասարդության դերը համայնքային կյանքի հետ կապված որոշումների ընդունման գործընթացներում:

Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող Տեղական տնտեսության ենթակառուցվածքի զարգացման (ՏՏԵԶ) դրամաշնորհային ծրագրի միջոցներից օգտագործվել է 82 մլն դրամ կամ նախատեսվածի 65.5%-ը: Ծրագրի նպատակն է զարգացնել նորաստեղծ՝ Հայաստանի զարգացման հիմնադրամի (ՀԶՀ) կարողությունները զբոսաշրջության խթանման և զարգացման ծրագրերի նախագծման և ՏՏԵԶ վարկային ծրագրի նախապատրաստման ուղղությամբ:

Ծրագիրը բաղկացած է հետևյալ մասերից.

- ՀԶՀ-ի Զբոսաշրջության բաժնի կարողությունների զարգացում:
- Առաջնահերթ գերակայության ներդրումների տեխնիկատնտեսական հիմնավորման ուսումնասիրություն և մանրամասն/աշխատանքային նախագծեր:
- Բնապահպանական և սոցիալական փաստաթղթեր
- Ֆինանսական աուդիտ

2016 թվականին կնքվել են նախատեսվող պայմանագրերը, որոնց հիմնական աշխատանքները հետաձգվել են 2017 թվական:

Հիմնարկներին և կազմակերպություններին ամրացված՝ յուրաքանչյուր միավոր մինչև 5 մլն դրամ գնահատված արժեքով շարժական գույքի օտարման գործընթացում գտնվելու ժամանակահատվածում գույքի պահառության կազմակերպման համար ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչությանն արտաբյուջետային միջոցներից հատկացվել է 14.1 մլն դրամ, որն ամբողջությամբ օգտագործվել է:

Ընտրական վարչարարության փորձի ուսումնասիրման, ընտրական վարչարարության բարձրացման, կենտրոնական ընտրական հանձնաժողովի վերազինման և ընտրական

օրենսդրությանը վերաբերող նյութերի հրապարակման աշխատանքներին ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովի արտաբյուջետային միջոցներից տրամադրվել է 8.8 մլն դրամ՝ կազմելով նախատեսվածի 50.5%-ը: Տնտեսումը պայմանավորված է գործուղումների և այցերի կրճատմամբ:

2016 թվականին *պետական պարտքի* գծով գործառնությունների դասի ծախսերը կատարվել են 99.6%-ով և կազմել 98.3 մլրդ դրամ: 2015 թվականի համեմատ պետական պարտքի գծով գործառնությունների դասի ծախսերն աճել են 32.7%-ով կամ 24.2 մլրդ դրամով: Արդյունքում սպասարկման ծախսերի տեսակարար կշիռը պետական բյուջեի ծախսերում աճել է 1.5 տոկոսային կետով և 2016 թվականին կազմել 6.8%: Սպասարկման ծախսերն աճել են պարտքային բոլոր գործիքների գծով, սակայն սպասարկման ծախսերի կառուցվածքում էական տեղաշարժեր չեն արձանագրվել: ՀՀ կառավարության պարտքի սպասարկման ծախսերի աճը պայմանավորված է եղել նախ և առաջ 2016 թվականի ընթացքում պարտքի ծավալի 18.2% աճով: Աճին նպաստել են նաև.

- 2016 թվականի ընթացքում պարտքի կառուցվածքում արձանագրված տեղաշարժերը՝ պետական գանձապետական պարտատոմսերի մասնաբաժնի աճը, որը 2016 թվականի տարեվերջի դրությամբ կազմել է 4.9 տոկոսային կետ: Դա հանգեցրել է պարտքի կառուցվածքում «թանկ պայմաններով» սպասարկվող պարտքի մասնաբաժնի ավելացմանը, որը, բնականաբար, իր հերթին նվազեցրել է պարտքի արտարժութային ռիսկերը,
- արտարժութային վճարումների փոխարկումների համար կիրառվող փոխարժեքների փոփոխությունը, մասնավորապես՝ ԱՄՆ դոլարի նկատմամբ ՀՀ դրամի փոխարժեքը 411.21-ից աճել է 473.4-ի կամ 15.1%-ով,
- պարտքի միջին անվանական տոկոսադրույքի 0.4 տոկոսային կետով աճը, որի արդյունքում պարտքի միջին անվանական տոկոսադրույքը 2016 թվականի տարեվերջին կազմել է 4.9%:

Հաշվետու ժամանակահատվածում 42 մլրդ դրամ տրամադրվել է պետական արժեթղթերի (գանձապետական պարտատոմսերի) սպասարկմանը, որի կատարողականը կազմել է 99.6%: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 30.8%-ով, ինչը պայմանավորված է շրջանառության մեջ գտնվող պետական գանձապետական պարտատոմսերի ծավալի աճով (58.5%): Սպասարկման ծախսերի աճը որոշակի չափով զսպվել է՝ պայմանավորված նախորդ տարվա համեմատությամբ հաշվետու ժամանակահատվածում տեղաբաշխված գանձապետական պարտատոմսերի միջին կշռված եկամատաբերության նվազմամբ 3.5 տոկոսային կետով՝ 14.61%-ից հասնելով 11.07%-ի:

Օտարերկրյա պետություններից, միջազգային կազմակերպություններից և այլ արտաքին աղբյուրներից ստացված վարկերի սպասարկմանը տրամադրվել է 25.1 մլրդ դրամ՝ կազմելով

նախատեսվածի 99%-ը: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 34%-ով, որը հիմնականում պայմանավորված է հետևյալ գործոններով.

- արտաքին վարկերի գծով պարտքի բացարձակ մեծության աճով՝ 15.1%-ով,
- արտարժութային վճարումների փոխարկումների համար կիրառվող փոխարժեքների փոփոխությամբ, մասնավորապես՝ ԱՄՆ դոլարի նկատմամբ ՀՀ դրամի փոխարժեքը 411.21-ից աճել է 473.4-ի՝ 15.0%-ով,
- արտաքին վարկերի գծով պարտքի կառուցվածքում առևտրային և առևտրայինին մոտ պայմաններով տրամադրված վարկերի տեսակարար կշռի աճով, որը 30.5%-ից հասել է 36%-ի,
- LIBOR դրույքաչափի բարձրացմամբ, որի միջին դրույքաչափը 2015 թվականին կազմել էր 0.5%, իսկ 2016 թվականին՝ 1.1%: Նշենք, որ 2016 թվականին տարեվերջի դրությամբ ՀՀ կառավարության արտաքին վարկերի գծով պարտքի բացարձակ մեծության 19.6%-ի սպասարկման ծախսերի հաշվարկման հիմքում ընկած է LIBOR տոկոսադրույքը:

Պայմանավորված արտաքին վարկերի կառուցվածքով և տրամադրման տոկոսադրույքներով՝ սպասարկման ծախսերի 85%-ը կազմել են միջազգային կազմակերպություններին վճարված տոկոսավճարները, որոնց տեսակարար կշիռը նախորդ տարվա համեմատությամբ աճել է 1 տոկոսային կետով կամ 7.0 մլն ԱՄՆ դոլարով: Փաստացի տոկոսավճարների 43.5%-ը կազմել են Զարգացման Միջազգային Ընկերակցության վարկերի սպասարկման ծախսերը, որոնց մասնաբաժինը նվազել է 9.1 տոկոսային կետով: Միևնույն ժամանակ, աճել են Վերակառուցման և Զարգացման Միջազգային Բանկի (6.8 տոկոսային կետով), Ասիական Զարգացման Բանկի (2.9 տոկոսային կետով) և Եվրասիական Զարգացման Բանկի (2.4 տոկոսային կետով) մասնաբաժինները:

Օտարերկրյա պետություններին վճարված տոկոսավճարների մասնաբաժինը կազմել է 14.5% և նվազել է 0.7 տոկոսային կետով: 2.0 տոկոսային կետով ավելացել է ֆրանսիական վարկերի սպասարկման ծախսերի կշիռը և համապատասխանաբար 2.2 և 1.2 տոկոսային կետերով նվազել են գերմանական և ճապոնական վարկերի տոկոսավճարների մասնաբաժինները:

Վճարված տոկոսավճարների կառուցվածքում լողացող տոկոսադրույքով վարկերի գծով վճարված տոկոսավճարների տեսակարար կշիռը կազմել է 15.0% և նախորդ տարվա համեմատությամբ աճել է 4.8 տոկոսային կետով:

Սպասարկման ծախսերի գերակշիռ մասը (78.5%) կատարվել է ԱՄՆ դոլարով, իսկ մնացած վճարումները կատարվել են Եվրոյով (16.8%), ճապոնական իենով (3.9%), չինական յուանով (0.8%):

Մուրհակների սպասարկմանը հաշվետու տարում տրամադրվել է 1.8 մլն դրամ՝ կազմելով նախատեսվածի 100%-ը և 2.5 անգամ գերազանցելով նախորդ տարվա ցուցանիշը:

Արտարժութային պետական պարտատոմսերի սպասարկման ծախսերը կազմել են 31.1 մլրդ դրամ (100%), որը նախորդ տարվա համեմատ աճել է 34.4%-ով կամ շուրջ 8 մլրդ դրամով՝ պայմանավորված հետևյալ գործոններով՝

- փոխարկումների համար կիրառվող ԱՄՆ դոլար / ՀՀ դրամ փոխարժեքի աճով (2015թ.՝ 411.21, իսկ 2016թ.՝ 473.4),
- 2015 թվականի մարտի 26-ին արտարժութային պետական պարտատոմսերի գծով կատարված գործառնություններով՝

1. իրականացվել է 2020 թվականին մարման ենթակա արտարժութային պետական պարտատոմսերի մասնակի հետգնում՝ 199.9 մլն ԱՄՆ դոլար,
2. տեղաբաշխվել են 500.0 մլն ԱՄՆ դոլար ծավալով և 2025 թվականին մարման ենթակա արտարժութային պետական պարտատոմսեր:

2016 թվականին ՀՀ պետական բյուջեից *կառավարության տարբեր մակարդակների միջև իրականացվող ընդհանուր բնույթի տրանսֆերտների* ծախսերը կատարվել են 99.4%-ով՝ կազմելով 49.4 մլրդ դրամ: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 4.3%-ով: Նշված գումարից 47.1 մլրդ դրամը տրամադրվել է համայնքների բյուջեներին ֆինանսական համահարթեցման սկզբունքով տրամադրվող դոտացիաների և Ազգային ժողովի ընդունած օրենքների կիրարկման արդյունքում համայնքների բյուջեների եկամուտների կորուստների փոխհատուցման ֆինանսավորմանը, որը կատարվել է 100%-ով և 6.9%-ով գերազանցել նախորդ տարվա հատկացումը:

Հայաստանի Հանրապետության համայնքային բյուջեներին հաշվետու տարվա ընթացքում տրամադրվել է 18 մլն դրամ սուբվենցիա՝ կազմելով նախատեսվածի 100%-ը: Գումարը հատկացվել է Արագածոտնի մարզի Երնջատափ համայնքին՝ գյուղատնտեսական տեխնիկայի ձեռքբերման նպատակով:

2016 թվականին տեղական ինքնակառավարման մարմիններին տրամադրվել է ևս 1.5 մլրդ դրամ պետական աջակցություն՝ կազմելով նախատեսվածի 98.6%-ը: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերի 33.8%-ով նվազումը պայմանավորված է համահարթեցման սկզբունքով հատկացված դոտացիաների ավելացմամբ:

Պետական աջակցությունը սահմանամերձ համայնքներին կազմել է 657.3 մլն դրամ՝ ապահովելով նախատեսվածի 70.8%-ը: Նշված կատարողականը հիմնականում պայմանավորված է նախատեսվածից պակաս փաստացի պահանջով: Ծրագիրը նախատեսվել էր ՀՀ Արարատի, Գեղարքունիքի, Վայոց ձորի և Տավուշի մարզերի 33 սահմանամերձ համայնքների գույքահարկի և հողի հարկի փոխհատուցման, բնակիչների բնական գազի և էլեկտրաէներգիայի ծախսերի մասնակի փոխհատուցման և 21 սահմանամերձ համայնքներում ջրօգտագործողների

ընկերությունների սպասարկման տարածքում գտնվող ֆիզիկական և իրավաբանական անձանց կողմից օգտագործված ոռոգման ջրի դիմաց տվյալ տարում գանձվող վարձավճարների 50 տոկոսի փոխհատուցման համար: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերի 14.7%-ով աճը հիմնականում պայմանավորված է բնակչության կողմից սպառված էլեկտրաէներգիայի ծավալների աճով:

Էլեկտրաէներգիայի սակագնի բարձրացմամբ պայմանավորված՝ 2016 թվականին Երևան համայնքին տրամադրվել է 72.5 մլն դրամ սուբվենցիա, որն օգտագործվել է նախատեսված ծավալով:

Նախորդ տարվա համեմատ կառավարության տարբեր մակարդակների միջև իրականացվող ընդհանուր բնույթի տրանսֆերտներն աճել են 4.3%-ով կամ 2 մլրդ դրամով՝ հիմնականում պայմանավորված համայնքների բյուջեներին ֆինանսական համահարթեցման սկզբունքով տրամադրվող դոտացիաների և Ազգային Ժողովի ընդունած օրենքների կիրարկման արդյունքում համայնքների բյուջեների եկամուտների կորուստների փոխհատուցման աճով:

<u>Պաշտպանություն</u>

2016 թվականին պաշտպանության բնագավառում ՀՀ պետական բյուջեից կատարվել են 225.9 մլրդ դրամ ծախսեր՝ կազմելով ծրագրի 103.9%-ը: Շեղումը պայմանավորված է Ռուսաստանի Դաշնության կողմից տրամադրված պետական արտահանման վարկի հաշվին ռուսական արտադրության ռազմական նշանակության արտադրանքի մատակարարումների ծրագրի շրջանակներում կատարված ծախսերի գերազանցմամբ: Նախորդ տարվա համեմատ ոլորտի ծախսերն աճել են 13.8%-ով՝ հիմնականում պայմանավորված նշված ծրագրի շրջանակներում կատարված ծախսերով, որոնք նախորդ տարի չէին իրականացվել:

Հաշվետու տարում 218.1 մլրդ դրամ ուղղվել է *ռազմական պաշտպանության* ֆինանսավորմանը՝ կազմելով ծրագրի 104.3%-ը: Նշված գումարից 191.3 մլրդ դրամը հատկացվել է ռազմական կարիքների բավարարմանը, որը կազմել է ծրագրի 98.9%-ը: ՀՀ ռազմական կցորդների պահպանմանը տրամադրվել է 374 մլն դրամ՝ կազմելով ծրագրի 97.4%-ը: ՀԱՊԿ-ում ՀՀ զինված ուժերի ներկայացուցչի պահպանման ծախսերը կազմել են 45.9 մլն դրամ կամ ծրագրի 96.2%-ը: Ռազմական նշանակության համակարգերի պահպանմանը տրամադրվել է 1.8 մլրդ դրամ՝ կազմելով ծրագրի 96.4%-ը: Ռուսաստանի Դաշնության կողմից տրամադրված պետական արտահանման վարկի հաշվին ռուսական արտադրության ռազմական նշանակության արտադրանքի մատակարարումների ֆինանսավորումը կազմել է 24.5 մլրդ դրամ կամ ծրագրի 183.9%-ը: Հիմնականում նշված հանգամանքով պայմանավորված՝ 2015 թվականի համեմատ ռազմական պաշտպանության ծախսերն ավելացել են 14.1%-ով:

Հաշվետու տարվա ընթացքում *արտաքին ռազմական օգնությանը* տրամադրվել է 162.3 մլն դրամ կամ ծրագրված միջոցների 100%-ը: Այս դասում ներառված՝ ՆԱՏՕ-ում Հայաստանի Հանրապետության առաքելությունում պաշտպանության հարցերով պետական խորհրդականի պահպանման ծախսերը կազմել են 54.1 մլն դրամ: 45.5 մլն դրամ է տրամադրվել ՆԱՏՕ-ում (ռազմավարական հրամանատարությունների) ռազմական համագործակցության վարչությունում Հայաստանի Հանրապետության փոխգործակցության սպայի պահպանման նպատակով: ՆԱՏՕ-ում Հայաստանի Հանրապետության առաքելությունում Հայաստանի Հանրապետության ռազմական ներկայացուցչի պահպանման համար օգտագործվել է 53.1 մլն դրամ: Երևանում ՆԱՏՕ-ի հասարակական տեղեկատվական կենտրոնի տարածքի վարձակալության նպատակով բյուջեից հատկացումները կազմել են 9.6 մլն դրամ: Նախորդ տարվա համեմատ արտաքին ռազմական օգնության ծախսերն աճել են 2.5%-ով:

Պաշտպանության ոլորտում հետազոտական և նախագծային աշխատանքների դասում ներառված «Գիտական և գիտատեխնիկական գործունեության նպատակային-ծրագրային հետազոտություններ» ծրագրի շրջանակներում կատարվող հատուկ գիտահետազոտական և փորձակոնստրուկտորական աշխատանքների գծով պետական բյուջեի ծախսերը կազմել են 1.6 մլրդ դրամ՝ ապահովելով 98.9% կատարողական և նախորդ տարվա համեմատ ավելանալով 1.3%-ով:

Պաշտպանության՝ *այլ դասերին չպատկանող ծախսերը* կազմել են 6 մլրդ դրամ կամ ծրագրվածի 94.2%-ը, որից 63.7 մլն դրամը (ծրագրվածի 97.1%-ը) տրամադրվել է այլընտրանքային ծառայության ապահովմանը, 49 մլն դրամը (ծրագրվածի 97.2%-ը)՝ զորակոչիկներին վարորդական իրավունքի վկայականների տրամադրմանը և քննությունների ընդունմանը, 253.1 մլն դրամը (ծրագրվածի 95.8%-ը)՝ հումանիտար ականազերծման և փորձագիտական ծառայությունների կազմակերպմանը և 5.5 մլրդ դրամը (ծրագրվածի 100%-ը)՝ պաշտպանության բնագավառի այլ ծախսերին: Այլ ծախսերի գծով արտաբյուջետային միջոցների հաշվին օգտագործվել է 195.1 մլն դրամ՝ կազմելով ծրագրի 35.2%-ը: Նախորդ տարվա համեմատ տվյալ դասի ծախսերն աճել են 7.5%-ով, ինչը հիմնականում պայմանավորված է «Այլ ծախսեր» ծրագրի շրջանակներում կատարված ծախսերի 2.6 անգամ աճով:

<u>Հասարակական կարգ, անվտանգություն և դատական գործունեություն</u>

Հասարակական կարգի, անվտանգության և դատական գործունեության բնագավառներին 2016 թվականին ՀՀ պետական բյուջեից տրամադրվել է 120.3 մլրդ դրամ՝ ապահովելով ծրագրային հատկացումների 96.5%-ը: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը նվազել են 1.4%-ով կամ

1.7 մլրդ դրամով՝ հիմնականում պայմանավորված կալանավայրերի և ոստիկանության դասերի ծախսերի նվազմամբ:

Բաժնի ծախսերի 69.3%-ը կամ 83.4 մլրդ դրամ կազմել *են հասարակական կարգի և անվտանգության* խմբի ծախսերը, որոնց ծրագիրը կատարվել է 95.9%-ով: Նշված գումարից 62.3 մլրդ դրամը կազմել են ոստիկանության, 18.4 մլրդ դրամը՝ Ազգային անվտանգության դասի ծախսերը, որոնք կատարվել են համապատասխանաբար 97.7%-ով և 89.8%-ով: 2015 թվականի համեմատ *ոստիկանության* դասի ծախսերը նվազել են 1.7%-ով, ինչը հիմնականում պայմանավորված է ՀՀ կառավարությանն առընթեր ոստիկանության ճանապարհային ոստիկանության կողմից արձանագրված խախտումների համար վարչական տուգանքների գանձումներից, գրանցման-քննական ծառայությունների դիմաց վճարումների և այլ վճարովի ծառայությունների մատուցումից ստացված միջոցների հաշվին կատարվող ծախսերի կրճատմամբ:

2016 թվականին հասարակական կարգի պահպանության ապահովման նպատակով 38.8 մլրդ դրամ է տրամադրվել ՀՀ կառավարությանն առընթեր ոստիկանությանը՝ ապահովելով 99.6% կատարողական: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 1.1%-ով՝ հիմնականում պայմանավորված նյութերի ձեռքբերման և աշխատանքի վարձատրության ծախսերի աճով:

Պետավտոհամարանիշների ձեռքբերման համար պետական բյուջեից ՀՀ կառավարությանն առընթեր ոստիկանությանը տրամադրվել է 236.2 մլն դրամ՝ ապահովելով 100% կատարողական: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը չեն փոփոխվել:

ՀՀ պետական կառավարման մարմինների և կազմակերպությունների շենքերի ու շինությունների, ինչպես նաև կարևորագույն նշանակության օբյեկտների պահպանության ծախսերը կատարվել են 99.8%-ով՝ կազմելով շուրջ 3.5 մլրդ դրամ: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 24%-ով՝ պայմանավորված ՀՀ կառավարության որոշմամբ ՀՀ կառավարությանն առընթեր ոստիկանության կողմից պետական պահպանության ենթակա պետական մարմինների և կազմակերպությունների շենքերի ու շինությունների ցանկը համալրելու հանգամանքով:

2016 թվականին շուրջ 7.1 մլրդ դրամի ծախսեր են կատարվել ՀՀ կառավարությանն առընթեր ոստիկանության ստորաբաժանումների կողմից պայմանագրային հիմունքներով պահպանության և անվտանգության գծով իրականացվող ծառայությունների դիմաց ստացվող արտաբյուջետային միջոցների հաշվին, որոնք կազմել են նախատեսվածի 97.2%-ը և 6.3%-ով զիջել նախորդ տարվա ցուցանիշը՝ պայմանավորված ծառայությունների սակագների բարձրացման հետևանքով պայմանագրերի քանակի կրճատմամբ:

ՀՀ ՊՆ, ՀՀ ԿԱ ԱԱԾ կրտսեր, միջին, ավագ և ՀՀ ոստիկանության միջին, ավագ, գլխավոր սպայական անձնակազմին՝ կենցաղային տեխնիկայի ձեռքբերմանն աջակցելու նպատակով տրամադրվող սպառողական վարկերի տոկոսագումարների 2 կամ 3 տոկոսային կետով

համաֆինանսավորման ծախսերը կազմել են 13.5 մլն դրամ կամ նախատեսվածի 47.9%-ը՝ պայմանավորված շահառուների փաստացի քանակով: Սակայն նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 74.2%-ով՝ պայմանավորված շահառուների քանակի աճով:

Ճանապարհային ոստիկանության կողմից արձանագրված խախտումների համար վարչական տուգանքների գանձումներից, գրանցման-քննական ծառայությունների դիմաց վճարումների և այլ վճարովի ծառայությունների մատուցումից ստացված միջոցների հաշվին կատարված ծախսերը կազմել են 11.9 մլրդ դրամ կամ նախատեսվածի 93.2%-ը, որոնք նախորդ տարվա համեմատ նվազել են 11.1%-ով, պայմանավորված տվյալ մուտքերի նվազմամբ՝ կապված ինչպես միավոր արագաչափին և խաչմերուկին ընկնող խախտումների վերաբերյալ որոշումների քանակի, այնպես էլ դրանցով նշանակված տուգանքների գումարների և տուգանքների միջին տարեկան չափերի նվազման հետ:

Քաղաքացիներին բժշկական օգնության և սպասարկման վճարովի ծառայությունների մատուցման նպատակով տրամադրվել է 6 մլն դրամ կամ նախատեսվածի 74.7%-ը, որը պայմանավորված է եկամուտների՝ նախատեսվածից պակաս հավաքմամբ, ինչպես նաև գնումների գործընթացում առաջացած տնտեսումներով:

ՀՀ քաղաքացու անձնագիր տալու կամ փոխանակելու վճարովի ծառայության մատուցումից ստացվող միջոցներն օգտագործվել են 74.3%-ով՝ կազմելով 733.7 մլն դրամ: Արդյունքում նախորդ տարվա համեմատ ևս նշված ծախսերը նվազել են՝ 24.4%-ով, ինչը հիմնականում պայմանավորված է հաշվետու տարվա կեսից կատարված օրենսդրական փոփոխությամբ, որով ՀՀ քաղաքացիներին մինչև 2019 թվականը իրավունք տրվեց անձնագրավորվելու ինչպես կենսաչափական կողմնորոշիչներ պարունակող փաստաթղթերով (նույնականացման քարտ և կենսաչափական անձնագիր), այնպես էլ նախկին նմուշի անձնագրերով: Նախկին նմուշի անձնագրերի տրամադրման ժամկետը դիմելու 5-րդ աշխատանքային օրն է, իսկ կենսաչափական փաստաթղթերինը՝ 15-րդը: Քաղաքացիները օրենսդրական փոփոխությունից հետո հիմնականում սկսեցին դիմել նախկին նմուշի անձնագրեր ստանալու համար, ինչով պայմանավորված՝ էականորեն կրճատվեց կենսաչափական փաստաթղթերն արագացված ստանալու համար դիմողների թիվը:

2016 թվականի ընթացքում *Ազգային անվտանգության* բնագավառին ՀՀ պետական բյուջեից տրամադրվել է 18.4 մլրդ դրամ՝ ապահովելով ծրագրային հատկացումների 89.8%-ը: Շեղումը հիմնականում պայմանավորված է Ազգային անվտանգության ապահովման ծրագրի շրջանակներում կատարված ծախսերի կատարողականով: 2015 թվականի համեմատ Ազգային անվտանգության դասի ծախսերն աճել են 6.9%-ով կամ 1.2 մլրդ դրամով՝ հիմնականում պայմանավորված Ազգային անվտանգության ապահովման ծրագրի շրջանակներում կատարված ծախսերի աճով:

2016 թվականին 18 մլրդ դրամ տրամադրվել է Ազգային անվտանգության ապահովման ծրագրին, որը կատարվել է 89.8%-ով: 2015 թվականի համեմատ տվյալ ծախսերն աճել են 7.2%-ով՝

հիմնականում պայմանավորված պայմանագրային զինծառայողների հաստիքների կրճատմամբ և սպաների ու ենթասպաների հաստիքների ավելացմամբ:

ՀՀ Ազգային անվտանգության խորհրդի աշխատակազմի պահպանման նպատակով օգտագործվել է 358.6 մլն դրամ կամ նախատեսված միջոցների 99.9%-ը: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը նվազել են 15.1%-ով՝ պայմանավորված ՀՀ Ազգային անվտանգության խորհրդի լուծարմամբ:

ՀՀ կառավարական կապի անվտանգության ապահովման նպատակով իրականացվել են 57.8 մլն դրամի ծախսեր, որոնք ապահովել են ծրագրի 49.9% կատարողական և 2.5 անգամ գերազանցել նախորդ տարվա ցուցանիշը:

Պետական պահպանության ապահովման նպատակով օգտագործվել է 2.7 մլրդ դրամ կամ կատարողականը կազմել է 99.5%: Նախորդ տարվա համեմատ պետական պահպանության ապահովման ծախսերն աճել են 1%-ով:

Հայաստանի *փրկարար ծառայության* համակարգի պահպանման նպատակով հաշվետու տարում ծախսվել է շուրջ 7.5 մլրդ դրամ՝ ապահովելով ծրագրային հատկացումների 99.7%-ը: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 1.4%-ով: «Նախարարության «Ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկի պահպանում» ծրագրի շրջանակներում ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարությանը տրամադրվել է 55.6 մլն դրամ՝ ապահովելով 83.7% կատարողական, որը պայմանավորված է թափուր հաստիքների առկայությամբ: Տվյալ ծախսերը 3.9%-ով գերազանցել են նախորդ տարվա ցուցանիշը՝ հիմնականում պայմանավորված աշխատանքի վարձատրության ծախսերի աճով:

Հայաստանի փրկարար ծառայության համակարգի ստորաբաժանումների պահպանման ծախսերը կատարվել են 99.9%-ով՝ կազմելով 7.4 մլրդ դրամ և նախորդ տարվա համեմատ աճելով 1.4%-ով՝ հիմնականում պայմանավորված աշխատավարձերի բնականոն աճով:

Դատարանների դասի ծրագրերին ՀՀ 2016 թվականի պետական բյուջեից տրամադրվել է 10.4 մլրդ դրամ՝ 97.2%-ով ապահովելով ծրագրի կատարումը և 1.2%-ով զիջելով նախորդ տարվա ցուցանիշը:

Շուրջ 8.3 մլրդ դրամ տրամադրվել է ՀՀ դատարանների պահպանմանը՝ կազմելով նախատեսվածի 97.6%-ը: 566.8 մլն դրամ է տրամադրվել ՀՀ սահմանադրական դատարանի պահպանմանը՝ կազմելով նախատեսվածի 98.5%-ը: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը գրեթե փոփոխության չեն ենթարկվել:

Հաշվետու տարում ավելի քան 1.3 մլրդ դրամ են կազմել դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայության պահպանման ծախսերը, որոնք կատարվել են 95.1%-ով՝ հիմնականում պայմանավորված որոշ ապրանքների և ծառայությունների գնման պահանջի

վերացմամբ, ինչպես նաև ավելի ցածր գներով ապրանքների և ծառայությունների ձեռքբերմամբ: Այդ հանգամանքներով պայմանավորված՝ նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը նվազել են 4%-ով:

ՀՀ սահմանադրական դատարանի և ՀՀ դատարանների պահուստային ֆոնդերից օգտագործվել է համապատասխանաբար 11.3 մլն դրամ և 170.5 մլն դրամ՝ կազմելով նախատեսվածի 98%-ը և 99.7%-ը:

Տվյալ դասում ընդգրկված՝ վարչական օբյեկտների հիմնանորոգման ծրագրի շրջանակներում իրականացվել են 16.9 մլն դրամի ծախսեր՝ կազմելով նախատեսվածի 84.6%-ը, որը տնտեսումների արդյունք է: Միջոցները հատկացվել են ՀՀ դատական դեպարտամենտին, որոնք ուղղվել են Երևանի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ու Աջափնյակ և Դավթաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանների շենքերի վերանորոգման աշխատանքների կատարմանը:

ՀՀ դատարանների կարողությունների զարգացմանը տրամադրվել է 35.9 մլն դրամ, որը կատարվել է 99.8%-ով: Միջոցներն ուղղվել են 2016 թվականին ավելացած չորս դատավորների և նրանց աշխատակազմերի համար գույքի ձեռքբերմանը:

Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող Փաստաբանական դպրոցի՝ վերապատրաստման կարողությունների զարգացման դրամաշնորհային ծրագրի շրջանակներում իրականացվել են 45.9 մլն դրամի ծախսեր, որոնք կատարվել են 81.4%-ով: Շեղման հիմնական պատճառը ծրագրի իրականացման ընթացքում առաջացած խնայողություններն են: Ծրագրի շրջանակներում 36.9 մլն դրամը տրամադրվել է խորհրդատվական ծառայությունների, 9 մլն դրամը՝ սարքավորումների ձեռքբերմանը:

Հաշվետու տարում պետական բյուջեից 677.6 մլն դրամ է տրամադրվել *իրավական պաշտպանության* դասի ծրագրերին՝ կազմելով նախատեսվածի 98.4%-ը: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 20.8%-ով՝ հիմնականում պայմանավորված Հանրային պաշտպանի գրասենյակի պահպանման ծախսերի աճով:

ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի պահպանման ծախսերը 2016 թվականին կազմել են 238.2 մլն դրամ կամ նախատեսվածի 98.5%-ը: Տնտեսումները հիմնականում պայմանավորված են ծախսերի մի մասը միջազգային կազմակերպությունների ֆինանսավորման հաշվին կատարելու, մրցույթների արդյունքում ապրանքների ցածր գնով ձեռքբերման, ինչպես նաև միջոցները խնայողաբար օգտագործելու հանգամանքով: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը գրեթե չեն փոփոխվել:

Հանրային պաշտպանի գրասենյակի պահպանման ծախսերը կատարվել են նախատեսված ծավալով՝ կազմելով 377.3 մլն դրամ: Նախորդ տարվա համեմատ դրանք աճել են 29.7%-ով, որը

պայմանավորված է 5 հանրային պաշտպանների ավելացմամբ, ինչպես նաև 2015 թվականի նոյեմբերի 24-ի ՀՕ-145-Ն օրենքով «Պետական պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» օրենքում կատարված փոփոխություններով, որոնցով հանրային պաշտպանի աշխատավարձի հաշվարկման համար սահմանվել է նոր գործակից (2015 թվականի 5.5-ի փոխարեն սահմանվել է 6.5):

Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակի կարողությունների զարգացման նպատակով նախատեսված 14.2 դրամն օգտագործվել է 99.8%-ով, որով ձեռք են բերվել մեկ ծառայողական ավտոմեքենա, գրասենյակային գույք և սարքավորումներ:

Դատավարություններին ընդգրկված թարգմանիչների, փորձագետների և վկաների վարձատրության փոխհատուցման ծախսերը կազմել են 35.4 մլն դրամ կամ նախատեսվածի 99.9%-ը: 2015 թվականի համեմատ նշված ծախսերն աճել են 81.2%-ով՝ հիմնականում պայմանավորված այն հանգամանքով, որ 2015 թվականին նշված նպատակով 15 մլն դրամ հատկացվել էր ՀՀ դատարանների պահուստային ֆոնդից:

Անվճարունակության գործերով կառավարիչներին իրենց մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման ծախսերը կազմել են 7.8 մլն դրամ կամ նախատեսվածի 52%-ը և 15%-ով զիջել նախորդ տարվա ցուցանիշը՝ պայմանավորված ավարտված գործերի փաստացի քանակով. նախատեսված 500-ի և նախորդ տարվա փաստացի 306-ի դիմաց այն կազմել է 260:

Մարդու իրավունքների պաշտպանին Եվրոպայում անվտանգության և համագործակցության կազմակերպության կողմից հատկացվող ֆինանսական աջակցության հաշվին կատարված ծախսերը կազմել են 4.7 մլն դրամ կամ նախատեսվածի 100%-ը: Ծրագրի իրականացումն ուղղված է երկրում մարդու իրավունքների պաշտպանության աջակցմանն ու խթանմանը, Մարդու իրավունքների պաշտպանի դերի և գործառույթների մասին հանրային իրազեկվածության բարձրացմանը, երկրում մարդու իրավունքների զարգացմանը, ինչպես նաև Կանխարգելման ազգային մեխանիզմի գործունեությանն աջակցելուն՝ մշտադիտարկման, փակ հաստատություններում առողջության պահպանման վերաբերյալ արտահերթ զեկույցի պատրաստման և ներկայացման միջոցով:

2016 թվականին 3.7 մլրդ դրամ է տրամադրվել *դատախազության* դասի ծրագրերին՝ կազմելով նախատեսվածի 99.9%-ը: Հատկացված միջոցներից 3.6 մլրդ դրամը (նախատեսվածի 99.9%-ը) տրամադրվել է ՀՀ դատախազության պահպանմանը: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 12.1%-ով, որը հիմնականում պայմանավորված է աշխատանքի վարձատրության ծախսերի աճով: ՀՀ դատախազության պահուստային ֆոնդի հաշվին նախատեսված միջոցներն օգտագործվել են 99.8%-ով՝ կազմելով 78 մլն դրամ:

Հաշվետու տարում քրեակատարողական համակարգի պահպանության ծախսերը կազմել են 8.5 մլրդ դրամ կամ 97.8%: 2015 թվականի համեմատ դրանց 17.9%-ով նվազումը հիմնականում պայմանավորված է այն հանգամանքով, որ նախորդ տարի 2.0 մլրդ դրամ էր տրամադրվել նոր կառուցվող «Արմավիր» քրեակատարողական հիմնարկի կապիտալ շինարարության ավարտական աշխատանքներին:

«Էլեկտրոնային մոնիթորինգի սարքավորումների փորձարկում քրեակատարողական հիմնարկների պիլոտային ստորաբաժանումներում» դրամաշնորհային ծրագրի գծով նախատեսված միջոցներն օգտագործվել են 100%-ով՝ կազմելով 2.5 մլն դրամ: Ծրագրի նպատակն է՝ փորձարկել էլեկտրոնային մոնիտորինգի տեխնոլոգիաների կիրառումը իրավախախտների և դատավարության սպասող ամբաստանյալների կառավարման արդյունավետության բարձրացման համար: Միջոցներն ուղղվել են սարքավորումների և տոներային քարթրիջների ձեռքբերմանը:

2016 թվականին 6.1 մլրդ դրամ տրամադրվել է *նախաքննության* դասի ծրագրերին՝ կազմելով նախատեսվածի 96.8%-ը: Հատկացված միջոցների գերակշիռ մասը՝ 5.4 մլրդ դրամը (նախատեսվածի 96.6%-ը) տրամադրվել է ՀՀ քննչական կոմիտեի պահպանմանը: Կատարողականի ցուցանիշը պայմանավորված է տնտեսումներով, ինչով էլ բացատրվում է նախորդ տարվա համեմատ նշված ծախսերի 1.5%-ով նվազումը: ՀՀ քննչական կոմիտեի պահուստային ֆոնդի գծով նախատեսված միջոցներն օգտագործվել են 99.9%-ով՝ կազմելով 92.9 մլն դրամ:

2016 թվականին ՀՀ պետական բյուջեից ՀՀ հատուկ քննչական ծառայության պահպանմանը տրամադրվել է 617.3 մլն դրամ կամ նախատեսվածի 98.6%-ը՝ կապված տնտեսումների հետ: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 7.1%-ով՝ հիմնականում պայմանավորված 7 նոր հաստիքների ավելացմամբ: ՀՀ հատուկ քննչական ծառայության կարողությունների զարգացմանը տրամադրվել է 8.4 մլն դրամ կամ նախատեսվածի 94.8%-ը՝ պայմանավորված տնտեսումներով, իսկ ծառայության պահուստային ֆոնդի միջոցներն օգտագործվել են նախատեսված ողջ ծավալով՝ կազմելով 12.7 մլն դրամ:

<u>Տնտեսական հարաբերություններ</u>

ՀՀ 2016 թվականի պետական բյուջեի ծախսերի 9%-ը տրամադրվել է *տնտեսական հարաբերությունների* բաժնին՝ կազմելով շուրջ 131.1 մլրդ դրամ և 109.9%-ով ապահովելով ծրագրի կատարումը: Ծրագրի գերազանցումը պայմանավորված է գյուղատնտեսության, ոռոգման և ճանապարհային տրանսպորտի բնագավառների՝ արտաքին աջակցությամբ իրականացվող նպատակային ծրագրերի բարձր կատարողականով: Հատկացված ֆինանսական միջոցների հիմնական մասն ուղղվել է տրանսպորտի (49.6%), գյուղատնտեսության, անտառային

տնտեսության, ձկնորսության ու որսորդության (37%) և վառելիքի ու էներգետիկայի (10.7%) բնագավառների ծրագրերի իրականացմանը: 2015 թվականի համեմատ տնտեսական հարաբերությունների բաժնի ծախսերն աճել են 19.3%-ով, ինչը հիմնականում պայմանավորված է գյուղատնտեսության, ոռոգման, էլեկտրաէներգիայի և ճանապարհային տրանսպորտի բնագավառների ծախսերի աճով:

Հաշվետու տարում *ընդհանուր բնույթի տնտեսական և առևտրային հարաբերությունների* դասի ծախսերը կազմել են շուրջ 3.8 մլրդ դրամ՝ 95.2%-ով ապահովելով ծրագրային ցուցանիշի կատարումը և 6.3%-ով գերազանցելով նախորդ տարվա համապատասխան ցուցանիշը: Ծրագրի 95.2%-ով կատարումը հիմնականում պայմանավորված է ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության արտաբյուջետային միջոցների հաշվին գործադիր իշխանության, պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների պահպանման (նախարարությունների աշխատակազմերի մասով) ծախսերի, որակի ենթակառուցվածքների բարեփոխման, արտասահմանում առևտրային ներկայացուցչությունների և ՀՀ էկոնոմիկայի նախարարության Շուկայի վերահսկողության տեսչական մարմնի պահպանման ծախսերի համապատասխանաբար 88.8%, 83.5%, 81.2% և 75% կատարողականով: Դասում ընդգրկված են 16 ծրագրեր, որոնցից ստորև նշված վեց ծրագրերի գծով արձանագրվել է 100% կատարողական:

Հաշվետու տարում ստանդարտների մշակման ծառայությունների ծախսերը կազմել են 14.3 մլն դրամ: Նախորդ տարվա համեմատ այս ծախսերը չեն փոփոխվել: Ծրագրի շրջանակներում իրականացվել են ազգային ստանդարտների մշակման, ստանդարտացման միջազգային, եվրոպական և միջպետական կազմակերպությունների հետ համագործակցության և ստանդարտների ազգային ֆոնդի վարման ու տեղեկատվական սպասարկման աշխատանքներ:

Հիդրոօդերևութաբանության ծառայությունների ձեռք բերման ծախսերը կազմել են 886.4 մլն դրամ, որն օգտագործվել է «Հիդրոօդերևութաբանության և մթնոլորտային երևույթների վրա ակտիվ ներգործության ծառայություն» ՊՈԱԿ-ի կողմից հիդրոօդերևութաբանական դիտարկումների իրականացման նպատակով: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը նվազել են 3.1%-ով կամ 28.2 մլն դրամով՝ պայմանավորված հաստիքների կրճատմամբ: «Մթնոլորտային երևույթների վրա ակտիվ ներգործության ծառայություն» ՊՈԱԿ-ը վերակազմակերպման միջոցով միացել է «Հայաստանի հիդրոօդերևութաբանության և մոնիտորինգի պետական ծառայություն» ՊՈԱԿ-ին: Վերջինս վերանվանվել է «Հիդրոօդերևութաբանության և մթնոլորտային երևույթների վրա ակտիվ ներգործության ծառայություն» ՊՈԱԿ: Վերակազմակերպման արդյունքում տեղի է ունեցել հաստիքների կրճատում, որով էլ պայմանավորված է նախորդ տարվա համեմատ նշված ծախսերի 3.1%-ով կամ 28.2 մլն դրամով նվազումը: ՀՀ հավատարմագրման համակարգի բարեփոխման և

Հավաքագրման ազգային մարմնի ստեղծման ծրագրի շրջանակներում պետական աջակցության ծախսերը կազմել են 13.9 մլն դրամ: Նախորդ տարվա համեմատ այս ծախսերը չեն փոփոխվել: Ծրագրի շրջանակներում կատարվել են Հավատարմագրման ազգային մարմնի կայացմանը և ՀՀ հավատարմագրման համակարգի բարեփոխմանն ուղղված աշխատանքներ: 2016 թվականին ՀՀ արտահանմանն ուղղված արդյունաբերական քաղաքականության ռազմավարությամբ նախատեսված միջոցառումների իրականացման պետական աջակցության ծախսերը կազմել են 418.6 մլն դրամ: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը նվազել են 11.9%-ով կամ 56.4 մլն դրամով, ինչը պայմանավորված է նրանով, որ ՀՀ կառավարության 2016 թվականի հունիսի 23-ի N 646-Ն որոշման համաձայն իրականացվել է որոշ միջոցառումների կրճատում, և միջոցներն ուղղվել են Հայաստանի խաղողագործության և գինեգործության հիմնադրամին, որն, ըստ վերոնշյալ որոշման, ստեղծվել է Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից խաղողագործության և գինեգործության ոլորտներում վարվող պետական քաղաքականության ու զարգացման ծրագրերի իրականացման նպատակով: Ծրագիրն ուղղված է արդյունաբերական արտադրանքի արտահանելի հատվածի ընդլայնմանը և արտահանման ներուժ ունեցող կազմակերպությունների կարողությունների զարգացմանը: Ծրագրի շրջանակներում մի շարք արդյունաբերական ձեռնարկություններ ստացել են պետական աջակցություն տարբեր ուղղություններով, ինչը դրականորեն է ազդել նրանց արտահանման և արտադրության ծավալների աճի վրա, ինչպես նաև կազմակերպվել են մի շարք միջոցառումներ: Մասնավորապես՝

- գործարար համաժողովների, ինչպես նաև այլ համանման միջոցառումների մասնակցության և կազմակերպման ենթածրագրի շրջանակներում 2016 թվականին տարբեր երկրներում կազմակերպվել են մի շարք համաժողովներ և միջոցառումներ, Երևանում կազմակերպվել է Հայաստան-Իրան գործարար համաժողովը, որն ուղղված է հայ-իրանական առևտրատնտեսական կապերի ամրապնդմանը.
- «Արտադրական գործունեության վարկավորման սուբսիդավորում» ենթածրագրի շրջանակներում 2016 թվականին բավարարվել է մշակող արդյունաբերության ոլորտների 12 ընկերության հայտ.
- «Օտարերկրյա պետությունում սերտիֆիկացման և դեղերի գրանցման համաֆինանսավորում» ենթածրագրի շրջանակներում 2016 թվականին բավարարվել է թվով 8 ընկերության 12 հայտ.
- «Օտարերկրյա պետությունում հայկական արտադրանքի վերաբերյալ գովազդի և հասարակական կարծիքի ձևավորման միջոցառումների մասնակցություն (կազմակերպում) և իրականացում» ենթածրագրի շրջանակներում 2016 թվականին կազմակերպվել են միջազգային

ցուցահանդեսներ հայկական ապրանքների ճանաչելիության բարձրացման և առաջմղման նպատակով.

- «Միջազգային ցուցահանդեսներին մասնակցության ապահովում» ենթածրագրի շրջանակներում 2016 թվականին 17 ցուցահանդեսներում ապահովվել է 551 հայկական ըմկերությունների մասնակցություն.
- «Արտասահմանյան դիստրիբյուտորների և այլ օժանդակ կառույցների ներկայացուցիչների այցելություններ Հայաստան և (կամ) արտերկիր, գործարար կապերի հաստատում» ենթածրագրի շրջանակներում հայկական 6 ընկերությունների ներկայացուցիչներ 2016 թվականին մասնակցել են Հնդկաստանի Մումբայ քաղաքում խոշորագույն դեղագործական ցուցահանդեսին, կազմակերպվել է արտահանմանն օժանդակող կառույցների/դիստրիբյուտորների ներկայացուցիչների այցելություն Հայաստան.
- «Ուսումնական դասընթացների մշակման, կազմակերպման և իրականացման ֆինանսավորում» ենթածրագրի շրջանակներում կազմակերպվել են վերապատրաստման դասընթացներ:

«ՀՀ էկոնոմիկայի նախարարության ներքո գործող տեսչական բարեփոխումների քարտուղարության պետական աջակցության ծրագրի» ծախսերը 2016 թվականին կազմել են շուրջ 12.3 մլն դրամ, որը հատկացվել է տեսչական բարեփոխումների քարտուղարության աշխատակիցների վարձատրությանը: Ծրագրի շրջանակներում իրականացվել են աշխատանքներ տեսչական բարեփոխումների ուղղությամբ, մասնավորապես՝ լրացումներ և փոփոխություններ են կատարվել «Տեսչական մարմինների մասին» ՀՀ օրենքում, ընդունվել են գործող տեսչությունների ոլորտային ստուգաթերթեր, իրականացվել են տեսուչների վերապատրաստման ծրագրեր, աշխատանքներ են տարվել միասնական տեղեկատվական համակարգի մշակման ուղղությամբ, իրականացվել են քարտեզագրման աշխատանքներ գործող տեսչությունները լուծարելու և նոր տեսչական մարմիններ ստեղծելու նպատակով: Նախորդ տարվա համեմատ այս ծախսերն աճել են 23%-ով կամ 2.3 մլն դրամով, ինչը պայմանավորված է տեսչական բարեփոխումների խմբի աշխատակիցների աշխատավարձի փոփոխությամբ:

2016 թվականին Հայաստանում ներդրումային միջավայրի բարեփոխումների ծրագրի ծախսերը կազմել են 16.9 մլն դրամ: Ծրագիրը սկսել է գործել 2015 թվականից: Այն եռամյա ծրագիր է, որի ընդհանուր բյուջեն կազմում է 1500 հազար ԱՄՆ դոլար, որից ՄՖԿ (Միջազգային ֆինանսական կորպորացիա) ներդրումը՝ 1350 հազար ԱՄՆ դոլար, ՀՀ կառավարության ներդրումը՝ 150 հազար ԱՄՆ դոլար: ՀՀ կառավարության կողմից 10 տոկոսի չափով ծրագրի համաֆինանսավորումը ծրագրի իրականացման պարտադիր պահանջ է: Ծրագրի ավարտը նախատեսված է 2017 թվականին: Ծրագրի շրջանակներում մշակվել է «Օտարերկրյա ներդրումների

մասին» ՀՀ օրենքի նոր նախագիծ, կատարվել է ներդրումային խթանների միջազգային փորձի ուսումնասիրություն, տրամադրվել են առաջարկություններ ՀՀ-ում ներդրումային խթանների կիրառման մասով, որոնք գտնվում են քննարկման փուլում (որը կավարտվի 2017 թվականի հունիսի 30-ին), մշակվել է ներդրումային քաղաքականության ոլորտի աշխատանքների մշտադիտարկման և գնահատման չափորոշիչների շրջանակը, նախագծվել է ներդրումային քաղաքականության բարեփոխումների ազդեցության գնահատման համակարգ, իրականացվել է ՀՀ-ից ջերմոցային գյուղատնտեսական արտադրանքի արտահանման շղթայի հետազոտություն, որը գտնվում է տպագրության և հրապարակման նախապատրաստման փուլում (որը կավարտվի 2017 թվականի հունիսի 30-ին), մշակվել են Հայաստանում ձկնարդյունաբերության ոլորտին առնչվող մի քանի գործարար առաջարկների հաշվարկներ, ինչպես նաև ձկնարդյունաբերության և ջերմոցային տնտեսության վերաբերյալ հակիրճ տեղեկատվական նյութեր, իրականացվել է «Հայաստանի ներդրումային ուղեցույցը 2016/17» և «Հայաստանի ներդրումային ծրագրեր 2016» տեղեկագրերի (յուրաքանչյուրից 100 օրինակ), ինչպես նաև Հայաստանում ազատ տնտեսական գոտիների և ներդրումային միջավայրի վերաբերյալ շնորհանդեսների (յուրաքանչյուրից 50 օրինակ) տպագրություն, Հայաստանում տնտեսական դիվանագիտության զարգացմանն ուղղված ջանքերի շրջանակներում մշակվել է «Դիվանագիտական ներկայացուցչությունների դերը ներդրումների ներգրավման գործընթացում» անվանմամբ ուղեցույցը:

Հաշվետու տարում 99% կատարողական են ապահովել գործադիր իշխանության, պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների պահպանման ծախսերը՝ կազմելով շուրջ 313.5 մլն դրամ, որը հատկացվել է ՀՀ տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովին: Շեղումը պայմանավորված է տնտեսումներով: Նախորդ տարվա համեմատ այս ծախսերն աճել են 5.1%-ով կամ 15.2 մլն դրամով, ինչը հիմնականում պայմանավորված է աշխատավարձերի բնականոն աճով:

Գործադիր իշխանության, պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների պահպանման ծախսերը (նախարարությունների աշխատակազմերի մասով) կազմել են 756 մլն դրամ՝ ապահովելով ծրագրի 98.6%-ը: Շեղումը պայմանավորված է տնտեսումներով: Միջոցներն ուղղվել են ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության աշխատակազմի պահպանմանը: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը նվազել են 19.1%-ով կամ 178.8 մլն դրամով, ինչը պայմանավորված է նրանով, որ հանվել են պետական պաշտոններ զբաղեցնող անձանց համար «այլ վարձատրություններ» հոդվածով նախատեսված պարգևատրման գումարները:

Ընդհանուր բնույթի տնտեսական և առևտրային հարաբերությունների դասում գործադիր իշխանության, պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման

մարմինների պահպանման նպատակով 489.4 մլն դրամ օգտագործվել է ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության արտաբյուջետային միջոցներից՝ ապահովելով ծրագրի 88.8%-ը, ինչը պայմանավորված է նախատեսված որոշ ծախսեր չկատարելու կամ մասնակի կատարելու և որոշ մրցույթներ չկայանալու հանգամանքներով: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 23.4%-ով կամ 92.7 մլն դրամով՝ հիմնականում պայմանավորված հատկացված ընթացիկ դրամաշնորհների և աշխատանքի վարձատրության ծախսերի աճով:

2016 թվականին Հայաստանում փոքր և միջին ձեռնարկատիրության սուբյեկտներին պետական աջակցության շրջանակներում տրամադրվել է շուրջ 143.1 մլն դրամ՝ ապահովելով ծրագրի 93.8%-ը, ինչը պայմանավորված է նրանով, որ ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության և Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ հիմնադրամի միջև համապատասխան պայմանագիրը կնքվել է 2016 թվականի հունիսի 30-ին, ուստի և ժամանակի սղության պատճառով ծրագրով նախատեսված միջոցառումներն իրականացվել են մասնակիորեն: Վերոնշյալ հանգամանքով է պայմանավորված նաև նախորդ տարվա համեմատ այս ծախսերի 6.1%-ով կամ 9.2 մլն դրամով նվազումը: Պետական բյուջեից հատկացված միջոցներն ուղղվել են ծրագիրն իրականացնող հիմնական կառույցի՝ Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ի անձնակազմի և փորձագետների վարձատրությանը՝ լրացուցիչ ֆինանսական միջոցների ներգրավմամբ: Ծրագրի շրջանակներում բոլոր աշխատանքները (ծրագրային միջոցառումները) Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ի կողմից իրականացվել են առանց ՀՀ 2016 թվականի պետական բյուջեից համապատասխան ֆինանսական միջոցների հատկացման: Ծրագրով նախատեսված տեխնիկական բնույթի միջոցառումներն իրականացվել են Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ի եկամուտների, Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ի միավորված դրամագլխի միջոցների, «ՓՄՁ ներդրումներ» ՈՒՎԿ ՓԲԸ-ի գործունեության արդյունքում ստացված եկամուտներից Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ին տրամադրված շահաբաժնի, ինչպես նաև միջազգային ու օտարերկրյա դոնոր կազմակերպությունների միջոցների հաշվին: Հիշյալ ծրագրով նախատեսված ֆինանսական բնույթի միջոցառումները (ՓՄՁ սուբյեկտներին ֆինանսական և ներդրումային աջակցության ծրագրերը) վարկային երաշխավորությունների տրամադրման մասով իրականացվել են Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ի միավորված դրամագլխի ազատ միջոցների, ինչպես նաև ամորտիզացումների հաշվին, իսկ սեփական կապիտալի ֆինանսավորումը և ուղղակի վարկավորումը՝ «ՓՄՁ ներդրումներ» ունիվերսալ վարկային կազմակերպություն ՓԲԸ-ի միջոցների հաշվին:

2016 թվականին Հայաստանում փոքր և միջին ձեռնարկատիրության պետական աջակցության ծրագրի շրջանակներում ֆինանսական և տեխնիկական աջակցության ուղղություններով աջակցություն է ցուցաբերվել շուրջ 4300 գործող և սկսնակ ՓՄՁ սուբյեկտի՝ բավարարելով 8917

աջակցության հայտ, ընդ որում՝ աջակցություն ստացած ՓՄՁ սուբյեկտների 4%-ը գործում են Երևան քաղաքում, 96%-ը՝ ՀՀ մարզերում՝ առավելապես հեռավոր և սահմանամերձ համայնքներում:

Հաշվետու տարում ավելի քան 106.6 մլն դրամ է տրամադրվել արտասահմանում առևտրային ներկայացուցչությունների պահպանմանը: Ծրագրի ծախսերի 81.2% կատարողականը հիմնականում պայմանավորված է այն հանգամանքով, որ 2016 թվականի պետական բյուջեով միջոցներ էին նախատեսվել Չինաստանում առևտրային ներկայացուցչի պահպանման ծախսերի համար, սակայն 2016 թվականի ընթացքում առևտրային ներկայացուցիչ չի նշանակվել: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը նվազել են 1.9%-ով կամ 2 մլն դրամով՝ պայմանավորված արտարժույթի փոխարժեքի տատանմամբ: Ծրագրի շրջանակներում իրականացվել են Առևտրի Համաշխարհային Կազմակերպությունում ՀՀ մշտական ներկայացուցչի (նստավայրը՝ Շվեյցարիայի Համադաշնություն, Ժնև) և Եվրամիության երկրներում ՀՀ առևտրական ներկայացուցչի (նստավայրը՝ Բելգիայի Թագավորություն, Բրյուսել) պահպանման ծախսերը:

Որակի ենթակառուցվածքների բարեփոխման ծախսերը հաշվետու տարում կազմել են 126.8 մլն դրամ՝ ապահովելով 83.5% կատարողական, որը պայմանավորված է այն հանգամանքով, որ լաբորատոր սարքերի ձեռքբերման համար նախատեսված մրցույթը չի կայացել՝ ներկայացված բարձր գնային առաջարկների պատճառով: Վերոնշված հանգամանքով էլ պայմանավորված է նախորդ տարվա համեմատ նշված ծախսերի 10.6%-ով կամ 15.1 մլն դրամով նվազումը: Ծրագրի շրջանակներում կատարվել են մի շարք աշխատանքներ, որոնք ուղղված են եղել որակի ենթակառուցվածքների բարեփոխմանը, մասնավորապես.

- ստանդարտացման ոլորտում իրականացվել է Եվրասիական տնտեսական միության տարածքում գործող տեխնիկական կանոնակարգերի պահանջների կատարումն ապահովող ստանդարտների ցանկերի փոփոխությունների նախագծերի փորձաքննություն, որի արդյունքում առաջարկություն է ներկայացվել ցանկերում ներառել թվով 32 միջպետական ստանդարտներ: Փորձաքննության են ենթարկվել տեխնիկական կանոնակարգերի պահանջների կատարումն ապահովող ստանդարտների ցանկերի վերաբերյալ ԵՏՄ անդամ պետությունների առաջարկությունները, որի արդյունքում առաջարկվել է ընդգրկել ցանկերում շուրջ 25 միջպետական արդիականացված ստանդարտներ: ԵՏՄ-ի տեխնիկական կանոնակարգերի պահանջների կատարումն ապահովելու համար ՀՀ-ում գործարկվել են թվով 527 միջպետական և ՌԴ ստանդարտներ: Հաշվետու ժամանակահատվածում կատարվել է ԵՏՄ տեխնիկական կանոնակարգերի արդիականացված ցանկերի փորձաքննություն, որի արդյունքում սահմանված կարգով ՀՀ-ում գործողության մեջ են դրվել շուրջ 494 արդիականացված միջազգային և միջպետական ստանդարտներ, որոնք ներառվելու են տեխնիկական կանոնակարգերի ցանկերում:

Կատարվել է նաև ԵՏՄ տեխնիկական կանոնակարգերում ընդգրկման համար առաջարկվող ՀՀ ազգային ստանդարտների թարգմանություն ռուսերեն, ինչպես նաև ապահովվել է մասնակցություն ԵԱՏՄ տեխնիկական կանոնակարգման և ստանդարտացման բնագավառի կոմիտեների և ենթակոմիտեների նիստերին.

- չափագիտության ոլորտում իրականացվել են էտալոնային համակարգերի տեխնիկական սպասարկման, ելակետային չափման միջոցների տրամաչափարկման աշխատանքներ, վճարումներ են կատարվել KOOMET-ի (кооперация в метрологии) անդամ երկրների չափագիտական ինստիտուտներում թվով 8 տրամաչափարկման աշխատանքների դիմաց, ձեռք են բերվել սարքավորումներ և էտալոնային համակարգեր.
- հավատարմագրման ոլորտում իրականացվել են «Հավատարմագրման ազգային մարմին» ՊՈԱԿ-ի կայք-էջի և ռեեստրների (հավատարմագրված համապատասխանության գնահատման մարմինների, գնահատողների, փորձագետների, համապատասխանության սերտիֆիկատների և համապատասխանության հայտարարագրերի) սպասարկման և արդիականացման աշխատանքներ: Ռեեստրում ներառվել են 483 համապատասխանության հայտարարագիր և 127 համապատասխանության սերտիֆիկատ: Համապատասխանության գնահատման մարմինների ռեեստրում ներառվել են 4 փորձարկման լաբորատորիա և 1 տեխնիկական հսկողություն իրականացնող մարմին: 2016 թվականի նոյեմբերի 24-ին Շվեդիայում կայացած գագաթնաժողովում միաձայն ընդունվեց ՀՀ «Հավատարմագրման ազգային մարմին» ՊՈԱԿ-ը (ARMNAB) Հավատարմագրման Եվրոպական համագործակցության (EA) ասոցացված անդամ դառնալու վերաբերյալ որոշում և ստորագրվեց անդամակցության համաձայնագիր:

Որակի ենթակառուցվածքների բարեփոխման ծրագրի շրջանակներում ոլորտում աշխատող մասնագետների համար մասնագիտական կարողությունների զարգացման և միջազգային փորձի ուսումնասիրության նպատակով ապահովվել է արտերկրում վերապատրաստման դասընթացների և ուսուցողական այցերի մասնակցություն:

Տնտեսական հետազոտությունների կենտրոնի ստեղծման ծախսերը կազմել են 27.1 մլն դրամ՝ ապահովելով ծրագրի 98.9%-ը: Ծրագրի շրջանակներում ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության տնտեսական հետազոտությունների կենտրոնի կողմից իրականացվել են հետազոտական և վերլուծական աշխատանքներ: Կատարվել են նաև վիճակագրական տվյալների բազայի կատարելագործման և պարբերական թարմացման աշխատանքներ: Կատարվել են հետևյալ հետազոտական աշխատանքները՝ «ՀՀ արտահանում, արդի վիճակ, զարգացման հեռանկարներ» տնտեսական զեկույց, «Դիվերսիֆիկացված տնտեսության կառուցվածքի գնահատում», «2016 թվականի ՀՀ ՀՆԱ հավելաճի կանխատեսում», «Մենաշնորհով պայմանավորված «մեռյալ բեռի» գնահատում»:

ՀՀ կառավարության 2016 թվականի ծրագրում արտահանման խթանումը դիտարկվել է իբրև ընդհանուր տնտեսական զարգացման և կայուն տնտեսական աճի ապահովման նախադրյալ, ինչպես նաև ընդգծվել է արտահանմանն ուղղված արդյունաբերական քաղաքականության վերանայման և արդիականացման անհրաժեշտությունը: ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության տնտեսական հետազոտությունների կենտրոնը ձեռնամուխ է եղել Հայաստանի արտահանման խորքային հետազոտության իրականացմանը, որի հիմնական արդյունքները ներկայացված են «ՀՀ արտահանում, արդի վիճակ, զարգացման հեռանկարներ» զեկույցում: Զեկույցի շրջանակներում բացահայտվում են արտահանման հեռանկարային աճը զսպող որոշ խոչընդոտներ և զարգացման հնարավոր ուղիներ, ինչպես նաև հնարավորություն է ստեղծվում բարձրացնել տնտեսական քաղաքականության, հատկապես արտահանմանն ուղղված արդյունաբերական քաղաքականության արդյունավետությունը: Բացի այդ զեկույցին տալով պարբերական բնույթ՝ կենտրոնը նպատակ ունի իրականացնել արտահանման կառուցվածքում որակական տեղաշարժերի բացահայտմանն ուղղված մշտադիտարկում:

Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 6.4%-ով կամ 1.6 մլն դրամով, որը հիմնականում պայմանավորված է թափուր հաստիքների համալրմամբ:

2016 թվականին «Հայաստանի զարգացման հիմնադրամի» կանոնադրական հիմնախնդիրների իրականացմանը պետական աջակցության ծախսերը կազմել են ավելի քան 394.9 մլն դրամ՝ ապահովելով ծրագրի 97%-ը, որը պայմանավորված է տնտեսումներով: Ծրագիրը սկսել է իրականացվել 2016 թվականից: Միջոցներն ուղղվել են Հայաստանի զարգացման հիմնադրամի պահպանմանը:

«ՀՀ էկոնոմիկայի նախարարության Շուկայի վերահսկողության տեսչական մարմնի աջակցության ծախսերը» կազմել են շուրջ 70.6 մլն դրամ՝ ապահովելով ծրագրի 75%-ը, ինչը պայմանավորված է տնտեսումներով: Ծրագիրը սկսել է իրականացվել 2016 թվականից: Միջոցներն ուղղվել են շուկայի վերահսկողության տեսչական մարմնի պահպանմանը:

Գործադիր իշխանության, պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների կարողությունների զարգացման ծրագրի շրջանակներում 660 հազար դրամ է տրամադրվել ՀՀ տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովին՝ ապահովելով ծրագրի 66%-ը: Ծրագրի շրջանակներում ձեռք են բերվել հակահրդեհային սարքավորումներ: Շեղումը պայմանավորված է նրանով, որ համապատասխան սարքավորումների մի մասը ձեռք չի բերվել՝ դրանք չլինելու պատճառով: Ծրագիրը սկսել է իրականացվել 2016 թվականից:

Տեխնիկական կանոնակարգի պահանջների և չափագիտական կանոնների ու նորմերի պահպանման վերահսկողության պետական ծրագրի գծով նախատեսված 18 մլն դրամի միջոցները

չեն օգտագործվել՝ պայմանավորված նրանով, որ ծրագիրն իրականացնող Շուկայի վերահսկողության տեսչական մարմինը դեռևս գտնվում է ձևավորման փուլում:

2016 թվականի ընթացքում *գյուղատնտեսության, անտառային տնտեսության, ձկնաբուծության և որսորդության* բնագավառներում ՀՀ պետական բյուջեի ծախսերը կազմել են 48.5 մլրդ դրամ կամ ծրագրվածի 141.1%-ը: Ծրագրի գերազանցումը պայմանավորված է գյուղատնտեսության և ոռոգման բնագավառներում արտաքին աջակցությամբ իրականացվող որոշ վարկային ծրագրերի բարձր կատարողականով:

2016 թվականին շուրջ 27.1 մլրդ դրամ է տրամադրվել *գյուղատնտեսության* դասին՝ կազմելով ծրագրված ցուցանիշի 160.4%-ը, որը, ինչպես նշվեց, պայմանավորված է արտաքին աջակցությամբ իրականացվող որոշ վարկային ծրագրերի կատարողականով: Հիմնականում նշված հանգամանքով է պայմանավորված նաև նախորդ տարվա համեմատ գյուղատնտեսության դասի ծախսերի 34%-ով կամ շուրջ 6.9 մլրդ դրամով աճը:

Գյուղատնտեսության ոլորտին կատարված հատկացումների հաշվին իրականացվել են 26 ծրագրեր, այդ թվում՝ արտաքին աջակցությամբ ֆինանսավորվել են 6 վարկային և 2 դրամաշնորհային ծրագրեր:

ՕՊԵԿ զարգացման միջազգային հիմնադրամի աջակցությամբ իրականացվող «Ենթակառուցվածքների և գյուղական ֆինանսավորման աջակցություն» վարկային ծրագրի շրջանակներում նախատեսված 3 մլրդ դրամի դիմաց օգտագործվել են շուրջ 10.4 մլրդ դրամի միջոցներ: Նախատեսված ցուցանիշի 3.4 անգամ գերազանցումը պայմանավորված է լրացուցիչ նախագծանախահաշվային և շինարարական աշխատանքների իրականացմամբ: Նշված ծրագրով 2016 թվականի սկզբում աշխատանքների իրականացումը սկսվեց արագ տեմպերով: Ծրագրի նպատակն է բարելավել ջրամատակարարման և ոռոգման համակարգերը հանրապետության 7 մարզերի՝ Շիրակի, Լոռու, Տավուշի, Գեղարքունիքի, Վայոց Ձորի, Սյունիքի և Արագածոտնի գյուղական համայնքներում՝ առաջնահերթություն տալով աղքատության ամենաբարձր ցուցանիշ ունեցող տարածքներին: Ջրամատակարարման և ոռոգման համակարգերն ընտրվում են մանրամասն տեխնիկատնտեսական ուսումնասիրությունների հիման վրա, հաստատվում են միայն ներդրումային այն առաջարկները, որոնք ունեն հստակ տնտեսական արդյունավետություն, իսկ ջրամատակարարման դեպքում՝ ուղղված են խոցելի համայնքներին, որոնց ջրամատակարարումը չի գերազանցում 6 ժամը: Ջրամատակարարման ծրագրերի ընտրության ժամանակ դիտարկվում են նաև անասնապահության զարգացման հնարավորությունները և տնամերձ հողատարածքների արտադրողականության բարձրացումը: Ոռոգման ծրագրերի ընտրության հիմքում ընկած են մանրամասն տեխնիկատնտեսական հիմնավորումները, որոնք դիտարկում են ենթակառուցվածքների զարգացման տեխնիկական լուծումները և առաջարկվող ներդրումների

հետգնելիությունը և տնտեսական արդյունավետությունը: Ծրագրի շրջանակներում մեկնարկել են շինարարական աշխատանքները 37 օբյեկտներում, այդ թվում՝ ջրամատակարարման գծով՝ 29 օբյեկտներում և ոռոգման ցանցերի վերակառուցման գծով՝ 8 օբյեկտներում: Բաղադրիչի իրականացման արդյունքում օգուտ կքաղեն շուրջ 75141 գյուղաբնակներ: Ենթակառուցվածքների և գյուղական ֆինանսավորման աջակցության ծրագրի շրջանակներում հայտարարվել են մրցույթներ՝ նախագծային և հեղինակային, շինարարական աշխատանքների և շինարարական աշխատանքների տեխնիկական հսկողության իրականացման համար: 2016-2017թթ. գյուղական տարածքների ջրամատակարարման ենթակառուցվածքների շրջանակներում նախատեսված է 31 ենթակառուցվածքների վերակառուցում (որոնցից 25-ը՝ ջրամատակարարման համակարգեր և 6-ը՝ ներտնտեսային ոռոգման համակարգեր): Աշխատանքները նախատեսված է ավարտել 2017 թվականին:

ՕՊԵԿ զարգացման միջազգային հիմնադրամի աջակցությամբ իրականացվող «Գյուղական կարողությունների ստեղծում» վարկային ծրագրի շրջանակներում օգտագործվել են ավելի քան 1.1 մլրդ դրամի միջոցներ՝ ապահովելով 99.9% կատարողական: Ծրագրով նախատեսվում է գյուղական ենթակառուցվածքների ոլորտում ներդրումների իրականացում՝ գյուղական անապահով համայնքների բնակիչների կենսամակարդակը բարելավելու և տնտեսական աճ ապահովելու նպատակով: Սա ենթադրում է օժանդակություն հասարակական ենթակառուցվածքների կառուցմանն ու վերականգնմանը, առավելապես լեռնային՝ առավել անապահով համայնքներում: Ծրագրերը ներառում են ջրամատակարարման, գազամատակարարման և ջրահեռացման համակարգեր, ինչպես նաև գյուղական ճանապարհներ և օժանդակ կառույցներ: Ծրագրի շրջանակներում ներդրումներ են իրականացվել ՀՀ Լոռու, Վայոց Ձորի, Տավուշի, Շիրակի, Գեղարքունիքի, Սյունիքի և Արագածոտնի մարզերում ջրամատակարարման համակարգերի կառուցման և վերակառուցման, ինչպես նաև հիմնական և երկրորդային կարգի ոռոգման համակարգերի վերականգման և բարելավման համար: Քանի որ 2016 թվականը ծրագրի իրականացման վերջին տարին էր, նախատեսված աշխատանքներն ամբողջությամբ ավարտվել են 2016 թվականին: 2016 թվականին ծրագրի շրջանակներում աշխատանքներ են իրականացվել և ավարտվել թվով 31 համայնքներում, որից 10-ում իրականացվել է ջրամատակարարման համակարգերի վերակառուցում, 21-ում՝ գազաֆիկացում: Ծրագիրն ավարտվել է 2016 թվականին:

Հաշվետու տարում Գյուղատնտեսության զարգացման միջազգային հիմնադրամի (ԳԶՄՀ) աջակցությամբ իրականացվող՝ «Գյուղական կարողությունների ստեղծում» վարկային ծրագրի շրջանակներում օգտագործվել են շուրջ 2.9 մլրդ դրամի միջոցներ: Նախատեսված ցուցանիշի 83%-ով գերազանցումը հիմնականում պայմանավորված է նրանով, որ 2016 թվականը ծրագրի իրականացման վերջին տարին էր, ուստի նախատեսված աշխատանքներն ամբողջությամբ

ավարտվել են 2016 թվականին: Ծրագրի շրջանակներում աշխատանքներ են իրականացվել և ավարտվել թվով 25 համայնքներում, որից 14–ում՝ ջրամատակարարման համակարգերի վերակառուցում, 11-ում՝ ոռոգման համակարգերի վերակառուցում: Ծրագիրը գործել է Հայաստանի Հանրապետության ամբողջ տարածքում, ներդրումների աշխարհագրական տեղաբաշխման առումով առավելություն է տրվել լեռնային և գյուղական համայնքներին: Միաժամանակ հարկ է նշել, որ 2015 թվականի հոկտեմբեր ամսին տեղի ունեցավ ֆինանսավորման համաձայնագրի փոփոխություն, և ծրագրի նպատակներից մեկը դարձավ գյուղական համայնքներում ջրամատակարարման և ոռոգման համակարգերի վերակառուցումը:

Վերոհիշյալ վարկային ծրագրին աջակցելու նպատակով ԳՁՄՀ-ի աջակցությամբ իրականացվող դրամաշնորհային ծրագրի շրջանակներում օգտագործվել է շուրջ 104.4 մլն դրամ՝ ապահովելով 101.1% կատարողական: Ծրագրի նպատակն է բարելավել Հայաստանի Հանրապետության գյուղական աղքատ բնակչության սոցիալ-տնտեսական վիճակը: Ծրագրի խնդիրն է «Հայկական Միրգ» ԲԸ հիմնադրման նպատակով միջազգային խորհրդատվական ծառայությունների ձեռք բերում, փոքրածավալ և միջին կազմակերպություններին կառավարման տարբեր տիպի աջակցություն, առևտրային գործակալներին և գյուղական այլ հարակից մասնակիցներին օժանդակելու համար: 2015 թվական հոկտեմբերին տեղի է ունեցել Գյուղատնտեսության զարգացման միջազգային հիմնադրամի հետ կնքված դրամաշնորհի համաձայնագրի փոփոխություն, համաձայն որի միջոցների մնացորդը վերաբաշխվել է ենթակառուցվածքների բաղադրիչին, որը 2016 թվականին օգտագործվել է շինարարական աշխատանքների իրականացման նպատակով: Ծրագրի շրջանակներում իրականացվել են արևային էներգիայով ջրատաքացման համակարգերի տեղադրում և հասարակական օբյեկտների ջրահեռացում թվով 6 համայնքներում, ինչպես նաև կազմակերպվել են դասընթացներ ջրի օգտագործման, հիգիենայի և ջրամատակարարման համակարգերի շահագործման վերաբերյալ: Ծրագիրն ավարտվել է 2016 թվականին:

Գյուղատնտեսության զարգացման միջազգային հիմնադրամի աջակցությամբ իրականացվող «Ենթակառուցվածքների և գյուղական ֆինանսավորման աջակցություն» վարկային ծրագրի շրջանակներում նախատեսված միջոցներն օգտագործվել են 33.9%-ով՝ կազմելով շուրջ 68.7 մլն դրամ: Շեղումը պայմանավորված է նրանով, որ կատարվել է ծրագրի բաղադրիչներից մեկի՝ «Ֆերմերների իրազեկում և աջակցություն» բաղադրիչի փոփոխություն, և ծրագրի իրականացումը հետաձգվել է 2017 թվական: Միջոցներն ուղղվել են գործառնական ծախսերի կատարմանը: Ծրագրի հիմնական նպատակն է բարելավել բնակչության տնտեսական և սոցիալական կարգավիճակը ծրագրի իրականացման տարածքում՝ ստեղծելով եկամտի աճի և զբաղվածության կայուն հնարավորություններ: Շեշտը դրված է սոցիալական և արտադրական ենթակառուցվածքների,

մասնավորապես՝ ջրամատակարարման և ոռոգման համակարգերի բարելավման, վերաֆինանսավորման և ներդրումային գործիքների տրամադրման վրա: Ծրագրի շրջանակներում ֆերմերներին կտրամադրվի ուսուցում, գործարար և ֆինանսական պլանավորման, գյուղատնտեսական առաջավոր փորձի և տեխնոլոգիաների ներդրման նպատակով: Ծրագիրը ԳՖԿ-ի (գյուղական ֆինանսավորման կառույց) միջոցով մասնակից ֆինանսական հաստատություններին կտրամադրի ֆինանսական միջոցներ, որոնք վարկերի տեսքով կուղղվեն փոքր տնտեսություն վարողներին, ինչպես նաև փոքր և միջին ձեռնարկություններին՝ իրենց գործունեության բարելավման և եկամուտների ավելացման նպատակով: Ծրագրի շրջանակներում Հայաստանում գյուղական տարածքների տնտեսական զարգացման հիմնադրամի միջոցով՝ ներդրումների և փոխառությունների, ինչպես նաև տարբեր տեսակի կառավարման և տեխնիկական աջակցության տեսքով աջակցություն կտրամադրվի աղքատ գյուղական արտադրողների հետ ամուր կապեր ունեցող գյուղատնտեսական արժեշղթայի շրջանակներում գործող փոքր և միջին մասնավոր ընկերություններին:

Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող համայնքների գյուղատնտեսական ռեսուրսների կառավարման և մրցունակության վարկային ծրագրի շրջանակներում օգտագործվել է ավելի քան 857.5 մլն դրամ՝ 32.3%-ով գերազանցելով նախատեսված ցուցանիշը, ինչը պայմանավորված է լրացուցիչ աշխատանքների իրականացմամբ՝ կապված 2016 թվականին ծրագրի ավարտի հետ: Քանի որ վարկային միջոցների գծով առաջացել էին տնտեսումներ, Համաշխարհային Բանկի հետ համաձայնություն է ձեռք բերվել տնտեսված գումարներով ծրագրում ներգրավել լրացուցիչ համայնքներ, որոնց համար իրականացվել են արոտավայրերի ջրարբիացման համակարգերի վերականգնման աշխատանքներ, ձեռք է բերվել գյուղատնտեսական տեխնիկա: Ծրագրի հիմնական նպատակն է աջակցել անասնապահական ուղղվածություն ունեցող համայնքներին արոտօգտագործման/անասնապահական առավել մրցունակ և կայուն համակարգերի ստեղծման հարցում: Սա հնարավոր կլինի կաթնատվության և կենդանիների օրական քաշի ավելացմանը զուգահեռ անասնապահական մթերքի ծավալների մեծացման և որակի բարձրացման, արոտավայրերի վարձակալությունից համայնքի բյուջետային եկամուտների ավելացման միջոցով համայնքների արոտավայրերի կառավարման արդյունավետության բարձրացման և անասնապահությունից ստացվող զուտ եկամտի ավելացման միջոցով: Ծրագիրն իրականացվել է չորս բաղադրիչներով՝

- Համայնքների արոտավայրերի/անասնապահության կառավարման համակարգ,
- Գյուղատնտեսությանն աջակցող ծառայությունների հզորացում,
- Մրցակցային դրամաշնորհների ծրագիր,

- Ծրագրի իրականացում, մոնիտորինգ և գնահատում:

«Համայնքների արոտավայրերի/անասնապահության կառավարման համակարգ» բաղադրիչի շրջանակներում 2016 թվականին կառուցվել են 11.1 կմ ջրագծով ջրարբիացման համակարգեր, 5 հատ խմոց, 12 համայնքի արոտօգտագործողների միավորում սպառողական կոոպերատիվներին տրամադրվել են 28 միավոր գյուղտեխնիկա, այդ թվում՝ 4 անիվավոր տրակտոր, և 24 միավոր գյուղգործիքներ:

«Գյուղատնտեսությանն աջակցող ծառայությունների հզորացում» բաղադրիչն իրականացվել է «Գյուղատնտեսական խորհրդատվական ծառայություններ» և «Համայնքներում կենդանիների առողջությանն ուղղված ծառայություններ» ենթաբաղադրիչների միջոցով: «Գյուղատնտեսական խորհրդատվական ծառայություններ» ենթաբաղադրիչի շրջանակներում ՀՀ 10 մարզերի գյուղատնտեսության աջակցության մարզային կենտրոնների (ԳԱՄԿ)՝ գյուղատնտեսության գծով տեղական խորհրդատուների մասնագիտական գիտելիքների կատարելագործման նպատակով Գյուղատնտեսության աջակցության հանրապետական կենտրոնի (ԳԱՀԿ) կողմից 2016 թվականին կազմակերպվել են ուսուցողական դասընթացներ, որոնց մասնակցել է 233 մարդ: «Համայնքներում կենդանիների առողջությանն ուղղված ծառայություններ» ենթաբաղադրիչի շրջանակներում 2016 թվականին ՀՀ Տավուշի և Շիրակի մարզերում կառուցվել են անասնաբուժական սպասարկման կենտրոններ, որոնք համալրվել են անհրաժեշտ գույքով և հատուկ ավտոմեքենաներով, իրականացվել է անասնաբուժական սպասարկման կենտրոնների գործունեության գնահատում, ձեռք է բերվել ամենագնաց ավտոմեքենա ՀՀ ԳՆ «Անասնաբուժասանիտարիայի և բուսասանիտարիայի ծառայությունների կենտրոն» ՊՈԱԿ-ի կարիքների համար: ՀՀ Արագածոտնի, Սյունիքի և Գեղարքունիքի մարզերի կենտրոնների հետազոտության արդյունքները վկայում են, որ 2016 թվականի առաջին կիսամյակի ընթացքում կենտրոնները սպասարկել են 71 համայնքից 6900 մարդ, այցելուների 73%-ը դիմել է անասնաբուժական խորհրդատվության, 43%-ը՝ անասնաբուժական ծառայությունների, իսկ 25%-ը՝ արհեստական սերմնավորման համար:

«Մրցակցային դրամաշնորհների ծրագիր» բաղադրիչի շրջանակներում ՝ իրականացվել են ֆերմերների կողմից ներկայացված 16 ծրագրերի վերաբերյալ ներդրումների հավաստագրում, նրանց գնահատում, ծրագրերի բնապահպանական կատեգորիաների դասակարգում և բնապահպանական կառավարման պլանների կազմում: Հաղթող ճանաչված 16 ծրագրերի ղեկավարների հետ կնքվել են համապատասխան պայմանագրեր: 2016 թվականի սեպտեմբեր ամսին ավարտվել են վեցերորդ և յոթերորդ փուլերի արդյունքում հաղթող ճանաչված բոլոր 32 ծրագրերը, որոնք սեպեմբեր-հոկտեմբեր ամիսներին գնահատվել են անկախ գնահատողի կողմից: Ավարտված ծրագրերի իրականացման շնորհիվ մեկ ծրագրի հաշվով միջինը ստեղծվել են 6-7 աշխատատեղեր, գործող ֆերմերների և ֆերմերային տնտեսությունների եկամուտներն ավելացել են

25-55 տոկոսով: 2016 թվականի սեպտեմբեր ամսին Երևանում տեղի է ունեցել «Դրամաշնորհային ծրագրերի իրականացումը Հայաստանում» համաժողով-ցուցահանդեսը, որի աշխատանքներին մասնակցել են մոտ 70-80 ֆերմերներ և գյուղացիական տնտեսություններ, որոնք ներկայացրել են իրենց կողմից արտադրված գյուղատնտեսական մթերքը:

«Ծրագրի իրականացում, մոնիտորինգ և գնահատում» բաղադրիչի շրջանակներում իրականացվել են ծրագրերի իրականացման գրասենյակի պահպանման, ինչպես նաև տեխնիկական աջակցության, վերապատրաստման և գործուղումների ծախսերը, կատարվել են վճարումներ ծրագրի տարեկան ֆինանսական աուդիտի և հանրային իրազեկման աշխատանքների համար:

Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող Համայնքների գյուղատնտեսական ռեսուրսների կառավարման և մրցունակության երկրորդ վարկային ծրագրի շրջանակներում օգտագործվել է ավելի քան 3.9 մլրդ դրամ՝ 83%-ով գերազանցելով նախատեսված ցուցանիշը, ինչը պայմանավորված է լրացուցիչ աշխատանքների իրականացմամբ, մասնավորապես՝ ջրարբիացման համակարգերի կառուցման համար ներգրավվել են նոր համայնքներ: Ծրագրի իրականացման ժամկետը հինգ տարի է: Ծրագիրը սկսել է գործել 2015 թվականին, ավարտման ժամկետն է 2020 թվականի մայիսի 31-ը: Ծրագրի նպատակներն են արոտավայրերի և անասնապահության համակարգերի արտադրողականության և կայունության բարելավումը թիրախային համայնքներում, ինչպես նաև անասնապահության ոլորտում և ընտրված բարձրարժեք ագրոպարենային արժեշղթաներում արտադրվող և շուկայահանվող արտադրանքի ծավալների աճը: Նշված նպատակների իրագործմանն են ուղղված հետևյալ միջոցառումները՝ բարձրադիր տարածքների թիրախային համայնքներում արոտավայրերի և անասնապահական համակարգերի արտադրողականության և կայունության բարելավմանն ուղղված կառավարման պլանների մշակումը և ներդրումը՝ հիմնական շեշտադրումը կատարելով ընտրված անասնապահական արտադրանքի (կաթ և միս) և բարձրարժեք արտադրանքի (միրգ և բանջարեղեն) վրա, շուկայի հետ արտադրողների և վերամշակողների կապի ապահովումը և վերոհիշյալ ապրանքատեսակների շուկայահանման ծավալների աճի ապահովման հարցում կարևոր դեր կատարող պետական համապատասխան կառույցների զարգացմանն օժանդակությունը: Ծրագիրն իրականացվել է չորս բաղադրիչներով՝

- Համայնքների արոտավայրերի /անասնապահության կառավարման համակարգ,
- Արժեքային շղթայի զարգացում,
- Պետական կառույցների կարողությունների հզորացում,
- Ծրագրի համակարգում և կառավարում:

«Համայնքների արոտավայրերի/անասնապահության կառավարման համակարգ» բաղադրիչի շրջանակներում 38 համայնքում հիմնադրվել են «Արոտօգտագործողների միավորում» սպառողական կոոպերատիվներ, հաստատվել են 37 համայնքի կառավարման պլանները, 32 համայնքում ավարտվել են արոտավայրերի ջրարբիացման համակարգերի շինարարական աշխատանքները (94 կմ ջրագիծ, 91 հատ խմոց, ջրարբիացվել է շուրջ 46 հազար հա արոտ), իսկ 8 համայնքում դրանք գտնվում են իրականացման փուլում (44.7 կմ ջրագիծ, 21 հատ խմոց), 48 համայնքի արոտօգտագործողների միավորում սպառողական կոոպերատիվներին տրամադրվել է շուրջ 300 միավոր գյուղտեխնիկա, այդ թվում՝ 47 անիվավոր տրակտոր, և 253 միավոր այլ գյուղգործիքներ, իրականացվել է ուսուցում ՀՀ Տավուշի ու Սյունիքի մարզերի 20 համայնքի և ՀՀ Արագածոտնի, Լոռու, Շիրակի ու Կոտայքի մարզերի 18 համայնքի ղեկավարների և արոտօգտագործողների կոոպերատիվների անդամների համար (ընդամենը՝ 4765 մարդ):

«Արժեքային շղթայի զարգացում» բաղադրիչի շրջանակներում 2016 թվականի ապրիլ ամսին իրականացվել է երկրորդ մրցույթը, որի արդյունքում հաղթող են ճանաչվել ևս 16 ենթածրագրեր, որոնցից 1-ը չի հավաստագրվել: Արդյունքում 15 ծրագրերի շահառուների հետ կնքվել են համապատասխան պայմանագրեր նպատակային ֆինանսավորում հատկացնելու համար, սկսվել է նշված 15 ենթածրագրերի իրականացումը: Անցկացվել է աշխատաժողով, որի աշխատանքներին մասնակցել են հրավիրված 120 ֆերմերներ՝ արժեքային շղթայի մրցույթի ընթացակարգին ծանոթանալու նպատակով: Ապահովվել է թերթերում, հեռուստատեսությամբ և այլ լրատվամիջոցներով աշխատաժողովների անցկացման ամսաթվերի, ընթացակարգերի, ինչպես նաև հաղթող ճանաչված ենթածագրերի վերաբերյալ տեղեկատվության հրապարակայնությունը: Կատարվել է ներկայացված բիզնես-ծրագրերի գրախոսում մասնագիտական գրախոսող կազմակերպության կողմից:

«Պետական կառույցների կարողությունների հզորացում» բաղադրիչի նպատակն է հզորացնել պետական կառույցների կարողությունները՝ առաջին և երկրորդ բաղադրիչների շրջանակներում աջակցություն ստացող արժեշղթաներում բիզնեսի զարգացումը խթանելու և շուկայի հասանելիությունն ապահովելու համար: Այս բաղադրիչն իրականացվել է «Համայնքային անասնաբուժական ծառայություններ» և «Ինստիտուցիոնալ զարգացում» ենթաբաղադրիչների միջոցով: Համայնքային անասնաբուժական ծառայություններ» ենթաբաղադրիչի շրջանակներում իրականացվել են ՀՀ Լոռու մարզի Մեծ Պարնի համայնքում կենտրոնի շինարարական աշխատանքները, ՀՀ Կոտայքի մարզի Հրազդան համայնքի կենտրոնի համար իրականացվել են հողատարածքի նկատմամբ սեփականության փոխանցման գծով աշխատանքներ, ՀՀ ԳՆ սննդամթերքի անվտանգության պետական ծառայության սննդամթերքի անվտանգության 55 տեսուչների համար կազմակերպվել են մասնագիտական դասընթացներ, ՀՀ ԳՆ սննդամթերքի

անվտանգության պետական ծառայության կարիքների համար ձեռք են բերվել սերվերային սարքավորումներ, ընթացքի մեջ է ՀՀ Կոտայքի և ՀՀ Վայոց Ձորի մարզերի 20 անասնաբույժի ուսուցման և տեխնիկական աջակցության ծրագրի իրականացումը: «Ինստիտուցիոնալ զարգացում» ենթաբաղադրիչի շրջանակներում վերանորոգվել են ՀՀ ԳՆ «Բանջարաբոստանային և տեխնիկական մշակաբույսերի գիտական կենտրոն» ՊՈԱԿ-ի 3000մ^2 մակերեսով ապակեպատ ջերմատունը, ֆիտոպաթոլոգիայի լաբորատորիայի մասնաշենքն ու կաթսայատունը, ընթացքի մեջ են գտնվում մնացած 3000մ^2 մակերեսով ապակեպատ ջերմատան վերանորոգման աշխատանքները, ձեռք են բերվել անհրաժեշտ սարքավորումներ գիտական կենտրոնի ջերմատան համար:

«Ծրագրի համակարգում և կառավարում» բաղադրիչի շրջանակներում միջոցներն ուղղվել են ծրագրի կառավարմանը, անձնակազմի վերապատրաստմանը, տարեկան աուդիտին, գործառնական ծախսերին, ինչպես նաև ծրագրի մոնիտորինգին և գնահատմանը: Նախատեսվածից ավել ծախսեր են կատարվել լրացուցիչ տեխնիկական մասնագետների ընդգրկման, տրանսպորտային միջոցների և դաշտային այցելությունների, ազդեցությունների գնահատման և աուդիտի ուղղություններով:

Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող Գլոբալ էկոլոգիական հիմնադրամի կողմից տրամադրված Համայնքների գյուղատնտեսական ռեսուրսների կառավարման և մրցունակության (ՀԳՌԿՄ) դրամաշնորհային ծրագրի շրջանակներում 2016 թվականին օգտագործվել է 161.1 մլն դրամ: Նախատեսված ցուցանիշի 16.7%-ով գերազանցումը պայմանավորված է լրացուցիչ աշխատանքների իրականացմամբ՝ կապված 2016 թվականին ծրագրի ավարտի հետ: Մասնավորապես՝ դրամաշնորհի տնտեսված միջոցների հաշվին ձեռք են բերվել ՀԳՌԿՄ վարկային ծրագրի շրջանակներում «Համայնքի արոտավայրերի/անասնապահության կառավարման համակարգ» բաղադրիչի ազդեցության գնահատման և 63 համայնքի արոտավայրերում բուսականության ցուցանիշների փոփոխության վերաբերյալ խորհրդատվական ծառայություններ: Ծրագրի նպատակն էր ագրոհամակարգի ծառայությունների մատուցման գործընթացի բարելավումը, որը թույլ կտա պահպանել համայնքների բնակչության կենսամակարդակը, ինչպես նաև պաշտպանել բնական ռեսուրսները գյուղատնտեսության ոլորտի մրցակցային հողագործության հետևանքով առաջացող ճնշումից: Ծրագիրը բաղկացած է երեք բաղադրիչներից՝

- Համայնքների արոտավայրերի/անասնապահության կառավարման համակարգ,
- Օժանդակ ծառայությունների ուժեղացում,
- Ծրագրի կառավարում, մոնիտորինգ և գնահատում:

2016 թվականին ծրագրի շրջանակներում իրականացվել են ցուցադրական տարածքների բարելավման աշխատանքներ 24 համայնքի դեգրադացված արոտներում, իրականացվել են 55 համայնքի վերականգնված գյուղամերձ դեգրադացված տարածքների վերջնական գնահատում, 63 համայնքի արոտավայրերում բուսականության և բնապահպանության ցուցանիշների փոփոխության վերաբերյալ ազդեցության ուսումնասիրություն:

Գյուղատնտեսական համատարած հաշվառման (ԳՀՀ) նախապատրաստական աշխատանքների կազմակերպման և անցկացման ծախսերը կազմել են 103.9 մլն դրամ՝ ապահովելով 98.9% կատարողական: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը նվազել են 15.8%-ով կամ 19.5 մլն դրամով, քանի որ որոշ ծառայությունների ձեռքբերման անհրաժեշտություն չի առաջացել: Ծրագրի շրջանակներում կատարվել են 2014 թվականին իրականացված գյուղատնտեսական համատարած հաշվառման արդյունքների ամփոփման, ելքային աղյուսակների կազմման աշխատանքները, հրապարակվել է «ՀՀ-ում 2014 թվականի գյուղատնտեսական համատարած հաշվառման հիմնական արդյունքները» վիճակագրական ժողովածուն հայերեն, ռուսերեն և անգլերեն լեզուներով:

Դանիական թագավորության աջակցությամբ իրականացվող «Գյուղական կարողությունների ստեղծում» դրամաշնորհային ծրագրի գծով նախատեսված 128 մլն դրամի միջոցները չեն օգտագործվել: Ծրագրի նպատակն է բարելավել Հայաստանի Հանրապետության գյուղական աղքատ բնակչության սոցիալ-տնտեսական վիճակը: Ծրագիրը նախատեսված է շահառուներին բանկերի և վարկային կազմակերպությունների միջոցով այգեգործական վարկերի տրամադրման համար, որոնց ֆինանսավորումն իրականացվում է Գյուղական ֆինանսավորման կառույցի միջոցով, ինչպես նաև Հայաստանում Գյուղական տարածքների տնտեսական զարգացման հիմնադրամի ֆինանսավորումը՝ կապված ֆերմերներին տեխնիկական աջակցության տրամադրման հետ: Ծրագրի շրջանակներում կնքվել է պայմանագիր տեխնիկական խորհրդատուի հետ, և աշխատանքների իրականացումը սկսվել է այգեգործական վարկերի տրամադրմանը զուգահեռ: 2016 թվականի ընթացքում խորհրդատուին վճարումը հետաձգվել է, ինչը պայմանավորված է նրանով, որ խորհրդատուների հետ պայմանագրերը ուշ են կնքվել, որից հետո աշխատանքները նույնպես ուշ են սկսվել՝ կապված ծրագրի իրականացման ընթացակարգերի հետ: Աշխատանքների իրականացումը կշարունակվի 2017 թվականին:

Գլոբալ էկոլոգիական հիմնադրամի աջակցությամբ իրականացվող «Հայաստանում արտադրողականության աճին ուղղված հողերի կայուն կառավարում» դրամաշնորհային ծրագրի գծով նախատեսված 153.7 մլն դրամի միջոցները չեն օգտագործվել, ինչը պայմանավորված է նրանով, որ ծրագրի ֆինանսավորման միջպետական համաձայնագիրն ուժի մեջ է մտել նախատեսված ժամկետից ուշ՝ 2016 թվականի սեպտեմբեր ամսին, որից հետո ծրագրի

իրականացումը հետաձգվել է 2017 թվական: Ծրագրի շրջանակներում կվերականգնվեն համայնքային սեփականության ներքո գտնվող դեգրադացված հողերը՝ կներդրվի հողերի կայուն կառավարման և արդյունավետ շահագործման համակարգ: Հաշվետու տարում գյուղատնտեսության դասում ընդգրկված հետևյալ 11 ծրագրերի գծով արձանագրվել է 100% կատարողական:

Սերմերի որակի ստուգման ու պետական սորտափորձարկման միջոցառումների իրականացման նպատակով ծախսվել է 59.1 մլն դրամ: Ծրագրի շրջանակներում իրականացվել են սելեկցիոն նվաճումների հայտերի փորձաքննությունների, գրանցամատյանի վարման, օրիգինատորի հաշվառման, բույսերի սորտերի նկարագրությունների և բնութագրերի կազմման, սերմերի որակի լաբորատոր հետազոտությունների և փաստաթղթավորման, բույսերի նոր սորտերի տեղեկագրերի և գրանցամատյանների հրատարակման, ինչպես նաև բույսերի նոր սորտերի փորձարկումների աշխատանքներ: Լաբորատոր հետազոտությունների են ենթարկվել 14620 տոննա գյուղատնտեսական մշակաբույսերի սերմեր, որոնք ստացել են համապատասխան դասային գնահատում և փաստաթղթավորում: Ընդհանուր առմամբ հետազոտվել են հացահատիկային, հատիկաընդեղենային, բանջար-բոստանային, կերային, դեկորատիվ, անտառային բույսերի սերմեր և կարտոֆիլի տնկանյութ: Ընդունվել և հետազոտվել են շուրջ 603 նմուշներ, սպասարկվել են 337 տնտեսավարող սուբյեկտներ: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը գրեթե չեն փոփոխվել:

2016 թվականին բույսերի պաշտպանության միջոցառումների գծով ծախսերը կազմել են շուրջ 67.9 մլն դրամ: Ծրագրի շրջանակներում գյուղատնտեսական մշակաբույսերի առավել վնասակար օրգանիզմների դեմ իրականացվել են մի շարք միջոցառումներ: Համայնքների միջոցով մկնանման կրծողների դեմ պայքարի միջոցառումների բաղադրիչի շրջանակներում ՀՀ մարզպետարաններին անհատույց հատկացվել է 5888 կգ մկնասպան միջոց՝ 73600 հա մկնանման կրծողներով առավել վարակված գյուղատնտեսական նշանակության վարելահողերում և բազմամյա տնկարկներում նրանց դեմ պայքարի միջոցառումներ իրականացնելու համար: Համայնքներին բաշխելու նպատակով միջատասպան թունանյութի ձեռքբերման բաղադրիչի շրջանակներում նախատեսված միջատասպան միջոցը ձեռք չի բերվել՝ հանրապետությունում մորեխներով վարակվածության ցածր մակարդակի պատճառով: 2016 թվականի գարնանը օկնոգինա վնասատուի դեմ պայքար է իրականացվել ՀՀ Արագածոտնի, Արարատի և Կոտայքի մարզերի 16 համայնքներում 1160 հեկտարի վրա: 2016 թվականին մորեխների դեմ քիմիական պայքար իրականացնելու նպատակով ՀՀ Արարատի մարզի 4 համայնքներում պայքար է իրականացվել 400 հա գյուղատնտեսական նշանակության հողատեսքերում: Անտառային վնասատուների և հիվանդությունների դեմ բաղադրիչի շրջանակներում իրականացվել են ավիացիոն քիմիական պայքարի միջոցառումներ 9210 հա անտառային տարածքների վրա: Նախորդ տարվա համեմատ բույսերի պաշտպանության միջոցառումների գծով ծախսերը նվազել են 23.9%-ով կամ 21.3 մլն դրամով, ինչը հիմնականում

պայմանավորված է 2016 թվականի բուսասանիտարական վիճակով և նախորդ տարիների ընթացքում ձեռք բերված և պահեստավորված նյութերն օգտագործելու հանգամանքով:

Հողերի ագրոքիմիական հետազոտության և բերրիության բարձրացման միջոցառումների ծախսերը կազմել են 71.3 մլն դրամ: Հայաստանի Հանրապետությունում առկա է գյուղատնտեսական նշանակության հողեր ունեցող 852 համայնք: Յուրաքանչյուր տարի ագրոքիմիական հետազոտության են ենթարկվում հանրապետության ողջ տարածքի վարելահողերը և բազմամյա տնկարկները՝ որոշելով սննդատարրերով (ազոտ, ֆոսֆոր, կալիում) ապահովվածությունը, որից հետո տրվում է ագրոքիմիական քարտեզ և բնութագրեր: Ծրագրի շրջանակներում 2016 թվականին իրականացվել են գյուղատնտեսական մշակովի հողերի ագրոքիմիական դաշտային հետազոտություններ 170 համայնքներում, հետազոտված 76375 հեկտար տարածքից վերցված 25459 հողանմուշներում կատարվել են 64111 լաբորատոր փորձաքննություններ, որոշվել է ազոտի, ֆոսֆորի և կալիումի պարունակությունը հողի մեջ, կազմվել և համայնքներին են հանձնվել 170 ագրոքիմիական քարտեզներ և մշակաբույսերի պարարտացման երաշխավորագրեր, որոնցում հստակ նշվել են պարարտանյութերի տեսակները, պարարտացման նորմերը՝ ըստ կուլտուրաների, պարարտացման ժամկետները: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 1.6%-ով կամ 1.1 մլն դրամով՝ պայմանավորված իրականացված աշխատանքների ծավալով:

Գյուղատնտեսական կենդանիների պատվաստման ծախսերը կազմել են 1.1 մլրդ դրամ: Նախորդ տարվա համեմատ գյուղատնտեսական կենդանիների պատվաստման ծախսերը նվազել են 4.7%-ով կամ շուրջ 54.3 մլն դրամով՝ հիմնականում պայմանավորված անասնահակահամաճարակային միջոցառումների և ձեռք բերված պատվաստանյութերի քանակով: Ծրագրի շրջանակներում նախատեսվել էր իրականացնել կենդանիների վարակիչ հիվանդությունների կանխարգելման, կենդանիների և մարդու համար ընդհանուր հիվանդություններից բնակչության պաշտպանության, անասնահակահամաճարակային կանխարգելիչ աշխատանքներ՝ Հայաստանի Հանրապետությունում հակահամաճարակային կայուն իրավիճակի ստեղծման նպատակով: Ծրագրի շրջանակներում նախատեսվել էր իրականացնել գյուղատնտեսական կենդանիների վարակիչ հիվանդությունների կանխարգելմանն ուղղված 9163458 հատ անասնահակահամաճարակային միջոցառում: Նշված աշխատանքներն իրականացվել են անասնաբույժ մասնագետների և համաճարակաբանների կողմից 915 համայնքներում, փաստացի իրականացվել են 9097055 հատ անասնահակահամաճարակային միջոցառումներ:

Գյուղական խորհրդատվական ծառայությունների ձեռք բերման նպատակով կատարվել են 397.2 մլն դրամի ծախսեր: Ծրագրի շրջանակներում խորհրդատվական ծառայություններ մատուցող Գյուղատնտեսության աջակցության մարզային կենտրոնների (ԳԱՄԿ-ների) և Գյուղատնտեսության

աջակցության հանրապետական կենտրոնների (ԳԱՀԿ-ների) միջոցով ագրոտեխնիկական կանոններին և նոր տեխնոլոգիաներին համապատասխան գյուղատնտեսության վարման նպատակով գյուղացիական տնտեսություններին մատուցվել են խորհրդատվական ծառայություններ՝ 21463 խորհրդատվական միջոցառումներ, 1079 սեմինար, 16 սեմինար-դասընթացներ, 850 դաշտային ուսուցման և 149 փորձացուցադրական աշխատանքների կազմակերպում, լրատվական և տեղեկատվական ծառայությունների մատուցում, 101 ռադիոհեռուստահաղորդում, 450 անուն տեղեկատվական թերթիկների, գրքույկների տպագրում և տարածում՝ 122065 տպաքանակով, 158 համար թերթերի թողարկում՝ 211750 տպաքանակով: Նշված ծրագրի միջոցառումների իրականացումը պայմանավորված է մարզերում գյուղատնտեսության բնագավառում տնտեսավարողների կողմից ներկայացված անհրաժեշտ մասնագիտական խորհրդատվության պահանջարկով: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը գրեթե չեն փոփոխվել:

Անասնաբուժասանիտարիայի, սննդամթերքի անվտանգության և բուսասանիտարիայի ոլորտներում ծառայությունների մատուցման ծախսերը կազմել են 135.2 մլն դրամ: Ծրագրի շրջանակներում ապահովվում է Հայաստանի Հանրապետությունում բույսերի վնասակար օրգանիզմների հետազոտությունների, բույսերի պաշտպանության, ինչպես նաև պատվաստված անասնագլխաքանակի կայուն ֆոնի և գյուղատնտեսական կենդանիների հիվանդությունների կանխարգելիչ միջոցառումների իրականացումը: 2016 թվականին թվով 24 գյուղատնտեսների միջոցով գյուղատնտեսական նշանակության հողատարածքներում իրականացվել է բուսասանիտարական մոնիտորինգ 251.65 հազար հա տարածքների վրա: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 0.8%-ով կամ 1.1 մլն դրամով՝ պայմանավորված նոր վարելահողերի ձեռքբերմամբ:

Գյուղատնտեսական կենդանիների հիվանդությունների լաբորատոր ախտորոշման և կենդանական ծագում ունեցող հումքի և նյութի, բույսերի կարանտինի, գյուղմշակաբույսերի և բույսերի պաշտպանության միջոցների լաբորատոր փորձաքննությունների իրականացման համար 2016 թվականին ծախսվել է 312.4 մլն դրամ: Ծրագրի նպատակն է կենդանիների վարակիչ հիվանդությունների հակահամաճարակային վիճակի բարելավումը, մարդու և կենդանիների համար ընդհանուր հիվանդություններից բնակչության պահպանումը և անասնաբուժական տեսակետից բարձրորակ անասնապահական արտադրանքի ապահովումը: 2015 թվականի համեմատ նշված ծախսերը նվազել են 8%-ով կամ 27 մլն դրամով՝ պայմանավորված պետական կառավարման համակարգի օպտիմալացման շրջանակներում ծախսերի նվազմամբ:

Սննդամթերքի լաբորատոր փորձաքննությունների ծախսերը հաշվետու տարում կազմել են շուրջ 5 մլն դրամ: 2015 թվականի համեմատ նշված ծախսերը նվազել են 48.1%-ով կամ 4.6 մլն

դրամով՝ պայմանավորված պետական կառավարման համակարգի օպտիմալացման շրջանակներում ծախսերի նվազմամբ:

Գյուղատնտեսության ոլորտին տրամադրվող վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման ծախսերը 2016 թվականին կազմել են շուրջ 1.2 մլրդ դրամ: Ծրագրի շրջանակներում հինգ բանկերի միջոցով Հայաստանի Հանրապետության 10 մարզերի և Երևան համայնքի գյուղացիական տնտեսություններին տրամադրվել են սուբսիդավորված վարկեր: Նախորդ տարվա համեմատ այս ծախսերը չեն փոփոխվել:

Եվրամիության փորձարկման ռեֆերենս մեթոդներով մեղրի և ձկան փորձաքննությունների ծառայություններին հաշվետու տարում ուղղվել է 30 մլն դրամ: Ծրագրի նպատակն է տեղական արտադրության մեղրի և ձկան մեջ մնացորդային նյութերի հսկողության իրականացումը, ինչը կբացահայտի և կհավաստի, որ նշված կենդանական ծագում ունեցող սննդամթերքները չեն պարունակում արգելված նյութեր, անասնաբուժական դեղամիջոցների մնացորդային քանակներ կամ վերջիններիս պարունակությունը չի գերազանցում ՀՀ օրենդրությամբ սահմանված մնացորդային քանակները: Նախորդ տարվա համեմատ այս ծախսերը չեն փոփոխվել:

Գյուղատնտեսական հողօգտագործողներին մատչելի գներով դեզելային վառելիքի ձեռքբերման համար պետական աջակցության ծախսերը կազմել են 275.3 մլն դրամ: Ծրագրի շրջանակներում ձեռք է բերվել դիզելային վառելանյութ, որն ըստ հաստատված ցուցակի բաշխվել է Հայաստանի Հանրապետության մարզերի հողօգտագործողներին գյուղատնտեսական աշխատանքների կատարման համար: Ծրագիրը սկսել է իրականացվել 2016 թվականից:

Գյուղատնտեսական հողօգտագործողներին մատչելի գներով պարարտանյութերի ձեռքբերման համար պետական աջակցության ծախսերը կազմել են շուրջ 2.1 մլրդ դրամ՝ ապահովելով 99.6% կատարողական: Ծրագրի շրջանակներում ձեռք են բերվել ազոտական, ֆոսֆորական և կալիումական պարարտանյութեր, որոնք բաշխվել են Հայաստանի Հանրապետության մարզերի և ԼՂՀ-ի հողօգտագործողներին՝ գյուղատնտեսական աշխատանքների կատարման համար: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը նվազել են 20.7%-ով կամ 545.6 մլն դրամով, որը պայմանավորված է ներկրված պարարտանյութերի իրացման քանակով:

ՀՀ գյուղատնտեսության նախարարության սննդամթերքի անվտանգության պետական ծառայության նյութական խրախուսման և համակարգի զարգացման ֆոնդի ծախսերը, որոնք իրականացվում են արտաբյուջետային միջոցների հաշվին, կազմել են 204.5 մլն դրամ՝ ապահովելով 82.8% կատարողական, որը պայմանավորված է գնումների արդյունքում առաջացած տնտեսումներով: Ֆոնդում գոյացած միջոցների 70 տոկոսն օգտագործվում է ծառայության աշխատողների նյութական խրախուսման, իսկ 30 տոկոսը՝ ծառայության համակարգի զարգացման և հսկիչ գնումների ֆինանսավորման համար: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են

7.3%-ով կամ 13.9 մլն դրամով՝ հիմնականում պայմանավորված աշխատանքի վարձատրության ծախսերի աճով:

«Ներմուծվող սննդամթերքի և (կամ) կենդանական ծագման մթերքի լաբորատոր փորձաքննության վճարներ» ծրագրի ծախսերը, որոնք իրականացվում են ՀՀ գյուղատնտեսության նախարարության սննդամթերքի անվտանգության պետական ծառայության արտաբյուջետային միջոցների հաշվին, կազմել են 154.5 մլն դրամ՝ ապահովելով 99.2% կատարողական: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 89.7%-ով կամ 73.1 մլն դրամով, որը պայմանավորված է լաբորատոր փորձաքննության պատվերների քանակի ավելացմամբ ինչի արդյունքում ավելացել են եկամուտները, հետևաբար՝ նաև ծախսերը:

Գյուղատնտեսության դասում ընդգրկված՝ գործադիր իշխանության, պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների պահպանման ծախսերը կազմել են 897.4 մլն դրամ, որը հատկացվել է ՀՀ գյուղատնտեսության նախարարության սննդամթերքի անվտանգության պետական ծառայությանը և ապահովել 99.4% կատարողական: Նախորդ տարվա համեմատ այս ծախսերը նվազել են 1%-ով կամ շուրջ 9.2 մլն դրամով, որը պայմանավորված է պետական կառավարման համակարգի օպտիմալացման շրջանակներում ծառայության պահպանման ծախսերի նվազմամբ:

Տվյալ դասում ընդգրկված՝ գործադիր իշխանության, պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների պահպանման ծախսերը (նախարարությունների աշխատակազմերի մասով) կազմել են շուրջ 505.1 մլն դրամ՝ ապահովելով 98.5% կատարողական, որը պայմանավորված է տնտեսումներով: Միջոցները հատկացվել են ՀՀ գյուղատնտեսության նախարարության աշխատակազմի պահպանմանը: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը նվազել են 1.5%-ով կամ 7.6 մլն դրամով, ինչը պայմանավորված է աշխատանքի վարձատրության և տրանսպորտային միջոցների կրճատման հետ կապված՝ տրանսպորտային նյութերի, մեքենաների ու սարքավորումների ընթացիկ նորոգման և պահպանման ծախսերի նվազմամբ:

2016 թվականին ՀՀ պետական բյուջեից ավելի քան 1.6 մլն դրամ է տրամադրվել տոհմային երինջների ձեռքբերմանը՝ ապահովելով 96.8% կատարողական, որը պայմանավորված է տնտեսումներով: Նշենք, որ տոհմային երինջների ձեռքբերման համար միջոցները հատկացվել էին 2015 թվականին՝ 799.1 մլն դրամ, որոնց ներկրումը Հայաստանի Հանրապետություն իրականացվել է 2016 թվականին, ուստի հաշվետու տարում միջոցներ են հատկացվել միայն տոհմային երինջների ներկրման հետ կապված հարկերի և ծառայությունների (մաքսավճար, ճանապարհավճար, ծանրաքարշության համար վճար, մաքսային միջնորդի ծառայություններ, հենահարթակային կշեռքներով կշռման և համալիր սպասարկման ծառայություններ) դիմաց վճարման նպատակով:

Հաշվետու տարում շուրջ 1.3 մլրդ դրամ է տրամադրվել *անտառային տնտեսության* դասին՝ ապահովելով 100% կատարողական: Նախորդ տարվա համեմատ նշված դասի ծախսերը գրեթե չեն փոփոխվել: 2016 թվականին անտառային տնտեսությանը կատարված հատկացումների հաշվին իրականացվել են երկու ծրագրեր, որոնցում մեծ տեսակարար կշիռ ունեն անտառպահպանական ծառայություններին կատարված հատկացումները: Նշված ծառայությունների ձեռքբերման համար նախատեսվել էր 1.2 մլրդ դրամ, որն ամբողջությամբ օգտագործվել է: Այն տրամադրվել է «Հայանտառ» ՊՈԱԿ-ին՝ իր իրավասության ներքո գտնվող 344.2 հազար հեկտար տարածքների պահպանության աշխատանքների դիմաց վճարման նպատակով:

Անտառային պետական մոնիտորինգի իրականացման համար նախատեսված 54.6 մլն դրամը նույնպես ամբողջությամբ օգտագործվել է: Հատկացված գումարների հաշվին բնության հատուկ պահպանվող չորս տարածքների անտառներում իրականացվել են ուսումնասիրություններ և դիտարկումներ՝ անտառների պահպանության, անտառային հողերի վրա մարդածին և բնածին ազդեցությունների, անտառպաշտպանության, հատատեղերի, հակահրդեհային միջոցառումների, անտառվերականգնման ուղղություններով:

Փայտանյութի սպառման շուկայի, փայտանյութի մթերման և արտահանման, ապօրինի հատումների և դրա արդյունքում բնափայտի տեղափոխումների, իրացման վերաբերյալ տվյալների հավաքում, մշակում, վերլուծություն և գնահատում: Ներդրված հեռահար զոնդավորման ծրագրային համակարգի միջոցով վերծանվել են անտառածածկ տարածքների փոփոխությունների ուսումնասիրությունները: Բնապահպանական հասարակական կազմակերպությունների հետ համատեղ «eCognition» ծրագրային համակարգով արբանյակային պատկերների վերծանման արդյունքների գնահատման, մոնիտորինգի դաշտային աշխատանքների համադրման նպատակով, անտառների պահպանության վիճակի, պահաբաժինների գարնանային ստուգումների արդյունքների հավաստիության վերաբերյալ ուսումնասիրություններ և դիտարկումներ են իրականացվել «Հայանտառ» ՊՈԱԿ-ի «Սևքարի», «Գուգարքի, Ջիլիզայի, Իջևանի, Ստեփանավանի, Նոյեմբերյանի, Եղեգնուտի, Ճամբարակի և Արծվաբերդի» անտառտնտեսություն» մասնաճյուղերի անտառային տարածքներում: Ուսումնասիրությունների արդյունքում արձանագրվել է ընդհանուր թվով 278 հատ ապօրինի հատված ծառերի կոճղեր: 2015 թվականի նկատմամբ 188 հատ պակաս ապօրինի հատված ծառերի կոճղեր են հայտնաբերվել: Ներդրված հեռահար զոնդավորման ծրագրային համակարգի միջոցով վերծանվել են անտառածածկ տարածքների փոփոխությունների ուսումնասիրությունները:

2016 թվականին շուրջ 20.2 մլրդ դրամ տրամադրվել է *ոռոգման* դասի ծախսերին՝ ապահովելով 124.1% կատարողական, որը հիմնականում պայմանավորված է Ֆրանսիայի Հանրապետության կառավարության աջակցությամբ իրականացվող Վեդու ջրամբարի կառուցման և

Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող Ոռոգման համակարգերի արդյունավետության բարձրացման վարկային ծրագրերի բարձր կատարողականով: Կատարված հատկացումների հաշվին իրականացվել է 8 ծրագիր, այդ թվում՝ արտաքին աղբյուրներից ֆինանսավորվել է 3 վարկային ծրագիր:

Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող Ոռոգման համակարգերի արդյունավետության բարձրացման վարկային ծրագրի շրջանակներում օգտագործվել են շուրջ 5.5 մլրդ դրամի միջոցներ՝ 41.5%-ով գերազանցելով նախատեսված ցուցանիշը, ինչը հիմնականում պայմանավորված է կատարված շինարարական աշխատանքների ծավալներով: Ծրագրի նպատակներն են՝ էլեկտրաէներգիայի սպառման կրճատումը, ընտրված ոռոգման համակարգերում ոռոգման ջրի տեղափոխման արդյունավետության բարձրացումը, ոլորտին առնչվող կարևոր տեղեկատվության առկայությունը և արժանահավատությունը՝ որոշում կայացնողների և այլ շահագրգիռ կողմերի համար:

Ոռոգման համակարգերի արդյունավետության բարձրացման ծրագրի շրջանակներում 2016 թվականին ավարտվել են Մեղրիի ինքնահոս համակարգի ձախ ճյուղի մագիստրալ խողովակաշարի կառուցման շինարարական աշխատանքները, կառուցվել է 36 կմ երկարությամբ ջրագիծ: Իրականացվել են Աչաջուր, Նոյեմբերյան քառաստիճան և Զեյթուն (Հաղթանակ) ջրհան կայանների հեռացնող ջրանցքների վերականգնման (14.03 կմ ջրանցք) և Քաղցրաշեն, Ավշար-Այգեվան, Արմաշ, Արազափ, Ջրաշեն-Ազատ և Զովք ջրհան կայանների հեռացնող ջրանցքների վերականգնման (21.3 կմ ջրանցք) աշխատանքներ:

Ֆրանսիայի Հանրապետության կառավարության աջակցությամբ իրականացվող Վեդու ջրամբարի կառուցման վարկային ծրագրի շրջանակներում օգտագործվել է ավելի քան 5.2 մլրդ դրամ: Ծրագրային ցուցանիշի 2 անգամ գերազանցումը պայմանավորված է կատարված շինարարական աշխատանքների ծավալներով: Ծրագրի իրականացման նպատակով ՀՀ կառավարության և Զարգացման Ֆրանսիական Գործակալության միջև 75 մլն եվրո արժողությամբ վարկային համաձայնագիրը ստորագրվել է 2016 թվականի հունվարի 26-ին և ուժի մեջ է մտել 2016 թվականի մայիսի 12-ին: 2016 թվականի օգոստոսին պատրաստ են եղել Վեդու պատվարի, ջրառ հանգույցների, ջրի փոխանցման համակարգի և ոռոգման համակարգի նախագծերը և մրցութային փաստաթղթերը, որոնց հիման վրա հայտարարվել են շինարարական աշխատանքների մրցույթներ: 2016 թվականի ընթացքում իրականացվել են ստացված մրցութային առաջարկների ուսումնասիրություն և գնահատում, որի արդյունքում շնորհվել է պայմանագիրը, իսկ շինարարական աշխատանքները մեկնարկել են 2017 թվականին:

Գերմանիայի զարգացման վարկերի բանկի աջակցությամբ իրականացվող Ախուրյան գետի ջրային ռեսուրսների ինտեգրված կառավարման վարկային ծրագրի շրջանակներում օգտագործվել է

շուրջ 851.9 մլն դրամ՝ 97%-ով գերազանցելով նախատեսված ցուցանիշը, ինչը պայմանավորված է կատարված աշխատանքների ծավալներով: KFW բանկի հետ քննարկվել է ծրագրի հետագա իրականացման հարցը, ըստ որի առաջին փուլով որոշվել է իրականացնել Կապսի ջրամբարի հիմնանորոգումը՝ 25 մլն մ³ ընդհանուր ծավալով: 2016 թվականի ընթացքում «Շրջակա միջավարի վրա սոցիալական ազդեցությունը գնահատող» (ՇՄՍԱԳ) խորհրդատուի և «Փորձագետների հանձնաժողովի» մասնակիցների ընտրության նպատակով անցկացվել է նախաորակավորման մրցութային գործընթաց, որից հետո ներկայացվել են նաև համապատասխան մրցութային փաստաթղթեր՝ նախաորակավորում անցած մասնակիցների միջև մրցութային գործընթաց իրականացնելու համար: Մրցույթի արդյունքում ընտրվել են փորձագետներ: Կապսի ջրամբարի վերականգնման մանրամասն նախագծի շրջանակներում 2016 թվականին իրականացվել են դաշտային գեոդեզիական ուսումնասիրություններ և մանրամասն նախագծի աշխատանքներ, որոնք կշարունակվեն նաև 2017 թվականի ընթացքում:

Եվրասիական զարգացման բանկի աջակցությամբ իրականացվող ոռոգման համակարգերի զարգացման վարկային ծրագրի շրջանակներում նախատեսված 728.4 մլն դրամի միջոցները չեն օգտագործվել, ինչը պայմանավորված ծրագրի իրականացման ընթացակարգով: Ծրագիրը մեկնարկել է 2016 թվականի հունիսի 10-ից: Ծրագրի ընդհանուր արժեքն է 50 մլն ԱՄՆ դոլար, որից 40 մլն ԱՄՆ դոլարը վարկային միջոցներն են: Ծրագիրը նպատակ ունի փոխարինել մեխանիկական ոռոգումը ինքնահոսով, վերականգնել մայր և երկրորդ կարգի ջրանցքների, ներտնտեսային ցանցի առավել քայքայված և վթարային հատվածները:

2016 թվականին ոռոգման ծառայություններ մատուցող ընկերությունների համար նախատեսված շուրջ 7.1 մլրդ դրամ աջակցությունն ամբողջությամբ տրամադրվել է: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերի 35.2%-ով կամ 1.8 մլրդ դրամով աճը պայմանավորված է էլեկտրաէներգիայի սակագնի բարձրացմամբ, ինչպես նաև ջրօգտագործող ընկերությունների մոտ առաջացած կրեդիտորական պարտքերով: 2016 թվականին ծառայություններ են մատուցվել 37 ջրօգտագործողների ընկերությունների: Համակարգի հետագա զարգացման և ջրօգտագործողների ընկերությունների՝ որպես կենսունակ հաստատությունների կայացման հարցում միջնաժամկետ հեռանկարում մեծ դեր է հատկացվում պետական օժանդակությանը: Ոռոգման համակարգին պետական ֆինանսական աջակցության շրջանակների հստակեցումը և տրամադրման մեխանիզմների բարեփոխումն է՛լ ավելի են կարևորվում աղքատության հաղթահարման միջոցառումների համատեքստում՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ ոռոգման ջրի կանոնավոր հասանելիությունը զգալիորեն նվազեցնում է աղքատության ռիսկը գյուղական բնակավայրերում: Ջրօգտագործողների ընկերություններին պետական ֆինանսական աջակցության բարեփոխումների հիմնական նպատակներն են ջրօգտագործողներին աջակցությունն ու մասնակցային կառավարման

ամրապնդումը, ջրօգտագործողների ընկերությունների գործունեության արդյունավետության բարձրացումն ու ինքնածախսածածկման մակարդակի աստիճանական ավելացումը, ոռոգման ջրի կորուստների կրճատումը, ինչպես նաև պետական ծախսերի կանխատեսելիության ու բաշխման արդյունավետության աճը:

Կոլեկտորադրենաժային ցանցի պահպանման և շահագործման, գրունտային ջրերի մակարդակների ու որակի որոշման աշխատանքների իրականացման համար 2016 թվականի պետական բյուջեից ծախսվել է 321.6 մլն դրամ՝ ապահովելով 100% կատարողական: Ծրագրի իրականացման արդյունքում պահպանվում և շահագործվում են հանրապետությունում առկա կոլեկտորադրենաժային ցանցերը՝ մաքրվում և վերանորոգվում է կոլեկտորադրենաժային ցանցերի մի մասը, որոնցով հնարավորություն է տրվում Արարատյան հարթավայրի հողերի գրունտային ջրերի մակարդակները պահպանել թույլատրելի խորությունների վրա: Նշված արդյունքներին հասնելու համար իրականացվել են կոլեկտորադրենաժային ցանցերի մաքրման և նորոգման աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմում, դրանց մաքրում և նորոգում, մաքրման և նորոգման աշխատանքների որակի տեխնիկական հսկողություն, ինչպես նաև տեխնիկական վիճակի պահպանում և շահագործում: Ոռոգելի հողերի մելիորատիվ վիճակի բարելավման նպատակով միջոցառումների մշակման համար իրականացվել են 154.99 կմ ընդհանուր երկարությամբ բաց կոլեկտորադրենաժային ցանցերի պահպանում և շահագործում: 2016 թվականի ընթացքում իրականացվել են 136.7 կմ ընդհանուր երկարությամբ կոլեկտորադրենաժային ցանցի և Արարատյան հարթավայրում տեղադրված 450 դիտողական հորատանցքներում գրունտային ջրերի մշտական դիտարկումների աշխատանքներ: Նշենք, որ տվյալ ծրագրում ներառված՝ կոլեկտորադրենաժային ցանցի մաքրման և ընթացիկ նորոգման ծախսերը 2015 թվականի պետական բյուջեում հաստատված էին առանձին ծրագրով: Նշվածը հաշվի առնելով՝ նախորդ տարվա համեմատ կոլեկտորադրենաժային ցանցի պահպանման և շահագործման, գրունտային ջրերի մակարդակների ու որակի որոշման ծախսերի աճը կկազմի 1.4% կամ 4.5 մլն դրամ:

Ջրատեխնիկական կառույցների ուսումնասիրությունների ծախսերը կազմել են շուրջ 11.5 մլն դրամ կամ ծրագրի 99.9%-ը: Շեղումը հիմնականում պայմանավորված է որոշակի ծառայությունների և նյութական արժեքների ձեռքբերման ծախսերի տնտեսումներով: 2015 թվականի համեմատ նշված ծախսերն աճել են 12.4%-ով կամ շուրջ 1.3 մլն դրամով, որը պայմանավորված է տրանսպորտային նյութերի և աշխատանքի վարձատրության ծախսերի աճով:

ՀՀ 2016 թվականի պետական բյուջեից ոռոգման համակարգերի հիմնանորոգմանն ուղղվել է 14.3 մլն դրամ՝ ապահովելով 95.6% կատարողական, որը պայմանավորված է տնտեսումներով: Միջոցներն ուղղվել են «Արաքս» ջրօգտագործողների ընկերությանը՝ Բերքաշատ համայնքի

խորքային հորի վերականգնման աշխատանքներն իրականացնելու համար: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը նվազել են 98.2%-ով կամ 766.3 մլն դրամով՝ պայմանավորված կատարված շինարարական աշխատանքների ծավալների նվազմամբ:

Ոռոգում ջրառ իրականացնող կազմակերպություններին 2016 թվականին տրամադրվել է ավելի քան 1.2 մլրդ դրամ ֆինանսական աջակցություն, որը կատարվել է նախատեսված չափով: Աջակցության հիմնական նպատակն է ոռոգում ջրառ իրականացնող կազմակերպությունների վնասների փոխհատուցման արդյունքում կազմակերպությունների տեխնիկական և ֆինանսական կայունության ապահովումը, որը թույլ կտա կազմակերպություններին իրականացնել կնքված պայմանագրերով ոռոգման ջրի մատակարարումը և կատարել ստանձնած պայմանագրային պարտավորությունները: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 27.9%-ով կամ 264.3 մլն դրամով՝ պայմանավորված սակավաջրության հետևանքով սեզոնին մեխանիկական ջրառի միջոցով հողի ոռոգման կազմակերպմամբ:

Վառելիքի և էներգետիկայի բնագավառի ծախսերը 2016 թվականին կազմել են ավելի քան 14 մլրդ դրամ՝ ապահովելով 60.7% կատարողական: Վերջինս հիմնականում պայմանավորված է էլեկտրաէներգիայի բնագավառի ծրագրերի կատարողականով:

2016 թվականին *միջուկային վառելիքի* դասի ծախսերը կազմել են 254.2 մլն դրամ, որը հատկացվել է ՀՀ կառավարությանն առընթեր միջուկային անվտանգության կարգավորման կոմիտեի պահպանմանը՝ ապահովելով 98.5% կատարողական: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 3.7%-ով կամ 9.1 մլն դրամով՝ հիմնականում պայմանավորված ընդհանուր բնութի այլ ծառայությունների գծով ծախսերի աճով:

2016 թվականին *վառելիքի այլ տեսակների* դասի ծախսերը կազմել են ավելի քան 7.4 մլրդ դրամ կամ ծրագրվածի 86.1%-ը, որը հիմնականում պայմանավորված է ՌԴ աջակցությամբ իրականացվող Հայկական ԱԷԿ-ի N 2 էներգաբլոկի շահագործման նախագծային ժամկետի երկարացման դրամաշնորհային ծրագրի կատարողականով: Կատարված հատկացումների հաշվին ֆինանսավորվել են արտաքին աջակցությամբ իրականացվող հինգ դրամաշնորհային ծրագրեր:

Մասնավորապես՝ ՌԴ աջակցությամբ իրականացվող Հայկական ԱԷԿ-ի N 2 էներգաբլոկի շահագործման նախագծային ժամկետի երկարացման դրամաշնորհային ծրագրի շրջանակներում օգտագործվել է ավելի քան 3.2 մլրդ դրամ՝ ապահովելով 73.8% կատարողական, որը պայմանավորված է «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի և «Ռուսատոմ Սերվիս» ԲԸ-ի միջև կնքված պայմանագրերի շրջանակներում ՌԴ ֆինանսների նախարարության կողմից 3.2 մլրդ դրամի հաստատում ստանալու հանգամանքով: Ծրագրի առաջին փուլում նախատեսվում է իրականացնել էներգաբլոկի սարքավորումների և շինությունների համալիր ուսումնասիրություն և շահագործման լրացուցիչ ժամկետի նախապատրաստման ծրագրի մշակում, երկրորդ փուլում՝ նախապատրաստման ծրագրի

իրականացում, ներառյալ՝ հետազոտական, հաշվարկային, վերլուծական, նախագծային, կոնստրուկտորական, մոնտաժային և գործակարգաբերման աշխատանքները, և անհրաժեշտ սարքավորումների մատակարարումներ: Ծրագրի շրջանակներում վճարումներ են կատարվել իրականացված շինարարական աշխատանքների, մատակարարված սարքավորումների և դրանց համար նախատեսված հարկերի ու տուրքերի գծով:

Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող էներգախնայողության դրամաշնորհային ծրագրի շրջանակներում օգտագործվել է 152 մլն դրամ՝ 36.5%-ով գերազանցելով նախատեսված ցուցանիշը, ինչը պայմանավորված է շինանարարական աշխատանքների և տեխնիկական հսկողության աշխատանքների ծավալով, ինչպես նաև բյուջեի հիմքում դրված փոխարժեքի համեմատ վերջինիս ավելի բարձր մակարդակով: Ծրագիրն ուղղված է հանրային նշանակության օբյեկտներում (դպրոցներ, այլ ուսումնական հաստատություններ, մանկապարտեզներ, հիվանդանոցներ, վարչական շենքեր, մշակույթի տներ, բնակավայրերի արտաքին լուսավորություն և այլն) էներգախնայողական միջոցառումներ իրականացնելուն: Ծրագրի զարգացման նպատակն է՝ կրճատել սոցիալական և հանրային նշանակության այլ կառույցների էներգասպառման մակարդակը: Գլոբալ բնապահպանական նպատակն է՝ պետական ոլորտում էներգախնայողության մեջ ներդրումների համար խթանելու միջոցով կրճատել ջերմոցային գազերի արտանետումները: Ծրագիրն ունի 2 հիմնական բաղադրիչ՝ «Էներգախնայողական ներդրումներ հանրային օբյեկտներում» և «Ծրագրի տեխնիկական աջակցություն»: Առաջին բաղադրիչի շրջանակներում Էներգախնայողության ներդրումներ են կատարվում սոցիալական և հանրային նշանակության այլ օբյեկտներում, օրինակ՝ դպրոցներում, մանկապարտեզներում, հիվանդանոցներում, վարչական շենքերում, փողոցային լուսավորությունում: Երկրորդ բաղադրիչի շրջանակներում նախատեսվում է լուծել էներգախնայողության ներուժի իրացման հետ կապված առկա խնդիրները (պոտենցիալ շահառուների կողմից էներգախնայողության վերաբերյալ տեղեկատվության պակաս, ինչպես նաև ռիսկերի սխալ գնահատում), և ստեղծվելու է նպաստավոր միջավայր պետական հատվածում էներգախնայողության համար: Ծրագրի շրջանակներում հատկացված միջոցները ծախսվել են 11 քրեակատարողական հաստատություններում, ինչպես նաև 13 այլ հանրային օբյեկտներում էներգախնայողության միջոցառումների իրականացման, նշված օբյեկտներում տեխնիկական հսկողության իրականացման, Էներգախնայողության ծրագրի վիճակագրական հետազոտության իրակացման և հիմնադրամի գործառնական ծրագրի մշակման, ինչպես նաև ազգային էներգախնայողության գործողությունների ծրագրի մշակման և ներկայացման համար: Ծրագրի արդյունքում թվով 64 հանրային օբյեկտներում իրականացվել են էներգախնայողության միջոցառումներ, որից 8 հանրային օբյեկտում միջոցառումները դեռևս

ավարտված չեն և կֆինանսավորվեն շրջանառու միջոցների հաշվին: Ծրագրի դրամաշնորհային մասն ավարտվել է 2016 թվականի հունիսի 30-ին:

Իրանի Իսլամական Հանրապետության աջակցությամբ իրականացվող Հայաստանի Հանրապետությունում՝ Իրանի հետ սահմանամերձ բնակավայրերի գազի բաշխման ցանցի կառուցման դրամաշնորհային ծրագրի շրջանակներում օգտագործվել են 646.3 մլն դրամի միջոցներ՝ ապահովելով 99.3% կատարողական: Ծրագիրը կնպաստի բազմաթիվ բնակարանների, առողջապահական, կրթական, մշակութային և այլ հաստատությունների կողմից էկոլոգիապես մաքուր վառելիքի օգտագործմանը, գազի առկայությունը կնպաստի նաև անտառահատումների կրճատմանը, էկոլոգիայի և դրանից բխող խնդիրների լուծմանը: Ծրագրի շրջանակներում Ագարակ և Մեղրի համայնքների տարածքում նախատեսված շինարարական աշխատանքներն ամբողջությամբ ավարտված են: Ծրագրի շրջանակներում 2016 թվականին վճարումներ են կատարվել շինարարական աշխատանքների և ներկրված սարքավորումների գծով:

2016 թվականին Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող երկրաջերմային հետախուզական հորատման դրամաշնորհային ծրագրի շրջանակներում օգտագործվել է 2.9 մլրդ դրամ՝ ապահովելով 99.4% կատարողական: Ծրագրի շրջանակներում իրականացվել են երկու նեղ հորատանցքերի հորատման, տեխնիկական հսկողության, երկու նեղ հորատանցքերի կարոտաժի և փորձարկման, ինչպես նաև ծրագրի աուդիտի և կառավարման աշխատանքներ: Ծրագրի նպատակն է՝ Հայաստանում հայտնի հավանական երկրաջերմային տեղանքներից մեկում՝ Կարկառում, հետախուզական հորատման միջոցով էլեկտրաէներգիայի արտադրության համար բավարար ռեսուրսի առկայության և որակի հաստատումը և երկրաջերմային էլեկտրակայանի կառուցման գործում մասնավոր հատվածի ներգրավումը:

Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող արդյունաբերական մասշտաբի արևային էներգիայի ծրագրի նախապատրաստման համար դրամաշնորհային ծրագրի շրջանակներում նախատեսված միջոցներն օգտագործվել են 85.7%-ով՝ կազմելով 506 մլն դրամ: Շեղումը պայմանավորված է նրանով, որ արևային ֆոտովոլտային կայանների կառուցման տեխնիկատնտեսական հիմնավորման խորհրդատուին նախատեսված գումարները վճարվել են 2017 թվականի հունվարին: Ծրագրի նպատակն է օժանդակել Հայաստանի Հանրապետությանը՝ արդյունաբերական մասշտաբի արևային էներգիայի նախատեսվող ծրագրի նախապատրաստման հարցում: Ծրագրի շրջանակներում իրականացվել են Հայաստանի արևային ռեսուրսների գնահատման և քարտեզագրման, արևային ֆոտովոլտային կայանների կառուցման տեխնիկատնտեսական հիմնավորման, արևային ռեսուրսի չափիչ կայանների մատակարարման և տեղակայման, ծրագրի կառավարման աշխատանքներ:

Հաշվետու տարում *էլեկտրաէներգիայի* դասի ծախսերը կազմել են ավելի քան 6.3 մլրդ դրամ՝ ապահովելով 44.7% կատարողական: Շեղումը հիմնականում պայմանավորված է Գերմանիայի զարգացման վարկերի բանկի աջակցությամբ իրականացվող «Կովկասյան էլեկտրահաղորդման ցանց I» Հայաստան-Վրաստան հաղորդիչ գիծ/ենթակայանների և Ասիական զարգացման բանկի աջակցությամբ իրականացվող էլեկտրաէներգիայի հաղորդման ցանցի վերակառուցման շրջանակներում 220կՎ «Ագարակ-2» և «Շինուհայր» ենթակայանների վերակառուցման վարկային ծրագրերի կատարողականով: Կատարված հատկացումների հաշվին իրականացվել է 8 ծրագիր, այդ թվում՝ արտաքին աղբյուրներից ֆինանսավորվել են երկու դրամաշնորհային և հինգ վարկային ծրագրեր:

Գերմանիայի զարգացման վարկերի բանկի աջակցությամբ իրականացվող «Կովկասյան էլեկտրահաղորդման ցանց I» Հայաստան-Վրաստան հաղորդիչ գիծ/ենթակայանների վարկային ծրագրի շրջանակներում նախատեսված 6.6 մլրդ դրամի դիմաց օգտագործվել են 728 մլն դրամի միջոցներ: Ծրագրի 10.9% կատարողականը պայմանավորված է մրցութային հայտերի ներկայացման վերջնաժամկետը երկարաձգելու հանգամանքով: Ծրագրով նախատեսվում էր կանխավճար կատարել ծրագրի գլխավոր կապալառուներին և վճարել ծրագրի խորհրդատուին, սակայն մրցույթի մասնակիցների խնդրանքով գլխավոր կապալառուների մրցույթների արդյունքների ամփոփումը և պայմանագրերի կնքումը հետաձգվել է 2017 թվական: Քանի որ մրցույթի փաստաթղթերի փաթեթների ծավալը մեծ էր, իսկ ժամկետները կարճ, հայտերի ներկայացման վերջնաժամկետը երկարացվել է՝ ազատ մրցակցային դաշտ ստեղծելու և առավել որակյալ աշխատանքներ ապահովելու նպատակով: Ծրագրի շրջանակներում վճարումներն իրականացվել են ծրագրի նախապատրաստման, վերահսկման և կառավարման խորհրդատվական ծառայությունների, ինչպես նաև սահմանված կարգով նախատեսված հարկերի և տուրքերի դիմաց: Ծրագրի շրջանակներում նախատեսվում է միացնել հայկական և վրացական էներգահամակարգերը վրացական սահմանին մոտ՝ Այրումում (Հայաստան) տեղակայվող 500/400/220 կՎ բարձր լարման հաստատուն հոսանքի փոխակերպիչ կայանով: Էլեկտրահաղորդման գծի կառուցմամբ զգալիորեն կխթանվի էներգետիկայի բնագավառում տարածաշրջանային Հյուսիս-Հարավ (ՌԴ-Վրաստան-ՀՀ-ԻԻՀ) փոխշահավետ համագործակցության զարգացումը, ինչպես նաև կստեղծվի նախապայման՝ ԱՊՀ երկրների էլեկտրաէներգետիկական համակարգի հետ զուգահեռ աշխատանքներ կազմակերպելու համար:

Վերոհիշյալ վարկային ծրագրին աջակցելու նպատակով Եվրոպական միության Հարևանության Ներդրումային գործիքի և Գերմանիայի զարգացման վարկերի բանկի աջակցությամբ իրականացվում են դրամաշնորհային ծրագրեր, որոնց շրջանակներում օգտագործվել է համապատասխանաբար 234.1 մլն դրամ և 131.2 մլն դրամ՝ ապահովելով 100%

կատարողական: Ծրագրերի շրջանակներում կատարվել են վճարումներ ծրագրի նախապատրաստման, վերահսկման և կառավարման խորհրդատվական ծառայությունների դիմաց:

Ասիական զարգացման բանկի աջակցությամբ իրականացվող էլեկտրաէներգիայի հաղորդման ցանցի վերակառուցման շրջանակներում 220կՎ «Ագարակ-2» և «Շինուհայր» ենթակայանների վերակառուցման վարկային ծրագրի շրջանակներում օգտագործվել է շուրջ 1.6 մլրդ դրամ՝ կազմելով նախատեսվածի 51.5%-ը, որը պայմանավորված է գլխավոր կապալառուի ընտրության միջազգային մրցույթի արդյունքում նախատեսվածից ավելի ցածր գներով պայմանագիր կնքելու և դրան համապատասխան կանխավճար կատարելու հանգամանքով: Ծրագրի շրջանակներում կատարվել են վճարումներ աշխատանքների վերահսկողության և կառավարման խորհրդատվական ծառայությունների, կապալառուին կատարված կանխավճարի և սահմանված կարգով նախատեսված հարկերի և տուրքերի դիմաց: Ծրագրի շրջանակներում նախատեսվում է վերակառուցել 220 կՎ լարման «Ագարակ-2», «Շինուհայր»: Ենթակայանների արդիականացումն ու վերակառուցումը կնպաստեն էներգետիկ անվտանգության և սպառողների էլեկտրամատակարարման հուսալիության բարձրացմանը:

Ասիական զարգացման բանկի աջակցությամբ իրականացվող էլեկտրաէներգիայի հաղորդման ցանցի վերակառուցման շրջանակներում կարգավարման կառավարման ավտոմատացված համակարգի (SCADA) ընդլայնման վարկային ծրագրի շրջանակներում նախատեսված միջոցներն օգտագործվել են 11.7%-ով՝ կազմելով 124.7 մլն դրամ: Շեղումը պայմանավորված է նրանով, որ ծրագրի շրջանակներում նախատեսվում էր ընտրել գլխավոր կապալառու, կնքել պայմանագիր և իրականացնել կանխավճար, սակայն որոշում է կայացվել ՎԶՄԲ-ի աջակցությամբ իրականացվող «էլեկտրահաղորդման ցանցի բարելավում» ծրագրից հանել Պահուստային կարգավարական կառավարման կենտրոնի (ՊԿԿԿ-ի) կառուցման աշխատանքները և դրանք ընդգրկել նշված ծրագրում, ինչպես նաև իրականացնել SCADA/EMS համակարգերի ընդլայնման, արդիականացման և ՊԿԿԿ-ի կառուցման միավորված ծավալով նոր մրցույթ: Ծրագրի շրջանակներում նախատեսվում է ընդլայնել կարգավարական կառավարման ավտոմատացված համակարգը (SCADA): Արդյունքում նախատեսվում է բարձրացնել էլեկտրահաղորդման ցանցի հուսալիությունը և բարելավել համակարգի կառավարումը: Ծրագրի շրջանակներում կատարվել են վճարումներ աշխատանքների վերահսկողության և կառավարման խորհրդատվական ծառայությունների ու սահմանված կարգով նախատեսված հարկերի և տուրքերի գծով:

Վերակառուցման և զարգացման միջազգային բանկի աջակցությամբ իրականացվող Էլեկտրահաղորդման ցանցի բարելավման շրջանակներում «Աշնակ» ենթակայանի վերակառուցման վարկային ծրագրի շրջանակներում օգտագործվել է ավելի քան 999 մլն դրամ: Օգտագործված միջոցները 20.7%-ով գերազանցել են նախատեսված ցուցանիշը: Ծրագրի շրջանակներում

կատարվել են վճարումներ ենթակայանի վերակառուցման աշխատանքների տեխնիկական հսկողության ծառայությունների և կապալառուի կանխավճարների, ինչպես նաև սահմանված կարգով նախատեսված հարկերի և տուրքերի գծով: Ծրագրի շրջանակներում նախատեսվում է վերակառուցել «Աշնակ» ենթակայանը: Արդյունքում նախատեսվում է բարձրացնել էլեկտրահաղորդման ցանցի հուսալիությունը:

Վերակառուցման և զարգացման միջազգային բանկի աջակցությամբ իրականացվող Էլեկտրահաղորդման ցանցի բարելավման շրջանակներում Երևանի ՋԷԿ-ի ենթակայանի վերակառուցման վարկային ծրագրի գծով օգտագործվել է 1.8 մլրդ դրամ՝ 21.4%-ով գերազանցելով նախատեսված ցուցանիշը: Հաշվետու ժամանակահատվածում կատարվել են վճարումներ ենթակայանի մրցութային փաթեթի պատրաստման խորհրդատվական ծառայությունների, կապալառուի կանխավճարի ու սահմանված կարգով նախատեսված հարկերի և տուրքերի դիմաց: Ծրագրի շրջանակներում նախատեսվում է կառուցել Երևանի ՋԷԿ-ի 220 կվ ենթակայանը: Արդյունքում ակնկալվում է բարձրացնել էլեկտրահաղորդման ցանցի հուսալիությունը:

2016 թվականին ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարության աշխատակազմի պահպանման ծախսերը կազմել են շուրջ 749.7 մլն դրամ կամ ծրագրվածի 97.5%-ը, որը հիմնականում պայմանավորված է տնտեսումներով: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը նվազել են 1.6%-ով կամ 11.8 մլն դրամով, որը հիմնականում պայմանավորված է հաստիքների կրճատման հետևանքով աշխատանքի վարձատրության ծախսերի նվազմամբ:

Հաշվետու տարում *լեռնաարդյունահանման, արդյունաբերության և շինարարության* ոլորտներին պետական բյուջեից հատկացվել է 20.6 մլն դրամ, որն ամբողջությամբ օգտագործվել է և ուղղվել սպառողներին ընդերքի մասին տեղեկատվության տրամադրման ծառայություններին: Ծրագրի շրջանակներում իրականացվում են ՀՀ ընդերքի պահպանման, հաշվառման և գրանցման, դրա վերաբերյալ ճշգրիտ տեղեկատվության տրամադրման աշխատանքներ: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 60.4%-ով կամ 7.8 մլն դրամով, ինչը հիմնականում պայմանավորված է այն հանգամանքով, որ «Հանրապետական երկրաբանական ֆոնդ» ՊՈԱԿ-ի սեփական եկամուտների նվազման հետ կապված՝ աշխատանքի վարձատրության ծախսերի փոխհատուցման համար լրացուցիչ միջոցներ են հատկացվել պետական բյուջեից:

2016 թվականին *տրանսպորտի* բնագավառում ՀՀ պետական բյուջեի ծախսերը կազմել են 65 մլրդ դրամ՝ ապահովելով ծրագրի կատարումը 115.1%-ով: Ծրագրված ցուցանիշի գերազանցումը պայմանավորված է արտաքին աջակցությամբ իրականացվող վարկային ծրագրերի բարձր կատարողականով: Նախորդ տարվա համեմատ տրանսպորտի բնագավառում բյուջետային ծախսերն արձանագրել են 2% աճ՝ պայմանավորված ճանապարհային տրանսպորտի դասի ծախսերի աճով:

Հաշվետու տարվա ընթացքում *ճանապարհային տրանսպորտի* դասի ծախսերը կազմել են շուրջ 60.2 մլրդ դրամ՝ 24.1%-ով գերազանցելով նախատեսված ցուցանիշը, ինչը պայմանավորված է արտաքին աջակցությամբ իրականացվող վարկային ծրագրերի բարձր կատարողականով: Կատարված հատկացումների հաշվին իրականացվել են 20 ծրագրեր, որոնցից տասը՝ վարկային և երկուսը՝ դրամաշնորհային:

Ասիական զարգացման բանկի աջակցությամբ իրականացվող Հյուսիս-հարավ տրանսպորտային միջանցքի զարգացման վարկային ծրագրի շրջանակներում օգտագործվել է շուրջ 1.6 մլրդ դրամ՝ ապահովելով 88% կատարողական, ինչը պայմանավորված է նրանով, որ 2016 թվականի հունիս ամսին ստորագրվել է ծրագրում ընդգրկված ճանապարհահատվածի հանձնման-ընդունման ակտ, որից հետո կազմվել է թերությունների ցանկ՝ ըստ ժամանակացույցի, որոնց վերացման համար նախատեսվել է մեկ տարի ժամանակ, այսինքն՝ կապալառուի հետ կնքված պայմանագրի համաձայն, հետերաշխիքային գումարի երկրորդ 5%-ը վճարվելու է որպես ավարտական գումար և ենթակա է վճարման 2017 թվականին: Ծրագիրը գտնվում է ավարտական փուլում: Ծրագրի առաջին տրանշի շրջանակներում վերակառուցվել և շահագործման են հանձնվել 31 կմ, այդ թվում՝ 19,6 կմ երկարությամբ Մ2 Երևան-Արտաշատ ճանապարհահատվածը և 11.4 կմ երկարությամբ Մ1 Երևան-Աշտարակ ճանապարհահատվածը: Հետերաշխիքային ժամանակահատվածի համար յուրաքանչյուր միջանկյալ վճարման վկայագրերից (ՄՎՎ) պահված 10% գումարներից 2016 թվականին վճարվել է 5%-ը, մյուս 5%-ը նախատեսվում է վճարել 2017 թվականին:

Ասիական զարգացման բանկի աջակցությամբ իրականացվող Հյուսիս-հարավ տրանսպորտային միջանցքի զարգացման ծրագրի 2-րդ տրանշի շրջանակներում օգտագործվել է շուրջ 15 մլրդ դրամ՝ 96.5%-ով գերազանցելով նախատեսված ցուցանիշը, ինչը հիմնականում պայմանավորված է նրանով, որ նախորդ տարիների ընթացքում նախատեսված, բայց չկատարված աշխատանքներն իրականացվել են 2016 թվականի ընթացքում, իրականացվել են նաև 2016 թվականի նախատեսված աշխատանքները: 2016 թվականին իրականացվել է մոտ 60 արհեստական կառույցների վրա շինարարություն, մեկնարկել են 3 կամուրջների կառուցման աշխատանքները: Հաշվետու տարում իրականացվել են նաև հողային աշխատանքներ՝ մասնավորապես հանույթ, լիցք և հողային պաստառի նախապատրաստում: 2016 թվականի սեպտեմբերի 30-ին մեկնարկել են Մ1 Երևան-Գյումրի-Վրաստան սահման ավտոճանապարհի Աշտարակ-Թալին հատվածի 52-րդ կմ-ից մինչև 57-րդ կմ՝ մոտ 5 կմ հատվածի բետոնացման աշխատանքները: Ծրագրի 2-րդ տրանշի շրջանակներում իրականացվում է նաև հողերի օտարման և տարաբնակեցման ծրագիր (ՀՕՏԾ), որի շրջանակներում օտարվել է թվով 892 անշարժ գույք, որի համար ծախսվել է 3.2 մլրդ դրամ: Բացի այդ, ճանապարհահատվածների բաժանարար գոտու

սահմաններում տեղադրված թվով 66 գովազդակիր վահանակների ապամոնտաժման նպատակով սեփականատեր կազմակերպություններին փոխհատուցվել է 72.2 մլն դրամ:

Ասիական զարգացման բանկի աջակցությամբ իրականացվող Հյուսիս-հարավ տրանսպորտային միջանցքի զարգացման ծրագրի 3-րդ տրանշի շրջանակներում օգտագործվել է 5.3 մլրդ դրամ՝ 2.4 անգամ գերազանցելով նախատեսված ցուցանիշը, ինչը հիմնականում պայմանավորված է նրանով, որ կանխավճար է վճարվել շինարարական աշխատանքների դիմաց, ինչը 2016 թվականի բյուջեով նախատեսված չի եղել: Ծրագրի գերազանցումը պայմանավորված է նաև 2015 թվականին ծրագրի ուշ մեկնարկով, որի հետ կապված՝ հողի օտարման և տարաբնակեցման ծրագրի (ՀՕՏԾ), ինչպես նաև կոմունիկացիաների տեղափոխման, տեխնիկական և հեղինակային հսկողության աշխատանքների դիմաց 2015 թվականին վճարման ենթակա գումարները վճարվել են 2016 թվականին: Նշենք, որ նախորդ տարի ծրագրի կատարողականը կազմել էր 56.2%: Ծրագրի 3-րդ տրանշի շրջանակներում նախատեսված են հետևյալ ծառայությունները և աշխատանքները՝ Թալին-Լանջիկ 18.7 կմ ճանապարհահատվածի վերակառուցման աշխատանքներ, 9 ուղեանցերի վերակառուցում (կառուցում), շինարարական աշխատանքների տեխնիկական հսկողություն, հողերի օտարման և տարաբնակեցման ծրագիր, ՀՕՏԾ արտաքին մոնիտորինգի աշխատանքներ, ՀՕՏԾ իրականացման աջակցության նպատակով իրավական մասնագետի և դաշտային աշխատանքների համակարգողի ծառայություններ: Ծրագրի շրջանակներում ավարտվել են ՀՕՏԾ իրականացման աջակցության նպատակով կնքված 2 պայմանագրեր իրավական մասնագետի և դաշտային աշխատանքների համակարգողի հետ, ընթացքի մեջ են գտնվում կոմունիկացիաների տեղափոխման աշխատանքները տեղական 5 կազմակերպություններից բաղկացած կոնսորցիումի կողմից, իրականացվում են Թալին-Լանջիկ 18.7 կմ ճանապարհահատվածի շինարարական աշխատանքների տեխնիկական հսկողության աշխատանքները, ընթացքի մեջ է նաև պայմանագրերի կառավարման խորհրդատվական ծառայությունները: «Տնտեսական զարգացման և հետազոտությունների կենտրոն» ՍՊԸ-ի կողմից իրականացվում են ՀՕՏԾ արտաքին մոնիտորինգի աշխատանքներ:

Եվրասիական զարգացման բանկի աջակցությամբ իրականացվող Հյուսիս-հարավ տրանսպորտային միջանցքի զարգացման վարկային ծրագրի շրջանակներում նախատեսված 1.9 մլրդ դրամի միջոցները չեն օգտագործվել, ինչը պայմանավորված է նրանով, որ շինարարական և նախագծային աշխատանքների իրականացման մրցույթը հայտարարվել է նախատեսված ժամկետից ուշ, և աշխատանքների կատարումը տեղափոխվել է 2017 թվական: Ծրագրով նախատեսված էր Հյուսիս-Հարավ տրանսպորտային միջանցքի զարգացման ծրագրի շրջանակներում Քաջարան-Ագարակ ճանապարհահատվածի վերակառուցման շինարարական

աշխատանքների իրականացում և տեխնիկական հսկողության խորհրդատվական ծառայությունների ձեռքբերում:

Եվրոպական ներդրումային բանկի աջակցությամբ իրականացվող Հյուսիս-հարավ տրանսպորտային միջանցքի զարգացման վարկային ծրագրի 3-րդ տրանշի շրջանակներում օգտագործվել է 1.8 մլրդ դրամ՝ ապահովելով 99.7% կատարողական: Նշված ծրագրի շրջանակներում նախատեսվում է իրականացնել Լանջիկ-Գյումրի 27.47 կմ ճանապարհահատվածի վերակառուցման աշխատանքները: Իրականացվել են հողային, ճանապարհային ստորգետնյա և վերգետնյա ենթակառուցվածների վերակառուցման աշխատանքներ:

Նշված վարկային ծրագրի դրամաշնորհային բաղադրիչի շրջանակներում նախատեսված միջոցներն օգտագործվել են 85.5%-ով՝ կազմելով 1.1 մլրդ դրամ, որը տրամադրվել է որպես կանխավճար: Ծրագրով նախատեսված է իրականացնել Լանջիկ-Գյումրի ճանապարհահատվածի վերակառուցման աշխատանքների տեխնիկական հսկողության, ինչպես նաև «Գյումրիի շրջանցիկ ճանապարհի և Գյումրի-Բավրա» ճանապարհահատվածի տեխնիկատնտեսական հիմնավորման, բնապահպանական և սոցիալական ազդեցության գնահատման ու մանրամասն նախագծման աշխատանքների և ծառայությունների ձեռքբերում: Շեղումը պայմանավորված է նրանով, որ համաձայնագիրը ստորագրվել է 2016 թվականի նոյեմբերի 18-ին և 2016 թվականին դեռևս ուժ մեջ չէր մտել, ինչի հետևանքով Լանջիկ-Գյումրի ճանապարհահատվածի վերակառուցման աշխատանքների ֆինանսավորումն իրականացվել է միայն վարկային ծրագրի 3-րդ տրանշի միջոցների հաշվին:

Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող կենսական նշանակության ճանապարհացանցի բարելավման վարկային ծրագրի շրջանակներում օգտագործվել է շուրջ 1.9 մլրդ դրամ՝ ապահովելով 61.3% կատարողական: Շեղումը պայմանավորված է նրանով, որ ավտոմոբիլային տրանսպորտի երթևեկության ինտենսիվության հաշվիչների ձեռքբերման միջազգային մրցույթը չի կայացել՝ մրցույթին մասնակցելու համար դիմած կազմակերպությունների կողմից ներկայացված հայտերը մրցույթի հրավերով սահմանված պահանջներին չհամապատասխանելու պատճառով, որով պայմանավորված՝ մրցույթը տեղափոխվել է 2017 թվական: Նախատեսվել և չի իրականացվել նաև ճանապարհային նշանների ձեռքբերումը, որը ևս նախատեսվում է իրականացնել 2017 թվականին: Շարունակվել են 2015 թվականին կնքված պայմանագրերի շրջանակներում 41 կմ երկարությամբ թվով 5 ճանապարհների վերականգնման աշխատանքները՝ շուրջ 3.7 մլրդ դրամ ընդհանուր գումարով, որից 2016 թվականի ընթացքում իրականացվել են շուրջ 1.3 մլրդ դրամի աշխատանքներ: 443.6 մլն դրամ ուղղվել է ԾԻԳ-ի պահպանման, աուդիտի, հիմնանորոգման աշխատանքների հեղինակային և տեխնիկական

հսկողության, 78.8 մլն դրամ՝ նախագծահետազոտական ծախսերին: Աշխատանքներն ամբողջությամբ կավարտվեն 2017 թվականին:

Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող կենսական նշանակության ճանապարհացանցի բարելավման լրացուցիչ վարկային ծրագրի շրջանակներում օգտագործվել է շուրջ 4.3 մլրդ դրամ՝ ապահովելով 98.6% կատարողական: Շինարարական աշխատանքների փաստացի ծավալին համապատասխան իրականացվել են նաև տեխնիկական հսկողության աշխատանքները: 2016 թվականի համար նախատեսված էր տրանսպորտային սարքավորումների և այլ մեքենաների ձեռքբերում, որը տեղափոխվել է 2017 թվական: Ծրագրի շրջանակներում 7 պայմանագրեր են կնքվել ճանապարահահատվածների վերականգնման աշխատանքների (ընդհանուր երկարությունը՝ շուրջ 61.2 կմ), ինչպես նաև դրանց տեխնիկական հսկողության և ծրագրի սոցիալական մոնիտորինգի ու գնահատման ծառայությունների մատուցման համար:

Ասիական բանկի աջակցությամբ իրականացվող քաղաքային ենթակառուցվածքների և քաղաքի կայուն զարգացման ներդրումային առաջին և երկրորդ վարկային ծրագրերի (Երևան համայնքի ղեկավարին պետության կողմից պատվիրակված լիազորության) շրջանակներում օգտագործվել է համապատասխանաբար 6.1 մլրդ դրամ և 4.7 մլրդ դրամ: Օգտագործված միջոցները գերազանցել են նախատեսված ցուցանիշները համապատասխանաբար 91.3%-ով և 33.3%-ով՝ պայմանավորված նախատեսվածից ավել աշխատանքների իրականացմամբ: Ծրագրի շրջանակներում իրականացվել են Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի և Արտաշատի խճուղու փոխհատման ճանապարհահատվածի ազդեցության ենթարկված անձանց փոխհատուցման, տեխնիկական հսկողության, նախագծային աշխատանքների և աուդիտի դիմաց վճարումներ, մասնագետների խմբի պահպանման ծախսեր, պետական տուրքերի և նոտարական ծառայությունների դիմաց վճարումներ:

Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի աջակցությամբ իրականացվող ՀՀ պետական սահմանի «Բագրատաշեն» անցման կետի կամրջի վերակառուցման վարկային ծրագրի շրջանակներում օգտագործվել է շուրջ 40.6 մլն դրամ կամ բյուջեով հատկացված գումարի 6.1%-ը: Նշված վարկային ծրագրի դրամաշնորհային բաղադրիչի շրջանակներում նախատեսվել էր ՎԶԵԲ աջակցությամբ իրականացվող ՀՀ պետական սահմանի «Բագրատաշեն» անցման կետում նոր կամրջի կառուցման ծրագրի աջակցության նպատակով խորհրդատվական ծառայությունների ձեռքբերման համար: Նախատեսված ծախսերն իրականացվել են մասամբ, քանի որ այն ուղղակիորեն կապված է վարկային ծրագրի շրջանակներում հայտարարված մրցույթների ավարտի հետ, որոնք նախատեսվում են ավարտել 2017 թվականին: Դրամաշնորհային ծրագրի շրջանակներում օգտագործվել են շուրջ 10.4 մլն դրամի միջոցներ կամ ծրագրված ցուցանիշի 25.4%-ը: Վարկային ծրագրով նախատեսվել էր իրականացնել Հայաստանի Հանրապետության և

Վրաստանի պետական սահմանի Սադախլո-Բագրատաշեն անցման կետում Դեբեդ գետի վրա նոր կամրջի կառուցման աշխատանքներ, տեխնիկական հսկողության ծառայությունների ձեռքբերում և պահպանման ծախսեր: 2016 թվականին օգտագործված միջոցներն ուղղվել են «Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի իրականացման կազմակերպություն» ՊՈԱԿ-ի պահպանմանը և գրասենյակային տարածքի վարձակալությանը: Շինարարական և նախագծային աշխատանքների և տեխնիկական հսկողության ծառայությունների համար նախատեսված ծախսերը չեն իրականացվել, քանի որ նախագծման և շինարարության իրականացման միջազգային բաց մրցույթը, ՎԶԵԲ-ի էլեկտրոնային հարթակի միջոցով, հայտարարվել է 2016 թվականի հուլիսի 27-ին: Այն բաղկացած է երկու փուլից: Առաջին փուլը գտնվում է գնահատման ընթացքում, իսկ երկրորդ փուլը կիրականացվի 2017 թվականի երրորդ եռամսյակում: Հայատանի Հանրապետության ու Վերկառուցման և Զարգացման Եվրոպական Բանկի (ՎԶԵԲ) միջև 2012 թվականի դեկտեմբերի 23-ին կնքված վարկային համաձայնագրով նախատեսված էր, որ Սադախլո-Բագրատաշեն սահմանային հսկողության անցակետի տարածքում նոր կամրջի կառուցումը իրականացնելու է Հայատանի Հանրապետությունը: Սակայն, քանի որ կամրջի մի հատվածը գտնվելու էր Վրաստանի տարածքում և հանդիսանալու էր Վրաստանի սեփականությունը, որոշում կայացվեց բանակցել վրացական կողմի հետ՝ կամրջի վրացական հատվածի ծախսերը Վրաստանի միջոցներով իրականացնելու հարցի վերաբերյալ: Բանակցությունների արդյունքում Հայաստանի և Վրաստանի կառավարությունների միջև 2014 թվականի դեկտեմբերի 24-ին ստորագրվել է համաձայնագիր, որով կողմերը համաձայնվել են, որ կամրջի կառուցումն իրականացվելու է համատեղ, և յուրաքանչյուր կողմ կրելու է կամրջի իր հատվածի շինարարության բոլոր ծախսերը: Համաձայնագիրը ՀՀ Ազգային Ժողովի կողմից վավերացվել է 2015 թվականի մայիսի 5-ին, իսկ համատեղ հանձնաժողովը կազմավորվել է 2015 թվականի հոկտեմբերի 21-ին: Այսպիսով, օբյեկտիվ պատճառներով ծրագրի իրականացումը մտել է ակտիվ փուլ (սկսվել է մրցութային գործընթացի իրականացումը) վարկային համաձայնագիրը ստորագրելուց 3 տարի հետո: Բացի վերոնշյալից, ծրագրի իրականացման առաջընթացը մեծապես կախված էր ՎԶԵԲ-ի և Վրաստանի միջև ստորագրվող վարկային համաձայնագրից, որը ստորագրվել է 2016 թվականի դեկտեմբերի 30-ին, և որի հիման վրա հայկական կողմը դիմել է ՎԶԵԲ-ին՝ ՀՀ և ՎԶԵԲ-ի միջև կնքված վարկային համաձայնագրի գումարը շուրջ 4.2 մլն եվրոյով կրճատելու նպատակով: Ընդհանրապես ծրագրի իրականացման դանդաղ ընթացքը, բացի վերոնշյալ պատճառներից, պայմանավորված է նաև նրանով, որ ծրագրի իրականացման հետ կապված որոշումները (այդ թվում՝ մրցութային գործընթացը) անցնում են մի շարք օբյեկտիվորեն ժամանակատար ընթացակարգեր: Շինարարական աշխատանքների իրականացման և տեխնիկական հսկողության խորհրդատվական

ծառայությունների մատուցման պայմանագրերը նախատեսվում է կնքել 2017 թվականին: Կամրջի նախագծման և շինարարության տևողությունը կկազմի 18 ամիս:

Եվրոպական ներդրումային բանկի աջակցությամբ իրականացվող Մ-6 Վանաձոր-Ալավերդի-Վրաստանի սահման միջպետական նշանակության ճանապարհի վերականգնման և բարելավման վարկային ծրագրի շրջանակներում օգտագործվել է շուրջ 5.8 մլրդ դրամ՝ 70.5%-ով գերազանցելով նախատեսված ցուցանիշը, ինչը պայմանավորված է նրանով, որ շինարարական աշխատանքների մրցույթները կայացել են նախատեսված ժամկետից շուտ, որի արդյունքում 2016 թվականի մայիսին արդեն կնքվել են շինարարական աշխատանքների պայմանագրերը: Կապալառուները, հաշվի առնելով ծրագրի կարևորությունը և շինարարության ընթացքում ճանապարհը փակելու հանգամանքը, աշխատանքներն իրականացրել են ավելի արագ տեմպերով: Հեղինակային և տեխնիկական հսկողությունն իրականացվել է կատարված շինարարական աշխատանքների ծավալին համապատասխան: Աշխատանքները սկսվել են 2016 թվականի սեպտեմբեր ամսից: Մ-6 ճանապարհահատվածի մնացած հատվածի վերականգնման և բարելավման նպատակով Ասիական զարգացման բանկը տրամադրելու է վարկ. վարկային պայմանագիրը ստորագրվել է 2016 թվականի նոյեմբերի 9-ին: Այժմ իրականացվում են վարկային պայմանագրի վավերացման ընթացակարգերով սահմանված գործողությունները:

Մ6 Վանաձոր-Ալավերդի-Վրաստանի սահման միջպետական նշանակության ճանապարհի վերականգնման և բարելավման վարկային ծրագրին Ասիական զարգացման բանկի աջակցության շրջանակներում նախատեսված 881 մլն դրամի միջոցները չեն օգտագործվել, ինչը պայմանավորված է տևական բանակցություններով, որոնց արդյունքում վարկային համաձայնագիրը ստորագրվել է 2016 թվականի նոյեմբերի 9-ին: Աշխատանքները սկսվելու են 2017 թվականին:

Հաշվետու տարվա պետական բյուջեից շուրջ 3.3 մլրդ դրամ է տրամադրվել պետական նշանակության ավտոճանապարհների հիմնանորոգմանը՝ ապահովելով նախատեսված ծախսերի 98.1%-ը, որը պայմանավորված է մրցույթների արդյունքում առաջացած տնտեսումներով: Ծրագրի շրջանակներում իրականացվել են 55.6 կմ երկարության ճանապարհահատվածների հիմնանորոգման աշխատանքներ, ավարտվել են 57 օբյեկտների հիմնանորոգման և անցանելիության ապահովման աշխատանքները, անցկացված մրցույթների արդյունքում կնքվել են 50.6 կմ երկարությամբ ճանապարհահատվածների և տրանսպորտային օբյեկտների հիմնանորոգման պայմանագրեր: Բացի այդ, մրցույթների արդյունքում ձևավորված տնտեսումների և կատարված վերաբաշխումների արդյունքում կնքվել են նաև հրատապ ճանաչված ճանապարհահատվածների հիմնանորոգման և անցանելիության ապահովման պայմանագրեր: Իրականացվել են նախագծային ու հեղինակային հսկողության և շինարարական աշխատանքների

տեխնիկական հսկողության աշխատանքներ: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը նվազել են 11.3%-ով կամ 413.6 մլն դրամով:

2016 թվականին ավտոճանապարհների պահպանման և շահագործման ծախսերը կազմել են շուրջ 6.2 մլրդ դրամ՝ ապահովելով նախատեսված ծախսերի 98.5%-ը: Ծրագրի շրջանակներում իրականացվել են 3510 կմ ճանապարհների՝ ձմեռային և 3375 կմ ճանապարհների ամառային և դրանց վրա գտնվող ու առանձին պահպանման հանձնվող թունելների (3 հատ), կամուրջների (5 հատ) և պարսպող հարմարանքների (549450 գծ.մ) պահպանման աշխատանքներ, նշագծվել է 1828.8 կմ ավտոճանապարհ: Նախորդ տարվա համեմատ ավտոճանապարհների պահպանման և շահագործման ծախսերն աճել են 4.1%-ով կամ 241.6 մլն դրամով՝ պայմանավորված աշխատանքների ծավալների ավելացմամբ:

Հաշվետու տարում տրանսպորտային օբյեկտների հիմնանորոգման ծախսերը կազմել են շուրջ 379 մլն դրամ՝ 98.3%-ով՝ ապահովելով ծրագրի կատարումը: Ծրագրի շրջանակներում իրականացվել են 6 տրանսպորտային օբյեկտների հիմնանորոգման աշխատանքներ: Նախորդ տարվա համեմատ տրանսպորտային օբյեկտների հիմնանորոգման ծախսերն աճել են 88.8%-ով կամ 178.2 մլն դրամով՝ պայմանավորված աշխատանքների ծավալների ավելացմամբ:

Մարզային նշանակության ավտոճանապարհների ձմեռային պահպանման, ընթացիկ պահպանման և շահագործման նպատակով ՀՀ 2016 թվականի պետական բյուջեից տրամադրվել է 829.8 մլն դրամ՝ ապահովելով նախատեսված ծախսերի 99%-ը: Ծրագրի շրջանակներում ավտոմոբիլային ճանապարհների ընթացիկ պահպանման, շահագործման և ձմեռային պահպանության ուղղություններով աշխատանքներ են կատարվել հանրապետության բոլոր մարզերում: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 6.8%-ով կամ 53.2 մլն դրամով, ինչը հիմնականում պայմանավորված է կատարված աշխատանքների ծավալների աճով:

«Տրանսպորտային փոխադրումներ» ՊՈԱԿ-ին պետական աջակցության ծախսերը կազմել են շուրջ 26.4 մլն դրամ՝ ապահովելով 100% կատարողական: Ծրագրի շրջանակներում իրականացվել են ընդհանուր օգտագործման տրանսպորտային միջոցների տեխնիկական զննության կտրոնների տպագրման և տրամադրման, անվճար երթևեկության վկայականների պատրաստման և տրամադրման, միջպետական բեռնափոխադրումների թույլտվությունների բլանկների պատրաստման և տրամադրման աշխատանքներ: 2016 թվականի դեկտեմբեր ամսին «Տրանսպորտային փոխադրումներ» ՊՈԱԿ-ը լուծարվել է, իսկ վերջինիս գործառույթներն անցել են ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարության աշխատակազմին: Նախորդ տարվա համեմատ «Տրանսպորտային փոխադրումներ» ՊՈԱԿ-ին պետական աջակցության ծախսերը չեն փոփոխվել:

Հաշվետու տարում ՀՀ-ում հսկիչ սարքերի (թվային տախոգրաֆի) համակարգի պահպանման և սպասարկման ծախսերը կազմել են 4.1 մլն դրամ՝ 23.3%-ով ապահովելով ծրագրի կատարումը: Շեղումը պայմանավորված է նրանով, որ վճարվել է պայմանագրով առաջին եռամսյակի համար նախատեսված սպասարկման գումարը: Քանի որ հաշվետու տարվա ընթացքում քարտերի պատվերներ չեն գրանցվել, նոր պայմանագրի մրցույթը կայացել է 2016 թվականի դեկտեմբերին: Վերոհիշյալ հանգամանքով էլ պայմանավորված է նաև նախորդ տարվա համեմատ նշված ծախսերի 82.8%-ով կամ 19.7 մլն դրամով նվազումը: Ծրագրի շրջանակներում շարունակվում է «Միջազգային ավտոճանապարհային փոխադրումներ կատարող տրանսպորտային միջոցների անձնակազմի աշխատանքի մասին» Եվրոպական համաձայնագրի պահանջներին համապատասխան ՀՀ-ում ներդրված հսկիչ սարքի (թվային տախոգրաֆի) համակարգի էլեկտրոնային կառավարումը: 2016 թվականի ընթացքում ՀՀ փոխադրողներին տրամադրվել է 28 թվային տախոգրաֆի քարտ՝ նախորդ տարվա 130-ի դիմաց: ՀՀ բեռնափոխադրող ընկերություններին տրամադրվել է 119 ՏՆԵԿ (Տրանսպորտի նախարարների եվրոպական կոմիտե) թույլտվություն, միջպետական 9 երթուղիների սպասարկման համար հայտարարվել է մրցույթ, իսկ երթուղիների սպասարկման համար օտարերկրյա փոխադրողներին տրվել են 49 թույլտվություններ:

Հաշվետու տարում Երևան քաղաքի փողոցների ընթացիկ նորոգման և ճաքալցման աշխատանքների իրականացմանը պետական աջակցության համար նախատեսված միջոցներն ամբողջությամբ օգտագործվել են՝ կազմելով շուրջ 1.7 մլրդ դրամ: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը նվազել են 49.4%-ով կամ 1.6 մլրդ դրամով, ինչը հիմնականում պայմանավորված է այն հանգամանքով, որ պետական բյուջեից հատկացված միջոցները կրճատվել են՝ նշված ծախսերի իրականացումը նախատեսելով Երևան քաղաքի բյուջեի հաշվին:

«Հայաստանի ավտոմոբիլային ճանապարհների տնօրինություն» ՊՈԱԿ-ին պետական աջակցության ծախսերը կազմել են 210.5 մլն դրամ՝ ապահովելով 100% կատարողական: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 11.6%-ով կամ 21.8 մլն դրամով, որը հիմնականում պայմանավորված է կազմակերպության կողմից իրականացված աշխատանքների ծավալների աճով:

Հաշվետու ժամանակահատվածում *երկաթուղային տրանսպորտի* դասի ծախսերը կազմել են 358.2 մլն դրամ և ապահովել 100% կատարողական: Նախորդ տարվա համեմատ նշված դասի ծախսերը նվազել են 37.6%-ով կամ 215.7 մլն դրամով, որը պայմանավորված է «Հարավկովկասյան երկաթուղի» ՓԲԸ-ին ուղևորափոխադրումներից ստացված վնասի դիմաց տրամադրված սուբսիդիայի նվազմամբ: Վերջինս կազմել է 312.8 մլն դրամ՝ ապահովելով 100% կատարողական: Հայաստանի Հանրապետության և «Հարավկովկասյան երկաթուղի» ՓԲԸ-ի միջև կնքված կոնցեսիոն պայմանագրի համաձայն կոնցեդենտը սուբսիդավորում է (մասնակի փոխհատուցում է) համաձայնեցված ծավալներով և ուղղություններով ուղևորափոխադրումների կոնցեսիոների

տարեկան վնասը անկախ աուդիտորի կողմից այդ վնասների հաստատված հաշվարկների ներկայացման պարագայում: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը նվազել են 41.5%-ով կամ 222.1 մլն դրամով, ինչը պայմանավորված է նրանով, որ 2015 թվականին մարվել էին նաև նախորդ տարիներին առաջացած պարտավորությունները:

Հաշվետու տարում 45.4 մլն դրամի սուբսիդիա է հատկացվել «Երկաթուղու շինարարություն» ՓԲԸ-ին՝ կազմելով ծրագրված հատկացումների 100%-ը: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 16.3%-ով, որը պայմանավորված է հարավային երկաթուղու կոնցեսիոների հետ առկա վեճի դատական ճանապարհով լուծման նպատակով իրավաբանական ծառայությունների ձեռքբերման ծախսերով:

2016 թվականին *օդային տրանսպորտի* գծով ՀՀ պետական բյուջեի ծախսերում արձանագրվել է 84.3% կատարողական՝ կազմելով 617.8 մլն դրամ: Շեղումը հիմնականում առաջացել է ՀՀ կառավարությանն առընթեր քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչության արտաբյուջետային միջոցներով իրականացվող ծախսերի գծով, որոնք 29.9%-ով զիջել են ծրագիրը՝ կազմելով 260.9 մլն դրամ: Վերջինս պայմանավորված է այն հանգամանքով, որ նախատեսվածից պակաս են կազմել անհատ անձանց և կազմակերպություններին, հիմնականում՝ մշակույթի բնագավառի ներկայացուցիչներին բարեգործական նպատակով տրամադրվող օգնությունները, ծրագրով նախատեսված արտասահմանյան գործուղումները և ներկայացուցչական ծախսերը, ինչպես նաև նախատեսվածից քիչ միջոցներ են հատկացվել «Ավիաուսումնական կենտրոն» ՓԲԸ-ին ուսումնավարժանքային թռիչքների համար: Արդյունքում նշված ծախսերը 11.9%-ով կամ 35.4 մլն դրամով զիջել են նախորդ տարվա ցուցանիշը:

247.2 մլն դրամ են կազմել ՀՀ կառավարությանն առընթեր քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչության պահպանման ծախսերը՝ ապահովելով ծրագրի 98.4%-ը, որը տնտեսումների արդյունք է: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 1.4%-ով կամ 3.4 մլն դրամով՝ պայմանավորված աշխատանքի վարձատրության ծախսերի աճով:

Հաշվետու տարում մարդասիրական բեռներ փոխադրող օտարերկրյա օդանավերի աէրոնավիգացիոն սպասարկման, թռիչք-վայրէջքի, օդանավերի կանգառի և վերգետնյա սպասարկումների ու մատուցված ծառայությունների դիմաց փոխհատուցման ծախսերը կազմել են շուրջ 10 մլն դրամ՝ ապահովելով 100% կատարողական: Ծրագիրը նախատեսվել է «Հայաստանի մանկական ասոցիացիա» բարեգործական հասարակական կազմակերպության ու Գերմանիայի «Ֆրիդենսդորֆ ինտերնացիոնալ» հասարակական կազմակերպության կողմից համատեղ իրականացվող բարեգործական ծրագրի շրջանակներում կատարվող հատուկ մարդասիրական օդանավերի սպասարկման դիմաց փոխհատուցումների իրականացման համար: Նախորդ տարվա

համեմատ նշված ծախսերն աճել են 18.1%-ով կամ 1.5 մլն դրամով՝ պայմանավորված չվերթների քանակի աճով: Հաշվետու տարում կատարվել է 5 չվերթ՝ նախորդ տարվա 2-ի դիմաց:

ՀՀ օդանավակայաններում ՌԴ զորամիավորումների օդանավերի սպասարկման և մատուցվող ծառայությունների դիմաց փոխհատուցման ծախսերը կազմել են 99.7 մլն դրամ՝ ապահովելով 99.7% կատարողական: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 1.3%-ով կամ 1.2 մլն դրամով:

2016 թվականին *խողովակաշարային և այլ տրանսպորտի* գծով պետական բյուջեի ծախսերը կազմել են շուրջ 3.9 մլրդ դրամ՝ ապահովելով 56% կատարողական: Շեղումը պայմանավորված է արտաքին աջակցությամբ իրականացվող վարկային և դրամաշնորհային ծրագրերի կատարողականով: Կատարված հատկացումների հաշվին ֆինանսավորվել են արտաքին աջակցությամբ իրականացվող երկու վարկային և մեկ դրամաշնորհային ծրագրեր:

Եվրոպական ներդրումային բանկի աջակցությամբ իրականացվող Երևանի մետրոպոլիտենի վերակառուցման երկրորդ վարկային ծրագրի և վերջինիս գծով Եվրոպական միության հարևանության ներդրումային ծրագրի երկրորդ դրամաշնորհային ծրագրի շրջանակներում յուրաքանչյուր աղբյուրից օգտագործվել է 38.5 մլն դրամ՝ ապահովելով համապատասխանաբար 2.7% և 2.3% կատարողական, որը պայմանավորված է նրանով, որ հիմնական կապալառուն հրաժարվել է պայմանագրով նախատեսված կանխավճարից: Ծրագրի շրջանակներում կատարվել են դրենաժային թունելի ջրահեռացման, երկարացման և մետրոյի թունելների վերականգնողական աշխատանքներ:

Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի աջակցությամբ իրականացվող Երևանի մետրոպոլիտենի վերակառուցման երկրորդ վարկային ծրագրի շրջանակներում օգտագործվել է ավելի քան 676.6 մլն դրամ: Նշված ծրագրի 97.2% կատարողականը պայմանավորված է կատարված աշխատանքների ծավալով: Ծրագրի շրջանակներում կատարվել են վագոնների հիմնանորոգման, ջրահեռացման պոմպային համակարգերի արդիականացման, հրշեջ սարքավորումների, մեքենավարների համար տրենաժորային համակարգի, վագոնների լվացման սարքավորումների նախագծման, մոնտաժման և մատակարարման աշխատանքներ:

Խողովակաշարային և այլ տրանսպորտի դասում ընդգրկված երկու ծրագրեր կատարվել են նախատեսված ծավալով: Մասնավորապես՝ 2.7 մլրդ դրամ սուբսիդիա է տրամադրվել Երևանի մետրոպոլիտենի աշխատանքների կազմակերպման բնագավառում պետության կողմից համայնքի ղեկավարին պատվիրակված լիազորությունների իրականացման նպատակով: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 9.2%-ով կամ 227.4 մլն դրամով՝ հիմնականում պայմանավորված էլեկտրաէներգիայի սակագնի բարձրացմամբ:

Շուրջ 424.4 մլն դրամ սուբվենցիա է տրամադրվել Երևան քաղաքին՝ վերգետնյա էլեկտրատրանսպորտով ուղևորափոխադրման ծառայությունների շրջանակներում: Նախորդ

տարվա համեմատ տվյալ ծախսերը նվազել են 28.2%-ով կամ 166.4 մլն դրամով՝ հիմնականում պայմանավորված այն հանգամանքով, որ պետական բյուջեից հատկացված միջոցները կրճատվել են՝ նշված ծախսերի իրականացումը նախատեսելով Երևան քաղաքի բյուջեի հաշվին:

2016 թվականին *կապի* ոլորտին ՀՀ պետական բյուջեից հատկացվել է 374.4 մլն դրամ, որն ամբողջությամբ օգտագործվել է և ուղղվել հեռահաղորդակցության ու կապի կանոնակարգման ծառայությունների ձեռքբերմանը: Ծրագրի շրջանակներում իրականացվել են ՀՀ հաճախականությունների բաշխումների աղյուսակի կազմման, ռադիոեթերի մոնիթորինգի, ռադիոէլեկտրոնային միջոցների և բարձր հաճախականության սարքավորումների տեղադրման, փորձաքննության և չափումների անցկացման, կապի շինարարական աշխատանքների տեխնիկական նորմերին համապատասխանության ընդունման, եթերի խանգարման աղբյուրների հայտնաբերման և վերացման գործառույթները: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը նվազել են 4.3%-ով կամ 16.9 մլն դրամով՝ պայմանավորված օպտիմալացման արդյունքում ծախսերի կրճատմամբ:

2016 թվականի ընթացքում *«Այլ բնագավառներ»* խմբի ծախսերը կազմել են ավելի քան 75.4 մլն դրամ՝ ապահովելով 40.6% կատարողական: Միջոցներն ուղղվել են զբոսաշրջության աջակցության ծառայություններին: Ծրագրից շեղումը, ինչպես նաև նախորդ տարվա համեմատ ծախսերի 59.4%-ով կամ 110.3 մլն դրամով նվազումը պայմանավորված է նրանով, որ ծրագիրն իրականացնելու նպատակով ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության ու Հայաստանի զարգացման հիմնադրամի միջև համապատասխան պայմանագիրը կնքվել է 2016 թվականի սեպտեմբերի 6-ին, ուստի ժամանակի սղության պատճառով ծրագրով նախատեսված միջոցառումներն իրականացվել են մասնակիորեն:

2016 թվականի ընթացքում *տնտեսական հարաբերությունների գծով հետազոտական և նախագծային աշխատանքների* շրջանակներում ՀՀ պետական բյուջեի ծախսերը կազմել են 119.9 մլն դրամ՝ 99.3%-ով ապահովելով ծրագրի կատարումը: Նախորդ տարվա համեմատ նշված խմբի ծախսերը նվազել են 2.1%-ով կամ 2.6 մլն դրամով՝ պայմանավորված տեխնիկական անվտանգության կանոնակարգման ծառայությունների ծախսերի նվազմամբ: Խմբում ընդգրկված են 2 ծրագրեր: Տեխնիկական անվտանգության կանոնակարգման ծառայություններին հաշվետու տարում ՀՀ պետական բյուջեից հատկացվել է շուրջ 40.5 մլն դրամ, որն օգտագործվել է նախատեսված ծավալով: Ծրագիրն իրականացվում է «Տեխնիկական անվտանգության ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից, որի գործունեությունն ուղղված է «Տեխնիկական անվտանգության ապահովման պետական կարգավորման մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով տեխնածին վթարների կանխարգելմանը, դրանց հետևանքների վերացմանը, նման վթարների հետևանքով հասարակությանը և տնտեսությանը հասցվող վնասների ռիսկի նվազեցմանը, ինչպես նաև

բնակչության և շրջակա միջավայրի պաշտպանությանը: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը նվազել են 4.5%-ով կամ 1.9 մլն դրամով՝ պայմանավորված կոմունալ ծախսերի նվազմամբ:

Պետական կարիքների համար ապրանքների, աշխատանքների (ծառայությունների) կողմնորոշիչ գների մեթոդաբանական, վերլուծական և տեղեկատվական ծառայությունների ծախսերը կազմել են 79.4 մլն դրամ՝ ապահովելով 98.9% կատարողական: Նշված ծախսերը նախորդ տարվա համեմատ գրեթե չեն փոփոխվել:

2016 թվականին *այլ դասերին չպատկանող տնտեսական հարաբերությունների* գծով փաստացի ցուցանիշը կազմել է -883.9 մլն դրամ՝ նախատեսված 597.3 մլն դրամի և նախորդ տարվա փաստացի 698.1 մլն դրամի դիմաց: Խմբում ընդգրկված ծրագրերի գծով կատարվել են 6.9 մլրդ դրամի ծախսեր՝ 82.5%-ով ապահովելով ծրագրի կատարումը, իսկ ոչ ֆինանսական ակտիվների օտարումից ստացվել է 7.8 մլրդ դրամ կամ նախատեսվածի 100.1%-ը: Խմբում ընդգրկված ծախսերի 82.5%-ով կատարումը հիմնականում պայմանավորված է Եվրոպական միության աջակցությամբ իրականացվող Հայաստանի տարածքային զարգացման դրամաշնորհային ծրագրի շրջանակներում նախատեսված միջոցները չօգտագործելու հանգամանքով: Միևնույն ժամանակ, Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող տարածքային զարգացման հիմնադրամի վարկային ծրագրի շրջանակներում նախատեսված շուրջ 2.9 մլրդ դրամի դիմաց օգտագործվել են ավելի քան 4 մլրդ դրամի միջոցներ: Նախորդ տարվա համեմատ այլ դասերին չպատկանող տնտեսական հարաբերությունների գծով ծախսերն աճել են 2.5 անգամ (կամ 4.1 մլրդ դրամով)՝ հիմնականում պայմանավորված Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող տարածքային զարգացման հիմնադրամի վարկային ծրագրի շրջանակներում օգտագործված միջոցների 6.6 անգամ (կամ 3.4 մլրդ դրամ) աճով:

Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող տարածքային զարգացման հիմնադրամի վարկային ծրագրի շրջանակներում օգտագործվել են ավելի քան 4 մլրդ դրամի միջոցներ՝ 39.6%-ով գերազանցելով նախատեսված ցուցանիշը, ինչը պայմանավորված է լրացուցիչ աշխատանքների իրականացմամբ: Ծրագիրը սկսվել է 2015 թվականին և շարունակվելու է մինչև 2020 թվականի հունիսը: Ծրագրի նպատակը համայնքային և միջհամայնքային ենթակառուցվածքի որակի և հասանելիության բարելավումն է: Ծրագրի շրջանակներում իրականացվում է կրթական, առողջապահական և սոցիալական ծառայություններ ապահովող հիմնական սոցիալական ենթակառուցվածքների (դպրոցներ, մանկապարտեզներ, առողջապահական կլինիկաներ, համայնքային կենտրոններ, մարզադահլիճներ և խաղահրապարակներ) կառուցում, վերանորոգում, հիմնանորոգում և (կամ) ընդլայնում, ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի տեղադրում, հիմնանորոգում, ոռոգման ցանցերի վերանորոգման և գյուղերում էլեկտրաֆիկացման աշխատանքների իրականացում: Նախատեսված է նաև դպրոցներին, մանկապարտեզներին և

համայնքային կենտրոններին ապահովել կահույքով: Ծրագրի շրջանակներում 2016 թվականին իրականացվել են հետևյալ միջոցառումները.

- սկսվել են շինարարական աշխատանքները 46 ծրագրերում՝ նախատեսված 40-ի փոխարեն,
- ավարտվել են շինարարական աշխատանքները 18 ծրագրերում՝ նախատեսված 15-ի փոխարեն,
- գնվել է կահույք ՀՀ տարբեր մարզերի 8 դպրոցների, 8 մանկապարտեզների, 1 առողջապահական հիմնարկի և 4 համայնքի կենտրոնների համար,
- գնվել է 7 ավտոմեքենա, համակարգչային սարքավորումներ և նոր կահույք Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի գրասենյակի համար,
- մշակվել է 52 նոր նախագիծ՝ նախատեսված 50-ի փոխարեն:

Բոլոր ընթացող շինարարական աշխատանքները հսկվել են նախագծի հեղինակների և տեխնիկական հսկողների կողմից:

ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության աջակցությամբ իրականացվող տեղական ինքնակառավարման բարեփոխումների դրամաշնորհային ծրագրի շրջանակներում օգտագործվել է 134.3 մլն դրամ՝ ապահովելով 100% կատարողական: Ծրագիրը սկսվել է 2015 թվականին և շարունակվելու է մինչև 2020 թվականի օգոստոսը: Ծրագրի նպատակը Հայաստանում վարչատարածքային բարեփոխումների միջոցով ավելի մասնակցային, արդյունավետ և հաշվետվողական կառավարմանը հասնելուն օժանդակելն է: Ծրագիրը նախատեսում է 14 խոշորացված համայնքային փնջերում, ըստ գերակայության սկզբունքի, ներդրումների կատարում համայնքային զարգացման համար, այդ թվում՝

- սոցիալական ենթակառուցվածքներում՝ կրթական, առողջապահական, մշակութային, սոցիալական նշանակության հաստատությունների կառուցում, վերակառուցում, վերանորոգում և գույքի տրամադրում,
- տնտեսական ենթակառուցվածքներում՝ խմելու և ոռոգման ջրամատակարարման համակարգերի, համայնքային և միջհամայնքային ճանապարհների կառուցում, վերակառուցում, վերանորոգում,
- սանիտարական և շրջակա միջավայրի պահպանության ենթակառուցվածքներում՝ կոյուղու ցանցերի, հեղեղատարների, հանգստի գոտիների բարեկարգում, վերանորոգում:

2016 թվականին ծրագրի շրջանակներում տեղադրվել են համակարգչային լաբորատորիաներ Տավուշի մարզի Գոշ, Հաղարծին, Թեղուտ և Դիլիջան համայնքների դպրոցներում, Դիլիջան համայնքին տրամադրվել է հատուկ տեխնիկա, այդ թվում՝ 2 ինքնաթափ ավտոմեքենա և 2 բազմաֆունկցիոնալ էքսկավատոր, գնվել են չափիչ սարքեր, համակարգիչներ և օդորակիչներ Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի գրասենյակի համար, վերազինվել են

հեռախոսային և հակահրդեհային համակարգերը, խորհրդատվական ծառայություններ են մատուցվել ծրագրի համակարգման, գնումների, ինժեներական և հաշվապահական ոլորտներում, ֆինանսավորվել են ծրագրի ընթացիկ ծախսերը:

ԱՄՆ միջազգային զարգացման գործակալության աջակցությամբ իրականացվող հանքարդյունաբերության ոլորտի թափանցիկության բարելավման դրամաշնորհային ծրագրի շրջանակներում օգտագործվել են 75.2 մլն դրամի միջոցներ՝ ապահովելով 60.9% կատարողական: Շեղումը պայմանավորված է մի քանի գործոններով, մասավորապես՝ գնումների գործընթացում ապրանքները ձեռք են բերվել նախատեսվածից ցածր գներով, հայտարարված որոշ մրցույթների մասնակիցներ չեն եղել, բազմաշահառու խմբի (ԲՇԽ) քարտուղարության աշխատանքներն իրականացնելու նպատակով նախատեսվում էր վարձել երկու փորձագետ, սակայն կնքվել է աշխատանքային պայմանագիր մեկ փորձագետի հետ, իսկ մյուսի հետ պայմանագրի կնքումը նախատեսվել է իրականացնել հաջորդ տարի, արդյունահանող ճյուղերի թափանցիկության նախաձեռնության (ԱՃԹՆ) խորհրդի նիստի հետ կապված գործուղումներն իրականացվել են Համաշխարհային բանկի ֆինանսավորմամբ: Ծրագրի նպատակն է օժանդակել ՀՀ կառավարությանը՝ հանքարդյունաբերության ոլորտի թափանցիկության և հաշվետվողականության խթանմանն ուղղված ջանքերի իրագործման հարցում: Հատկացվող միջոցներն ուղղվելու են հանրապետական երկրաբանական ֆոնդի տվյալների թվայնացման ու հրապարակման և արդյունահանող ճյուղերի թափանցիկության նախաձեռնությանը (EITI/ԱՃԹՆ) միանալուն ուղղված նախապատրաստական քայլերի իրականացմանը: Ծրագրի շրջանակներում երկրաբանական ֆոնդի տվյալների թվայնացման համար իրականացվել է անհրաժեշտ սարքավորումների գնում, թվայնացման համար տենդերի արդյունքում հաղթող կազմակերպության հետ կնքվել է պայմանագիր, և 2016 թվականի դեկտեմբերի 20-ի դրությամբ թվայնացվել են նախատեսված նյութերը, կազմակերպության կողմից մշակվել է նաև www.geo-fund.am կայքը, որտեղ տեղադրվելու են թվայնացված նյութերը, թվայնացման աշխատանքները շարունակվում են: Արդյունահանող ճյուղերի թափանցիկության նախաձեռնությանը միանալուն օժանդակելու համար կազմակերպվել են ԱՃԹՆ բազմաշահառու խմբի աշխատանքային հանդիպումներ, ինչպես նաև ԱՄՆ-ից ժամանած փորձագետների կողմից կազմակերպվել է երկօրյա սեմինար: ԲՇԽ-ի և փորձագետի համատեղ աշխատանքների արդյունքում կազմվել է ԱՃԹՆ հայաստանյան ծրագիրը, որն անդամակցության հայտի հետ միասին դեկտեմբերի 28-ին ուղարկվել է ԱՃԹՆ միջազգային քարտուղարություն:

Եվրոպական միության աջակցությամբ իրականացվող Հայաստանի տարածքային զարգացման դրամաշնորհային ծրագրի գծով նախատեսված 2.5 մլրդ դրամի միջոցները չեն օգտագործվել՝ պայմանավորված աշխատանքները 2017 թվական հետաձգելու հանգամանքով: Ծրագիրը միտված է Հայաստանի տարածքային համաչափ զարգացմանը, ենթակառուցվածքների

բարելավմանը: Ծրագրի ընդհանուր արժեքը կազմում է 11.750.000 եվրո, որից ԵՄ-ն ստանձնում է առավելագույնը 10.000.000 եվրո գումար ֆինանսավորելու պարտավորություն:

Մթնոլորտային երևույթների վրա ակտիվ ներգործության ծառայության գծով նախատեսված 291.4 մլն դրամն ամբողջությամբ օգտագործվել է: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը նվազել են 3.2%-ով կամ 9.7 մլն դրամով՝ պայմանավորված հաստիքների կրճատմամբ:

Պետական ռեզերվների գործակալության համակարգի հիմնարկների պահպանման ծախսերը ևս ամբողջությամբ կատարվել են՝ կազմելով 281.5 մլն դրամ: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 4.4%-ով կամ 11.9 մլն դրամով:

Հաշվետու տարում նյութական ռեսուրսների ՀՀ պետական պահուստի ձևավորման ու պահպանման ծախսերը կազմել են 25.3 մլն դրամ կամ նախատեսվածի 97.6%-ը: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 76.9%-ով կամ 11 մլն դրամով:

566 մլն դրամ են կազմել տվյալ դասում ընդգրկված՝ գործադիր իշխանության, պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների պահպանման (նախարարությունների աշխատակազմերի մասով) ծախսերը՝ 97.5%-ով ապահովելով ծրագրի կատարումը: Շեղումը պայմանավորված է տնտեսումներով: Միջոցները հատկացվել են ՀՀ տրանսպորտի և կապի նախարարության աշխատակազմի պահպանմանը: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը նվազել են 2.8%-ով կամ 16.4 մլն դրամով՝ հիմնականում պայմանավորված թափուր հաստիքների առկայության հետևանքով աշխատանքի վարձատրության ծախսերի կրճատմամբ:

Երևան քաղաքի Կառավարական N 2 մասնաշենքի հասցեում գտնվող շենքի բաղադրիչը համարվող տարածքները սեփականատերերից («Արարատ-Ռեստորան», «Նոյան Տապան 1» և «ԱՂԺ» ՍՊԸ-ներ) ձեռքբերման և Երևան քաղաքի Կառավարական N 2 շենքի սեփականատեր «Տանգո» ՓԲԸ օտարման գործարքների վճարահաշվարկային գործառնությունների իրականացման ծրագրի շրջանակներում ստացվել են շուրջ 3 մլրդ դրամ մուտքեր և կատարվել 182.5 մլն դամի ծախսեր՝ ապահովելով 100% կատարողական: Մուտքերից 2.7 մլրդ դրամն ուղղվել է վերոնշյալ կազմակերպությունների բաժնետոմսերի ձեռքբերմանը:

Պետական պահուստից նյութական արժեքների թարմացման, փոխարինման, փոխառման և ապաամրագրման գործառնությունների գծով 2016 թվականին ոչ ֆինանսական ակտիվների օտարումից ստացվել են 39.4 մլն դրամի արտաբյուջետային միջոցներ՝ 2.3 անգամ գերազանցելով ծրագրի կատարումը:

Ծախսերի այս խմբում ներառվել են «ՀՀ 2016 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն կատարված հատկացումները: ՀՀ պետական բյուջեից առանց սահմանափակման իրականացվել են 1.4 մլրդ դրամի ծախսեր: Նշված գումարից 877.9 մլն դրամը

կազմել են ՀՀ պետական կառավարման մարմինների կողմից դիմումներ, հայցադիմումներ, դատարանի վճիռների և որոշումների դեմ վերաքննիչ և վճռաբեկ բողոքներ ներկայացնելիս՝ «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքով սահմանված վճարումները, 464.4 մլն դրամը՝ պետական մասնակցությամբ առևտրային կազմակերպությունների կանոնադրական կապիտալում պետական մասնակցության նվազեցման ճանապարհով ակտիվների կազմից գույք առանձնացնելիս գույքն ստացող պետական կառավարչական հիմնարկի կողմից մատակարարին վճարման ենթակա ԱԱՀ-ի պարտավորության կատարման գծով ծախսերը և 27.9 մլն դրամը՝ պետական մասնակցությամբ առևտրային կազմակերպությունների կանոնադրական կապիտալում պետական մասնակցության նվազեցման ճանապարհով ակտիվների կազմից գույք առանձնացնելիս գույքն ստացող պետական կառավարչական հիմնարկի կողմից մատակարարին վճարման ենթակա շահութահարկի կամ շրջանառության հարկի գծով պարտավորության կատարման գծով ծախսերը:

<u>Շրջակա միջավայրի պաշտպանություն</u>

2016 թվականին *շրջակա միջավայրի պաշտպանության* բնագավառում ՀՀ պետական բյուջեի ծախսերը կազմել են 4.5 մլրդ դրամ կամ ծրագրով նախատեսվածի 95.4%-ը: Ծրագրից շեղումը հիմնականում պայմանավորված է արտաքին աջակցությամբ իրականացվող վարկային և դրամաշնորհային ծրագրերի կատարողականով: Հիմնականում նշված ծրագրերի շրջանակներում կատարված ծախսերի նվազումը հանգեցրել է նախորդ տարվա համեմատ շրջակա միջավայրի պաշտպանության բնագավառի ծախսերի անկմանը 21.1%-ով կամ շուրջ 1.2 մլրդ դրամով:

Հաշվետու ժամանակահատվածում *աղբահանման* խմբում ռադիոակտիվ թափոնների վնասազերծման ծառայությունների համար նախատեսված 35.2 մլն դրամն օգտագործվել է ամբողջությամբ, որը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ աճել է 1.3%-ով: Ծրագրի շրջանակներում «Ռադիոակտիվ թափոնների վնասազերծում» ՓԲԸ-ի կողմից իրականացվում են միջուկային և ճառագայթային անվտանգության նորմերի ու կանոնների պահպանմամբ ռադիոակտիվ թափոնների կենտրոնացված փոխադրումը, ուսումնասիրումը, վնասազերծումը, պահպանումը և թաղումը՝ ըստ առաջացած և հայտնաբերված թափոնների, մարդկանց և շրջակա միջավայրի պաշտպանությունն իոնացնող ճառագայթման վնասակար ազդեցությունից:

Վերակառուցման և զարգացման Եվրոպական բանկի աջակցությամբ իրականացվող Երևանի կոշտ թափոնների կառավարման դրամաշնորհային ծրագրի շրջանակներում օգտագործվել է նախատեսված միջոցների 10.5%-ը՝ 11.8 մլն դրամ, ինչի հետևանքով աղբահանում խմբի կատարողականը կազմել է 31.8%: Ծրագրի ցածր կատարողականը պայմանավորված է նրանով, որ

այն առաջին անգամ է իրականացվում Հայաստանում, և պահանջվել են երկարատև քննարկումներ խորհրդատվական կազմակերպությունների հետ աշխատանքների համակարգման և բաշխման գործընթացների վերաբերյալ: Ծրագրի շրջանակներում Նուբարաշենի առկա աղբավայրի հարակից՝ շուրջ 32 հա տարածքում նախագծվել, կառուցվել և շահագործվել է եվրոպական չափանիշներին համապատասխան նոր աղբավայր, ինչպես նաև մեկուսացվել են Նուբարաշենի և Աջափնյակի առկա աղբավայրերը:

2016 թվականին *օդի աղտոտման դեմ պայքարի* դասի ծրագրերին ուղղվել է ավելի քան 177.2 մլն դրամ՝ 100%-ով կատարելով տարեկան ծրագիրը: Նախորդ տարվա համեմատ օդի աղտոտման դեմ պայքարի դասի ծախսերն ավելացել են 3.7%-ով՝ հիմնականում պայմանավորված ջրային օբյեկտների և օդային ավազանի աղտոտվածության վիճակի մոնիտորինգի ծառայությունների շրջանակներում կատարված ծախսերի աճով:

Հատկացված գումարից շուրջ 16.7 մլն դրամը թափոնների ուսումնասիրության ծառայությունների ֆինանսավորման նպատակով տրամադրվել է «Թափոնների ուսումնասիրության կենտրոն» ՊՈԱԿ-ին, որի կողմից ուսումնասիրվել և վերլուծվել են ՀՀ տարածքում գործող 1158 կազմակերպությունների կողմից ներկայացված վարչական վիճակագրական հաշվետվությունների տվյալները՝ նախատեսված 1050-ի փոխարեն, կատարվել են աշխատանքներ թափոնների ու դրանց օգտահանման, վնասազերծման տեխնոլոգիաների վերաբերյալ տվյալների հավաքման, ուսումնասիրման և վերլուծության ուղղությամբ (ուսումնասիրվել է 42 տեխնոլոգիա), թափոնների գոյացման, վերամշակման ու օգտահանման օբյեկտների ռեեստրի ստեղծման աշխատանքներին աջակցելու նպատակով ուսումնասիրվել են թափոնների գոյացման 20 օբյեկտ և թափոնների հեռացման 11 վայր, «Կայուն օրգանական աղտոտիչների մասին» Ստոկհոլմի կոնվենցիայով ՀՀ ստանձնած պարտավորությունների կատարման նպատակով «Թափոնների ուսումնասիրության կենտրոն» ՊՈԱԿ-ի անալիտիկ լաբորատորիայում կատարվել են շրջակա միջավայրի օբյեկտներում՝ հողում, ջրում կայուն օրգանական աղտոտիչների մնացորդային քանակների 884 որոշում՝ նախատեսված 390-ի փոխարեն, կատարվել են աշխատանքներ թափոնների տարանջատ հավաքման և տեսակավորման միջազգային փորձի, երկրորդային հումքի (թուղթ, պոլիէթիլեն և այլն) վերամշակման և օրգանական թափոնների կրկնակի օգտագործման միջազգային փորձի ուսումնասիրման նպատակով (ուսումնասիրվել է երկրորդային հումքի վերամշակման 10 մեթոդ) և ձեռնարկատիրական գործունեության շրջանակներում իրականացվել են թափոնների 372 անձնագրերի մշակման աշխատանքներ: Նախորդ տարվա համեմատ նշված ծրագրի ծախսերը մնացել են գրեթե անփոփոխ:

Ջրային օբյեկտների և օդային ավազանի աղտոտվածության վիճակի մոնիթորինգի իրականացմանն ուղղվել է 160.6 մլն դրամ: Ծրագրի շրջանակներում 2016 թվականին

իրականացվել են ՀՀ մակերևութային ջրերի՝ մեծ և միջին մեծության 42 գետի և Սևանա լճի ջրի որակի դիտարկումներ 131 դիտակետում՝ տարվա ընթացքում 7-12 անգամ հաճախականությամբ, ՀՀ բնակավայրերի օդային ավազանի գետնամերձ շերտի որակի մոնիթորինգ 11 քաղաքներում և 1 գյուղում, ինչպես նաև Ամբերդի կայանում՝ «Եվրոպայի մեծ հեռավորությունների վրա անդրսահմանային աղտոտիչների տարածման դիտարկումներ և գնահատում» ծրագրի շրջանակում: Մշտադիտարկվել են մթնոլորտային օդի կարևորագույն աղտոտիչներից ազոտի օքսիդների, ծծմբի երկօքսիդի, ածխածնի մոնօքսիդի, գետնամերձ օզոնի և ընդհանուր փոշու պարունակությունները: ՀՀ բնակավայրերի օդային ավազանի որակի 2016 թվականի մոնիթորինգի արդյունքների համաձայն ծծմբի երկօքսիդի սահմանային թույլատրելի կոնցենտրացիայից (ՍԹԿ) գերազանցում դիտվել է Ալավերդի, Վանաձոր և Գյումրի քաղաքներում՝ համապատասխանաբար 1.2-2.0, 1.2-1.9 և 1.2-1.8 անգամ: Որոշված մյուս ցուցանիշների կոնցենտրացիաները չեն գերազանցել համապատասխան ՍԹԿ-ները: Նախորդ տարվա համեմատ ջրային օբյեկտների և օդային ավազանի աղտոտվածության վիճակի մոնիթորինգի ծախսերն աճել են 4.0%-ով՝ պայմանավորված 2015 թվականի հուլիսի 1-ից նվազագույն աշխատավարձի բարձրացմամբ:

Կենսաբազմազանության և բնության պաշտպանության դասի ծրագրերին ուղղվել է շուրջ 2.6 մլրդ դրամ՝ 98.1%-ով ապահովելով տարեկան ծրագրի կատարումը: Շեղումը հիմնականում պայմանավորված է Աբու-Դաբիի Զարգացման հիմնադրամի աջակցությամբ իրականացվող Արփա-Սևան թունելի հիմնանորոգման վարկային ծրագրի կատարողականով: Նախորդ տարվա համեմատ կենսաբազմազանության և բնության պաշտպանության խմբի ծախսերում արձանագրվել է ծախսերի 20.6%-ով նվազում՝ հիմնականում պայմանավորված վերոհիշյալ վարկային ծրագրի շրջանակներում կատարված ծախսերի նվազմամբ: Բացի այդ, 2015 թվականի ընթացքում ֆինանսավորվել են կենսաբազմազանության և բնության պաշտպանության դասի երկու ծրագիր՝ «Ձկան պաշարների համալրման ծառայություններ» և «Ջրավազանային կառավարման պլանների կազմման ծառայություններ», որոնց գծով 2016 թվականին հատկացումներ չեն կատարվել:

2016 թվականին Սևանա լճի ջրածածկ անտառատնկարկների մաքրման ծառայություններին ուղղվել է 117.7 մլն դրամ՝ 93.8%-ով կատարելով ծրագիրը: Շեղումը պայմանավորված է կատարված փաստացի աշխատանքների ծավալով. նախատեսված 93 հա-ի դիմաց աշխատանքներ են իրականացվել 88.3 հա տարածքներում: Արդյունքում նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը նվազել են 6.1%-ով կամ 7.7 մլն դրամով:

Սևանա լճում և նրա ջրահավաք ավազանում ձկան և խեցգետնի պաշարների հաշվառման ծառայություններին ուղղվել է 7.6 մլն դրամ՝ 99.7%-ով ապահովելով տարեկան ծրագրի կատարումը: Սևանա լճում խեցգետնի արդյունագործական պաշարները 2016 թվականին կազմել են 4582 տոննա: Ծրագրի շրջանակներում կատարվել են նաև Սևանա լճի և էնդեմիկ ձկնատեսակների

համար ձվադրավայր հանդիսացող 7 գետերի մանրակրկիտ հիդրոէկոլոգիական հետազոտություններ, ուսումնասիրվել է դրանց էկոլոգիական վիճակը, բացահայտվել են բնական ձվադրությանը խոչընդոտող գործոնները: Նշենք, որ նախորդ տարի այս ծրագիրը ֆինանսավորվել էր ՀՀ կառավարության պահուստային ֆոնդի հաշվին:

2016 թվականին «Սևան» ազգային պարկի պահպանության, պարկում գիտական ուսումնասիրությունների, անտառտնտեսական աշխատանքների իրականացման համար նախատեսված 261.0 մլն դրամն ամբողջությամբ օգտագործվել է: Ծրագրի շրջանակներում իրականացվել են ՀՀ բնության հատուկ պահպանվող (ԲՀՊ) տարածքների պահպանության, այդ տարածքներում գիտական ուսումնասիրությունների և անտառտնտեսական աշխատանքների գծով 2016 թվականի պետական պատվերով ծրագրված միջոցառումները: «Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի կողմից ՀՀ քաղաքացիներին մատուցվել է անվճար ծառայություն «Սևան» ազգային պարկի N 1,2,3 և Շորժայի հասարակական լողափերում: Այցելուների ընդհանուր թիվը տարվա ընթացքում կազմել է ավելի քան 300 հազար մարդ: «Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի Սևանի և Մարտունու մասնաճյուղերում, համապատասխանաբար 2 և 5 հա տարածքների վրա իրականացվել են անտառվերականգնման աշխատանքներ: Տնկվել են թվով 10500 հատ բարդի տեսակի ծառերի տնկիներ: «Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի Մարտունու մասնաճյուղի տարածքում հիմնվել է անտառային արժեքավոր ծառատեսակների՝ սոճենու, թխկիի, հացենու, բարդու և այլ տեսակների գիտափորձարարական տնկարան՝ դրանց վեգետացիայի պոտենցիալի ուսումնասիրության նպատակով: 2015 թվականի համեմատ տվյալ ծախսերը նվազել են 2.5%-ով՝ պայմանավորված ՊՈԱԿ-ի հաստիքների, տրանսպորտային միջոցների ու դրանց պահպանման ծախսերի կրճատմամբ:

«Դիլիջան» ազգային պարկի պահպանության, պարկում գիտական ուսումնասիրությունների, անտառտնտեսական աշխատանքների իրականացման համար պետական բյուջեով նախատեսված 137.4 մլն դրամը նույնպես ամբողջությամբ օգտագործվել է: Ծրագրի շրջանակներում իրականացվել են «Դիլիջան» ազգային պարկի պահպանությանը և տարածքների արդյունավետ օգտագործմանը նպատակաուղղված, ինչպես նաև գիտական ուսումնասիրությունների գծով համապատասխան միջոցառումներ և ծրագրեր: «Դիլիջան» ազգային պարկում հաշվետու տարում իրականացված անտառվերարտադրության աշխատանքների շրջանակներում տնկվել է 5 հա անտառ, կատարվել է 3 հա անտառի լրացում, 17 հա անտառի միանվագ խնամք, 450 կգ անտառային սերմերի մթերում և 4 հա անտառի ցանքս: Պահպանության ռեժիմն ուժեղացնելու նպատակով կառուցվել է 10 նոր ուղեփակոց: Անտառպահպանական աշխատանքների շրջանակներում իրականացվել են 5 կմ հակահրդեհային նշանակության ճանապարհների կառուցում, 8 կմ հակահրդեհային նշանակության

ճանապարհների վերանորոգում, 2 կմ հանքայնացված շերտերի կառուցում: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը մնացել են գրեթե անփոփոխ:

«Արգելոցապարկային համալիր» ՊՈԱԿ-ի տնօրինության ներքո գտնվող ԲՀՊ տարածքների պահպանության, տարածքներում գիտական ուսումնասիրությունների, անտառտնտեսական աշխատանքների կատարման ծառայությունների գծով հատկացվել է 134.3 մլն դրամ, որն ամբողջությամբ օգտագործվել է: 2016 թվականին «Արգելոցապարկային համալիր» ՊՈԱԿ-ի տնօրինման ներքո գտնվող ԲՀՊ տարածքներում կատարվել են ծրագրային աշխատանքներ, այդ թվում՝ Ստեփանավանի «Սոճուտ», Իջևանի «Դենդրոպարկ», Բերդի «Սորաններ», Վանաձորի «Սարուխանյան Ժ. անվան» դենդրոպարկերում, «Ջրվեժ» անտառպարկում, «Էրեբունի» պետական արգելոցում և «Որդան կարմիր» արգելավայրում իրականացվել են պահպանության, պաշտպանության և գիտական ուսումնասիրության աշխատանքներ: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը գրեթե չեն փոփոխվել:

«Խոսրովի անտառ» պետական արգելոցի պահպանության, գիտական ուսումնասիրությունների իրականացման նպատակով հատկացվել է 121.1 մլն դրամ՝ ապահովելով ծրագրի 100% կատարողական: Հաշվետու տարում «Խոսրովի անտառ» պետական արգելոց» ՊՈԱԿ-ի գործունեությունը հիմնականում նպատակաուղղված է եղել պետական արգելոցի տնօրինման տակ գտնվող արգելավայրերի բնական էկոհամակարգերի լանդշաֆտային և կենսաբանական բազմազանության ու բնության ժառանգության պահպանության աշխատանքներին: Իրականացվել է 7.5 կմ հակահրդեհային նշանակության ճանապարհների կառուցում: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը մնացել են գրեթե անփոփոխ:

ՀՀ 2016 թվականի պետական բյուջեից 45.3 մլն դրամ է հատկացվել շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության ծառայություններին, որն ամբողջությամբ օգտագործվել է: Ծրագրի շրջանակներում փորձաքննության են ներկայացվել թվով 197 նախատեսվող գործունեությունների և հիմնադրութային փաստաթղթերի նախնական գնահատման հայտեր: Հաշվետու տարվա ընթացքում սահմանված կարգով տեխնիկական առաջադրանքներ են տրամադրվել թվով 69 նախատեսվող գործունեությունների և հիմնադրութային փաստաթղթերի նախնական գնահատման հայտերի, 113 նախատեսվող գործունեությունների և հիմնադրութային փաստաթղթերի գնահատման հաշվետվությունների վերաբերյալ: Փորձաքննության գործընթացում են գտնվում 43 նախատեսվող գործունեությունների, հիմնադրութային փաստաթղթերի նախնական գնահատման հայտեր և գնահատման հաշվետվություններ: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 1.7%-ով՝ պայմանավորված էլեկտրաէներգիայի սակագնի բարձրացման հետևանքով առաջացած լրացուցիչ ծախսերի փոխհատուցմամբ և 2015 թվականի հուլիսի 1-ից նվազագույն աշխատավարձի բարձրացմամբ:

Աբու-Դաբիի Զարգացման հիմնադրամի աջակցությամբ իրականացվող Արփա-Սևան թունելի հիմնանորոգման վարկային ծրագրի շրջանակներում օգտագործվել են 1.5 մլրդ դրամի միջոցներ՝ ապահովելով ծրագրի 97.3% կատարողական, որը պայմանավորված է կատարված փաստացի աշխատանքների ծավալով: Հայաստանի Հանրապետության և Աբու Դաբիի զարգացման հիմնադրամի միջև Արփա-Սևան թունելի վերականգնման ծրագրի ֆինանսավորման վարկային համաձայնագիրը կնքվել է 2007 թվականի դեկտեմբերի 12-ին: Ծրագրի իրականացման ժամկետ է սահմանված մինչև 2017 թվականի դեկտեմբերի 31-ը: Ծրագրի նպատակն է Սևանա լճի մակարդակի բարձրացման և բնապահպանական կայունության պահպանման նպատակով գետերից Սևանա լիճ ջուր տեղափոխող 48 կմ երկարությամբ Արփա-Սևան հիդրոհամակարգային որոշ հատվածների վերականգնումը, վերանորոգումը և շինարարությունը: 2016 թվականի ընթացքում իրականացվել են Արփա-Սևան թունելի 37 գծմ հատակների վերականգնում և 2132 քմ տորկրետ լցամղման աշխատանքներ:

«Արփի լիճ» ազգային պարկի պահպանության ծառայություններին հատկացվել է 41.8 մլն դրամ, որն ամբողջությամբ օգտագործվել է: Ծրագրի շրջանակներում 2016 թվականին իրականացվել են մեծածավալ աշխատանքներ ինչպես պահպանության, այնպես էլ գիտական առումով, ինչն իր դրական ազդեցությունն է ունեցել պարկի կենսաբազմազանության վրա: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը մնացել են գրեթե անփոփոխ:

2016 թվականին «Զիկատար» պետական արգելավայրի պահպանության, գիտական ուսումնասիրությունների կատարման ծառայությունների նպատակով նախատեսված 15.6 մլն դրամի ծախսերն ամբողջությամբ կատարվել են: «Զիկատար» բնապահպանական կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից 2016 թվականին իրականացվել են «Զիկատար» պետական արգելավայրի տարածքում գտնվող բնական էկոհամակարգերի լանդշաֆտային և կենսաբանական բազմազանության, բնության ժառանգության պահպանության, գիտական ուսումնասիրությունների, անտառտնտեսական աշխատանքներ, պետական արգելավայրի ընդհանուր մակերեսով 150 հա տարածքներում պահպանության ընդհանուր միջոցառումներ: Արգելավայրի առավել հրդեհավտանգ 10000 քմ ընդհանուր մակերեսով տարածքներում իրականացվել է հողի հակահրդեհային հանքայնացում (հողի վերին շերտի հեռացում): Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը մնացել են գրեթե անփոփոխ:

Կովկասի տարածաշրջանային բնապահպանական կենտրոնի հայաստանյան մասնաճյուղի գրասենյակի վարձակալության ծառայությունների նպատակով նախատեսված 7.1 մլն դրամ ծախսերն ամբողջությամբ կատարվել են: Հատկացված միջոցների հաշվին ՀՀ բնապահպանության նախարարության և «Կովկասի տարածաշրջանային բնապահպանական կենտրոն» հիմնադրամի հայաստանյան մասնաճյուղի միջև կնքված պայմանագրի համաձայն իրականացվել են մասնաճյուղի

գրասենյակի վարձակալության և կոմունալ ծառայությունների վճարման ծախսերը, որոնք նախորդ տարվա համեմատ մնացել են գրեթե անփոփոխ:

«Զանգեզուր» կենսոլորտային համալիր» ՊՈԱԿ-ի տնօրինության ներքո գտնվող ԲՀՊ տարածքների պահպանության գիտական ուսումնասիրությունների, անտառտնտեսական աշխատանքների կատարման ծառայությունների նպատակով նախատեսված շուրջ 135.3 մլն դրամ ծախսերն ամբողջությամբ կատարվել են: Ծրագրի շրջանակներում 2016 թվականին «Զանգեզուր» կենսոլորտային համալիր» ՊՈԱԿ-ի տնօրինության տարածքներում ուսումնասիրվել են ողնաշարավոր կենդանիների որոշ տեսակների (հայկական մուֆլոն, բեզոարյան այծ, գորշ արջ, եվրոպական այծյամ, փորսուղ, եվրոպական նապաստակ, գայլ, անտառային կատու և այլն) ինչպես ձմեռային կենսակերպը, այնպես էլ սեզոնային փոփոխությունների հետ կապված միգրացիան, տարիքային և քանակային կազմը: Իրականացվել են պահպանության աշխատանքներ ավելի քան 79 հազ. հա բնության հատուկ պահպանվող տարածքներում: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը գրեթե չեն փոփոխվել:

2016 թվականին Արփա-Սևան N 2 թունելում առանձին վթարային հատվածների հիմնանորոգման նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման աշխատանքների ֆինանսավորման նպատակով հատկացվել է 18.0 մլն դրամ, որից օգտագործվել է 17.9 մլն դրամը:

2016 թվականին *այլ դասերին չպատկանող շրջակա միջավայրի պաշտպանության* դասի ծախսերը կազմել են շուրջ 1.7 մլրդ դրամ կամ ծրագրվածի 96.2%-ը: Շեղումը հիմնականում պայմանավորված է տվյալ դասում ներառված՝ գործադիր իշխանության, պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների (նախարարությունների աշխատակազմերի) պահպանման ծախսերի, ՄԱԿ-ի շրջակա միջավայրի (ՇՄ) ծրագրի և Դանիայի տեխնիկական համալսարանի համագործակցության կենտրոնի աջակցությամբ իրականացվող «Տեխնոլոգիաների կարիքների գնահատում» և Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող՝ Օժանդակություն ինստիտուցիոնալ կարողությունների զարգացմանը՝ հանքարդյունաբերության ոլորտում բնապահպանական կառավարումը, ներառումը և թափանցիկությունն ապահովելու նպատակով Ինստիտուցիոնալ զարգացման հիմնադրամի (ԻԶՀ) դրամաշնորհային ծրագրերի կատարողականով: Նախորդ տարվա համեմատ տվյալ դասի ծախսերը նվազել են 24.6%-ով, ինչը հիմնականում պայմանավորված է «Ընկերությունների կողմից վճարվող բնապահպանական վճարների նպատակային օգտագործման մասին» ՀՀ օրենքի համաձայն բնապահպանական ծրագրերի իրականացման համար ՀՀ համայնքներին տրամադրված սուբվենցիաների և Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող՝ վերոհիշյալ դրամաշնորհային ծրագրի շրջանակներում կատարված ծախսերի նվազմամբ, ինչպես նաև 2015 թվականին ֆինանսավորված երկու դրամաշնորհային ծրագրերի ավարտով:

Գործադիր իշխանության, պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների պահպանման (նախարարությունների աշխատակազմերի մասով) ծախսերը կազմել են ավելի քան 1.3 մլրդ դրամ՝ ապահովելով ծրագրի 98.0%-ը: Միջոցները հատկացվել են ՀՀ բնապահպանության նախարարության աշխատակազմի պահպանմանը: Նախորդ տարվա համեմատ այս ծախսերը նվազել են 1.8%-ով կամ 24.4 մլն դրամով՝ պայմանավորված տնտեսումներով:

«Ընկերությունների կողմից վճարվող բնապահպանական վճարների նպատակային օգտագործման մասին» ՀՀ օրենքի համաձայն բնապահպանական ծրագրերի իրականացման համար հաշվետու տարում ՀՀ համայնքներին տրամադրվել են 89.7 մլն դրամ սուբվենցիաներ՝ կազմելով ծրագրվածի 95.1%-ը: Ծրագրի շրջանակներում 2016 թվականին բնապահպանական ծրագրերի իրականացման համար սուբվենցիաներ են հատկացվել 9 համայնքների: Հատկացումները 2015 թվականի համեմատ նվազել են 69.3%-ով կամ 203.0 մլն դրամով, ինչը պայմանավորված է «Ընկերությունների կողմից վճարվող բնապահպանական վճարների նպատակային օգտագործման մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածում նշված ընկերությունների կողմից կատարված համապատասխան բնապահպանական վճարների և ազդակիր համայնքների կողմից ներկայացված ծրագրերի թվի նվազմամբ:

Բնապահպանական ոլորտի գծով վերլուծական տեղեկատվական ծառայությունների իրականացման նպատակով պետական բյուջեից տրամադրվել է 20.5 մլն դրամ՝ ապահովելով ծրագրի 100% կատարողական: Ծրագրի շրջանակներում ապահովվել են ՀՀ բնապահպանության նախարարության տեղային համակարգչային ցանցի առկա համակարգչային տեխնիկայի ծրագրային ու տեխնիկական սպասարկումը և վերանորոգումը: Նախորդ տարվա համեմատ բնապահպանական ոլորտի գծով վերլուծական տեղեկատվական ծառայությունների ծախսերը մնացել են գրեթե անփոփոխ:

Հայաստանի Հանրապետության տարածքի ստորերկրյա քաղցրահամ ջրերի հիդրոերկրաբանական մոնիթորինգի ծառայություններին 2016 թվականին ՀՀ պետական բյուջեից հատկացվել է 45.5 մլն դրամ, որն ամբողջությամբ օգտագործվել է: Ծրագրի շրջանակներում «Հիդրոերկրաբանական մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից 2016 թվականի ընթացքում կատարվել են հիդրոերկրաբանական մշտադիտարկումներ ազգային և հատուկ ցանցերի դիտակետերում, լուծարված և կոնսերվացված աշխատանքների ազդեցության գոտում, որտեղ նկատվել է ջրաղբյուրների և հորատանցքերի մակարդակի բարձրացում կամ կայունացում: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 1.6%-ով՝ պայմանավորված էլեկտրաէներգիայի սակագնի փոփոխման հետևանքով հավելյալ ծախսերի փոխհատուցմամբ:

Հաշվետու տարում 77.3 մլն դրամ էր նախատեսվել ՀՀ բնապահպանության նախարարության «Ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկի պահպանման նպատակով, որն օգտագործվել է 95.7%-ով և կազմել 73.9 մլն դրամ՝ հիմնականում պայմանավորված ծախսերի տնտեսմամբ: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը նվազել են 1%-ով:

2016 թվականին Գլոբալ էկոլոգիական հիմնադրամի (ԳԷՀ) աջակցությամբ իրականացվող «Հայաստանի Հանրապետությունում ազգային պորտֆելի ձևավորման վարժություն» դրամաշնորհային ծրագրի շրջանակներում օգտագործվել է 681.2 հազար դրամ և ապահովել տարեկան ծրագրային ցուցանիշի 93.6% կատարում: Ծրագրի շրջանակներում կատարվել է ԳԷՀ-6 ռազմավարության, նպատակների, խնդիրների և «Ազգային պորտֆելիո ԳԷՀ-6» փաստաթղթի ներկայացում ՀՀ մարզերում: Սույն ծրագրի գծով հաշվետու տարվա համար նախատեսված բոլոր գործողությունները սահմանված կարգով իրականացվել են, իսկ ծրագրից շեղումը պայմանավորված է տնտեսումներով:

ՄԱԿ-ի ՇՄ ծրագրի և Դանիայի տեխնիկական համալսարանի համագործակցության կենտրոնի աջակցությամբ իրականացվող «Տեխնոլոգիաների կարիքների գնահատում» դրամաշնորհային ծրագրի շրջանակներում հաշվետու տարում օգտագործվել է 21.9 մլն դրամ՝ կազմելով ծրագրային ցուցանիշի 53.1%-ը: Ծրագրի շրջանակներում իրականացվել է առաջնային տեխնոլոգիաների փոխանցման համար պոտենցիալ խոչընդոտների և ազգային մակարդակով պոտենցիալ շուկայական հնարավորությունների վերլուծություն: Ծրագրային ցուցանիշից շեղումը պայմանավորված է դոնոր կազմակերպության որոշմամբ ծրագրի շարունակությունը 2017 թվական տեղափոխելու հանգամանքով:

Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող Օժանդակություն ինստիտուցիոնալ կարողությունների զարգացմանը՝ հանքարդյունաբերության ոլորտում բնապահպանական կառավարումը, ներառումը և թափանցիկությունն ապահովելու նպատակով ԻԶՀ-ի դրամաշնորհային ծրագիրը կատարվել է 83.4%-ով կամ շուրջ 56.1 մլն դրամի չափով, ինչը պայմանավորված է ԱՄՆ դոլարի փոխարժեքի փոփոխություններով և գնումների արդյունքում գոյացած տնտեսումներով: Ծրագրի շրջանակներում իրականացվել են հանքարդյունաբերության ոլորտում ինստիտուցիոնալ կապերի զարգացման, թափանցիկության ու ներառման ապահովմանն ուղղված գործողություններ: 2016 թվականին ծրագիրն ավարտվել է:

<u>Բնակարանային շինարարություն և կոմունալ ծառայություններ</u>

2016 թվականին *բնակարանային շինարարության և կոմունալ ծառայությունների* բնագավառին ՀՀ պետական բյուջեից տրամադրվել է 25.6 մլրդ դրամ՝ 75.7%-ով ապահովելով ծրագրային

ցուցանիշը: Շեղումը հիմնականում պայմանավորված է ջրամատակարարման ոլորտում արտաքին աջակցությամբ իրականացվող որոշ ծրագրերի և պետական ծառայողներին մատչելի բնակարաններով ապահովման ծրագրի կատարողականով: Բնակարանային շինարարության և կոմունալ ծառայությունների բաժնի ծախսերը 34.6%-ով կամ 13.6 մլրդ դրամով նվազել են նախորդ տարվա համեմատ՝ հիմնականում պայմանավորված արտաքին աջակցությամբ իրականացվող ծրագրերի, ինչպես նաև բնակարանային շինարարության ծրագրերի շրջանակներում կատարված ծախսերի կրճատմամբ:

Բնակարանային շինարարությանը 2016 թվականին ՀՀ պետական բյուջեից հատկացվել է 7.5 մլրդ դրամ, որն օգտագործվել է 65.3%-ով և կազմել 4.9 մլրդ դրամ՝ հիմնականում պայմանավորված արտաբյուջետային հաշվով շրջանառվող՝ պետական ծառայողներին մատչելի բնակարաններով ապահովման ծրագրի կատարողականով: «Բնակարանային շինարարություն» ծրագրի գծով նախատեսված 83.4 մլն դրամի փոխարեն տրամադրվել է 17.4 մլն դրամ: Ծրագրի շրջանակներում նախագծանախահաշվային փաստաթղթերի ուշ պատրաստ լինելու պատճառով մրցույթը կայացել է նոյեմբեր ամսին, որի հետևանքով նախատեսված աշխատանքներն իրականացվել են մասամբ:

Երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած ընտանիքների բնակարանային ապահովմանը 2016 թվականի ընթացքում տրամադրվել է 1.8 մլրդ դրամ՝ կազմելով ծրագրի 98.8%-ը: Ծրագրի շրջանակներում Շիրակի մարզում տրամադրվել է 136 բնակարանների գնման վկայագիր և շարունակվել են 3 անավարտ շենքի կառուցման աշխատանքները՝ 101 բնակարանով, Լոռու մարզում տրամադրվել է ուղղակի ֆինանսական աջակցություն Սպիտակ քաղաքում մեկ սենյակի շահառու ճանաչված թվով 50 ընտանիքների և Ախուրյանում կատարվել են բնակարանային շինարարության (3 անավարտ շենքերի կառուցման) աշխատանքների նկատմամբ տեխնիկական և հեղինակային հսկողության աշխատանքներ:

Պետական ծառայողներին մատչելի բնակարաններով ապահովման ծրագրի շրջանակներում օգտագործվել է 3.1 մլրդ դրամ՝ կազմելով նախատեսված ծախսերի 54.9%-ը: Ծրագրի շրջանակներում պետական ծառայող հանդիսացող շահառուներին տրամադրվում են բնակարաններ բազմաբնակարան շենքային համալիրում՝ շուկայականից ցածր գներով և հիփոթեքային վարկերի արտոնյալ պայմաններով: Միջոցները, որոնք գոյացել են ծրագրի շահառուների կողմից կատարված կանխավճարներից և կառուցապատողին տրամադրված կանխավճարի դիմաց ստացված տոկոսներից, ուղղվել են կառուցապատողին՝ որպես կանխավճարներ, ինչպես նաև ծրագրի շահառուների կատարած կանխավճարի գծով օգնության գումարների վճարմանը:

Բնակարանային շինարարության և կոմունալ ծառայությունների բնագավառի ծախսերի 70.8%-ն ուղղվել է *ջրամատակարարման* խմբի ծրագրերի ֆինանսավորմանը: Նշված ծախսերը կազմել են շուրջ 18.2 մլրդ դրամ կամ տարեկան ծրագրի 76.7%-ը, ինչը հիմնականում

պայմանավորված է արտաքին աջակցությամբ իրականացվող ծրագրերի կատարողականով: Նախորդ տարվա համեմատ խմբի ծախսերը նվազել են 38.4%-ով՝ հիմնականում պայմանավորված նշված ծրագրերի շրջանակներում կատարված ծախսերի նվազմամբ:

Հաշվետու տարում 264.2 մլն դրամ է տրամադրվել ջրային տնտեսության ոլորտում գործադիր իշխանության, պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների պահպանմանը, որը հատկացվել է ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտեին: Նշված ծախսերը կատարվել են 99.6%-ով: Նախորդ տարվա համեմատ դրանք աճել են 6.2%-ով՝ հիմնականում պայմանավորված գործառույթների ընդլայնման արդյունքում հաստիքային միավորների ավելացմամբ և աշխատավարձի բնականոն աճով:

«Հայջրմուղկոյուղի» ՓԲԸ-ի՝ խմելու ջրի մատակարարման ծառայությունների արդյունքում առաջացող ֆինանսական ճեղքվածքի սուբսիդավորման նպատակով նախատեսված 3.3 մլրդ դրամն ամբողջությամբ տրամադրվել է: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 51%-ով կամ 1.1 մլրդ դրամով, ինչը պայմանավորված է 2016 թվականին «Հայջրմուղկոյուղի» ՓԲԸ-ի կողմից վարկերի՝ մարման ենթակա մայր գումարների աճով, ինչպես նաև էլեկտրաէներգիայի սակագնի բարձրացմամբ: «Հայջրմուղկոյուղի» ՓԲԸ-ի կողմից 2016 թվականին իրականացվել է Համաշխարհային բանկի, Ասիական զարգացման բանկի ու Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի վարկային ծրագրերի շրջանակներում կնքված պայմանագրերով տրամադրված ենթավարկի գումարների մարում՝ ավելի քան 1.7 մլրդ դրամ գումարի չափով:

ՀՀ 2016 թվականի պետական բյուջեից «Նոր Ակունք» ՓԲԸ-ի ընթացիկ գործունեության արդյունքում առաջացած ֆինանսական ճեղքվածքի մարման համար նախատեսված սուբսիդիան նույնպես ամբողջությամբ տրամադրվել է՝ կազմելով 327.8 մլն դրամ: 2015 թվականի նկատմամբ նշված ծախսերն աճել են 9.4%-ով՝ պայմանավորված էլեկտրաէներգիայի սակագնի փոփոխությամբ: «Նոր Ակունք» ՓԲԸ-ի կողմից 2016 թվականին 233.3 մլն դրամ է հատկացվել Գերմանիայի զարգացման վարկերի բանկի կողմից տրամադրված վարկի շրջանակներում կնքված պայմանագրերով տրամադրված ենթավարկի գումարի մարման նպատակով:

2016 թվականին Ֆրանսիայի Հանրապետության կառավարության աջակցությամբ իրականացվող՝ Երևանի ջրամատակարարման և ջրահեռացման ծրագրին տրամադրվող տեխնիկական աջակցության վարկային ծրագրի շրջանակներում օգտագործվել է շուրջ 5.3 մլրդ դրամ՝ 15.3%-ով գերազանցելով ծրագրային ցուցանիշը, որը պայմանավորված է փաստացի կատարված աշխատանքների ծավալով: Ծրագրի շրջանակներում կատարվել են կոյուղագծերի վերակառուցման, ջրաչափական հորերի փոխարինման, նախագծման և մրցութային փաթեթի նախապատրաստման աշխատանքներ:

Ասիական զարգացման բանկի աջակցությամբ իրականացվող ջրամատակարարման և ջրահեռացման վարկային ծրագրի երկրորդ փուլի շրջանակներում օգտագործվել է 2.7 մլրդ դրամ՝ 63.3%-ով կատարելով ծրագրային ցուցանիշը: Վերջինս պայմանավորված է նրանով, որ Փոխառության հատուկ իրավունքներ (SDR) / ԱՄՆ դոլար փոխարժեքի փոփոխության պատճառով վարկի գումարը պակասեցվել է 2.0 մլն ԱՄՆ դոլարով: Հաշվետու տարվա ընթացքում ծրագրի շրջանակներում ՀՀ Կոտայքի, Լոռու, Գեղարքունիքի, Սյունիքի, Վայոց Ձորի, Շիրակի և Արագածոտնի մարզերում կառուցվել են մոտ 137.5 կմ ջրատարներ, ներքին ցանցեր, մինչև բնակարան անցկացված ջրագծեր, ինչպես նաև 3265 հատ ջրաչափական հորեր:

Եվրոպական միության հարևանության ներդրումային ծրագրի աջակցությամբ իրականացվող Երևանի ջրամատակարարման բարելավման դրամաշնորհային ծրագրի շրջանակներում օգտագործվել է 144.3 մլն դրամ կամ ծրագրվածի 15.2%-ը: Ծրագրի կատարողականը պայմանավորված է ջրային ոլորտի բարեփոխումների հետ կապված՝ ծրագիրն իրականացնողի փոփոխությամբ: Ծրագրի շրջանակներում կատարվել են Երևան քաղաքի ջրամատակարարման ու ջրահեռացման ծրագրերի գծով բակային պոմպերի տեղադրման շինարարական աշխատանքներ, վճարվել են ջրաչափերի և դիտահորերի ձեռքբերման համար սահմանված հարկերը և տուրքերը:

Եվրոպական միության հարևանության ներդրումային ծրագրի աջակցությամբ իրականացվող Երևանի ջրամատակարարման բարելավման դրամաշնորհային ծրագրի շրջանակներում օգտագործվել է 65.6 մլն դրամ կամ նախատեսվածի 16.8%-ը: Ծրագրի ցածր կատարողականը նույնպես պայմանավորված է ծրագիրն իրականացնողի փոփոխությամբ: Ծրագրի շրջանակներում կատարվել են նախագծման և մրցութային փաթեթի նախապատրաստման աշխատանքներ:

Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի աջակցությամբ իրականացվող Երևանի ջրամատակարարման բարելավման ծրագրի շրջանակներում օգտագործվել է 1.5 մլրդ դրամ կամ նախատեսվածից 3.7 անգամ ավելի՝ պայմանավորված նրանով, որ ԵՄ և ԵՆԲ ծրագրերն ուժի մեջ չմտնելու պատճառով օգտագործվել են ՎԶԵԲ-ի վարկային միջոցները:

Ծրագրի շրջանակներում կատարվել են Երևան քաղաքի ջրամատակարարման ու ջրահեռացման ծրագրերի գծով աշխատանքների նախագծման, մրցութային փաթեթի նախապատրաստման և մրցույթի հայտարարման աշխատանքներ:

Գերմանիայի զարգացման վարկերի բանկի աջակցությամբ իրականացվող «Հայջրմուղկոյուղի», «Շիրակ-ջրմուղկոյուղի», «Լոռի-ջրմուղկոյուղի» և «Նոր Ակունք» ՓԲԸ-ների մասնավոր կառավարման շարունակականության ապահովման դրամաշնորհային ծրագրի գծով արձանագրվել է 87% կամ 1.4 մլրդ դրամ կատարողական: 2014 թվականին Գերմանիայի զարգացման վարկերի բանկի և ՀՀ-ի միջև ստորագրվել է Հայ-Գերմանական ֆինանսական համագործակցության «Համայնքային ենթակառուցվածքների ծրագիր II- Փուլ 3» դրամաշնորհային

համաձայնագիրը 2.1 մլն և 3.0 մլն եվրո գումարների չափով, որը կտրամադրվի KfW բանկի կողմից ԵՄ ՀԼԾ (Եվրամիության Հարևանության ներդրումային ծրագրի) աջակցությամբ: Ծրագրի նպատակն է՝ ապահովել «Հայջրմուղկոյուղի», «Շիրակ-ջրմուղկոյուղի», «Լոռի-ջրմուղկոյուղի» և «Նոր Ակունք» ՓԲԸ-ների մասնավոր կառավարման շարունակականությունը: «Էմ Վի Վի դեկոն Ջի Էմ Բի Էյջ, Էն Վի Վի Էներջի Էյ Ջի, Էյ-Ի-Ջի Սերվիս ՍՊԸ և «ՍԱՈՒՌ» Ս.Ա.Ս» ընկերությունների կոնսորցիումի կողմից մատուցված ծառայությունների դիմաց 2016 թվականին դրամաշնորհային միջոցներից հատկացվել է 1 մլրդ դրամ: ՀՀ կառավարության համաֆինանսավորման գումարների (403.5 մլն դրամ) հաշվին մարվել են Հայաստանի Հանրապետությունում ոչ ռեզիդենտ և ռեզիդենտ համարվող «Էմ Վի Վի դեկոն Ջի Էմ Բի Էյջ, Էն Վի Վի Էներջի Էյ Ջի, Էյ-Ի-Ջի Սերվիս ՍՊԸ և «ՍԱՈՒՌ» Ս.Ա.Ս» ընկերությունների կոնսորցիումի անդամների ԱԱՀ-ի և շահութահարկի գծով առաջացած պարտավորությունները: Ծրագրից շեղումը պայմանավորված է նրանով, որ կառավարչի կողմից վերջին վճարումների հայտերը ներկայացվել են 2017 թվականին:

2016 թվականին նախատեսված ամբողջ ծավալով կամ ավելի քան 1 մլրդ դրամ հատկացվել է «Շիրակ-ջրմուղկոյուղի» ՓԲԸ-ին խմելու ջրի մատակարարման ծառայությունների սուբսիդավորման նպատակով, որն ուղղվել է Գերմանիայի զարգացման բանկի աջակցությամբ իրականացված «Շիրակի (Գյումրի) մարզի ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի վերականգնում (1-ին և 2-րդ փուլեր)» վարկային ծրագրերի շրջանակներում կնքված ենթավարկային պայմանագրերով տրամադրված վարկի մայր գումարի մարմանը:

Գերմանիայի զարգացման վարկերի բանկի աջակցությամբ իրականացվող «Լոռի-ջրմուղկոյուղի» ՓԲԸ-ի ջրամատակարարման և ջրահեռացման ենթակառուցվածքների վերականգնման ծրագրի երրորդ փուլի շրջանակներում օգտագործվել է 55.5 մլն դրամ՝ կազմելով նախատեսվածի 50.1%-ը: Ծրագրի շրջանակներում նախատեսվում է ամբողջությամբ ավարտել Վանաձոր քաղաքի ջրամատակարարման համակարգի նորացումը: Նախատեսված է իրականացնել Վանաձոր համայնքի թիվ 8 ճնշումային գոտու բաշխիչ ցանցի, Նովոսելցովո ջրատարի երկայնքով ձգվող 12 գյուղական համայնքների բաշխիչ ցանցերի, նաև թվով 3 ջրամբարների կառուցման աշխատանքների որոշ մասը, Վանաձոր քաղաքում կոյուղու որոշ հատվածների փոխարինում՝ «Եվրոպական ներդրումային բանկի աջակցությամբ իրականացվող «Լոռի-ջրմուղկոյուղի» ՓԲԸ-ի ջրամատակարարման և ջրահեռացման ենթակառուցվածքների վերականգնման ծրագրի երրորդ փուլ» ծրագրի հետ համատեղ: Ծրագրված ծախսերից շեղումը պայմանավորված է գնման գործընթացով, որի արդյունքում խորհրդատվական պայմանագիրը ստորագրվել է 2016 թվականի տարեվերջին: Դեկտեմբերին մեկնարկել են խորհրդատվական կազմակերպության կողմից նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման աշխատանքները, որի հիման վրա խորհրդատվական կազմակերպությանը փոխանցվել է կանխավճար:

Գերմանիայի զարգացման վարկերի բանկի աջակցությամբ իրականացվող «Շիրակ-ջրմուղկոյուղի» ՓԲԸ-ի ջրամատակարարման և ջրահեռացման ենթակառուցվածքների վերականգնման ծրագրի երրորդ փուլի շրջանակներում օտագործվել են 118.8 մլն դրամի միջոցներ՝ կազմելով նախատեսվածի 20.6%-ը: Ծրագրի շրջանակներում նախատեսվում է Գյումրի քաղաքի 2-րդ գոտու հյուսիսային մաս, Սավոյան փողոցից դեպի հյուսիս, Օդանավակայանի բնակելի թաղամասերի, Գյումրի գետակի աջ մասի, Շիրակացի փողոցի հարակից թաղամասերի ու Սևերսկի թաղամասի և Ե/գ թաղամասից մինչև Սելեկցիոն կայան ընկած հատվածի բաշխիչ ցանցերի վերականգնում, Գյումրի քաղաքի առավել ռիսկային կետերի կոյուղու համակարգի վերականգման, Անի և Անտառավան թաղամասերի բաշխիչ ցանցի վերականգնում, գյուղական համայնքների բաշխիչ ցանցերի վերակառուցման աշխատանքների մի մասը՝ «Եվրոպական ներդրումային բանկի աջակցությամբ իրականացվող «Շիրակ-ջրմուղկոյուղի» ՓԲԸ-ի ջրամատակարարման և ջրահեռացման ենթակառուցվածքների վերականգնման ծրագրի երրորդ փուլ» ծրագրի հետ համատեղ: Այս ծրագրի կատարողականը ևս պայմանավորված է գնման գործընթացի հետ կապված՝ խորհրդատվական աշխատանքների պայմանագիրը 2016 թվականի տարեվերջին կնքվելու և աշխատանքները դեկտեմբեր ամսին սկսելու հանգամանքով:

Նույն պատճառով չեն օգտագործվել նաև Գերմանիայի զարգացման վարկերի բանկի աջակցությամբ իրականացվող «Հայջրմուղկոյուղի» ՓԲԸ-ի ջրամատակարարման և ջրահեռացման ենթակառուցվածքների վերականգնման ծրագրի երրորդ փուլի շրջանակներում նախատեսված միջոցները. նախատեսված 522.1 մլն դրամի դիմաց օգտագործվել է ընդամենը 29.6 հազար դրամ: Ծրագրի շրջանակներում նախատեսվում է իրականացնել 6 քաղաքների և 37 գյուղական բնակավայրերի ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի հատվածների հրատապ վերականգնման աշխատանքների մի մասը՝ «Եվրոպական ներդրումային բանկի աջակցությամբ իրականացվող «Հայջրմուղկոյուղի» ՓԲԸ-ի ջրամատակարարման և ջրահեռացման ենթակառուցվածքների վերականգնման ծրագրի երրորդ փուլ» ծրագրի հետ համատեղ:

Գերմանիայի զարգացման վարկերի բանկի աջակցությամբ իրականացվող «Նոր Ակունք» ՓԲԸ-ի ջրամատակարարման և ջրահեռացման ենթակառուցվածքների վերականգնման ծրագրի երրորդ փուլի շրջանակներում օգտագործվել են 53.6 մլն դրամի միջոցներ՝ կազմելով նախատեսվածի 42.2%-ը: Սույն ծրագրի կատարողականը ևս պայմանավորված է գնման գործընթացի հետ կապված խորհրդատվական պայմանագիրը 2016 թվականի տարեվերջին ստորագրելու և աշխատանքները դեկտեմբեր ամսին սկսելու հանգամանքով: Ծրագրի շրջանակներում նախատեսված է իրականացնել Արմավիր քաղաքի ջրամատակարարման բաշխիչ ցանցի առավել վթարային ճանաչված հատվածների վերականգնման աշխատանքների մի մասը՝ «Եվրոպական ներդրումային բանկի աջակցությամբ իրականացվող «Նոր Ակունք» ՓԲԸ-ի

ջրամատակարարման և ջրահեռացման ենթակառուցվածքների վերականգնման ծրագրի երրորդ փուլ» ծրագրի հետ համատեղ:

Եվրոպական ներդրումային բանկի աջակցությամբ իրականացվող «Հայջրմուղկոյուղի», «Շիրակ-ջրմուղկոյուղի», «Լոռի-ջրմուղկոյուղի» և «Նոր Ակունք» ՓԲԸ-ների ջրամատակարարման և ջրահեռացման ենթակառուցվածքների վերականգնման ծրագրի երրորդ փուլի շրջանակներում նախատեսված 1.3 մլրդ դրամի միջոցները («Հայջրմուղկոյուղի» ՓԲԸ-ի մասով՝ 522.1 մլն դրամ, «Շիրակ-ջրմուղկոյուղի» ՓԲԸ-ի մասով՝ 570.5 մլն դրամ, «Լոռի-ջրմուղկոյուղի» ՓԲԸ-ի մասով՝ 104.1 մլն դրամ և «Նոր Ակունք» ՓԲԸ-ի մասով՝ 120.6 մլն դրամ) չեն օգտագործվել: Ինչպես նշվեց, հիշյալ ծրագրերն իրականացվում են Գերմանիայի զարգացման վարկերի բանկի հետ համատեղ, և նախատեսված միջոցները չեն օգտագործվել Եվրոպական ներդրումային բանկի հետ ենթավարկային համաձայնագրի կնքումը հետաձգվելու պատճառով:

Գերմանիայի զարգացման և Եվրոպական միության հարևանության ներդրումային բանկի աջակցությամբ իրականացվող «Հայջրմուղկոյուղի» և «Նոր Ակունք» ՓԲԸ-ների ջրամատակարարման և ջրահեռացման ենթակառուցվածքների վերականգման դրամաշնորհային ծրագրի երրորդ փուլի շրջանակներում նախատեսված 2.4 մլրդ դրամ («Հայջրմուղկոյուղի» ՓԲԸ-ի մասով՝ 2.1 մլրդ դրամ և «Նոր Ակունք» ՓԲԸ՝ 363.7 մլն դրամ) միջոցները նույնպես չեն օգտագործվել: Սա պայմանավորված է նրանով, որ խորհրդատուի ընտրության մրցույթի արդյունքների ամփոփումը կատարվել է 2017 թվականին: Ծրագրերի շրջանակներում նախատեսվում է ջրամատակարար ընկերությունների կազմից դուրս մնացած 560 գյուղական բնակավայրերից ընտրված որոշ համայնքների ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի հատվածների հրատապ վերականգնման աշխատանքների իրականացում, լճակային սկզբունքով գործող կեղտաջրերի մաքրման կայանի կառուցում, կոյուղու պոմպակայանի, կոլեկտորի, կոյուղու ցանցի վերականգնում, ինչը թույլ կտա իրականացնել Արմավիր և Մեծամոր քաղաքների ու Նորապատ համայնքի կեղտաջրերի մաքրումը:

Նախատեսված չափով՝ 765.5 մլն դրամ միջոցներ են հատկացվել «Լոռի-ջրմուղկոյուղի» ՓԲԸ-ին՝ խմելու ջրի մատակարարման ծառայությունների սուբսիդավորման նպատակով, որն ուղղվել է Գերմանիայի զարգացման բանկի աջակցությամբ իրականացված «Լոռի (Վանաձոր) մարզի ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի վերականգնման (1-ին և 2-րդ փուլեր) վարկային ծրագրերի շրջանակներում կնքված ենթավարկային պայմանագրերով տրամադրված վարկի մայր գումարի մարմանը:

Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի աջակցությամբ իրականացվող Երևանի ջրամատակարարման բարելավման դրամաշնորհային ծրագրի շրջանակներում օգտագործվել են շուրջ 167.3 մլն դրամի միջոցներ՝ ապահովելով ծրագրի 86.4% կատարում՝ պայմանավորված

ծրագիրն իրականացնողի փոփոխությամբ: Ծրագրի շրջանակներում մատուցվել են խորհրդատվական և տեխնիկական հսկողության ծառայություններ, մրցութային փաթեթի նախապատրաստման աշխատանքներ:

Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի աջակցությամբ իրականացվող Հայաստանի ջրային ոլորտի ներդրումային ծրագրի անցումային խորհրդատուի ընտրության դրամաշնորհային ծրագրի շրջանակներում օգտագործվել են 393.7 մլն դրամի միջոցներ՝ 15.7%-ով գերազանցելով ծրագրային ցուցանիշը, ինչը պայմանավորված է նրանով, որ խորհրդատվական ծառայության դիմաց վճարումները կատարվել են փաստացի ներկայացված հայտերի հիման վրա, իսկ վերջին ավարտական վճարումը նախատեսվել է 2017 թվականին: ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտեի ու Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի միջև 2015 թվականի հուլիսի 22-ին ստորագրված «Հայաստանի ջրային ներդրումային ծրագիր. ՊՄԳ անցումային խորհրդատու» դրամաշնորհային համաձայնագրի հիման վրա կնքվել է խորհրդատվական ծառայությունների մատուցման պայմանագիր, որի արժեքն է 599.4 հազար եվրո: Պայմանագրի նպատակն է աջակցել ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտեին ապահովելու Հայաստանի քաղաքային և գյուղական համայնքների ջրամատակարարման և ջրահեռացման ոլորտի կայուն զարգացումը, ինչպես նաև բարելավել ոլորտի արդյունավետությունը, մշակել և աջակցություն ցուցաբերել պետություն-մասնավոր գործընկերություն (ՊՄԳ) պայմանավորվածության ձևավորմանը, ֆինանսավորմանը և իրականացմանն ուղղված համապատասխան ՊՄԳ մոդելների կիրառման գործընթացին, առաջարկել գնումների ռազմավարություն և պատրաստել ՊՄԳ պայմանագրի վերաբերյալ մրցութային փաստաթղթեր՝ հայտատուներին ներկայացնելու նպատակով և աջակցություն տրամադրել ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտեին ինչպես մրցութային փուլում, այնպես էլ նախընտրելի հայտատուի ընտրության հետ կապված բանակցային գործընթացում:

Գերմանիայի զարգացման վարկերի բանկի աջակցությամբ իրականացվող ՀՀ Շիրակի (Գյումրու) մարզի ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի վերականգնման ծրագրի երկրորդ փուլի շրջանակներում օգտագործվել են 459.8 մլն դրամի միջոցներ՝ 5.2 անգամ գերազանցելով նախատեսված ցուցանիշը: Վերջինս պայմանավորված է այն հանգամանքով, որ 2016 թվականին վճարվել են նախորդ տարիների ընթացքում ավարտված շինանարարական աշխատանքների դիմաց հետավարտական և բանկային երաշխիքների գումարները: Ծրագիրը 2016 թվականին ավարտվել է:

Գերմանիայի զարգացման վարկերի բանկի աջակցությամբ իրականացվող՝ ՀՀ Լոռու (Վանաձորի) մարզի ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի վերականգնման վարկային ծրագրի երկրորդ փուլի շրջանակներում օգտագործվել են 90.9 մլն դրամի միջոցներ, որոնք 2.3 անգամ գերազանցել են ծրագրային ցուցանիշը: Սույն ծրագրի բարձր կատարողականը ևս պայմանավորված է 2016 թվականին նախորդ տարիների ընթացքում ավարտված շինանարարական աշխատանքների դիմաց հետավարտական և բանկային երաշխիքների գումարների վճարման հանգամանքով: Ծրագիրը 2016 թվականին ավարտվել է:

Գերմանիայի զարգացման վարկերի բանկի աջակցությամբ իրականացվող ՀՀ Շիրակի (Գյումրի) մարզի ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի վերականգնման դրամաշնորհային ծրագրի շրջանակներում միջոցներն օգտագործվել են նախատեսված ամբողջ ծավալով և կազմել շուրջ 41.0 մլն դրամ: Միջոցներն ուղղվել են ՀՀ Շիրակի մարզի ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի վերականգնմանը: 2016 թվականին վճարվել են նախորդ տարիների ընթացքում ավարտված շինարարական աշխատանքների դիմաց հետավարտական և բանկային երաշխիքների գումարները: Ծրագիրը 2016 թվականին ավարտվել է:

Գերմանիայի զարգացման վարկերի բանկի աջակցությամբ իրականացվող ջրամատակարար ընկերությունների կողմից չսպասարկվող համայնքների ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի բարելավմանն ու զարգացմանն ուղղված կիրառելիության ուսումնասիրության դրամաշնորհային ծրագրի շրջանակներում օգտագործվել է 46.9 մլն դրամ՝ ապահովելով ծրագրի 100%-ով կատարում: Հայաստանի Հանրապետության մոտ 560 գյուղական համայնքներ գտնվում են ջրամատակարար ընկերությունների սպասարկման տարածքից դուրս: Նշված համայնքների ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի բարելավման նպատակն է՝ գտնել ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի շահագործման և պահպանման ինստիտուցիոնալ լուծումներ, հստակեցնել իրավական դաշտի փոփոխությունների ուղղությունները, ինչպես նաև իրականացնել անհրաժեշտ ներդրումների գնահատում ու առաջնահերթության սահմանում: Հայաստանի Հանրապետության և KfW բանկի միջև ստորագրված դրամաշնորհային համաձայնագրի հիման վրա տրամադրվել է 500 հազար եվրո դրամաշնորհ՝ բնակավայրերում առաջին անգամ լայնածավալ ուսումնասիրություններ իրականացնելու համար: 2015 թվականին ավարտվել են խորհրդատուի կողմից իրականացված ուսումնասիրությունների հիման վրա նախագծանախահաշվային փաստաթղթերի կազման աշխատանքները, որի հիման վրա կսկսվեն «Կոմունալ ենթակառուցվածք Ծրագիր II – Փուլ 3» վարկային և դրամաշնորհային համաձայնագրերի շրջանակներում KFW բանկի կողմից տրամադրվող գումարների հաշվին շինարարական աշխատանքները: 2016 թվականին վճարվել է խորհրդատուի վերջին (89002.5 եվրո) գումարը:

2016 թվականին պետական բյուջեի ծախսերի՝ *փողոցների լուսավորման* խմբում համայնքների բյուջեներին նպատակային հատկացումների՝ սուբվենցիաների տրամադրման համար նախատեսված 1.6 մլրդ դրամն ամբողջությամբ օգտագործվել է: Միջոցներն ուղղվել են Երևան քաղաքի արտաքին լուսավորության ցանցի շահագործման և պահպանման աշխատանքների իրականացմանը: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը նվազել են 26.9%-ով՝ պայմանավորված այն հանգամանքով, որ պետական բյուջեից հատկացված միջոցները կրճատվել են՝ նշված ծախսերի իրականացումը նախատեսելով Երևան քաղաքի բյուջեի հաշվին:

Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի աջակցությամբ իրականացվող «Երևանի քաղաքային լուսավորության» դրամաշնորհային ծրագրի շրջանակներում օգտագործվել է 21.8 մլն դրամ՝ կազմելով նախատեսված ցուցանիշի 17.9%-ը: Վերջինս պայմանավորված է այն հանգամանքով, որ ծրագիրն առաջին անգամ է իրականացվում Հայաստանում, և պահանջվել են երկարատև քննարկումներ խորհրդատվական կազմակերպությունների հետ աշխատանքների համակարգման և բաշխման գործընթացների վերաբերյալ: Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի աջակցությամբ իրականացվող «Երևանի քաղաքային լուսավորության» վարկային ծրագրի շրջանակներում օգտագործվել է շուրջ 19.0 մլն դրամ՝ ապահովելով ծրագրի 100%-ով կատարում: Ծրագրի շրջանակներում Երևան քաղաքի թվով 28 փողոցներում փոխվել և ամրացվել են լուսավորության հենասյուները, առկա վերգետնյա մալուխներն անցկացվել են ստորգետնյա կապուղիներով, առկա լուսատուները փոխարինվել են ԼԵԴ տիպի լուսատուներով:

Այլ դասերին չպատկանող բնակարանային շինարարության և կոմունալ ծառայությունների բնագավառին ՀՀ պետական բյուջեից տրամադրվել է 894.8 մլն դրամ՝ կազմելով ծրագրի 97.9%-ը: Նախորդ տարվա համեմատ խմբի ծախսերը նվազել են 1.3%-ով՝ պայմանավորված ՀՀ քաղաքաշինության նախարարության «Ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկի պահպանման ծախսերի կրճատմամբ: Հաշվետու տարում 746.9 մլն դրամ է տրամադրվել ՀՀ քաղաքաշինության նախարարության աշխատակազմի պահպանմանը՝ 99.1%-ով ապահովելով տարեկան ծրագրային հատկացումները: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 2.6%-ով, ինչը հիմնականում պայմանավորված է թափուր աշխատատեղերի համալրման հետևանքով աշխատավարձի գծով ծախսերի ավելացմամբ:

Հաշվետու տարում 147.9 մլն դրամ է տրամադրվել ՀՀ կառավարությանն առընթեր քաղաքաշինության պետական կոմիտեի «Ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկի պահպանման նպատակով, որից 140.5 մլն դրամը հատկացվել է պետական բյուջեի, 7.4 մլն դրամը՝ ՀՀ կառավարությանն առընթեր քաղաքաշինության պետական կոմիտեի արտաբյուջետային միջոցների հաշվին: Նշված ծախսերը կատարվել են համապատասխանաբար 92.4%-ով և 95.9%-ով՝ պայմանավորված տնտեսումներով:

Առողջապահություն

2016 թվականին ՀՀ պետական բյուջեի միջոցներով *առողջապահության* ոլորտում կատարվել են շուրջ 88.6 մլրդ դրամ ծախսեր՝ ապահովելով ծրագրի 99.7%-ը:

Բաժնի ծախսերի 45.5%-ն ուղղվել է հիվանդանոցային ծառայությունների, 30.7%-ը՝ արտահիվանդանոցային ծառայությունների, 14.7%-ը՝ այլ դասերին չպատկանող առողջապահական ծրագրերի, 5.4%-ը՝ հանրային առողջապահական ծառայությունների ֆինանսավորմանը և 3.8%-ը՝ բժշկական ապրանքների, սարքերի և սարքավորումների ձեռքբերմանը: 2015 թվականի համեմատ առողջապահության ոլորտի ծախսերն աճել են 3%-ով կամ 2.6 մլրդ դրամով:

Հաշվետու տարում *դեղագործական ապրանքների* ձեռքբերման ծախսերը կազմել են ավելի քան 3.3 մլրդ դրամ՝ ապահովելով ծրագրի 90.1% կատարողական: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 43.4%-ով՝ պայմանավորված ամբուլատոր-պոլիկլինիկական, հիվանդանոցային բուժօգնություն ստացողներին և հատուկ խմբերում ընդգրկված ֆիզիկական անձանց դեղորայքի տրամադրման ծախսերի աճով:

Ամբուլատոր-պոլիկլինիկական, հիվանդանոցային բուժօգնություն ստացողներին և հատուկ խմբերում ընդգրկված ֆիզիկական անձանց դեղորայքի տրամադրման նպատակով ծախսվել է շուրջ 3.3 մլրդ դրամ՝ 90.2%-ով ապահովելով ծրագիրը: Միջոցներն օգտագործվել են սոցիալապես անապահով և հատուկ խմբերում ընդգրկված բնակչությանը դեղորայքով ապահովելու նպատակով: Խնայողությունը պայմանավորված է ապրանքները նախահաշվային գներից ցածր գներով ձեռք բերելու հանգամանքով: 2015 թվականի համեմատ նշված ծախսերն աճել են 45.3%-ով՝ հինականում պայմանավորված 1-ին շարքի հակատուբերկուլյոզային դեղերի և հղիների ՄԻԱՎ հետազոտման թեստ հավաքածուների ձեռքբերմամբ, որոնք 2015 թվականին ձեռք էին բերվել Գլոբալ հիմնադրամի աջակցությամբ իրականացվող դրամաշնորհային ծրագրերի շրջանակներում: 2016 թվականից սկսած իրականացվում է տուբերկուլոզի դեմ պայքարի ծրագրում ներառված թվով 47215 հիվանդներին 1-ին շարքի հակատուբերկուլոզային և կողմնակի ազդեցության դեղերով ապահովում, իսկ ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի դեմ պայքարի ծրագրում՝ մորից երեխային վարակի փոխանցումը կանխելու նպատակով հղիների շրջանում ՄԻԱՎ ախտորոշման թեստ հավաքածուների ձեռքբերում և ապահովվում:

2016 թվականին հիվանդները դեղերով 100%-ով ապահովվել են հոգեկան հիվանդությունների (հոգեմետ դեղեր), շաքարային և ոչ շաքարային դիեաբետի, պարբերական հիվանդության, քրոնիկ երիկամային անբավարարության, երիկամային փոխպատվաստման և/կամ ծրագրային հեմոդիալիզի, տուբերկուլոզի, անհաս նորածինների շնչառական խանգարման համախտանիշի,

70%-ով՝ չարորակ նորագոյացությունների (ցավազրկող դեղեր, թմրադեղեր, ցիկլոսպորին և արյունաբանական դեղեր), 80%-ով՝ էպիլեպսիայի (հակացնցումային դեղեր) դեպքերում: 2016 թվականին շարունակվել է մանկական ինսուլինային ծրագիրը, որի արդյունքում 0-22 տարեկան տարիքային խմբում ընդգրկված 803 հիվանդներն ապահովվել են ինսուլինային գրիչներով, նորագույն ինսուլիններով, արյան մեջ գլյուկոզայի որոշման համար անհրաժեշտ սարքերով և թեստ երիզներով:

Պետական պահպանության ծառայությանը դեղորայքի տրամադրման նպատակով հատկացվել է 1.1 մլն դրամ՝ ապահովելով ծրագրի 100% կատարողական: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը չեն փոփոխվել:

Իմունականխարգելման ազգային ծրագրի ծառայությունների աջակցության դրամաշնորհային ծրագրի ծախսերը կազմել են շուրջ 13.7 մլն դրամ՝ ապահովելով ծրագրի 80.4% կատարողական, որը պայմանավորված է գնումների գործընթացի արդյունքում առաջացած տնտեսումներով: Ծրագրի նպատակն է իմունականխարգելման ոլորտում ծառայությունների մատչելիության և որակի բարելավումը, մասնագիտական կարողությունների զարգացումը, հանրության իրազեկումը կառավարելի վարակիչ հիվանդությունների (այդ թվում՝ նաև պնևմակոկային վարակների) կանխարգելման գործում պատվաստումների կարևորության և անհրաժեշտության, ինչպես նաև բուժաշխատողների իրազեկումը նոր կառավարելի վարակիչ հիվանդությունների՝ պնևմակոկային վարակների կանխարգելման միջոցների մասին: Ծրագրի շրջանակներում ներդրումներ են կատարվել առողջապահական կազմակերպություններում՝ ձեռք են բերվել սառնարան-մեքենա, համակարգչային սարքեր, բազմաֆունկցիոնալ տպիչ (սկաներ) պատճենահանող սարք, սեղանի համակարգիչներ և այլն: Իրականացվել է մոնիթորինգ Հայաստանի Հանրապետության մարզերում հանրության իրազեկում վարակիչ հիվանդությունների կանխարգելման գործում պատվաստումների կարևորության և անհրաժեշտության մասին: Բուժաշխատողների աշխատանքը դյուրին դարձնելու և մեթոդական բազան ապահովելու նպատակով իրականացվել է մեթոդական ձեռնարկների տպագրում նոր կառավարելի վարակիչ հիվանդությունների մասին:

Բժշկական սարքերի և սարքավորումների դասի ծախսերը կազմել են 10.1 մլն դրամ՝ ապահովելով ծրագրի 81.7% կատարողական: Միջոցներն ուղղվել են հոսպիտալների և բուժկետերի բժշկական սարքավորումներով համալրմանը: Նշված ծախսերը նախկինում ֆինանսավորվում էին «Զորակոչային և նախազորակոչային տարիքի անձանց փորձաքննության և բժշկական օգնության ծառայություններ» ծրագրի շրջանակներում:

2016 թվականի պետական բյուջեից *արտահիվանդանոցային ծառայությունների* ձեռքբերմանը տրամադրվել է 27.2 մլրդ դրամ՝ ապահովելով ծրագրի 99.3%-ով կատարում: Արտահիվանդանոցային ծառայությունների ծախսերի 40.1%-ը կամ ավելի քան 10.9 մլրդ դրամը

կազմել են ընդհանուր բնույթի բժշկական ծառայությունների, 30.9%-ը կամ 8.4 մլրդ դրամը՝ մասնագիտացված բժշկական ծառայությունների, 3.0%-ը կամ 825.5 մլն դրամը՝ ստոմատոլոգիական և 25.9%-ը կամ 7.0 մլրդ դրամը՝ պարաբժշկական ծառայությունների ծախսերը: 2015 թվականի համեմատ արտահիվանդանոցային ծառայությունների ծախսերը նվազել են 2.9%-ով՝ հիմնականում պայմանավորված «Զորակոչային և նախազորակոչային տարիքի անձանց փորձաքննության և բժշկական օգնության ծառայություններ» ծրագրից միջոցների տեղափոխմամբ առողջապահության այլ բնագավառներ:

Արտահիվանդանոցային ծառայությունների խմբում ընդգրկված *ընդհանուր բնույթի բժշկական ծառայությունների* դասի ծախսերը կատարվել են 99.5%-ով և կազմել 10.9 մլրդ դրամ: Միջոցներն ուղղվել են բնակչության առողջության առաջնային պահպանմանը և բժշկական օգնության բարելավմանը: Ծրագրի շրջանակներում տեղամասային թերապևտի, տեղամասային մանկաբույժի, ընտանեկան բժշկի, բուժամանկաբարձական կետերի քույրերի, դպրոցների աշակերտներին սպասարկող քույրերի կողմից բժշկական օգնություն և սպասարկում է իրականացվել հանրապետության ամբողջ ազգաբնակչությանը, ՀՀ կառավարության համապատասխան որոշումներով հաստատված բնակչության խմբերին անվճար և արտոնյալ պայմաններով տրամադրվել է շուրջ 1.1 մլրդ դրամ ընդհանուր արժեքով դեղորայք: 2015 թվականի համեմատ նշված ծախսերն աճել են 4.6%-ով կամ 477.2 մլն դրամով՝ հիմնականում պայմանավորված տարեկան աշխատավարձի ֆոնդի ավելացմամբ և էլեկտրաէներգիայի սակագնի բարձրացմամբ:

Ավելի քան 8.4 մլրդ դրամ է օգտագործվել *մասնագիտացված բժշկական ծառայությունների* ձեռքբերման նպատակով՝ 99.0%-ով ապահովելով ծրագրային ցուցանիշը և 6.2%-ով կամ 487.3 մլն դրամով գերազանցելով նախորդ տարվա ցուցանիշը:

Մտավոր, հոգեկան, լսողակգան, ֆիզիկական, շարժողական և այլ զարգացման խանգարումներով երեխաների գնահատման և վերականգնողական բուժման ծառայությունների ձեքբերման համար հատկացվել է 258.9 մլն դրամ, որն ամբողջությամբ օգտագործվել է: Ծրագրի շրջանակներում բուժօգնություն է մատուցվել շուրջ 2200 հաշմանդամ երեխաների՝ նախորդ տարվա 2150-ի դիմաց: Նախորդ տարվա համեմատ այս ծախսերն աճել են 3.6%-ով:

Հեմոդիալիզի անցկացման ծառայությունների ծախսերը 2016 թվականին կազմել են 2.1 մլրդ դրամ՝ ապահովելով ծրագրի 99.9% կատարողական: Հատկացված միջոցներով պետության կողմից երաշխավորված անվճար հիվանդանոցային բժշկական օգնության և սպասարկման շրջանակներում 2016 թվականին իրականացվել է 117.7 հազար սեանս՝ 2015 թվականի 107.2 հազար սեանսի դիմաց: Ծախսերի աճը նախորդ տարվա համեմատ կազմել է 6.8% կամ 131.8 մլն դրամ:

Մանկաբարձագինեկոլոգիական բժշկական օգնության ծառայություններին 2016 թվականի պետական բյուջեից տրամադրվել է շուրջ 1.5 մլրդ դրամ՝ 97.6%-ով ապահովելով ծրագրային

ցուցանիշը, որը պայմանավորված է առանձին կազմակերպություններում բժշկական օգնության դեպքերի քանակով: Ծրագրի շրջանակներում նախածննդյան և հետծննդյան հսկողություն է իրականացվել հանրապետության շուրջ 50 հազար հղիների նկատմամբ, ինչպես նաև բուժօգնություն են ստացել գինեկոլոգիական հիվանդություններով կանայք: 2015 թվականի համեմատ նշված ծախսերն աճել են 4.2%-ով կամ 61.2 մլն դրամով՝ հիմնականում պայմանավորված բուժօգնության դեպքերի և աշխատավարձերի աճով:

Հաշվետու տարում սպորտային բժշկության և հակադոպինգային հսկողության ծառայությունների համար նախատեսված 101.7 մլն դրամ պետական աջակցությունն ամբողջությամբ օգտագործվել է, որը տրամադրվել է «Սպորտային բժշկության և հակադոպինգային հսկողության հանրապետական կենտրոն» ՊՈԱԿ-ին: Նախորդ տարվա համեմատ այս ծախսերն աճել են 7.9%-ով կամ 7.5 մլն դրամով, ինչը պայմանավորված է ավելի մեծ քանակությամբ դեղորայքային միջոցների ձեռքբերմամբ՝ հետազոտություն անցած մարզիկների թվի աճի արդյունքում: Ծրագրի շրջանակներում իրականացվել է Հայաստանի Հանրապետությունից միջազգային մրցաշարերին մասնակցող բոլոր մարզիկների խորացված բժշկական հետազոտում, նախապատրաստական ողջ ժամանակահատվածում բոլոր ուսումնամարզական հավաքների ընթացքում արտագնա բժշկական մասնագիտական խմբերի միջոցով վերահսկվել է մոտ 1320 մարզիկների առողջական վիճակը՝ նախորդ տարվա 1000-ի դիմաց: Տարեկան բժշկական հետազոտման են ենթարկվել 3100-ից ավելի մարզիկներ 28 մարզաձևերից՝ 2015 թվականի 3000 մարզիկի դիմաց (26 մարզաձևերից), 2416 մարզիկներ անցել են խորացված բժշկական հետազոտություն՝ 2015 թվականի 2000-ի դիմաց:

ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի կանխարգելման և բուժօգնության ծառայություններին տրամադրվել է 284.9 մլն դրամ՝ ապահովելով ծրագրի 100% կատարողական: Ծրագիրն իրականացվում է «ՁԻԱՀ-ի կանխարգելման հանրապետական կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 2.1 անգամ, որը հիմնականում պայմանավորված է 2015 թվականի համեմատ մատուցվող ծառայությունների քանակների և ծավալի ավելացմամբ, որն էլ իր հերթին պայմանավորված է ՄԻԱՎ վարակի նոր դեպքերի արձանագրման, դիսպանսերային հսկողության վերցվածների և բուժում ստացող հիվանդների թվի ավելացմամբ: 2016 թվականին դիսպանսերային հսկողության վերցվածների թիվը կազմել է 1559, բուժում ստացող հիվանդների թիվը՝ 1188, 2015 թվականի համապատասխանաբար 1241-ի և 941-ի դիմաց: 2016 թվականին մատուցվել են նոր ծառայություններ՝ կենսանյութում ՄԻԱՎ-ի նկատմամբ հակամարմինների հայտնաբերմանն ուղղված հետազոտություն հղիների շրջանում (5000 հետազոտություն) և ՄԻԱՎ վարակով հիվանդների դիսպանսերային հսկողության իրականացում (348 հիվանդ): Մորից երեխային ՄԻԱՎ-ի փոխանցման կանխարգելման աշխատանքների անընդհատության ապահովման նպատակով 2016

թվականից ծրագրի շրջանակներում ՄԻԱՎ վարակ ունեցող մորից ծնված 26 երեխաների մինչև երեխայի ինն ամսական հասակը տրամադրվել է անվճար մանկական սնունդ:

Նեղ մասնագիտացված բժշկական օգնության ծառայությունների ձեռքբերմանը տրամադրվել է 4.0 մլրդ դրամ՝ 98.9%-ով ապահովելով ծրագրային ցուցանիշը: Շեղումը պայմանավորված է մարզային պոլիկլինիկաներում նեղ մասնագետների բացակայությամբ, ինչպես նաև սպասարկման տարածքի բնակչության առավելագույն թվաքանակի գերազանցմամբ, որի պայմաններում ֆինանսավորումն իրականացվում է հաստատված գնի 80 տոկոսի չափով: Ծրագրի շրջանակներում բուժօգնություն է մատուցվել հանրապետության ամբողջ բնակչությանը: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 2.4%-ով կամ 95.0 մլն դրամով՝ հիմնականում պայմանավորված բժշկական և սպասարկող անձնակազմերի աշխատավարձերի բարձրացմամբ:

Շարունակական հսկողություն պահանջող և առանձին հիվանդությունների բուժման ծառայություններին տրամադրվել է 133 մլն դրամ՝ ապահովելով ծրագրի 100% կատարողական: Ծրագրի շրջանակներում ՀՀ առողջապահության նախարարության կողմից հաստատված ցանկին համապատասխան 2016 թվականին բուժօգնություն է ստացել 8.8 հազար հիվանդ՝ բյուջեով նախատեսված 7.6 հազարի և նախորդ տարվա 8.1 հազարի դիմաց: Բյուջեով նախատեսված ցուցանիշի գերազանցումը փոխհատուցվել է բուժօգնության փաստացի միջին գնի նվազման հաշվին: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը նվազել են 6.3%-ով կամ 8.9 մլն դրամով, ինչը հիմնականում պայմանավորված է տվյալ ծրագրից միջոցների տեղափոխմամբ «Մտավոր, հոգեկան, լսողական, ֆիզիկական, շարժողական և այլ զարգացման խանգարումներով երեխաների գնահատման և վերականգնողական բուժման ծառայություններ» ծրագիր:

Անցանկալի հղիությունների կանխարգելման նպատակով հակաբեղմնավորիչ ժամանակակից միջոցների մատչելիության ապահովման գծով 2016 թվականի պետական բյուջեով նախատեսված 45.8 մլն դրամն օգտագործվել է ամբողջությամբ: 2015 թվականին նշված ծրագրի շրջանակներում նախատեսված միջոցները չէին օգտագործվել՝ կապված դրանց բաշխման կարգի մշակման ընթացքի և գնումների գործընթացի հետ: Ծրագրի ներառումը պայմանավորված է ՀՀ կառավարության և Ամերիկայի Միացյալ Նահանգների միջազգային զարգացման գործակալության (ԱՄՆ ՄԶԳ) միջև առողջապահական և սոցիալական ծառայությունների արդյունավետության բարելավման շուրջ օժանդակության համաձայնագրով, որով ՀՀ կառավարությունը ստանձնել է ժամանակակից հակաբեղմնավորիչների գնման պարտավորություն:

Ստոմատոլոգիական ծառայությունների դասում ընդգրկված են 2 ծրագրեր՝ «Ստոմատոլոգիական բժշկական օգնության ծառայություններ» և «Երեխաների ստոմատոլոգիական առաջնային կանխարգելման ծառայություններ», որոնց շրջանակներում օգտագործվել է 825.5 մլն դրամ՝ կազմելով նախատեսվածի 99.2%-ը և 6.4%-ով զիջելով նախորդ տարվա ցուցանիշը: Վերջինս

պայմանավորված է ստոմատոլոգիական բժշկական օգնության ծառայությունների շրջանակներում կատարված ծախսերի նվազմամբ: Մասնավորապես՝ 748.2 մլն դրամ տրամադրվել է ստոմատոլոգիական բժշկական օգնության ծառայությունների ֆինանսավորմանը՝ ապահովելով 99.6% կատարողական: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը նվազել են 6.8%-ով, պայմանավորված առանձին կազմակերպություններում բուժօգնության դեպքերի կարճատմամբ: Ծրագրի շրջանակներում բուժօգնության դեպքերի քանակը 2016 թվականին կազմել է 276.6 հազար՝ նախորդ տարվա 298.6 հազարի դիմաց:

Երեխաների ստոմատոլոգիական առաջնային կանխարգելման ծառայությունների ծախսերը կազմել են շուրջ 77.3 մլն դրամ՝ ապահովելով 96% կատարողական, որը պայմանավորված է բուժօգնության դեպքերի քանակով: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը նվազել են 2.2%-ով: Ծրագրի շրջանակներում հետազոտվել են 65.4 հազար երեխաներ՝ 2015 թվականի 65.8 հազարի դիմաց:

Պարաբժշկական ծառայությունների շրջանակներում 2016 թվականին օգտագործվել է 7.0 մլրդ դրամ՝ կազմելով նախատեսվածի 99.3%-ը: 2015 թվականի համեմատ նշված ծախսերը նվազել են 19.7%-ով՝ պայմանավորված «Զորակոչային և նախազորակոչային տարիքի անձանց փորձաքննության և բժշկական օգնության ծառայություններ» ծրագրից գումարների տեղափոխմամբ այլ ծրագրեր:

Հաշվետու տարվա ընթացքում 3.2 մլրդ դրամ տրամադրվել է շտապ բժշկական օգնության ծառայությունների ֆինանսավորմանը, որը կատարվել է 99.4%-ով: Ծրագրի շրջանակներում պետության կողմից երաշխավորված անվճար բուժօգնության և սպասարկման շրջանակներում 2016 թվականին սպասարկվել է 466.2 հազար կանչ՝ 2015 թվականի 477.3 հազարի փոխարեն: Արդյունքում նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը նվազել են 2.5%-ով:

Լաբորատոր-գործիքային ախտորոշիչ հետազոտությունների ծախսերը կազմել են 3.2 մլրդ դրամ՝ ապահովելով ծրագրի 99.1% կատարողական: Ծրագրի շրջանակներում 2016 թվականին իրականացվել է 3.7 մլն հետազոտություն՝ 2015 թվականի 4 մլն-ի դիմաց: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը նվազել են 9.2%-ով կամ 329.8 մլն դրամով՝ հիմնականում պայմանավորված ախտորոշիչ հետազոտություններից օգտվողների քանակի կրճատմամբ:

Զորակոչային և նախազորակոչային տարիքի անձանց փորձաքննության և բժշկական օգնության ծառայությունների գծով 2016 թվականի պետական բյուջեի ծախսերը կազմել են 566.3 մլն դրամ կամ նախատեսվածի 99.9%-ը: Ծրագրի շրջանակներում ապահովվել է զինկոմիսարիատներին կից բժշկական հանձնաժողովներում ընդգրկված բժիշկ-փորձագետների և բուժքույրերի աշխատավարձերի վճարումը, ինչպես նաև նշված տարիքի անձանց փորձաքննության նպատակով հիվանդանոցային բուժհաստատություններ ուղեգրման ճանապարհածախսի

փոխհատուցումը: Նախորդ տարվա համեմատ արձանագրվել է նշված ծախսերի նվազում 70%-ով, որը պայմանավորված է տվյալ ծրագրից ՀՀ պաշտպանության նախարարության գծով հատկացվող գումարների տեղափոխմամբ առողջապահության ոլորտի այլ ծրագրեր:

2016 թվականին ՀՀ պետական բյուջեից *հիվանդանոցային ծառայությունների* ձեռքբերման ծախսերը կազմել են 40.3 մլրդ դրամ՝ 99.4%-ով ապահովելով ծրագրի կատարումը: Հիվանդանոցային ծառայությունների ծախսերի ավելի քան 33.1%-ը կամ 13.4 մլրդ դրամը կազմել են ընդհանուր բնույթի հիվանդանոցային ծառայությունների, 37.8%-ը կամ 15.3 մլրդ դրամը՝ մոր և մանկան բժշկական ծառայությունների, 29%-ը կամ 11.7 մլրդ դրամը՝ մասնագիտացված հիվանդանոցային ծառայությունների ծախսերը: 2015 թվականի համեմատ հիվանդանոցային ծառայությունների խմբի ծախսերն աճել են 0.9%-ով:

Ընդհանուր բնույթի հիվանդանոցային ծառայությունների դասում ընդգրկված՝ անհետաձգելի բժշկական օգնության ծախսերը կազմել են ավելի քան 2.0 մլրդ դրամ՝ 99.6%-ով ապահովելով ծրագրային ցուցանիշը: 2016 թվականին պետության կողմից երաշխավորված անվճար հիվանդանոցային բժշկական օգնության և սպասարկման շրջանակներում անհետաձգելի բուժօգնություն է ստացել 21.8 հազար հիվանդ՝ 2015 թվականի 22.0 հազար հիվանդի դիմաց: 2015 թվականի համեմատ նշված ծախսերը նվազել են 9.7%-ով՝ հիմնականում պայմանավորված ծառայությունների փաստացի միջին գնի նվազմամբ:

Հաշվետու տարում պետական բյուջեից ավելի քան 6.4 մլրդ դրամ է տրամադրվել բնակչության սոցիալապես անապահով և հատուկ խմբերում ընդգրկվածներին տրամադրվող բժշկական օգնության ծառայությունների ֆինանսավորմանը՝ 99.7%-ով ապահովելով ծրագրի կատարումը: Այս ծրագրով պետության կողմից երաշխավորված անվճար հիվանդանոցային բժշկական օգնության շրջանակներում 2016 թվականին բուժօգնություն է ստացել 63.1 հազար հիվանդ՝ 2015 թվականի 66.5 հազարի դիմաց: 2015 թվականի համեմատ նշված ծախսերը նվազել են 14.2%-ով կամ 1.1 մլրդ դրամով՝ հիմնականում պայմանավորված 2016 թվականի սրտի անհետաձգելի վիրահատության ծառայությունների ծախսերի տեղափոխմամբ «Սրտի վիրահատության ծառայություններ» ծրագիր:

Զինծառայողների, ինչպես նաև փրկարար ծառայողների և նրանց ընտանիքների անդամների համար բժշկական օգնության ծառայությունների ձեռքբերման ծախսերը կազմել են 2.4 մլրդ դրամ՝ ապահովելով ծրագրի 99.7% կատարողական: Ծրագրի շրջանակներում պետության կողմից երաշխավորված անվճար հիվանդանոցային բժշկական օգնության և սպասարկման շրջանակներում բուժօգնություն է մատուցվել 12.7 հազար հիվանդի՝ 2015 թվականի 12.1 հազար հիվանդի դիմաց: 2015 թվականի համեմատությամբ նշված ծախսերը նվազել են 17.4%-ով կամ 7.6 մլն դրամով՝ հիմնականում պայմանավորված այն հանգամանքով, որ 2016 թվականին սրտի անհետաձգելի

վիրահատության ծառայությունների ձեռքբերման ծախսերը տվյալ ծրագրից տեղափոխվել են «Սրտի վիրահատության ծառայություններ» ծրագիր:

Պետական հիմնարկների և կազմակերպությունների աշխատողների բժշկական օգնության և սպասարկման ծառայությունների ծախսերը կազմել են 2.6 մլրդ դրամ՝ 99.1%-ով ապահովելով ծրագրի կատարումը: Այս ծրագրի շրջանակներում պետության կողմից երաշխավորված անվճար հիվանդանոցային բժշկական օգնության և սպասարկման շրջանակներում 2016 թվականին բուժօգնություն է մատուցվել 9.9 հազար հիվանդի՝ 2015 թվականի 9.8 հազարի դիմաց: Միաժամանակ իրականացվել են սոցիալական փաթեթի 75.9 հազար շահառուների կանխարգելիչ քննություններ: Նշենք, որ 2015 թվականին նշված ծրագիրը ֆինանսավորվել էր նաև ՀՀ առողջապահության նախարարության համար բացված արտաբյուջետային հաշվի միջոցներից՝ 992.7 մլն դրամի չափով: Վերջինս հաշվի առնելու պարագայում 2015 թվականի համեմատ պետական հիմնարկների և կազմակերպությունների աշխատողների բժշկական օգնության և սպասարկման ծառայությունների ծախսերի գծով արձանագրվել է 18.6% անկում, ինչը հիմնականում պայմանավորված է տվյալ ծրագրից սրտի վիրահատությանը հատկացվող միջոցները «Սրտի վիրահատության ծառայություններ» ծրագիր տեղափոխելու հանգամանքով:

Հաշվետու տարում 11.7 մլրդ դրամ է օգտագործվել *մասնագիտացված հիվանդանոցային ծառայությունների* ձեռքբերման նպատակով՝ կազմելով ծրագրի 99.5%-ը: 2015 թվականի համեմատ նշված ծախսերն աճել են 28.8%-ով կամ ավելի քան 2.6 մլրդ դրամով, ինչը հիմնականում պայմանավորված է սրտի վիրահատությունների ծառայությունների ծախսերով, որտեղ համախմբվել են հիվանդանոցային որոշ ծրագրերում նախկինում ընդգրկված սրտի վիրահատության ծախսերը:

2016 թվականին տուբերկուլյոզի բժշկական օգնության ծառայությունների ծախսերը կազմել են ավելի քան 1.4 մլրդ դրամ՝ 99.6%-ով ապահովելով ծրագրի կատարումը: Ծրագիրը ներառում է նոր հայտնաբերված տուբերկուլյոզով հիվանդների և կրկնակի հիվանդացածների բուժման կազմակերպումը հակատուբերկուլյոզային դիսպանսերներում, տուբերկուլյոզով քրոնիկ հիվանդների երկարատև բժշկական օգնության, սպասարկման և խնամքի ապահովումը հակատուբերկուլյոզային դիսպանսերներում, վերականգնողական բուժման կազմակերպումը հակատուբերկուլյոզային առողջարաններում: Ծրագրի շրջանակներում բուժօգնություն ստացած հիվանդների թիվը 2016 թվականին կազմել է 3.7 հազար՝ 2015 թվականի 4.4 հազարի դիմաց: Նախորդ տարվա համեմատ այս ծախսերը նվազել են 1.4%-ով՝ պայմանավորված ֆինանսավորման մեխանիզմների փոփոխությամբ, որը նպաստել է քրոնիկ հիվանդների բուժումը դիսպանսեր հսկողությամբ կազմակերպելուն, ինչն էլ հանգեցրել է հիվադների թվաքանակի նվազմանը:

Աղիքային և այլ ինֆեկցիոն հիվանդությունների բժշկական օգնության ծառայությունների ձեռքբերման նպատակով 2016 թվականին պետական բյուջեից տրամադրվել է ավելի քան 1.2 մլրդ

դրամ՝ ապահովելով 99.3% կատարողական: Ծրագրի շրջանակներում 2016 թվականին բուժօգնություն է ստացել 12 հազար հիվանդ՝ 2015 թվականի 14.2 հազարի դիմաց: Նշված ծախսերը նախորդ տարվա համեմատ էական փոփոխություն չեն կրել, իսկ բուժօգնության փաստացի միջին գնի գծով արձանագրվել է աճ:

Սեռական ճանապարհով փոխանցվող հիվանդությունների բժշկական օգնության ծառայությունների գծով պետական բյուջեից հատկացված միջոցներն ամբողջությամբ օգտագործվել են՝ կազմելով 181.3 մլն դրամ: Ծրագրի շրջանակներում 2016 թվականին բուժօգնություն է ստացել 1.4 հազար հիվանդ՝ 2015 թվականի 1.3 հազարի փոխարեն: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը նվազել են 2.3%-ով, ինչը պայմանավորված է բուժօգնության փաստացի միջին գնի նվազմամբ:

Հոգեկան և նարկոլոգիական հիվանդների բժշկական օգնության ծառայություններին 2016 թվականին ՀՀ պետական բյուջեից տրամադրվել է ավելի քան 2.7 մլրդ դրամ՝ կազմելով նախատեսվածի 99.8%-ը: Ծրագրի շրջանակներում բուժօգնություն է ստացել 6.3 հազար հիվանդ՝ 2015 թվականի 6.0 հազարի փոխարեն: 2015 թվականի համեմատ այս ծախսերը նվազել են 0.9%-ով՝ պայմանավորված բուժօգնության միջին գնի նվազմամբ:

Զորակոչային և նախազորակոչային տարիքի անձանց բժշկական օգնության և փորձաքննության ծառայությունների ձեռքբերման նպատակով ծախսվել է 845.9 մլն դրամ՝ 95.8%-ով ապահովելով ծրագրի կատարումը: Շեղումը պայմանավորված է դեպքերի քանակով: Ծրագրի շրջանակներում բուժօգնություն է ստացել 43.2 հազար հիվանդ՝ նախատեսված 49.5 հազարի և 2015 թվականի 46.7 հազարի փոխարեն: Նախորդ տարվա համեմատ այս ծախսերը նվազել են 1.4%-ով կամ 11.8 մլն դրամով, որը պայմանավորված է 2016 թվականին բուժօգնություն ստացած անձանց քանակի նվազմամբ և նվազագույն աշխատավարձի և էլեկտրաէներգիայի սակագնի աճի արդյունքում բուժօգնության միջին գնի աճով:

Ուռուցքաբանական և արյունաբանական հիվանդությունների բժշկական օգնության ծառայությունների ծախսերը կատարվել են 100%-ով՝ կազմելով ավելի քան 1.1 մլրդ դրամ: Նշված ծրագրի շրջանակներում պետության կողմից երաշխավորված անվճար հիվանդանոցային բժշկական օգնության և սպասարկման շրջանակներում նախորդ տարվա 10.9 հազար հիվանդի փոխարեն 2016 թվականին բուժօգնություն է ստացել 10.7 հազար հիվանդ: 2015 թվականի համեմատ տվյալ ծախսերն աճել են 1.6%-ով, ինչը պայմանավորված է էլեկտրաէներգիայի սակագնի բարձրացմամբ:

Վերականգնողական բժշկական օգնության ծառայությունների համար նախատեսված միջոցները ևս ամբողջությամբ օգտագործվել են՝ կազմելով շուրջ 610.5 մլն դրամ: Ծրագրի շրջանակներում 2016 թվականին, ինչպես և 2015 թվականին, բուժօգնություն է ստացել 4.3 հազար

հիվանդ՝ նախատեսված 3.8 հազարի փոխարեն: Նշված ծախսերը նախորդ տարվա համեմատ էական փոփոխություն չեն կրել: Բյուջեով նախատեսվածի համեմատ ավելի մեծ թվով հիվանդների սպասարկումն ապահովվել է բուժօգնության փաստացի միջին գնի նվազման հաշվին:

Հաշվետու տարում թրաֆիքինգի զոհերին բժշկական օգնության ծառայությունների գծով նախատեսված 2.2 մլն դրամի միջոցները չեն օգտագործվել՝ դեպքերի բացակայության պատճառով:

Սրտի վիրահատությունների ծառայությունների նպատակով ծախսվել է 3.6 մլրդ դրամ՝ 99.9%-ով ապահովելով ծրագրի կատարումը: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են շուրջ 2.8 անգամ: Աճը պայմանավորված է առողջապահության ոլորտի այլ ծրագրերից սրտի վիրահատությանը հատկացվող միջոցները տվյալ ծրագիր տեղափոխելու հանգամանքով: Ծրագրի շրջանակներում 2016 թվականին բուժօգնություն է մատուցվել 5.7 հազար հիվանդի՝ նախատեսված 3.5 հազարի դիմաց: Բյուջեով նախատեսվածի համեմատ ավելի մեծ թվով հիվանդների սպասարկումն ապահովվել է բուժօգնության փաստացի միջին գնի նվազման հաշվին:

Մոր և մանկան բժշկական ծառայությունների դասի շրջանակներում իրականացվել են 4 ծրագրեր, որոնց ծախսերն ընդհանուր առմամբ կատարվել են 99.3%-ով՝ կազմելով շուրջ 15.3 մլրդ դրամ: 2015 թվականի համեմատ նշված ծախսերն աճել են 0.7%-ով կամ 99.5 մլն դրամով՝ հիմնականում պայմանավորված երեխաներին մատուցվող բժշկական օգնության ծառայությունների ձեռքբերման ծախսերի աճով:

Հաշվետու տարում 6.7 մլրդ դրամ է տրամադրվել մանկաբարձական բժշկական օգնության ծառայությունների ձեռքբերմանը՝ 99.1%-ով ապահովելով ծրագիրը: Այս ծրագրի գծով պետության կողմից երաշխավորված անվճար հիվանդանոցային բժշկական օգնության և սպասարկման շրջանակներում 2016 թվականին արձանագրվել է 57.7 հազար դեպք՝ 2015 թվականի 59.6 հազար դեպքի դիմաց: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը նվազել են 2.3%-ով կամ 156.6 մլն դրամով՝ պայմանավորված բուժօգնության դեպքերի կրճատմամբ:

Գինեկոլոգիական հիվանդությունների բժշկական օգնության ծառայություններին ուղղվել է շուրջ 354.5 մլն դրամ կամ նախատեսվածի 96.8%-ը: Շեղումը պայմանավորված է փաստացի միջին գների նվազմամբ: Ծրագրի շրջանակներում պետության կողմից երաշխավորված անվճար հիվանդանոցային բժշկական օգնության և սպասարկման շրջանակներում 2016 թվականին բուժօգնություն է տրամադրվել 4.9 հազար հիվանդի՝ 2015 թվականի 4.7 հազարի դիմաց: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 3.1%-ով կամ 10.5 մլն դրամով՝ պայմանավորված դեպքերի քանակով:

Հաշվետու տարվա ընթացքում երեխաներին բժշկական օգնության ծառայությունների ձեռքբերմանն ուղղվել է 8.1 մլրդ դրամ կամ նախատեսվածի 99.7%-ը: Ծրագրի շրջանակներում մինչև 7 տարեկան երեխաներին տրամադրվել է հիվանդանոցային բուժօգնություն՝ անկախ երեխայի

հիվանդության ախտորոշումից և սոցիալական կարգավիճակից: Պետության կողմից երաշխավորված անվճար բուժօգնության և սպասարկման շրջանակներում 2016 թվականին բուժօգնություն է ստացել 67.7 հազար հիվանդ՝ 2015 թվականի 62.2 հազարի դիմաց: 2015 թվականի համեմատ նշված ծախսերն ավելացել են 3.4%-ով կամ 265.8 մլն դրամով՝ պայմանավորված դեպքերի քանակի աճով:

2016 թվականին անպտուղ զույգերի համար վերարտադրողական օժանդակ տեխնոլոգիաների կիրառմամբ բժշկական օգնության ծառայությունների ձեռքբերման նպատակով ծախսվել է 35.8 մլն դրամ՝ կազմելով նախատեսված ցուցանիշի 80.3%-ը: Ծրագրի շրջանակներում 2016 թվականին իրականացվել են արտամարմնային բեղմնավորումից առաջ կատարվող 3493 ախտորոշիչ հետազոտություններ: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը նվազել են 36.1%-ով կամ 20.2 մլն դրամով՝ պայմանավորված նրանով, որ 2015 թվականին 50 մլն դրամ հատկացվել էր որպես կանխավճար՝ 2016 թվականի ընթացքում վերարտադրողականության օժանդակ տեխնոլոգիաների կիրառմամբ սահմանամերձ գյուղական համայնքների անպտղություն ունեցող 35 ամուսնական զույգերի բժշկական օգնություն և սպասարկում (արտամարմնային բեղմնավորում) տրամադրելու համար: Նշենք, որ ծրագիրը սկսել է իրականացվել 2015 թվականի հոկտեմբեր ամսից:

ՀՀ 2016 թվականի պետական բյուջեից 4.8 մլրդ դրամ է օգտագործվել *հանրային առողջապահական ծառայությունների* ձեռքբերման նպատակով՝ ապահովելով ծրագրի 97.2%-ը՝ պայմանավորված իմունականխարգելման ազգային ծրագրի ու հիգիենիկ և հակահամաճարակային փորձագիտական ծառայությունների ծախսերի կատարողականով: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը նվազել են 10.6%-ով՝ պայմանավորված իմունականխարգելման ազգային ծրագրի ու բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման և հանրային առողջապահության ծառայությունների շրջանակներում ծախսերի նվազմամբ: Տվյալ խմբի շրջանակներում կատարվել են 5 ծրագրեր:

Հիգիենիկ և հակահամաճարակային փորձագիտական ծառայությունների ձեռքբերման համար 2016 թվականին ՀՀ պետական բյուջեից տրամադրվել է 105.2 մլն դրամ, որը կազմել է ծրագրային ցուցանիշի 66.9%-ը: Միջոցներն առանձնացվել են «Արտահիվանդանոցային ծառայություններ» խմբի «Զորակոչային և նախազորակոչային տարիքի անձանց փորձաքննության և բժշկական օգնության ծառայություններ» ծրագրից և օգտագործվել են հանրապետության զինված ուժերում հիգիենիկ, հակահամաճարակային ու կանխարգելիչ ծառայությունների կազմակերպման նպատակով:

Ամբողջությամբ օգտագործվել են վարակիչ հիվանդությունների օջախների ախտահանման ծառայությունների համար նախատեսված միջոցները, որոնք կազմել են 75 մլն դրամ: Ծրագրի շրջանակներում իրականացվել են վարակիչ հիվանդությունների օջախների ախտահանման

աշխատանքներ՝ մարդու օրգանիզմի վրա շրջակա միջավայրի վնասակար և վտանգավոր գործոնների ազդեցության բացառման ու նվազեցման նպատակով: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն էական փոփոխություն չեն կրել:

Արյան հավաքագրման ծառայությունների ծախսերը կազմել են շուրջ 252.8 մլն դրամ՝ ապահովելով 100% կատարողական: Ծրագրի շրջանակներում ապահովվել է արյան փոխներարկման կայանների պահպանումը, որոնց խնդիրն է արյան հավաքագրումը, բաց թողումը և բուժկանխարգելիչ հիմնարկներին արյունով ու դրա բաղադրիչներով ապահովումը Հայաստանի մարզերում: Երևան քաղաքը սպասարկում է «Ռ.Յոլյանի անվ. արյունաբանության կենտրոն» ՓԲԸ-ն: Կենտրոնի առաջնային խնդիրներից են՝ դիսպանսեր հսկողության տակ գտնվող արյան չարորակ հիվանդություններով տառապող հիվանդների ամբուլատոր հետազոտումը և բուժումը, արյան փոխներարկման կայանների կողմից կատարվող աշխատանքների արտագնա ստուգումը և մեթոդական օգնությունը, ինչպես նաև հղի կանանց հակառեզուս իմունոգլոբուլենով ապահովումը: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 0.7%-ով կամ 1.8 մլն դրամով՝ պայմանավորված էլեկտրաէներգիայի սակագնի և 2015 թվականի հուլիսի 1-ից նվազագույն աշխատավարձի բարձրացմամբ:

Հաշվետու տարում իմունականխարգելման ազգային ծրագրին տրամադրվել է 1.4 մլրդ դրամ՝ 94.6%-ով ապահովելով նախատեսված ցուցանիշը: Շեղումը հիմնականում պայմանավորված է նախահաշվային գնից ցածր գներով ապրանքների ձեռքբերման, ինչպես նաև արտարժույթի՝ կանխատեսվածից ցածր փոխարժեքի արդյունքում առաջացած տնտեսումներով: Ծրագրի շրջանակներում ձեռք են բերվել պատվաստումների ազգային օրացույցով նախատեսվող հնգավալենտ, ռոտավիրուսային և պնևմակոկային ԱԿԴՓ և ԱԴՓ-Մ (դիֆթերիա, հեպատիտ Բ, փայտացում, կապույտ հազ, հեմոֆիլուսային Բ տեսակի վարակ, ռոտավիրուսային վարակ, պոլիոմիելիտ, կարմրուկ, կարմրախտ, խոզուկ և տուբերկուլոզ հիվանդությունների դեմ) պատվաստանյութեր՝ կառավարելի վարակիչ հիվանդությունների դեպքերի կանխարգելման և կայուն հակահամաճարակային իրավիճակ ապահովելու համար: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը նվազել են 22.9%-ով կամ 429.0 մլն դրամ՝ պայմանավորված գնումների գործընթացի ընթացքում առաջացած խնայողություններով:

2016 թվականին պետական բյուջեից 2.9 մլրդ դրամ է օգտագործվել բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման և հանրային առողջապահության ծառայությունների ձեռքբերման նպատակով՝ ապահովելով ծրագրի 100% կատարողական: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը նվազել են 7.8%-ով կամ 242.2 մլն դրամով՝ պայմանավորված ծախսերի օպտիմալացման ուղղությամբ կատարված աշխատանքներով:

Ծրագրի շրջանակներում 2016 թվականին իրականացվել են հետևյալ միջոցառումները.

1. Նախազգուշական և ընթացիկ սանիտարական հսկողության գծով՝

- կառուցվող և վերակառուցվող օբյեկտների, բնակավայրերի հատակագծման և կառուցապատման, արդյունաբերական արտադրանքի, ներդրվող նոր տեխնոլոգիաների, սննդամթերքի և պարենային հումքի արտադրության բնագավառում սննդի նոր հավելումների և հատուկ կենսաբանական ակտիվ նյութերի ներմուծման նկատմամբ նախազգուշական հսկողության իրականացումը.
- գործող օբյեկտների, խմելու ջրի, ջրամատակարարման և ջրահեռացման ցանցերի, մթնոլորտային օդը, հողը աղտոտող աղբյուրների, անբարենպաստ ֆիզիկական գործոնների, արտադրական հումքի և սննդամթերքի փորձաքննության, ինչպես նաև փակ շինությունների օդային միջավայրի և աշխատանքային գոտու օդի, մարդու վրա շրջակա միջավայրի ֆիզիկական գործոնների ազդեցության ու այլ գործոնների նկատմամբ ընթացիկ սանիտարական հսկողության իրականացումը.

2. Համաճարակաբանական հսկողության գծով՝

- ինֆեկցիոն և զանգվածային ոչ ինֆեկցիոն հիվանդությունների կանխարգելման միջոցառումների իրականացումը.
- հատուկ վտանգավոր վարակիչ հիվանդությունների դեմ պայքարի և կանխարգելման միջոցառումների իրականացումը.

3. Համաճարակաբանական հատուկ ծրագրերի գծով՝

- մալարիայի դեմ պայքարի և կանխարգելման միջոցառումների իրականացումը.
- մարդու իմունային անբավարարության վիրուսից առաջացած հիվանդության կանխարգելման միջոցառումների իրականացումը.

4. Հիգիենիկ և համաճարակաբանական նորմերի և կանոնների համակարգի կատարելագործման գծով՝

- հիգիենիկ և հակահամաճարակային ծառայության նորմատիվ-տեխնիկական փաստաթղթերի հիմնական բազայի մշակման ապահովումը (ներառյալ ԱՊՀ անդամ պետությունների միասնական համակարգի ընդունումը՝ կիրառելով սանիտարական նորմեր և կանոններ, համաճարակային հսկողության ստանդարտներ և ցուցումներ).

5. Բնակչության կանխարգելիչ պատվաստումների գծով՝

- պոլիոմիելիտի վերջնական վերացումը. դիֆթերիայի, կապույտ հազի, փայտացման, կարմրուկի, էպիդեմիկ պարոտիտի, տուբերկուլյոզի, հեպատիտ «Բ»-ի, այլ հիվանդությունների դեմ կանխարգելիչ պատվաստումների հետ կապված նախապատրաստական աշխատանքների կազմակերպումը և հսկողության իրականացումը.

- համաճարակային ցուցումներով զանգվածային պատվաստումների արշավների անցկացման կազմակերպումը և հսկողության ապահովումը:

Ծրագրի շրջանակներում հակահամաճարակային միջոցառումների իրականացման նպատակով կատարվել են 5573.9 հազար փորձագիտական լաբորատոր ախտորոշիչ հետազոտություններ՝ 2015 թվականի 5579.1 հազարի փոխարեն:

Այլ դասերին չպատկանող առողջապահության ծախսերի խմբի շրջանակներում հաշվետու տարվա ընթացքում օգտագործվել է ավելի քան 13.0 մլրդ դրամ՝ 5.1%-ով գերազանցելով ծրագրված ցուցանիշը: Նշվածը հիմնականում պայմանավորված է Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող ոչ վարակիչ հիվանդությունների կանխարգելման և վերահսկման վարկային ծրագրի կատարողականով: Ընդհանուր առմամբ տվյալ խմբում վարկային և դրամաշնորհային ծրագրերի շրջանակներում օգտագործվել է 8.7 մլրդ դրամ կամ նախատեսվածից 10.1%-ով ավելի: Նախորդ տարվա համեմատ խմբի ծախսերն աճել են 24.8%-ով՝ հիմնականում պայմանավորված ՀԲ աջակցությամբ իրականացվող վերոհիշյալ վարկային ծրագրի, ԱՄՆ ՄԶԳ աջակցությամբ իրականացվող «Հայաստանում տուբերկուլյոզի դեմ պայքարի, մոր և մանկան առողջության և ընտանիքի պլանավորման/վերարտադրողական առողջության բարելավում» և Գլոբալ հիմնադրամի աջակցությամբ իրականացվող «Հայաստանի Հանրապետությունում տուբերկուլյոզի դեմ պայքարի ուժեղացում» դրամաշնորհային ծրագրերի շրջանակներում կատարված ծախսերի աճով:

2016 թվականին պետական բյուջեից 14.9 մլն դրամ է տրամադրվել հանրապետությունից դուրս բուժման ուղեգրված հիվանդների ճանապարհածախսի փոխհատուցման նպատակով՝ ապահովելով ծրագրի 81.3% կատարողական, որը պայմանավորված է մեկնած վայրից կախված՝ կանխատեսված և փաստացի գների տարբերությամբ: Ծրագրի շրջանակներում այն հիվանդները, որոնց ախտորոշումը հնարավոր չէ կատարել հանրապետությունում, ուղեկցողով գործուղվում են Մոսկվա կամ ԱՊՀ երկրներ՝ ախտորոշման և հետագա բուժում նշանակելու համար: Մեկ հիվանդի ճանապարհածախսը ուղեկցողով գնալու և վերադառնալու համար կազմում է միջին հաշվով 400 հազար դրամ: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը նվազել են 46.8%-ով: 2016 թվականին մեկնածների թիվը կազմել է 112՝ նախատեսված 111-ի և նախորդ տարվա 187-ի դիմաց:

Դժվարամատչելի ախտորոշիչ հետազոտությունների շրջանակներում ծախսվել է շուրջ 578.7 մլն դրամ՝ կազմելով ծրագրի 93.8%-ը: Շեղումը պայմանավորված է առանձին բուժհաստատություններում կանխատեսվածի նկատմամբ փաստացի դեպքերի ավելի քիչ քանակով, որոնց արդյունքում ծրագրի ընդհանուր միջոցներում առաջացել են տնտեսումներ: 2015 թվականի համեմատ նշված ծախսերը նվազել են 13%-ով, որը պայմանավորված է հետազոտությունների գների նվազմամբ: Միջոցներն ուղղվել են սոցիալապես անապահով խավի հիվանդների՝ յուրահատուկ, բացառիկ բուժսարքավորումներով և տեխնոլոգիաներով անվճար ախտորոշիչ 47.5 հազար

հետազոտությունների իրականացմանը (միջուկամագնիսական տոմոգրաֆ, համակարգչային տոմոգրաֆիա, կորոնարոգրաֆիա, հորմոնալ հետազոտություններ և այլն)՝ 2015 թվականի 43.6 հազարի դիմաց:

Ամբողջությամբ օգտագործվել են դեղաքաղաքականությունից բխող փորձագիտական և մեթոդաբանական ծառայությունների համար նախատեսված միջոցները, որոնք կազմել են 20.8 մլն դրամ: Ծրագրի շրջանակներում իրականացվել են մարդասիրական կարգով ներմուծվող դեղերի և «որբ դեղերի» ցանկում ընդգրկված դեղերի պետական գրանցման նպատակով փորձաքննություններ, հոգեմետ և հսկվող դեղերի պահանջարկի հաշվարկ և այլ ծառայություններ: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը չեն փոփոխվել:

Առողջապահական օբյեկտների շինարարության նպատակով ծախսվել է 894.4 մլն դրամ՝ կազմելով նախատեսված ցուցանիշի 99.5%-ը: Ծրագրի շրջանակներում իրականացվել են ՀՀ Լոռու մարզի Վանաձորի բժշկական կենտրոնի կառուցման շարունակական աշխատանքները: Նախորդ տարվա համեմատ տվյալ ծախսերը նվազել են 5.8%-ով՝ պայմանավորված շինարարական աշխատանքների ծավալներով:

Դատաբժշկական և գենետիկ ծառայությունների ձեռքբերման համար 2016 թվականի պետական բյուջեից տրամադրվել է շուրջ 389.8 մլն դրամ՝ ամբողջությամբ կատարելով ծրագիրը: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը նվազել են են 1.8%-ով: Ծրագիրը կապված է ՀՀ դատախազության, ՀՀ ոստիկանության, ՀՀ պաշտպանության նախարարության, Ազգային անվտանգության ծառայության և դատարանների որոշումներին համապատասխան, հատուկ և վտանգավոր պայմաններում աշխատանքի (դիահերձում, արտաշիրիմում և այլ հետազոտական աշխատանքներ) հետ:

«Պաթանատոմիական ծառայություններ» ծրագրի գծով ՀՀ պետական բյուջեի ծախսերը ևս նախատեսված ծավալով կատարվել են՝ կազմելով 53.2 մլն դրամ: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը նվազել են 5.4%-ով՝ պայմանավորված ծառայությունների քանակով: Ծրագրի շրջանակներում իրականացվել է մանկական մահերի և հիվանդությունների պատճառների բացահայտում՝ մանկամահացության մակարդակը նվազեցնելու նպատակով:

Հաշմանդամ և կարիքավոր երեխաների՝ օրթեզներով և կորսետներով ապահովման ծառայությունների ծախսերը հաշվետու տարում կազմել են 81.8 մլն դրամ՝ ապահովելով 100% կատարողական: Ծրագրի հատկացումներն ուղղվում են հենաշարժական խնդիրներով հիվանդ երեխաների բուժմանը: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը նվազել են 17.2%-ով: Ծրագրի շրջանակներում 2016 թվականին պատրաստվել է 1703 օրթեզ և կորսետ՝ յուրաքանչյուրը համապատասխանաբար 45.9 հազար և 76.2 հազար դրամ արժեքով՝ 2015 թվականի 1952-ի դիմաց:

Ավելի քան 87.7 մլն դրամ է տրամադրվել առողջ ապրելակերպի խթանման և հանրային իրազեկման ծառայություններին՝ ապահովելով 97.4% կատարողական, որը հիմնականում պայմանավորված է գնումների գործընթացի արդյունքում առաջացած տնտեսումներով: Ծրագրի շրջանակներում իրականացվել է բժշկական վիճակագրության և բժշկասանիտարական տեղեկատվության հավաքում և վերլուծություն: ՀՀ առողջապահության համակարգում շարունակվել են ներդրվել համակարգչային տեխնոլոգիաներ և ցանցեր: Առողջապահության համակարգի գործունեության զանգվածային տեղեկատվության, բնակչության լայն շրջանակներում հավաստի բժշկական գիտելիքների տարածման համար տպագրվում է հանրամատչելի զրույցների հավելված: Նախորդ տարվա համեմատ տվյալ ծախսերը նվազել են 0.9%-ով:

Բժշկական օգնության մասնագիտական, խորհրդատվական և կազմակերպամեթոդական աջակցության ծառայություններին տրամադրվել է շուրջ 225.2 մլն դրամ՝ ապահովելով 95.3% կատարողական, որը պայմանավորված է տնտեսումներով: Արդյունքում ծախսերը 4.7%-ով զիջել են նաև նախորդ տարվա ցուցանիշը: Միջոցներն ուղղվել են 2016 թվականի Առողջապահության ազգային հաշիվների զեկույցի կազմման, Հայաստանի առողջապահության արդյունավետության գնահատման 2016 թվականի տարեկան զեկույցի կազմման, 2016 թվականի կլինիկական, բժշկատնտեսագիտական ստանդարտի մշակման, պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնության և սպասարկման կազմակերպման, ֆինանսավորման մեխանիզմների բարելավման նպատակով նորմատիվ փաստաթղթի մշակման ծառայությունների ձեռքբերմանը, սիրտ-անոթային, սպինալ և պրոֆեսիոնալ հիվանդություններով, շաքարային դիաբետով, ասթմայով տառապող հիվանդներին, ինչպես նաև ուրոլոգներին և նեֆրոլոգներին ուռուցքաբանական, նարկոլոգիական, մաշկավեներական, հոգեբուժական և հակատուբերկուլյոզային ծառայությունների գծով կազմակերպչամեթոդական օգնությանը:

Մարդասիրական օգնության կարգով ստացվող դեղերի և դեղագործական արտադրանքի ստացման, մաքսազերծման և բաշխման ծառայությունների համար նախատեսված միջոցները ևս ամբողջությամբ օգտագործվել են՝ կազմելով ավելի քան 59.7 մլն դրամ: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն էական փոփոխություն չեն կրել:

Հաշվետու տարում ամբողջությամբ օգտագործվել են նաև տուբերկուլյոզի դեմ պայքարի ազգային ծրագրի համակարգման ծառայությունների ձեռքբերման համար նախատեսված միջոցները, որոնց տրամադրվել է 62.1 մլն դրամ: Ծրագրի նպատակն է բնակչությանը պահպանել տուբերկուլյոզի տարածման վտանգից՝ ապահովել հիվանդության վաղ հայտնաբերումը: Ծրագրի շրջանակներում մատուցվել են տուբերկուլյոզի դեմ պայքարի ազգային ծրագրի պահպանման աջակցության ծառայություններ, իրականացվել է ծրագրի աշխատանքների կազմակերպում, այդ թվում՝ մոնիթորինգ, եռամսյակային վիճակագրական տվյալների հավաքում,

հակատուբերկուլյոզային բուժհաստատություններում տուբերկուլյոզի կանխարգելմանն ուղղված աշխատանքների կազմակերպում և Առողջապահության համաշխարհային կազմակերպության կողմից մշակված ստանդարտ ընթացակարգերի կիրառում, ստուգայցերի հաճախակի կազմակերպում, հիվանդներին սոցիալ-հոգեբանական աջակցության ցուցաբերում, մեթոդական օժանդակության ցուցաբերում Հայաստանում գործող տուբերկուլյոզային և հակատուբերկուլյոզային կազմակերպություններին, վերապատրաստման դասընթացների իրականացում ֆտիզիատորների, առողջության առաջնային պահպանման բժիշկների և բուժքույրերի համար, տուբերկուլյոզի կանխարգելման նպատակով առողջ վարքագծի վերաբերյալ գիտելիքների քարոզչություն, իրազեկման աշխատանքների իրականացում բնակչության շրջանում: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն էական փոփոխություն չեն կրել:

ՀՀ մարզային առողջապահական կազմակերպություններում բժշկական ծառայությունների մատուցման նպատակով բժիշկ-մասնագետների ժամանակավոր ուղեգրման ծախսերի փոխհատուցման նպատակով պետական բյուջեից տրամադրվել է 5.3 մլն դրամ, որը կազմել է նախատեսված միջոցների 54.3%-ը՝ պայմանավորված ըստ ցանկության մարզեր ուղեգրված բժիշկ-մասնագետների քանակով: Ծրագրի շրջանակներում 2016 թվականին ՀՀ մարզեր են ուղեգրվել 4 բժիշկ-մասնագետ՝ 15 ամիս տևողությամբ, իսկ 2015 թվականին՝ 5 բժիշկ-մասնագետ՝ 15 ամիս տևողությամբ: Կադրային քաղաքականության շնորհիվ ՀՀ մարզերը որոշ չափով համալրվել են մասնագետներով և նվազել է բժիշկ-մասնագետների մարզ ուղեգրման հրատապ պահանջարկը: Արդյունքում նախորդ տարվա համեմատ տվյալ ծախսերը նվազել են 33.9%-ով:

Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող Առողջապահական համակարգի արդիականացման երկրորդ վարկային ծրագրի լրացուցիչ ֆինանսավորման ծրագրի շրջանակներում օգտագործվել է շուրջ 45.2 մլն դրամ՝ ապահովելով ծրագրի 82.9% կատարողական: Շեղումը հիմնականում պայմանավորված է գնումների գործընթացի արդյունքում առաջացած տնտեսումներով: Ծրագիրը 2016 թվականին ավարտվել է, և ծրագրի շրջանակներում նախատեսված աշխատանքներն ամբողջությամբ կատարվել են: Ծրագրի նպատակն էր խթանել համակարգի արդյունավետ կառավարումը, զարգացնել ընտանեկան բժշկության վրա հիմնված առաջնային բժշկական օգնության ծառայությունները և վերականգնել մարզերում առողջապահական ծառայությունների մատուցումը՝ բնակչությանն առավել հասանելի, որակյալ և կայուն առողջապահական ծառայություններ տրամադրելու համար, ամբուլատորիաների կառուցումը, բժշկական սարքավորումների, գրասենյակային և ուսումնական կահույքի ձեռքբերումը, ինչպես նաև բժշկական կենտրոններում շինարարական աշխատանքների իրականացումը: 2016 թվականին ՀՀ չորս մարզերում շահագործման են հանձնվել նորակառույց հինգ գյուղական բժշկական ամբուլատորիաներ՝ ՀՀ Արարատի մարզի «Մխչյանի առողջության առաջնային պահպանման

կենտրոն» ՓԲԸ-ի և «Լանջազատի առողջության առաջնային պահպանման կենտրոն» ՓԲԸ-ի, ՀՀ Վայոց Ձորի մարզի «Հռիփսիմեի առողջության կենտրոն» ՓԲԸ-ի, ՀՀ Արագածոտնի մարզի «Բյուրականի բժշկական ամբուլատորիա» ՓԲԸ-ի և ՀՀ Լոռու մարզի «Ուռուտի առողջության առաջնային պահպանման կենտրոն» ՓԲԸ-ի նորակառույց շենքերը՝ հագեցած բժշկական սարքավորումներով, կահույքով և պարագաներով:

ՀԲ աջակցությամբ իրականացվող ոչ վարակիչ հիվանդությունների կանխարգելման և վերահսկման վարկային ծրագրի շրջանակներում օգտագործվել են 6.2 մլրդ դրամ միջոցներ՝ 33.8%-ով գերազանցելով նախատեսված ցուցանիշը: Ծրագրի գերազանցումը պայմանավորված է ՀՀ ԱՆ պրոֆ. Ռ.Հ. Յոլյանի անվան Արյունաբանական կենտրոնը և տարածաշրջանային նշանակություն ունեցող Ոսկրածուծի փոխպատվաստման և բարձր դեղաչափային քիմիաթերապիայի բաժանմունքի ու ցողունային բջիջների լաբորատորիայի վերանորոգման և սարքավորումներով հագեցման աշխատանքներով, ինչպես նաև Ուռուցքաբանության գերազանցության հայկական կենտրոնի (ՈՒԳՀԿ) Ճառագայթային բուժման կենտրոնի կառուցման նախագծանախահաշվային աշխատանքներով: Ծրագրի նպատակն է՝ բարելավել մոր և մանկան առողջության պահպանման ծառայությունները և առողջության առաջնային պահպանման (ԱԱՊ) օղակում ընտրված ոչ վարակիչ հիվանդությունների վաղ հայտնաբերումը և վերահսկումը, ինչպես նաև ծրագրում ընդգրկված հիվանդանոցներում առողջապահական ծառայությունների որակը և արդյունավետությունը:

2016 թվականին ծրագրի շրջանակներում իրականացվել են հետևյալ աշխատանքները.

- Սքրինինգային հետազոտություններ: 2015 թվականից մեկնարկել են քաղաքացիների համար անվճար սքրինինգային հետազոտությունները, որոնց նպատակն է ՀՀ բնակչության ռիսկային խմբերում իրականացնել ոչ վարակիչ հիվանդությունների (հիպերտոնիա, շաքարային դիաբետ, արգանդի պարանոցի քաղցկեղ) զանգվածային սքրինինգներ՝ ուղղված այդ հիվանդությունների վաղ հայտնաբերմանը, վերահսկմանը և մահացության նվազեցմանը: 2016 թվականի ընթացքում ամսական կտրվածքով այցելություններ են իրականացվել ընդհանուր թվով 156 ԱԱՊ հաստատություններ՝ սքրինինգների արդյունքների մշտադիտարկման նպատակով: Սքրինինգային ծրագրին զուգահեռ Երևանում և ՀՀ մարզերում իրականացվել է ծրագրի հանրային իրազեկման քարոզարշավ՝ օգտագործելով զանգվածային լրատվության և գովազդի տարբեր հարթակներ: Ավարտվել են «Առողջապահական համակարգի գործունեության գնահատում» և «Առողջապահության ազգային հաշիվներ» զեկույցների մշակման համար իրականացվող տնային տնտեսությունների հետազոտությունները: Երևանի և ՀՀ մարզերի 15 բժշկական կազմակերպություններ համալրվել են արգանդի պարանոցի նախաքաղցկեղային իրավիճակների վարման համար նախատեսված բժշկական և ախտորոշիչ սարքավորումներով:

- Մարզային հիվանդանոցային համակարգի արդիականացում: 2016 թվականին շահագործման է հանձնվել ՀՀ Սյունիքի մարզի Մեղրու նորակառույց տարածաշրջանային բժշկական կենտրոնը՝ հագեցված արդի, միջազգային բոլոր չափանիշներին համապատասխանող բժշկական սարքավորումներով, կահույքով և պարագաներով: Ավարտվել են ՀՀ Գեղարքունիքի մարզի «Սևանի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի հիվանդանոցային նոր մասնաշենքի կառուցման նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման աշխատանքները, և մեկնարկել են շինարարական աշխատանքները: Ավարտվել են ՀՀ Արարատի մարզի «Արտաշատի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի հիվանդանոցային մասնաշենքի հիմնանորոգման նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման աշխատանքները, և մեկնարկել են շինարարական աշխատանքները: Նախատեսվում է նաև կենտրոնները հագեցնել անհրաժեշտ բժշկական սարքավորումներով և կահույքով:
- Արյունաբանական կենտրոն: 2016 թվականին շահագործման է հանձնվել ՀՀ ԱՆ պրոֆ. Ռ.Հ. Յոլյանի անվան արդիականացված արյունաբանական կենտրոնը և տարածաշրջանային նշանակություն ունեցող ոսկրածուծի փոխպատվաստման և բարձր դեղաչափային քիմիաթերապիայի բաժանմունքն ու ցողունային բջիջների լաբորատորիան: Կենտրոնի վեց մասնագետներ վերապատրաստման դասընթացների են մասնակցել Գերմանիայի Դաշնության Համբուրգ քաղաքի Համբուրգ-Էպենդորֆ համալսարանական կլինիկայում:
- Ուռուցքաբանության ոլորտ: 2016 թվականին ստեղծվել է Չարորակ նորագոյացությունների ռեգիստրի նոր հատուկ տեղեկատվական ծրագրային փաթեթը: Ավարտվել է Ուռուցքաբանության գերազանցության հայկական կենտրոնի (ՈՒԳՀԿ) Ճառագայթային բուժման կենտրոնի կառուցման նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման գործընթացը:

2016 թվականին պետական բյուջեով նախատեսվել է ՀԲ աջակցությամբ իրականացվող ոչ վարակիչ հիվանդությունների կանխարգելման և վերահսկման դրամաշնորհային ծրագիր՝ ուղղված հիմնական վարկային ծրագրի աջակցմանը, որի շրջանակներում օգտագործվել է շուրջ 209.5 մլն դրամ կամ նախատեսված միջոցների 81.1%-ը: Ծրագրով նախատեսվել է ոչ վարակիչ հիվանդությունների առկա միտումների վրա հիմնված ծրագրի հզորությունների գնահատում և մշակում, արդյունքների վրա հիմնված ֆինանսավորման առկա սխեմայի վերանայում, աշխատաժողովների կազմակերպում և ուսումնական նյութերի պատրաստում: Ծախսերի՝ ծրագրված մակարդակից շեղումը պայմանավորված է անցկացված հետազոտությունների քանակով: Սքրինինգային հետազոտությունների շրջանակներում 2016 թվականին իրականացվել է 58602 ՊԱՊ թեստ (արգանդի պարանոցի քաղցկեղի կանխարգելման հետազոտություն)՝ նախատեսված շուրջ 105000-ի փոխարեն՝ պայմանավորված դիմողների քանակով: Նույն ժամանակահատվածում 197110 քաղաքացիների մոտ իրականացվել է արյան մեջ գլյուկոզի հետազոտություն՝ նախատեսված

շուրջ 225000-ի փոխարեն, ինչը նույնպես պայմանավորված է դիմողների քանակով, և շուրջ 270490 քաղաքացիներ անցել են զարկերակային գերճնշման հայտնաբերման սքրինինգ՝ նախատեսված շուրջ 225000-ի փոխարեն:

«Հիվանդությունների կանխարգելում և վերահսկում» վարկային և դրամաշնորհային ծրագրերի շրջանակներում իրականացվում է լայնածավալ հանրային իրազեկման քարոզարշավ, որը նպատակ է հետապնդում ավելացնել քաղաքացիների մասնակցությունը սքրինինգային ծրագրերին, մասնավորապես՝ արգանդի պարանոցի քաղցկեղի կանխարգելման հետազոտությանը, և բարձրացնել դիմելիությունը առողջության առաջնային պահպանման հաստատություններ: Արդյունքում, նշվածը պետք է նպաստի հետագա ծրագրավորված ցուցանիշների իրականացմանը:

ԱՄՆ հիվանդությունների կանխարգելման և վերահսկման կենտրոնի աջակցությամբ իրականացվող սեզոնային գրիպի համաճարակաբանական ցանցի հիմնման և արձագանքման դրամաշնորհային ծրագրի շրջանակներում օգտագործվել է շուրջ 95.5 մլն դրամ՝ ապահովելով ծրագրի 96.2% կատարողական: Շեղումը պայմանավորված է այն հանգամանքով, որ պայմանագրերը կնքվել են նախատեսվածից ցածր գներով, ինչպես նաև կանխատեսվածից ցածր փոխարժեքով կատարված վճարումներով: 2015 թվականի համեմատ նշված ծախսերը նվազել են 20.4%-ով՝ հիմնականում պայմանավորված ծրագրի ավարտական փուլով: Ծրագրի նպատակն է համաճարակաբանական հսկողության կայուն համակարգի ստեղծումը՝ գրիպի համապատասխան լաբորատոր և ախտորոշիչ հզորություններով, որոնք հնարավորություն կընձեռեն արագ ախտորոշել կասկածելի դեպքերը, իրականացնել սեզոնային և պանդեմիկ գրիպի դետքային վերահսկողություն, համապատասխան վարակաբանական հսկողություն և մարդկային ռեսուրսների կարողությունների հսկողությունը, որը հնարավորություն կտա արդյունավետորեն արձագանքել սեզոնային և պանդեմիկ ներուժով գրիպի նոր ենթատեսակներով պայմանավորված վտանգներին, վերահսկել սեզոնային գրիպի ու շնչառական հիվանդությունների ազդեցությունը հանրային առողջության վրա, ինչպես նաև բուժօգնության և ծառայությունների որակի ու մատչելիության բարձրացումը: 2016 թվականին ծրագրի շրջանակներում իրականացվել է գրիպի դետքային համաճարակաբանական հսկողության համակարգի գնահատում, որի արդյունքների հիման վրա վերանայվել են գործող իրավական ակտերը, դրանք պիլոտային հիմունքներով ներդրվել են չորս պարեկ կազմակերպությունում, մասնավորապես՝ մշակվել են պարզեցված ընթացակարգեր, ծանր սուր շնչառական վարակների և գրիպանման հիվանդությունների դեպքերի ստանդարտ բնորոշումների պոստերներ, իրականացվել է նմուշառման ռազմավարության վերանայում, հստակեցվել են շաբաթական կտրվածքով նմուշների քանակությունները, պարեկ պոլիկլինիկայում ընդլայնվել է պարեկ բժիշկների ցանկը: Իրականացվել է համաճարակաբանների, վարակաբանների,

վերակենդանացման բաժանմունքների մասնագետների ուսուցում, ինչպես նաև գրիպի և սուր շնչառական վարակների վերաբերյալ բնակչության իրազեկման լայնածավալ աշխատանքներ:

ՀԲ աջակցությամբ իրականացվող «Հիվանդությունների կանխարգելման և վերահսկման ծրագրի շրջանակներում առողջապահության կատարողականի վրա հիմնված ֆինանսավորման ծրագրի նախապատրաստման համար» դրամաշնորհային ծրագրի շրջանակներում օգտագործվել է 8.5 մլն դրամ՝ 19.5%-ով գերազանցելով նախատեսված ցուցանիշը, որը պայմանավորված է կատարված աշխատանքների ծավալով: Դրամաշնորհային ծրագրի նպատակն է «Ոչ վարակիչ հիվանդությունների կանխարգելման և վերահսկման» վարկային և դրամաշնորհային ծրագրերի շրջանակներում առողջապահության կատարողականի վրա հիմնված ֆինանսավորման ծրագրի նախապատրաստական փուլի իրականացումը: Նշված դրամաշնորհային ծրագրի շրջանակներում կատարվել են չարորակ նորագոյացությունների ռեգիստրի ստեղծման աշխատանքներ, զուգահեռ Երևանում և մարզերում իրականացվել է ծրագրի հանրային իրազեկման քարոզարշավ, ինչպես նաև ծրագրի իրականացման նկատմամբ մշտադիտարկում՝ այդ նպատակով ստեղծված աշխատանքային խմբի կողմից: 2016 թվականին ծրագիրն ավարտվել է:

Հաշվետու տարում արտակարգ իրավիճակներում բուժօգնության ծառայությունների ձեռքբերմանը տրամադրվել է 10.7 մլն դրամ՝ ապահովելով ծրագրի 100% կատարողական: Նախորդ տարվա համեմատ ծախսերը մնացել են անփոփոխ:

Արտասահմանյան առաջավոր կլինիկաների փորձի ուսումնասիրման նպատակով բժիշկների գործուղումների գծով ծախսերը կազմել են 21.1 մլն դրամ՝ ապահովելով ծրագրի 72.1% կատարողական: Շեղումը պայմանավորված է ծախսերի օպտիմալացման ուղղությամբ կատարված աշխատանքներով: Նախորդ տարվա համեմատ տվյալ ծախսերն աճել են 3.5 անգամ՝ պայմանավորված վերապատրաստում անցած բժիշկների քանակով: Ծրագրի շրջանակներում վերապատրաստման են գործուղվել սրտաբաններ, ուռուցքաբաններ, արյունաբաններ և ճառագայթային բժշկության մասնագետներ:

«Երեխաների առողջ սնուցում» հանրային իրազեկման ծառայությունների գծով ծախսերը կազմել են 7.8 մլն դրամ՝ ապահովելով ծրագրի 76.8% կատարողական: Տվյալ ծրագրի գծով շեղումը նույնպես պայմանավորված է ծախսերի օպտիմալացմամբ: Ծրագիրը նպաստում է երեխաների առողջ սնուցման, վաղ տարիքի՝ 0-5 տարեկան երեխաների սնուցման բարելավմանն ուղղված հանրային իրազեկման միջոցառումներին: Երեխայի սնուցման վերաբերյալ ծնողների բավարար տեղեկացվածությունը և ադեկվատ գործելակերպը նպաստում են մանկան առավել հավասարակշռված սնուցման կազմակերպմանը, որը երեխայի նորմալ աճի ու զարգացման կարևորագույն նախապայմաններից է: Ծրագրի նպատակն է լուծել Հայաստանում լայն տարածում գտած երեխաների թերսնուցման խնդիրը իրազեկման՝ գրքույկների, բուկլետների և պաստառների

տպագրման, սննդի քարոզչության հետ կապված հաղորդաշարերի պատրաստման, նկարահանման և հեռարձակման միջոցով, որոնք ամբողջությամբ կատարվել են: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 42.3%-ով՝ պայմանավորված հանրային իրազեկման միջոցառումների և տպագրված գրքույկների, բուկլետների ու պաստառների քանակի աճով:

2016 թվականին ՀՀ պետական բյուջեից 28.6 մլն դրամ է տրամադրվել հոսպիտալների և բուժկետերի բժշկական սարքավորումների պահպանման և շահագործման ծրագրին, որի գծով ծախսերը կազմել են նախատեսվածի 71.5%-ը: Տվյալ միջոցները տեղափոխվել են «Զորակոչային և նախազորակոչային տարիքի անձանց փորձաքննության և բժշկական օգնության ծառայություններ» ծրագրից: Ծրագրի շրջանակներում իրականացվել են հոսպիտալների և բուժկետերի բժշկական սարքավորումների ընթացիկ նորոգման աշխատանքներ:

Գլոբալ հիմնադրամի աջակցությամբ իրականացվող «Հայաստանի Հանրապետությունում տուբերկուլյոզի դեմ պայքարի ուժեղացում» դրամաշնորհային ծրագրի շրջանակներում օգտագործվել է շուրջ 1.1 մլրդ դրամ՝ ապահովելով ծրագրի 80.8% կատարողական: Շեղումը հիմնականում պայմանավորված է սոցիալական աջակցություն ստացող տուբերկուլյոզով հիվանդների նախատեսված և փաստացի քանակների տարբերությամբ, տեխնիկական օժանդակությունների, աուդիտորական ծառայությունների, ինչպես նաև մաքսային միջնորդի ծառայությունների ձեռքբերման համար նախատեսված ծախսերի տնտեսումներով: Ծրագրի նպատակն է տուբերկուլյոզով հիվանդներին սոցիալական աջակցության տրամադրումը, հանրության իրազեկումը, բժշկական անձնակազմի կրթական միջոցառումների իրականացումը, տուբերկուլյոզով ախտահարված հիվանդների հետ շփում ունեցող անձանց շրջանում վարակի վերահսկումը և կանխարգելումը: Ծրագրի շրջանակներում 2016 թվականի ընթացում «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» և «Տուբերկուլոզի դեմ պայքարի ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ների կողմից իրականացվել են հետևյալ միջոցառումները.

- իրականացվել են վարակի վերահսկման ուժեղացման միջոցառումներ՝ տուբերկուլոզով հիվանդների կոնտակտավորների հետ տեղեկատվության տրամադրման նպատակով հանդիպումների իրականացման միջոցով,
- տուբերկուլյոզով հիվանդներին, բուժման խրախուսման նպատակով, տրամադրվել է սոցիալական աջակցություն՝ դրամային փոխանցումների տեսքով,
- ուղղակիորեն վերահսկվող բուժման ռազմավարության շրջանակներում, դեղորայքի ընդունումը բուժաշխատողի ներկայությամբ կազմակերպելու նպատակով, հիվանդներին կամ բուժաշխատողներին տրամադրվել է տրանսպորտային ծախսերի փոխհատուցում,
- ժամանակի կամ բժշկական (տեղաշարժման) հակացուցումներ ունեցող հիվանդների համար իրականացվել է տնային բուժման կազմակերպում,

- Տուբերկուլյոզի դեմ պայքարի ազգային կենտրոնի աշխատանքների արդյունավետությունը բարձրացնելու նպատակով տրամադրվել է լրացուցիչ ֆինանսական աջակցություն, գրասենյակի աշխատակիցների կողմից իրականացվել են ստուգայցեր տուբերկուլյոզային հաստատություններ, ներդրվել է էլեկտոնային տուբերկուլյոզ (ETB) ծրագիրը, իրականացվել են մասնագետների վերապատրաստման դասընթացներ տուբերկուլյոզի ոլորտում:
- Ծրագրի շրջանակներում տուբերկուլյոզի բուժման համար ներմուծվել են անհրաժեշտ քանակով 2-րդ շարքի հակատուբերկուլյոզային դեղորայք, բժշկական ծախսանյութեր և ժամանակակից ախտորոշիչ սարքավորումներ, գնվել են լաբորատոր և վարակի վերահսկման պարագաներ, պերիֆերիկ լաբորատորիաներից իրականացվել է խորխի նմուշների տեղափոխում ազգային ռեֆերենս լաբորատորիա:

Գլոբալ հիմնադրամի աջակցությամբ իրականացվող «Հայաստանի Հանրապետությունում ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի դեմ պայքարի ազգային ծրագրին աջակցություն» դրամաշնորհային ծրագրի շրջանակներում օգտագործվել է 402.4 մլն դրամ՝ ապահովելով 58.2% կատարողական: Շեղումը հիմնականում մեթադոնի գնումը հաջորդ տարի տեղափոխելու հետևանք է, որը պայմանավորված է պահեստավորված մեթադոնի առկայությամբ, ինչպես նաև գնումների գործընթացի արդյունքում առաջացած տնտեսումներով: Ծրագրի նպատակն է ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի վերաբերյալ խորհրդատվության, հետազոտության կետերին և ՄԻԱՎ-ի վերաբերյալ հետազոտություններ կատարող լաբորատորիաներին տեխնիկական աջակցության և մեթոդական օգնության տրամադրումը, սեմինար-վարժանքների կազմակերպումը, տեղեկատվական համակարգի հզորացումը, ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի մոնիտորինգի և գնահատման ազգային միասնական համակարգի ստեղծումը և համաճարակաբանական հետազոտությունների իրականացումը:

2016 թվականի ընթացքում ծրագրի շրջանակներում իրականացվել են հետևյալ միջոցառումները.

- ՄԻԱՎ վարակի հայտնաբերման և ախտորոշման համար նախատեսված թեստ-հավաքածուների ձեռքբերում.
- ՄԻԱՎ վարակի հակառետրովիրուսային բուժման համար նախատեսված դեղամիջոցների ձեռքբերում.
- ՄԻԱՎ վարակի ընթացքում առաջացած օպորտունիստական վարակների բուժման համար նախատեսված դեղամիջոցների, ախտորոշիչ նյութերի և լաբորատոր ծախսանյութերի ձեռքբերում.
- ՄԻԱՎ-ի վերաբերյալ խորհրդատվության և հետազոտության (ԽՀ) կետերին և լաբորատորիաներին տեխնիկական աջակցության տրամադրում.
- ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի վերաբերյալ առավել ռիսկային խմբերում վարքագծային և կենսաբանական համաճարակաբանական հետազոտության իրականացում.

- ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի վերաբերյալ մոնիթորինգի և գնահատման ազգային միասնական համակարգի հզորացում.
- ՀՀ ԱՆ Նարկոլոգիական հանրապետական կենտրոնում, Լոռու մարզային հոգենյարդաբանական դիսպանսերում, Գյումրու հոգեկան առողջության կենտրոնում, Սյունիքի մարզային հոգենյարդաբանական դիսպանսերում, ինչպես նաև 9 քրեակատարողական հիմնարկներում մեթադոնային փոխարինող բուժման ծրագրի իրականացում.
- ՀՀ-ում աշխատանքային միգրանտների և նրանց զուգընկերների շրջանում ՄԻԱՎ-ի նկատմամբ հետազոտության իրականացում:

Ծրագրի շրջանակներում 2016 թվականի ընթացքում 1188 հիվանդ ստացել է հակառետրովիրուսային բուժում, 495 թմրամիջոցներ գործածողներ ստացել են մեթադոնային փոխարինող բուժում: Իրականացվել է 2300 աշխատանքային միգրանտների և նրանց զուգընկերների ՄԻԱՎ-ի վերաբերյալ հետազոտություն:

Գործադիր իշխանության, պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների պահպանման ծրագրի շրջանակներում 1.8 մլրդ դրամ է տրամադրվել ՀՀ առողջապահության նախարարության աշխատակազմի պահպանմանը՝ ապահովելով 97.8% կատարողական: Շեղումը հիմնականում պայմանավորված է 2016 թվականին տեսչական ստուգումների թվաքանակի կրճատման հետ կապված՝ գործուղումների թվաքանակի նվազմամբ, ինչպես նաև գնումների գործընթացի արդյունքում առաջացած տնտեսումներով: Նախորդ տարվա համեմատ տվյալ ծախսերը նվազել են 4.9%-ով՝ հիմնականում պայմանավորված ծախսերի օպտիմալացման ուղղությամբ կատարված աշխատանքներով:

ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության աջակցությամբ իրականացվող «Հայաստանում տուբերկուլյոզի դեմ պայքարի, մոր և մանկան առողջության և ընտանիքի պլանավորման/վերարտադրողական առողջության բարելավում» դրամաշնորհային ծրագրի շրջանակներում օգտագործվել է 601.9 մլն դրամ՝ ապահովելով 77% կատարողական: Շեղումը հիմնականում պայմանավորված է նախատեսված շինարարական աշխատանքների տեղափոխմամբ 2017 թվական:

Ծրագրի շրջանակներում 2016 թվականի ընթացքում իրականացվել են հետևյալ միջոցառումները.

- հիվանդների և նրանց ընտանիքի անդամների կրթական գործընթացներ՝ բուժման այլընտրանքային մեթոդների ներդրման նպատակով,
- վարակի վերահսկման, ինչպես նաև մանկական տուբերկուլյոզի կառավարման բարելավման նպատակով սեմինար վարժանքներ,

- Տուբերկուլյոզի դեմ պայքարի ազգային կենտրոնի բազայի վրա կրթական, խորհրդատվական և ծրագրային կառավարման՝ Առողջապահության համաշխարհային կազմակերպության կողմից հավատարմագրված ազգային կենտրոնի նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակում,
- մոր և մանկան առողջության, ընտանիքի պլանավորման/վերարտադրողական առողջության ծառայությունների որակի բարելավման նպատակով յոթ գործելակարգերի և չափորոշիչների մշակում,
- մանկաբարձ-գինեկոլոգների, մանկաբույժների, նեոնատոլոգների և մանկաբարձուհիների վերապատրաստման դասընթացների անցկացում,
- մի շարք նորմատիվ փաստաթղթերի նախագծերի մշակման և էլեկտրոնային համակարգերի մշակման աշխատանքներ՝ ուղղված հանրային ծառայությունների տրամադրման համակարգում թափանցիկության և հաշվետվողականության կատարելագործմանը (հիվանդների ուղեգրման և հերթագրման ընթացակարգերի, բուժաշխատողների վարձատրության հաշվարկման, պետական գնումների ռազմավարության և այլն),
- տուբերկուլյոզի ու մոր և մանկան ոլորտներում հանրային առողջության համաճարակաբանական վերահսկողության համակարգի բարելավում:

Նշենք, որ ծրագիրը սկսել է իրականացվել 2016 թվականից:

<u>Հանգիստ, մշակույթ և կրոն</u>

2016 թվականին *հանգստի, մշակույթի և կրոնի* ոլորտի ծրագրերի իրականացմանը ՀՀ պետական բյուջեից տրամադրվել է 26.6 մլրդ դրամ՝ կազմելով նախատեսված ծախսերի 98.7%-ը: Նախորդ տարվա համեմատ ոլորտի ծախսերը նվազել են 12.4%-ով, ինչը հիմնականում պայմանավորված է Ավստրիական «Վագներ-Բիրո Աուստրիա ստեյջ սիսթեմս ԷյՋի», «Էլեկտրոնիկ Թիեթր քոնթրոլս Ջիէմբիէյջ» և «Արթսթեք» ընկերությունների կողմից «Հայաստանի պետական ֆիլհարմոնիկ նվագախումբ» և «Գ. Սունդուկյանի անվան ազգային ակադեմիական թատրոն» ՊՈԱԿ-ների վերազինման ծրագրի ավարտով:

Հաշվետու տարվա ընթացքում *հանգստի և սպորտի ծառայություններին* տրամադրվել է շուրջ 1.8 մլրդ դրամ՝ 99.1%-ով ապահովելով տարեկան ծրագիրը: Նախորդ տարվա համեմատ խմբի ծախսերն աճել են 0.9%-ով:

ՀՀ առաջնություններին և միջազգային միջոցառումներին մասնակցության ապահովման համար մարզիկների նախապատրաստմանը և առաջնությունների անցկացմանը 2016 թվականին տրամադրվել է 917.7 մլն դրամ՝ ապահովելով 98.7% կատարողական: Հատկացված միջոցները

նպատակաուղղվել են մարզական միջոցառումների իրականացմանը, դրանց քանակի ավելացմանը և որակի բարձրացմանը, մարզաձևերի ՀՀ ազգային հավաքական թիմերը երիտասարդ հեռանկարային մարզիկներով համալրմանը: Ծրագրում ընդգրկված 30 մարզական ազգային ֆեդերացիաները կազմակերպել են 137 ուսումնամարզական հավաք, Հայաստանի Հանրապետության 93 առաջնություններ (մեծահասակների, երիտասարդների, պատանիների), մասնակցել են 165 միջազգային մրցաշարերի, այդ թվում՝ Եվրոպայի և աշխարհի առաջնությունների: 2016 թվականին ՀՀ հավաքական թիմերի մարզիկները 12 մարզաձևերից աշխարհի և Եվրոպայի առաջնություններում, ամառային օլիմպիական խաղերում նվաճել են 48 ոսկե, 60 արծաթե և 62 բրոնզե մեդալ, ընդհանուր հաշվարկով՝ 170 մեդալ: Նախորդ տարվա համեմատ ՀՀ առաջնություններին և միջազգային միջոցառումներին մասնակցության ապահովման համար մարզիկների նախապատրաստման և առաջնությունների անցկացման ծախսերը նվազել են 1.3%-ով՝ հիմնականում պայմանավորված այն հանգամանքով, որ 2016 թվականին մեկ միջոցառում չի իրականացվել:

2016 թվականին շախմատիստների պատրաստման նպատակով 127.6 մլն դրամը տրամադրվել է «Հայաստանի շախմատային ակադեմիա» հիմնադրամին՝ կազմելով ծրագրի 100%-ը: Հիմնադրամի նպատակներն ու խնդիրներն են Հայաստանի ամբողջ տարածքում տաղանդաշատ երեխաների բացահայտումը, նրանց անվճար կրթումը, միջազգային մրցաշարերի և միջոցառումների կազմակերպման շնորհիվ շախմատի մասսայականացումը: Նշված նպատակների իրագործման համար մշակվել են համապատասխան ծրագրեր, որոնցից են՝ մարզերում շախմատային խմբակների ստեղծումը, որտեղ երեխաներն անվճար ուսանում են շախմատ, լավագույնները մասնակցում են մրցաշարերի, ստանում որակավորում, միջազգային և ազգային մրցաշարերի կազմակերպումը, մարզիչների որակավորումը բարձրացնելու նպատակով սեմինարների կազմակերպումը, որտեղ արտերկրից հրավիրվում են փորձառու մարզիչներ՝ իրենց փորձը կիսելու և շախմատային գիտելիքներ հաղորդելու համար (2016 թվականին կազմակերպվել է 1 սեմինար), լավագույն սաների համար հավաքների կազմակերպումը (2016 թվականին կազմակերպվել է 1 հավաք): Նախորդ տարվա համեմատ շախմատիստների պատրաստման ծախսերը նվազել են 49.2%-ով՝ պայմանավորված նրանով, որ 2015 թվականի ապրիլի 17-29-ն ընկած ժամանակահատվածում հիմնադրամը կազմակերպել և անցկացրել էր Աշխարհի թիմային առաջնություն:

Միջազգային մարզական միջոցառումների հաղթողներին և մրցանակակիրներին դրամական մրցանակների հանձնման նպատակով հատկացվել է 50 մլն դրամ, որն օգտագործվել է նախատեսված ողջ ծավալով և նախորդ տարվա համեմատ փոփոխություն չի կրել: Ծրագրի շրջանակներում դրամական մրցանակներ են հանձնվել օլիմպիական խաղերի ծրագրում ընդգրկված

մարզաձևերի (նաև օլիմպիական խաղերի ծրագրում չընդգրկված սամբո ըմբշամարտ, միջազգային շաշկի, ուշու և շախմատ մարզաձևերի) աշխարհի ու Եվրոպայի առաջնություններում և շախմատի համաշխարհային պատանեկան օլիմպիադայում 1-ից 3-րդ տեղերը գրաված մարզիկներին, ազգային հավաքական թիմերի գլխավոր (ավագ) մարզիչներին, մեդալակիր մարզիկների անձնական մարզիչներին, ազգային հավաքական թիմերի երկրորդ մարզիչներին, բժիշկներին և մարզիկին պատրաստող մարզական կազմակերպություններին:

Նախազորակոչային և զորակոչային տարիքի երիտասարդության հանրապետական ռազմամարզական խաղերի անցկացման նպատակով տրամադրվել է 6.9 մլն դրամ՝ կազմելով ծրագրի 98.9%-ը: Խաղերն անցկացվել են ՀՀ մարզերի 38 վարչական միավորներում, այդ թվում՝ Երևան քաղաքի 12 վարչական շրջաններում, 4 փուլով, 6 մրցաձևերից: Ռազմամարզական խաղերին մասնակցել են շուրջ 30000 ավագ տարիքի դպրոցական պատանիներ: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն էական փոփոխություն չեն կրել:

Ուսանողական մարզական միջոցառումներին հաշվետու տարում տրամադրվել է շուրջ 4.4 մլն դրամ՝ կազմելով ծրագրային ցուցանիշի 100%-ը: 2015 թվականի համեմատ այս ծախսերը նվազել են 88.4%-ով, որը պայմանավորված է 2015 թվականին անցկացված համաշխարհային ունիվերսիադային Հայաստանի մասնակցությամբ և Երևանում շախմատի եվրոպական համալսարանական առաջնության կազմակերպմամբ: 2016 թվականին անցկացվել են ՀՀ ուսանողական 17-րդ հանրապետական մարզական խաղերը՝ 9 մարզաձևում:

ՀՀ մարզերում և ԼՂՀ-ում հանրապետական մարզական փառատոնի անցկացման ծախսերը կազմել են ծրագրի 99.8%-ը կամ 6.9 մլն դրամ: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը գրեթե չեն փոփոխվել: Ծրագրում ընդգրկված են 7 մրցաձևեր: Փառատոնն անցկացվել է ՀՀ 48 քաղաքներում և ԼՂՀ Ստեփանակերտ քաղաքում, որին մասնակցել է 22000 մարդ:

ՀՀ Նախագահի մրցանակի համար «Լավագույն մարզական ընտանիք» մրցույթի անցկացման նպատակով օգտագործվել է 113.4 մլն դրամ՝ կազմելով ծրագրի 99.2%-ը: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը նվազել են 3.7%-ով՝ պայմանավորված եզրափակիչ փուլում ծրագրի իրականացումը 1 օրով կրճատելու հանգամանքով: Ծրագիրն անցկացվել է ՀՀ մարզերի 42 քաղաքներում, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության 7 շրջաններում և Երևան քաղաքի 12 վարչական շրջաններում, որի համայնքային փուլին մասնակցել են 2061 մարզական ընտանիքներ՝ 6183 մարդ: Եզրափակիչ փուլին մասնակցել են 144 ընտանիքներ՝ թվով 432 մարդ, և հաշմանդամություն ունեցող 22 ընտանիքներ՝ թվով 66 մարդ: Մրցույթում մրցանակային տեղեր զբաղեցրած ընտանիքներն ըստ փուլերի պարգևատրվել են ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության հավաստագրերով և դրամական մրցանակներով, իսկ եզրափակիչ

փուլում՝ ՀՀ Նախագահի վկայագրով և դրամական մրցանակներով: Եզրափակիչ փուլի մասնակից բոլոր ընտանիքների երեխաներին տրամադրվել են բջջային հեռախոսներ:

Հաշմանդամային սպորտին առնչվող ծառայություններին պետական աջակցությունը կազմել է 8.5 մլն դրամ՝ ապահովելով ծրագրային ցուցանիշի 94.7%-ը: Սույն ծրագրի շրջանակներում պետական աջակցություն է տրամադրվում «Հայաստանի ազգային պարալիմպիկ կոմիտե», «Հայաստանի կույրերի միավորում», «Խուլերի հայկական սպորտային կոմիտե», «Հայկական հատուկ օլիմպիադաներ» հասարակական կազմակերպություններին, որոնք ֆիզիկական կուլտուրայի և սպորտի միջոցով օգնում են համապատասխանաբար հենաշարժողական համակարգի, տեսողության, լսողության հետ կապված խնդիրներ ունեցող, մտավոր խանգարումներով մարդկանց՝ ինքնադրսևորվելու և լիարժեք ինտեգրվելու հասարակության մեջ, հաշմանդամների միջազգային մարզական կազմակերպություններում հաշմանդամային սպորտով զբաղվող հասարակական կազմակերպությունների ինտեգրման գործընթացի խթանմանը: 2016 թվականին ծրագրի շրջանակում իրականացվել է 9 միջոցառում, որոնց մասնակցել է հաշմանդամություն ունեցող 541 անձ:

Նախատեսված ողջ ծավալով իրականացվել են հետևյալ 7 ծրագրերը:

Նավամոդելային սպորտի զարգացման նպատակով տրամադրվել է 5.5 մլն դրամ: 2016 թվականին Բուլղարիայում կայացած նավամոդելային սպորտի Եվրոպայի առաջնությունում Հայաստանն արժանացել է Եվրոպայի չեմպիոնի կոչումներին՝ միաժամանակ մեծահասակների և երիտասարդների առաջնություններում, շահել է 3 ոսկե, 1 բրոնզե մեդալներ, սահմանել համաշխարհային նոր ռեկորդ և ստացել լավագույն արդյունք ցուցաբերած 2 անվանական գավաթները: Տվյալ ծախսերը նախորդ տարվա համեմատ փոփոխություն չեն կրել:

Եվրախորհրդի սպորտի մասին համաձայնագրին անդամակցության նպատակով տրամադրվել է 3.7 մլն դրամ: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 3.7%-ով՝ հիմնականում պայմանավորված արտարժույթի փոխարժեքի աճով:

Օլիմպիական խաղերում, աշխարհի և Եվրոպայի առաջնություններում բարձր արդյունքների հասած ՀՀ հավաքական թիմերի մարզիկներին և նրանց մարզիչներին ՀՀ Նախագահի անվանական թոշակ հատկացնելու նպատակով տրամադրվել է 150 մլն դրամ: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 2.7%-ով՝ պայմանավորված թոշակ ստացողների թվի ավելացմամբ և ցուցաբերած մարզական արդյունքներով: 2015 թվականին ցուցաբերած մարզական բարձր արդյունքների համար ՀՀ Նախագահի հավանությանն արժանացած ցուցակի համաձայն ՀՀ հավաքական թիմերի 209 մարզիկներին և նրանց մարզիչներին (այդ թվում՝ 92 մարզիկի և 117 մարզչի) 2016 թվականին հատկացվեց ՀՀ Նախագահի անվանական թոշակ: Կապված 2016 թվականի օլիմպիական խաղերի վարկանիշի ձեռքբերման հետ՝ 2016 թվականին ավելացավ թոշակ

ստացողների թիվը և կազմեց 231: Օլիմպիական խաղերի ավարտից հետո սեպտեմբերի 1-ից մինչև տարեվերջ թոշակ ստացան 196 մարզիկ և մարզիչ:

«2016 թվականի Ռիո դե Ժանեյրոյի 31-րդ օլիմպիական խաղերին Հայաստանի մարզական պատվիրակության նախապատրաստման և մասնակցության ապահովում» ծրագրի իրականացման համար ծախսվել է 189.2 մլն դրամ: 2016 թվականի օգոստոսի 5-21-ը իրականացվել են Ռիո դե Ժանեյրոյի օլիմպիական խաղերին ՀՀ մարզական պատվիրակության մասնակցության աջակցման աշխատանքներ: Օլիմպիական խաղերին մասնակցել են 32 մարզիկներ՝ հունա-հռոմեական ըմբշամարտ (4), ազատ ոճի ըմբշամարտ (4), ծանրամարտ (7), սպորտային մարմնամարզություն (3), բռնցքամարտ (5), ձյուդո (1), աթլետիկա (5), հրաձգություն (1), լող (2) մարզաձևերից:

«2016 թվականի Ռիո դե Ժանեյրոյի 31-րդ պարալիմպիկ խաղերին Հայաստանի մարզական պատվիրակության նախապատրաստման և մասնակցության ապահովում» ծրագրի իրականացման համար ծախսվել է 6.4 մլն դրամ: 2016 թվականի սեպտեմբերի 7-18-ը «Հայաստանի ազգային պարալիմպիկ կոմիտե» հասարակական կազմակերպությունը մասնակցել է Բրազիլիայի Ռիո դե Ժանեյրո քաղաքում կայացած 15-րդ ամառային պարալիմպիկ խաղերին: Հայաստանի Հանրապետությունը ներկայացված է եղել երկու մարզիկով:

2016 թվականի պետական բյուջեով «Թեհրանում խուլերի ըմբշամարտի աշխարհի առաջնությանը Հայաստանի մարզական պատվիրակության մասնակցության ապահովում» ծրագրի իրականացման համար տրամադրվել է 11.9 մլն դրամ: 2016 թվականի մայիսի 1-11-ը Իրանի մայրաքաղաք Թեհրանում «Խուլերի հայկական սպորտային կոմիտե» հասարակական կազմակերպությունը մասնակցել է խուլերի երիտասարդների և մեծահասակների ըմբշամարտի աշխարհի առաջնությանը (հունա-հռոմեական և ազատ ոճ): Հայաստանի Հանրապետությունը ներկայացված է եղել 12 մարզիկներով և նվաճել 8 մեդալ՝ 1 ոսկե, 4 արծաթե, 3 բրոնզե:

2016 թվականի պետական բյուջեով «Երևանում խուլերի շախմատի աշխարհի առաջնության անցկացման ապահովում» ծրագրի իրականացման համար տրամադրվել է 11.2 մլն դրամ: 2016 թվականի մայիսի 16-26-ը Երևանում անցկացվել է խուլերի շախմատի աշխարհի անհատական առաջնությունը, որին մասնակցում էին 24 պետությունների 92 շախմատիստներ: Մրցաշարին մասնակցում էին 7 հայ շախմատիստներ, որոնցից 2-ը զբաղեցրել են մրցանակային տեղեր՝ նվաճելով 1 արծաթե և 1 բրոնզե մեդալ:

Հավաքական թիմերի գլխավոր և ավագ մարզիչների վարձատրության և աշխարհի չեմպիոններին պատվովճարի հատկացման նպատակով տրամադրվել է 40.8 մլն դրամ՝ կազմելով նախատեսվածի 99.6%-ը: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը գրեթե չեն փոփոխվել:

Հակադոպինգային համաշխարհային գործակալությանն անդամակցելու նպատակով ՀՀ 2016 թվականի պետական բյուջեից տրամադրվել է շուրջ 3.6 մլն դրամ: Նախորդ տարվա համեմատ

նշված ծախսերն աճել են 10.8%-ով, ինչը հիմնականում պայմանավորված է ԱՄՆ դոլարի փոխարժեքի աճով:

ՀՀ հավաքական թիմերին մարզահագուստով և մարզահանդերձանքով ապահովման նպատակով տրամադրվել է 70.2 մլն դրամ՝ կազմելով նախատեսվածի 97.6%-ը: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը նվազել են 2.4%-ով, որը պայմանավորված է ձեռք բերված մարզահագուստի պահանջարկի և գների նվազմամբ:

2016 թվականի Լիլլեհամերի երկրորդ ձմեռային պատանեկան օլիմպիական խաղերին Հայաստանի մարզական պատվիրակության մասնակցության ապահովման նպատակով տրամադրվել է 23 մլն դրամ՝ կազմելով նախատեսվածի 96.3%-ը: Տնտեսումն առաջացել է ձմեռային պատանեկան օլիմպիական խաղերին նախատեսված 15 մարզիկների փոխարեն 9 մարզիկի մասնակցության հանգամանքով (վարկանիշներ քիչ ունենալու պատճառով):

«Հաշմանդամություն ունեցող լավագույն մարզիկ» մրցույթի անցկացման նպատակով հաշվետու տարում ծախսվել է 16.9 մլն դրամ՝ կազմելով նախատեսվածի 99.9%-ը: Ծրագրին մասնակցել են լսողական, տեսողական, հենաշարժողական խնդիրներ ունեցող և մտավոր սահմանափակումներ ունեցող 165 հաշմանդամություն ունեցող անձինք: Մասնակիցները մրցել են մրցույթի ծրագրում ընդգրկված շախմատ, սեղանի թենիս, դարթս, բազկամարտ, շաշկի, բասկետբոլ մարզաձևերում: Մրցանակային տեղեր զբաղեցրած մասնակիցները պարգևատրվել են ՀՀ Նախագահի վկայագրով և դրամական մրցանակներով:

«Լավագույն մարզական նախադպրոցական հիմնարկ» մրցույթի անցկացման համար տրամադրվել է 19.4 մլն դրամ՝ կազմելով նախատեսվածի 99%-ը: Ծրագիրն անցկացվել է 3 փուլով՝ համայնքային, մարզային և եզրափակիչ, որոնց մասնակցել են ՀՀ մարզերի և ԼՂՀ Ստեփանակերտ քաղաքի 241 նախադպրոցական հաստատությունների 2892 երեխաներ: Մրցույթում մրցանակային տեղեր զբաղեցրած հաստատություններն ըստ փուլերի պարգևատրվել են ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության հավաստագրերով և մարզագույքով, եզրափակիչ փուլում՝ ՀՀ Նախագահի վկայագրով և մարզագույքով, իսկ 4-12-րդ տեղերը զբաղեցրած հաստատություններին տրամադրվել է մարզագույք:

2016 թվականին ՀՀ պետական բյուջեից 14.4 մլրդ դրամ է տրամադրվել *մշակութային ծառայությունների* խմբի ծրագրերի ֆինանսավորմանը՝ կազմելով նախատեսվածի 99%-ը: 2015 թվականի համեմատ մշակութային ծառայությունների ծախսերը նվազել են 20.4%-ով՝ հիմնականում պայմանավորված ավստրիական «Վագներ-Բիրո Աուստրիա ստեյջ սիսթեմս էյՋի», «Էլեկտրոնիկ Թիեթր քոնթրոլս Ջիէմբիէյջ» և «Արթսթեք» ընկերությունների կողմից «Հայաստանի պետական ֆիլիարմոնիկ նվագախումբ» և «Գ. Սունդուկյանի անվան ազգային ակադեմիական թատրոն» ՊՈԱԿ-ների վերազինման ծրագրի շրջանակներում կատարված ծախսերի կրճատմամբ:

Հաշվետու տարում շուրջ 1.8 մլրդ դրամ ուղղվել է *գրադարանների* դասի ֆինանսավորմանը, որն իրականացվել է 100%-ով: Նախորդ տարվա համեմատ գրադարաններին պետական բյուջեից տրամադրված միջոցները գրեթե չեն փոփոխվել:

2016 թվականին շուրջ 1.7 մլրդ դրամ ուղղվել է 16 գրադարանների կողմից իրականացվող գրադարանային ծառայություններին: Հաշվետու տարում գրադարանների գործունեության առաջնային ուղղություններն են համարվել նրանց գործունեության պայմանների բարելավումն ու մշակութային ժառանգության պահպանության ապահովումը, տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառման գործընթացների իրականացումը, գրադարանային հավաքածուների պետական հաշվառման աշխատանքները: Տեղեկատվության և ծառայությունների մատչելիության ապահովման ուղղությամբ նորացվել են գրադարաններից օգտվողներին տրամադրվող էլեկտրոնային-տեղեկատվական աղբյուրները: Հաշվետու տարում մշակութային ծառայությունների մատչելիությունն ապահովելու նպատակով «Բիբլիոբուս» շրջիկ գրադարան-ավտոմեքենան շրջել է Արարատ, Վայոց Ձոր, Տավուշ, Կոտայք, Շիրակ, Լոռի և Սյունիք մարզերի քաղաքային և գյուղական համայնքներում՝ բնակչության գրադարանային տեղեկատվական սպասարկման ծառայություն իրականացնելու և գրադարանային հավաքածուները համալրելու նպատակով: «Հայաստանյան գրադարանների միացյալ ավտոմատացված ցանց» ծրագրի շրջանակներում մասնակից 12 գրադարանների կողմից համահավաք քարտարանների տվյալների շտեմարանում շարունակվել են մուտքագրվել մատենագիտական գրառումներ: Ազգային գրադարանի միջոցով իրականացվել է ՀՀ մշակույթի նախարարության հավատարմագրման վկայական ստացած 2 համայնքային գրադարանների վերազինումը՝ համաձայն հանրային գրադարանների նյութատեխնիկական բազայի զարգացման դրամաշնորհային ծրագրի: Իրականացվել է «Համայնքային գրադարանավարների վերապատրաստում» դրամաշնորհային ծրագիրը, որի շնորհիվ ՀՀ տասը մարզերից վերապատրաստվել են 48 համայնքային գրադարանավարներ: Նախորդ տարվա համեմատ գրադարանային ծառայությունների ծախսերն էական փոփոխություն չեն կրել:

2016 թվականին հրատարակությունների գրանցման, հաշվառման և մատենագիտական ծառայությունների մատուցման համար պետական բյուջեից Հայաստանի ազգային գրապալատին հատկացվել է 79 մլն դրամ: Ծրագրով նախատեսված հատկացումներն ուղղվել են ազգային և համաշխարհային մշակութային ժառանգության մաս հանդիսացող՝ ՀՀ-ում ու արտերկրում լույս տեսած և լույս տեսնող հրատարակությունների անձեռնմխելի ֆոնդերի պահպանման, մատենագիտական տեղեկույթով ապահովման, գիտության զարգացման և հանրության կրթական մակարդակի բարձրացման խնդիրների իրագործմանը: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը գրեթե չեն փոփոխվել:

2016 թվականին *թանգարանների և ցուցասրահների* դասի ծրագրերին ՀՀ պետական բյուջեից տրամադրվել է ավելի քան 2.4 մլրդ դրամ՝ կազմելով ծրագրի 99.1%-ը: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 7.2%-ով, որը պայմանավորված է տվյալ դասում երկու նոր՝ մշակութային օյեկտների հիմնանորոգման և շինարարության ծրագրերի նախատեսմամբ:

Մշակութային օյեկտների հիմնանորոգման նպատակով 2016 թվականին տրամադրվել է 71.1 մլն դրամ, որը կազմել է նախատեսվածի 79.3%-ը: Շեղումը պայմանավորված է գնումների գործընթացի արդյունքներով առաջացած տնտեսումներով: Ծրագրի հատկացումների հաշվին իրականացվել են Դ.Դեմիրճյանի տուն-թանգարանի հիմնանորոգման նախագծային և շինարարական աշխատանքները, ինչպես նաև՝ Գյումրու Ս. Մերկուրովի տուն-թանգարանի հիմնանորոգման նախագծային աշխատանքները: Բացի նշված աշխատանքներից, 2016 թվականին հիմնանորոգվել են ևս 1-ական օբյեկտներ Շիրակի և Սյունիքի մարզերում:

Շուրջ 2 մլրդ դրամ է տրամադրվել թանգարանային ծառայությունների և ցուցահանդեսների ֆինանսավորմանը, որն իրականացվել է 99.9%-ով: Հատկացումների հաշվին ապահովվել է 37 թանգարանների գործունեությունը: Թանգարանների գործունեության առաջնային ուղղություններն են համարվել թանգարանային առարկաների և հավաքածուների պահպանությունը, հանրահռչակումը, բացառիկ ցուցանմուշների կրկնատիպերի պատրաստումը, թանգարանային առարկաների կոնսերվացումը և վերականգնումը: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն էական փոփոխություն չեն կրել:

Թանգարանների և ցուցասրահների դասի մշակութային օբյեկտների շինարարության հատկացումները կազմել են 100 մլն դրամ, որն ամբողջությամբ օգտագործվել է: 2016 թվականին այս ծրագրի շրջանակներում իրականացվել են «Հրանտ Մաթևոսյան» մշակութային կենտրոնի հիմնակմախքի կառուցման շինարարական աշխատանքները:

Թանգարաններին և ցուցասրահներին աջակցության նպատակով Հայաստանի Հանրապետության համայնքային բյուջեներին տրամադրվել են 243.7 մլն դրամ սուբվենցիաներ, որն իրականացվել է նախատեսված ծավալով: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը նվազել են 1.1%-ով:

ՀՀ 2016 թվականի պետական բյուջեից 192.3 մլն դրամ է տրամադրվել *մշակույթի տների, ակումբների և կենտրոնների* ֆինանսավորմանը, որն օգտագործվել է 92.7%-ով՝ պայմանավորված տվյալ դասում ընդգրկված մշակութային օբյեկտների հիմնանորոգման ծախսերի կատարողականով: Արդյունքում նախորդ տարվա համեմատ տվյալ դասի ծախսերը նվազել են 6.7%-ով: Այդ նպատակով տրամադրվել է 125.2 մլն դրամ՝ ապահովելով 89.2% կատարողական, որը հիմնականում պայմանավորված է մրցույթների արդյունքում առաջացած տնտեսումներով: Ծրագրի շրջանակներում իրականացվել են «Կամերային երաժշտության ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի շենքի

դահլիճի տանիքի վերանորոգման և նախագծահետազոտական աշխատանքները, ինչպես նաև մշակութային օբյեկտների հիմնանորգման աշխատանքներ ՀՀ Արմավիրի, Գեղարքունիքի, Լոռու և Շիրակի մարզերում:

Հաշվետու տարում համայնքային մշակույթի և ազատ ժամանցի կազմակերպմանը հատկացված 47.1 մլն դրամն ամբողջովին օգտագործվել է: Հատկացումներն ուղղվել են «Ստեփանավանի մշակույթի և ժամանցի կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից ծառայությունների կազմակերպմանը, Սյունիքի և Կոտայքի մշակույթի կենտրոնների, Եղեգնաձորի մշակույթի տան ստեղծագործական գործունեության աջակցմանն ու խթանմանը: Նշված ծախսերը 1%-ով գերազանցել են նախորդ տարվա ցուցանիշը:

Տվյալ դասում ընդգրկված՝ մշակութային օբյեկտների շինարարության ծրագրի շրջանակներում 2016 թվականին ՀՀ պետական բյուջեից տրամադրվել է շուրջ 20 մլն դրամ, որը կազմել է նախատեսվածի 100%-ը: Միջոցները նախատեսված էին ՀՀ Արագածոտնի մարզի Քուչակ գյուղի մշակույթի տան շինարարական աշխատանքների համար, որոնք ամբողջությամբ իրականացվել են:

Այլ մշակութային կազմակերպությունների դասին ՀՀ 2016 թվականի պետական բյուջեից տրամադրվել է 848.8 մլն դրամ, որը կազմել է ծրագրի 100%-ը: 2015 թվականի համեմատ նշված ծախսերը գրեթե չեն փոփոխվել:

Շուրջ 530.6 մլն դրամ տրամադրվել է Հայաստանի Ազգային արխիվի սուբսիդավորմանը: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 1.2%-ով:

Մշակութային արժեքների փորձաքննության ծառայություններին 2016 թվականի պետական բյուջեից տրամադրվել է 29.7 մլն դրամ: Ծրագրի նպատակը մշակութային արժեքների փորձագիտական ուսումնասիրության, մշակութային արժեքների և մշակութային նշանակության առարկաների մշակութաբանական ու արվեստաբանական փորձաքննության իրականացումն է: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը նվազել են 17.2%-ով, որը պայմանավորված է տվյալ ծառայություններում ներառված՝ «Փորձագետների վերապատրաստում» ծրագրի կրճատմամբ:

2016 թվականին տվյալ դասում ՀՀ համայնքային բյուջեներին սուբվենցիաների տրամադրման շրջանակներում ՀՀ պետական բյուջեով նախատեսված 253 մլն դրամն ամբողջությամբ ուղղվել է Երևանի կենդանաբանական այգու սուբսիդավորմանը, որը նախորդ տարվա համեմատ գրեթե չի փոփոխվել:

Հայրենիք-սփյուռք գործակցության ծրագրերի իրականացման նպատակով ՀՀ 2016 թվականի պետական բյուջեից տրամադրվել է 35.5 մլն դրամ՝ կազմելով 100%: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը գրեթե չեն փոփոխվել: Ծրագրի շրջանակներում իրականացվել են Հայաստան-սփյուռք գործակցության վերաբերյալ տեղեկատվական վերլուծական նյութերի պատրաստման և տարածման, համահայկական լրատվական ռեսուրսների (համահայկական կայքերի, տեղեկագրերի,

հեռուստատեսային լրատվական հաղորդումների, հեռուստակամուրջների և այլն) ստեղծման աշխատանքներ:

Արվեստի բնագավառի ծրագրերի ֆինանսավորմանը ՀՀ 2016 թվականի պետական բյուջեից տրամադրվել է շուրջ 8.1 մլրդ դրամ, որն իրականացվել է 98.9%-ով և 32%-ով զիջել նախորդ տարվա ցուցանիշը՝ հիմնականում պայմանավորված ավստրիական «Վագներ-Բիրո Աուստրիա ստեյջ սիսթեմս էյՋի», «Էլեկտրոնիկ Թիեթր քոնթրոլս Ջիէմբիէյջ» և «Արթսթեք» ընկերությունների կողմից «Հայաստանի պետական ֆիլիարմոնիկ նվագախումբ» և «Գ. Սունդուկյանի անվան ազգային ակադեմիական թատրոն» ՊՈԱԿ-ների վերազինման ծրագրի շրջանակներում կատարված ծախսերի նվազմամբ:

Արվեստի բնագավառի մշակութային օբյեկտների հիմնանորոգմանը 2016 թվականին տրամադրվել է 46.6 մլն դրամ՝ կազմելով նախատեսվածի 49.7%-ը: Ծրագրի շրջանակներում իրականացվել են Գ. Սունդուկյանի անվան պետական դրամատիկական թատրոնի և Արտաշատ քաղաքի Ամո Խարազյանի անվան թատրոնի շենքերի հիմնանորոգման նախագծային և տեխնիկական ու հեղինակային հսկողության աշխատանքները: Շեղումը պայմանավորված է այն հանգամանքով, որ Արարատի մարզի հիմնանորգման աշխատանքների գծով ծախսերը չեն կատարվել՝ պայմանավորված եղանակային պայմաններով, որոնց պարագայում հնարավոր չէր պահպանել շինարարական նորմերի պահանջները, և շինարարական մի շարք օբյեկտներում կատարման ենթակա թաց շինարարական աշխատանքները հետաձգվել են:

Օպերային և բալետային արվեստի ներկայացումներին աջակցության նպատակով Ալ. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի պետական ակադեմիական թատրոնին հաշվետու տարում տրամադրվել է շուրջ 1.3 մլրդ դրամ՝ ապահովելով 100% կատարողական, որը նախորդ տարվա համեմատ գրեթե չի փոփոխվել: Ծրագիրն իրականացվել է օպերային և բալետային արվեստի ավանդույթների պահպանման, տարածման և զարգացման, դասական ու ժամանակակից օպերային և բալետային ստեղծագործությունների բեմադրման նպատակով:

Ամբողջությամբ տրամադրվել է նաև Գ. Սունդուկյանի անվան ազգային ակադեմիական թատրոնի համար նախատեսված սուբսիդիան՝ կազմելով 331.1 մլն դրամ: Ծրագիրն իրականացվել է ազգային թատերարվեստի ավանդույթների պահպանման, տարածման և զարգացման, թատերարվեստի բնագավառում հանդիսատեսի հոգևոր պահանջների ձևավորման և բավարարման, դասական և ժամանակակից լավագույն դրամատիկական ստեղծագործությունների բեմադրման նպատակով: Նախորդ տարվա համեմատ տվյալ ծախսերն էական փոփոխության չեն ենթարկվել:

Մշակութային միջոցառումների իրականացմանը հաշվետու տարվա պետական բյուջեից տրամադրվել է 1.6 մլրդ դրամ՝ կազմելով ծրագրի 98.2%-ը: Ժամանակակից արվեստի զարգացման

գործում 2016 թվականին առաջնահերթություն է համարվել երիտասարդ ստեղծագործական ներուժի ներգրավումը, նոր մրցունակ մշակութային արտադրանքի ստեղծումը, հայ ժամանակակից ստեղծագործություններով խաղացանկերի և երկացանկերի համալրումը, սփյուռքահայ արվեստագետների ներգրավումը Հայաստանի մշակութային դաշտ: Առանձնակի կարևորվել է դեբյուտային գործընթացներին պետական աջակցությունը՝ արվեստի տարբեր ոլորտներում երիտասարդ ստեղծագործական ներուժի հայտնաբերման, խթանման, մշակութային կյանքում նրանց ներգրավման և ժամանակակից մտածողության խրախուսման, ինչպես նաև սերնդափոխության շարունակականության ապահովման նպատակով: Նախորդ տարվա համեմատ մշակութային միջոցառումների իրականացման ծախսերն աճել են 13.5%-ով՝ պայմանավորված «Իմ Հայաստան» փառատոնի անցկացմամբ, որը տեղի է ունենում 2 տարին մեկ անգամ, և «Սփյուռք» ամառային դպրոցի ծախսերի ավելացմամբ:

Տվյալ դասում ընդգրկված՝ մշակութային օբյեկտների շինարարությանը 2016 թվականի պետական բյուջեից տրամադրվել է 386.1 մլն դրամ՝ կազմելով նախատեսվածի 99.9%-ը: Ծրագրի շրջանակներում իրականացվել են ՀՀ Գեղարքունիքի մարզի Գավառի թատրոնի շենքի և «Երևանի կամերային պետական թատրոն» ՊՈԱԿ-ին ամրացված տարածքում շինության կառուցման աշխատանքները: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 80.1%-ով՝ պայմանավորված շնարարական աշխատանքների ծավալների աճով:

Օտարերկրյա պետություններում հայալեզու թատերական ներկայացումներին աջակցության շրջանակներում հատկացվել է 15 մլն դրամ, որն ամբողջությամբ օգտագործվել է: Ծրագրի հատկացումներն ուղղվել են Վրաստանում հայալեզու թատերական ներկայացումների իրականացմանը, ինչպես նաև Վրաստանի հայաշատ վայրերում հյուրախաղերով հանդես գալու համար: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը կրճատվել են 25%-ով՝ բյուջետային միջոցների խնայողության անհրաժեշտությունից ելնելով:

«Ժողովրդական» պատվավոր կոչման արժանացած անձանց ամենամսյա պատվովճարների համար օգտագործվել է 39 մլն դրամ, որը կազմել է նախատեսվածի 97.5%-ը: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 4.8%-ով, ինչը պայմանավորված է հանրապետությունում գտնվող պատվովճար փաստացի ստացողների քանակի աճով, ինչպես նաև պատվովճարը միանվագ (մի քանի ամիսը մեկ անգամ) ստանալու հանգամանքով:

Հայաստանի Հանրապետության համայնքային բյուջեներին սուբվենցիաների տրամադրման ծրագրի շրջանակներում 215.3 մլն դրամ է հատկացվել թատերական ներկայացումների սուբսիդավորմանը, որն ամբողջությամբ օգտագործվել է: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը նվազել են 40.2%-ով՝ պայմանավորված այն հանգամանքով, որ պետական բյուջեից

հատկացված միջոցները կրճատվել են՝ նշված ծախսերի իրականացումը նախատեսելով Երևան քաղաքի բյուջեի հաշվին:

Թատերական ներկայացումների ծախսերը կազմել են 1.7 մլրդ դրամ, որոնք օգտագործվել են նախատեսված ողջ ծավալով: Ծրագիրն ուղղվել է թատերարվեստի զարգացմանն ու տարածմանը, թատերարվեստին հաղորդակցմանը, թատերարվեստի վերաբերյալ տեղեկույթի ապահովմանը, ինչպես նաև նոր գաղափարների ու արժեքների տարածմանը: Նախորդ տարվա համեմատ տվյալ ծախսերը նվազել են 0.8%-ով:

2016 թվականին երաժշտարվեստի և պարարվեստի համերգների ծրագրի շրջանակներում ևս նախատեսված 1.6 մլրդ դրամն ամբողջությամբ օգտագործվել է: Ծրագիրն ուղղվել է երաժշտարվեստի և պարարվեստի պահպանմանը, զարգացմանն ու տարածմանը, երաժշտադրամատիկական, երաժշտական կատարողական, երգի-պարի արվեստին հաղորդակցմանը, երաժշտարվեստի ու պարարվեստի վերաբերյալ տեղեկույթի ապահովմանը, ինչպես նաև նոր գաղափարների ու արժեքների տարածմանը: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 0.4%-ով:

Հայ մշակույթի միջազգային կենտրոններին աջակցության ծրագրի շջանակներում 26 մլն դրամ է հատկացվել Վենետիկում հայ-համաեվրոպական երկխոսության միջազգային կենտրոնի պահպանման համար, որն ամբողջությամբ օգտագործվել է: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 1.3%-ով՝ պայմանավորված եվրոյի փոխարժեքի աճով:

«Ժողովրդական» պատվավոր կոչման արժանացած անձանց ամենամսյա պատվովճարի վճարման ծառայությունների համար տրամադրվել է 175.6 հազար դրամ, որը կազմել է նախատեսված ծախսերի 63.4%-ը և 8.4%-ով զիջել նախորդ տարվա ցուցանիշը: Միջոցների տնտեսումը պայմանավորված է պատվովճարներն ամբողջությամբ չստանալու, ինչպես նաև վճարումների ծառայության տոկոսադրույքի նվազմամբ (շահառուները ներգրավվում են անկանխիկ վճարումների համակարգ):

Տարածքային համագործակցության և համահայկական մշակութային ծրագրերի իրականացմանը հաշվետու տարում տրամադրվել է 19.8 մլն դրամ՝ կազմելով նախատեսվածի 99%-ը: Նախորդ տարվա համեմատ տվյալ ծախսերը գրեթե չեն փոփոխվել: Ծրագրի նպատակն է տարածքային համագործակցության և մշակութային միջոցառումների իրականացումը, որոնց արդյունքում լուծվում են մի շարք հայապահպանական խնդիրներ, մասնավորապես՝ իրականացվում են հայ համայնքների հետ համագործակցության ծրագրեր և միջոցառումներ:

Ազգային ակադեմիական խմբերգային համերգների ծրագրով նախատեսված միջոցներն ուղղվել են «Հայաստանի պետական ազգային ակադեմիական երգչախումբ» ՊՈԱԿ-ի գործունեության ապահովմանը: Նշված ծախսերը կազմել են 166.8 մլն դրամ կամ նախատեսվածի

100%-ը, իսկ նախորդ տարվա համեմատ տվյալ ծախսերը գրեթե չեն փոփոխվել: Միջոցներն ուղղվել են խմբերգային արվեստի պահպանմանը, զարգացմանն ու տարածմանը, երգչախմբային արվեստին հաղորդակցմանը, խմբերգային արվեստի վերաբերյալ տեղեկույթի ապահովմանը, ինչպես նաև նոր գաղափարների ու արժեքների տարածմանը:

Ավստրիական «Վագներ-Բիրո Աուստրիա ստեյջ սիսթեմս ԷյՋի», «Էլեկտրոնիկ Թիեթր քոնթրոլս Ջիէմբիէյջ» և «Արթսթեք» ընկերությունների կողմից «Հայաստանի պետական ֆիլհարմոնիկ նվագախումբ» և «Գ. Սունդուկյանի անվան ազգային ակադեմիական թատրոն» ՊՈԱԿ-ների վերազինման ծրագրի շրջանակներում 2016 թվականին օգտագործվել է 658.5 մլն դրամ՝ կազմելով ծրագրվածի 98.1%-ը: Միջոցներն ուղղվել են «Հայաստանի պետական ֆիլհարմոնիկ նվագախումբ» և «Գ. Սունդուկյանի անվան ազգային ակադեմիական թատրոն» ՊՈԱԿ-ների դահլիճների բեմական մեխանիզմների և լուսային տեխնիկայի վերազինմանը: 2014-2016թթ. ժամանակաշրջանում ընկերությունների կողմից իրականացվել է պայմանագրով ստանձնած գործընթացը: 2016 թվականին ծրագիրն ավարտվել է:

ՀՀ 2016 թվականի պետական բյուջեից *կինեմատոգրաֆիայի* բնագավառին տրամադրվել է շուրջ 654 մլն դրամ, որը կազմել է նախատեսված ծախսերի 100%-ը: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը նվազել են 3.5%-ով՝ հիմնականում պայմանավորված կինո-ֆոտո-ֆոնո հավաքածուի պահպանման ծախսերի կրճատմամբ:

Հաշվետու տարում կինոնկարների արտադրությանը տրամադրվել է 454 մլն դրամ: Կինոարվեստի բնագավառում Հայաստանի Հանրապետության պետական քաղաքականության ռազմավարությունը պայմանավորված է կինոարվեստի պահպանման, տարածման և զարգացման, կինոարտադրությունն ապահովող տեխնոլոգիայի մշտական կատարելագործման, միջազգային կինոփառատոններին և կինոշուկաներին Հայաստանի Հանրապետության մասնակցության ապահովմամբ: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը գրեթե չեն փոփոխվել: 2016 թվականին նկարահանվել են 17 խաղարկային, 11 վավերագրական ֆիլմեր և 5 մուլտֆիլմեր:

Ազգային կինոծրագրերի իրականացման համար հատկացումներն ուղղվել են Հայաստանի Ազգային կինոկենտրոնի գործունեության ապահովմանը: 2016 թվականին այդ ուղղությամբ նախատեսված միջոցներն ամբողջությամբ օգտագործվել են՝ կազմելով 149.2 մլն դրամ և 1.2%-ով զիջելով նախորդ տարվա ցուցանիշը:

Հաշվետու տարում 7.2 մլն դրամ է տրամադրվել կինո-ֆոտո-ֆոնո հավաքածուի պահպանման ծառայություններին: Ծրագրի շրջանակներում 2016 թվականին վերականգնվել է 2 ֆիլմ, իրականացվել է 5 ֆիլմի թվայնացում: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը նվազել են 72.1%-ով՝ պայմանավորված վերականգնված ֆիլմերի քանակի կրճատմամբ:

Փաստավավերագրական կինոծրագրերի իրականացման համար նախատեսված միջոցները նույնպես ամբողջությամբ օգտագործվել են՝ կազմելով 43.6 մլն դրամ: Հատկացված միջոցների հաշվին ապահովվել է «Փաստավավերագրական ֆիլմերի «Հայկ» կինոստուդիա» ՊՈԱԿ-ի գործունեությունը: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը նվազել են 4.8%-ով:

Հուշարձանների և մշակութային արժեքների վերականգնման ու պահպանման դասին ՀՀ 2016 թվականի պետական բյուջեից տրամադրվել է 444.5 մլն դրամ կամ ծրագրային ցուցանիշի 97.2%-ը: Նախորդ տարվա համեմատ տվյալ դասի ծախսերը նվազել են 1%-ով:

Հաշվետու տարում 4 մլն դրամ պետական աջակցություն է տրամադրվել Թբիլիսիում գտնվող հայ գրողների պանթեոնի պահպանման նպատակով՝ կազմելով նախատեսված հատկացումների 100%-ը: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը չեն փոփոխվել:

Պատմամշակութային ժառանգության գիտահետազոտական աշխատանքների ֆինանսավորման համար 2016 թվականին 96.7 մլն դրամ է տրամադրվել «Պատմամշակութային ժառանգության գիտահետազոտական կենտրոն» ՊՈԱԿ-ին, որը կազմել է նախատեսված հատկացումների 100%-ը: Ծրագրի նպատակներն են՝ պատմամշակութային հուշարձանների ուսումնասիրումը, վավերագրումը, պահպանական փաստաթղթերի փաթեթի ստեղծումը և դրանց շնորհիվ հուշարձանների պահպանության ապահովումն ու հետագա սերունդներին փոխանցումը: Հաշվետու տարվա ընթացքում իրականացվել են նախատեսված 400 հուշարձանների պահպանական գոտիների նախագծման և թողարկման, 2000 հուշարձանների հաշվառման և ցուցակագրման, 250 հուշարձանների հաշվառման և վկայագրման, ինչպես նաև հայկական պատմամշակութային ժառանգության գիտատեղեկատու շտեմարանի 382 վավերագրերի կազմման և թվայնացման աշխատանքներ: Պատմամշակութային ժառանգության վերաբերյալ հանրությանն իրազեկելու նպատակով հրատարակության է պատրաստվել «Հուշարձան» տարեգրքի «ԺԲ» հատորը: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը նվազել են 4.1%-ով՝ պայմանավորված հայկական պատմամշակութային ժառանգության գիտատեղեկատու շտեմարանի վավերագրերի կազմման աշխատանքների կրճատմամբ:

Հայկական պատմամշակութային հուշարձանների վավերագրմանը տրամադրվել է 60 մլն դրամ աջակցություն՝ կազմելով նախատեսվածի 100%-ը և պահպանվելով նախորդ տարվա մակարդակին: Ծրագիրն իրականացվել է «Հայկական ճարտարապետությունն ուսումնասիրող» ՀԿ-ի կողմից, որը հաշվետու տարվա ընթացքում իրականացրել է 470 պատմամշակութային հուշարձանի վավերագրում:

Հուշարձանների ամրակայման, նորոգման և վերականգնման աշխատանքների իրականացմանը տրամադրվել է 283.8 մլն դրամ՝ կազմելով նախատեսվածի 95.6%: Շեղումը պայմանավորված է որոշ աշխատանքների գծով՝ (հուշարձանների հրատապ ուսումնասիրման,

ամրակայման և վերականգնման նախագծահետազոտական, գեոդեզիաքարտեզագրական փաստաթղթերի մշակում, շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում) գնումները չկայանալու, ինչպես նաև գնումների գործընթացի արդյունքում առաջացած տնտեսումներով: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 2.9%-ով: Հուշարձանների պահպանության բնագավառում իրականացվող գործընթացները նպատակաուղղված են եղել պատմամշակութային հուշարձանների հաշվառման, ուսումնասիրման, պահպանության, վերականգնման և օգտագործման գործում առկա հիմնախնդիրների բացահայտմանն ու դրանց լուծմանը: Ծրագրի շրջանակներում նախատեսված աշխատանքներն ամբողջությամբ իրականացվել են՝ 17 հուշարձանի վերականգնում, 4 գիտանախագծային փաստաթղթերի կազմում, 3 վավերագրման և ուսումնասիրման աշխատանքներ (այդ թվում՝ հետախուզում և պեղում):

2016 թվականին *ռադիո և հեռուստահաղորդումների հեռարձակման և հրապարակչական ծառայությունների* ծախսերը կազմել են 8.6 մլրդ դրամ կամ նախատեսվածի 99.3%-ը: Նախորդ տարվա համեմատ տվյալ խմբի ծախսերը նվազել են 1.7%-ով՝ հիմնականում պայմանավորված հեռուստառադիոհաղորդումների դասի ծախսերի կրճատմամբ:

Հաշվետու տարում *հեռուստառադիոհաղորդումների* դասի գծով պետական բյուջեի ծախսերը կազմել են շուրջ 7.1 մլրդ դրամ կամ նախատեսվածի 99.5%-ը: Նախորդ տարվա համեմատ տվյալ ծախսերը նվազել են 1.7%-ով՝ հիմնականում պայմանավորված հեռուստատեսային ծառայությունների հատկացումների կրճատմամբ:

Ոլորտի պետական կառավարման մարմինների՝ Հեռուստատեսության և ռադիոյի ազգային հանձնաժողովի և Հայաստանի հանրային հեռուստառադիոընկերության խորհրդի պահպանմանը տրամադրվել է 379.1 մլն դրամ՝ կազմելով նախատեսվածի 94.1%-ը և 3.2%-ով զիջելով նախորդ տարվա ցուցանիշը, որը հիմնականում պայմանավորված է Հեռուստատեսության և ռադիոյի ազգային հանձնաժողովի կողմից ուսումնասիրությունների՝ մոնիտորիգի իրականացման ծառայությունների գնման ընթացակարգը չկայանալու հանգամանքով (մասնակիցներ չլինելու պատճառով):

2016 թվականին հեռուստառադիոհաղորդումների դասի ներքոհիշյալ 9 ծրագրերը կատարվել են նախատեսված ողջ ծավալով:

Հեռուստառադիոհաղորդումների դասի հատկացումների գերակշիռ մասը՝ 4.8 մլրդ դրամ, տրամադրվել է հեռուստատեսային ծառայություններին, որից 4.7 մլրդ դրամը հեռուստահաղորդումների պատրաստման և հեռարձակման նպատակով տրամադրվել է «Հայաստանի հանրային հեռուստառադիոընկերություն» ՓԲԸ-ին՝ որպես դրամաշնորհ, 93.4 մլն դրամը՝ ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարությանը: Նախորդ տարվա համեմատ հեռուստատեսային ծառայությունների ծախսերը նվազել են 2.4%-ով՝ ՀՀ

տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարությանը հատկացված միջոցների նվազման արդյունքում, որը պայմանավորված է այն հանգամանքով, որ 2015 թվականին ծրագրում ներառված էին նաև սոցիալապես անապահով ընտանիքներին DVB-T2 ստանդարտի թվային հեռուստատեսային ընդունիչ սարքերի ձեռքբերման ծախսերը: Սարքերի բաշխման աշխատանքներն ավարտվել են 2016 թվականին:

Հաշվետու տարում ռադիոծառայությունների շրջանակներում 785.3 մլն դրամ դրամաշնորհ է տրամադրվել «Հայաստանի հանրային ռադիոընկերություն» ՓԲԸ-ին՝ ռադիոհաղորդումների պատրաստման և հեռարձակման նպատակով, որը նախորդ տարվա համեմատ աճել է 0.9%-ով:

Ռադիո և հեռուստատեսային հաղորդումների պատրաստման և հեռարձակման նպատակով 94.6 մլն դրամ է տրամադրվել «Շիրակի հանրային հեռուստառադիո» ՓԲԸ-ին, որը 3.6%-ով գերազանցել է նախորդ տարվա ցուցանիշը՝ հիմնականում պայմանավորված աշխատանքի վարձատրության ծախսերի աճով:

ԱՊՀ երկրներում հեռուստառադիոծրագրերի հեռարձակման ծրագիրը նախատեսված է հեռուստառադիոհաղորդումների միջոցով ԱՊՀ երկրներում տեղեկույթ տարածելու և ստանալու համար: Այս ծրագիրը հնարավորություն է տալիս ԱՊՀ երկրներում ծանոթանալ Հայաստանի մշակութային, քաղաքական և տնտեսական կյանքին: Նշված ծրագրի գծով հաշվետու տարվա պետական բյուջեի ծախսերը կազմել են 145 մլն դրամ, որը նախորդ տարվա համեմատ աճել է 10%-ով՝ հիմնականում պայմանավորված եթերային (հեռուստատեսային) ժամերի ավելացմամբ:

Հասարակական կարծիքի ուսումնասիրման նպատակով «Հասարակական կարծիքի ուսումնասիրման կենտրոն» ՓԲԸ-ին հատկացվել է 44.3 մլն դրամի պետական աջակցություն, որը նախորդ տարվա համեմատ գրեթե չի փոփոխվել:

Հոգևոր-մշակութային հեռուստատեսային ծառայությունների ծախսերը կազմել են 150.2 մլն դրամ, որոնք մնացել են նախորդ տարվա մակարդակին:

«Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» ՓԲԸ-ի շենք-շինությունների հիմնանորոգմանը պետական բյուջեից տրամադրվել է 200 մլն դրամ դրամաշնորհ, իսկ տեխնիկական վերազինմանը՝ 129.9 մլն դրամ: 2015 թվականի համեմատ նշված ծախսերը համապատասխանաբար աճել են 48.1%-ով և նվազել են 37.9%-ով:

«Հայաստանի հանրային ռադիոընկերություն» ՓԲԸ-ի շենքի հիմնանորոգմանը պետական բյուջեից տրամադրվել է 70 մլն դրամ դրամաշնորհ նախորդ տարվա 50 մլն դրամի համեմատ:

2016 թվականի պետական բյուջեից տնտեսական վերլուծությունների ծառայությունների շրջանակներում 184.7 մլն դրամ պետական աջակցություն է հատկացվել «Տնտեսական բարեփոխումների վերլուծական տեղեկատվական կենտրոն» ՊՈԱԿ-ին, որն իրականացվել է 96.4%-ով: Նախորդ տարվա համեմատ տվյալ ծախսերը նվազել են 3.4%-ով՝ հիմնականում

պայմանավորված այն հանգամանքով, որ 2016 թվականին նախատեսվել էր կազմակերպել ՀՀ կառավարության գործունեությունը լուսաբանող 560 մարզային հաղորդում, սակայն մարզային գործընկեր հեռուստաընկերությունները թվային հեռարձակման անցնելու հետ կապված տեխնիկական խնդիրներով պայմանավորված՝ չեն կարողացել ապահովել մարզային հեռուստահաղորդումների պատրաստման ու հեռարձակման մասին ձեռքբերված նախնական պարտավորությունները, և հնարավոր է եղել ապահովել ընդամենը 450 հաղորդում: 2016 թվականի ընթացքում ծրագրի շրջանակներում իրականացվել են հետևյալ հիմնական աշխատանքները.

- «Հրապարակում» հեռուստահաղորդաշարի հաղորդումների պատրաստում և եթերի ապահովում Հանրային հեռուստատեսությամբ՝ շաբաթը մեկ անգամ, ՀՀ կառավարության գործունեության, ՀՀ վարչապետի այցերի և հանդիպումների նկարահանումների ապահովում և արխիվացում, հրատապ նյութերի տրամադրում հեռուստաընկերություններին,
- Հեռուստահաղորդումների, էլեկտրոնային կայքերի և հանրապետական թերթերի շուրջօրյա մշտադիտարկում, տեղեկատվության մշակում, ամփոփում համառոտ տեղեկանքներում,
- ՀՀ կառավարության գործունեությանը վերաբերող վերլուծությունների իրականացում, կառավարության գործունեության լուսաբանում էլեկտրոնային և տպագիր զանգվածային լրատվամիջոցների միջոցով,
- Մարզերում ՀՀ կառավարության գործունեությունը և կառավարության կողմից իրականացված ծրագրերը հանրությանը ներկայացնելու նպատակով իրազեկման բնույթ կրող հեռուստառեպորտաժների պատրաստում և հեռարձակում մարզային հեռուստաալիքների եթերում,
- Սոցիալական ցանցերում շրջանառվող տեղեկատվության մշտադիտարկում, վերլուծական-տեղեկատվական բնույթի հրապարակումների նախապատրաստում, նյութերի զետեղում սոցիալական ցանցերում, կառավարության գործունեության հետ առնչվող տարբեր աղբյուրներից ծագող տեղեկատվության փոխանակում և հետադարձ կապի ապահովում:

Գնումների գործընթացի հրապարակայնության ապահովման նպատակով 2016 թվականին տրամադրվել է 22.9 մլն դրամ՝ կազմելով ծրագրված հատկացումների 74%-ը, որը պայմանավորված է մատուցված ծառայությունների նախատեսված ծավալի կրճատմամբ: Ծրագիրը նախատեսված է պետական գնումների կատարման համար անհրաժեշտ մրցույթների կազմակերպման, պետության կողմից կատարվող գնումների վերաբերյալ հանրությանը հրապարակային տեղեկատվության տրամադրման, մասնագետների վերապատրաստման արդյունավետ իրականացման համար: Նախորդ տարվա համեմատ տվյալ ծախսերն ավելացել են 12%-ով, որը պայմանավորված է մատուցված ծառայությունների ծավալի ավելացմամբ:

Հայաստան-սփյուռք գործակցության թեմայով հեռուստահաղորդումների և տեսահոլովակների պատրաստման, հեռարձակման, ձեռքբերման և բազմացման նպատակով հաշվետու տարվա

պետական բյուջեից տրամադրվել է 52.4 մլն դրամ՝ կազմելով նախատեսվածի 99.7%-ը և 1.3%-ով գերազանցելով նախորդ տարվա ցուցանիշը, որը պայմանավորված է 2016 թվականին 2 հաղորդում ավել պատրաստելու հանգամանքով: Ծրագրի շրջանակներում պատրաստվել են հայապահպանություն քարոզող հաղորդումներ, ֆիլմաշարեր և տեսահոլովակներ՝ սփյուռքի համայնքներին տրամադրելու և հեռարձակելու նպատակով:

2016 թվականի պետական բյուջեում 1.1 մլրդ դրամ են կազմել *հրատարակչությունների և խմբագրությունների* դասի ծախսերը՝ 98%-ով ապահովելով ծրագրի կատարումը: Նախորդ տարվա համեմատ հրատարակչությունների և խմբագրությունների ծախսերը նվազել են 4.3%-ով՝ հիմնականում պայմանավորված հրատարակչական, տեղեկատվական և տպագրական ծառայությունների ձեռքբերման ու գրականության հրատարակման ծախսերի կրճատմամբ:

Պետական մամուլի հրատարակմանը տրամադրվել է 73.1 մլն դրամ (100%), որը հատկացվել է «Հանրապետություն» ՓԲԸ-ին՝ «Հայաստանի Հանրապետություն» թերթի հրատարակման համար, և «Հայաստանի Հանրապետություն-Ռեսպուբլիկա Արմենիա» ՓԲԸ-ին՝ «Ռեսպուբլիկա Արմենիա» թերթի հրատարակման համար: Հաշվետու ժամանակաշրջանում լույս է տեսել «Հայաստանի Հանրապետություն» թերթի՝ 239 և «Ռեսպուբլիկա Արմենիա» թերթի 89 համար: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 1.2%-ով՝ պայմանավորված աշխատավարձերի բարձրացմամբ:

Գրականության հրատարակմանը տրամադրվել է 77.2 մլն դրամ, որն օգտագործվել է նախատեսված ողջ ծավալով: Ծրագրի շրջանակներում 2016 թվականին հրատարակվել է 27 անուն գիրք՝ նախորդ տարվա 40-ի դիմաց, ինչով էլ պայմանավորված՝ նախորդ տարվա համեմատ տվյալ ծախսերը նվազել են 24.4%-ով:

Գիտական ամսագրերի և մենագրությունների հրատարակման համար նախատեսված միջոցները նույնպես ամբողջությամբ օգտագործվել են՝ կազմելով 78.2 մլն դրամ: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 1.5%-ով:

Տնտեսագիտական հրապարակումների շրջանակներում 80 մլն դրամ է տրամադրվել «Էկոնոմիկա» հանդես ՓԲԸ-ին՝ կազմելով նախատեսվածի 80.5%-ը: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը նվազել են 5.1%-ով, որը պայմանավորված է «Էկոնոմիկա» ՓԲԸ-ի լուծարմամբ:

Ոչ պետական մամուլի հրատարակմանը տրամադրվել է 49.1 մլն դրամ կամ նախատեսվածի 100%-ը: Հաշվետու ժամանակաշրջանում «Ոչ պետական մամուլի հրատարակում» ծրագրի շրջանակներում հրատարակվել է 63 անուն թերթ և ամսագիր՝ կանխատեսված 63-ի և նախորդ տարվա 62-ի համեմատ: Ծրագրի շրջանակներում պետական հոգածություն է ցուցաբերվում ոչ պետական մամուլին, ինչի միջոցով բնակչությանը հնարավորություն է ընձեռվում տեղեկույթ ստանալ տեղերից: Պետական աջակցություն է ցուցաբերվում նաև ազգային

փոքրամասնությունների լեզվով լույս տեսնող գրական և մշակութային մամուլին: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 4.2%-ով:

Մանկական, մանկապատանեկան թերթերի և ամսագրերի հրատարակմանը տրամադրվել է 46.5 մլն դրամ՝ ապահովելով 100% կատարողական և 2.9%-ով գերազանցելով նախորդ տարվա ցուցանիշը, ինչը հիմնականում պայմանավորված է նվազագույն աշխատավարձի բարձրացմամբ:

Հրատարակչական, տեղեկատվական և տպագրական ծառայությունների ձեռքբերման ծախսերը կազմել են 354.1 մլն դրամ կամ ծրագրվածի 99.5%-ը: Միջոցները տրամադրվել են ՀՀ արդարադատության և արտաքին գործերի նախարարություններին: Ծրագրի շրջանակներում իրականացվում են «Հայաստանի Հանրապետության պաշտոնական տեղեկագիր», «Հայաստանի Հանրապետության գերատեսչական նորմատիվ ակտերի տեղեկագիր», «Երևանի իրավական ակտերի տեղեկագիր», «Հայաստանի Հանրապետության պաշտոնական տեղեկագիր» (ռուսերեն) և «Քաղաքային ու գյուղական համայնքների նորմատիվ իրավական ակտերի ժողովածու» պարբերականների հրատարակման, քաղաքացիական կացության ակտերի գրանցման, իրավաբանական անձանց պետական գրանցման գործընթացներում և ՀՀ արդարադատության նախարարության գործունեության ընթացքում օգտագործվող պոլիգրաֆիական արտադրանքի ձեռքբերման, «Առլիս» տեղեկատվական համակարգի պահպանման և շահագործման աշխատանքները, ինչպես նաև միջազգային պայմանագրերի տպագրությունը: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը նվազել են 18.1%-ով՝ հիմնականում պայմանավորված այն հանգամանքով, որ 2015 թվականին տպագրվել էր ՀՀ Սահմանադրության նախագիծը, ինչպես նաև ՀՀ մուտքի վիզաների պիտակների տպագրության աշխատանքներ 2016 թվականին չեն իրականացվել՝ դրանց պահանջի բացակայության պատճառով:

Վրաստանի հայալեզու լրատվամիջոցներին աջակցության շրջանակներում 10 մլն դրամ է հատկացվել «Վրաստան» թերթի հրատարակմանը, որն ամբողջությամբ օգտագործվել է: 2015 թվականի համեմատ նշված ծախսերը փոփոխություն չեն կրել:

Թարգմանչական ծառայությունների համար նախատեսված գումարը նույնպես օգտագործվել է 100%-ով՝ կազմելով 217.5 մլն դրամ և նախորդ տարվա համեմատ աճելով 17%-ով, որը պայմանավորված է աշխատանքների ծավալների աճով: 2016 թվականին թարգմանվել է 25749 էջ՝ 2015 թվականի 21989 էջի դիմաց:

Մասնավորեցվող պետական գույքի վերաբերյալ տեղեկությունների հրապարակմանը 2016 թվականի համար նախատեսված 2 մլն դրամից ծախսվել է 62.4 հազ. դրամ՝ կապված պետական գույքի մասնավորեցման մասին համապատասխան որոշումների և դրանց հիմքով հայտարարությունների հրապարակման քանակի հետ: Նշենք, որ նախորդ տարի ևս սույն ծրագրին հատկացվել էր 2 մլն դրամ, որն ամբողջությամբ օգտագործվել էր:

Գրականության հրատարակմանը տրամադրվել է 64.8 մլն դրամ աջակցություն՝ կազմելով ծրագրի 100%-ը: Հատկացումների հաշվին իրականացվել են 83 անուն գրքի հրատարակման, 1 թարգմանական ծրագրի և 8 լազերային սկավառակի պատրաստման աշխատանքներ՝ նախատեսված չափով՝ նախորդ տարվա 60 գրքի և 8 լազերային սկավառակի համեմատ: 2015 թվականի համեմատ նշված ծախսերն աճել են 65.8%-ով:

Տեղեկատվական և ուսուցողական կայքերի մշակման և սպասարկման ծառայությունների ծախսերը կազմել են 30.5 մլն դրամ (99.9%): Միջոցները հատկացվել են «Հայերն այսօր» էլեկտրոնային բազմալեզու օրաթերթի հրատարակման, էլեկտրոնային գրադարանի համալրման ու «Արևելահայերենից արևմտահայերեն և հակառակը փոխարկիչ» ծրագրի համալրման և սպասարկման աշխատանքներին: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը նվազել են 7.8%-ով:

Ուսումնական և հանրամատչելի գրականության հավաքագրման և սփյուռքի համայնքներին առաքման նպատակով հատկացվել է 9 մլն դրամ, որն ամբողջությամբ օգտագործվել է: 2016 թվականին ծրագրի շրջանակներում մոտ 36 երկրների հայ գաղթօջախների ուսումնական հաստատություններին և կազմակերպություններին առաքվել է 39544 կտոր գրականություն՝ 2015 թվականի 50000 կտորի դիմաց: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը կրճատվել են 10%-ով՝ ելնելով բյուջետային միջոցների խնայողության անհրաժեշտությունից:

«Հայկական սփյուռք» տարեգրքի հրատարակման նպատակով օգտագործվել է 6 մլն դրամ կամ նախատեսվածի 100%-ը: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը նվազել են 22.7%-ով՝ պայմանավորված գրքերի տպագրության քանակի կրճատմամբ: Տարեգրքի նպատակն է արժևորել, գրի առնել, լրացնել և ամբողջական դարձնել սփյուռքի հայ համայնքների գործունեությունը, Հայաստան-սփյուռք գործակցության ոլորտում իրականացվող ծրագրերը և ձեռնարկները: Տարեգիրքը կարող է հիմք հանդիսանալ էական քայլեր իրականացնելու համար սփյուռքի գիտական, կրթական, տնտեսական, մշակութային և այլ ոլորտներում առկա ներուժի հաշվառման մեխանիզմների բարելավման և տվյալների միասնական համակարգի ստեղծման ուղղությամբ, համապարփակ տեղեկատվություն տարածել տարբեր երկրներում գործող հայկական համայնքների մասին: Տարեգրքի միջոցով լուսաբանվում են ՀՀ պետական կառավարման մարմինների կողմից տարվա ընթացքում սփյուռքի հետ իրականացված ծրագրերը, համահայկական կազմակերպությունների և հոգևոր կառույցների ազգապահպան ձեռնարկները՝ դրանք հասանելի դարձնելով աշխարհասփյուռ հայությանը:

Գրական ժառանգության պահպանման և տարածման համար նախատեսված 26.5 մլն դրամ միջոցներն օգտագործվել են նախատեսված ողջ ծավալով: Ծրագրի շրջանակներում ապահովվում է «Գրքի և հրատարակչական գործի կենտրոն» ՊՈԱԿ-ի գործունեությունը: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը գրեթե չեն փոփոխվել:

Հաշվետու տարում *տեղեկատվության ձեռքբերման* դասի գծով պետական բյուջեի ծախսերը կազմել են 399.3 մլն դրամ՝ 100%-ով ապահովելով նախատեսված հատկացումները: Նախորդ տարվա համեմատ տվյալ ծախսերն աճել են 6.2%-ով՝ հիմնականում պայմանավորված հանրային իրազեկման ապահովման ծախսերի աճով:

Տեղեկատվության ձեռքբերման, պահպանման և արխիվացման ծառայությունների ձեռքբերման նպատակով հատկացվել է 84.7 մլն դրամ՝ «Արմենպրես» ՓԲԸ-ի կողմից մատուցվող ծառայությունների ձեռքբերման նպատակով, որը տեղեկույթ է տրամադրել հանրապետության ԶԼՄ-ներին և արտերկրում գտնվող ՀՀ դեսպանատներին: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 2.6%-ով՝ պայմանավորված աշխատավարձերի և էլեկտրաէներգիայի սակագնի բարձրացմամբ:

Հանրային իրազեկման ապահովմանը տրամադրվել է 314.6 մլն դրամ, որն օգտագործվել է նախատեսված ողջ ծավալով: Ծրագրի շրջանակներում «Հանրային կապերի և տեղեկատվության կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից կատարվել են աշխատանքներ՝ ուղղված Հայաստանի Հանրապետության և համայն հայության շահերին առնչվող պետական քաղաքականության տեղեկատվական սպասարկմանը, տեղեկատվական հոսքերի դիտարկմանն ու կառավարմանը, ռիսկերի ախտորոշմանն ու գնահատմանը, դրանց կանխարգելմանը և հետևանքների նվազեցմանն ուղղված միջոցառումների իրականացմանը: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 7.2%-ով՝ պայմանավորված տեղեկատվական տվյալների մշակման աշխատանքների ծավալի և էներգետիկ ծառայությունների գծով ծախսերի աճով:

ՀՀ 2016 թվականի պետական բյուջեից 1 մլրդ դրամ է տրամադրվել *կրոնական և հասարակական այլ ծառայությունների* խմբի ծրագրերի ֆինանսավորմանը, որոնք կատարվել են 89.7%-ով: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 3%-ով, ինչը հիմնականում պայմանավորված է պետական բյուջեից «Երիտասարդ ընտանիքին՝ մատչելի բնակարան» պետական նպատակային ծրագրի համաֆինանսավորման ծախսերի աճով:

Հաշվետու տարում 760.6 մլն դրամ է տրամադրվել *երիտասարդական ծրագրերի* դասին, որի ծախսերը կատարվել են 92.8%-ով և նախորդ տարվա համեմատ աճել 4.4%-ով: Նշված գումարից 257.2 մլն դրամն ուղղվել է «Երիտասարդական ծրագրեր»-ին՝ ապահովելով 99.7% կատարողական և 1.8%-ով գերազանցել նախորդ տարվա ցուցանիշը:

Երիտասարդական ծրագրերի շրջանակներում թրաֆիքինգի դեմ պայքարի միջոցառումներին տրամադրվել է 8 մլն դրամ կամ նախատեսվածի 100%-ը՝ պահպանելով նախորդ տարվա մակարդակը: Ծրագրի շրջանակներում Գյումրիում իրականացվել է դասընթաց և ինտերակտիվ խաղ՝ ուղղված թրաֆիքինգի երևույթի իրազեկման մակարդակի բարձրացմանը:

«Արի տուն» ծրագրի շրջանակներում սփյուռքի երիտասարդության՝ Հայաստան ճանաչողական այցելությունների կազմակերպման նպատակով պետական բյուջեից տրամադրվել է 91.2 մլն դրամ՝ ապահովելով 99.1% կատարողական: Ծրագրի շրջանակներում կազմակերպվում են 13-20 տարեկան սփյուռքահայ երիտասարդների 14-օրյա ճանաչողական շրջայցեր հայրենիքում: Երիտասարդները 10 օր բնակվում են հայ ընտանիքներում, 4 օր՝ ճամբարում: Մասնակցում են թվով 9 ճանաչողական շրջայցերի, ինչպես նաև ճամբարում մասնակցում են հայոց լեզվի, հայկական երգի և պարի դասերի: Ծրագրի գլխավոր նպատակներից է սփյուռքում բնակվող հայազգի երիտասարդների հայապահպանությունը: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը նվազել են 2.5%-ով՝ հիմնականում պայմանավորված մասնակիցների թվի կրճատմամբ: 2016 թվականին ծրագրին մասնակցել են 1000 երիտասարդներ՝ 2015 թվականի 1365-ի դիմաց:

2016 թվականին պետական բյուջեից Հայաստանում ինտելեկտուալ խաղերի զարգացմանը տրամադրվել է 12 մլն դրամ աջակցություն՝ ապահովելով 100% կատարողական: Ծրագրի շրջանակներում անցկացվել են թվով 12 միջոցառումներ, շահառուների թիվը կազմել է շուրջ 1350 մարդ: 2015 թվականի համեմատ նշված ծախսերը փոփոխության չեն ենթարկվել:

«Երիտասարդ ընտանիքին՝ մատչելի բնակարան» պետական նպատակային ծրագրի համաֆինանսավորման համար նախատեսված միջոցներն օգտագործվել են 87.3%-ով՝ կազմելով 392.3 մլն դրամ և 8.2%-ով գերազանցելով նախորդ տարվա ցուցանիշը: Ծրագրի շրջանակներում սուբսիդավորումն իրականացվում է վարկավորմամբ զբաղվող ֆինանսական կազմակերպությունների կողմից ներկայացված հայտերի հիման վրա: Ծրագրում նախատեսված 2270 շահառուի փոխարեն փաստացի ընդգրկվել է 2095 շահառու:

Քաղաքական կուսակցություններին, հասարակական կազմակերպություններին և արհմիություններին աջակցության ծախսերը 2016 թվականին կազմել են 239.8 մլն դրամ՝ 81.1%-ով ապահովելով ծրագիրը և 1.2%-ով զիջել նախորդ տարվա ցուցանիշը: Օգտագործված գումարից 144.1 մլն դրամը տրամադրվել է ՀՀ երիտասարդական հիմնադրամին, որին վերապահված է եղել 2016 թվականի ընթացքում հասարակական կազմակերպությունների միջև դրամաշնորհային մրցույթների կազմակերպման իրավասությունը: Ծրագրից շեղումը հիմնականում պայմանավորված է նրանով, որ հիմնադրամի կողմից մի շարք անվանակարգերում դրամաշնորհային մրցույթներ չեն անցկացվել, ինչպես նաև հայտարարված մրցույթներին հասարակական կազմակերպությունների կողմից ներկայացված ծրագրային փաթեթների մի մասը չի համապատասխանել մրցույթով պահանջվող չափորոշիչներին: Համապատասխանաբար 20 մլն դրամ և 75.7 մլն դրամ է հատկացվել հասարակական կազմակերպություններին և քաղաքական կուսակցություններին, որոնք ամբողջությամբ օգտագործվել են:

Այլ դասերին չպատկանող հանգստի, մշակույթի և կրոնի դասի շրջանակներում ծախսվել է 840.2 մլն դրամ՝ ապահովելով 98.2% կատարողական: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը գրեթե չեն փոփոխվել:

Տվյալ դասում ընդգրկված՝ գործադիր իշխանության, պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների պահպանման (նախարարությունների աշխատակազմերի մասով) նպատակով տրամադրվել է 713.1 մլն դրամ, որը կազմել է ծրագրվածի 98%-ը: Միջոցները հատկացվել են ՀՀ մշակույթի ու ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարությունների աշխատակազմերի պահպանմանը: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը գրեթե չեն փոփոխվել:

ՀՀ մշակույթի ու ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարությունների՝ ծրագրերի իրականացման գրասենյակների պահպանման նպատակով տրամադրվել է 127.1 մլն դրամ, որը կազմել է ծրագրվածի 99.5%-ը: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 2.3%-ով՝ հիմնականում պայմանավորված աշխատանքի վարձատրության ծախսերի աճով: 2016 թվականի նոյեմբերի 3-ից դադարեցվել է «Սպորտի և երիտասարդական ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկի գործունեությունը:

<u>Կրթություն</u>

2016 թվականին *կրթության* բնագավառում ՀՀ պետական բյուջեի ծախսերը կազմել են 122.4 մլրդ դրամ՝ ապահովելով ծրագրի 97.3% կատարողական: Ծրագրից շեղումը հիմնականում պայմանավորված է կրթությանը տրամադրվող օժանդակ ծառայությունների և բարձրագույն մասնագիտական ծառայությունների դասերի ծախսերի կատարողականով: 2015 թվականի համեմատ կրթության բնագավառի ծախսերը գրեթե փոփոխություն չեն կրել:

2016 թվականի պետական բյուջեի կրթությանը հատկացված միջոցներից 665.5 մլն դրամն ուղղվել է *նախադպրոցական կրթությանը*՝ ապահովելով ծրագրային ցուցանիշի 99.9% կատարողական և 11.5%-ով գերազանցելով նախորդ տարվա ցուցանիշը՝ հիմնականում պայմանավորված երեխաների թվի աճով, տվյալ ծրագրում սննդի գումար նախատեսելու հանգամանքով, ինչպես նաև 2015 թվականի հուլիսի 1-ից՝ նվազագույն աշխատավարձի դրույքաչափի և 2016 թվականի օգոստոսի 1-ից՝ էլեկտրաէներգիայի սակագնի բարձրացմամբ: Ծրագիրն ուղղված է մանկապարտեզ չունեցող համայնքների ավագ տարիքի երեխաների կրթության կազմակերպմանը: Նշված գումարից 7.6 մլն դրամը հատկացվել է նախադպրոցական կրթության գծով պետության կողմից համայնքի ղեկավարին պատվիրակված լիազորությունների իրականացմանը, որն ամբողջությամբ օգտագործվել է և տրամադրվել է Երևան քաղաքին:

Հաշվետու տարում տարրական, հիմնական և միջնակարգ (լրիվ) ընդհանուր կրթության բնագավառներում հանրակրթական ուսուցման ծախսերը կատարվել են 100%-ով՝ կազմելով 75 մլրդ դրամ, որից 26 մլրդ դրամը կազմել են տարրական, 34.7 մլրդ դրամը՝ հիմնական, 14.3 մլրդ դրամը՝ միջնակարգ ընդհանուր կրթության ծախսերը: Հանրակրթության համակարգում 2016 թվականին գործել է 1354 դպրոց՝ միջին հաշվով 352.6 հազար աշակերտով՝ 2015 թվականի 1356 դպրոցի և 348.6 հազար աշակերտի դիմաց: Նախորդ տարվա համեմատ հանրակրթական ուսուցման ծախսերն աճել են 3.3%-ով՝ հիմնականում պայմանավորված 2015 թվականի հուլիսի 1-ից նվազագույն աշխատավարձի բարձրացմամբ և աշակերտների թվի աճով:

Երաժշտական դպրոցներում ուսուցմանը տրամադրվել է 385.5 մլն դրամ՝ ապահովելով ծրագրի 100% կատարողական: Հատկացումների հաշվին ապահովվել է «Երևանի Չայկովսկու անվան միջնակարգ մասնագիտական երաժշտական դպրոց» ՊՈԱԿ-ի գործունեությունը: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը գրեթե փոփոխություն չեն կրել:

Շուրջ 7.9 մլն դրամ է կազմել երաժշտական դպրոցներում սովորողների կրթաթոշակը: Նշված միջոցներն օգտագործվել են ամբողջությամբ և նախորդ տարվա համեմատ մնացել են անփոփոխ:

2016 թվականին տարրական, հիմնական և միջնակարգ (լրիվ) ընդհանուր կրթության բնագավառներում հատուկ կրթության ծախսերը կատարվել են 99.7%-ով՝ կազմելով ավելի քան 3.2 մլրդ դրամ, որից շուրջ 1.0 մլրդ դրամն ուղղվել է տարրական, 1.6 մլրդ դրամը՝ հիմնական, 630.2 մլն դրամը՝ միջնակարգ (լրիվ) ընդհանուր կրթության բնագավառների հատուկ կրթական հաստատություններին: 2015 թվականի համեմատ նշված ծախսերը նվազել են 2.8%-ով կամ 92.2 մլն դրամով՝ հիմնականում պայմանավորված աշակերտների թվի նվազմամբ:

Հաշվետու տարում տարրական, հիմնական և միջնակարգ (լրիվ) ընդհանուր կրթության բնագավառներում մասնագիտացված հանրակրթական ուսուցման կազմակերպման համար ծախսվել է ավելի քան 2.1 մլրդ դրամ՝ ապահովելով ծրագրի 99.3%-ը: 2016 թվականին համակարգում գործել է 7 դպրոց, աշակերտների միջին տարեկան թիվը կազմել է 2458՝ 2015 թվականի 2460.3-ի դիմաց: 2015 թվականի համեմատ մասնագիտացված հանրակրթական ուսուցման ծախսերն աճել են 22.4 մլն դրամով կամ 1.1%-ով՝ պայմանավորված գիշերող և երթևեկ սաների թվի փոփոխությամբ:

2016 թվականին ավելի քան 12.9 մլն դրամ է տրամադրվել մասնագիտացված հանրակրթական հաստատությունների սաների կրթաթոշակների վճարմանը, որը կատարվել է 96.4%-ով: Շեղումը պայմանավորված է այն հանգամանքով, որ կրթաթոշակ տրամադրվել է միայն որոշակի չափանիշների բավարարող սաներին: Կրթաթոշակ ստացող սաների թիվը կազմել է 291՝ նախորդ տարվա 251-ի դիմաց: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 12.8%-ով՝ պայմանավորված սաների թվի աճով:

2016 թվականին տարրական, հիմնական և միջնակարգ (լրիվ) ընդհանուր կրթության բնագավառներում ներառական կրթության ծախսերը կատարվել են 97.6%-ով՝ կազմելով 3.2 մլրդ դրամ, որից 1.4 մլրդ դրամը՝ տարրական, 1.6 մլրդ դրամը՝ հիմնական և 112.4 մլն դրամը՝ միջնակարգ ընդհանուր կրթության ծախսերն են: Տնտեսումը հիմնականում պայմանավորված է համընդհանուր ներառական կրթության համակարգի ներդրման գործընթացով, որն, ըստ ժամանակացույցի, 2016 թվականին ներդրվել է ՀՀ Սյունիքի մարզում: Նշվածով պայմանավորված՝ Սյունիքի մարզի ներառական կրթություն իրականացնող դպրոցների ծախսերը ֆինանսավորվել են հանրակրթական դպրոցներին հատկացված միջոցների հաշվին: Ծախսերի տնտեսումը պայմանավորված է նաև աշակերտների չհաճախելու հետևանքով սննդի և տրանսպորտային ծախսերի խնայողությամբ: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 36%-ով՝ հիմնականում պայմանավորված ֆինանսավորման բանաձևում կիրառվող չափաքանակների գործակիցների բարձրացմամբ և դպրոցների ու աշակերտների թվի աճով: 2016-2017թթ. ուսումնական տարում գործող ներառական դպրոցների թիվը կազմում է 208՝ 6.1 հազար աշակերտով, 2015-2016թթ. ուսումնական տարվա 156 դպրոցի և 4.7 հազար աշակերտի դիմաց:

Հիմնական և միջնակարգ (լրիվ) ընդհանուր կրթության բնագավառներում ընդգրկված՝ երեկոյան ուսուցման ծրագրերի շրջանակներում ֆինանսավորվել են ՀՀ Շիրակի մարզի և Երևան քաղաքի երեկոյան դպրոցները, որոնց տրամադրվել է ավելի քան 44.9 մլն դրամ՝ ապահովելով ծրագրի 100%-ը: Նախորդ տարվա համեմատ ծախսերն էական փոփոխություն չեն կրել:

2016 թվականին *նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության* խմբի ծախսերը կազմել են 9.0 մլրդ դրամ կամ նախատեսված հատկացումների 99.4%-ը: Նշված գումարից 6.5 մլրդ դրամը կազմել են միջին մասնագիտական, 2.5 մլրդ դրամը՝ նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթության ծախսերը, որոնք կատարվել են համապատասխանաբար 99.7%-ով և 98.7%-ով:

Հաշվետու տարում նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթության ծրագրի շրջանակներում կատարվել են 2.1 մլրդ դրամ ծախսեր՝ ապահովելով 98.5% կատարողական: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը նվազել են 3.1%-ով, ինչը հիմնականում պայմանավորված է սովորողների միջին տարեկան թվի նվազմամբ: Նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթական հաստատություններում սովորող ուսանողներին տրամադրվել է 362.9 մլն դրամ կրթաթոշակ՝ 99.7%-ով ապահովելով նախատեսված հատկացումները: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը նվազել են 5.4%-ով՝ պայմանավորված կրթաթոշակ ստացող սովորողների թվի նվազմամբ:

2016 թվականին միջին մասնագիտական կրթության ոլորտում 6 մլրդ դրամ է տրամադրվել միջին մասնագիտական կրթության գծով ուսանողական նպաստների, 564.9 մլն դրամ՝ միջին

մասնագիտական կրթություն ստացող ուսանողների կրթաթոշակների վճարմանը: Նշված երկու ծրագրերը կատարվել են համապատասխանաբար 99.7%-ով և 99.4%-ով: Նշված միջոցները նախորդ տարվա համեմատ աճել են համապատասխանաբար 2.7%-ով և 9%-ով, ինչը պայմանավորված է սովորողների թվի աճով (979-ով) և 2015 թվականի հուլիսի 1-ից նվազագույն աշխատավարձի բարձրացմամբ:

2016 թվականին ՀՀ պետական բյուջեից 11.6 մլրդ դրամ տրամադրվել է *բարձրագույն կրթության* բնագավառին, որից 10.7 մլրդ դրամը բարձրագույն մասնագիտական կրթության ծախսերն են, 911.8 մլն դրամը՝ հետբուհական մասնագիտական կրթության ծախսերը: Բարձրագույն կրթության ծախսերի տարեկան ծրագիրն ապահովվել է 96.3%-ով, իսկ նախորդ տարվա համեմատ դրանք աճել են 4.7%-ով կամ 526.4 մլն դրամով: Ինչպես ծախսերի ծրագրից շեղումը, այնպես էլ նախորդ տարվա համեմատ աճը հիմնականում արձանագրվել են բարձրագույն մասնագիտական կրթության գծով ուսանողական նպաստների տրամադրման ծրագրում:

Բարձրագույն մասնագիտական կրթության բնագավառին կատարված հատկացումների հաշվին իրականացվել են երեք ծրագրեր: Դրանցում մեծ տեսակարար կշիռ ունեն բարձրագույն մասնագիտական կրթության գծով ուսանողական նպաստների տրամադրման համար կատարված հատկացումները, որոնք օգտագործվել են 95.7%-ով՝ կազմելով շուրջ 8.0 մլրդ դրամ: 2015 թվականի համեմատ նշված ծախսերն աճել են 7.7%-ով՝ հիմնականում պայմանավորված ուսանողական նպաստներ ստացող ուսանողների թվի և 2015 թվականի հուլիսի 1-ից նվազագույն աշխատավարձի բարձրացմամբ:

Բարձրագույն մասնագիտական կրթություն ստացող ուսանողների կրթաթոշակներին տրամադրվել է 914.2 մլն դրամ՝ ապահովելով 100% կատարողական: Նախորդ տարվա համեմատ ցուցանիշն աճել է 3.9%-ով՝ հիմնականում պայմանավորված Ազգային անվտանգության համակարգում սովորողներին տրամադրվող կրթաթոշակների գծով ծախսերի աճով՝ կապված փոխարժեքի աճի հետ:

1.8 մլրդ դրամ են կազմել բարձրագույն մասնագիտական կրթության ծրագրի ծախսերը, որոնք կատարվել են 95.8%-ով և 3.9%-ով զիջել նախորդ տարվա ցուցանիշը:

2016 թվականին *հետբուհական մասնագիտական կրթության* բնագավառի ծախսերը կատարվել են 98.1%-ով՝ կազմելով 911.8 մլն դրամ: Նախորդ տարվա համեմատ տվյալ ծախսերն էական փոփոխություն չեն կրել:

48.7 մլն դրամ տրամադրվել է հետբուհական մասնագիտական կրթության գիտական կադրերի պատրաստման գծով նպաստներին, որը կատարվել է շուրջ 95.1%-ով՝ պայմանավորված ասպիրանտների թվաքանակի նվազմամբ՝ կապված օտար լեզվի ընդունելության քննությունը

չհաղթահարելու հետ: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 2.3%-ով, ինչը պայմանավորված է ասպիրանտների թվի աճով:

Ասպիրանտական և դոկտորանտական կրթաթոշակների վճարման համար 2016 թվականի պետական բյուջեից տրամադրվել է շուրջ 38.6 մլն դրամ, որը կատարվել է 95.1%-ով: Շեղումը պայմանավորված է ասպիրանտների և դոկտորանտների՝ նախատեսվածից փոքր թվով: Սակայն նախորդ տարվա համեմատ ասպիրանտների և դոկտորանտների փաստացի թվի աճի արդյունքում տվյալ ծախսերն աճել են 3.6%-ով:

Հետբուհական մասնագիտական կրթության գծով նպաստների տրամադրման և հետբուհական մասնագիտական կրթություն ստացող ուսանողների կրթաթոշակի ծախսերը համապատասխանաբար կազմել են 586.9 մլն և 237.8 մլն դրամ՝ ապահովելով ծրագրի կատարումը 98.6%-ով և 98.2%-ով: Հետբուհական մասնագիտական կրթության գծով նպաստների տրամադրման ծրագրի կատարողականը պայմանավորված է օտար լեզվի ու ինֆորմատիկայի դասընթացների կազմակերպման համար նախատեսված միջոցների տնտեսմամբ: Ծրագիրն իրականացվել է 17 բարձրագույն ուսումնական հաստատություններում, ասպիրանտների թիվը կազմել է 856, օրդինատորներինը (այդ թվում՝ ինտերնատուրա)՝ 223, դոկտորանտներինը՝ 18: Բացի այդ, վերապատրաստվել են թվով 1200 բժիշկ և բուժքույր, ավելի քան 665 քաղաքացիական, պետական ծառայողներ և այլ կազմակերպությունների աշխատակիցներ, պետական պատվերի շրջանակներում սովորել է 69 մագիստրոս: Նախորդ տարվա համեմատ նպաստների գծով ծախսերը նվազել են 1.2%-ով՝ հիմնականում պայմանավորված ասպիրանտների և վերապատրաստված պետական ծառայողների թվի նվազմամբ: Կրթաթոշակի գծով ծախսերի կատարողականը պայմանավորված է հետբուհական մասնագիտական կրթություն ստացող ուսանողների փաստացի քանակով: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը նվազել են 0.4%-ով՝ պայմանավորված ասպիրանտների թվի նվազմամբ:

Հաշվետու տարում *ըստ մակարդակների չդասակարգվող կրթության* խմբի ծախսերը կազմել են ավելի քան 6.1 մլրդ դրամ կամ նախատեսվածի 98.2%-ը, որից 4.7 մլրդ դրամը կազմել են արտադպրոցական դաստիարակության, 1.4 մլրդ դրամը՝ լրացուցիչ կրթության ծախսերը, որոնք կատարվել են համապատասխանաբար 99.9%-ով և 92.7%-ով: Վերջինս հիմնականում պայմանավորված է «Վերապատրաստման ծառայություններ» և «Մասնագիտական վերապատրաստում ստացող ունկնդիրների կրթաթոշակ» ծրագրերի կատարողականով: 2015 թվականի համեմատ ըստ մակարդակների չդասակարգվող կրթության ծախսերն աճել են 1.3%-ով կամ շուրջ 78.4 մլն դրամով: Ընդ որում՝ 0.7%-ով աճել են արտադպրոցական դաստիարակության, 3.4%-ով՝ լրացուցիչ կրթության ծախսերը:

Արտադպրոցական դաստիարակությանը 2016 թվականի պետական բյուջեից հատկացված 10.0 մլն դրամ աջակցությունն ամբողջությամբ տրամադրվել է: Ծրագրի շրջանակներում անցկացվել են ՀՀ դպրոցականների շախմատի 10-րդ օլիմպիադայի 2-4-րդ փուլերը, 2016 թվականին Ռուսաստան Դաշնության Կրասնոդար քաղաքում տեղի է ունեցել ԱՊՀ երկրների դպրոցականների միջազգային մարզական 4-րդ փառատոնը: 2015 թվականի համեմատ նշված ծախսերը նվազել են 23.1%-ով՝ պայմանավորված մեկ միջոցառում պակաս իրականացնելու հանգամանքով:

Շուրջ 2.8 մլրդ դրամ է հատկացվել արտադպրոցական դաստիարակության ծրագրի ֆինանսավորմանը՝ ապահովելով 100% կատարողական: 2015 թվականի համեմատ նշված ծախսերն աճել են 1.9%-ով՝ հիմնականում պայմանավորված 2015 թվականի հուլիսի 1-ից նվազագույն աշխատավարձի բարձրացմամբ, մեկ մարզադպրոցի ավելացմամբ, ինչպես նաև ՀՀ Կոտայքի մարզպետարանի ենթակայության «Եղվարդի մանկապատանեկան մարզադպրոց» ՊՈԱԿ-ի ջեռուցման իրականացմամբ:

Շախմատի մրցույթների պատրաստման ծառայություններին 2016 թվականի պետական բյուջեից տրամադրվել է 17.5 մլն դրամ՝ ապահովելով 100% կատարողական: 2015 թվականի համեմատ նշված ծախսերն աճել են 1.7%-ով, որը պայմանավորված է ծրագրի համար անհրաժեշտ ապրանքների և ծառայությունների քանակի ավելացմամբ:

«Արտադպրոցական դաստիարակություն հասարակական կազմակերպությունների կողմից» ծրագրի համար նախատեսված 785.5 մլն դրամն ամբողջությամբ օգտագործվել է: Նախորդ տարվա համեմատ տվյալ ծախսերն աճել են 1.1.%-ով՝ հիմնականում պայմանավորված մարզական միջոցառումների քանակի ավելացմամբ: Հատկացված միջոցների հաշվին 4 հասարակական կազմակերպությունների 24 մանկապատանեկան մարզադպրոցներում մարզվել են 5535 մարզիկներ՝ 2015 թվականի 5526-ի դիմաց:

Երաժշտական և արվեստի դպրոցներում ազգային, փողային և լարային նվագարանների գծով ուսուցման նպատակով 2016 թվականի պետական բյուջեից տրամադրվել է 465.6 մլն դրամ, որը կազմել է նախատեսվածի 99.7%-ը: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն էական փոփոխություն չեն կրել:

Արտադպրոցական դաստիարակության գծով ՀՀ համայնքային բյուջեներին սուբվենցիաների տրամադրման համար նախատեսվել է շուրջ 219.4 մլն դրամ, որն ամբողջությամբ օգտագործվել է: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն էական փոփոխության չեն կրել:

Երաժշտական և արվեստի դպրոցներում ուսումնամեթոդական աշխատանքներին տրամադրվել է շուրջ 77.6 մլն դրամ՝ ապահովելով 100% կատարողական: Ծրագրի շրջանակներում «Մշակութային կրթության աջակցության» հիմնադրամը մեթոդիստ-մանկավարժների և

հանրապետության առաջատար մասնագետների միջոցով հանրապետության երաժշտական, արվեստի և գեղարվեստի դպրոցների 8800 մանկավարժների և սովորողների ցուցաբերել է մեթոդական օգնություն՝ նախատեսված 6400-ի և 2015 թվականի 8810-ի դիմաց: Նշված միջոցները նախորդ տարվա համեմատ էական փոփոխություն չեն կրել:

2016 թվականի պետական բյուջեով երաժշտական, արվեստի և գեղարվեստի դպրոցների համար ուսումնական նոր ծրագրերի, դասագրքերի, մեթոդական ձեռնարկների մշակման և հրատարակման համար նախատեսված 17.1 մլն դրամն ամբողջությամբ օգտագործվել է: Ծրագրի շրջանակներում 2016 թվականին տպագրվել են 24 անուն դասագրքեր, մեթոդական ձեռնարկներ՝ նախորդ տարվա 20-ի դիմաց: Հրատարակված գրականության մի մասն անվճար տրամադրվել է հանրապետության մշակութային կրթօջախներին: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը փոփոխություն չեն կրել:

Արտադպրոցական դաստիարակության բնագավառում «Վինդսերֆինգ մարզաձևին առնչվող ծառայություններ» ծրագրի գծով հատկացվել է 37.8 մլն դրամ կամ նախատեսվածի 99.4%-ը: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը նվազել են 23.3%-ով կամ 11.5 մլն դրամով՝ պայմանավորված Սևան քաղաքում անցկացվող ուսումնամարզական հավաքի ժամկետի և մասնակիցների թվի կրճատմամբ, ինչպես նաև այն հանգամանքով, որ կրճատվել է մեկ տեղական և ՌԴ Ադլեր քաղաքում անցկացվող միջազգային միջոցառում:

Հայաստանի Հանրապետության մանկապատանեկան մարզադպրոցներին, մարզաձևերի ազգային ֆեդերացիաներին և այլ մարզական հասարակական կազմակերպություններին գույքով ապահովման նպատակով նախատեսվել է 92 մլն դրամ, որն ամբողջությամբ օգտագործվել է: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը նվազել են 45.3%-ով կամ 76.2 մլն դրամով, որը պայմանավորված է ձեռք բերված մարզագույքի քանակի նվազմամբ: 2016 թվականին 36 մարզական կազմակերպությունների համար նախատեսված 55 անուն մարզագույքի դիմաց ձեռք է բերվել 51 անուն մարզագույք:

Մանկապատանեկան մարզադպրոցներում աշխատող մարզիչ-մանկավարժների վերապատրաստման կազմակերպման նպատակով նախատեսվել է 4.9 մլն դրամ, որն ամբողջությամբ օգտագործվել է: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 28.5%-ով՝ պայմանավորված մարզերի վերապատրաստվող մարզիչների թվի ավելացմամբ: 2016 թվականին վերապատրաստվել են 174 մարզիչ-մանկավարժներ (որից 104-ը՝ մարզերից)՝ 2015 թվականի 171-ի (որից 70-ը՝ մարզերից) դիմաց:

«Հակոբ Կոջոյան» կրթահամալիր» ՊՈԱԿ-ում արտադպրոցական դաստիարակության կազմակերպման նպատակով պետության կողմից համայնքի ղեկավարին պատվիրակված լիազորությունների իրականացման ֆինանսավորման համար նախատեսված 8 մլն դրամն

ամբողջությամբ օգտագործվել է: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը փոփոխություն չեն կրել:

Իրավախախտում կատարած անչափահասների գեղագիտական դաստիարակության ծրագրերի իրականացմանն աջակցության նպատակով 2016 թվականին տրամադրվել է 23.2 մլն դրամ՝ 100%-ով ապահովելով նախատեսված ցուցանիշը: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը նվազել են 7.3%-ով:

2016 թվականին պետական բյուջեից «Դպրոցահասակ երեխաների մասնակցություն դպրոցական խաղերին» ծրագրով նախատեսված 49.5 մլն դրամն ամբողջությամբ օգտագործվել է: Ծրագրի շրջանակում ՀՀ դպրոցականները մասնակցել են դպրոցականների սեղանի թենիսի և վոլեյբոլի աշխարհի առաջնություններին: Թուրքիայի Տրաբզոն քաղաքում կայացած Գիմնազիադայում հայ դպրոցականները արժանացել են 5 ոսկե, 2 արծաթե և 8 բրոնզե մեդալների: Թիմային ընդհանուր հաշվարկում Հայաստանը գրավել է 10-րդ տեղը: Իսրայելում առաջին անգամ սեղանի թենիսի թիմը դուրս է եկել եզրափակիչ փուլ և գրավել է 7-րդ տեղը, իսկ Սերբիայում վոլեյբոլիստները ձեռք են բերել վարկանիշ 2018 թվականին մասնակցելու աշխարհի առաջնության մրցումներին: Ընդհանուր առմամբ միջազգային մրցույթներին մասնակցել է 89 դպրոցական: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը փոփոխություն չեն կրել:

Երաժշտական և արվեստի դպրոցների համար երաժշտական գործիքների ձեռքբերման նպատակով տրամադրվել է 16.7 մլն դրամ՝ կազմելով ծրագրված ցուցանիշի 84.5%-ը, որը պայմանավորված է գնումների գործընթացի արդյունքում առաջացած տնտեսումներով: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը աճել են 3.3%-ով՝ պայմանավորված ձեռքբերված երաժշտական գործիքների բարձրորակ և համերգային լինելու հանգամանքով: Ծրագրի հաշվին երաժշտական դպրոցների համար նախատեսված 17 անուն 43 գործիքի դիմաց ձեռք է բերվել 17 անուն 41 երաժշտական գործիք:

2016 թվականին շնորհալի պատանի երաժիշտ-կատարողների մասնագիտական կարողությունների զարգացմանը և կատարելագործմանն աջակցության նպատակով նախատեսված 15.9 մլն դրամն ամբողջությամբ օգտագործվել է: Ծրագրում ընդգրկված 15 շնորհալի պատանի երաժիշտ-կատարողներ 2016 թվականին մասնակցել են 67 հանրապետական և միջազգային նախագծերի՝ մրցույթների, փառատոների, մենահամերգների, վարպետության դասերի և այլ նպատակային ծրագրերի: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը փոփոխություն չեն կրել:

Ռազմահայրենասիրական դաստիարակության ռազմավարության իրականացման գծով 2016 թվականին նախատեսված 128.6 մլն դրամն ամբողջությամբ օգտագործվել է: 2016 թվականի ընթացքում ապահովվել է «Պատանի երկրապահ» ակումբի 72 ստորաբաժանումների բնականոն գործունեությունը, կազմակերպվել են թվով 5945 պատանի երկրապահների ուսումնամարզական

վարժանքները և հանգիստը, կազմակերպվել են տոնական միջոցառումներ: Նախորդ տարվա համեմատ տվյալ ծախսերի գծով արձանագրվել է կրկնակի աճ՝ պայմանավորված լրացուցիչ միջոցառումների իրականացմամբ:

Ներդրումներ «Իրավախախտում կատարած անձանց վերականգնողական կենտրոն» ՊՈԱԿ-ում ծրագրի շրջանակներում տրամադրվել է 420 հազար դրամ՝ կազմելով ծրագրված ցուցանիշի 72.4%-ը: Շեղումը պայմանավորված է համակարգչային տեխնիկան նախատեսվածից ցածր գնով ձեռք բերելու հանգամանքով: Ծրագիրը իրականացվում է 2016 թվականից:

2016 թվականին պետական բյուջեից 1.4 մլրդ դրամ է տրամադրվել *լրացուցիչ կրթությանը*՝ կազմելով ծրագրված ցուցանիշի 92.7%-ը: Նախորդ տարվա համեմատ լրացուցիչ կրթության ծախսերն աճել են 3.4%-ով՝ հիմնականում պայմանավորված հարկային և մաքսային ծառայողների վերապատրաստման ծառայությունների գծով ծախսերի աճով:

ՀՀ քաղաքացիական ծառայողների վերապատրաստման գծով պետական պատվերի շրջանակներում 2016 թվականին օգտագործվել է շուրջ 29.7 մլն դրամ՝ ապահովելով 67.8% կատարողական: Ծրագրից շեղումը պայմանավորված է մի շարք պատճառներով՝ օրենսդրությամբ չարգելված այլ միջոցների հաշվին վերապատրաստումներով (միջազգային կազմակերպությունների կողմից, վարկային և դրամաշնորհային ծրագրերով), օրենքով նախատեսված համապատասխան մարմիններում տեղի ունեցող վերակազմավորումներով, կադրերի հոսունությամբ (թափուր պաշտոնների առկայությամբ): Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը նվազել են 3.9%-ով: 2016 թվականի ընթացքում ՀՀ պետական բյուջեի հաշվին վերապատրաստվել է 1821 քաղաքացիական ծառայող՝ նախորդ տարվա 2132-ի դիմաց:

«Հանրային հատվածի ֆինանսական ոլորտի մասնագետների վերապատրաստման ծառայություններ» ծրագրի շրջանակներում նախատեսված 110.1 մլն դրամն ամբողջությամբ օգտագործվել է: Ծրագիրը նախատեսված է բյուջետային բարեփոխումների ու պետական ֆինանսների կառավարման զարգացումների բնագավառում հանրային ծառայողների վերապատրաստման համար: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն էական փոփոխություն չեն կրել:

Լրացուցիչ կրթության ուսուցման գծով պետական պատվերի շրջանակներում տրամադրվել է ավելի քան 17.9 մլն դրամ՝ 100%-ով ապահովելով նախատեսված ծախսերի կատարումը: Միջոցները հատկացվել են ՀՀ դատախազությանը: Այս ծրագրով իրանակացվել է փորձաքննությունների նշանակման մասնագիտական վերապատրաստման 40 դասընթաց, մասնակիցների քանակը կազմել է 360 մարդ: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն էական փոփոխություն չեն կրել:

ՀՀ արդարադատության նախարարության հատուկ ծառայողների վերապատրաստման և հատուկ ուսուցման նպատակով ծախսվել է 332.5 մլն դրամ՝ ապահովելով 100% կատարողական:

2016 թվականին վերապատրաստվողների և հատուկ ուսուցում անցնողների քանակը կազմել է 2525՝ 2015 թվականի 2523-ի դիմաց: 2016 թվականին մեկ դասընթացի տևողությունը եղել է 72 ակադեմիական ժամ: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը նվազել են 3.4%-ով կամ 11.7 մլն դրամով, որը հիմնականում պայմանավորված է մեկ դասաժամի արժեքի նվազմամբ:

Հաշվետու տարում ընտրական հանձնաժողովների անդամների մասնագիտական դասընթացների կազմակերպման ծախսերը կազմել են 58.9 մլն դրամ կամ նախատեսվածի 99.9%-ը: Նախորդ տարվա համեմատ դրանք աճել են 8.1%-ով, որը հիմնականում պայմանավորված է այն հանգամանքով, որ միջոցներ են հատկացվել ՀՀ ընտրական օրենսգրքի տպագրման աշխատանքների համար:

Կադրերի պատրաստման և վերապատրաստման ծառայությունների գծով նախատեսված 120.1 մլն դրամն ամբողջությամբ օգտագործվել է և տրամադրվել ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարությանը: Նախորդ տարվա համեմատ ծախսերի աճը կազմել է 5%՝ հիմնականում պայմանավորված աշխատավարձի բնականոն աճով:

2016 թվականին օտարերկրյա պետությունների ուսումնական հաստատություններ գործուղված փրկարարական ծառայողների ուսուցման ծախսերը կազմել են 14.1 մլն դրամ՝ ապահովելով 100% կատարողական: Հատկացումների հաշվին ամբողջությամբ վճարվել են ՌԴ ԱԻՆ քաղաքացիական պաշտպանության ակադեմիա գործուղված փրկարարական ծառայողների ճանապարհածախսը, կրթաթոշակը և բնակվարձը: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը փոփոխություն չեն կրել:

ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմի պետական ծառայողների վերապատրաստման նպատակով տրամադրվել է 240.0 հազար դրամ՝ ապահովելով 99.7% կատարողական: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը նվազել են 70.4%-ով՝ հիմնականում պայմանավորված վերապատրաստված ծառայողների թվի նվազմամբ:

323.0 մլն դրամ է տրամադրվել «Վերապատրաստման ծառայություններ» ծրագրին՝ 86%-ով ապահովելով նախատեսված ցուցանիշը: Միջոցներն ուղղվել են ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարության, ՀՀ արդարադատության նախարարության, ՀՀ արտաքին գործերի նախարարության, ՀՀ հատուկ քննչական ծառայության, Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի, Ազգային անվտանգության խորհրդի, ՀՀ քննչական կոմիտեի աշխատակիցների և համայնքային ծառայողների վերապատրաստմանը: Շեղումը պայմանավորված է ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարության ծախսերի կատարողականով՝ 2016 թվականին վերապատրաման գործընթացը ոչ նպատակահարմար համարելու պատճառով՝ կապված 2016 թվականի ՏԻՄ ընտրությունների հետ: Անարդյունավետ ծախսերից խուսափելու համար վերապատրաստման գործընթացը կիրականացվի համայնքների խոշորացման գործընթացների

ավարտից հետո: Արդյունքում վերապատրաստման ծառայությունների ծախսերը նախորդ տարվա համեմատ նվազել են 14%-ով:

Մասնագիտական վերապատրաստում ստացող ունկնդիրներին կրթաթոշակի տրամադրման նպատակով օգտագործվել է ծրագրով նախատեսված միջոցների 35%-ը՝ 22.6 մլն դրամ: Շեղումը պայմանավորված է այն հանգամանքով, որ 2016 թվականին նախատեսված 30 ունկնդրի փոխարեն մասնագիտական վերապատրաստում է անցել 18 ունկնդիր, որից 9 դատավորների թեկնածությունների ցուցակում ընգրկված անձինք ավարտել են ուսումնառությունը 2016 թվականի հունիսին, իսկ դատախազների թեկնածությունների ցուցակում ընգրկված անձանցից մեկը հանվել է ցուցակից: Արդյունքում նախորդ տարվա համեմատ տվյալ ծախսերը նվազել են 46.2%-ով:

Լրացուցիչ կրթության դասում ընդգրկված՝ հարկային և մաքսային ծառայողների վերապատրաստման ծառայություններին տրամադրվել է 343.6 մլն դրամ՝ ապահովելով 100% կատարողական: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 53.3%-ով կամ 119.5 մլն դրամով, որը պայմանավորված է «ՀՀ ԿԱ ՊԵԿ ուսումնական կենտրոն» ՊՈԱԿ-ի կառուցվածքային փոփոխությամբ՝ հաստիքների ավելացմամբ (2016 թվականին 66 աշխատակից՝ 2015 թվականի 42 աշխատակցի փոխարեն): 2016 թվականին վերապատրաստում են անցել 3320 հարկային և մաքսային տեսուչներ: 2015 թվականին վերապատրաստման դասընթացներին մասնակիցների թիվը կազմել էր 2122, իսկ ուսուցման դասընթացների մասնակիցներինը՝ 1526:

2016 թվականի պետական բյուջեի կրթության ոլորտի ծախսերի 8.2%-ն ուղղվել է *կրթությանը տրամադրվող օժանդակ ծառայությունների* ֆինանսավորմանը: Նշված ծախսերը կատարվել են 78.9%-ով կամ կազմել շուրջ 10.1 մլրդ դրամ: Ծրագրից շեղումը հիմնականում պայմանավորված է արտաքին աջակցությամբ իրականացվող նպատակային ծրագրերի և կրթական օբյեկտների հիմնանորոգման ծախսերի կատարողականով: Նշված հանգամանքով է նաև հիմնականում պայմանավորված 2015 թվականի համեմատ կրթությանը տրամադրվող օժանդակ ծառայությունների ծախսերի 27.7%-ով կամ 3.8 մլդ դրամով նվազումը:

2016 թվականին սփյուռքի հայկական դպրոցների ուսուցիչների վերապատրաստման ծախսերը կազմել են 31.9 մլն դրամ՝ ապահովելով 87.9% կատարողական, որը պայմանավորված է վերապատրաստվող ուսուցիչների հյուրանոցային ծախսերի տնտեսմամբ: Ծրագրի շրջանակներում 2016 թվականին վերապատրաստվել են 68 ուսուցիչներ՝ 2015 թվականի 63-ի դիմաց: Վերապատրաստված ուսուցիչների թվի աճով պայմանավորված՝ նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 5.9%-ով:

Տվյալ խմբում ընդգրկված՝ կրթական օբյեկտների հիմնանորոգման ծախսերը կազմել են շուրջ 1.3 մլրդ դրամ՝ 74.2%-ով ապահովելով ծրագրային ցուցանիշը, որը հիմնականում պայմանավորված է մրցութային գործընթացի արդյունքում առաջացած տնտեսումներով: Ծրագրի շրջանակներում

հաշվետու տարում հիմնանորոգվել են 39 օբյեկտներ՝ 2015 թվականի 43-ի դիմաց: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը նվազել են 53.4%-ով՝ հիմնականում պայմանավորված կատարված աշխատանքների ծավալների նվազմամբ:

Միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների հիմնանորոգման ծախսերին տրամադրվել է 37.9 մլն դրամ՝ 73.3%-ով ապահովելով ծրագրային ցուցանիշը, որը պայմանավորված է մրցութային գործընթացի արդյունքում առաջացած տնտեսումներով: Ծրագրի շրջանակներում կատարվել են ՀՀ Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Կարա Մուրզայի անվան երաժշտական քոլեջի ջեռուցման, ՀՀ Լոռու մարզի Սպիտակ քաղաքի պետական քոլեջի, ՀՀ Լոռու մարզի Վանաձոր քաղաքի Միքայել Թավրիզյանի անվան արվեստի պետական քոլեջի, ինչպես նաև՝ ՀՀ Լոռու մարզի Վանաձոր քաղաքի գյուղատնտեսական պետական քոլեջի հիմնանորոգման աշխատանքները: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը նվազել են 87.7%-ով՝ հիմնականում պայմանավորված կատարված աշխատանքների ծավալների նվազմամբ:

Ուսանողներին զեղչված գներով հանրակացարանային պայմանների տրամադրման ծախսերը կատարվել են 93.2%-ով և կազմել 30.5 մլն դրամ: Շեղումը պայմանավորված է ծրագրից օգտվող ուսանողների փաստացի թվով: Նախորդ տարվա համեմատ այս ծախսերն աճել են 5.3%-ով՝ հիմնականում կապված բնակվողների թվի աճի հետ, որը կազմել է 192՝ նախորդ տարվա 185-ի դիմաց:

Կրթությանը տրամադրվող օժանդակ ծառայությունների խմբում ընդգրկված՝ կրթական օբյեկտների շինարարությանը ՀՀ 2016 թվականի պետական բյուջեից տրամադրվել է 80.8 մլն դրամ՝ ապահովելով ծրագրի 99.4%-ը: Ծրագրի շրջանակներում հաշվետու տարում իրականացվել են ՀՀ Լոռու մարզի Մեծ Պարնի գյուղի մանկապարտեզի շենքի, ՀՀ Սյունիքի մարզի ք. Ագարակի դպրոցի նոր ուսումնական մասնաշենքի, ինչպես նաև՝ ՀՀ Գեղարքունիքի մարզի գ. Ներքին Գետաշենի նոր մանկապարտեզի կառուցման աշխատանքները: Նախորդ տարվա համեմատ ծրագրի գծով բյուջետային ծախսերը նվազել են 68%-ով՝ պայմանավորված շինարարական աշխատանքների ծավալների նվազմամբ:

2016 թվականին 261.6 մլն դրամ է տրամադրվել մարզական օբյեկտների շինարարությանը՝ ապահովելով 94.8% կատարողական: Շեղումը պայմանավորված է մրցույթների արդյունքում առաջացած տնտեսումներով: Ծրագրի շրջանակներում իրականացվել են Երևանի օլիմպիական հերթափոխի պետական մարզական քոլեջի հանրակացարանային նոր մասնաշենքի, ՀՀ Արագածոտնի մարզի ք. Աշտարակի մարզադպրոցի, ՀՀ Արմավիրի մարզի Էջմիածին քաղաքի նոր մարզադպրոցի, ՀՀ Կոտայքի մարզի ք. Չարենցավանի մարզադպրոցի կառուցման աշխատանքները: Նշենք, որ 2015 թվականին շինարարական աշխատանքներ էին կատարվել 3

օբյեկտներում: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը նվազել են 60.7%-ով՝ պայմանավորված շինարարական աշխատանքների ծավալներով:

Կրթությանը տրամադրվող օժանդակ ծառայությունների խմբում ընդգրկված՝ ավագ դպրոցների շենքերի հիմնանորոգմանը ՀՀ 2016 թվականի պետական բյուջեից տրամադրվել է 58.1 մլն դրամ՝ ապահովելով ծրագրի 73.5%-ը: Շեղումը պայմանավորված է մրցույթների արդյունքում առաջացած տնտեսումներով: Ծրագրի շրջանակներում հաշվետու տարում իրականացվել են ՀՀ Լոռու մարզի ք. Ստեփանավանի ավագ դպրոցի վերանորոգման աշխատանքները: Նշենք, որ 2015 թվականին ավագ դպրոցների հիմանորոգման աշխատանքներ նախատեսված չեն եղել:

Դպրոցականների ամառային հանգստի կազմակերպմանն ուղղվել է 480.2 մլն դրամ՝ ապահովելով 100% կատարողական: 2016 թվականին ծրագրի շրջանակներում կազմակերպվել է 4800 երեխայի ամառային հանգիստը: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 6.8%-ով՝ հիմնականում պայմանավորված ծրագրում ընդգրկված երեխաների թվի ավելացմամբ 300-ով և 2015 թվականի հուլիսի 1-ից նվազագույն աշխատավարձի բարձրացմամբ:

Ավարտական փաստաթղթերի՝ գովասանագրերի, դասամատյանների, մեդալների, ծրարների, ուսումնական ծրագրերի, մանկավարժական պարբերականների և ուսումնադիտողական պարագաների ձեռքբերման նպատակով հաշվետու տարում ծախսվել է 270.7 մլն դրամ՝ ապահովելով 94.3% կատարողական: Շեղումը պայմանավորված է մրցույթների արդյունքում առաջացած տնտեսումներով: Հատկացված միջոցներով ձեռք են բերվել 31000 հատ վկայականներ, 24100 հատ ատեստատներ, 3400 հատ դիպլոմներ, 30000 հատ գովասանագրեր, 20900 հատ դասամատյաններ, 97 հատ հուշամեդալներ, 78 հատ առաջադիմության մեդալներ, 38 անուն ուսումնական ձեռնարկներ, մանկավարժական պարբերականներ և ուսումնադիտողական պարագաներ: Նախորդ տարվա համեմատ տվյալ ծախսերը նվազել են 5.3%-ով՝ պայմանավորված ձեռք բերված փաստաթղթերի և պարագաների քանակով, ինչպես նաև գնումների գործընթացի արդյունքում ձևավորված գներով:

Տարրական դասարանների աշակերտներին անվճար դասագրքերով և ուսումնական գրականությամբ ապահովման ու ավագ դպրոցների դասագրքերի հրատարակման ծրագրի շրջանակներում ՀՀ 2016 թվականի պետական բյուջեից կատարվել են 969.1 մլն դրամ ծախսեր՝ 100%-ով ապահովելով ծրագրային ցուցանիշը: Նախորդ տարվա համեմատ այս ծախսերն էական փոփոխություն չեն կրել:

ՀՀ հեռավոր, սահմանամերձ, լեռնային և բարձր լեռնային բնակավայրերի պետական հանրակրթական դպրոցների մանկավարժներին փոխհատուցման նպատակով տրամադրվել է ավելի քան 41.5 մլն դրամ, որը կազմել է նախատեսված ծախսերի 98.9%-ը: Ծրագրի շրջանակներում

գործուղված մանկավարժների թիվը 2016 թվականին կազմել է 235՝ 2015 թվականի 236-ի դիմաց: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 2.9%-ով կամ 1.2 մլն դրամով, որը պայմանավորված է գործուղված մանկավարժների աշխատաժամանակի աճով:

Հանրակրթական դպրոցների մանկավարժներին և դպրոցահասակ երեխաներին տրանսպորտային ծառայությունների մատուցման նպատակով տրամադրվել է շուրջ 69.7 մլն դրամ՝ ապահովելով 99.3% կատարողական: Ծրագրի շրջանակներում իրականացվել է Հայաստանի Հանրապետության յոթ մարզերի գյուղական բնակավայրերից մանկավարժների և դպրոցահասակ երեխաների տեղափոխումը: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 4.5%-ով, որը պայմանավորված է երթուղիների արժեքի փոփոխությամբ:

Դպրոցականների հանրապետական սպարտակիադայի անցկացման համար տրամադրվել է 35 մլն դրամ՝ ապահովելով ծրագրի 100% կատարողական: Անց են կացվել ՀՀ անկախության 25-րդ տարեդարձին նվիրված դպրոցականների հանրապետական 25-րդ խաղերը 9 մարզաձևերից, յուրաքանչյուր մարզաձև անցկացվել է չորս փուլով: Խաղերին մասնակցել է 1026 մասնակից՝ ինչպես և 2015 թվականին: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը չեն փոփոխվել:

Դպրոցականների օլիմպիադաների անցկացման ծախսերը կազմել են շուրջ 64.7 մլն դրամ՝ 100%-ով կատարելով ծրագիրը: 2016 թվականին անց են կացվել հանրապետության դպրոցականների առարկայական օլիմպիադաների հանրապետական փուլերը հանրակրթական 16 առարկաներից, որոնց մասնակցել են 1488 դպրոցականներ, բնագիտական համահայկական 3-րդ օլիմպիադան, որին մասնակցել է 75 դպրոցական: Հանրապետական փուլերի հաղթող լավագույն 37 դպրոցականները մասնակցել են 8 միջազգային օլիմպիադաների, և 16 դպրոցականներ մասնակցել են Ժաուտիկովյան միջազգային օլիմպիադային: Ընդհանուր առմամբ հայ դպրոցականներն արժանացել են 1 ոսկե, 7 արծաթե և 21 բրոնզե մեդալի: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը չեն փոփոխվել:

Համակարգչային և ինտերնետային կապի ծառայությունների ծախսերը հաշվետու տարում կազմել են 850.7 մլն դրամ՝ ապահովելով 99% կատարողական: Տնտեսումը պայմանավորված է «Մայքրոսոֆթ» ընկերությունից Windows և Office ծրագրային համակարգերի արտոնագրերի ձեռքբերման դադարեցմամբ, որի արդյունքում արձանագրվել է նաև 2015 թվականի համեմատ տվյալ ծախսերի նվազում 1.2%-ով: Ծրագրի շրջանակներում ապահովվել է շուրջ 300 մարզային կապի հանգույց ունեցող Հայաստանի կրթական ցանցը, որում ընդգրկված են Հայաստանի 1420 ուսումնական հաստատություններ: Կազմակերպվել են դասընթացներ, որոնց մասնակցել են ՀՀ և ԼՂՀ համայնքների 315 աշակերտ և 226 ուսուցիչ, արդիականացվել է www.armedu.am «Հայկական կրթական միջավայր» պորտալը, մի շարք այլ պորտալներ: «Պաշարների շտեմարան» կայքում տեղադրվել են 2090-ից ավելի նոր ուսումնամեթոդական էլեկտրոնային նյութեր: «Հեռավար

ուսուցում» համակարգում կազմակերպվել են շուրջ 140 դասընթացներ՝ գրանցված 1740 մասնակիցների համար:

Հաշվետու տարվա ընթացքում 405.2 մլն դրամ հատկացվել է գնահատման և թեստավորման ծառայություններին, որոնք մատուցվում են «Գնահատման և թեստավորման կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից: Նախատեսված միջոցներն ամբողջությամբ օգտագործվել են, իսկ նախորդ տարվա համեմատ նվազել են 2.8%-ով՝ պայմանավորված 2015 թվականին մաթեմատիկայից և բնագիտական առարկաներից սովորողների միջազգային ստուգատեսի (TIMSS) հիմնական փուլի անցկացմամբ, որը 2016 թվականին չի իրականացվել: 2016 թվականի ընթացքում ծրագրի շրջանակներում աշխատանքներ են իրականացվել հետևյալ հիմնական ուղղություններով.

- պետական ավարտական և միասնական քննությունների կազմակերպում, մրցույթի անցկացում, արդյունքների վերլուծություն և հրապարակում,
- տարրական, միջին և ավագ դպրոցների ավարտական քննությունների քննական թեստերի մշակում և դպրոցներին տրամադրում, քննությունների արդյունքների վերլուծություն և հրապարակում,
- հանրակրթական ուսումնական հաստատություններում արտաքին ընթացիկ գնահատումների իրականացում, արդյունքների վերլուծություն և հրապարակում,
- սովորողների գիտելիքների ստուգման ազգային ստուգատեսի կազմակերպում, արդյունքների վերլուծություն և հրապարակում,
- էքստեռն քննությունների թեստերի մշակում և տրամադրում ՀՀ կրթության և գիտության նախարարությանը,
- միջպետական համաձայնագրերով արտասահմանյան բուհերում սովորելու հավակնող շրջանավարտների քննական թեստերի մշակում և տրամադրում ՀՀ կրթության և գիտության նախարարությանը:

Հանրակրթությունում փորձարարական մանկավարժական ծրագրերի իրականացմանը հատկացված 125.5 մլն դրամն ամբողջությամբ օգտագործվել է: Ծրագրում ընդգրկված աշակերտների թիվը կազմել է շուրջ 10 հազար: Ծրագրի շրջանակներում ընթացել են աշխատանքներ վեց հիմնական ուղղություններով՝

- հեղինակային կրթական ծրագրերի լրամշակման, իրականացման և տարածման բաց համակարգ. մշակվել և վերամշակվել են ավելի քան 30 ծրագրեր, ուսումնական 200-ից ավելի նախագծեր, իրականացվել է 10-12-րդ դասարաններում լրացուցիչ կրթության դասընթաց (12-16 ժամ շաբաթական), ուսումնական պլանների անհատականացում՝ սկսած 1-ին դասարանից և այլն.
- աջակցություն մանկավարժական աշխատողների կարողությունների զարգացման, հեղինակային կրթական ծրագրի տարածման բաց համակարգին. կազմակերպվել են

մանկավարժական աշխատողների բաց դպրոցների գործունեություն, հեղինակային կրթական ծրագրերի տարածման տեսադասեր, ուսուցիչների և սովորողների կլոր սեղանների կազմակերպում.

- անհատի օժտվածության զարգացման բաց համակարգ. սովորողների նախասիրությունների զարգացման բաց ակումբների, ակումբային բլոգների աշխատանքներ, առարկայական ամենամսյա ֆլեշմոբներ 10 առարկաներից, 8-րդ ամենամյա Դիջիթեք 2016, ՏՀՏ առաջատար մասնագետների վարպետության դասեր «Մխիթար Սեբաստացի» կրթահամալիրում, ստուգատեսներ.
- կրթահամալիրում լրացուցիչ կրթության ծրագրերի իրականացում. տնային աշխատանքի ընտանեկան ուսումնական նախագծեր կրտսեր դպրոցում, երգչախմբերի, համույթների կազմակերպում, սովորողների, դասավանդողների ինքնակրթության նախագծերի ստուգատեսներ.
- կրթահամալիրի կրտսեր դպրոցների, քոլեջի կազմում գործող նախակրթարանների գործունեություն. 5 նախակրթարան, 221 սան, դաստիարակների 26 բլոգ, տարբեր տարքիային խմբերի երեխաների ուսուցման շաբաթական աշխատանքային նախագծեր.
- հեղինակային, կրթական ծրագրեր մշակող, իրականացնող և տարածող կրթահամալիրին աջակցություն. մանկավարժության լաբորատորիայի, ուսումնական կենտրոնների, այդ թվում՝ մեդիագրադարանի, գրադարանի գործունեություն, թվայնացված նյութերի նորացում, որակի բարելավում, ձայնադարանի, ֆիլմադարանի գործունեություն, ռադիոհաղորդումներ, «Դպիր» ամսագրի հրատարակում:

Սփյուռքի հայկական կրթական հաստատություններին ուսումնական գրականության և օժանդակ նյութերի մշակման ու տրամադրման համար 2016 թվականի պետական բյուջեից տրամադրվել է ավելի քան 97.1 մլն դրամ կամ նախատեսվածի 99.1%-ը: Ծրագրի նպատակներն են՝ աջակցել սփյուռքահայության լեզվամշակութային ուծացման դեմ պայքարին, հայեցի կրթության ու դաստիարակության, հայ ինքնության ճանաչմանը, ազգային ինքնագիտակցության ձևավորմանը, սփյուռքի հայապահպանության ծրագրերի իրականացմանը, նպաստել համայնքներում կրթական ծրագրերի իրականացմանը, աջակցել կրթօջախներում ուսումնական գործընթացի կազմակերպմանն ու որակի բարելավմանը: Նախորդ տարվա համեմատ տվյալ ծախսերը նվազել են 2.7%-ով, որը պայմանավորված է խնայողության ռեժիմով աշխատելու հանգամանքով:

2016 թվականին ակադեմիական փոխճանաչման և շարժունության ծառայությունների ծրագրին պետական բյուջեից հատկացվել է 42.2 մլն դրամ, որն ամբողջությամբ օգտագործվել է: Ծրագրի շրջանակներում ուսումնասիրված գործերի ընդհանուր քանակը կազմել է 1213, տրամադրվել է 144 խորհրդատվական տեղեկանք: Ճանաչման վերաբերյալ որոշում է կայացվել 7 օտարերկրյա որակավորումների մասին: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը գրեթե չեն փոփոխվել:

Բարձրագույն մասնագիտական կրթության գնահատման համակարգի բարեփոխումների նպատակով հաշվետու տարում ծախսվել է 70 մլն դրամ՝ 100%-ով ապահովելով ծրագրի կատարումը: Ծրագրի շրջանակներում 2016 թվականին իրականացվել են Բոլոնիայի գործընթացի հետամուտ խմբի անդամների և Բոլոնիայի գործընթացի աշխատանքային խմբերի անդամների օտարերկրյա պետություններ գործուղումներ, Ֆրանսիայում Բոլոնիայի քարտուղարության միջազգային անձնակազմի Հայաստանի ներկայացուցչի (մասնագետ-փորձագետի) աշխատավարձի վճարում, ինչպես նաև «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի՝ Որակի ապահովման եվրոպական ասոցիացիային լիիրավ անդամակցության վճարում: Նախորդ տարվա համեմատ բարձրագույն մասնագիտական կրթության գնահատման համակարգի բարեփոխումների ուղղությամբ ծախսերը նվազել են 48.9%-ով, ինչը պայմանավորված է 2015 թվականին Հայաստանի Հանրապետությունում Եվրոպական բարձրագույն կրթական տարածքի նախարարական գագաթաժողովի ու Բոլոնիայի քաղաքականության 4-րդ ֆորումի անցկացմամբ:

Կրթությանը տրամադրվող օժանդակ ծառայությունների դասում ընդգրկված՝ մարզական օբյեկտների հիմնանորոգման համար հատկացվել է 90.9 մլն դրամ՝ ապահովելով ծրագրված ցուցանիշի 94.7%-ը: Ծրագրի շրջանակներում իրականացվել են Երևան քաղաքի «Տորք Անգեղ» մարզական միության շենքի և ՀՀ Սյունիքի մարզի Կապան քաղաքի Դավիթ Համբարձումյանի անվան մանկապատանեկան մարզադպրոցի մարզադահլիճի հիմնանորոգման աշխատանքները: 2015 թվականի համեմատ այս ծախսերը նվազել են 8.5%-ով՝ պայմանավորված շինարարական աշխատանքների ծավալով:

Հաշվետու տարում պետական բյուջեից 477.6 մլն դրամ է հատկացվել կրթության բովանդակային և մեթոդական սպասարկման ու հանրապետության հանրակրթական դպրոցների ուսուցիչների վերապատրաստման ծրագրին, որն ամբողջությամբ օգտագործվել է: Վերապատրաստման դասընթացներին մասնակցած ունկնդիրների թիվը կազմել է 10831: Փորձաքննություն են անցել շուրջ 140 անուն դասագրքեր, ձեռնարկներ, ուսումնամեթոդական նյութեր, ծրագրեր և այլ ուսումնական գրականություն՝ 38439 էջ ծավալով: Կազմակերպվել են թվով 68 սեմինարներ տարբեր մասնագետների համար: Իրականացվել է թվով 139 խորհրդատվություն, մշակվել են հանրակրթական ուսումնական տարբեր չափորոշիչներ, մոդուլներ, հրատարակվել են հոդվածներ, ուղեցույցեր, ընդհանուր առմամբ՝ 122 հատ: Մշակվել և լրամշակվել են թվով 5 նորմատիվ բնույթի փաստաթղթեր: 2015 թվականի համեմատ նշված ծախսերը նվազել են 5.6%-ով՝ հիմնականում պայմանավորված կատարված աշխատանքների ինքնարժեքի նվազմամբ:

Երեխաների ֆիզիկական, մտավոր և (կամ) հոգեկան զարգացման առանձնահատկությունների բացահայտման և գնահատման ծախսերը կազմել են 173 մլն դրամ կամ նախատեսվածի 100%-ը: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն էական փոփոխություն չեն կրել: 2016 թվականին

կրթության առանձնահատուկ կարիք ունեցող երեխաների կրթության կարիքների գնահատման մասով երեխաների միջին տարեկան թիվը կազմել է 120՝ ինչպես և 2015 թվականին:

2016 թվականի պետական բյուջեից նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության և ուսուցման բարեփոխումների ուղղությամբ կատարվել են շուրջ 160.9 մլն դրամ ծախսեր՝ կազմելով նախատեսվածի 96.7%-ը և 2015 թվականի համեմատ նվազելով 1.3%-ով, որը պայմանավորված է ծրագրի շրջանակում մեկ միջոցառման չեղարկմամբ: Ծրագրի շրջանակներում իրականացվել է 12 մշակված և 20 վերանայված մասնագիտությունների և ուսումնական պլանների ու մոդուլային ուսումնական ծրագրերի փորձաքննություն: Վերապատրաստվել են հաստատությունների ղեկավարներ, դասախոսներ, փորձագետներ, կատարվել են այլ աշխատանքներ:

2016 թվականին 68.2 մլն դրամ է հատկացվել մասնագիտական կրթության որակի ապահովման ծառայություններին, որոնք ամբողջությամբ օգտագործվել են: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն էական փոփոխություն չեն կրել: Ծրագիրն իրականացվում է «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի կողմից, որը հետապնդում է մասնագիտական կրթության ոլորտում ուսումնասիրություններ, վերլուծություն, խորհրդատվություն և գնահատում իրականացնելու նպատակներ: Գործունեության նպատակներն են՝

- Հայաստանի Հանրապետությունում նախնական մասնագիտական միջին և բարձրագույն մասնագիտական կրթության հավատարմագրման գծով անհրաժեշտ փորձաքննության իրականացումը,
- մասնագիտական ուսումնական հաստատությունների և մասնագիտական կրթական ծրագրերի որակի արտաքին գնահատման և հավատարմագրման չափանիշների և ընթացակարգերի մշակումը,
- մասնագիտական կրթական ծրագրերի որակի հավատարմագրումը և հավատարմագրման մասին որոշումը ՀՀ կրթության և գիտության նախարարություն ներկայացնելը՝ պետական հավատարմագրման վկայական տալու համար,
- մասնագիտական ուսումնական հաստատությունների ակադեմիական աուդիտը, որակի գնահատումը, հավատարմագրումն ու հավատարմագրման մասին որոշումը ՀՀ կրթության և գիտության նախարարություն ներկայացնելը՝ պետական հավատարմագրման վկայական տալու համար,
- մասնագիտական ուսումնական հաստատության և մասնագիտական կրթական ծրագրերի որակի արտաքին գնահատման արդյունքների և դրանց հիման վրա մասնագիտական հաստատությունների վարկանիշային ցուցանիշների հրապարակումը,

- մասնագիտական ուսումնական հաստատությունների որակի ապահովման ներքին համակարգերի գնահատումը, դրանց բարելավման ուղղությամբ մասնագիտական ուսումնական հաստատություններին առաջարկություններ ներկայացնելը,
- մասնագիտական ուսումնական հաստատություններում սովորողների գիտելիքների ընթացիկ և ամփոփիչ գնահատման չափանիշների և մեթոդների մշակման ուղղությամբ խորհրդատվության տրամադրումը,
- մասնագիտական ուսումնական հաստատությունների և կրթական ծրագրերի որակի վերաբերյալ հասարակությանն իրազեկելը,
- որակի ապահովման ասպարեզում եվրոպական ցանցում ընդգրկումն ու ծրագրերում Հայաստանի Հանրապետության մասնակցության ապահովումը,
- մասնագիտական կրթական համակարգի վերլուծությունը:

2016 թվականին 1.4 մլն դրամ է տրամադրվել սոցիալապես անապահով ընտանիքների երեխաների դասագրքերի վարձավճարների փոխհատուցմանը՝ կազմելով նախատեսվածի 86.5%-ը, որը պայմանավորված է հաստատություններից ստացված սոցիալապես անապահով ընտանիքների երեխաների քանակով: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը նվազել են 98.5%-ով՝ պայմանավորված այն հանգամանքով, որ սույն ծրագրից գումարները վերաբաշխվել են հանրակրթության ծախսերին, որի արդյունքում այս ծրագրի շրջանակում գումար ստանում են միայն ըստ աշակերտների թվի չֆինանսավորվող երկու դպրոցները:

2016 թվականին ՀԲ աջակցությամբ իրականացվող Կրթության որակի և համապատասխանության երկրորդ վարկային ծրագրի շրջանակներում օգտագործվել է 3.1 մլն դրամ կամ նախատեսվածի 100%-ը: 2016 թվականին իրականացվել է 2015 թվականի ընթացքում կատարված աշխատանքների աուդիտը, և հրապարակվել է վերջինիս եզրակացությունը:

2016 թվականին Համահայկական կրթական խորհրդաժողովի անցկացման ծախսերը կազմել են 13.0 մլն դրամ, որը կատարվել է 100%-ով: Խորհրդաժողովին մասնակցել են սփյուռքի 19 երկրների 95, Հայաստանի և Արցախի՝ 55 կրթական գործիչներ: Խորհրդաժողովի ավարտին ընդունվել է բանաձև, որի համաձայն խորհրդաժողովին բարձրացված մի շարք հիմնախնդիրների լուծման նպատակով ներկայացվել են մի շարք առաջարկություններ՝ կապված սփյուռքահայ ուսուցիչների և սովորողների հետ: Ծրագիրն անցկացվում է երկու տարին մեկ անգամ:

2016 թվականին ուսուցիչների ատեստավորման գծով ծախսերը կազմել են 2.8 մլն դրամ կամ ծրագրի 66%-ը, որը պայմանավորված է գրենական պիտույքների և ուսուցիչների ատեստավորման նպատակով իրականացվող գործուղումների համար նախատեսված միջոցների տնտեսմամբ: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը նվազել են 22.8%-ով՝ պայմանավորված ատեստավորված ուսուցիչների թվով:

2016 թվականին «Հայ ասպետ» հեռուստամրցաշարի անցկացմանը ՀՀ պետական բյուջեից հատկացվել է 69.3 մլն դրամ, որն ամբողջությամբ օգտագործվել է: ՀՀ հանրային հեռուստաալիքով հեռարձակվող հեռուստամրցաշարին մասնակցել են թվով 96 դպրոցների 1056 աշակերտներ, ինչպես և 2015 թվականին: Իրականացվել են ազգային տոների (Սբ. Զատկի, Համբարձման և Խաղողօրհնեքի) համատեղ անցկացման ծրագրեր, հեռուստամրցույթին մասնակցող թիմերի աշակերտների հետ կազմակերպվել են հավաքներ: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն էական փոփոխություն չեն կրել:

Արտասահմանում սովորող ուսանողներին հաշվետու տարում հատկացվել է 100 մլն դրամ աջակցություն, որն ամբողջությամբ օգտագործվել է: 2015 թվականի համեմատ նշված ծախսերը փոփոխություն չեն կրել: Ծրագիրն իրականացվում է «Լույս» մշակութային, գիտական, կրթական հիմնադրամի կողմից, որի առաքելությունն է՝

- ստեղծել ու համախմբել առաջադեմ և ստեղծագործ մտածելակերպ ունեցող ուսանողների սերունդ՝ բազմապատկելով աշխարհի լավագույն համալսարաններ հաճախող հայ ուսանողների թիվը՝ նրանց տրամադրելով նյութական, մենթորական և այլ աջակցություն,
- ստեղծել ենթակառուցվածք, որն ի մի կբերի «Լույսի»-ի ուսանողների գիտելիքները, փորձառությունն ու կապերը, և կառաջարկի ծրագրեր, որոնք կօգնեն ուսումնական ձեռքբերումներից անցում կատարել իրական աշխարհի նվաճումներին՝ ի բարօրություն Հայաստանի:

Ատեստավորման միջոցով որակավորում ստացած ուսուցիչների հավելավճարների տրամադրմանն ուղղվել է 100 մլն դրամ՝ կազմելով ծրագրի 93.1%-ը: Շեղումը հիմնականում պայմանավորված է նախատեսվածից ավելի քիչ ատեստավորված ուսուցիչների թվով: 2015 թվականի համեմատ նշված ծախսերն աճել են 47.4%-ով՝ պայմանավորված հավելավճար ստացող՝ որակավորում ստացած ուսուցիչների թվի աճով:

Դպրոցահասակ երեխաներին սննդով ապահովման նպատակով նախատեսվել է 49.1 մլն դրամ, որն ամբողջությամբ օգտագործվել է: Հատկացված միջոցներով ապահովվել է հանրապետությունում «Դպրոցական սնունդ» ծրագրով նախատեսված մթերքների տեղափոխման տրանսպորտային փոխադրումների կազմակերպումը: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը նվազել են 91.3%-ով՝ պայմանավորված դպրոցահասակ երեխաներին սննդով ապահովման ծախսերը հանրակրթական ուսուցման ծախսերում ներառելու հանգամանքով:

2016 թվականին կրթական նոր տեխնոլոգիաների ներդրման համար նախատեսված 10 մլն դրամն ամբողջությամբ օգտագործվել է: Ծրագիրը նպատակաուղղված է մշակելու տարատարիք ուսումնական խմբերում մաթեմատիկա առարկայի դասավանդման հայեցակարգային դրույթները, մշակելու և փորձարկելու ուսուցման կազմակերպման համար նախատեսված ուսումնադիդակտիկ

նյութերը: Հաշվետու տարում ծրագրի շրջանակներում պատրաստվել են մաթեմատիկա, հանրահաշիվ առարկաների վերաբերյալ 4 ուղեցույց-ձեռնարկներ: Նախորդ տարվա համեմատ տվյալ ծախսերն աճել են 8.7%-ով՝ պայմանավորված կատարված աշխատանքների ծավալով: 2015 թվականի համեմատ նշված ծախսերը չեն փոփոխվել:

Բուխարեստի համալսարանում հայոց լեզվի դասավանդման կազմակերպմանը տրամադրվել է 3.6 մլն դրամ՝ ապահովելով 100% կատարողական: Ծրագրի շրջանակներում մեկ դասախոս իրականացրել է «Հայոց լեզու», «Հայ մշակույթ և քաղաքակրթություն» դասընթացների դասավանդում Բուխարեստի համալսարանում: 2015 թվականի համեմատ նշված ծախսերը չեն փոփոխվել:

Սփյուռքագիտության ոլորտում գիտական կադրերի պատրաստման գծով նպաստների տրամադրմանը հատկացվել է 3.6 մլն դրամ, որը նույնպես ամբողջությամբ օգտագործվել է: Ծրագրի շրջանակներում մեկ դասախոս իրականացրել է դասախոսություն սփյուռքագիտության ոլորտում՝ Զալցբուրգի համալսարանում, Քրիստոնյա Արևելքի ուսումնասիրությունների կենտրոնի հայագիտության բաժնում: 2015 թվականի համեմատ նշված ծախսերը չեն փոփոխվել:

2016 թվականին 60 մլն դրամ է տրամադրվել հանրակրթական և բարձրագույն ուսումնական հաստատությունների վարկանիշավորման ծրագրին՝ ապահովելով 100% կատարողական: Ծրագրի շրջանակներում՝

- իրականացվել են վարկանիշավորման մեթոդաբանության լրամշակման աշխատանքներ, որի հիման վրա իրականացվել են ծրագրային փոփոխություններ էլեկտրոնային համակարգերում,
- հրապարակվել և բաշխվել են «ՀՀ բարձրագույն ուսումնական հաստատությունների վարկանիշավորման ազգային համակարգ» և «Հանրակրթական ուսումնական հաստատությունների վարկանիշավորման ազգային համակարգ» հարցաթերթիկների լրացման ուղեցույց-ձեռնարկները,
- իրականացվել է ընտրանքային հետազոտություն բուհերի 1000 դասախոսների, 1200 ուսանողների և 270 գործատուների շրջանում, իրականացվել է համապատասխան վերլուծություն,
- կատարվել են տեղեկատվության հավաքագրման և մուտքագրման աշխատանքներ:
- Շահագործվել են http://schoolrate.armedu.am և http://ranking.armedu.am կայքերը:

2015 թվականի համեմատ նշված ծախսերը չեն փոփոխվել:

Աուտիզմ և զարգացման այլ խանգարումներ ունեցող երեխաների բուժման, վերականգնման, կրթության և զբաղվածության ապահովման ծրագրին տրամադրվել է 81.7 մլն դրամ՝ ապահովելով 100% կատարողական: Ծրագրի շրջանակներում հաշվետու տարում, ինչպես և 2015 թվականին, նախատեսվել և մատուցվել են կրթաբուժական ծառայություններ թվով 65 երեխաների: Նշված ծախսերը նախորդ տարվա համեմատ էական փոփոխություն չեն կրել:

2016 թվականին «Ուսանողներին ուսումնական վարկերի տրամադրում» պետական նպատակային ծրագրի համաֆինանսավորման նպատակով նախատեսված 57.6 մլն դրամի դիմաց տրամադրվել է 42.9 մլն դրամ՝ ապահովելով ծրագրի 74.5% կատարողական, որը պայմանավորված է այն հանգամանքով, որ սուբսիդավորումն իրականացվել է վարկավորմամբ զբաղվող ֆինանսական կազմակերպությունների կողմից ներկայացված հայտերի հիման վրա: Նախորդ տարվա համեմատ այս ծախսերն աճել են 52%-ով՝ պայմանավորված շահառուների թվի աճով:

Սոցիալապես անապահով աշակերտներին անվճար դասագրքերով ապահովման գծով պետության կողմից համայնքի ղեկավարին պատվիրակված լիազորությունների իրականացման ծրագրի շրջանակներում ՀՀ 2016 թվականի պետական բյուջեից կատարվել են 577.8 հազար դրամ ծախսեր՝ 100%-ով ապահովելով ծրագրային ցուցանիշը: Անվճար դասագրքերը բաշխվել են 5-12-րդ դասարանների աշակերտներին: Նախորդ տարվա համեմատ այս ծախսերը նվազել են 97.8%-ով, պայմանավորված այն հանգամանքով, որ սոցիալապես անապահով աշակերտներին անվճար դասագրքերով ապահովման ծախսերը ներառվել են հանրակրթական ուսուցման ծախսերում:

Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող Կրթության բարելավման ծրագրի շրջանակներում օգտագործվել է 2.2 մլրդ դրամ կամ նախատեսվածի 80.5%-ը: Շեղումը պայմանավորված է լաբորատոր սարքավորումների մրցույթները չկայանալու և Կրթական տեխնոլոգիաների ազգային կենտրոնի՝ նախատեսված շինարարական աշխատանքները չիրականացնելու հանգամանքներով, որոնք հետաձգվել են:

2016 թվականին նշված վարկային ծրագրի շրջանակներում իրականացվել են հետևյալ աշխատանքները:

«Հանրակրթության որակի բարելավում» բաղադրիչի շրջանակներում հիմնվել են 24 նոր նախակրթարաններ Տավուշի (6), Լոռու (6) և Արմավիրի (12) մարզերում, որոնցում ընդգրկվել են մոտ 750 երեխա: Վերապատրաստվել են բոլոր 3 մարզերի 24 նախակրթարաններում ընդգրկված թվով 55 դաստիարակ: Իրականացվել են 12 ավագ դպրոցների շենքերի նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման աշխատանքները: Բոլոր նախագծանախահաշվային փաստաթղթերը գտնվում են ՀԲ-ի հետ համաձայնեցման փուլում: Մեկնարկել են վարկային ծրագրով նախատեսվող՝ հիմնանորոգման ենթակա թվով 17 ավագ դպրոցներից 5 ավագ դպրոցների հիմնանորոգման աշխատանքները, որոնք ընթանում են ժամանակացույցերին համապատասխան: Նախատեսվում է նաև բոլոր ավագ դպրոցներում հիմնել բնագիտական առարկաների լաբորատորիաներ:

2016 թվականին մեկնարկել են ՏՀՏ վերապատրաստումների կարիքների գնահատման, ՏՀՏ կիրառմամբ առարկաների դասավանդման համար վերապատրաստման մոդուլների մշակման և վերապատրաստողների վերապատրաստման աշխատանքները: 2016 թվականի օգոստոսի 1-ին մեկնարկել են մասնագիտական և հանրակրթական կառավարման տեղեկատվական

համակարգերը մեկ միասնական համակարգի մեջ ինտեգրելու աշխատանքները, որոնք ավարտվել են 2017 թվականի փետրվարին:

Կատարվել է հանրակրթության պետական չափորոշիչի, առարկայական չափորոշիչների և ծրագրերի վերանայման կարիքների գնահատման հետազոտությունը:

«Աջակցություն Նորարարությունների մրցակցային հիմնադրամի (ՆՄՀ) զարգացմանը» բաղադրիչի շրջանակներում 2016 թվականի ընթացքում շարունակվել է 2015 թվականի դեկտեմբերի 24-ին կնքված պայմանագրերով ՆՄՀ առաջին շրջափուլի վեց դրամաշնորհային ծրագրերի իրականացումը թվով 6 բուհերի կողմից: Ծրագրերի ավարտը նախատեսված է 2017 թվականի դեկտեմբերին: 2016 թվականի ընթացքում կազմակերպվել և իրականացվել է ՆՄՀ շրջանակներում դրամաշնորհների տրամադրման հավելյալ շրջափուլը, որին մասնակցության հնարավորություն են ստացել իրավասության պայմաններին բավարարող և մինչ այդ ՆՄՀ դրամաշնորհառու չհանդիսացած բուհերը: Արդյունքում բուհերը համալրվում են մասնագիտական նոր լաբորատորիաներով, հեռավար ուսուցում կազմակերպելու համար անհրաժեշտ պարագաներով և ուսումնական գործընթացների արդիականացմանն ուղղված այլ միջոցներով:

«Դպրոց կենտրոնների միություն» իրավաբանական անձանց միության (ԻԱՄ) աջակցության նպատակով օգտագործվել է 20 մլն դրամ՝ ամբողջությամբ ապահովելով ծրագրի կատարումը: 2016 թվականի ընթացքում միության կողմից կազմակերպված մասնագիտական հավաքներին մասնակցել են հանրակրթական դպրոցների տնօրեններն ու աշակերտները: Կազմակերպվել են տարբեր ցուցահանդեսներ, մրցույթներ, միջոցառումներ և այլն: Նախորդ տարվա համեմատ տվյալ ծախսերը մնացել են անփոփոխ:

Հանրակրթական ուսումնական հաստատություններում «Ազգային երգ ու պար» առարկայի ներդրման գծով նախատեսված 8.2 մլն դրամն ամբողջությամբ օգտագործվել է: Ծրագրի շրջանակներում վերապատրաստվել են Երևան քաղաքի 60 և մարզերի՝ 53 ուսուցիչներ՝ 2015 թվականի համապատասխանաբար 25 և 50 ուսուցիչների փոխարեն: Նախորդ տարվա համեմատ աճը կազմել է 4.8%, որը հիմնականում պայմանավորված է նվազագույն աշխատավարձի բարձրացմամբ:

Դպրոցներում ռոբոտատեխնիկայի զարգացման իրականացման գծով նախատեսված 23.4 մլն դրամը ևս ամբողջությամբ օգտագործվել է: 2016 թվականին դպրոցներում ռոբոտաշինության խմբավարների թիվը կազմել է 60՝ 2015 թվականի 67-ի փոխարեն: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը մնացել են անփոփոխ:

Պրահայի Կարլովի համալսարանում հայոց լեզվի դասավանդման նպատակով նախատեսվել է 5.7 մլն դրամ, որն ամբողջությամբ օգտագործվել է: Ծրագրի շրջանակներում մեկ դասախոս

իրականացրել է հայոց լեզվի և պատմության դասավանդում Պրահայի Կարլովի համալսարանում: Նախորդ տարվա համեմատ ծախսերի աճը կազմել է 15.1%՝ պայմանավորված փոխարժեքի աճով:

Կրթության գերազանցության ազգային ծրագրի շրջանակներում օգտագործվել է 654.8 մլն դրամ՝ ամբողջությամբ ապահովելով ծրագրի կատարումը: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 11.4%-ով՝ պայմանավորված ծրագիրն իրականացնող «Այբ» կրթական հիմնադրամի և «Քեմբրիջի միջազգային քննություններ» կենտրոնի միջև կնքված պայմանագրային պարտավորությունների մի մասի կատարման ապահովման անհրաժեշտությամբ: Վերջինս հանդիսանում է «Արարատյան բակալավրիատ» ուսումնական ծրագրի համաքննման, ավարտական քննությունների մշակման և միջազգայնորեն ճանաչելի ավարտական որակավորումների տրամադրման ուղղությամբ գործընկերը: 2016 թվականին Կրթության գերազանցության ազգային ծրագրի՝ «Արարատյան բակալավրիատ» հայալեզու կրթական համակարգը միջազգային հեղինակավոր կենտրոնների կողմից ճանաչվել է համազոր առաջատար բրիտանական և ամերիկյան կրթական գերազանցության համակարգերին: Արարատյան բակալավրիատը ՀՀ-ում հաստատվել է որպես պետական հանրակրթական ծրագիր՝ պատրաստ հանրակրթական ուսումնական հաստատություններում ներդրման:

Ծրագրի իրագործման ընթացքում՝

- լիովին փորձարկվել և լրամշակվել է ուսուցիչների զարգացման բազային ծրագիրը, կատարվել է ուսուցիչների զարգացման ակադեմիական հոդվածների թարգմանություն.
- լրամշակվել են Արարատյան բակալավրիատի առարկայական ծրագրերը, փորձարկվել է ընթացիկ և ամփոփիչ գնահատման համակարգը.
- «Քեմբրիջի միջազգային քննություններ» կենտրոնի աջակցությամբ ստեղծվել է Արարատյան բակալավրիատի քննական կենտրոնը, կազմակերպվել են Արարատյան բակալավրիատի միջազգայնորեն ճանաչելի առաջին ավարտական ամփոփիչ քննությունները բնագիտական առարկաներից և մաթեմատիկայից.
- մեկնարկել է Արարատյան բակալավրիատին հանրակրթական ուսումնական հաստատությունների անդամակցումը, ծրագիրը ներկայացվել է ավագ դպրոցի բաղադրիչ ունեցող 800-ից ավել մարզային հաստատության.
- ՀՀ կառավարության կողմից որոշում է կայացվել 2017 թվականից մարզային դպրոցներում Արարատյան բակալավրիատի ներդրման վերաբերյալ:

Ասիական զարգացման բանկի աջակցությամբ իրականացվող Դպրոցների սեյսմիկ պաշտպանության ծրագրի շրջանակներում օգտագործվել է 235.5 մլն դրամ կամ նախատեսվածի 12.9%-ը: Ծրագիրն իրականացվում է Հայաստանի Տարածքային զարգացման հիմնադրամի (ՀՏԶՀ) կողմից 2015 թվականից և շարունակվելու է մինչև 2020 թվականի ավարտը: Ծրագիրը կօժանդակի

Աղետների ռիսկի նվազեցման ազգային ծրագրի իրականացմանը՝ բարելավելով դպրոցների սեյսմիկ անվտանգությունը, նվազեցնելով դպրոցներում հնարավոր զոհերը և վնասները տարերային աղետների ժամանակ: Ծրագրով նախատեսվում է իրականացնել Սեյսմիկ անվտանգության բարելավման ծրագրի (ՍԱԲԾ) շրջանակում նախանշված առնվազն 47 գերակա դպրոցների շենքերի ամրացման և հիմնական նորոգման աշխատանքներ: Կմշակվի արտակարգ իրավիճակներին արձագանքման գործողությունների ծրագիր ՍԱԲԾ շրջանակում ամրացված կամ հիմնանորոգված յուրաքանչուր դպրոցի համար: Կտրամադրվեն սարքավորումներ սեյսմիկ մոնիտորինգի 15 համալիր դիտակետերը արդիականացնելու նպատակով: Բացի դրանից, ֆինանսավորվում են ՀՏԶՀ գրասենյակի գործառնական ծախսերը:

Ծրագրից շեղումը հիմնականում պայմանավորված է ուժեղացման (սեյսմիկ կայունության բարելավման) ենթակա դպրոցների ընտրությունը նախատեսված ժամկետից ուշացնելու և շինարարական ոլորտում գործող նորմատիվատեխնիական փաստաթղթերի վերանայման ժամկետները տեղափոխելու հանգամանքներով: Բացի այդ, չեն գնվել սեյսմիկ դիտակայանների համար անհրաժեշտ սարքավորումները՝ ցանկի ճշտման պատճառով, և համապատասխան գնումը տեղափոխվել է 2017 թվական: 2017 թվական են տեղափոխվել նաև Ազգային դիտացանցի անձնակազմի համար վերապատրաստման դասընթացների անցկացումը, որը կիրականացվի սարքավորումները ստանալուց հետո, և գրասենյակի տարածքի վերանորոգման աշխատանքների ավարտը:

Վենետիկի Կա'Ֆոսկարի համալսարանում հայոց լեզվի դասավանդման նպատակով նախատեսվել է 11.4 մլն դրամ, որն ամբողջությամբ օգտագործվել է: Ծրագրի շրջանակներում մեկ դասախոս իրականացրել է հայոց լեզվի և գրականության դասավանդում նշված համալսարանում: Ծրագիրը գործում է 2016 թվականից:

Ատեստավորման միջոցով որակավորում ստացած ուսուցիչներին հավելավճարների տրամադրման գծով պետության կողմից Երևան համայնքի ղեկավարին պատվիրակված լիազորությունների իրականացման նպատակով նախատեսվել է 13 մլն դրամ, որն ամբողջությամբ օգտագործվել է: Ծրագիրը գործում է 2016 թվականից:

Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների կրթության կազմակերպման համար նախատեսված ծրագրերի, ձեռնարկների, ուսումնական այլ նյութերի մշակման, հրատարակման և ձեռքբերման գծով նախատեսվել է 16 մլն դրամ, որն ամբողջությամբ օգտագործվել է: Նշված ծրագրի շրջանակներում ձեռք են բերվել թվով 1000 ֆիլմ-ձեռնարկ-տեսասկավառակ, 3000 մեթոդական ուղեցույց-ձեռնարկ, 1585 զարգացնող խաղեր, 2000 բրայլյան տետրեր: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 30.5%-ով, որը պայմանավորված է այն հանգամանքով, որ 2015 թվականին նախատեսված գնումները չէին իրականացվել:

2016 թվականին պետական բյուջեից 1 մլրդ դրամ տրամադրվել է *այլ դասերին չպատկանող կրթության* բնագավառում գործադիր իշխանության պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների՝ ՀՀ կրթության և գիտության նախարարության աշխատակազմի (856 մլն դրամ կամ ծրագրի 99.0%-ը) ու ՀՀ կրթության և գիտության նախարարության գիտության պետական կոմիտեի (158 մլն դրամ կամ ծրագրի 99.0%-ը) պահպանմանը: Տվյալ ծախսերի տարեկան ծրագիրը կատարվել է 99%-ով, իսկ 2015 թվականի համեմատ այս ծախսերն աճել են 2.8%-ով՝ հիմնականում պայմանավորված աշխատավարձերի բնականոն աճով:

<u>Սոցիալական պաշտպանություն</u>

ՀՀ 2016 թվականի պետական բյուջեի փաստացի ծախսերի 27.4%-ն ուղղվել է *սոցիալական պաշտպանության* ոլորտին: Կատարված հատկացումները կազմել են 396.8 մլրդ դրամ՝ ապահովելով 99.3% կատարողական: 2015 թվականի համեմատ սոցիալական պաշտպանության ծախսերն ավելացել են 3.4%-ով կամ 13.1 մլրդ դրամով՝ հիմնականում պայմանավորված «Ծերություն» ու «Ընտանիքի անդամներ և զավակներ» դասերի ծախսերի աճով:

Հաշվետու տարում ավելի քան 1.2 մլրդ դրամ տրամադրվել է *վատառողջության և անաշխատունակության* խմբին՝ ապահովելով 98.7% կատարողական: Նշված ծախսերը 2015 թվականի համեմատ աճել են 1.2%-ով՝ պայմանավորված անաշխատունակության դասի ծախսերի աճով:

Վատառողջության դասին տրամադրվել է 203.5 մլն դրամ, որը կազմել է նախատեսվածի 99%-ը: Նախորդ տարվա համեմատ տվյալ ծախսերը նվազել են 2.8%-ով՝ պայմանավորված աշխատողների աշխատանքային պարտականությունների կատարման հետ կապված խեղման, մասնագիտական հիվանդության և առողջության այլ վնասման հետևանքով պատճառված վնասի փոխհատուցման ծախսերի նվազմամբ: Հաշվետու տարում նշված ծրագրին տրամադրվել է 92.1 մլն դրամ, որը կազմել է նախատեսվածի 97.8%-ը՝ նախորդ տարվա համեմատ նվազելով 6.1%-ով: Ծախսերի անկումը պայմանավորված է շահառուների թվաքանակի կրճատմամբ՝ նախատեսված 489 անձի փոխարեն փոխհատուցում են ստացել 448-ը:

Բժշկասոցիալական վերականգնման ծառայությունների շրջանակներում կատարված ծախսերը կազմել են 111.4 մլն դրամ կամ նախատեսվածի 100%-ը: 2016 թվականին բժշկական օգնություն է տրամադրվել 3 հիվանդությունների գծով 500 հաշմանդամների և սոցիալապես անապահով անձանց: Նախորդ տարվա համեմատ տվյալ ծախսերը մնացել են անփոփոխ:

Հաշվետու տարում ավելի քան 1 մլրդ դրամ տրամադրվել է *անաշխատունակության* դասին՝ ապահովելով 98.7% կատարողական: Նախորդ տարվա համեմատ անաշխատունակության դասի ծախսերն աճել են 2%-ով կամ 20.7 մլն դրամով, որը հիմնականում պայմանավորված է հաշմանդամություն ունեցող երեխաների և երիտասարդների սոցիալ-հոգեբանական աջակցության ցերեկային կենտրոնում ծրագրի մեկնարկով, ինչպես նաև մտավոր խնդիրներ ունեցող հաշմանդամ դեռահասների և երիտասարդների ցերեկային խնամքի սոցիալ-վերականգնողական ծառայությունների և հաշմանդամներին պրոթեզաօրթոպեդիկ պարագաներով, վերականգնման, տեխնիկական միջոցներով ապահովման և դրանց վերանորոգման ծախսերի աճով:

Դպրոցն ավարտած, ինչպես նաև ուշ տարիքում տեսողությունը կորցրած հաշմանդամների համար հատուկ տառատեսակներով գրքերի տպագրության, տետրերի պատրաստման և «խոսող գրքերի» ձայնագրության ծառայությունների ձեռքբերման համար տրամադրվել է 10.5 մլն դրամ՝ ապահովելով 100% կատարողական: 2016 թվականին տպագրվել են 42327 թերթ բրայլյան գրքեր, 320 հատ բրայլյան տետրեր, 74400 թերթ «Բյուլետեն» ամսագիր, 1600 ժամ «Խոսող գիրք»: 2015 թվականի համեմատ այս ծախսերը փոփոխություն չեն կրել:

Հաշմանդամներին պրոթեզաօրթոպեդիկ պարագաներով, վերականգնման տեխնիկական միջոցներով ապահովման և դրանց վերանորոգման համար ծախսվել է 828.3 մլն դրամ՝ ապահովելով 98.5% կատարողական: Սույն ծրագրով հաշմանդամներին տրամադրվել են 12152 (2015թ.՝ 8923) պրոթեզաօրթոպեդիկ և վերականգնողական պարագաներ, 80 (2015թ.՝ 80) ձայնաստեղծ սարքեր, 200 (2015թ.՝ 170) աչքի պրոթեզ և իրականացվել է 787 (2015թ.՝ 657) պրոթեզաօրթոպեդիկ պարագաների վերանորոգում: Նշված ծախսերը նախորդ տարվա համեմատ աճել են 0.4%-ով: Ձեռք բերված պարագաների թվի աճը պայմանավորված է մրցույթների արդյունքում ձևավորված ավելի ցածր գներով:

Հոգեկան առողջության վերականգնման ծառայություններին հատկացվել է 70.1 մլն դրամ՝ ապահովելով 100% կատարողական: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը չեն փոփոխվել: Ծրագրի շրջանակներում 4 հիվանդությունների գծով անվճար բժշկական օգնություն է տրամադրվել 318 հիվանդի, ինչպես և նախորդ տարի:

Մտավոր խնդիրներ ունեցող հաշմանդամ դեռահասների և երիտասարդների ցերեկային խնամքի սոցիալ-վերականգնողական ծառայությունների մատուցման համար օգտագործվել է 28 մլն դրամ՝ կազմելով նախատեսվածի 100%-ը: Ծրագրի նպատակը մտավոր խնդիրներ ունեցող հաշմանդամ երիտասարդների ու պատանիների սոցիալական վերականգնումն է ցերեկային կենտրոնում ծառայությունների մատուցման միջոցով: Ծրագիրն իրականացվում է ««Փրկություն» հաշմանդամ երեխաների և երիտասարդների կենտրոն» հասարակական կազմակերպության կողմից, որտեղ սպասարկվում է 50 շահառու: Շահառուները կենտրոնում ժամը 10.00-17.00-ը

ստանում են ցերեկային խնամք և սոցիալ-վերականգնողական ծառայություններ, ինչպես նաև մեկանգամյա սնունդ: Կենտրոնը հնարավորություն է ընձեռում շահառուներին մնալ ընտանիքում՝ դրանով նպաստելով հատուկ տիպի հաստատությունների բեռնաթափմանը: Ծրագրի շրջանակներում 2016 թվականին կատարվել է նաև կենտրոնի 24 աշխատողի աշխատավարձերի և կոմունալ ծախսերի վճարում: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 20.7%-ով կամ 4.8 մլն դրամով, որը պայմանավորված է նվազագույն աշխատավարձի բարձրացմամբ:

Հաշմանդամներին սայլակներով և լսողական սարքերով ապահովման նպատակով պետական բյուջեից տրամադրվել է 81.6 մլն դրամ կամ նախատեսվածի 100%-ը: Հատկացված միջոցներով ձեռք է բերվել 450 սայլակ, 1100 լսողական սարք և 400 լսողական սարքերի ներդիրներ: Նշենք, որ 2015 թվականին ձեռք էր բերվել 404 սայլակ և 1000 լսողական սարք, ինչով էլ պայմանավորված՝ նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 2.9%-ով կամ 2.3 մլն դրամով:

Եվրոպական արտադրության լսողական սարքերի ձեռքբերման համար հավաստագրերի տրամադրման ծախսերը կազմել են 14.4 մլն դրամ՝ կազմելով նախատեսվածի 89.9%-ը և 8.9%-ով զիջելով նախորդ տարվա ցուցանիշը: Շեղումը և նախորդ տարվա համեմատ նվազումը պայմանավորված է լսողական սարքեր ստանալու նպատակով փաստացի դիմած անձանց քանակով: Ծրագրի շրջանակներում լսողական խնդիրներ ունեցող հաշմանդամներին և տարեցներին լսողական սարքեր ձեռք բերելու նպատակով տրամադրվել է 180 հավաստագիր՝ նախատեսված 200-ի և 2015 թվականին տրամադրված 198-ի փոխարեն:

Հաշմանդամություն ունեցող երեխաների և երիտասարդների սոցիալ-հոգեբանական աջակցությունը ցերեկային կենտրոնում իրականացնելու նպատակով «Լիարժեք կյանք» ՀԿ-ին փոխհատուցվել են 13 հաստիքային միավորների նվազագույն աշխատավարձերը, որոնք կազմել են 11.3 մլն դրամ (100%): Միջոցներն օգտագործվել են 60 հաշմանդամ դեռահասների ցերեկային խնամք և սպասարկում իրականացնելու նպատակով: Սույն ծրագիրն իրականացվում է 2016 թվականից:

Ծերության դասի ծրագրերին 2016 թվականին հատկացվել է շուրջ 291.2 մլրդ դրամ, որը գրեթե ամբողջությամբ օգտագործվել է: 2015 թվականի համեմատ նշված ծախսերն աճել են 2.8%-ով՝ հիմնականում պայմանավորված կուտակային կենսաթոշակային համակարգի ներդրման, սպայական անձնակազմի ու նրանց ընտանիքների անդամների կենսաթոշակների և աշխատանքային կենսաթոշակների ծախսերի աճով:

Սպայական անձնակազմի ու նրանց ընտանիքների անդամների կենսաթոշակների ծախսերը կազմել են 23.8 մլրդ դրամ կամ նախատեսվածի 100%-ը: 2015 թվականի համեմատ նշված ծախսերն աճել են 8.1%-ով կամ շուրջ 1.8 մլրդ դրամով, ինչը պայմանավորված է զինվորական կենսաթոշակի չափը հաշվարկելու համար հիմնական կենսաթոշակի բաձրացմամբ, որը 2015 թվականի հուլիսի

1-ից սահմանվել է 16000 դրամ՝ նախկին 14000 դրամի փոխարեն, զինվորական ծառայության ստաժի մեկ տարվա արժեքի չափի բարձրացմամբ, որը 2015 թվականի հուլիսի 1-ից սահմանվել է 1500 դրամ՝ նախկին 1300 դրամի դիմաց, ինչպես նաև թոշակառուների փաստացի թվի աճով:

Շարքային զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների կենսաթոշակային ապահովման ծախսերը կազմել են 646.8 մլն դրամ՝ ապահովելով 99.5% կատարողական: 2015 թվականի համեմատ նշված ծախսերը նվազել են 5.7%-ով կամ 38.8 մլն դրամով, որը բացատրվում է Հայրենական մեծ պատերազմի հաշմանդամ և մասնակից կենսաթոշակառուների թվի կրճատման հանգամանքով:

Ծերության, հաշմանդամության, կերակրողին կորցնելու դեպքում տրամադրվող սոցիալական նպաստների ծախսերը կատարվել են 100%-ով և կազմել 13.7 մլրդ դրամ: 2015 թվականի համեմատ դրանք աճել են 3.4%-ով կամ 457.2 մլն դրամով, որը բացատրվում է տարվա ընթացքում նոր նշանակումների կազմում սոցիալական նպաստառուների տեսակարար կշռի աճով:

ՀՀ օրենքներով նշանակված կենսաթոշակների ծախսերը կազմել են ավելի քան 2.4 մլրդ դրամ, ապահովելով 99.4% կատարողական: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 1.7%-ով կամ 40.8 մլն դրամով, որը հիմնականում պայմանավորված է կենսաթոշակառուների թվի աճով:

Տարեցների և հաշմանդամություն ունեցող 18 տարին լրացած անձանց շուրջօրյա խնամքի իրականացման նպատակով տարեցների տուն-ինտերնատ հանդիսացող ՊՈԱԿ-ներին պետական աջակցությունը կազմել է շուրջ 2.1 մլրդ դրամ՝ ապահովելով 96.1% կատարողական: Սույն ծրագրի նպատակն է շուրջօրյա խնամքի ծառայություններ տրամադրել դրանց կարիքն ունեցող տարեց և հաշմանդամություն ունեցող 18 տարին լրացած անձանց՝ նրանց համար ապահովելով արժանապատիվ կենսապայմաններ: Խնամքի և սոցիալական սպասարկման ծառայությունները ներառում են կացարանի, կենսապահովման համար անհրաժեշտ պայմանների, սնունդով, հագուստով, կոշկեղենով, անկողնային պարագաներով ապահովումը, բժշկական օգնության ու սպասարկման, սոցիալ-հոգեբանական և իրավաբանական օգնության տրամադրումը, մշակութային միջոցառումների կազմակերպումը և այլն: Շեղումը պայմանավորված է նախատեսվածի նկատմամբ փաստացի պակաս թվով տարեցների սպասարկելու (1210 շահառուի փոխարեն 1163 շահառու) հանգամանքով: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 5.6%-ով կամ 110.7 մլն դրամով, որը պայմանավորված է 2015 թվականի հուլիսի 1-ից «Ձորակ հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց խնամքի կենտրոն» ՊՈԱԿ-ում 120 հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց խնամքն իրականացնելու հանգամանքով:

Տնային պայմաններում միայնակ տարեցների սոցիալական սպասարկման նպատակով նախատեսված հատկացումներն օգտագործվել են 98.4%-ով՝ կազմելով 140.6 մլն դրամ: Սույն ծրագրի շրջանակներում իրականացվում է միայնակ տարեցներին և հաշմանդամություն ունեցող

անձանց՝ տնային պայմաններում գնահատված կարիքներին համարժեք խնամքի ծառայությունների տրամադրումը, նրանց կյանքի որակի բարելավումը: Տնային պայմաններում խնամքն իր մեջ ներառում է կենցաղային սպասարկումը, սոցիալ-հոգեբանական օգնությունը, բժշկական օգնությունն ու սպասարկումը և իրավաբանական խորհրդատվությունը: Միջոցառման շրջանակում «Միայնակ տարեցների և հաշմանդամների սոցիալական սպասարկման կենտրոն» ՊՈԱԿ-ի միջոցով ծառայություններ են տրամադրվում Երևան քաղաքում բնակվող միայնակ տարեց ու 18 տարին լրացած հաշմանդամություն ունեցող շուրջ 1500 անձի: Նշված ծախսերը նախորդ տարվա համեմատ աճել են 0.7%-ով:

Հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց ցերեկային խնամքի նպատակով 2016 թվականին տրամադրվել է 14.6 մլն դրամ պետական աջակցություն, որը կատարվել է 81.7%-ով: Շեղումը հիմնականում պայմանավորված է «Վարդենիսի նյարդահոգեբանական տուն-ինտերնատ» ՊՈԱԿ-ում գործող ցերեկային կենտրոնի փաստացի սպասարկվող շահառուների թվաքանակը նախատեսվածից պակաս լինելու (30 շահառուների փոխարեն 21 շահառու) և կոմունալ ծախսերի տնտեսման հանգամանքներով: Արդյունքում նախորդ տարվա համեմատ արձանագրվել է տվյալ ծախսերի 5% անկում: Ծրագրի նպատակն է հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց սոցիալ-հոգեբանական վերականգնումը և նրանց կյանքի որակի բարելավումը: Ցերեկային կենտրոնում սպասարկվում են ակտիվ բուժման կարիք չունեցող հոգեկան առողջության խնդիրներ ունեցող 30 անձինք, որոնց տրամադրվում են սոցիալ-հոգեբանական օգնության և հոգեկան առողջության վերականգնման տարբեր ծառայություններ՝ նաև աշխատանքային թերապիայի միջոցով նպաստելով նրանց սոցիալական ներառմանը հասարակություն: Ցերեկային կենտրոնում այցելուներն ապահովվում են նաև մեկանգամյա սննդով:

ՀՀ մարզերում միայնակ տարեցներին և հաշմանդամներին տնային պայմաններում ու տարեցների ցերեկային խնամքի կենտրոններում սոցիալական սպասարկման նպատակով տրամադրվել է շուրջ 215.3 մլն դրամ՝ կազմելով նախատեսված միջոցների 100%-ը: Համաֆինանսավորման սկզբունքով իրականացվող սույն ծրագրով պետական աջակցություն է ցուցաբերվում «Առաքելություն Հայաստան» բարեգործական հասարակական կազմակերպությանը՝ հանրապետության 6 մարզերում և Երևան քաղաքում 4200 միայնակ ծեր ու հաշմանդամ քաղաքացիների տնային պայմաններում և ցերեկային կենտրոններում խնամքի տրամադրման ծառայություններն իրականացնելու համար: Բարեգործական հասարակական կազմակերպության կողմից տնային պայմաններում սպասարկման ծառայություններ են տրամադրվել շուրջ 2000 շահառուի, իսկ խնամքի 19 ցերեկային կենտրոնում՝ 2200 շահառուի, որոնք օգտվել են նաև մեկանգամյա սննդի տրամադրման ծրագրից: Նշված ծախսերը 2015 թվականի նկատմամբ աճել են

13.8%-ով՝ պայմանավորված 2015 թվականի հուլիսի 1-ից նվազագույն աշխատավարձի բարձրացմամբ:

Տվյալ դասում ամենամեծ կշիռն ունեն աշխատանքային կենսաթոշակների ծախսերը, որոնք կազմել են 222.5 մլրդ դրամ և օգտագործվել են 100%-ով: 2015 թվականի համեմատ նշված ծախսերն աճել են 0.4%-ով կամ 824.9 մլն դրամով, որը պայմանավորված է կենսաթոշակառուների թվի աճի, ինչպես նաև «Էլեկտրոնային կենսաթոշակ» համակարգի լիարժեք ներդրման, վարչարարության ուժեղացման (վճարումների հասցեականության ապահովման) հանգամանքներով:

Վանաձորի տարեցների տանը խնամվողների շուրջօրյա խնամքի և սոցիալական սպասարկման ծրագրին հատկացված միջոցները կազմել են 23.6 մլն դրամ՝ ապահովելով 100% կատարողական: Համաֆինանսավորման սկզբունքով իրականացվող սույն ծրագրով «Վանաձորի տարեցների տուն» ՀԿ-ին 55 տարեցների և 18 տարին լրացած հաշմանդամություն ունեցող անձանց շուրջօրյա խնամք և սպասարկում իրականացնելու նպատակով վճարվել է 27 հաստիքային միավորների աշխատավարձը: 2015 թվականի համեմատ նշված ծախսերն աճել են 4.8%-ով՝ պայմանավորված 2015 թվականի հուլիսի 1-ից նվազագույն աշխատավարձի բարձրացմամբ:

Կուտակային կենսաթոշակային համակարգի ներդրման ծրագրի շրջանակներում 2016 թվականին ՀՀ պետական բյուջեից օգտագործվել է 25.6 մլրդ դրամ՝ ապահովելով 100% կատարողական: Միջոցները նախատեսվել են «Կուտակային կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի համաձայն մասնակցի համար կուտակային վճարի սահմանված չափը լրացնելու նպատակով: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 23%-ով կամ 4.8 մլրդ դրամով՝ պայմանավորված կուտակային կենսաթոշակային համակարգի մասնակցների թվի աճով:

2016 թվականին ՀՀ պետական բյուջեից *«Հարազատին կորցրած անձինք»* խմբի շրջանակներում կատարված ծախսերը կազմել են 5 մլրդ դրամ՝ ապահովելով 99.7% կատարողական: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 1.6%-ով:

Զոհված՝ հետմահու Հայաստանի ազգային հերոսների և Մարտական խաչ շքանշանով պարգևատրված անձի ընտանիքի անդամներին տրվող պարգևավճարի գծով ծախսերը կազմել են 146.7 մլն դրամ՝ ապահովելով 95.1% կատարողական և նախորդ տարվա նկատմամբ աճել 13.2%-ով, որը պայմանավորված է ներկայացված (2016 թվականի ապրիլյան դեպքերից հետո) փաստացի պահանջի՝ թվաքանակի աճով:

Կենսաթոշակառուի, ծերության, հաշմանդամության, կերակրողին կորցնելու դեպքում, սոցիալական նպաստառուի մահվան դեպքում տրվող թաղման նպաստը կազմել է 4.8 մլրդ դրամ կամ նախատեսվածի 100%-ը: Ծախսերը նախորդ տարվա նկատմամբ աճել են 0.9%-ով՝ պայմանավորված մահվան դեպքերի աճով:

Հասարակության և պետության հանդեպ հատուկ ծառայություններ ունեցած քաղաքացիների մահվան դեպքում հրաժեշտի ծիսակատարության և թաղման կազմակերպման, գերեզմանի բարեկարգման, մահարձանի և հուշատախտակի պատրաստման ու տեղադրման աշխատանքներին աջակցության համար նախատեսված միջոցներն օգտագործվել են 89.9%-ով՝ կազմելով շուրջ 53.7 մլն դրամ: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 48.8%-ով:

«Ընտանիքի անդամներ և զավակներ» խմբի ծախսերը հաշվետու տարում կազմել են 63.3 մլրդ դրամ՝ ապահովելով 99.2% կատարողական: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 6.9%-ով կամ 4.1 մլրդ դրամով, որը հիմնականում պայմանավորված է մայրության և երեխայի ծննդյան միանվագ նպաստների ծախսերի աճով:

Խմբի ծախսերի զգալի մասը՝ 36.7 մլրդ դրամ, տրամադրվել է ընտանիքի կենսամակարդակի բարձրացմանն ուղղված նպաստների ֆինանսավորմանը, որը կազմել է նախատեսվածի 99.5%-ը: Ծրագրի շրջանակներում 2016 թվականին փաստացի նպաստ են ստացել ամսական միջինը 104475 ընտանիք՝ նախատեսված 104685 ընտանիքների փոխարեն: Նախորդ տարվա համեմատ այս ծախսերն աճել են 0.5%-ով՝ պայմանավորված փաստացի վճարված ընտանիքների թվի աճով:

ՀՀ պաշտպանության և փրկարարական ծառայության ժամանակ հաշմանդամ դարձած զինծառայողներին և զոհված (մահացած) զինծառայողների ու փրկարար ծառայողների ընտանիքներին հաշվետու տարում տրամադրվել են 298.3 մլն դրամ միանվագ սոցիալական ապահովագրության վճարներ, որոնք ֆինանսավորվել են ներկայացված հայտերին համապատասխան՝ կազմելով նախատեսվածի 74.6%-ը և 2.9 անգամ գերազանցել նախորդ տարվա ցուցանիշը:

2016 թվականին մինչև 2 տարեկան երեխայի խնամքի նպաստների գծով ծախսերը կազմել են 2.9 մլրդ դրամ կամ նախատեսվածի 99.5%-ը: Սույն ծրագրով փաստացի երեխայի խնամքի նպաստ է ստացել ամսական միջին հաշվով 13493 երեխա: 2015 թվականի համեմատ այս ծախսերը նվազել են 4.9%-ով:

Երեխաների շուրջօրյա խնամքի բնակչության սոցիալական պաշտպանության հաստատությունների շրջանավարտներին աջակցության և խորհրդատվությաւն նպատակով 2016 թվականին ՀՀ պետական բյուջեից տրամադրվել է 4.7 մլն դրամ՝ ապահովելով 42.3% կատարողական: Ծրագրի շրջանակներում շահառուների համար իրականացվել են մասնագիտական կողմնորոշման, խորհրդատվության աշխատանքներ, ուսուցում, վերապատրաստում, բժշկական և իրավաբանական օգնության տրամադրում: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը նվազել են 61.2%-ով կամ 7.4 մլն դրամով, որը պայմանավորված է ծրագրի ծառայությունների մատուցման նկարագրում փոփոխություններ իրականացնելու հանգամանքով, որի հետ կապված՝ ծրագիրը սկսել է իրականացվել 2016 թվականի հուլիսի 1-ից:

Մայրության նպաստի գծով ծախսերը կազմել են շուրջ 9.4 մլրդ դրամ՝ ապահովելով 100% կատարողական: 2015 թվականի համեմատ այս ծախսերն աճել են 53%-ով կամ 3.2 մլրդ դրամով, որը պայմանավորված է այն հանգամանքով, որ ՀՀ 2016 թվականի պետական բյուջեով «Հղիության և ծննդաբերության նպաստ» ծրագիրն անվանափոխվեց «Մայրության նպաստ» ծրագրի, և կատարված օրենսդրական փոփոխությունների համաձայն հղիության և ծննդաբերության նպաստ սկսեց վճարվել նաև չաշխատող մայրերին:

Երեխայի ծննդյան միանվագ նպաստի վճարումը կազմել է 10.1 մլրդ դրամ՝ ապահովելով 100% կատարողական: 2015 թվականի նկատմամբ նշված ծախսերն աճել են 7.1%-ով՝ հիմնականում պայմանավորված երրորդ և հաջորդ երեխաների ծնունդների թվի աճով:

2016 թվականին վարժական հավաքների և զինծառայության ու փրկարարական ծառայության ընթացքում մահացած (զոհված) զինծառայողների ու փրկարար ծառայողների հուղարկավորության, գերեզմանների բարեկարգման, տապանաքարերի պատրաստման և տեղադրման հետ կապված ծախսերի փոխհատուցման համար նախատեսված միջոցներն օգտագործվել են 95.1%-ով, որոնք կազմել են 542.3 մլն դրամ՝ նախորդ տարվա 401.3 մլն դրամի դիմաց:

Երեխաների շուրջօրյա խնամքի իրականացման նպատակով երեխաների տուն-ինտերնատ հանդիսացող ՊՈԱԿ-ներին պետական աջակցության ծախսերը հաշվետու տարում կազմել են շուրջ 2 մլրդ դրամ կամ նախատեսվածի 97.2%-ը: Ծրագրի շրջանակներում գործում է երեխաների շուրջօրյա խնամք իրականացնող բնակչության սոցիալական պաշտպանության ընդհանուր տիպի և հատուկ (մասնագիտացված) վեց հաստատություն, որոնցում 2016 թվականին խնամվել է միջինը 630 երեխա՝ նախատեսված 660-ի դիմաց: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը նվազել են 5.8%-ով՝ պայմանավորված երեխաների թվի կրճատման հանգամանքով:

Երեխաների շուրջօրյա խնամք և պաշտպանություն իրականացնող հաստատություններում խնամվող երեխաներին ընտանիքներ վերադարձնելու (բեռնաթափման) ծառայությունների ձեռքբերման ծախսերը կատարվել են 99.9%-ով՝ կազմելով 22.6 մլն դրամ: Ծրագրի շրջանակներում «Առավոտ» ՀԿ-ի միջոցով ՀՀ Լոռու և Շիրակի մարզերում իրականացվել են 60 երեխաների՝ խնամքի հաստատություններից բեռնաթափման և 40 երեխաների՝ նշված հաստատություններ մուտքի կանխարգելման աշխատանքներ: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 6.8%-ով՝ պայմանավորված 2015 թվականի հուլիսի 1-ից նվազագույն աշխատավարձի բարձրացմամբ:

Սոցիալական հոգածության ցերեկային կենտրոնների երեխաներին սոցիալական ծառայությունների ծախսերը կազմել են 243.5 մլն դրամ կամ նախատեսվածի 88.5%-ը: Ծրագրի շրջանակներում չորս ցերեկային կենտրոններում իրականացվել է միջին հաշով 387 երեխաների

ցերեկային խնամք՝ նախատեսված 450-ի փոխարեն: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 7.2%-ով՝ կապված մեկ ցերեկային կենտրոն ավելացնելու հետ:

ՀՀ քաղաքացիական գործերով վերաքննիչ դատարանի 05-1680 գործով 15.07.2005թ. վճռի համաձայն՝ կերակրողին կորցնելու կապակցությամբ կրած վնասի փոխհատուցման ծախսերը Հայաստանի Հանրապետության կողմից ամբողջությամբ կատարվել են՝ կազմելով 1.1 մլն դրամ: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը չեն փոփոխվել:

Երեխաների գիշերօթիկ խնամքի ծառայություններին տրամադրվել է 872 մլն դրամ՝ ապահովելով ծրագրի 92.8%-ով կատարում: Ծրագրի շրջանակներում երեխաների խնամքի 8 գիշերօթիկ հաստատությունում 2016 թվականին նախատեսվել է սոցիալապես անապահով, ընտանիքների անապահովության գնահատման համակարգում հաշվառված ընտանիքների դպրոցահասակ երեխաների շուրջօրյա խնամք: Ծրագրի շրջանակներում 6 գիշերօթիկ հաստատությունների կողմից իրականացվել են տարեկան միջինը 529 շահառուների խնամքի աշխատանքներ՝ նախատեսված 638-ի դիմաց: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը նվազել են 8.6%-ով՝ պայմանավորված «Երեխաների խնամքի և պաշտպանության թիվ 2 գիշերօթիկ հաստատություն» ՊՈԱԿ-ը «Երեխայի և ընտանիքի աջակցությաձ կենտրոն» ՊՈԱԿ վերանվանվելու և որպես ցերեկային կենտրոն գործելու հանգամանքով:

2016 թվականին երեխաների խնամքի ցերեկային կենտրոնների կողմից կյանքի դժվար իրավիճակում գտնվող երեխաների սոցիալական հոգածության ծառայությունների շրջանակներում տրամադրվել է 73.3 մլն դրամ՝ ապահովելով ծրագրի 100%-ով կատարում: Ծրագիրն իրականացվում է համաֆինանսավորման սկզբունքով, և այն իրականացնող «Հույսի կամուրջ» ՀԿ-ին 4 ցերեկային կենտրոններում (Դիլիջան, Իջևան, Նոյեմբերյան, Բերդ) 250 երեխաների ցերեկային խնամք և սպասարկում իրականացնելու նպատակով իրականացվել են 84 հաստիքային միավորների աշխատավարձերի վճարումները: 2015 թվականի համեմատ նշված ծախսերն աճել են 4.8%-ով՝ պայմանավորված 2015 թվականի հուլիսի 1-ից նվազագույն աշխատավարձի բարձրացմամբ:

Խնամատար ընտանիքում երեխայի խնամքի և դաստիարակության աջակցության տրամադրումը կազմել է 27.9 մլն դրամ կամ նախատեսվածի 88.4%-ը, որը պայմանավորված է խնամատար ընտանիք տեղափոխվող երեխաների՝ նախատեսվածից պակաս քանակով. 25 շահառուի փոխարեն ծրագրից օգտվել է 20 շահառու: Նշված ծախսերը 2015 թվականի նկատմամբ աճել են 20.9%-ով՝ պայմանավորված 2015 թվականի հուլիսի 1-ից նվազագույն աշխատավարձի բարձրացմամբ:

Երեխաների շուրջօրյա խնամքի բնակչության սոցիալական պաշտպանության հաստատություններում խնամվող դպրոցական տարիքի երեխաներին դրամական աջակցության տրամադրման նպատակով հաշվետու տարում օգտագործվել է 4.5 մլն դրամ կամ նախատեսվածի

77.3%-ը: Ծրագրի շրջանակներում միջոցներ են հատկացվում դպրոցական տարիքի երեխաների գրպանի ծախսերի համար: Շեղումը պայմանավորված է 195 երեխաների փոխարեն տարեկան միջին փաստացի 153 դպրոցահասակ երեխաների դրամական աջակցություն տրամադրելու հանգամանքով: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը նվազել են 7.1%-ով՝ պայմանավորված երեխաների թվի նվազմամբ:

Երեխաների շուրջօրյա խնամքի բնակչության սոցիալական պաշտպանության հաստատությունների շրջանավարտներին միանվագ դրամական օգնության տրամադրման ծախսերը կազմել են 250 հազար դրամ կամ նախատեսվածի 62.5%-ը՝ 58.3%-ով զիջելով նախորդ տարվա ցուցանիշը: Ծրագրից շեղումը, ինչպես նաև նախորդ տարվա համեմատ ծախսերի անկումը պայմանավորված է շահառուների փաստացի քանակով. այն կազմել է 5՝ նախատեսված 8-ի և նախորդ տարվա 12-ի դիմաց:

Կենսաբանական ընտանիք տեղափոխված երեխաների ընտանիքներին բնաիրային օգնության փաթեթի տրամադրման ծախսերը կազմել են 19.9 մլն դրամ, որն իրականացվել է 98.2%-ով: Սույն ծրագիրը հանդիսանում է «ՀՀ երեխաների շուրջօրյա խնամք և պաշտպանություն իրականացնող հաստատություններում խնամվող երեխաներին ընտանիքներ վերադարձնելու ծառայություններ (բեռնաթափում)» ծրագրի բաղադրիչ մասը: Ծրագրի շրջանակներում 100 շահառուի (60 կենսաբանական և 40 կանխարգելված ընտանիքների) տրամադրվել է բնաիրային օգնության փաթեթ՝ սննդի զամբյուղ, հագուստ և կոշիկ, գրենական պիտույքներ, դասագրքեր, և կենսաբանական ընտանիքներին փոխհատուցվել է էլեկտրաէներգիայի ծախսի մի մասը: Նախորդ տարվա նկատմամբ նշված ծախսերը նվազել են 2.3%-ով, որը պայմանավորված է սննդամթերքի փաթեթները գնումների գործընթացի արդյունքում ավելի ցածր գներով ձեռք բերելու հանգամանքով:

ՀՀ քաղաքացիական գործերով վերաքննիչ դատարանի 07-3832 գործով 2007 թվականի նոյեմբերի 3-ի վճռի համաձայն կերակրողին կորցնելու կապակցությամբ կրած վնասի՝ Հայաստանի Հանրապետության կողմից փոխհատուցումը կազմել է 3.2 մլն դրամ (100%): 2015 թվականի համեմատ նշված ծախսերն աճել են 4.8%-ով:

ՀՀ քաղաքացիական գործերով վերաքննիչ դատարանի գործով վճիռների համաձայն կրած վնասների փոխհատուցումը ևս ամբողջությամբ կատարվել է՝ կազմելով 7.2 մլն դրամ: Նախորդ տարվա նկատմամբ նշված ծախսերն աճել են 4.3%-ով:

Կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաների համար ժամանակավոր խնամքի տրամադրման ծառայությունների ծախսերը կազմել են շուրջ 38 մլն դրամ կամ տարեկան ծրագրի 96%-ը: Ծրագրի շրջանակներում 3-18 տարեկան երեխաներին մինչև 6 ամիս ժամկետով տրամադրվում են շուրջօրյա խնամքի ծառայություններ: Ծրագրից շեղումը պայմանավորված է

նախատեսված 20 երեխայի փոխարեն 19 երեխա խնամելու հանգամանքով: Նախորդ տարվա նկատմամբ նշված ծախսերն աճել են 2.2%-ով՝ պայմանավորված երեխաների թվի աճով:

Երևան քաղաքի Կենտրոն և Նորք Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության 1-ին ատյանի դատարանի 08.06.2012թ. Գործ N ԵԴԿ /1247/02/10/ վճռի համաձայն կերակրողը կորցնելու կապակցությամբ կրած վնասի փոխհատուցումը Հայաստանի Հանրապետության կողմից կազմել է 369.4 հազար դրամ, որը կատարվել է նախատեսված գումարի չափով: Տվյալ ծախսերը պահպանվել են նախորդ տարվա մակարդակին:

Հաշմանդամ երեխաների ցերեկային խնամքի ծառայությունների մատուցմանը Երևանի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի N 92 ներառական մանկապարտեզում տրամադրվել է 26.4 մլն դրամ (100%): Ծրագրի շրջանակներում համաֆինանսավորման սկզբունքով փոխհատուցվում են Երևանի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի N 92 ներառական մանկապարտեզի 18 հաստիքային միավորների նվազագույն աշխատավարձերը՝ 24 երեխաների ցերեկային խնամք և սպասարկում իրականացնելու համար: Սույն ծրագիրն իրականացվում է 2016 թվականից:

2016 թվականին պետական բյուջեից շուրջ 2 մլրդ դրամ տրամադրվել է *գործազրկության* խմբի ծրագրերի ֆինանսավորմանը՝ կազմելով նախատեսվածի 93.2%-ը: Շեղումը հիմնականում պայմանավորված է գործազուրկների և աշխատանքից ազատման ռիսկ ունեցող՝ աշխատանք փնտրող անձանց կրթաթոշակի տրամադրման ու գործազուրկների և աշխատանաքից ազատման ռիսկ ունեցող՝ աշխատանք փնտրող անձանց մասնագիտական ուսուցման կազմակերպման ծախսերի կատարողականով: 2015 թվականի նկատմամբ գործազրկության բնագավառի ծախսերն աճել են 32%-ով՝ հիմնականում պայմանավորված սեզոնային զբաղվածության խթանման միջոցով գյուղացիական տնտեսություններին աջակցության ավելացմամբ:

Հաշվետու տարվա ընթացքում աշխատաշուկայում անմրցունակ անձանց փոքր ձեռնարկատիրական աջակցությունը կազմել է շուրջ 53 մլն դրամ, որը 19.7%-ով զիջել է ծրագրված ցուցանիշը: Ծրագրի նպատակը փոքր ձեռնարկատիրական գործունեությանն աջակցության միջոցով կայուն զբաղվածության ապահովումն ու աշխատաշուկայում անմրցունակ անձանց փոքր ձեռնարկատիրական գործունեության իրականացման և ինքնազբաղվածության խթանման համար աջակցության տրամադրումն է: Ծրագրի շահառուներն են աշխատաշուկայում անմրցունակ անձինք, որոնց տրամադրվում է ակնկալվող ձեռնարկատիրական գործունեության մեկնարկի և իրականացման համար անհրաժեշտ աջակցություն՝ խորհրդատվություն, ուսուցում, ձեռնարկատիրական գործունեության գործարար ծրագրի մշակում: Շեղումը պայմանավորված է նախատեսված 81 ծրագրի փոխարեն 74 ծրագրի իրականացմամբ: Ծրագրում ընդգրկվելուց շահառուները հիմնականում հրաժարվում են երաշխավոր չունենալու, բանկում անհրաժեշտ

գումարի բացակայության և հանրապետությունից մեկնելու պատճառով: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 16.4%-ով՝ պայմանավորված 2015 թվականի հուլիսի 1-ից նվազագույն աշխատավարձի բարձրացմամբ:

Աշխատաշուկայում անմրցունակ անձանց աշխատանքի տեղավորման դեպքում գործատուին աշխատավարձի մասնակի և հաշմանդամություն ունեցող անձին ուղեկցողի համար աշխատավարձի փոխհատուցման ծախսերը կազմել են 123.4 մլն դրամ կամ նախատեսվածի 95.8%-ը: Շեղումը պայմանավորված է նախատեսված 55 հազար նվազագույն ամսական աշխատավարձի փոխարեն փաստացի միջին 49.2 հազար դրամ վճարված աշխատավարձով: Ծրագրի շրջանակներում հարմար աշխատանքի տեղավորված յուրաքանչյուր անմրցունակ անձի համար վեց օրացուցային ամիս ժամկետով, ամսական կտրվածքով, գործատուին տրվում է փոխհատուցում՝ տվյալ անմրցունակ անձի համար սահմանված ամսական աշխատավարձի 50 տոկոսի չափով, բայց ոչ ավելի, քան «Նվազագույն ամսական աշխատավարձի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածով սահմանված նվազագույն ամսական աշխատավարձի չափը, իսկ ուղեկցողի կարիք ունեցող անձանց ուղեկցող ունենալու համար տրվում է դրամական օգնություն մինչև վեց օրացուցային ամիս ժամկետով, ամսական կտրվածքով՝ «Նվազագույն ամսական աշխատավարձի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածով սահմանված նվազագույն ամսական աշխատավարձի 50 տոկոսի չափով: Տարվա ընթացքում ծրագրում ընդգրկվել է 268 անձ՝ նախատեսված 188-ի փոխարեն: Նշված ծախսերը նախորդ տարվա նկատմամբ նվազել են 9.9%-ով, որը պայմանավորված է ծրագրում ընգրկված անձանց թվի կրճատմամբ:

Գործազուրկների և աշխատանքից ազատման ռիսկ ունեցող՝ աշխատանք փնտրող անձանց մասնագիտական ուսուցման կազմակերպման նպատակով տրամադրվել է 116 մլն դրամ կամ նախատեսվածի 82.9%-ը: Ծրագրի նպատակը աշխատաշուկայի պահանջներին համապատասխան մասնագետների պատրաստման և աշխատաշուկայում նրանց մրցունակության բարձրացման միջոցով կայուն զբաղվածության ապահովումն է: Ծրագրի շահառուները գործազուրկներն են, ինչպես նաև աշխատանքից ազատման ռիսկ ունեցող աշխատանք փնտրող անձինք:

Գործող կարգի համաձայն, 2016 թվականին Զբաղվածության պետական գործակալության կողմից ներկայացվել է 1565 անձի ուսուցման կազմակերպման համար հայտ, իրականացվել է 1284 գործազուրկի ուսուցում (մեկ անձի ուսուցումը կազմակերպելու համար նախատեսվել է հատկացնել 91.25 հազ. դրամ), գնումների գործընթացով պայմանավորված՝ 281 շահառուի համար տարբեր մասնագիտություններով ներկայացված հայտերի համար մրցույթը չի կայացել: Շեղումը պայմանավորված է ծրագրում փաստացի ընդգրկված անձանց քանակով, գնումների գործընթացով պայմանավորված՝ միավորի ցածր գնով, ինչպես նաև ուսուցման ավարտից հետո ծրագիրը ֆինանսավորելու հանգամանքով. ուսուցման միջին տևողությունը կազմում է 2.5 ամիս, իսկ

մրցույթների մի մասը կազմակերպվել է 2016 թվականի նոյեմբերին: 2015 թվականի համեմատ տվյալ ծախսերն ավելացել են 13.4%-ով՝ պայմանավորված ծրագրում ընգրկված անձանց թվի ավելացման հանգամանքով:

Մասնագիտական կողմնորոշման, համակարգի մեթոդաբանության ապահովման և կադրերի վերապատրաստման ծառայությունների գծով ծախսերը կազմել են 29.1 մլն դրամ՝ ապահովելով 97.1% կատարողական, որը պայմանավորված է ծրագիրն իրականացնող «Մասնագիտական կողմնորոշման մեթոդական կենտրոն» ՊՈԱԿ-ում կոմունալ ծախսերի տնտեսմամբ: Ծրագրի նպատակը հանրակրթության ոլորտում, մասնագիտական ուսումնական հաստատություններում սովորողների մասնագիտական կողմնորոշման, անձի ինքնագնահատման, կարիերայի պլանավորման, ձեռներեցությամբ սեփական զբաղվածությունն ապահովելու և աշխատաշուկա մուտք գործելու համար հիմնական կարողությունների զարգացմանն ուղղված մեթոդաբանության, ուսումնական ծրագրերի մշակման, ինչպես նաև մասնագիտական կողմնորոշման համակարգի կադրերի վերապատրաստման, հանրային իրազեկման ապահովումն է: Ծրագրի շահառուներն են՝ Հայաստանի Հանրապետության հանրակրթական, մասնագիտական ուսումնական հաստատությունների, ինտեգրված սոցիալական ծառայությունների համապատասխան մասնագետները: 2015 թվականի նկատմամբ նշված ծախսերն ավելացել են 4.3%-ով, որը հիմնականում պայմանավորված է 2015 թվականի հուլիսի 1-ից նվազագույն աշխատավարձի բարձրացմամբ:

Գործազուրկներին այլ վայրում աշխատանքի տեղավորման աջակցության ծախսերը կազմել են 57.9 մլն դրամ կամ նախատեսվածի 98.6%-ը: Ծրագրի նպատակը աշխատուժի ներքին տեղաշարժի կարգավորման միջոցով Հայաստանի Հանրապետության մարզերում, մասնավորապես՝ գյուղական բնակավայրերում և սահմանամերձ տարածաշրջաններում շարունակաբար չլրացվող թափուր աշխատատեղերի համալրումն ու կայուն զբաղվածության ապահովումն է: Ծրագրի շահառուներն են գործազուրկները, այդ թվում՝ հաշմանդամություն ունեցող անձինք: Ծրագրի շրջանակներում շահառուներին փոխհատուցվում են շահառուի և իր ընտանիքի անդամների տեղափոխման, գույքի տեղափոխման, մեկ տարվա ընթացքում 4 անգամ մշտական բնակավայր այցելելու համար տրանսպորտային ծախսերը, միանվագ ֆինանսական աջակցություն՝ նվազագույն ամսական աշխատավարձի եռապատիկի չափով, ամսական գումար բնակարանային վարձի և կոմունալ ծախսերի համար՝ «Նվազագույն ամսական աշխատավարձի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածով սահմանված նվազագույն ամսական աշխատավարձի չափով, աշխատավարձի հավելում՝ «Նվազագույն ամսական աշխատավարձի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածով սահմանված նվազագույն ամսական աշխատավարձի 50%-ից մինչև կրկնապատիկի չափով: Սույն ծրագրով տարեկան նախատեսվում է այլ վայր

գործուղել 42 գործազուրկի, 2016 թվականին փաստացի ընդգրկվել է 25 գործազուրկ: Համապատասխան օրենսդրության խստացման հետևանքով ծրագրի իրականացումը դանդաղել է. փոփոխության արդյունքում այլ վայրում աշխատելու ժամանակահատվածը 2 տարուց ավելացվել և սահմանվել է 3 տարի, և 3 տարվա ընթացքում պայմանագիրը լուծվելու դեպքում տրամադրված ֆինանսական միջոցները ենթակա են վերադարձման ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով: Նշված ծախսերը նախորդ տարվա համեմատ գրեթե չեն փոփոխվել:

Աշխատաշուկայի հետազոտման աշխատանքների կազմակերպմանը պետական բյուջեից տրամադրվել է 5 մլն դրամ՝ ապահովելով 100% կատարողական: Ծրագրի նպատակը տնտեսության մեջ և աշխատաշուկայում տեղի ունեցող զարգացումների գնահատումն ու միտումների բացահայտումը, ինչպես նաև աշխատուժի պահանջարկի կանխատեսումն է: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը չեն փոփոխվել:

2016 թվականին աշխատանքի տոնավաճառի կազմակերպմանը տրամադրվել է 7.7 մլն դրամ, որն իրականացվել է 99.7%-ով և նախորդ տարվա համեմատ գրեթե չի փոփոխվել: Ծրագրի նպատակը գործատուի և աշխատանք փնտրողի անմիջական հաղորդակցման միջոցով մի կողմից աշխատանք փնտրողի կայուն զբաղվածության ապահովումն է, իսկ մյուս կողմից՝ գործատուի մոտ առկա թափուր աշխատատեղերի արդյունավետ համալրման ապահովումը: Ծրագրի շահառուներն են աշխատանք փնտրողները և գործատուները: 2016 թվականի ընթացքում կազմակերպվել է 11 տոնավաճառ:

Աշխատանք փնտրող հաշմանդամների աշխատանքային վերականգնման, մասնագիտական վերապատրաստման և խորհրդատվության ծառայությունների ծրագիրն իրականացվում է «Հաշմանդամների մասնագիտական կողմնորոշման և աշխատանքային վերականգնողական կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից՝ 540 հաշմանդամ անձանց մասնագիտական կողմնորոշման ձևավորման ու աշխատաշուկայի պահանջարկին համապատասխան աշխատանքային ունակությունների վերականգնման, ինչպես նաև լիարժեք կյանքին նրանց ինտեգրման նպատակով: Նշված ծախսերը հաշվետու տարում կազմել են ավելի քան 16.9 մլն դրամ կամ նախատեսվածի 90.6%-ը՝ պայմանավորված «Հաշմանդամների մասնագիտական կողմնորոշման և աշխատանքային վերականգնողական կենտրոն» ՊՈԱԿ-ի պահպանման ծախսերի տնտեսմամբ: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը գրեթե չեն փոփոխվել:

Ձեռք բերած մասնագիտությամբ մասնագիտական աշխատանքային փորձ ձեռք բերելու համար գործազուրկներին տրամադրվել է շուրջ 149.2 մլն դրամ աջակցության՝ ապահովելով 93.1% կատարողական: Ծրագրի նպատակը ձեռք բերած մասնագիտությամբ առաջին անգամ աշխատաշուկա մուտք գործող գործազուրկի՝ իր մասնագիտական որակավորմանը համապատասխան մասնագիտական աշխատանքային փորձ ձեռք բերելու, աշխատաշուկայում

առավել մրցունակ դառնալու և հարմար աշխատանքի տեղավորվելու համար ցուցաբերվող աջակցության միջոցով կայուն զբաղվածության ապահովումն է: Ծրագրի իրականացման ամբողջ ժամանակահատվածում ՀՀ պետական բյուջեի միջոցներից գործազուրկին վճարվում է աշխատավարձ՝ «Նվազագույն ամսական աշխատավարձի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածով սահմանված գումարի չափով, գործատուի մոտ աշխատանքային փորձի ձեռքբերման գործընթացը կազմակերպող մասնագետին վճարվում է նրա նախորդ տարվա միջին ամսական աշխատավարձի 20 տոկոսի չափով հավելում, բայց ոչ ավելի, քան «Նվազագույն ամսական աշխատավարձի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածով սահմանված գումարի չափը, ինչպես նաև գործատուին տրամադրվում է գումար՝ գործազուրկի աշխատավարձից հաշվարկվող եկամտային հարկը փոխհատուցելու համար: Ծրագրի տևողությունը 3 ամիս է: Շեղումը պայմանավորված է դեկտեմբեր ամսվա ծրագրում ընդգրկված գործազուրկների վճարումը 2017 թվականի հունվար ամսին իրականացնելու հանգամանքով: Հաշվետու տարում ծրագրում ընգրկվել է 473 գործազուրկ: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 40.4%-ով՝ պայմանավորված շահառուների թվի աճով: 2015 թվականին ծրագրում ընդգրկվել էր 352 անձ:

2016 թվականին աշխատաշուկայում անմրցունակ անձանց աշխատանքի տեղավորման համար գործատուներին տրամադրվել են 147.8 մլն դրամ միանվագ փոխհատուցումներ՝ կազմելով նախատեսված ցուցանիշի 92.6%-ը: Ծրագրի նպատակը աշխատաշուկայում անմրցունակ անձանց՝ աշխատանքի վայրում աշխատանքային ունակությունների և կարողությունների ձեռքբերման հնարավորությունների ընձեռման միջոցով կայուն զբաղվածության ապահովումն է, ինչպես նաև աշխատատեղի հարմարեցման աջակցության միջոցով հաշմանդամություն ունեցող անձանց կայուն զբաղվածության ապահովումը: Ծրագիրը բաղկացած է 2 ենթածրագրից: Առաջին ենթածրագիրը աշխատաշուկայում անմրցունակ անձանց աշխատանքային ունակությունների և կարողությունների ձեռքբերման համար փոխհատուցումն է, երկրորդը՝ հաշմանդամություն, այդ թվում՝ տեսողական խնդիրներ ունեցող անձանց աշխատանքային ունակությունների և կարողությունների ձեռքբերման ու աշխատատեղերի հարմարեցումն է: Առաջին ենթածրագրում ընդգրկվել է 711 անմրցունակ անձ՝ նախատեսված 720-ի փոխարեն, իսկ երկրորդ ենթածրագրում ընդգրկված անձանց թիվը կազմել է 21՝ նախատեսված 31-ի փոխարեն: Հաշմանդամություն ունեցող անձանց համար աշխատատեղի հարմարեցման ծրագրով նախատեսված թվաքանակը չի ապահովվել, քանի որ նշված անձինք աշխատելու մոտիվացիա չունեն, հատկապես մարզերում՝ տրանսպորտային միջոցների և միջավայրի մատչելիության բացակայության պատճառով: Նախորդ տարվա համեմատ այս ծրագրի ծախսերն աճել են 45.7%-ով կամ 46.3 մլն դրամով, որը պայմանավորված է ծրագրում ընդգրկված անձանց թվի աճով:

Սեզոնային զբաղվածության խթանման միջոցով աջակցությունը գյուղացիական տնտեսություններին կազմել է 1.1 մլրդ դրամ կամ նախատեսվածի 99.2%-ը: Ծրագրի նպատակը սեզոնային զբաղվածության ապահովման միջոցով հանրապետության առավել խոցելի և աղքատ գյուղական բնակավայրերի բնակչության սոցիալական լարվածության մեղմումն ու աշխատանքի արտադրողականության բարձրացումն է, նրանց կայուն զբաղվածության ապահովման համար պայմանների ստեղծումը, իրավիճակից բխող մարտահրավերներին արագ արձագանքող միջոցներով գյուղացիական տնտեսություններին աջակցելը: Ծրագրի շահառուները գյուղատնտեսական նշանակության հողի սեփականատեր կամ վարձակալ կամ անհատույց օգտագործող հանդիսացող՝ աշխատաշուկայում անմրցունակ անձինք են: Ծրագիրն առաջնահերթության կարգով իրականացվում է գյուղացիական տնտեսության՝ բնական պատճառներով ստացած վնասների վերականգնման համար, ինչպես նաև բարձր լեռնային և սահմանամերձ բնակավայրերում: Հողօգտագործողին տրվում է ծրագրում ընդգրկվելու առաջնահերթություն, եթե ընտանիքը հաշվառված է ընտանիքների անապահովության գնահատման համակարգում և ստանում է ընտանեկան նպաստ, ընտանիքում առկա է երկու և ավելի անչափահաս, ընտանիքի անդամներից մեկը հաշմանդամություն ունեցող անձ է: Ծրագրում ընդգրկված հողօգտագործողի ընտանիքի յուրաքանչյուր անդամի համար գործատու հանդիսացող հողօգտագործողին տրվում է աշխատավարձի փոխհատուցում՝ մեկ աշխատանքային օրվա համար 4000 դրամ՝ ներառյալ եկամտային հարկը, ինչպես նաև օրենքով սահմանված դեպքում՝ նպատակային սոցիալական վճարը: Ծրագրի շրջանակներում աշխատանքում ներգրավված յուրաքանչյուր վարձու աշխատողի համար (բացառությամբ ծրագրում ընդգրկված հողօգտագործողի ընտանիքի անդամի) գործատու հանդիսացող հողօգտագործողին տրվում է աշխատավարձի փոխհատուցում՝ մեկ աշխատանքային օրվա համար 3000 դրամ՝ ներառյալ եկամտային հարկը, ինչպես նաև օրենքով սահմանված դեպքում՝ նպատակային սոցիալական վճարը: Ծրագրի շրջանակներում ներգրավված և քաղաքացիաիրավական պայմանագրով հողօգտագործողի համար գյուղատնտեսական տեխնիկայի միջոցով ծառայություններ մատուցող (աշխատանքներ կատարող) անձին մատուցված ծառայությունների (կատարված աշխատանքների) դիմաց վճարելու համար հողօգտագործողին տրվում է փոխհատուցում՝ մեկ ժամվա համար 5000 դրամ: Հաշվետու տարվա ընթացքում նախատեսվում էր իրականացնել 3217 ծրագիր: Փաստացի պայմնագիր է կնքվել 5967 հողօգտագործողի հետ: Շեղումը պայմանավորված է ծրագրի միավորի ցածր գնով: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 36%-ով, որը պայմանավորված է ծրագրում ընդգրկված գյուղացիական տնտեսությունների քանակի աճով:

2016 թվականին աշխատանքի տեղավորման ոչ պետական կազմակերպության կողմից մատուցվող ծառայություններից օգտվելու համար նախատեսված էր 200 հազ. դրամ աջակցության

տրամադրում: Ծրագրով նախատեսված էր ընդգրկել 2 անձ, փաստացի ծրագրում շահառու չի ընդգրկվել:

Աշխատաշուկայում անմրցունակ անձանց հարմար աշխատանքի տեղավորման նպատակով գործատուներին այցելության ծախսերի փոխհատուցումը կազմել է 5.7 մլն դրամ կամ նախատեսվածի 80.5%-ը: Գործատուին այցելելու հետ կապված տրանսպորտային, ինքնակենսագրության կազմման, գործատուին պատշաճ մակարդակով ներկայանալու նպատակով իրականացվող ծախսերի որոշակի մասը փոխհատուցելու համար անմրցունակ անձին տրվում է դրամական օգնություն՝ յուրաքանչյուր այցելության համար 2000 դրամ, բայց յուրաքանչյուր օրացուցային ամսվա համար ոչ ավելի, քան 18000 դրամը: Ծրագրի առավելագույն տևողությունը երեք ամիս է: Ծրագրով իրականացվել է աշխատաշուկայում 2005 անմրցունակ անձանց հարմար աշխատանքի տեղավորման նպատակով գործատուներին այցելության ծախսերի փոխհատուցում՝ նախատեսված 1206 անձի փոխարեն: Շեղումը պայմանավորված է այն հանգամանքով, որ անձը ծրագրի շրջանակներում ուղեգրվում է միայն հարմար աշխատանքի առաջարկի դեպքում, և նախատեսված միջինը 9 այցի փոխարեն կատարվել է 1-2 այց (նախատեսված 18000 դրամի փոխարեն վճարվել է 2000–4000 դրամ): Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 18.9%-ով, որը պայմանավորված է ծրագրում ընդգրկված անմրցունակ անձանց թվի աճով:

Գործազուրկների և աշխատանքից ազատման ռիսկ ունեցող՝ աշխատանք փնտրող անձանց կրթաթոշակի տրամադրման ծախսերը կազմել են 77.5 մլն դրամ՝ ապահովելով 58.7% կատարողական: Սույն ծրագով մասնագիտական ուսուցման դասընթացներում ընդգրկված աշխատանք փնտրող անձին ուսուցման ամբողջ ընթացքում յուրաքանչյուր ամիս վճարվում է կրթաթոշակ՝ «Նվազագույն ամսական աշխատավարձի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածով սահմանված նվազագույն ամսական աշխատավարձի 50 տոկոսի չափով: Տարեկան նախատեսվում է ընդգրկել 1600 գործազուրկ, փաստացի հայտ է ներկայացվել 1565 գործազուրկի համար և մրցույթի արդյունքում կնքվել են պայմանագրեր 1284 գործազուրկի ուսուցում կազմակերպելու համար: Տարեվերջին կնքված պայմանագրերով նախատեսված 441 անձի կրթաթոշակի վճարումը տեղափոխվել է 2017 թվական: 2015 թվականի համեմատ նշված ծախսերն աճել են 6.4%-ով՝ պայմանավորված ծրագրում ընդգրկված շահառուների թվի ավելացման հանգամանքով:

Վարձատրվող հասարակական աշխատանքների կազմակերպման միջոցով գործազուրկների ժամանակավոր զբաղվածության ապահովման ծախսերը կազմել են 43.5 մլն դրամ՝ ապահովելով 96.7% կատարողական: Սույն ծրագրով տարեկան նախատեսվում էր իրականացնել 30 ծրագիր, փաստացի իրականացվել է 33 ծրագիր: Շեղումը պայմանավորված է ծրագրի միավորի ցածր գնով: Ծրագիրն իրականացվել է 2016 թվականից:

Աշխատաշուկայում անմրցունակ անձանց անասնապահությամբ զբաղվելու համար աջակցության տրամադրումը կազմել է 40.1 մլն դրամ՝ ապահովելով 80.2% կատարողական: Սույն ծրագրով իրականացվել է 54 ենթածրագիր՝ նախատեսված 50-ի փոխարեն: Ծրագրի ֆինանսավորումը կատարվում է փուլային կարգով, և նախատեսված 54 անձի կողմից անասնապահական աշխատանքների կատարման համար նախատեսված գումարների ամսական վճարումը տեղափոխվել է 2017 թվական: Ծրագիրն իրականացվել է 2016 թվականից:

Բնակարանային ապահովման խմբի ծրագրերին ՀՀ 2016 թվականի պետական բյուջեից տրամադրվել է 499.7 մլն դրամ՝ ապահովելով 99.9% կատարողական: Միջոցներն ուղղվել են զոհված (մահացած) և առաջին, երկրորդ և երրորդ կարգի հաշմանդամ զինծառայողների անօթևան ընտանիքների բնակարանով ապահովմանը և բնակարանային պայմանների բարելավմանը: Նախորդ տարվա համեմատ բնակարանային ապահովման խմբի ծախսերը գրեթե չեն փոփոխվել:

Այլ դասերին չպատկանող սոցիալական հատուկ արտոնությունների խմբում ՀՀ 2016 թվականի պետական բյուջեի ծախսերը կազմել են 13.7 մլրդ դրամ՝ ապահովելով ծրագրի 99.7% կատարողական և 5.2%-ով գերազանցելով նախորդ տարվա ցուցանիշը, որը հիմնականում պայմանավորված է Հայրենական Մեծ պատերազմի (ՀՄՊ) մասնակիցներին, ՀՄՊ և այլ պետություններում մարտական գործողությունների ընթացքում զոհված զինծառայողների ընտանիքներին տրվող և 25.11.1998թ. ՀՕ-258 օրենքի 34.1 հոդվածի 1-ին մասով սահմանված պարգևավճարների ծախսերի աճով:

2016 թվականի պետական բյուջեից վետերանների պատվովճարներին տրամադրվել է 467.3 մլն դրամ, որը կազմել է ծրագրի 98.9%-ը: Նախորդ տարվա համեմատ տվյալ ծախսերը նվազել են 7.1%-ով՝ պայմանավորված ՀՄ պատերազմի վետերանների թվի նվազման (մահացության) հանգամանքով:

Փախստականների սոցիալական խնդիրների լուծման միջոցառումներին տրամադրվել է 34.6 մլն դրամ՝ ապահովելով 98.6% կատարողական: Տնտեսումն առաջացել է տրանսպորտային նյութերի գնումների գործընթացի արդյունքում: Ծրագրի շրջանակներում հատկացվող գումարը նախատեսվում է փախստականների կացարանների կրած վնասի փոխհատուցման համար: 2015 թվականի համեմատ նշված ծախսերն աճել են 1.9%-ով, որը պայմանավորված է տրանսպորտային նյութերի ձեռքբերման աճով:

Փախստականների կեցության խնդիրների լուծման նպատակով 2016 թվականին տրամադրվել է 20.3 մլն դրամ՝ ապահովելով 89% կատարողական և 7.7%-ով զիջելով նախորդ տարվա ցուցանիշը: Ծրագրի շրջանակներում իրականացվել է ժամանակավոր ապաստան հայցող փախստականների սպասարկումը՝ կացարանի, սննդի և այլ ծառայությունների տրամադրման միջոցով: Ժամանակավոր ապաստան հայցող փախստականների սպասարկումը կատարվում է «Հատուկ կացարան» ՊՈԱԿ-ի

միջոցով: 2016 թվականին նախատեսվել և իրականացվել է 40 ապաստան հայցողների սպասարկումը: Ծախսերի՝ ծրագրից շեղումը և 2015 թվականի համեմատ նվազումը պայմանավորված է տրանսպորտային նյութերի գնումների արդյունքում առաջացած տնտեսումներով, ինչպես նաև կացարանում ապրող սննդամթերք ստացողների միջին թվի նվազմամբ:

ՀՄՊ մասնակիցներին, ՀՄՊ և այլ պետություններում մարտական գործողությունների ընթացքում զոհված զինծառայողների ընտանիքներին տրվող և 25.11.1998թ. ՀՕ-258 օրենքի 34.1 հոդվածի 1-ին մասով սահմանված պարգևավճարները կազմել են 11.6 մլրդ դրամ կամ նախատեսվածի 99.8%-ը: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 6.5%-ով, ինչը պայմանավորված է Հայաստանի Հանրապետության պաշտպանության ժամանակ, Հայաստանի Հանրապետության զինված ուժերում ծառայողական պարտականությունները կատարելիս կամ ծառայության ընթացքում հաշմանդամ դարձած զինծառայողների փաստացի թվի աճով:

Հաշվետու տարվա ընթացքում անօթևան մարդկանց համար ժամանակավոր օթևանի տրամադրման ծառայությունների շրջանակներում 56.1 մլն դրամ պետական աջակցություն է ցուցաբերվել «Հանս Քրիստիան Կոֆոեդ» ՀԿ-ին, որի միջոցով իրականացվել է 100 անօթևանների շուրջօրյա խնամք և սպասարկում: Նշված ծախսերի 96.3%-ով կատարումը պայմանավորված է ծրագրում ընդգրկված անձանց քանակով՝ նախատեսված 100 շահառուի փոխարեն ծրագրում ընդգրկվել են 95 շահառու, ինչպես նաև կոմունալ ծախսերի տնտեսմամբ: Նախորդ տարվա համեմատ տվյալ ծախսերն աճել են 4.8%-ով՝ պայմանավորված 2015 թվականի հուլիսի 1-ից նվազագույն աշխատավարձի բարձրացմամբ:

ՎՏԲ-Հայաստան ՓԲԸ-ում ավանդատու հանդիսացող քաղաքացիների՝ նախկին ԽՍՀՄ խնայբանկի ՀԽՍՀ հանրապետական բանկում մինչև 1993 թվականի հունիսի 10-ը ներդրված դրամական ավանդների դիմաց փոխհատուցման ծախսերը կազմել են 1.5 մլրդ դրամ կամ նախատեսվածի 99.8%-ը: «Հայաստանի Հանրապետության 2016 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքով սահմանվել է, որ ավանդի փոխհատուցման իրավունք ունեն սոցիալապես անապահով տարեց (ընտանիքների անապահովության գնահատման համակարգում հաշվառված «0» անապահովության միավորից բարձր անապահովության միավոր ունեցող մինչև 1931թ. դեկտեմբերի 31-ը ներառյալ ծնված), ՀՀ պաշտպանության մարտական գործողություններին մասնակից և սահմանամեծ բնակավայրերի բնակիչ ավանդատու անձինք: Ծրագրի շրջանակներում 2016 թվականին ավանդի փոխհատուցում է ստացել շուրջ 8500 ավանդատու: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը գրեթե չեն փոփոխվել:

Սոցիալական բնակարանային ֆոնդի սպասարկման ծառայություններին տրամադրվել է 47.8 մլն դրամ՝ ապահովելով 96.1% կատարողական: Շեղումը պայմանավորված է ծրագիրն

իրականացնող «Հանգրվան» ՊՈԱԿ-ի կոմունալ ծախսերի տնտեսմամբ: Ծրագրի շրջանակներում կացարան է տրամադրվել սոցիալապես անապահով և հատուկ խմբերին դասված 6 անձի: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 1.2%-ով, որը պայմանավորված է2015 թվականի հուլիսի 1-ից նվազագույն աշխատավարձի բարձրացմամբ և սոցիալական բնակարանային ֆոնդերի ավելացման հետ կապված՝ պահպանման ծախսերի աճով:

Այլ դասերին չպատկանող սոցիալական պաշտպանության խմբի ծրագրերի գծով 2016 թվականի պետական բյուջեի ծախսերը կազմել են 19.8 մլրդ դրամ կամ նախատեսվածի 91.4%-ը: Շեղումը հիմնականում պայմանավորված է պետական հիմնարկների և կազմակերպությունների աշխատողներին սոցիալական փաթեթով ապահովման համար նախատեսված միջոցների, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության աշխատակազմի պահպանման ծախսերի, ինչպես նաև Սոցիալական ոլորտի բարեփոխումների դրամաշնորհային ծրագրի գծով նախատեսված միջոցների պակաս օգտագործմամբ:

Հաշվետու տարում ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության սոցիալական ապահովության պետական ծառայության և ՀՀ տարածքային կառավարման նախարարության միգրացիոն պետական ծառայության պահպանման ծախսերը կազմել են շուրջ 2 մլրդ դրամ՝ ապահովելով 89.5% կատարողական: Շեղումը պայմանավորված է տնտեսումներով, ինչի արդյունքում 2015 թվականի համեմատ նշված ծախսերը նվազել են 2.9%-ով:

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության աշխատակազմի պահպանման ծախսերը կատարվել են 95.5%-ով և կազմել շուրջ 2.1 մլրդ դրամ: Ծրագրից շեղումը կապված է նախարարության աշխատակազմի կառուցվածքային և առանձնացված ստորաբաժանումների պահպանման ծախսերի տնտեսման հետ: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը նվազել են 7.1%-ով:

Հաշվետու տարում 503.5 մլն դրամ տրամադրվել է սոցիալական օգնության ծառայությունների գործունեության կազմակերպման բնագավառում պետության կողմից Երևանի համայնքի ղեկավարին պատվիրակված լիազորությունների ֆինանսավորման նպատակով, որն իրականացվել է 99.5%-ով: 2015 թվականի նկատմամբ նշված ծախսերն էական փոփոխություն չեն կրել:

Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող սոցիալական պաշտպանության ոլորտի վարչարարության երկրորդ վարկային ծրագրի շրջանակներում օգտագործվել է 845.7 մլն դրամ 36.5%-ով գերազանցելով նախատեսված ցուցանիշը, ինչը պայմանավորված է 2015 թվականից հետաձգված մատակարարումների և աշխատանքների դիմաց կատարված վճարումներով:

Ծրագրի նպատակներն ուղղակիորեն կապված են մարդկային զարգացման խթանման և սոցիալական ապահովության համակարգերի ու հանրային հատվածի հիմնական գործառույթների բարելավման հետ: Ծրագիրը բաղկացած է հետևյալ բաղադրիչներից.

- Ինտեգրված սոցիալական ծառայությունների համակարգի ներդրում,
- Աշխատանքի և զբաղվածության ռազմավարություն,
- Կենսաթոշակային համակարգի արդիականացում,
- Սոցիալական աջակցության և մոնիտորինգի համակարգի բարելավում,
- Ծրագրի կառավարում, մոնիտորինգ և գնահատում:

2016 թվականին կնքված պայմանագրերով ընթանում են Վանաձորի, Ամասիայի, Թալինի, Ստեփանավանի, Երևանի Մալաթիա վարչական շրջանի համալիր սոցիալական կենտրոնների վերանորոգման և վերակառուցման աշխատանքները: Ծրագրի շրջանակներում գնվել են համակարգիչներ ու այլ սարքեր ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության (ԱՍՀՆ) և ոլորտի այլ պետական կազմակերպությունների կարիքների համար: Կնքվել են նաև խորհրդատական ծառայությունների մատուցման մի շարք պայմանագրեր կենսաթոշակային համակարգի արդիականացման, ԱՍՀՆ վերլուծական, մոնիթորինգի ու գնահատման կարողությունների հզորացման ոլորտում: Ծրագրի իրականացման ժամկետն է մինչև 2018 թվականի դեկտեմբերի 31-ը:

ՀՀ տարածքային կառավարման նախարարության միգրացիոն պետական ծառայության և Նիդերլանդների անվտանգության ու արդարադատության նախարարության միջև կնքված՝ Նիդերլանդներից վերադարձող Հայաստանի քաղաքացիներին վերաինտեգրման օգնության շրջանակներում խորհրդատվության և ուղղորդման ծառայության մատուցման մասին դրամաշնորհային համաձայնագրի շրջանակներում 2016 թվականի ծախսերը կազմել են 28.6 մլն դրամ: Ծրագրի 93.5% կատարողականը պայմանավորված է վերադարձած անձանց փաստացի քանակով: Ծրագիրը նախատեսված է Նիդերլանդներից հարկադիր վերադարձող Հայաստանի քաղաքացիների վերաինտեգրման շրջանակներում փոքր բիզնես սկսելուն կամ աշխատաշուկա մուտք գործելուն աջակցության, ուսումնական կամ մասնագիտական վերապատրաստման, սոցիալական, իրավական, բժշկական աջակցության, ժամանակավոր կացարանի տրամադրման, օդանավակայանում դիմավորման և անահատական այլ կարիքների համար: 2016 թվականին ծրագրին դիմող բոլոր շահառուները բավարարվել են: Ծրագրի շրջանակներում օգտագործված միջոցներն ուղղվել են աշխատավարձերի, նպաստների և այլ ծախսերի վճարմանը: Նախորդ տարվա համեմատ տվյալ ծախսերն աճել են 1.3%-ով, որը պայմանավորված է տրանսպորտային նյութերի ծախսերի աճով:

ՀՀ տարածքային կառավարման նախարարության միգրացիոն պետական ծառայության և ՄԱԿ-ի փախստականների գծով գերագույն հանձնակատարի Հայաստանյան գրասենյակի միջև կնքված ենթահամաձայնագրերի շրջանակներում հատկացվող ֆինանսական աջակցության հաշվին կատարված ծախսերը կազմել են 9.3 մլն դրամ՝ ապահովելով 100% կատարողական: Նախորդ տարվա համեմատ տվյալ ծախսերը նվազել են 56.8%-ով կամ 22.1 մլն դրամով, որը հիմնականում պայմանավորված է ծրագրի շրջանակներում դոնորի կողմից հատկացված միջոցներով: 2016 թվականին այս ծրագրի շրջանակներում օգտագործված միջոցներն ուղղվել են աշխատավարձի, գործուղումների, «Հատուկ Կացարան» ՊՈԱԿ–ում ապաստան հայցողների կոմունալ վճարների, «Հանրակացարաններ» ՊՈԱԿ–ի ինտեգրման տան վերանորոգման, կոմունալ վճարների գծով ծախսերին:

Այլ դասերին չպատկանող՝ սոցիալական պաշտպանությանը տրամադրվող օժանդակ ծառայությունների դասի ծախսերը կազմել են շուրջ 14.4 մլրդ դրամ կամ նախատեսվածի 89.2%-ը, որը հիմնականում պայմանավորված է պետական հիմնարկների և կազմակերպությունների աշխատողներին սոցիալական փաթեթով ապահովման համար նախատեսված միջոցների պակաս օգտագործմամբ: Նախորդ տարվա համեմատ տվյալ դասի ծախսերը նվազել են 4.9%-ով՝ հիմնականում պայմանավորված ժամանակավոր անաշխատունակության դեպքում նպաստի վճարման ծախսերի նվազմամբ:

2016 թվականին փախստականների և նրանց ընտանիքների վերաբերյալ տեղեկատվության կուտակման նպատակով տրամադրված 38.6 մլն դրամն օգտագործվել է «Համակարգչային կենտրոն» ՊՈԱԿ-ից փախստականների վերաբերյալ արխիվային տեղեկատվության ձեռքբերման նպատակով՝ ապահովելով 99.4% կատարողական: 2015 թվականի համեմատ նշված ծախսերն էական փոփոխության չեն ենթարկվել:

Հաշվետու տարում պետական հիմնարկների և կազմակերպությունների աշխատողներին սոցիալական փաթեթով ապահովման ծրագրին ՀՀ պետական բյուջեից տրամադրվել է ավելի քան 9.5 մլրդ դրամ՝ կազմելով նախատեսվածի 90.7%-ը, որը պայմանավորված է շահառուների փաստացի թվով: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 3.3%-ով:

Բժշկասոցիալական փորձաքննության (ԲՍՓ) ձևաթղթի տպագրության ծառայությունների ձեռքբերման նպատակով հաշվետու տարվա ընթացքում տրամադրվել է 3.5 մլն դրամ: Նշված ծախսերը կատարվել են 95.6%-ով՝ պայմանավորված մրցույթի արդյունքում ձևավորված գներով: 2015 թվականի համեմատ նշված ծախսերն աճել են 2%-ով՝ պայմանավորված միավորի արժեքի աճով:

«ՍԾՏԳ ձևաթղթերի տպագրության ծառայություններ» ծրագրով ՀՀ 2016 թվականի պետական բյուջեով նախատեսվել էր հատկացնել 13.9 մլն դրամ: Սակայն միջոցները չեն օգտագործվել՝

գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ հայտարարված մրցույթը ուշ կայանալու հանգամանքով պայմանավորված:

Մեթոդաբանական ձեռնարկների մշակման, հետազոտությունների անցկացման և սոցիալական ապահովության ոլորտի կադրերի վերապատրաստման նպատակով պետական բյուջեից տրամադրվել է 89.7 մլն դրամ՝ ապահովելով 99.6% կատարողական: Ծրագրի շրջանակներում «Աշխատանքի և սոցիալական հետազոտությունների ազգային ինստիտուտ» ՊՈԱԿ-ի միջոցով կատարվել են 7 թեմաներով հետազոտություններ, մշակվել ձեռնարկներ և կազմակերպվել սոցիալական ոլորտի 700 աշխատողների մասնագիտական ուսուցում: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն էական փոփոխություն չեն կրել:

Կենսաթոշակային ապահովության, ծերության, հաշմանդամության, կերակրողին կորցնելու դեպքում սոցիալական նպաստների, պարգևավճարների, պատվովճարների և այլ ծրագրերի վճարման հետ կապված ծառայությունների ձեքբերմանը տրամադրվել է 1.5 մլրդ դրամ՝ ապահովելով 89.5% կատարողական: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերի 14.4%-ով նվազումը հիմնականում պայմանավորված է 11 ամսվա գումարները վճարելու, ինչպես նաև վճարման հետ կապված ծառայությունների ընդհանուր ծախսերում փոստային ծառայությունների ծախսերի տեսակարար կշռի նվազման հանգամանքներով:

Հանրային իրազեկման միջոցառումների իրականացմանը հաշվետու տարվա ընթացքում տրամադրվել է 24.1 մլն դրամ՝ ապահովելով 99.6% կատարողական: Ծրագրի շրջանակներում պատրաստվել ու հեռարձակվել է 25 հեռուստահաղորդում, տպագրվել են 16500 տպագրական նյութեր՝ բուկլետներ, պաստառներ և տեղեկագիր, ձեռք են բերվել 1800 լուսանկարչական ծառայություններ, 750 տպագրական ծառայություններ, տպագրվել են 1000 բացիկ և 3000 սմ^2 հոդված տպագիր մամուլում: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 13.2%-ով՝ պայմանավորված հանրային իրազեկման աշխատանքների ավելացմամբ:

Ժամանակավոր անաշխատունակության դեպքում նպաստի վճարման ծախսերը կազմել են 2.2 մլրդ դրամ՝ ապահովելով 100% կատարողական: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը նվազել են 18.2%-ով՝ հիմնականում պայմանավորված այն հանգամանքով, որ հաշվետու տարում վճարումները կատարվել են 10 ամսվա՝ նախորդ տարվա 11 ամսվա դիմաց, ինչպես նաև օրենսդրական համապատասխան փոփոխությունների (սահմանափակումների) հանգամանքով («Ժամանակավոր անաշխատունակության և մայրության նպաստների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին ՀՀ օրենք 22.12.2014թ. N 206-Ն ՀՀ օրենքին համապատասխան):

Ընտանիքի կենսամակարդակի բարձրացմանն ուղղված նպաստների տրամադրման հետ կապված վարչարարական ծառայություններին տրամադրվել է 18.1 մլն դրամ՝ ապահովելով 98.5%

կատարողական, որը տնտեսումների արդյունք է: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 3.9%-ով՝ պայմանավորված կոմունալ ծախսերի աճով:

Ժամանակավոր անաշխատունակության թերթիկների տպագրության ծախսերը կազմել են 7.5 մլն դրամ՝ 69.4%-ով ապահովելով ծրագրի կատարումը և 26.7%-ով գերազանցելով նախորդ տարվա ցուցանիշը՝ պայմանավորված ձևաթղթերի փաստացի պահանջով:

Կենսաթոշակի նշանակման և վճարման համար անհրաժեշտ ձևաթղթերի տպագրությանը տրամադրվել է 498 հազար դրամ՝ կազմելով նախատեսվածի 24.9%-ը և 1.2%-ով զիջել նախորդ տարվա ցուցանիշը: Տնտեսումը պայմանավորված է որոշ ձևաթղթերի գծով պահանջի նվազմամբ, ինչպես նաև տպագրությունն ավելի մատչելի գնով իրականացնելու հանգամանքով:

Թրաֆիքինգի զոհերին սոցիալ-հոգեբանական վերականգնողական ծառայությունների մատուցման նպատակով նախատեսված միջոցներն օգտագործվել են 100%-ով և կազմել շուրջ 18.8 մլն դրամ: Ծրագրի շրջանակներում սոցիալ-հոգեբանական ծառայություններ են մատուցվել 32 շահառուի: Ծրագիրն իրականացվում է «Ամքոր» ՀԿ-ի հետ համաֆինանսավորման սկզբունքով, փոխհատուցվում են 14 աշխատողների աշխատավարձերը և տարածքի վարձակալության ծախսերը: Նախորդ տարվա համեմատ այս ծախսերն աճել են 3%-ով՝ պայմանավորված 2015 թվականի հուլիսի 1-ից նվազագույն աշխատավարձի բարձրացմամբ:

Հաշվետու տարում շուրջ 7 մլն դրամ է տրամադրվել զինվորական կենսաթոշակառուների տեղեկատվական համակարգի ներդրման, վարման, սպասարկման և տեղեկատվության տրամադրման ծառայություններին, որոնք կատարվել են 99.3%-ով: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը չեն փոփոխվել:

2016 թվականին պետական բյուջեից սոցիալական պաշտպանության ոլորտի տեղեկատվական համակարգի սպասարկման (կատարելագործման), շահագործման և տեղեկատվության տրամադրման ծառայությունների ծրագրի շրջանակներում նախատեսված միջոցներն ամբողջությամբ օգտագործվել են՝ կազմելով 318.8 մլն դրամ: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը գրեթե չեն փոփոխվել:

Կենսաթոշակառուների հաշվառման միասնական տեղեկատվական համակարգի սպասարկման ծառայությունների ձեռքբերման ծախսերն ամբողջությամբ կատարվել են՝ կազմելով 42 մլն դրամ: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը չեն փոփոխվել:

Հաշվետու տարում սոցիալական ապահովության պետական ծառայության տեղեկատվական ներքին պորտալի սպասարկման համար նախատեսված միջոցները նույնպես ամբողջությամբ օգտագործվել են՝ կազմելով 18.2 մլն դրամ և պահպանվելով նախորդ տարվա մակարդակին:

«ՎՏԲ-Հայաստան» ՓԲԸ-ում ավանդատու հանդիսացող քաղաքացիների, որպես նախկին ԽՍՀՄ Խնայբանկի ՀԽՍՀ հանրապետական բանկում մինչև 1993 թվականի հունիսի 10-ը

ներդրված դրամական ավանդների դիմաց փոխհատուցման վճարման հետ կապված ծառայությունների համար նախատեսված միջոցները նախատեսված ծավալով օգտագործվել են՝ կազմելով 17.8 մլն դրամ: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը չեն փոփոխվել:

Զոհված՝ հետմահու Հայաստանի ազգային հերոսների և Մարտական խաչ շքանշանով պարգևատրված անձի ընտանիքի անդամներին տրվող պարգևավճարի վճարման հետ կապված ծառայությունների ծախսերը կազմել են 679 հազար դրամ կամ նախատեսվածի 44%-ը: Տնտեսումը, ինչպես նաև նախորդ տարվա համեմատ նշված ծախսերի 9%-ով նվազումը պայմանավորված է վճարումների որոշակի մասը բանկային համակարգով (անվճար) իրականացնելու հանգամանքով:

Ընտանիքի կենսամակարդակի բարձրացմանն ուղղված նպաստների վճարման հետ կապված ծառայությունների ծրագրի շրջանակներում տրամադրվել է 441.9 մլն դրամ՝ ապահովելով 98.8% կատարողական: Տնտեսումը պայմանավորված է փաստացի շահառուների տարեկան միջին թվաքանակը նախատեսվածից պակաս լինելու հանգամանքով: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը գրեթե չեն փոփոխվել:

Մինչև 2 տարեկան երեխայի խնամքի նպաստի վճարման հետ կապված ծառայությունների ձեռքբերման նպատակով օգտագործվել է շուրջ 23.1 մլն դրամ՝ ապահովելով 96.6% կատարողական: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը նվազել են 38.1%-ով:

Երեխայի ծննդյան միանվագ նպաստի վճարման հետ կապված ծառայությունների ծրագրի շրջանակներում տրամադրվել է 4.7 մլն դրամ՝ ապահովելով 100% կատարողական: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը նվազել են 91.4%-ով, որը պայմանավորված է օրենսդրական փոփոխությունների արդյունքում վճարումները 2016 թվականի փետրվար ամսից բանկային համակարգի միջոցով անվճար իրականացնելու հանգամանքով:

Սեզոնային զբաղվածության խթանման միջոցով գյուղացիական տնտեսության աջակցության իրականացման ապահովմանը տրամադրվել է 21.9 մլն դրամ՝ ապահովելով 97.4% կատարողական: Շեղումը պայմանավորված է Գյուղատնտեսության աջակցության մարզային կենտրոնների (ԳԱՄԿ) հետ կնքված պայմանագրերով, ինչպես նաև այցելությունների ծախսերը նախատեսվածից պակաս իրականացնելու հանգամանքով: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 31%-ով, որը պայմանավորված է ԳԱՄԿ-երի հետ կնքված պայմանագրերի ավելացմամբ: Սույն ծրագիրը հանդիսանում է Սեզոնային զբաղվածության խթանման միջոցով գյուղացիական տնտեսությանն աջակցության ծրագրի բաղկացուցիչ մասը:

Վարձատրվող հասարակական աշխատանքների կազմակերպման միջոցով գործազուրկների ժամանակավոր զբաղվածության իրականացման ապահովման նպատակով օգտագործվել է 400.2 հազար դրամ՝ կազմելով ծրագրի 88.9%-ը: Նախորդ տարվա համեմատ տվյալ ծախսերը փոփոխություն չեն կրել:

Կենսաթոշակային համակարգի հանրային իրազեկման աշխատանքներին հաշվետու տարում տրամադրվել է 47.6 մլն դրամ՝ ապահովելով 89% կատարողական, որը պայմանավորված է վճարումները 11 ամսվա համար իրականացնելու հանգամանքով: Ծրագիրը նախատեսվել է 2016 թվականից:

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության արտաբյուջետային միջոցների հաշվին իրականացվող Սոցիալական ոլորտի բարեփոխումների դրամաշնորհային ծրագրի շրջանակներում օգտագործվել է 9.8 մլն դրամ կամ նախատեսված միջոցների 2.9%-ը: Ծրագիրն իրականացվում է հետևյալ բաղադրիչներով.

1. Հայաստանում ինտեգրված սոցիալական ծառայությունների հզորացում, որի շրջանակներում ակնկալվող հիմնական արդյունքն է՝ ՀՀ-ում ինտեգրված սոցիալական ծառայությունների բարեփոխումների շրջանակներում սոցիալական աշխատողների դերի ու գործառույթների ձևավորումը, ինստիտուցիոնալացումը և ամրապնդված կարողությունները: Սույն բաղադրիչի իրականացման համար կնքվել է պայմանագիր նախարարության համակարգի «ՀՀ աշխատանքի և սոցիալական հետազոտությունների ազգային ինստիտուտ» ՊՈԱԿ-ի հետ: Տարվել են նախապատրաստական աշխատանքներ՝ մշակվել են համապատասխան գործողությունների ծրագրեր, տեխնիկական առաջադրանքներ, որոնք քննարկվել և համաձայնեցվել են ԱՄՆ ՄԶԳ-ի հետ: Ծրագիրը կիրականցվի 2017 թվականին:

2. «Այ Բի Էմ» Կուրամ համակարգի ներդրում, որի նպատակով նախատեսվել է «Նորք» սոցիալական ծառայությունների տեխնոլոգիական և իրազեկման կենտրոն» հիմնադրամի միջոցով իրականացնել համակարգի ներդրման լուծումների փուլի անցկացման աշխատանքներ: «Այ Բի Էմ Արևելյան Եվրոպա և Ասիա» ընկերության հետ պայմանագրի դրույթների շուրջ բանակցությունների արդյունքում պայմանագիրը ստորագրվել է 2016 թվականի դեկտեմբերի 28-ին, որը կիրականցվի 2017 թվականին:

3. Երեխաների պաշտպանության բարեփոխումների իրականացմանն օժանդակելու նպատակով նախատեսվում է ստեղծել համայնքային այլընտրանքային ծառայություններ՝ շուրջօրյա ռեժիմով գործող թիրախային հաստատություններից դուրս բերված երեխաներին անհրաժեշտ ծառայությունների տրամադրման, ինչպես նաև հաստատություններ նոր երեխաների մուտքը կանխարգելելու նպատակով: ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության «Երևանի երեխաների խնամքի և պաշտպանության N 2 գիշերօթիկ հաստատություն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը վերանվանվել է «Երեխաների և ընտանիքների աջակցության կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության: Որպես նոր քաղաքականություն՝ նախատեսվում է նախարարության համակարգի գիշերօթիկ հաստատությունները վերանվանել երեխաների և ընտանիքների աջակցության կենտրոններ: 2016 թվականին տրվեց ծրագրի

մեկնարկը: Ներկայումս ընթանում են աշխատանքները շենքային պայմանների, աշխատասենյակների ճիշտ տեղաբաշխման ուղղությամբ, որից հետո կիրականացվեն նախագծանախահաշվային փաստաթղթերի ձեռքբերման աշխատանքները և գնումների մասին ՀՀ օրենսդրությանը համապատասխան կիրականացվի շինարարական աշխատանքներն իրականացնող կազմակերպության ընտրությունը: Ծրագիրը նախատեսվում է իրականացնել 2017 թվականին:

Արտաբյուջետային միջոցների հաշվին իրականացվող ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության «Երևանի թիվ 1 տուն-ինտերնատ» ՊՈԱԿ-ի տարածքում անկողնային խնամք ստացող անձանց սպասարկման նպատակով կառուցվելիք նոր մասնաշենքի շինարարական աշխատանքների իրականացման դրամաշնորհային ծրագրի շրջանակներում նախատեսվել էին 240.2 մլն դրամ ծախսեր, որը, սակայն, չի օգտագործվել: ՀՀ կառավարության 2014 թվականի ապրիլի 17-ի թիվ 15.29 արձանագրային որոշմամբ հավանության է արժանացել և 2014 թվականի մայիսի 7-ին Երևան քաղաքում ստորագրվել է «ՀՀ կառավարության և Քուվեյթի Պետության կառավարության միջև ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության ենթակայությամբ գործող «Երևանի թիվ 1 տուն-ինտերնատ» պետական ոչ առևտրային կազմակերպությունում շինարարական աշխատանքների կատարման համար Քուվեյթի Պետության կառավարության կողմից նվիրաբերության մասին» պայմանագիրը, որի համաձայն Երևանի թիվ 1 տուն-ինտերնատի տարածքում կառուցվել է նոր մասնաշենք, որն ապահովելու է շուրջ 70 անկողնային խնամքի կարիք ունեցողների խնամքը: Շինարարական աշխատանքներն ամբողջությամբ ավարտված են: ՀՀ-ում Քուվեյթի Պետության դեսպանի հետ նախկինում ունեցած տարբեր քննարկումների և բանակցությունների, ինչպես նաև վերոնշյալ պատվիրակության այցի արդյունքում ձեռք է բերվել պայմանավորվածություն առ այն, որ Քուվեյթի Պետությունը կաջակցի նաև մասնաշենքի ամբողջական կահավորման (ներառյալ բժշկական սարքավորումները և պարագաները), նոր տրանսպորտային միջոցների ձեռքբերման և տարածքի բարեկարգման հարցում, ինչը հնարավորություն կտա ապահովել խնամքի, խնամվողների տեղաշարժման և տեղափոխման համապատասխան պայմաններ՝ միջազգային չափանիշներին համապատասխան: Գնումների գործընթացով պայմանավորված՝ ծրագիրը կիրականացվի 2017 թվականին:

<u>Հիմնական բաժիններին չդասվող պահուստային ֆոնդեր</u>

ՀՀ 2016 թվականի պետական բյուջեով նախատեսված ՀՀ կառավարության պահուստային ֆոնդից օգտագործվել է ավելի քան 15.1 մլրդ դրամ կամ նախատեսվածի 94%-ը: Տրամադրված միջոցներից շուրջ 12.9 մլրդ դրամն ուղղվել է ընթացիկ ծախսերին՝ կազմելով նախատեսվածի

96.1%-ը, 2.3 մլրդ դրամը՝ ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերին՝ ապահովելով 83.9% կատարողական: 2015 թվականի համեմատ ՀՀ կառավարության պահուստային ֆոնդի ծախսերը նվազել են 49.4%-ով:

Հույժ գաղտնի

ՀՀ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՊԱԿԱՍՈՒՐԴԸ

ՀՀ 2016 թվականի պետական բյուջեն կատարվել է շուրջ 278 մլրդ դրամ պակասուրդով՝ 54%-ով գերազանցելով տարեկան ճշտված ծրագիրը: Շեղումը հիմնականում պայմանավորված է գանձապետական պարտատոմսերի հաշվին պակասուրդի ֆինանսավորման բարձր ցուցանիշով՝ եկամուտների համեմատ ծախսերի առավել բարձր կատարողականի հետ կապված, ինչպես նաև արտաքին վարկերի գծով նախատեսվածից ավել ստացված միջոցներով: Նշենք, որ 2015 թվականին ՀՀ պետական բյուջեն կատարվել էր 241.3 մլրդ դրամ պակասուրդով, այսինքն՝ 2015 թվականի համեմատ պակասուրդի մեծությունն աճել է 15.2%-ով՝ պայմանավորված եկամուտների նկատմամբ ծախսերի առաջանցիկ աճով: Պակասուրդ/ՀՆԱ ցուցանիշը 2016 թվականին կազմել է 5.5%՝ կանխատեսված 3.5%-ի և 2015 թվականի 4.8%-ի դիմաց: 2015 թվականի համեմատ զգալիորեն փոխվել է պակասուրդի ֆինանսավորման աղբյուրների կառուցվածքը: Եթե նախորդ տարի ֆինանսավորման ներքին և արտաքին աղբյուրների հաշվին ֆինանսավորվել էր պակասուրդի համապատասխանաբար 4.7 և 95.3 տոկոսը, ապա 2016 թվականին նշված ցուցանիշները կազմել են 38.6 և 61.4 տոկոս:

Հաշվետու տարվա պետական բյուջեի պակասուրդի ֆինանսավորման *ներքին աղբյուրները* կազմել են 107.2 մլրդ դրամ՝ նախատեսված 48.3 մլրդ դրամի դիմաց: Նշենք, որ նախորդ տարի նշված ցուցանիշը կազմել էր 11.2 մլրդ դրամ:

Ներքին աղբյուրներում շուրջ 171 մլրդ դրամ են կազմել *փոխառու զուտ միջոցները*՝ նախատեսված 53.8 մլրդ դրամի դիմաց, որը պայմանավորված է գանձապետական պարտատոմսերից մուտքերի լրացուցիչ տեղաբաշխումներով: Ներքին պետական պարտքի կառավարման նպատակների շրջանակներում 2016 թվականի ծրագրով նախատեսվում էր գանձապետական պարտատոմսերի հաշվին բյուջեի պակասուրդը ֆինանսավորել 42 մլրդ դրամով, որը տարվա ընթացքում ճշտվեց՝ սահմանվելով 53.8 մլրդ դրամ: Հաշվետու տարվա ընթացքում պետական գանձապետական պարտատոմսերի հաշվին պակասուրդը փաստացի ֆինանսավորվել է 171 մլրդ դրամով՝ 117.2 մլրդ դրամով գերազանցելով ծրագրային ցուցանիշը, ընդ որում նշված գերազանցումը կուտակվել է աստիճանաբար՝ պայմանավորված հետևյալ գործոններով.

1. Պետական բյուջեի հարկային մուտքերի ծրագրի թերակատարման իրական ռիսկերով: Սկսած մայիսից փաստացի հարկային մուտքերն ունեցել են ծրագրային ցուցանիշից բացասական շեղում, որը գնալով խորանում էր.

2. Արտաքին աղբյուրներից նախատեսված բյուջետային աջակցության վարկերը տարեվերջին չստանալու ռիսկով.

3. Ընդլայնողական հարկաբյուջետային քաղաքականություն իրականացնելու անհրաժեշտությամբ:

Ստեղծված իրավիճակում բանկային համակարգում առաջացած էական չափերի հասնող ավելցուկային իրացվելիությունը լրջորեն բարձրացրել էր պետական պարտատոմսերի նկատմամբ պահանջարկը, ինչը հնարավորություն ընձեռեց լրացուցիչ պարտք ներգրավել՝ իջնող տոկոսադրույքի պայմաններում: Ընդհանուր առմամբ տեղաբաշխվել են 319.5 մլրդ դրամի պարտատոմսեր, և տեղաբաշխումից ստացված մուտքը կազմել է 300.3 մլրդ դրամ, իսկ պարտատոմսերի մարմանը և հետգնմանն ուղղվել է 129.3 մլրդ դրամ: Արդյունքում հաշվետու ժամանակահատվածի վերջի դրությամբ շրջանառության մեջ գտնվող պետական գանձապետական պարտատոմսերի ծավալը նախորդ տարվա համեմատ աճել է 58.5%-ով կամ 187.6 մլրդ դրամով:

2016 թվականին ներքին պետական պարտքը բնութագրող հիմնական ցուցանիշները հետևյալն են. շրջանառության մեջ եղած պետական գանձապետական պարտատոմսերի եկամտաբերությունը կազմել է 13.15%՝ 2015 թվականի 13.99%-ի դիմաց, պարտքի ժամկետայնությունը՝ 2208 օր (2015թ.՝ 2065 օր), մարման բեռի բաշխվածությունը մինչև 2036 թվականն է: Տարեվերջին շրջանառության մեջ եղած ՀՀ պետական գանձապետական պարտատոմսերի ծավալն անվանական արժեքով կազմել է 508.3 մլրդ դրամ (2015թ.՝ 320.8 մլրդ դրամ): Ընդ որում, շրջանառության մեջ գտնվող կարճաժամկետ պարտատոմսերի ծավալը կազմել է 78.8 մլրդ դրամ կամ 15.5% (2015թ.՝ 21.5 մլրդ դրամ կամ 6.7%), միջին ժամկետայնության պարտատոմսերինը՝ 212.7 մլրդ դրամ կամ 41.8% (2015թ՝ 153.9 մլրդ դրամ կամ 48.0%), երկարաժամկետ պարտատոմսերինը՝ 214.7 մլրդ դրամ կամ 42.2% (2015թ.՝ 144.4 մլրդ դրամ կամ 45.0%), խնայողական պարտատոմսերինը՝ 2.15 մլրդ դրամ կամ 0.4% (2015թ.՝ 1.0 մլրդ դրամ կամ 0.3%):

2016 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ շրջանառության մեջ գտնվող գանձապետական պարտատոմսերի 98.4%-ի (500.3 մլրդ դրամ) սեփականատերերը ռեզիդենտներ են, իսկ մնացած 1.6%-ինը (8.0 մլրդ դրամ)՝ ոչ ռեզիդենտներ: Ընդ որում 2015 թվականի տարեվերջի համեմատությամբ ոչ ռեզիդենտների կշիռն ավելացել է 1.4 տոկոսային կետով՝ 0.2%-ից հասնելով 1.6%-ի:

2016 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ ներքին պետական պարտքն անվանական արժեքով կազմել է 550.0 մլրդ դրամ, այդ թվում՝

- ռեզիդենտների կողմից ձեռք բերված պետական գանձապետական պարտատոմսերի ծավալը կազմել է 500.3 մլրդ դրամ.
- ռեզիդենտների կողմից ձեռք բերված արտարժութային պետական պարտատոմսերի ծավալը կազմել է 46.3 մլրդ դրամ.

- ՀՀ կառավարության կողմից տրամադրված ներքին երաշխիքների ծավալը կազմել է շուրջ 3.4 մլրդ դրամ:

Մուրհակների մարման նպատակով նախատեսված 17.6 մլն դրամի վճարումներն ամբողջությամբ կատարվել են:

Հաշվետու տարվա պետական բյուջեի պակասուրդի ֆինանսավորման աղբյուրներում *ներքին ֆինանսական զուտ ակտիվները* կազմել են -63.8 մլրդ դրամ՝ տարեկան ճշտված ծրագրով նախատեսված -5.5 մլրդ դրամի դիմաց:

Բաժնետոմսերի և կապիտալում այլ մասնակցության ձեռքբերման նպատակով 2016 թվականին նախատեսված 7.8 մլրդ դրամի դիմաց բաժնետիրական ընկերությունների կանոնադրական կապիտալի ավելացման համար հատկացվել է 7.7 մլրդ դրամ: Ծրագրից շեղումը պայմանավորված է ԱՄՆ դոլարի փոխարժեքի փոփոխությամբ:

2016 թվականին ՀՀ ռեզիդենտներին պետական բյուջեից տրամադրվել են 49 մլրդ դրամի վարկեր՝ կազմելով նախատեսվածի 116.8%-ը: Ծրագրի գերազանցումն առաջացել է արտաքին աղբյուրներից ստացվող վարկային և դրամաշնորհային նպատակային միջոցների հաշվին իրականացվող ծրագրերի շրջանակներում տնտեսավարող սուբյեկտներին տրամադրվող վարկերի գծով: Մասնավորապես՝ ՌԴ աջակցությամբ իրականացվող Հայկական ԱԷԿ-ի N2 էներգաբլոկի շահագործման նախագծային ժամկետի երկարացման ծրագրի շրջանակներում տրամադրվել են 11.1 մլրդ դրամի վարկային միջոցներ՝ կազմելով նախատեսվածի 187.4%-ը, ինչը պայմանավորված է այն հանգամանքով, որ 2015 թվականին կատարված աշխատանքների որոշ մասի վճարումները իրականացվել են 2016 թվականին: Ծրագրի շրջանակներում կատարված վճարումներն իրականացվել են էներգաբլոկի ուսումնասիրման խորհրդատվական ծառայությունների, կատարված շինարարական աշխատանքների, մատակարարված սարքավորումների և սահմանված կարգով նախատեսված հարկերի ու տուրքերի դիմաց:

ՎԶՄԲ աջակցությամբ իրականացվող էներգետիկայի ոլորտի ֆինանսական առողջացման վարկային ծրագրի շրջանակներում տրամադրվել է 11.2 մլրդ դրամ կամ նախատեսվածից 50%-ով ավելին, ինչը պայմանավորված է վարկային համաձայնագրով նախատեսված աշխատանքների կատարման դիմաց ՀԲ-ի կողմից առաջանցիկ վճարումներ կատարելու հանգամանքով (ժամանակացույցով 2017-2019թթ. նախատեսված աշխատանքները կատարվել են 2016 թվականին): 2016 թվականի մայիսի 12-ին ՎԶՄԲ-ի և ՀՀ կառավարության միջև ստորագրված վարկային համաձայնագրի շրջանակներում «Էներգետիկայի ոլորտի ֆինանսական առողջացման» ծրագրով նախատեսվել է 2016-2020 թվականների ընթացքում ՎԶՄԲ-ից ներգրավել 30 մլն ԱՄՆ դոլար վարկ՝ «ՀԱԷԿ» և «Երևանի ՋԷԿ» ՓԲԸ-ների առևտրային վարկերի գծով ժամկետանց պարտքի մարման համար: Ծրագրով նախատեսված ցուցանիշների կատարման դիմաց 2016 թվականի հունիս-

դեկտեմբեր ամիսների ընթացքում ՎԶՄԲ-ի կողմից տրամադրվել է 23.7 մլն ԱՄՆ դոլար վարկ (16.9 մլն դոլարը՝ «Երևանի ՋԷԿ» ՓԲԸ-ին, 6.7 մլն ԱՄՆ դոլարը «ՀԱԷԿ» ՓԲԸ-ին), որն ուղղվել է ընկերությունների առևտրային վարկերի մարմանը և բնական գազի գծով պարտքի մասնակի մարմանը:

ՎԶՄԲ աջակցությամբ իրականացվող էլեկտրամատակարարման հուսալիության ծրագրի շրջանակներում տրամադրվել է 4 մլրդ դրամ կամ նախատեսվածի 78.1%-ը, ինչը պայմանավորված է այն հանգամանքով, որ կադաստրային քարտեզների անճշտությունների պատճառով չի հաջողվել ժամանակին ձեռք բերել էլեկտրահաղորդման օդային գծերի հենարանների կառուցման համար անհրաժեշտ հողակտորները, որի պատճառով հետաձգվել են կառուցման աշխատանքները: Ծրագրի նպատակն է բարելավել էլեկտրացանցի հուսալիությունը, թողունակությունը և նվազեցնել էլեկտրաէներգիայի կորուստները: Այն կարևոր նշանակություն ունի հանրապետությունում հուսալի էլեկտրամատակարարում ապահովելու գործում: 2016 թվականի ընթացքում նշված վարկային միջոցների հաշվին իրականացվել են վճարումներ ծրագրի տեխնիկական հսկողության ծառայությունների, կապալառուի իրականացրած շինարարական աշխատանքների, նախագծման, սարքերի ու սարքավորումների ներկրման, անհրաժեշտ հողերի ձեռք բերման, ինչպես նաև սահմանված կարգով նախատեսված հարկերի և տուրքերի դիմաց:

ՎԶՄԲ աջակցությամբ իրականացվող էլեկտրամատակարարման հուսալիության ծրագրի լրացուցիչ ֆինանսավորման ծրագրի շրջանակներում տրամադրվել են 2.6 մլրդ դրամի վարկային միջոցներ՝ կազմելով նախատեսվածի 77%-ը: Շեղումը պայմանավորված է միջազգային մրցույթի արդյունքում գլխավոր կապալառուների հետ նախատեսվածից ցածր գներով պայմանագրերի կնքմամբ և դրանց համապատասխան կանխավճարների վճարմամբ: Ծրագրի շրջանակներում նախատեսվում է վերակառուցել «Հաղթանակ» 220 կՎ, «Չարենցավան-3» և «Վանաձոր-1» 110 կՎ ենթակայանները: Ծրագրի նպատակն է բարելավել էլեկտրացանցի հուսալիությունը և նվազեցնել էլեկտրաէներգիայի կորուստները: Ծրագրի շրջանակներում կատարված վճարումներն իրականացվել են ենթակայանների վերակառուցման աշխատանքների վերահսկողության խորհրդատվական ծառայությունների և կապալառուներին կատարված կանխավճարների, ինչպես նաև սահմանված կարգով նախատեսված հարկերի և տուրքերի դիմաց:

Հաշվետու տարում ևս 846 մլն դրամ վարկ է տրամադրվել Դանիական թագավորության աջակցությամբ իրականացվող գյուղական կարողությունների ստեղծման դրամաշնորհային ծրագրի միջոցներից՝ կազմելով նախատեսվածի 103.9%-ը, որը պայմանավորված է այն հանգամանքով, որ ծրագրի իրականացումն ընթացել է բարձր տեմպերով: Ծրագրի նպատակն է բարելավել Հայաստանի Հանրապետության գյուղական աղքատ բնակչության սոցիալ-տնտեսական վիճակը:

Ծրագրի շրջանակներում իրականացվում է այգեգործական վարկերի տրամադրում բանկերի և վարկային կազմակերպությունների միջոցով:

3.8 մլրդ դրամ (նախատեսվածի 100%-ը) հատկացվել է «Բերրիություն» ԱՄ-ի Մասիսի շրջանային միավորում» ՍՊԸ-ին՝ Հայաստանի Հանրապետության հողօգտագործողներին 2016 թվականի համար մատչելի գներով ազոտական պարարտանյութի ձեռբերման համար պետական աջակցության ծրագիրն իրականացնելու նպատակով, 167.4 մլն դրամ (96.8%՝ պայմանավորված արտարժույթի կանխատեսված և փաստացի փոխարժեքների տարբերությամբ)՝ Հայաստանում գյուղական տարածքների տնտեսական զարգացման հիմնադրամին՝ «Շուկայական հնարավորություններ ֆերմերներին» ծրագրի IFAD Grant No.Cofin DE 730-AM և 200000074700 համաձայնագրի շրջանակներում ստանձնած պարտավորությունները կատարելու նպատակով, 162.4 մլն դրամ (100%)՝ «Հրաշք այգի» ՍՊԸ-ին՝ Հայաստանի Հանրապետության հողօգտագործողներին 2016 թվականի համար մատչելի գներով ֆոսֆորական և կալիումական պարարտանյութի ձեռբերման համար պետական աջակցության ծրագիրն իրականացնելու նպատակով և 41.3 մլն դրամ (100%)՝ «Նաիրիտ-2» ՓԲԸ-ին՝ ընկերության աշխատողների 2016 թվականի հուլիս ամսվա աշխատավարձերի և դրան հավասարեցված վճարումների, օգոստոսի 1-ի դրությամբ կատարված վերջնահաշվարկների գծով կետանցված պահանջների գնման նպատակով: Կայունացման դեպոզիտային հաշվի միջոցներից «Ռադիոիզոտոպների արտադրության կենտրոն» ՓԲԸ-ին տրամադրվել է 80.7 մլն դրամ (99.6%)՝ ընկերության կողմից սարքավորումների ձեռքբերման և մոնտաժման աշխատանքների իրականացման նպատակով:

Նախկինում տրամադրված ներքին վարկերի վերադարձից 2016 թվականին պետական բյուջե է մուտքագրվել 24.6 մլրդ դրամ՝ կազմելով ծրագրի 104.6%-ը: Ծրագրի գերազանցումը պայմանավորված է նախկինում տրամադրված վարկի գծով չմարված գումարներից շուրջ 736.7 մլն դրամի չափով 2016 թվականի ընթացքում մարելու հանգամանքով, որից 515.9 մլն դրամը մարվել է «Շիրակ ջրմուղկոյուղի» ՓԲԸ-ի կողմից (ընդհանուր առմամբ մարվել է 1.6 մլրդ դրամ կամ նախատեսվածի 149.4%-ը), իսկ 220.8 մլն դրամը՝ «Հրաշք այգի» ՍՊԸ-ի կողմից (ընդհանուր առմամբ մարվել է 383.2 մլն դրամ կամ նախատեսվածի 236%-ը), ինչպես նաև պայմանավորված արտարժույթի կանխատեսված և փաստացի փոխարժեքների տարբերությամբ: Մասնավորապես՝ 6.4 մլրդ դրամը ստացվել է ՀՀ կենտրոնական բանկից՝ «Գերմանահայկական հիմնադրամ» ծրագրի կարգավորման գրասենյակի կողմից տնտեսության կայունացման վարկավորման ծրագրի շրջանակներում տրամադրված վարկերի վերադարձից, որն իրականացվել է նախատեսված ծավալով: Նախատեսված 3.4 մլրդ դրամի դիմաց 3.9 մլրդ դրամ է վճարվել «Երևանի ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ-ի կողմից: 3.4 մլրդ դրամ (նախատեսվածի 89.5%-ը) վճարվել է «Բերրիություն» ԱՄ-ի Մասիսի շրջանային միավորում» ՍՊԸ-ի և 1.9 մլրդ դրամ (նախատեսվածի

101.8%-ը)՝ «Զանգեզուր մայնինգ» ՍՊԸ-ի կողմից: «Բերրիություն» ԱՄ-ի Մասիսի շրջանային միավորում» ՍՊԸ-ի կողմից վարկի մարումն ամբողջությամբ չկատարելը պայմանավորված է այն հանգամանքով, որ վարկի հաշվին ընկերության կողմից ձեռք բերված պարարտանյութերն ամբողջությամբ չեն իրացվել, և վարկի մարման ժամկետը երկարաձգվել է մինչև 2017 թվականին դրանց իրացման ավարտը:

Հաշվետու տարում պետական բյուջեի ազատ միջոցներն ավելացել են 31.7 մլրդ դրամով՝ նախատեսված 20.8 մլրդ դրամ օգտագործման փոխարեն, որից կայունացման դեպոզիտային հաշվի միջոցներից նախատեսված 15.1 մլրդ դրամն ամբողջությամբ օգտագործվել է:

2016 թվականին պետական բյուջեի պակասուրդն *արտաքին աղբյուրներից* ֆինանսավորվել է 170.8 մլրդ դրամով՝ 29.2%-ով գերազանցելով ծրագրված ցուցանիշը: Մասնավորապես՝ արտաքին փոխառու միջոցներից բյուջեի պակասուրդի ֆինանսավորումը կազմել է 238.4 մլրդ դրամ և 29.7%-ով գերազանցել ծրագիրը, որը հիմնականում պայմանավորված է ստացված վարկերի ծավալով:

Տարվա ընթացքում արտաքին աղբյուրներից ստացվել են 272.1 մլրդ դրամի վարկային միջոցներ՝ 24.2%-ով գերազանցելով ծրագրային ցուցանիշը: Դա հիմնականում պայմանավորված է նպատակային վարկային ծրագրերի կատարման աստիճանով, որոնց շրջանակներում ստացվել է շուրջ 150.8 մլրդ դրամ՝ նախատեսված 98.8 մլրդ դրամի դիմաց: Մասնավորապես՝ 113.3 մլրդ դրամ ստացվել է միջազգային կազմակերպություններից՝ նախատեսված 76.1 մլրդ դրամի դիմաց, շուրջ 37.1 մլրդ դրամ՝ օտարերկրյա կազմակերպություններից՝ նախատեսված 22.4 մլրդ դրամի դիմաց և 371.0 մլն դրամ՝ օտարերկրյա առևտրային բանկերից՝ նախատեսված 383.7 մլն դրամի դիմաց: Եվս 121.4 մլրդ դրամ ստացվել է ոչ նպատակային վարկային ծրագրերի շրջանակներում՝ նախատեսված 120.2 մլրդ դրամի դիմաց, որը պայմանավորված է ՀԲ կողմից՝ Առևտրի խթանման և որակի ենթակառուցվածքների ծրագրի բյուջետային աջակցության բաղադրիչի շրջանակներում տրամադրված միջոցներով (1.1 մլրդ դրամ), որը 2016 թվականի պետական բյուջեով նախատեսված չէր: Բյուջեին աջակցության նպատակով 2016 թվականին 47.3 մլրդ դրամ է (100%) տրամադրվել Եվրասիական զարգացման բանկի բյուջետային աջակցության ծրագրի շրջանակներում, 23.7 մլրդ դրամ (100%)՝ ՀԲ Զարգացման քաղաքականության իրականացման չորրորդ ծրագրի շրջանակներում, 28.4 մլրդ դրամ (100%)՝ ԱԶԲ ենթակառուցվածքների կայունության աջակցման ծրագրի շրջանակներում, 20.8 մլրդ դրամ (100%)՝ Ֆրանսիայի կառավարության բյուջետային աջակցության ծրագրի շրջանակներում:

Արտաքին պարտավորությունների մարմանն ուղղվել է շուրջ 33.7 մլրդ դրամ, որը կազմել է տարեկան ծրագրի 95.4%-ը: Տարբերությունը հիմնականում պայմանավորված է SDR-ի կանխատեսումային և 2016 թվականի ընթացքում փաստացի ձևավորված փոխարժեքների տարբերությամբ, ինչպես նաև մարման փուլում գտնվող մի շարք վարկային ծրագրերի գծով

մասհանումների ծրագրերի կատարողականով, որի արդյունքում նվազել է հաշվետու տարվա մարման ենթակա վարկի մասնաբաժինը: Նշված գումարից 13.3 մլրդ դրամն ուղղվել է Համաշխարհային բանկի, 5 մլրդ դրամը՝ Արժույթի միջազգային հիմնադրամի, 6.4 մլրդ դրամը՝ այլ միջազգային կազմակերպությունների, 8.7 մլրդ դրամը՝ օտարերկրյա պետությունների, 358.6 մլն դրամը՝ առևտրային բանկերի նկատմամբ ունեցած պարտավորությունների մարմանը: Նախորդ տարվա համեմատ արտաքին վարկերի և փոխատվությունների մարմանն ուղղված փաստացի վճարումներն աճել են 42.4%-ով կամ 10 մլրդ դրամով, ինչը հիմնականում պայմանավորված է արտարժութային վճարումների փոխարկումների համար կիրառվող փոխարժեքների փոփոխությամբ և մի շարք վարկային ծրագրերի գծով արտոնյալ ժամկետների ավարտմամբ:

Արտաքին ֆինանսական ակտիվների գծով բյուջեի պակասուրդը ֆինանսավորվել է 131.1%-ով՝ կազմելով -67.6 մլրդ դրամ: Ծրագրի գերազանցումը պայմանավորված է վարկային և դրամաշնորհային միջոցների մնացորդի 17 մլրդ դրամ աճով՝ նախատեսված 195.6 մլն դրամ օգտագործման փոխարեն:

2016 թվականին ամբողջությամբ տրամադրվել է ԼՂՀ-ի միջպետական վարկը, որը կազմել է 50.6 մլրդ դրամ: Վրաստանի կողմից Հայաստանի նկատմամբ ունեցած վարկային պարտավորությունների մարումը նույնպես կատարվել է նախատեսված ծավալով՝ կազմելով 546.7 մլն դրամ:

Միջազգային ֆինանսական կազմակերպություններին ՀՀ անդամակցության գծով պարտավորությունների կատարմանն ուղղվել է շուրջ 546.8 մլն դրամ կամ նախատեսվածի 31.5%-ը, ինչը պայմանավորված է Համաշխարհային բանկի կողմից ՎԶՄԲ-ի կապիտալին բաժանորդագրության ժամկետների հետաձգմամբ, որն իրականացվել է 2017 թվականի առաջին եռամսյակի ընթացքում:

Հաշվետու տարում 17.0 մլրդ դրամով ավելացել է արտաքին աղբյուրներից ստացված վարկային և դրամաշնորհային միջոցների մնացորդը, այդ թվում՝ շուրջ 15.0 մլրդ դրամով ավելացել են ծրագրերի իրականացման գրասենյակներով շրջանառվող միջոցների մնացորդը և 2.1 մլրդ դրամով՝ ՀՀ պետական հիմնարկների արտաբյուջետային միջոցների մնացորդը:

2016 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ Հայաստանի Հանրապետության արտաքին պետական պարտքը կազմել է 2,325.6 մլրդ դրամ (4,805.6 մլն ԱՄՆ դոլար) կամ ՀՆԱ-ի 45.9%-ը՝ 2015 թվականի 2,088.0 մլրդ դրամի (4,316.2 մլն ԱՄՆ դոլարի) և 41.5%-ի դիմաց: Պարտքի հիմնական մասը՝ 2,081.4 մլրդ դրամը (4,300.9 մլն ԱՄՆ դոլարը) ՀՀ կառավարության պարտավորություններն են, 244.2 մլրդ դրամը (504.7 մլն ԱՄՆ դոլարը)՝ ՀՀ կենտրոնական բանկի վարկային պարտավորությունները:

Հաշվետու ժամանակահատվածում ՀՀ արտաքին պետական պարտքը բացարձակ արտահայտությամբ աճել է 489.4 մլն ԱՄՆ դոլարով (237.6 մլրդ դրամով), սակայն հաշվի առնելով վերջինիս գծով կուտակված պարտքի զգալի պաշարը (2016թ. տարեվերջի դրությամբ՝ 2,325.6 մլրդ դրամ)՝ այն հարաբերական արտահայտությամբ աճել է միայն 11.4%-ով: Ընդ որում հիշյալ աճն արձանագրվել է ի հաշիվ ՀՀ կառավարության արտաքին պարտքի, որն աճել է 461 մլն ԱՄՆ դոլարով կամ 12%-ով: Հաշվետու տարում ՀՀ արտաքին պետական պարտքի սպասարկումը կազմել է 230.1 մլն ԱՄՆ դոլար, որից 189.8 մլն ԱՄՆ դոլարը՝ կառավարության և 40.3 մլն դոլարը՝ ԿԲ պարտավորությունների գծով: Արտահանման նկատմամբ արտաքին պետական պարտքի սպասարկման հարաբերակցությունը կազմել է 6.6%՝ նախորդ տարվա 12.5%-ի դիմաց, իսկ պետական բյուջեի եկամուտների նկատմամբ՝ 9.4%, նախորդ տարվա 16%-ի դիմաց:

2016 թվականի վերջի դրությամբ արտաքին պետական պարտքի զուտ ներկա արժեքի ցուցանիշը (ԶՆԱ) աճել է՝ 2015 թվականի 3604.6 մլն ԱՄՆ դոլարի դիմաց կազմելով 4002.5 մլն ԱՄՆ դոլար: Աճել է նաև ԶՆԱ/ՀՆԱ հարաբերակցությունը՝ 2015 թվականի 34.2%-ի դիմաց կազմելով 37.9%, սակայն նվազել է ԶՆԱ/արտահանում ցուցանիշը՝ 2015 թվականի 114.9%-ից հասնելով 114.3%-ի:

Ամփոփելով ՀՀ պետական պարտքի ցուցանիշները՝ նշենք, որ 2016 թվականի վերջի դրությամբ այն կազմել է 2,875.6 մլրդ դրամ (5,942.1 մլն ԱՄՆ դոլար)) կամ ՀՆԱ-ի 56.7%-ը, որից ՀՀ կառավարության պարտքը՝ 2,631.4 մլրդ դրամ (5,437.4 մլն ԱՄՆ դոլար), իսկ ՀՀ կենտրոնական բանկի պարտքը՝ 244.2 մլրդ դրամ (504.7 մլն ԱՄՆ դոլար): 2016 թվականի վերջի դրությամբ ՀՀ պետական պարտքը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատությամբ աճել է 419.3 մլրդ դրամով կամ 17.1%-ով (864.4 մլն ԱՄՆ դոլարով կամ 17.0%-ով): Ընդ որում, դա հիմնականում տեղի է ունեցել ՀՀ կառավարության պարտքի աճի հաշվին, որը կազմել է 405.5 մլրդ դրամ կամ 18.2%, իսկ ՀՀ կենտրոնական բանկի պարտքն աճել է 13.8 մլրդ դրամով կամ 6.0%-ով: